



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2104

~~84-31~~

4-67



1221

Կ. ԲՕԼՏԵՒՐՈՒԹՅԱՆ

ԵՂԵՍՅԱՆ ՅԱԿՈԲՈՍ

2003

84-31
3-67 4y

Կ. ՌՕԼ ՏԸ ԳՕՔԻ

ԵՂԲԱՅԻ

Յ Ա Կ Ո Ք Ո Ս

ԹՍՐԳՄԱՆԻՉ

Կ. ՊԵՂՃԵՆ



ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Մ. Խ. ԵԷՄԵՆԻՃԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ — Տպագրութիւն Ս. Ղ. Պարտիզ-
պանեան և. Հնկերք. — Բիզ-փաշա խան քիւ 5 :



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆՆԵԱՆ ԵՂԲ.
1874



496

4707 22 107 - 4

1819, 19

Ս Ո Պ Ո Պ Ս Յ

ՄԻՐՈՎԱԿԱՆ

1885 1887

1819, 19

Ս Ո Պ Ո Պ Ս Յ



1211
39

1819, 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԻՏԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԳԻՏԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

1819

ԵՂՐԱՅՐ ՅԱԿՈՒՌՈՍ

ԳԼՈՒԽ Ե.

ՀԱՐՄԱՆԻՔ ՄԸ Ի ՔԱՏՄԱՆ.—ՊԼԵՕ

ՄԻՐՈՎԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

Կէս դիշեր է. ուրեմն այս ուրախութեան
 աղաղակներն, աղմուկներն, ծափաձայն թըն-
 դիւններն և նուազարանացու երգօց ձայները
 ուսկից կոչդան . . . վայրկեան մը քատ-
 րան-Պլէօի առջև պատուարին վրայ կեցիր,
 ճիշդ այնպիսի մարդօց նման որք պատու-
 հաններու առջև և առայտապակի վրայ չըկա-
 դայիլով թանրլըլի պատուարին պանդոկա-
 պեաներուն տունը եղած ամեն հարսանիքե-
 լու և ամեն խնջոյքներու ներկայ կը դըտ-
 նըուին, և զուարճութեամբ անդդիական պո-
 րի մը, Էլի մը կամ չօքոյաթի ամենէն լաւ
 կտորի մը տեսարանը կը վայելեն, թէև նոյն
 միջոցին անցորդներէն կը նեղուին, կառքերէն
 վրանին կաղտտի, և կառավարներէն ալ կը
 յանդիմանուին:

Բայց կէս դիշերուն, դատարկայրջիկ, ա-
 պուշ կամ տխմար (ինչ որ կուղես քսէ)

մարդիկ յիշեալ որանդովադեաներուն տունը
 դացած են. ալ Քատրան-Պէօի դրանն առ-
 վե վարձուած կամ միայն ձգելու համար
 յատկացած կառքերէն զատ ուրիշ բան չը
 տեսնուիր, որոնք հրաւիրեաներուն տրուած
 աւելի կամ թիչ կարեւորութեան համեմատ
 կը կենան կամ կը մեկնին: Մյլ սակայն տե-
 սարանն նոյն միջոյին աւելի ազդու և աւելի
 տարբեր և աւելի ջերմ կըլլայ, որովհետև
 հրաւիրեալք այն ատեն միայն կսկսին իրա-
 րու հետ ծանօթանալ:

Վերջապէս գիտեմ պիտի ընես ինձ թէ ի
 Քատրան-Պէօ եղած այս խնջոյքին պատ-
 ճառն ի՞նչ է: Մի թէ հոն ամառախմբութիւն
 մը, տարեդարձ մը, կոչունք մը կայ. ասոնց
 ամենէն ալ աղէկ հարսանիք մ'է այդ:

Հարսանիք մը . . . Այս բառը սրբափ
 մտածմանց տեղի կուտայ, ո՛րչափ խորհըր-
 գածութիւններ, յոյսեր և յիշատակներ կը
 ծնի, սրբափ կը բարախէ այն երիտասարդ
 օրիորդին սիրաբը որ այս մեծ օրուան գիւ-
 ցազնուհին պիտի ըլլայ, պիտի կրէ այն դե-
 ղեցիկ ճերմակ պատկը, այն նարնջի ծաղիկով
 զարդարուած գլխարկը, ինչպէս իւր կուսու-
 թեանն ու համաւառութեանը. բայց դժբաղ-
 դարար բաղմամբ մամուխներու ստած է
 սրոնց չէ ուղած հասնի, և մէյնէկ պատ-
 ճառներով, քայց որովհետև այսպիսի հան-
 դիտի մը ամառարանը գեռ քանի մը տարիէ ի
 վեր ամուսնացած դեռահաս տիկնոջ մը տըխ-

րութեանը պատճառ կըլլայ, որն որ այն
 հանգիսին երջանկութիւնը միայն յիշատա-
 կութեամբ մը կըզայ, ուստի նոյն օրուան
 հարին վիճակին վրայ կը դադայ, կը յիշէ իր
 հարսանեաց օրը, ու իր ամուսնոյն սէրն ու
 եռանդուն համակրութիւնը, և սոյն օրը տ-
 նոր յաջորդող օրերուն հետ կը բաղդատէ,
 և մարդոց երդմանցը վրայ ունենալիք վըս-
 տահութիւնը կը ճանչէ:

Բայց թողունք այս խորհրդածութիւններն,
 մտնենք ի Քատրան-Պէօ, և այս խնջոյց
 գլխաւոր անձանցը հետ ծանօթանանք, այն
 անձանց՝ որոց հաւանական է որ պատահինք
 սոյն պատմութեան ընթացքին մէջ, և գոնէ
 յառաջիկայ դուրսը զո՛հներ նոցա համար,
 որն որ ամենակարեւոր է, վասն զի ասոնց
 նման շատ պատմութիւններ կրնայ կարդաց-
 ուիլ:

Սկսինք նոր փեայ ու նոր հարսէն:

Եղուարդ Միրովլ քաներհինգ տարեկան
 երիտասարդ մ'է միջին բայց գեղեցիկ հա-
 սակաւ. տեսքը հասեիկ, ձայնը յմուշ, և
 բարբը աղէկ. բնկերականութեան մարդ է,
 ըստ բաւականին չու՛թակ կը զարնէ, և ըն-
 տիր ու սքանչելի կերպով կերգէ. խիտ լաւ
 կը խօսի, ամենուն հետ կը վարուի, գիտէ
 օրահ մը մտնելու և անկէ գուրս ելնելու
 կերպը, որն որ շիտակն ըսելով քու կարծա-
 ծիդ չափ դիւրին բան չէ: Թերեւս ինձի ը-
 սես, ընթերցող, թէ սոյն երիտասարդը այն-

պէ՛ս կը կարծէ որ ուրիշ մը քարելու : բարե-
ւելու և օրնաւոր կերպիս ինքզինքը ներկա-
յացնելու կերպը չը գիտեր : Աստուած չքնէ
որ ես աղէկ պարել գիացող անձանց համար
այդպիսի դատադուժիւն մ'ընեմ : Բայց դարձ-
եալ տարբերութիւններ կան : և ես ալ իմ
այս գիտազութիւններս այդ տարբերութիւն-
ներէն կը բաղդեմ : Իրատ հանձնարել, Բայց
քիչ մը կծու խօսող կին մը : որուն քով վեր-
ջին անգամ նստած էի սեղանաւորի մը սրա-
հին մէջ, իր դիտողութիւններն կը հազօր-
դէր ինձ, օրք ըստ մեծի մասին իրաւացի էին :

— Տես, կրտէր նա ինձ : սա սրահը միտ-
նելու անձինքն ինձ հետ գիտէ, կարծեմ
իրենց ինքզինքնին ներկայացընելու եզանա-
կաւք բարբերնին ու բնութիւննին պիտի կըր-
նամ հասկընալ : Տես սա մեծ արկիկը որ ա-
ռանց գոնէ դիտով բարե մը տալու ժողո-
վականներուն մէջէն անցաւ : տես զնայց
ձիններդդին առջին նստաւ, ոտքերն երկա-
թէ վանդակին վրայ դնելով, ամենէն աղէկ
տեղը տեղաւորուեցաւ առանց ուշ դնելու
թէ իր ետեւը նստող անձինքը կրնայ նկել
ինչ կը խորհնայ այս կնոջը վրայ :

— Իր վրայի զարդարանքը ամենուն երե-
ցընելու միտք ունի :

— Այդչափ չէ, պէտք է բոտ որ անմիտ
մէ : Խելացի կին մը առանց այդպիսի ծաղ-
րական միջոցներու դիմելու ինքզինքը ցու-
ցընելու համար հազարաւոր ճամբայ կրնայ

գտնել : և երբ ինքզինքը երեցընելու միտք
ունենայ, կրնայ գոնէ ուրիշ միջոց մը գոր-
ծածել, և չէ թէ հին սովորութեան համե-
մատ հազուող կամ զարդարանքներնուն մէջ
քիչ մը պահասութիւն ունեցող մարդոց վրայ
արհամարհոտ աչօք նայիլ . . . : Բայց . . .
ինչ ձայն է նախասենեակին մէջ . . . արդ-
եօք քաջ նուազած ու մեկու, թէ սկուտող
մը տապալեցաւ . . . Տան տէրը հոն կը վա-
ղէ . . . երթանք նայիլնք ինչ է : Հա . . .
ձայնէն ճանչցայ, պարոն Յ . . . Ե . կեցիր,
մտիկ ըրէ, կրնանք հոսկից դիւրաւ ձայնք
լսել :

Ո՛հ, սիրելի բարեկամս . . . խիտա կը ցա-
լիմ այսչափ ուշ դալուս վրայ . . . ներեցէք,
չվտխութիւն մը կայ վրաս . . . չդիտեմ թէ
կրնամ ներս մտնել . . . Գողի մը պէս եկայ
հօս . . . կուզեմ երթալ անկիւն մը քաշ-
ուիլ . . . :

Է՛հ, (ըստ ինձ քովս նստող կինը) ինչ կը
խորհնայ այս պարոնին վրայ որ տեսնուիլ չու-
զեր, և այնպէս ալ կը պօռայ որ կրնայ ժո-
ղովականներուն միտքը դարձընել . . . այլ
սակայն որոյնց ներս մտնել :

Ես կըողտախէ որ ապուշ երիտասարդ մը
պիտի տեսնեմ, Բայց տեսայ որ քառասուն
չիտուն տարեկան խարտեաչ կեղծ մարդ ծամալ
մը տատանելով և դրեթէ զօրարձութեամբ
ճպարելով յաջ և յահեակ բարեւելով ներս մը-
տաւ :

— Ո՛վ է այս պարոնը, բախիկնո՛ւ :

— Պարոն Բ . . . ախարհամանօթ մարդ մը, զոր բոլոր փորիզ կը ճանչէ, ամենէն աւելի արհեստաւորը՝ մանուսնդ նուագածուք զինքը քով կը ճանչեն : Երեք չորս տասն նուագարան կը զարնէ : Մեծ նուագաչբօսներու ներկայ կը գտնուի, չկայ արհեստաւոր մը որ զինքը չի ճանչէ : Դուք անոր սրածը մտնելէն կրցաք դատել որ խնջոյքի մը մէջ ցոյց ընեն իրեն համար երջանկութիւն մ'է . ես իր այս սոյորութիւնէն նշանաւոր տաղանդ մ'աւնենալն չեմ հետեւցրներ . որովհետեւ աղէկ գիտեք որ արժանեաց տէր անձինք ինքզինքնին հասարակութեան ցուցնելու սոյորութիւն չեն աւնենար . ընդհակառակն չափաւոր ըլլալով աւելի համբաւ, աւելի յառաջդիմութիւն, աւելի պատիւ կունենան, և կրնան միշտ տգէտներն սքանչացընել :

Բայց ահա նոր դէմք մ'ալ . երիտասարդ մ'է սա, որ ամենեւին ձայն չի հանեց . աւանկ ալ կատարուի մը ներս մտաւ, որ ոտքին ձայնը չի բեցցնէր . . . կիտով ողնունց . . . դրանք քով կեցաւ . . . վերջը պատին քովէն սահելով ամոռ մը գտաւ, շուտով նստաւ վրան, և կրնամ ըսել որ նոյն գիշերը այն տեղէն չի պիտի շարժի . . . Խեղճ երիտասարդ . . . դեռ չատ խակ է . . . բերանը կը գարձընէ . . . աչքերը կը կիօցէ, ձեռքերն ինչ ընելն չգիտեր . . . Այնպէս

կը հաւատամ որ կը կարծէ թէ բոլոր տիկնոցք իրեն կը նային և միայն զինքը կը գիտեն : Ընդհանրապէս գիտած եմ որ երկրտուտ թիւնը, խակութիւնն անդամ չատ հեղ չափազանց զգուշաորութենէ յառաջ կուգան . ծաղրական երեւոյթու կամ բաւական հրապուրիչ կերպարանք մը չունենալու վախով ծանրաբարդութիւննին կը խափանեն, և իրենց դիտացը վրայ ծիծաղալարժ տպաւորութիւն մը կը ցուցնեն : Այս մտին ըզբեղ համոզելու համար թատրոններու առաջին երիտասարդներն կը ներկայացընեմ քեզ, որոնք գէշ չեն . և կորեղի է աղէկ ալ կը խաղան, եթէ միայն իրենց գլխու զարդարանքը, փողպտաք, գիրքն ու իրենց կերպարանքին թատերաբեմին վրայ ընկիւք ազդեցութիւնը չի խորհնի :

Տիկինն իր դիտալութիւնները շարունակեց . ես ալ, ընթերցող, զանաթ կամաւ պիտի հաղորդէի քեզ, եթէ չի տեսնելի որ սոյն պատմութիւնը կարգաւուզ նպատակը չէ թէ այս տիկնո՞վ հետ քրած խօսակցութիւն, այլ Եղբայր Յակոբսի դէպքերն իմանալ է, վասն որոյ հազար անգամ ներողամտութիւնդ կը խնդրեմ զքեզ սեղանաւորի մը սրածը պատշոյնելու համար, և կը գտնուամի փատրան—Պէտ :

Հիմա հասկըցած ես որ հոն Եղուարդ Միւրովիի հարօանեաց հանդէսը կը տանեն, և թէ սոյն երիտասարդն քսանըհինգ տարեկան է, և սիրուն վարք մ'ունի : Բայց գեռ իր կի-

նր չես ճանչնար, ուստի կը փութամ զայն ալ ճանչցընել քեզ որ գեղեցիկ, քաղցրարարոյ, սիրուն և խելացի աղջիկ մ'է :

Առէլին ժերմէջլէ իր անունն, տանեւ-ու թ տարեկան օրիորդ մը, որ խիստ գրաւիչ կերպարանք մ'ունի, գեղեցիկ աչքով, փք-զտակրեայ ակաւյներով, շնորհալի, դեռափղ-թիթ, անենդ խելացի, համեստ զուարթ, առանց չափազանց զարդու գեղեցիկ, և պար-կեշտ համարձակ, ինքը գիտէ որ աղէկ է, և ասոր համար չի կարծեր որ ամեն ոք պարտաւոր է զինքը յարգել. զուարճութիւններն կը սիրէ, բայց միշտ աննոցմով ժամանակ չանցընէր: Ղերջապէս այնպիսի կին մ'է, զոր մարդս երիտասարդական ծաղիկ հասակին մէջ մանաւանդ կը ջանայ դասել:

Առէլին սիրեց զեղուարդ, և աւելի հարուստ ամուսիններէ նախապատեւ դասեց զանի, որովհետեւ եղուարդ կառավարութեան պաշտօնով մը իր ապրուստը կը ծարէ, մինչդեռ Առէլին տասնըջինգ հազար լիրա տարեկան եկամուտ ունի. այլ սակայն փառասէր չէ, և երջանկութիւնը առաքինութեան մէջ իր փնտռէ, քան թէ քիչ կամ չառ հարստութեան մէջ:

Բնաց որ տասնըջինգ հազար լիրա տարեկան է կամուտով մարդս կրնայ շատ հանգիստ ապրիլ, մանաւանդ երբ այնպիսի ամուսին մ'ունենայ որ կարգ կանոն գիտէ և իր տունը կրնայ կառավարել: Արդ ասուածիկ

այդ ամուսինը միայն Միւրվիլ կրնար ըլլալ, և նա այս հանգամանաց տէրն ըլլալուն համար օրիորդին հաճելի եղաւ:

Օրիորդ ժերմէջլի մայրը միայն ողջ էր, որ պատկառելի կին մ'էր, և իր աղջիկը շատ սիրելուն համար անոր ընտրութեանը դէմ չի կեցաւ: Բայց և այնպէս, որովհետեւ ինքը պարտաւոր էր իր աղջկանն ազգապայ երջանկութիւնն նկատողութեան տանուլ, ուստի երբ իմացաւ որ իր աղջիկը եղուարդ Միւրվիլի հետ սիրահարեւ, սկսաւ թէ յիշեալ երիտասարդին և թէ նորա ընտանեաց բարոյականութեան վրայ տեղեկութիւններ առնուլ:

Իմացաւ որ եղուարդ բաւական հարուստ ճնաղաց օրդի է, և իր հայրը թէպէտ պատուաւոր կերպիւ փաստաբանութիւն ընելով իր ընտանեաց ապրուստը կը չայթայթէ եղբր, սակայն մի քանի սնանկացեալներ զանի նեղ վիճակի մը հասցնելու պատճառ եղած են: Պ. Միւրվիլ (այս մարդուն անունն է) եղուարդ և Յակորոս անուններով երկու աղայ ունէր. եղուարդ Յակորոսէն ատրու մը մեծ էր. իր կինը երկու աղայն ալ հաւատարապէս չէր սիրեր, այլ եղուարդն աւելի կը սիրէր: Կերեւի թէ չնչին պարագայ մը այս կնոջը զգացմանցը վրայ մեծ ազդեցութիւն բրած էր. նա այնպիսի խելացի չէր և շատ ունայնասէր էր. ուստի հարկաւ ընկերականութեան մեծ ծանրութիւն մը պատճառող ամեն նուատարութիւններու և ամեն տաշտական արարքներու ալ պիտի զիջանէր:

Արդ՝ երբ նա առաջին անգամ յղացաւ, սկսաւ իր միտքը յողնեցընել թէ իր ազուն ինչ անուն պէտք է առաւ: Պէտք էր այնպիսի անուն մը գտնել որ միանգամայն սիրուն է, քաղցր և երեւելի ըլլայ: Երկար ատեն խորհրդածելէն վերջը, որոշեց որ եթէ մանչ ծնի, անունը եղուարդ դնէ, իսկ եթէ աղջիկ, Սէլէնի անուանէ: Պ. Միւրվիլ իւր այրը այս կէտը բողբովին անոր կամացը յանձնած էր:

Վերջապէս ծնաւ անդրանիկ օրդին, որ մանչ ըլլալով Եղուարդ անուանեցաւ, և մայրը խիստ գոհովանօք կը սիրէր զանի: Երբ կրկին յղացաւ, վայրկեան մը անգամ չը տարակուսեցաւ որ այս անգամ ծնանելիք զուակը իր Սէլէնի անուն սիրուն աղջիկն չըլլայ, ուստի աղջիկ մը ծնանելու յոյսը իր իղձերը լրացուց: . . . Բայց երկար նեղութիւններէ վերջը՝ դարձեալ մանչ մը ծնաւ:

Կրնայ հասկցուիլ որ այս տղան առաջինն նման չընդունուեցաւ. ուր թողունք որ մանչ մը ծնանիլն ամենեւին մտքերուն չաղցնելով անոր ինչ անուն տալն որոշած չէին: Բայց այս անգամ այս մասին ձեռք առնուելիք որոշումն ալ աւերող պիտի ըլլար, որովհետեւ Պ. Միւրվիլ իմացուց իր կնոջը որ ինքը բարեկամ մ'ունի որ կը փափաքէ իր որդւոյն կնքահայրն ըլլալ: Այս բարեկամը խիստ հարուստ ըլլալուն և իրենք ալ ասիկց բուսական բարիք տեսած ըլլալուն համար չի կրցան անոր կնքահայրութիւնը մերժել: Ուստի կնքեց տղան, և անու-

նը դրաւ Յակոբոս, որուն վրայ տիկին Միւրվիլ աւելի ևս տրտնեցաւ:

Արդարև, թէպէտ Յակոբոսն ալ անուն մ'է, բայց շատ ներդաշնակաւոր չէ. վասնորոյ տիկին Միւրվիլի փափուկ սկզանջը վիրտուրեց, և ըսաւ որ ասի մանկուսիկի կամ սպասուորի մը անուն է, և ինքը կամէնայ այս անունը իր որդւոյն տալը:

Իր այրը ունայն անգը ջանաց զինքը համազել որ այդ խորհրդէն ետ կենայ, և ամեն ատեն Սկզտից պատմութիւնը կը պատմէր անոր, որոյ թաղաւորական ակթունի վրայ շատ Յակոբոսներ տեսնուած են: Տիկին Միւրվիլ դարձեալ հառաչելով կուտար այս անունը:

Բայց և այնպէս այս անունը փոխելն ալ անկարելի էր, որովհետեւ կնքահայրը՝ որուն անունն ալ Յակոբոս էր, և շատ անգամ իր սանր տեսնելու կուգար, շատ պիտի վշտանար, եթէ անոր արևը անուն մը տրուէր:

Ուստի տղուն անունն Յակոբոս մնաց, ի մեծցաւ տիկին Միւրվիլի, իսկ Եղուարդ, թէ կը եղբայրը ծագրելու նպատակաւ, և կամ թէ անոր անունը իրեն հաճելի գալուն համար, օրն ի բուն եղբայր Յակոբոս կը կոչէր զանի, և երբ ինքը պակասութիւն մ'ընէր, զայն եղբայր Յակոբոսին վրայ կը ձգէր:

Երկու եղբայրը հակառակ բնութիւն ունէին. Եղուարդը՝ հանդարտ, խելացի և սիրուն ողայ մ'էր, և ամեն օր կամաւ իր մօրը քով կը կենար. իսկ Յակոբոս անդգամ, ցասկոտ,

գոռում գոչումը սիրող աղայ մ'ըլլալով տեղ մը հանդարտ չէր կրնար կենալ, և տանը մէջ ամեն բան տակն ու վրայ կընէր:

Եգուարդը իր ուսմանը գիւրաւ սովորեցաւ, Յակոբոս իր գրքերն ու գրիչները կրակը կը նեւէր, և չըջանակով մը կամ փայտէ թրով մը կը խաղար:

Վերջապէս Եգուարդ տասնըփեց տարեկան հասակին մէջ իր ծնողացը հետ շատ տեղուանք կը պատէր. արդէն խօսակցութիւն մը մտիկ ընելու և իրեն համար օրիորդ մ'ընտրելու կերպը սորված էր:

Յակոբոս տունը հինգ տարուան եղած ատեն հօրը տունէն գաղտուկ մեկնեցաւ, առանց գրուածք մը կամ նշան մը ձգելու, որով կարելի ըլլար իր միտքը և իր ճամբորդութեան նըպատակը հասկնալ: Վասն որոյ ծնողքն սկսան ամեն կարգի միջոցներն գործադրել անոր ուր երթան հասկնալու կամ իր վրայ լուր մ'առնելու համար: Բայց ի զուր . . .

Գ. Միւրովի շատ ցաւեցաւ իւր որդւոյն աներեւոյթ ըլլալուն վրայ. տիկին Միւրովի ալ այն ատեն զգաց թէ ինքը մայր եղած էր, և աղայ մը կրնար Յակոբոս անունով ալ միշտ իր որդի ըլլալ. ուստի զգլաց իր այս անիրաւ վարմունքին վրայ, և սկսաւ ինքզինքը յանդիմանել. բայց ալ ժամանակն անցաւ. որովհետեւ թըշուառական անունն իր արդիւնքը ցուցաւ ցած էր . . . այդ անունն էր որ Յակոբոս իր մօրը գործնականքն զրկած, և իր եղբօրմէն ալ միշտ


ծաղր լսելու առիթ տուած էր. ո՞վ գիտէ . . . մարդս իր կենաց մէջ շատ դէպքերու կը պատահի . . . կրնայ ըլլալ որ խեղճ Յակոբոս այս եղածներուն չդիմանալով իր հօրը տունէն փախած ըլլայ:

— Իմ բարեկամու հինքերէս տիկնոջ մը կօշկակարը իր ակնոցը կտարած ըլլալուն պատճառաւ, կըտէր ինձ երէկ երիտասարդ մը, վարդախտէն (գըլլամուգ) բռնուեցայ:

— Ի՞նչ, յարաբերութիւն կայ, բա՛ր իրեն, վարդախտին և կօշկակարին ակնոցին մէջ տեղը:

— Կեցի՛ր որ պատմեմ, քաւ նա. այս տիկինը ինձի խօսք տուած էր իրիկուն մը մեր ծանօթներէն, մէկուն տունը նուագագրօս մը կատարել, Նոյն օրն առաւօտուն կըսպասէր որ կօշկակարն իր գեղեցիկ կեռասագոյն կօշիկներն բերէ, զորս համագոյն զարդաւանքի մը հետ պիտի հագնէր. բայց կօշկակարն ոտքին չափը առած օրը ակնոցը կտարած ըլլալով՝ նոյն օրը թէպէտ անոր ուզած կօշիկներն կը բերէ, սակայն խիտ պղտիկ էին Տիկնոջ կը փորձէ զանոնք հագնել, կը տեսնէ որ շատ կը սեղմեն. բայց կօշկակարն կապահովէ որ երթալով կը բացունեն, Տիկնայք չափէն աւելի սուուրին պղտիկցնել կախորժին, բայց շատ անգամ կը նեղուն: Այս տիկինն ալ փիչ մը կաղ քալելով դուրս կենէ. երբ պատուարին վրայ կը հասնի, հոն քանի մը ծանօթ մարդիկ պատահելով կը ջանայ որ կաղ չի քալէ, և կըսկի թեթեւ գնացքով յա-

1911



Բայց երբ՝ ալ . բայց ոտքը չափազանց կը նեղ-
 ուի , կուսի . ուստի և կը սպարտաւորի ետ
 դառնալ , ճուն հասնելուն պէս անիծեալ կօ-
 շիկները մէկ կողմ կը նետէ , ստքերուն կը նա-
 յի որ վիրաւորուեր են , և ութ օրէ չափ տունը
 մեալ պէտք է : Իսկ ես , որ այս եղածներուն
 ամենին տեղեակ չեմ , կերթամ մեր այն ծա-
 նօթին տունը , յուսալով որ այն գիշերուան
 հանդէսը պիտի վայելեմ : Տիկինը հոն չեմ գըտ-
 ներ . տան տիրուհին մինակ հոն է , որ թէպէտ
 սիրուն տիկին մ'է , բայց քառատունը հինգ-
 տարեկան է : Ժամանակը կանցնի , անհամբեր
 կըսպասեմ , և երկար ատեն պարապ տեղն
 սպասելէս վերջը դուրս կեննեմ ուր երթալիքս
 չի գիտնալով : Թատրոնի մը առջևէ անցնելով
 անսխալապէս ներս կը մտնեմ , չէ թէ խաղին
 ներկայ գտնուելու , այլ ժամանակ անցընելու
 նպատակաւ : Հոն սիրուն տիկին մը տեսնելով
 ըստ սովորութեան քովը կերթամ , և քանի մը
 հարցումներ կընեմ , որոց կը պատասխանէ . կե-
 րէ էր թէ շատախօսութենէ կախորժի . ես ալ
 շատ ուրախ էի զիս զուարճացնելու առիթ գը-
 տած ըլլալուս համար , վերջապէս թատերա-
 կան խաղը կը լսնայ . ես ալ թիւս տիկինին տա-
 լով գուրս ելնել կուզեմ . քիչ մը ընդգիմանա-
 լէն վերջը կընդունի . թատրոնէն միասեղ
 գուրս կեննեմ , և երբ տուն կը հասնինք ,
 հետեւեալ օրն իրեն այցելելու խոստամբ հը-
 բաման կուզեմ ու կը մեկնիմ : Երկրորդ օրն ա-
 ուանց զանցառութեան կեննեմ կերթամ : Հա-

մառտիւ խօսելով այն տիկնոջ մտերմը կըլ-
 ւամ , և իմ մէկ այցելութեանս օրը վարդախտէն
 կը բռնուիմ . անտարակոյս այս տիկինը յառա-
 ջուց վարդախտ ունեցած ըլլալու էր , զորս ես
 չէի գիտեր : Տեսար հիմայ , եթէ կօշկակորը
 իր ակնոցը կտրած չըլլար , այս բաներն ալ
 իմ գլուխս չէին գար :

Երիտասարդը իրաւունք ուներ . շատ ան-
 գամ ամենապարզ խորհուրդներ և ամենաշքն-
 յին պարագաներ մեծամեծ դէպքեր կը ծնա-
 նին : Ուստի եթէ ինձ հարցնես , ես պիտի ը-
 սեմ թէ Յակոբոս ալ իր անուանը համար եղած
 նախատանացը պատճառաւ այսպիսի որոշում
 մ'ըրտ : Որչափ մարդիկ կան , որ իրենց նախ-
 նիքէն իրենց մնացած նշանաւոր անուան մը մեծ
 կարևորութիւն տալով այնպէս կը յարգեն որ
 ուրիշին տրուած ժամանակ պարզապէս կը զայ-
 բանան : Երանի անոց որ գիտեն իրենց անուն
 փառաւորելի զոյն միևնոյն փառաւորութեամբ
 իրենց սերնդոց ալ թողուլ : . . . Բայց , կարծեմ
 անուալ երանի այն մարդոց , որոց անունը ոչ
 տեսելութիւն կը գրգռէ , և ոչ ալ նախանձ :

Արդ՝ Միւրվիլի ընտանիքը արդէն ճանչ-
 ցար . հիմայ կը մնայ քեզ իմացնել որ Եդուար-
 դին հայրն ու մայրը մեռած էին . այս երկու
 ամուսիններն առանց իրենց Յակոբոս որդւոյն
 ուր երթալն և ինչ եղած ըլլալը գիտնալու
 կարճ միջոցի մը մէջ իրարու ետեւէ գերեզման
 գացած ըլլալով իրենց Եդուարդ որդւոյն յանձ-
 նարարած էին , որ եթէ Յակոբոսը կրկին տես-

նկելու քրայ, իրենց կողմանէ անոր հօրը առ-
նէն փախչելու պակասութեանը ներքէ :

Եդուարդ դորձունեայ էր իր պաշտօնին
մէջ : Քսաներկու տարեկան էր և երկու հա-
զար ֆրանք թողակուներ . ուստի եթէ դոր-
ձը գիտնալու ըլլար , կրնար աղէկ ապրիլ :
Չքսանքը կը սիրէր . բայց նուազադրօս ,
թատրոն և ասանց նման զբօսազայրեր իր առ-
ջև այնչափ յարգ չուէինն . խաղամորթիւն
ալ չուէր : Գեղեցիկ օրերդներն կը հետազօ-
տէր , բայց թէ ոչ գէշ նպատակաւ . և եթէ ա-
նանք խառութիւն ալ բանեցընէին , չէր սըր-
դօղէր : Շատ դիւրութեամբ ալ կը հրապուր-
ուէր , և երբէք անձնական պատուոյն ալ այն-
չափ զգոյշ չէր դասուէր . բարերազդարար իր
այս բարքովն գէշ օրերդայց հետ ալ ամուս-
նանալու միշտը չէր ունեցած : Վերջապէս
Եդուարդ թէև չէր կրնար այլազ իրեն օրի-
նակ ներկայանալ , բայց մեծամեծ պակասու-
թեանց տէր ալ չէր :

Ուստի աիկին ժերմեջլ շատ դիւրաւ որո-
չեց իր Ատէլներ Եդուարդ Միւրովի տարու :

— Այս երեստարբը , կըրէր , իմ աղջիկս
երկանիկ պիտի բնէ , վասն զի այնչափ խիստ
բարձր մէկն ալ չէ Ուրեմն իմ սիրելի
աղջիկս տան աիկին մը պիտի ըլլայ . և տան մը
անտեսութիւնը երբ կրնո՞յ մը ձեռքը ըլլայ ,
այն տունը շատ աղէկ կրնայ կառավարուիլ :

Ահա այս կերպով պիտի կատարուի հիմա
Քատրան-Պէտ եղած հարսանեայ հանդէսը :

ԳԼՈՒԽ Բ .

ԺԻՆ ԿՈՉՈՒԱԾ ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԷ ՄԸ
ԵՒ ԸՆԶԱՏՈՒԹՅ ՄԸ ՊԱՏԱՆԱԾ ՄԵԾԱՄԵԾ
ԳԼՊԲԵՐՆ

— Ինչ սիրուն , ինչ գեղեցիկ և ինչ լաւ
կազմուածքի տէր աղջիկ մ'է . . . Ինչ շնորհք ,
ինչ վայելչութիւն ունի : Այս խօսքերն կը
դառնային երիտասարդաց և մեծերուն մէջ
խկ , որոնք անգագար հարբ կը գիտէին և
պարած ատեն անոր ամեն մէկ շարժուածքն
կը հետազօտէին : Ո՞հ , որչափ երջանիկ է Եդ-
ուարդ . այս էր ամենուն կարծիքը :

Եդուարդ կը լսէր այս խօսքերը . և յիրա-
ւի այնպէս երջանիկ կը համարէր ինքզինքը ,
ինչպէս կրնայ ըլլալ մարդ , երբ բոլորովին եր-
ջանկանալու կէտին վրայ գտնուի : Բայց իր
փախաքը , իր անհամբերութիւնը ծածկելու
համար կը ցատկէր , կը սարէր և վարկեան մը
տեղը համոզար չէր կրնար վերջը երբեմն եր-
բեմն առանձին տեղ մը կերթար ժամացոյցը
նայելու համար Վերս շատ կտուխ է ,
կըրէր . . . չէ թէ իրեն համար . . . բայց պէտք
է իր կտոյր պատկառանքն ալ ինկատի առ-
նուլ . . . առիցը զատ , մայրը ինչ կըրէր , հան-
դիտականք ինչ կըրէին . . . չէ , չէ , պէտք է
սպասել ո՞հ , որն ալ որչափ երկնցաւ . . .
Խեղճ ամուսինք . այս ժամը ձեր կրնայ

ամենագեղեցիկ ժամն է . . . կուղէք որ շուտով անցնի . . . Ինչո՞ւ դժգոհ կերևուիք :

— Փեսան սիրուն դէմք մ'ունի , կրտէին տիկնայք ցած ձայնով . իսկ օրտորքք թէպէտ ձայն չէին հաներ , բայց այնպէս ըլլան կը խորհէին :

— Ահ , պարոն վօլանվիլ . . . քսաներկու տարի անցած է մեր ամուսնութենէն ի վեր , և այսպիսի հանդէսներու մէջ երբէք զիս չես պատուած , ըսաւ իր էրկանը քառասունհինգ ասրեկան կարմիրներ հագած , ծաղկազարդ , տանիքէններով և երկններով պծնուած տիկին մը , որ պարահանդէսի սրահին մէկ անկիւնը քաշուած ճաշը ըմննալէն ի վեր է ունայն տեղը կըսպասէր որ մէկը զայ զինքը պարելու հրաւիրէ : Գ. վօլանվիլ , որ երբեմն պարահանդէսներու գլխաւոր պարողներէն մինէր , իսկ այժմ Տէրութեան գնահատ (էհլի դըպլէ) է , իր կնոջը ամենեւին պատասխան չի տար , քթախոտ մը կը քաշէ , և տեղէն ելնելով թուղթ խաղացող երկու հոգւոյ քով կերթայ անոնց խաղը տեսնելու համար :

Ասոր վրայ տիկին վօլանվիլ կը օրդ օղի և տեղը կը փոխէ , ինչպէս որ անկից յառույ շատ անգամ փոխած էր , և կերթայ երկու երիտասարդներու մէջ տեղը կը նստի , անտարակոյս յուսալով որ իր նստած կողմը պարի պիտի հըրաւիրուին , ինքն ալ պարողներուն մէջ դըտնուած համարուի : Բայց իր յոյսը ի դեբուս կելնէ . երբ կը տեսնէ որ երիտասարդք դէպ ի-

րոն կուգան , ի վիտի գըւսը քնքուշ կերպիւ շարժել , կրննին ժողովը , ոտքերն դէպ ի յառաջ նետել . . . երիտասարդք քովը կուգան . սակայն , ցաւ է ըսել . . . ձայն և ալ կողմերն կերթան , և այս տիկնայ ամենեւին երեսը չեն նայիր , ու անոր նայուածքն ու գեղեցիկ շարժումներն չի տեսնել կը ձեռացընեն :

Ստուգիւ խիտ անհաճոյ բան է մարդուս ինքզինքը երեցնել ուզելը , և տիկին վօլանվիլ պարող մը հրապուրելու համար ինչ միջոց գործածելիքը չգիտնալով ինքնիրեն կը հարցընէ թէ արդեօք իր սրունքներուն ատորին կողմը երեցընէ . վասն զի իր սրունքն երբեմն մեծ արգիւնք ցուցնելու և որով այլ ևս իր արգիւնքը կրօնցուցած ըլլալուն համար , պէտք էր անգամ մը սրունքներուն ազդեցութիւնը փորձել :

Վերջապէս տիկին վօլանվիլ կորոչէ , և իր սրունքներուն ատորին կողմը կարելի եղածին չափ երեցընելու կերպով բանալու վրայ է . . . նայիս անդինքն բարձր ձայներով Գորչի մը մէջ պակած չորրորդ մը կուզուի : Ալ պարող չի կայ . ոմանք արդէն մեկնած , միւսներն ալ իրենց տեղն են , Գանդբահեր և անուշահոտ իւղերով օծուած երիտասարդ մը աչքը պարահանդէսի սրահին շուրջ կը պտտընէ . կը տեսնէ գրեթէ տիկին վօլանվիլ , կառնու իր խումբը և մտերութեամբ դէպ ի անոր կերթայ զանի պարել հրաւիրելու համար :

Տիկին վօլանվիլ երիտասարդին ժամանակ

չի թողուր իր հրուէրը լմնցընելու, իսկոյն տեղէն կենէ, քովը կերթայ, ձեռքը կը բռնէ և այնպէս կը սեղմէ որ երիտասարդը կը պոռայ, և գէտ կ'ետև կը փախի, կարծելով որ խեղճ կ'ընը ՚իդերու գելում (սիկի չէքիւմեօսի) ունի. անհանդատութեամբ երեսը կը նստի և չգիտեր թէ ինչ ընէ . . . բայց տիկին վառանկիլ անոր խորհելու ժամանակ չի թողուր. ամենայն զորութեամբ դէպ ի պարին տեղը կը քաշէ կը տանի. կը կայնի իր տեղը, իր Կեղեկին առջեւ կը ծածանի, և դեռ խեղճ երիտասարդին ապուրիւնը չանցած՝ անոր կատուի պոչ (գէօ արչա) և անգղիական շղթայ (չէն անկէղ) ընել կուտայ:

Տիկին վառանկիլի գեղեցիկ և յաջողակ պարը իր ազդեցութիւնն քրաւ. սրահին մէջ խառնաչփոթ մրմունջ մը սկսաւ տարածուիլ, և թուղթ խաղաղոյններն թուղթերնին ձգելով պարին տեղն եկան տիկին վառանկիլ տեսներու համար. տիկին վառանկիլ կարծելով թէ իր պարերուն կը հասնին, խիստ յափշտակուեցաւ, իր զորութիւնն ու աշխուժութիւնը կրկնանայտակեց, և ջանաց իր Կեղեկը զմարտիչը նեւ. բայց նա անոր ուրախութեանը չէր մասնակցեր, և տեսնելով որ իր բոլորաբը շատ մարդ խռնած են, մանաւանդ թէ երիտասարդաց իրեն ուղղած ծաղրական մեծարանքն ու դեռահաս կանանց ալ չարակամ զխաղութիւններն լսելով բարկութեանէն կրակ կորած չորթունքներն կը խածնէր, բուերը կը սեղմէր,

և իր բոլոր ունեցածը տալ կը խոտանար, միայն սա դէմ առ դէմն (քօնթրոտան) լմնար, բայց տիկին վառանկիլ դրեթէ անոր ժամանակ չէր ձգեր. կուզէր որ շարունակ պարէ կամ յառաջ երթայ, և իր Կեղեկին տուած խրատներն ալ մտիկ չէր ընէր, որ միշտ սա խօսքերը կ'ընէր իրեն:

— Կարծու մերը չէ, տիկին . . . կեցիք հիմայ . . . անցք ընելու կարգն անցաւ . . . կեցիք, յառաջ մ'երթաք:

Սակայն տիկին վառանկիլ չէր համբերեր, հինգ ժամ սպասածի պէս կուզէր անդադար պարել. և երբ դիպուածով վարկեան մը շունչ առնէր, աչքերն զուարճութեամբ բոլորտիքը խնող անձանց վրայ կը դարձնէր, և իր ճակտէն վազած քրտանց կաթիլները իր թաշկեանովը սրբելով, կարծես իր նայուածքով սա խօսքերը ընել կուզէր ժողովականաց:

— Այսպիսի պար մը տեսնելու յոյս չունէիք երբէք . . . ուրիշ անգամ զիս ամենէն առաջ պիտի հրաւիրէք . . .

Բայց և այնպէս Պէլքուր (տիկին վառանկիլի Կեղեկին անունն է) յանհարինս կը շարշարուէր, դէմ առ դէմն լմնալու վրայ էր . . . արդէն երբ անգամ նշանաւոր Կեղեկ պարն խաղուած էր, և եթէ անգամ մ'ալ խաղուէր, պիտի լմնար, նայիս երիտասարդ, խորամանկ, ճարտար և ծիծաղաւէր նօտար մը նուագածուաց քով վազեց և յանուն ընկերականութեան Ժ՛՛՛ ըսուած եղանակն նուագել

խնդրեց, Հարսանեաց նուագածուք սովոր են բան մը չի մերժել, ուստի սկսան թիկն նուագել այն միջոցին, երբ Պէլքուր տիկին վճռանվիր ողջունելով փախչելու վրայ էր :

Դժոխոց շատուածին պաղատող Որփէտսի ձայնը այնչափ ազդեցութիւն չբրաւ Պզուտոնի վրայ, որքան իւր թախներուն ձայնն ու թիկն հղանակը ազդեցութիւն ըրին տիկին վճռանվիր վրայ :

— Պարոն . . . պարոն . . . չի լինցաւ . . . պոռաց նա Պէլքուրի ետեւէն . իսկ նա չի բնել ձեւացուց, և արդէն սրածին դուռն ալ հասած էր . . . տիկին վճռանվիր ետեւէն վազեց, հասաւ, բռնեց և բաւ . պարոն, ի՛նչ կընէք . . . նուագարաններն չէք լսեր . . . ո՛հ, այս ի՛նչ աղւոր եղանակ է . . . սաի թիկն մ'է . . . շուտ ըրէք, եկէք . . . :

— Տիկին, հազար անգամ ներում կը խընդրեմ . . . ես կը կարծէի որ . . . :

— Բայց սաի թիկն մ'է պարոն, ես այս պարը շատ կը սիրեմ . . . :

— Տիկին . . . անհանգստութիւն մը կը դգամ, և . . . :

— Պիտի տեսնէք իմ անդղիական քայլերո . . . թիկն պարած ատենս շատ մարդ հաւնած է ինձ . . . :

— Տիկին, քիչ մը ոգ լլիտի առնում . . . :

— Իմ ամուսնոյս պարահանդէսներն շատ պարած եմ . . . :

— Բայց, տիկին . . . :

Պէլքուր ի զուր կուզէր հեռանալ, տիկին վճռանվիր զինքը չի թողուց, և առանց անոր ներումն խնդրելուն ուշադրութիւն բնելու քայլեց տարաւ պարին տեղը : Պէլքուր ալ տեսնելով որ երբ վէճն այսպէս երկարի, հանդիսականաց ծիծաղն ևս առաւել պիտի շարժի, վերջապէս հաճեցաւ ու պարին տեղն եկաւ : Հանդիսականք փութով ետ քաշուեցան այս ուշադրութեան արժանի երկու պարողներն տեսնելու համար :

Նշանը արուեցաւ . . . սկսան պարել . . . Իւրեքներն ալ կողմ . . . Գահներն ձախ . իսկ ամենէն առաջ տիկին վճռանվիր . ինչ ետանդով կը վազէ դէպ ի միւս պարողներուն և զանոնք իրենց վրայ կը դարձնէ . . . քրտինքը պտերէն կը հոսի և իր կարծրութիւնը կարէ, գլխուն վրայ գտնուած մետաքսեայ ժազգաւէններէն երկուքը դուռքէն (գուլք թօղու) տկանջին տակը կիցնան, մազերուն գանգուրները կեղծուին, գլխու վարդէ պսակը (կիրլանտ) մինչև վիզը կիցնայ, բայց ասոնց մէկն ալ տիկին վճռանվիր աչքին չերեւար . մէկ վայրկենի մէջ պարը կը լինցնէ ու տեղը կը դառնայ . . . Սահայն Պէլքուր քովը չէ, այլ պարին մէկ ձեւէն (Ֆիկիրս) յառաջ եկած շիութութեան ատեն փախչելու ժամանակ գտաւ : Հիմա Իւրեք մը պէտք է տիկին վճռանվիր . առաջին անգամ իրեն ներկայացողի մը թեւը կառնու : Այս ներկայացողն կեղծ ծամով ծերունի մտակարար մ'էր, որ առաջին անգամ

անոր աչքին երեւցաւ . Այս մարդը՝ հետա-
քրքրութենէ մղուած եկաւ բաղնութեան մէջ
խառնուեցաւ , հոն պարողներուն մէջ պղտիկ
ճերմակ , թարմ և աւելց վիրով ջրան տարե-
կան գեղեցիկ օրիորդ մը տեսնելով սկսաւ ա-
մենուն առջին սիրահարական նշաններ ցոյց
առաւ : Երբունի մասակարարն սիրահարի մը
թմրութեամբ տեսնելով սր սոյն օրիորդն ու
իր փայլէքը պարած տեսնին իրենց շտոժում
ներն հազիւ թէ կը տեսնուէին , խիստ զմայլած
միշտ սնունց կը նայէր , վասն զի երկար ասունէ
ի վեր անգլխակ , հասարակաց , բնկերական ,
չինական , նաև գեղջկական պարահանդէսնե-
րու մէջ իսկ այսպիսի բան մը տեսած չէր : Ուս-
տի իր այս գիւտին վրայ սքանչացած իր գո-
հունակութիւնն այդ սիրուն օրիորդին յայտնե-
լու նպատակաւ զուարճութեամբ ժպտելով իր
լեզուին ծայրը անոր կը ցուցնէր . Ճերունի
սիրահարք իրենց սէրը գողտցի ինացնելու
համար այս միջոցը կը գործածեն :

Բայց և այնպէս օրիորդը թէ ձեր մատա-
կարին և թէ իր ծամածուութեանց բնաւ ու-
չադրութիւն չէր բներ . ձեր մատակարարն ալ
իր լեզուն ցուցնելէն յոչնած այն ինչ կը խոր-
հէր բազմութեան իրոր խառնուելու և զիրար
նեղելու միջոցը երթալ օրիորդին ներկայանալ
իր սէրն անոր յայտնելու համար , նոյնի անգլի-
էն տիկին վոլանովիլ կայծակի արագութեամբ
վրայ հասնելով օրիորդին և ձեր մատակարարին
մէջտեղը կը մտնէ , և կրակի իր անգղեական

քայլերն առնուլ , այլ ընդ այլը շարժումնե-
րով պարելով :

Երբունի սիրահարը ապուլ դէմքով մը տի-
կին վոլանովիլ ստեղծել և խառնայտոթ կեր-
պարանքն ու անոր եղծուած զարդարանքն
տեսնելով ուզեց ետ փախիլ . . . տիկին վո-
լանովիլ երկու ձեռքով բռնեց զանի , սկսաւ
դարձնել , և ցատկեցնել :

— Տիկին . . . պարել չեմ գիտեր . . . կը
պոռար ձերունի մատակարարն ինքզինքը ձեռ-
քէն ազատել ուզելով :

— Եկէք , պարեն , եկէք . . . ինծի պարող
մը պէտք է . . .

— Տիկին , թողէք զիս . . . կենացս մէջ է-
պարած չեմ . . .

— Ասի էլա չէ . . . պտտն , թէ մ'է :

— Տիկին . . . կեցիք , կաղաչեմ . . . դը-
լուխս կը դառնայ . . . հիմայ պիտի իյնամ :

— Ձէ , շատ աղուտ կը պարէք :

Որչափ անմիտ կին մ'է եղեր տիկին վոլան-
ովիլ , որ կը կարծէ թէ քսան տարեկան օրիոր-
դի մը նման կընայ ուրիշներն հրապուրել . այն-
պէս համոզուած է թէ իր քայլերն , շարժում
ները , աշխտութիւնն ու իր մանր ու մուր
երևոյթներն ամանքն ալ զմոյլեցնելու են , և
երբէք չի խորհիր որ տարիքներն իրերուն կեր-
պարանքը բարբովին կը փոխեն : Քսան տարե-
կան հասակի մէջ երեցած գեղեցկութիւնը՝
քառասուն տարուան հասակի մէջ կնիժագու-
թիւն մը կը համարուի , և երկուստարդական

հասակի բնական եղած թեթևութիւնն ալ չափա-
հասութեան մէջ յիմարութիւն . և թէ երիտա-
սարգի մը ներքիւ եղած վերքիկ պչրանքներն
(էղիլիպ պիւզիլմէ) ժամանակն անցնելէն ետ-
քը ծաղրական և երբեմն ալ յիմարական կերևին :

Այլ սակայն մարդս կրնայ չափահասու-
թեան ատեն ալ հասնել ըլլալ . բայց ասոր ալ
միջոցը ինքզինքը երիտասարդ երեւցընելու
ջանալն չէ . մայր մը կրնայ իր աղջկանը գէժժ
առանց զգուշութիւն մ'ընելու պարել և հա-
ճելի ալ ըլլալ, իսկ երբ պատաւ մը տանը-
վեց տարեկան օրիորդի մը պէս հագուելով
երիտասարդ օրիորդներու հետ մրցելու ջանք
ընէ , անկէ ալ ծիծաղելի բան չի կրնար ըլլալ
աշխարհիս վրայ :

Ինչպէս որ ընթերցողն իմացաւ , տիկին
Վօլանովի պարած ատեն յոգնիլ ըսածդ չզի-
տեր . ուստի ուղեց օր իր հետը պարող մա-
տակարտն ալ իրեն նման միշտ եռանդեամբ
պարէ . բայց խեղճ ձերուսին կեռասի պէս
կարմրցած աչքերը կը դարձընէր առանց բան
մը տեսնելու . ամեն բան կը դառնար իր շոր
կողմը . պարը , սարսիթիւնը և բարկութիւնը
վերջապէս զինքը կը թմրեցընեն . զլուխը կա-
րելի եղածին չափ իր Գոթլին գլխէն կը հեռա-
ցընէ . . . այս ամենը բաւական չէ . առանց
իր իմանալուն զլիսու մազն ալ գետինը կի-
նայ , պարողներն վրան կը կոխուտեն կանց-
նին , և մատակարարին զլուխը բարձրութեան
մէջ ձեռքին պէս մերկ կերելի :

Այս դէպքը ձեր մատակարարին կատարու-
թիւնը կուեցընէ , ամենայն զօրութեամբ ինք-
զինքը իր պարենկերին ձեռքէն կարճակէ , և
զանի սաստկութեամբ կը հրէ . տիկին Վօլանովի
ալ կերթայ կիչնայ մէկ գէր մարդու մը փորին
վրայ որ նոյն միջոցին պարահանդէսի սրահին
մէկ ծայրը հանգարտ կերպիւ աթոռի մը վրայ
նստած՝ մտքովը նոյն օրը կերակուրներուն
անունը կուտար :

Տիկին Վօլանովի յիշեալ գէր մարդուն վրայ
ինկած ատեն մարդն աղաղակ մ'է կը բրցընէ ,
« օգնութիւն , կը խղդուիմ կոր » ըսելով . բայց
տիկին Վօլանովի ամենեւին տեղէն չի շարժիր ,
որովհետև անանկ անընդհատ սարսուղ մէկն ա-
ռանց մարելու չի կրնար ուրիշին վրայ կիցալ :

Պ. Թուրթ (աօի յիշեալ գէր մարդուն ա-
նունն է) անդադար օգնութիւն կը պօռայ , Պ.
Բօպինօ ալ (այս ալ ձեր մատակարարին անունն
է) անդին բարձր ձայնով իր կեղծ ծամը կու-
ղէ , կը փնտռէ սրահին ամեն կողմը նայելով ,
բայց չի կրնար գտնել . վասն զի սրահը զբա-
նուող երիտասարդ մը զայն գետնէն գտնելով
պատուարին պատահանէն փողոց նետած էր ,
և ծամն ալ գացեր կառավարի մը քթին վրայ
ինկած էր , որ նոյն միջոցին դէպի երկինք կը
նայէր իմանալու համար թէ արդեօք հետեւ-
եալ օրն պիտի անձրէ՞ :

Բայց և այնպէս եղուարդ և տիկին Քէր-
մէջլ կը ջանան այս անկարգութեան առաջըն
առնելով զամենքը հանդարտեցընել : Իսկ Ա-

տէրին հոն դռնուած օրորողաց հետ տիկին վժռանվիրի գրից , Պ. Թուրթի կերպարանքին , և Պ. Բօպինօյի բարկութեան վրայ ծիծաղելէն կը մարէր :

Պ. Վժռանվիր տեղէն ելնելով կնկանք քով դնաց , ծաղկեայ պտակ վզէն հանեց , ափք սկսաւ շփել , մինչդեռ տիկին ժէօրմէջլ ալ աւնոր քթին դէմ անուշահոտ ջրոյ շիւ մը բռնած էր . . . Սակայն այս ամենն բնաւ օգուտ մը չըրին տիկին վժռանվիրի խելքը գլուխը բերելու համար : Տիկին ժէօրմէջլ ինչ ընելիքը չէր գիտէր : Պ. Թուրթի երգուըննալով կը պոսար որ երբ շուտով զինքը այս ծանր բեռին տակէն չաղատեն , տիկին վժռանվիրի կամ թեք կամ ուրիշ մէկ տեղը պիտի խածնէ , որուն վրայ Պ. Վժռանվիր իր ընչատուփը կը հանէ անսով միջոց մը դռնելու համար :

Նոյն վայրկեանին , Պ. Բօպինօ սրահին մէջ ասդին անդին կը վազէր , և իր մազը ամեն տեղ կարասեաց մէջ կը փնտռէր , բայց պարագայ տեղը չկերջը տիկին վժռանվիրի բոլոր տիքը պտտող մարդոց քով կը ժտանայ , հոն Պ. Թուրթին ու տիկին վժռանվիրը իր վրայ կըլող աթոռին տակը գորշ (բիւլ բէնկի)բան մը կը տեսնէ , իսկոյն աթոռին քով կերթայ , Պ. Վժռանվիրը մէկդի կը հրէ , որ իր դէմը կայնած էր . . . գետին կը ձռի , և ձեռքը աթոռին տակը կերկնցընէ հոն տեսած գորշ բանն իր մազը կարծելով առնելու համար :

Պ. Բօպինօ այնչափ սաստիկ հրեց զՊ. Վժռանվիրը որ խեղճը հասարակչուութիւնը կորսործնելով կէս մը իր կնկանք վրայ ինկաւ , և իր ընչատուփն ալ որ դեռ նոր բացած էր , բոլորովին իր կնկանք քթին , բերնին և ծնօտին վրայ խփեցաւ :

Այս գէտքը տիկին վժռանվիրի խելքը գըլուխը բերաւ . հինգ անգամ իրարու ետեւէ վռնեաց , աչքերը չփեց , բերանք բացաւ . . . շատ մը քթափոտ կլլեց , և սկսաւ այնպիսի սոսկալի կերպարանք մը ցուցնել որ թէ իր ամասինն և թէ է քովը դռնուող մարդիկն սկսած քովէն փախել . տիկին վժռանվիր կը աննշուէր , քանի մ'անգամ ալ Պ. Բօպինօյի քթին վրայ թքաւ , որ նոյն միջոցին ձեռքը աթոռին տակէն կը քաշէր սոսկալի հայհոցութիւններ անզալով տիկին վժռանվիրի գլխուն :

Գիտե՛ս , ընթերցող , Պ. Բօպինօ ինչու այդչափ կը հայհոցէր : Վասն զի աթոռին տակը գըլուած դորշ բանն իր մազը կարծելով ձեռքը հոն տարած ատեն նոյն միջոցին աթոռին տակէն կը ամենայն հանգստութեամբ նստող կանուռ մը սորոք բռնէր , կատուն ալ ըսախիր սովորութեան խեղճ մաստկարարին ձեռքերը ճանկըռտելով արեւներ էր :

— Գժբարդութիւնը շատ դէշ բան է , կըսէր անցեալ իրիկուն բարեկամներէս մին որ ինչ վիշտը (Գող կայաղակ) անուն թատերական խաղին ներկայ դռնուած , և նոյն խաղին մէջ յիշուած փոքրիկ աղախնայն Գժբարդութեանը

վրայ լացած էր : Ես ալ կրեմ թէ այս բարեկամս ըսել կուզէր որ նոյն իրիկունը Պ. Բօպի-նոյի գլուխը դժբաղդու թիւն դժբաղդու թեան վրայ պատահեր էր :

Երբ մէկը իր չուզելովը կը պատէ և իր մտն կը կործնցնէ, և զայն փնտռած առնն ձեռքը կատուի ճանկերուն կը հանդիպի, և երեւոյն վրայ ալ կը թ. քննէ, անանկին ներեալ է սրամտիլ : Ուստի խեղճ քմատակարարն ալ այնպէս սրամտեցաւ, որ երեսին գոյնը դեղին, կարմիր ու ճերմակի փոխուեցաւ . իր կատաղութենէն ալ բնա աչքին բան մը չէր երևար, և առանց սեռի զանազանութիւն ընելու մէկէն տիկին վօլանսիլի վրայ պիտի ըրձակէր . . . երբ հանդիսականներէն խել մը անձինք արգիւլեցին զինքը յանդիմանելով զայն որ նորա այս ձախորդութեանցը պատճառ եղած էր :

Շատ դժուարաւ կըցան համոզել զՊ. Բօպինո, ըսելով թէ տիկին վօլանսիլ կամաւ չէր թ. քած իր երեսը : Վերջապէս իշուարդ կըցաւ զանի քիչ մը հանդարտեցնել, և երբ նա երեսի քրտինքը կը սրբէր, մեր երիտասարդ փեսան գրպանէն գեղեցիկ թաշկինակ մը հանեց, և տուաւ ծեր մատակարարին որ գլուխը կապէ :

Պ. Բօպինո ընդունելով զայն գլուխը կապեց, վրայէն ալ իր կլոր դիւարիկը դրաւ, որով ճշդիւ նմանեցաւ սպանիացի սպաստերի մը, կամ տեսակ մը անկանոն զօրքերուն, կամ եթէ աւելի աղէկը կուզես, այն պղծիկ հազուած չուներուն որոնք իշու վրայ բեռցուած կողով-

ներու մէջ փառաւորապէս նստած պատուարներուն վրայ կը պտըտին :

Ծեր մատակարարը առանց տիկիններն ու հարսն իսկ ողջունելու սրահէն դուրս ելաւ . մեկնեցաւ շուտով ֆատարան-Պէտէն, որ առնէ ճամբուն վրայ դանտած խել մը տղաք զինքը այն կերպարանքին մէջ տեսնելով սկրան վրան ծիծաղել ու զինքը ծաղրել . երբէք կառք չի նստաւ, որովհետեւ առնը ծոտ էր : զնաց առն և պատկեցաւ անիծելով էշերն ու քիկերը, և նոր մալ մը առնելու համար տալիք ստակն հաշուելով :

Իսկ տիկին վօլանսիլը, որ ալ վերջապէս Պ. Թուրթի վրայէն ելած էր, պարտաւոր էր պարի սրահէն մեկնիլ . որովհետեւ իր կլլած քթախտը սրտին վրայ խիտ անհասեց արդիւնք մը ըրած էր : Անդադար կը թ. քնէր, և իր զգուանքէն յիշաւ հեծկուտալ ու փակել, որով այնպիսի գեղեցիկ հանդէս մը տակն ու վրայ ընելու պատճառ եղաւ :

Ուստի անմիջապէս վերուցին զանի ու տուն տարին : Երբ հայելիի մ'առջևէն կանցնէր, մէջը նայելով երբ տեսաւ որ երեսը քիթախտէն բարբորիկն կնճռոտած, մազերը ցրուած և հազուատներն խանդարուած են, այնչափ դէշցաւ որ նորէն մարկիք պիտի գար վրան . վասն զի տիկին վօլանսիլը իր տարիքին չի նայելով ինքզինքը հաճելի երևցնելու մեծ փոյթ ունենալուն համար, այսպիսի կերպարանք մը զինքը անշուշտ յուսահատութեան մէջ ձգած էր :

իսկ զՊ. վճռանովի շատ դժուարաւ համոզեցին որ կնոջը հետ երթայ, վասն զի քովն անգամ դալ չէր ուզեր կարծելով թէ երեսը դիմակ գրեթե են : վերջապէս այր և կին կառք մը հեծնելով ելան տուն դաղին, ուր պիտի թողունք զկրննք, եթէ կը հասիւ, ընթերցող, մեր հարսանեաց հանդիտին դառնայու համար :

Դիցաբանութեան մէջ կը պատմուի թէ թերթիքը վաճառած էր զանդուծն Տիւբորտ (գժառութիւն), որ թէթիտի ու թէթի հարսանեաց հանդիտին չի հրաւիրուելուն համար, անկէ ի վեր է հարսանեկան հանդէսներն յանկարծակի դալ խանդարելու սովորութիւն ըրած է : հաւանական է որ Տիւբորտ մեր ֆատրան-Պիէօի հարսանեաց հանդիտին ալ եկաւ խառնուեցաւ . վասն զի կրնն թէ այս թշուառական գիցուհին անկարելի է որ և է տունէ մը վաճառել, և երբ նա հարսանեաց օրը չի գայ, նայն տարւոյն մէկ օրը հարկաւ կուգայ :

Բայց հիմա մէկդ թողունք թերթիքօրը, Տիւբորտը և բոլոր դիցաբանութիւնը . անանկ ձևեր ու անանկ փոխաբերական գարձուածներ չի գործածենք . և ընթացի վիպասանութեանց հեղինակներուն յանձնենք այն ծաղիկներն, սահանքները, լուսինը, աստղերը, և մասնաւոր այն բանաստեղծական փոխադրութիւններն որ դիցապոէզին ի սկզբուն ըսել ուզած բանն . խօսքին վերջը քեզ կը յայտնեն, այն սիրուն դարուածներն որով հայր մը . . . վերջոյ՛ տեղի ԹՅՅ Կոթայ ԳՆԿ . . . պիտի ընէ, փոխանակ պար-

զապէս՝ Աւելի՛ տեղի ԹՅՅ Կոթայ ըսելու, որն որ կերելի ինձ թէ աւելի յայտնի խօսք մը կըլլայ, և այնպիսի կերպով մը բուռած կը համարուի, որով կը խօսին այսօր աշխարհի վրայ և բնկերականութեան մէջ, Մինչդեռ միւսը նուազութեամբ է, զոր պարտաւոր չեն գործածել այնպիսի անձինք որք առանց քիթերնին վնասելու ստորերկրայ տեղուանք կապրին, և ամեն վայրկեան բարձր ժայռեր կը կոտին ասանց գլուխնին հասած ժամանակ յողմեցու :

Մնաց որ մեր սիրուն կանայք, մեր գեղապանծ օրիորդք կրնան մինչև երկինք բարձրացնել այնպիսի վիպասանութիւն մը որ իրենց ամուսնոյն և իրենց սիրահարներուն վրայ խօսելու պէս չի խօսիր . . . Գառ ինցի . . . այլ սուկն՛ս չնկնի գործ մ՛է կրնն արհամարհուող էմքով մը նետելով այնպիսի վիպասանութիւն մը որ ոչ անգղեական է, ոչ գերմանական, և ոչ ասասպելախառն : Ուստի ինտո ներքի է . . . երբ վիպասանութեանց մէջ արդիւրած խօսքեր կը գործածեն . . . շատ անգամ Կոթայ բառն կը կարդանք նոցա մէջ . . . ոհ, Ատուած իմ . . . որչափ սոսկալի բան է այս . . . Բայց մեր խմբագիրն այսպիսի հեղինակներն կը կլտամբէ :

Արդարև խմբագիրը կը կարդայ հեղինակութիւն մը, և կը տեսնէ որ խնամ ազատ գրբուածք մ՛է . . . հեղինակն անպարկեշտ և վաւաշտ մէկն է . . . պէտք եղած ատենն Կոթայ բառը գործածեր է . . . Ասանկ անպատեհու-

թիւն տեսնուած է երբէք . . . Ստուգիւ Մօ-
 լիէր և ասոր նման մի քանի ճարտար կասա-
 կախօսներ իրենց շատ հեղինակութեանցը մէջ
 այսպիսի բառ մը գործածելը են . բայց տար-
 բերութիւն մը կայ . . . թառերարժի մը վրայ
 հրապարակու ըտուած խօսք մը վիպասանու-
 թեանց մէջ գործածելէ զգուշանալու է . . .
 Փոխադրութիւններ գործածեցէք, պարոն վի-
 պասանք, բառերու շարադասութեան հետեւե-
 ցէք . ընդունեցէք զիւցարանութիւնը, աստ-
 զարայտութիւնը, հանքաբանութիւնը, կենդա-
 նաբանութիւնը, թռչնաբանութիւնն ու մինչև
 իսկ խեցեքանութիւնը այս ամենուն հետ ըստ
 տեղւոյն և ըստ պահպանիս քիչ մ'ալ հին և սրբ-
 բազան պատմութիւն, շատ երազ ու ցնորք, վա-
 նականներ, ճգնաւորներ ու անպատասկաններ
 խառնեցէք . մեծահնչիւն ոճեր գործածեցէք,
 այնպիսի ոճեր զօրս երբեմն կրից շարժումն
 կանուանելին, և ան ասոն ձեր գործերն մեծ
 համբաւ պիտի ստանան . . . թէպէտ տիկնայք
 ձեր գործը կարդացած ասեմնին, և ոճանք
 ալ կարդանէն վերջը անոր չի պիտի հաւնին,
 բայց դուք խիստ լաւ պիտի երկը անոնց . . .
 Գործ մը եթէ անհասկանալի ըլլայ, ամենէն վը-
 սեմէ կը համարուի Մեծ հանճարները գաղա-
 նեաց մէջ կը գեղեցիկին . . . այս ըսածներուս
 համար, աւելի լաւ կընէք, և թէ խորհուրդ
 խնդրէք Գալիլիսթոյէն (որ մեռած ըլլալու
 չէ, վասն զի վճուկ էր) ըրտ Պայրընէն և օրի-
 որդ Լէօթմանսէն :

Իսկ դուք, երիտասարդ հեղինակք, որ
 պարզութիւն և բնութեան հետեւիլ կուզէք,
 որ ամէն օր մեր աչքին առջև պատահած
 դէպքերով ձեր բնութեզոյններն խնդացնել կամ
 շահաւորիլ կը սիրէք, և դիւրահասկանալի կեր-
 պիւ զանոնք մեզ կը բացատրէք, ոչնչացէք
 դուք . . . կամ Ապուշ Գէորգին ու երեւակա-
 յական Հիւանդին քով գացէք . ահա այս է
 ձեզի արժանի եղած տեղը, վասն զի սիրա-
 հար տիկնայք ձեր գործերն չի պիտի կար-
 դան, որով այնչափ մեծ համբաւ ալ չի պի-
 տի կրնաք ստանալ :

Բայց և այնպէս, մենք գէշ սովորութիւն
 մ'ունինք որ մեր գործերն մեր խօսած լեզ-
 ուաւը կը գրենք, և միշտ այսպէս պիտի շա-
 բուանկենք . ընթերցող, ազատ ես կարդա-
 լու ալ, և գործիդ չի յարմարածին պէս մեկ
 կողմ նետելու ալ :

Շարունակենք ուրեմն մեր պատմութիւնը
 Գատարան-Պլէօ տակաւին կը պարէին, բայց
 հանդէսն աւարտելու վրայ էր, և մեծ գու-
 հունակութիւն եղուարդի, և անշուշտ Ատէ-
 լինի ալ, որ իր ամուսինը երեսը նայելուն
 պէս կը կարմրէր և կը ժպտէր :

Վերջապէս մեկնելու ժամը զարկաւ . տի-
 կին Ժէրմէյլ աղջիկը հետն առաւ, կտուք
 մը հեծան, մեկնեցան և հասան Մօմմարթու-
 հոս էր նոր ամուսնացելոց բնակութիւնը, և
 Ատէլինի մայրն ալ իր ազկանը քով պիտի
 կենար, վասն զի իւր աչքերն նա պիտի գացեր :

Գեղեցիկ յարկ մը պատրաստուած էր. տի-
կին ժերմէջը գորովանօք գրկեց իր ազնիւը,
մեկնեցաւ դնաց իր սեճեակը քիչ մը հառա-
չելով: Այս բնական բան մ'է. . . աղջիկ մը
ամուսնանալուն պէս մօրը իրաւասութեան
տակէն կենիւ: . . . Բայց ինչո՞ւ պէտք է ի-
րաւասութիւնը, երբ սրտերը նոյնը մնան. . .
Բնութիւնն ու սէրը գիւրաւ կրնան տեղ
գտնել զգայուն հոգւոյ մը մէջ, իսկ անձ-
նասէր ու ցուրտ սրտէ մը կը հեռանան: Մար-
դիկ օրէնքներ կը հաստատեն, բայց զգա-
ցումներն չեն կրնար օրինաց հպատակել:

Երջանիկ էր ուրեմն Եղուարդ, վասն զի
սիրուն Ատէլին կը սիրէր զանի իրեն հաճելի
ըլլալուն, և ոչ թէ Եկեղեցին իրեն զանի սի-
րելէ հրամայելուն համար:

Ահա ասոր համար է որ առանձին մնաց իր
ամուսնոյն հետ, և առանց լուր տնոր գիր-
կը նետուեցաւ, անոր գորովանալը փոխա-
րէն գորովանք մտողց, իր հանդերձները
հանելու համար հազարաւոր պըրանքներ (է-
ղիւ պիւզիւլէ) չըթաւ, և չուտով հեռն ըն-
տելուցաւ. . . որց համար ասոր վրոյ այլ
ևս բան մը չի պիտի խօսինք:



ԳՂՈՒՄ Գ.

ՏԻՖԵՆՏ

Մինչդեռ մեր նոր ամուսինք առաջին դի-
չերն այնպիսի եռանդուն սիրով և ամենայն
հաճութեամբ կանցընեն, և Եղուարդ ալ Ա-
տէլինի խել մը յորդորներ կուտայ, յորդորներ
զորս կին մը կրնայ շատ շուտով ըմբռնել, և
խիտ աղէկ շահաւորիլ: Թողունք զանոնք և
ձեզի ճանչցընենք այնպիսի մէկը որուն պիտի
պատահինք սոյն պատմութեան ընթացքին մէջ:

Տիկին վոլանովին ու զՊ. Բոպինօ շրջապա-
տող և անոնց գլուխը պատահած դժբաղդու-
թեան վրայ ծիծաղող բաղմութեան մէջ մարդ
մը կար, որ անտարբեր կերպով տեղի ունե-
ցած տեսարանին հանդիսատես եղած էր, և
այն համբաւաւոր պարը երկարելու համար ե-
րիտասարդ նոտարին խաղաղցած խաղերուն և
զործադրած ճարտար ձեւերուն մասնակից
գտնուած չէր:

Այս մարդը հազիւ 28-30 տարեկան կար.
հաստիւ բարձր և շքեղ, դէմքը՝ որ բաւական
կանոնաւոր էր, աւելի գեղեցիկ պիտի երևէր,
եթէ աչքերն դուրս ցցուած ըլլային. բայց իր
նպուած քնայնափ հաճոյ երեւոյթ մը չունենա-
լուն համար ոչ բարեկամութիւն կազգէր, և
ոչ վատահաւթիւն. և երբեմն իր շրթանցը վրայ
երեւցող ժպիտն ալ աւելի դառն կերբէր
քան թէ քաղցր:

Տիւֆրեան (այս էր այն երիտասարդին ա-
նունը) եղուարդ Միւրվիի հարսանեացը գէր
տիկինէ մը հրաւիրուած էր , որ երեք աղջիկ
ունէր , և երկար ատենէ ի վեր է սովորութիւն
ըլած էր ամեն խնջոյքներու վեց պարտը երիտա-
սարդ ամենի , ուր ինքն ալ իր աղջիկներովը
կերթար :

Տիկին Տէվօ (այս է այն տիկնոջ անունը) շատ
կը սիրէր իր ամունը մարդ ընդունել , մանաւանդ
երիտասարդ . ասոր պատճառը շատ դիւրին է
գիտնալ . երբ մէկը երեք աղջիկ ունենայ և անոնց
օժիտ շինելու կարողութիւն չունենայ , զանոնք
իրենց սենեակին մէջ փակելով չի կրնար ամուս-
նացընել . պէտք է զանոնք խնջոյքներու մէջ
հանել , որ գիպուածը իրենց առարկնի երի-
տասարդ մը գտնէ որոյ հետ կարենան ամուս-
նանալ :

Գժբաղդաբար աշխարհիս մէջ առարկնի
սիրահարներ աւելի հալուարկուտ են , քան անդ-
դիական վիպասանութեանց մէջ : Ու սաի օրիորդք
շատ անգամ ամուսին վնասուած ատենեին այն-
պիսի անձանց կը պատահին , որք աւելի կիրք
ունին , քան թէ առարկնութիւն . : Բայց
վերջապէս ամուսիններն ալ հրապուրելու հա-
մար պէտք է բոս դիպաց բան մ'ընել :

Տիկին Տէվօ ալ զՊ . Տիւֆրեան իր ամունը
ընդունած էր , զոր իր դարսիներուն բարե-
կամներէն մին իրեն ներկայացուց , և որովհե-
տե երիտասարդ էր և աղէկ ալ պարել գի-
տէր , անոր համար եղուարդ Միւրվիի հար-

սանեացը ամենէր մարդոց ցանկը անցուցած
էր զանի , որ իր օրիորդներն ~~տէլիէէ~~ զուրկ չի
մնան :

Տիւֆրեան ոչ փետան կը ճաննար և ոչ հար-
պը . սակայն շատ անգամ կը պատահի որ խըն-
ջոյքի մը դադողներն այն խնջոյքին տէրերը չեն
ճաննար , և հիմա որ դադողական խնջոյքներն
~~աճէլու ինչոյն~~ եղանակաւ կը կատարուին ,
և այնպիսի խառնաշփոթ կերպիւ ուր բնա-
մէկը իր քովը նստողին ուշադրութիւն չընէր ,
շատ անգամ կը պատահի ալ որ այնպիսի խըն-
ջոյքներէ մեկնողն առանց տէրը կամ տիրու-
հին ողջունելու կը ձգէ կերթայ :

Բայց և այնպէս տիկին Տէվօ շատ սխալած
էր զՏիւֆրեան պարողաց ցանկը անցընելով իր
աղջկանց հետ պարել տալու համար . քանզի
նա պարը այնչափ չէր սիրեր . բայց փութաց
իր պարտասրութիւնը կատարել անգամ մը
տիկին Տէվօյի աղջիկներէն իւրաքանչիւրն հը-
րուտիրելով . վերջը պարը հանդիսատես մ'ե-
ղաւ , և գեռ քատրիլը չի լնացած գնաց թուղթ
խաղալու սրահը նստաւ :

Տիւֆրեան աչքերն անդողար բոլոր հան-
դիսականաց վրայ կը պտաղքնէր . բայց աւելի
եղուարդի ու Ատէլիի վրայ . այն երկու ա-
մուսիններուն տեսքը կարծես իր բոլոր ուշա-
դրութիւնը գրաւած էր . միշտ անոնց շար-
ժու մեները կը գիտէր , իրենց ամենափոքր գործ-
քը կը զննէր , և կարծես կը ջանար անոնց
հոգւոյն խորը մտնել , երբ Ատէլին իր ամուս-

նոյն երեսը նայելով կը ժպտեր, Տիւֆրէան անկէ քանի մը քողը հեռուն կեցած այս ժպտը կը նկատէր, և իր աչքերն անոր վրայ նայելէն չէին յազեր :

— Ճշմարիտ, մայր, բաւ տիկին Տէվոյի մեծ աղջկին՝ կղէսպատրա, ալ Պ. Տիւֆրէանը այսպիսի խնջոյքներու չի հրաւիրենք. տես, ինչպէս ժամանակ կանցընէ . . . չի պարեր . . . արջ կը նմանի . . . :

— Իրաւ ես, աղջիկս . . . դձե՛ն գայ քովերնիս նստի, խօսի՛, բնկերակցութիւնն ընէ . . . :

— Ո՛չ, այս . . . մեր երեսը բնաւ չի նստիք . . . տես ալ վարը անկիւնը տիկին ժէրմէոյի քով նստեր ինչ կընէ :

— Արգարև սիրուն երիտասարդ չէ եղեր. ես ալ վաղը չէ միւս օր զինքը չի պիտի տանիմ Պ. վէրսիւրի տունը, ուր նուազագոս կայ, և կարելի է փոքրիկ հացկերոյթ մ'ալ : Անոր տեղը հաստը կը անանիմ. նա թէպէտ քիչ մը ապուշ է, բայց բաւական է որ ուղուածին չափ կը ցատկէ :

— Այո, և դձե՛ն մեզ ջուր կուտայ :

— Աղէի միտքս ինկաւ, կղէսպատրա, մեզ ո՛վ պիտի տուն տանի այս գիշեր :

— Ես ալ չեմ գիտեր . . . մեր պարօններէն երկուքն արդէն դացին . . . մէկը գլուխը ցաւերուն, միւսն ալ վաղն առտու դորձ ունենալուն պատճառաւ կանուխ երթալ պառկելուն համար . . . բայց և այնպէս մեզի մէկը պէտք է :

— Հոգ մ'ըներ, հիմա կերթամ Պ. Տիւֆրէանի գլխարկը կը պահեմ. կապահովեմ ըզքեզ որ ինքը առանց մեզի չի կրնար երթալ. որչա՛փ անպատեհ բան . . . տիկիններու հետ տեղ երթալ, վերջը թողօ՛ւ որ անոնք մինակ դառնան :

— Դիտէ՛ք, մայր, այս առաջին անգամը չէ որ մեզի այսպիսի դէպք մը կը պատահի :

— Հոգ չէ, կղէսպատրա, այս իրիկուն անանկ չըլլար, և Պ. Տիւֆրէան կառքին վարձքը կը վճարէ :

Այս տիկնանց խօսակցութեան ատեն՝ Պ. Տիւֆրէան իր նկատումներն կը շարունակէր : Տեսած էր որ տիկին ժէրմէոյ՝ տիկին Տօլցան անուն երիտասարդ այրիի մը հետ շատ սիրով կապուած կերեւէր. ուստի ալ այնուհետեւ տիկին Տօլցան Պ. Տիւֆրէանի բոլոր ուշադրութեանցը աւարկայն եղած էր, որոյ հետ դիւրաւ բարեկամութիւն հաստատեց . որովհետեւ յիշեալ այրին այնչափ դեղձեցիկ չըլլալուն և հետեւաբար խիստ քիչ անգամ այսպիսի երիտասարդի մը մեծարանքը վայելած ըլլալուն համար Պ. Տիւֆրէանի տեսքը զինքը առժամայն հրապուրած էր :

Երբ Տիւֆրէան մեկնելու պատրաստուեցաւ, տեսաւ որ գլխարկը չի կայ, սկսաւ փրնարուել. և վերջապէս երբ տիկին Տէվօ և իր երեք օրիորդներն ալ մեկնելու պատրաստուցան, այն ատեն դուռ : Ուստի ալ ժամանակ չի մնաց իրեն մինակ երթալու : Ուր թողունք

որ տիկին Տօլպան ալ իր թեւք անկէ մերժեց ,
և միայն երբեմն գալ և իրեն հետ տեսակցե-
լու հրաման տուաւ անոր . Պ. Տիւֆրէանի ու-
զածն ալ այս էր :

Վասն որոյ Պ. Տիւֆրէան տիկին Տէվչի և
իր աղջկանց իրմէ ապաստժ ծառայութիւնը
հաճութեամբ կատարել ուղեւով կառք մը
դրաւ զանոնք , ինքն ալ կղէոպատրայի և Սէ-
զարինի մէջ տեղը նստաւ , և սկսան Մարթիբրի
փոզոցը երթալ :

Ճամբան դացած ատեննին՝ երեք օրիորդք
Պ. Տիւֆրէանի հարսանեաց հանդիսին մէջ ի-
րենց ցուցուցած ցուրտ վարմունքին և տիկին
Տօլպանէն չի զատուելուն վրայ տողէն բարկա-
ցած ըլլալով անկէ վրէժ առնելու նպատակաւ ,
սկսան խօսք նետել այնպիսի մարդոց , որոնք
երբէք հաճելի չեն , և ուրիշ մարդոցմէ բոլոր-
ովին տարբեր ըլլալով ազեղներն կը սիրեն ու
գեղեցիկները կասեն :

Տիւֆրէան հանդարտութեամբ մտիկ ըրաւ
այդ խօսքերը , կամ , լաւ ևս է ասել , բնաւ
մտիկ չըրաւ . վասն զի օրիորդներուն ինչ խոր-
հրդօք ստանի ընելուն վրայ այնչափ չէր տա-
րակուսեր , և իր միտքը ուրիշի վրայ զբաղած
ըլլալուն համար երբէք անոնց շաղակրատու-
թեանց ուշադրութիւն չէր ըներ :

Վերջապէս հասան Մարթիբրի փոզոցը , և
Տիւֆրէան գՏիկին Տէվժ և իր օրիորդները ի-
րենց տունը յանձնեց , ետքը խոնարհելով
տիկինին մեծարանքը , կղէոպատրայի ցուրտ

ողջոյնը , Սէզարինի շոր ցամաք գիշեր բարին
և Գոնտէլիի խեղդուկ հառաւանքն ընդունե-
լով մեկնեցաւ :

ԳՒՂՈՒՄ Դ.

ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԵՆՈՒԹԻՒՆ ԻՌՐՀՈՒՐԳ

Ատէլին առաւօտուն քնէն արթննալով
չառ երջանիկ համարեցաւ զինքը իր սիրելի
Եդուարդին քով . մէկ դիշերուան սէքը բա-
ւական է հաստատել քաղցր վտահութիւն մը
և փափուկ մտերմութիւն մը , և վանել այն
յարգանաց , երկչտութեան զգացումը զոր
հեշտութիւնը միայն կրնայ հալածել :

Ինչ մեծամեծ առաջագրութիւններ կրնեն
երկու ամուսինք սպաղապին համար , ինչ կար-
գաղութիւններ միշտ երջանիկ մնալու համար ,
և ինչ երեւութական բարիքներով իրենց երե-
ւակայութիւնը կը զարդարեն :

Ատէլին՝ որ քաղցր , զգայուն և սիրուն ամուսին մ'եղաւ , ապահով է միշտ երջանիկ մը-
նալուն վրայ , որչափ որ Եդուարդ զինքը սիրէ ,
և միշտ պիտի սիրէ ալ . այս ամսին ինքը ան-
տարակոյս է . ինչպէս նաև Եդուարդ ալ , և
այս փոփոխակի սէրն ալ չէ թէ առաջին ան-
գամ կնոջ մը հետ սիրոյ բոլոր քաղցրութիւն-
ներն ճանչցած ըլլալէն կը ծագի : Այն ատեն
երկուստեք ապահովութիւն կը ըլլայ , երկուքն

այ իրենց բոլոր քսածներն կիմանան, և անշուշտ բոլոր իրենք խոտաացածին ձեռք կրձգեն, եթէ միևնոյն վայելքն երով միշտ միևնոյն հանոյքներն զգալու բարդաւորութիւնն ունենան:

Արդարև սիրոյ ցոյցերէն անմիջապէս ետքը յաջորդող այն ուրախութեան վայելեաններուն մէջ կարծես թէ մին միւտայն համար ծնած կը համարուի, ալ անկէ վերջը երկու ամուսինք միևնոյն ճաշակը, միևնոյն խորհուրդը և միևնոյն փափաքը կուենան. ինչ որ կրթե մին, միւսն ալ կը գայ. ինչ որ կտաւձարիէ մին, միւսն ալ առաջարկելու փոյլ գտնուած կըլլայ. փոփոխակի իրարու ըսելիք կը գուշակեն, և այն ատեն կրնայ դիւրութեամբ իմացուիլ անոնց միահոգի և միակամ ըլլալն: Երջանիկ զուգութիւն, քաղցրիկ միութիւն, որ եթէ մշտնջենաւոր ըլլայ, կրնայ ամենակատարեալ երջանկութիւն մը ծնանիլ:

— Սիրելի բարեկամուհիս, ըսաւ Եդուարդ իր ամուսնոյն սիրուն պզտիկ ձեռքերն համարուրելով, ձմեռը փարիզ և գեղեցիկ եղանակին շորս ամիսն ալ գեղը կանցընենք, ապէի չըլլա՞ր:

— Այո, բարեկամս, արդէն որոշուած է:

— Բայց կառաւարութեան մէջ ունեցած պաշտօնս ի՞նչ ընեմ: . . . առի ի՞նձ արդեւք պիտի ըլլայ:

— Հրաժարե՛ այդ պաշտօնէն. . . ի՞նչ պիտի ընես. . . տասնըհինգ հազար իրա տարեկան եկամուտ ունինք. առի չի՞ բաւեր մեզ երջանիկ ըլլալու համար:

— Ի՞նչ կը տես, կաւերնայ ալ . . .

— Ուր թողուք որ եթէ այդ պաշտօնը վրադ մնայ, բոլոր օրը քովս չի պիտի դառնուի, առի անկարելի բան է:

— Սիրելի Ատէլինս, այդ թէ մայրդ խնայնայ որ ես պաշտօնէս հրաժարեք եմ, ի՞նչ կրթե՞

— Մայրս միայն բանի մը կը փափաքի, այն է իմ երջանկութիւնս. անի կողքայ թէ մենք այս կերպով միայն կրնանք երջանիկ ըլլալ. ինքք մեղմով պիտի փառասորուի:

— Շատ ազէկ, ուրեմն վաղը հրաժարուկանս զրկեմ:

— Այո, բարեկամս:

— Եւ երթանք պարզ բայց յարմարադոյն պզտիկ գեղի տուն մը քնենք, ուր բնակինք մերզ հետ. . . Տո՛ւք ո՞ր կողմը առնենք:

— Որ կողմնոր կուգես, բարեկամս:

— Ոչ, առի քու գիտնալու բանդ է:

— Դու գիտես, որ ես միշտ քու կարծիքէդ եմ. . .

— Ուրեմն երթանք ասդին անդին պարտենք. . . պզտիկ աղջերն կարգանք. . . մերըդ հետ ալ խորհրդակցինք:

— Շատ ազէկ, բարեկամս:

— Հեաներնիս շատ մարդ պիտի առնենք:

— Ինչո՞ղս որ կուգես, բարեկամս:

— Սիրելի բարեկամուհիս, առի կարգադրելն քու գործդ է:

— Շատ ազէկ. ուրեմն քիչ մարդ կառնենք, որ միատեղ ըլլանք և միասեղ պատկնք:

եթէ քովերնիս շատ մարդ ըլլայ, այս բաժնս չի կրնար ըլլալ:

— Ո՛րչափ սիրուն ես . . .

— Միայն քանի մը բարեկամներ կանենք հետերինս . . . օրինակի համար մօրս բարեկամներն:

— Ահա այդչափ: Առտուն մեր պարտէզը միտանդ կը պտտինք . . . վասն զի մեզի պարտէզ մ'ալ պէտք է, անանկ չէ:

— Ո՛հ, այո, բարեկամ . . . մեծ պարտէզ մը . . . ուր հովանաւոր տեղուանք . . . փօքր անտառներ գտնուին:

— Ո՛հ, հիմա փոքր անտառներն կը խորհիս:

— Սրդողեցար, սիրելի պարոնս:

Եղուարդ փոխանակ պատասխանելու գըրկեց իր կինը, սրտին դէմ սեղմեց, անոր քաղցր գործաւքն ընդունեցաւ, և . . . քանի մը վայրկեան խօսքերնին կտրեցին:

— Ըսել է որ հովանաւոր տեղերով և փոքր անտառներով մեծ պարտէզ մ'ալ պիտի ունենանք, ըսաւ Եղուարդ խօսելու սխտրով:

— Ո՛հ, այո, բարեկամս, պատասխանեց Ատէլին ժպտելով և իր հնչաւթնէ տակաւին խոնաւ եղած աչքերն գետին ձռելով: Իրիկուան դէմ չորս կողմը կը պտտինք: Գիւղացւոց հետ կերթանք կը պարտէք: Կամ, եթէ ոտք քէշ ըլլայ, դրացիի մը հետ կերթանք կը տեսնուինք . . . ասանկ աղէկ չըլլար:

— Այո, բարեկամս, շատ աղէկ կըլլայ:

Քնքուն Ատէլին միշտ իր ամուսնոյն կար-

ծիքէն է: Եղուարդ ինքերեն բան մը չընէր, և երկուքն ալ անանկ համաձայն են իրարու հետ որ տանք մէջ ամենեւին իշխանութիւն գործածող կամ հրամայող տէր չի կայ:

Երիտասարդ ամուսինք իրենց խօսակցութիւնն ամուսնական երջանկութեան ամենաքաղցր մէկ կէտին վրայ դարձնելով իրենց աննայիք զաւակացը, անոնց տալիք դատարակութեանը և սորվեցընելիք արհեստին վրայ կը խորհրդակցէին, երբ իրենց սենեակին գուռը զարնուեցաւ:

Տիկին ժերմէջլ էր, որ իր աղջիկը դրկելու և անոր վայելած երջանկութեանը հաղորդ ըլլալու եկած էր: Ո՛րչափ քաղցր տեսարան մօր մը համար . . . նա իր կենաց այն ժամանակը կը լիւէ այն տուն:

Ատէլին կարծեցաւ իր մայրը զրկած տանն Բարեկարգ մայրն իրենց իմացուց որ նախաճաշը պատրաստ է, և հարսանեաց առաջին գիշերէն վերջը նախաճաշ մ'ընէին խիտ կարեւոր գործ մ'է: Գացին նախաճաշ ընելու: Ատէլին քիչ բան մը կերաւ, միտքն այնչափ դաղած էր որ ակտրժակ չունէր, գլխուն մէջ այնչափ նոր դաղափարներ կը դառնային որ հաց ուտելն անգամ աչքին չէր երեւար: Բաց Եղուարդ ընդհակառակն սեղանին վրայ բան մը չի ձգեց, բոլորն ալ կերաւ: Կանանց արանցմէ աւելի սիրահար ըլլալուն մէկ նոր փորձն ալ այս է, որովհետեւ մի և նոյն պատճառէն մի և նոյն հետեւանք չի կրնար ծնալի:

Նախաճաշի ատեն՝ երկու ամուսինք իրենց նպատակը տիկին Ֆէրմէօյլի յայտնեցին, Մայրը քիչ մը տրտմեցաւ երբ իրեն ըսին որ Եդուարդի հրաժարականը վաղը պիտի դրկուի՝ Ուզեց այս մասին մի քանի դիտողութիւններ ընել, և յայտնեց որ այս բանը Եդուարդին մեծ ֆրաս կըլլայ, որովհետև յոյս կար տասնութամեք թարձրանալու և որ մը գրասենեակին գլուխն անուանելու։ Եդուարդ բնաւ բան մը չէր պատասխաներ, կարելի է ինքուրուօտ զգալով որ իր զոքանքը իրաւունք ուներ։ Բայց Ատէլին այնչափ սաստիկ ազաւեց իր մօրը, այնպէս գորովանօք դրկեց զանի, և երեքնին ալ իրարմէ չի զատուելով վայելելիք երջանկութիւններն այնչափ որտաշարժ կերպիւ նկարագրեց, այնպէս ճարտարութեամբ պատմեց գեղին զուարճութիւնները, իրենց ինչ կերպիւ վարուելիքը, և իրենց կեանքը ինչ հաճօքներով քաղցրացընելնին, որ տիկին Ֆէրմէօյլ չի կրցաւ իր աղջկանը խնդրանացը դէմ կենալ, և անոնց որոշումը ընդունեցաւ։

— Բայց, քսաւ տիկին Ֆէրմէօյլ. Եդուարդ չի կրնար պարագ պտտիլ. դատարկութիւնն վտանգաւոր միեակ մ'է, և շատ անգամ անանկ սխալանքներ գործել կուտայ մեզ, որոնք գործով մը դըռաղած ասանկնս մտքերնիս անգամ չեն դար։

— Ո՛հ, մայր, հանգարտ եղիք. . . Եդուարդ միշտ գործով մը պիտի զբաղի. . . Ես անոր գործ կը դանեմ. . . Նախ մեր գործերն

մանրամասնաբար խնամուելու պէտք ունին. . . մեր փոքրիկ հարասութեան պահպանութեանը ինքը պիտի հսկէ, երկրորդ մեր գեղի տանը վրայ հոգ պիտի տանի. վերջպէս ինձ հետ ժամանակ պիտի անցընէ, միտեղ պիտի պըտըտինք։

— Բայց, սիրելի աղջիկս, մարդս միշտ չի կրնար պտտիլ։

— Անշուշտ. . . բայց քիչ մ'ալ կը հանգչի. . . կամ պարտեղը կայխատի. . . Հապա մեր զաւակները, անոնք չէք խորհիր. . . զանոնք մեծցընել, անոնց դատարարութեան հսկել, և անոնց առաջին քայլերն առաջնորդել պէտք չէ։

— Ո՛հ, քաւ ունենալիք զաւակացոյ վրայ հիմնակուրնէ՞ կը խորհիս։

— Այո, մայր, մեր կարգագրութեան մէջ այդ ալ կայ։

— Ո՛րչափ անմիտ ես, Ատէլին։

— Ոչ, մայր, վերջէն պիտի տեսնէք որ թէ ես և թէ ամուսինս իրաւունք ունինք։

Տիկին Ֆէրմէօյլ թէպէտ իր աղջկանը ըսածներուն վրայ բոլորովին չը համոզուեցաւ, բայց հաստատակաւ միտքը դրաւ որ անոնց վրայ լաւ մը հսկէ. դիտէր ալ որ Ատէլին որչափ որ մեծամեծ գործերու նեռնարկելու բընութիւնն ալ ունէր, այլ սակայն անոնցմէ ֆրաս մը տեսածին պէտք չիկայն ետ կը կենար, իսկ Եդուարդ միշտ անոնց ուզածը կրնէր, միայն լաւ մը կը խորհրդակցէր անոնց հետ, և թէ

պէտ իր կինը միշտ իր կարծիքէն էր, բայց
ինքն իր ամեն ուղածը չէր ընելը :

Նախաճաշէն վերջը՝ իրենց բնակեցիք գեղը
ընտրելու սկսան : Մարդ զրկած էին որ պըճ-
տիկ ազդեբն բերէ : Ատէլին զանոնք իր ա-
մուսնոյն տուած էր, և սիկին թերմէջլ ալ
մտքովը օգը խիստ առողջարար եղող գեղ մը
կը փնտաւեր, երբ յանկարծ Եղուարդ ամօռ-
ոին վրայէն ցատկելով ուրախութեան աղաղակ
մը հանեց :

— Ինչ եղար, բարեկամս, հարցուց Ատե-
լին իր ամուսնոյն յանկարծական ուրախութեան
վրայ զարմացած :

— Աղէկ գեղ մը գտայ, բաւ Եղուարդ ազդ-
մը կարգալով : Վիլնէօլ-Սէն-ժօրժ, գեղեցիկ
տուն մը կայ ծախու, որ գաշտերու վրայ կը նայի
. . . երկու յարկ . . . մեծ պարտէզ մը . . . ճե-
մելիք մը . . . բակ մը . . . վանդակապատ մը :

— Խիստ լաւ, բարեկամս, բայց քիչ մնաց
նախաճաշի սեղանը պիտի տապալէի :

— Ահ, սիրելի բարեկամուհիս . . . ահ,
բարի մայրս . . . սա տունը չի փախցնենք . . .

— Այդ տունը գիտես . . .

— Ինչ բակ է . . . այո տունը իմ հօրս
է . . . մանկութիւնս հոն անցուցած եմ :

— Ինչու ծախեցիք . . .

— Չախօրդ ութ իւններ պարտաւորեցին զմեզ
որ ծախենք . . . բայց ես միշտ կը ցաւէի :

— Բայց, բարեկամս, ստոր վրայ երբէք
խօսք ըրած չէիր :

— Չէի գիտեր հիմա ծախու ըլլալը :

— Ուրեմն մնացաւ, բարեկամս, ալ տուն
չի փնտռենք, ահա յարմար տուն մը գտանք,
տուն մը՝ ուր դու մանկութիւնդ անցուցած
ես . . . Սիրելի Եղուարդ . . . ահ, որչափ
հանգիստ պիտի ըլլամ հոն : Մայր, կը հաճիք
հոն երթալ, այնպէս չէ :

— Բայց, աղջիկս . . . եթէ այդ տունը
չատ սուղ ըլլայ . . .

— Ոհ, այնչափ սուղ ըլլալու չէ, Եղուարդ-
դին տունն է. հոն շատ հանգիստ պիտի ըլլանք :

— Վիլնէօլ-Սէն-ժօրժ . . . այո, կարծեմ՝
այդ գեղին օգը շատ աղէկ է . . .

— Ստուգիւ շատ աղէկ է . . . հիմա եր-
թանք, բարեկամս :

— Բայց, աղջիկս, ժամանակն անցած է . . .
որովհետեւ կանտին ալ չեւաք . . . ալ վաղուան կը
մնայ . . .

— Վաղը . . . հապա այսօր եթէ տունը
ծախուի . . . ոհ, շատ պիտի ցաւիմ . . . Ինչ-
պէս նաև Եղուարդ ալ . . . թէպէտ ինքը չի
խօսիր, բայց ան ալ երթալ կուզէ :

— Շատ աղէկ, աղոթս, որովհետեւ այն-
չափ երթալ կը փոխադիք, կերթանք . . . բայց
ասկէ հոն չորս միոն կը տեսէ :

— Գեղի աղէկ կառք մ'ունինք . . . ճին
տասնըհինգ օրէ ի վեր է չաշխատիր . . . չու-
տով մեզի կը տանի :

— Ուր պիտի ճաշենք :

— Վիլնէօլ-Սէն-ժօրժ . . . հոն աղէկ պան-

դ. սկներ կան . . . Անանկ չէ՞, բարեկամս,
 — Այո . . . հոն աղէկ օւտեղիք կրնանք
 գտնել:

— Հապա ետ դառնալը, ի՞նչպէս պիտի
 ընենք, գիշերուան պիտի մնանք . . . Ատէլին,
 գու աղէկ գիտես, որ ես գիշերը կասքալ
 ճամբայ ընելն չեմ սիրեր:

— Ո՛հ, մայր, եղ. օւտըդ պիտի վարե կա-
 քը . . . դիտէ՛ք որչափ աղէկ կասք վարել
 գիտե . . . մնաց որ ճամբան ալ աղէկ է . . .
 անանկ չէ՞, բարեկամս:

— Այո, աստը տարի կայ որ այն ճանքան
 շտկուած է:

— Ուրեմն կը տեսնէ՞ք, մայր, որ ամենե-
 ւին վտանգ չիկայ . . . բւեք, կուզէ՞ք որ եր-
 թանք:

— Պետք է որ քու ամեն օւզածդ ընեմ . . .

— Որչափ բարեսիրտ էք մայր . . . երթամ
 վրաս շահեմ:

Ատէլին հոգնեցու գնաց. եղ. օւտըդ ձեր
 թէմնին (երեւոյ ծառան էր) ըստ որ ձին կառ-
 քին լծէ: Տեկին ժեբովոյն ճամբայ կընելու պաա-
 րատուեցաւ, և Մարիամ (նոր ամուսիններուն
 նաժիշտը) ցառօք սրտի տեսաւ որ հարսանեաց
 հետեւեալ օրն պատրաստած գեղեցիկ ճաշին
 երեսը նայող չիկայ:

Ամենէն աստի՛ Ատէլին պատրաստուեցաւ .
 երբ մէկը իր հաճելի ըլլալուն վրայ հաւատի
 ըլլայ, իր զարդարանօցը թիշ ժամանակ կը
 վառնէ: անշուշտ ասոր համար ըլլալու է որ

պառաւ պճնաակընեքն երկու ժամ հայելին
 առջևէն չեն դատուիր: Ատէլին հաւանք պարզ
 չըջագրեաւ մը հադաւ, մէջքն ալ գօտի մը կա-
 պեց. գլուխն ալ յարդէ գլխարկ մը դրաւ, ու-
 բուն վրայ փետուր կամ ծաղիկ չիկար, ուսե-
 բուն վրայ ալ ցփփի (շալ) մը առաւ. և այս-
 պիտի պարզ հոգուստով գարձեալ սիրուն կե-
 րուէր, և կատարելապէս հաճելի էր. իր գէմ-
 քին վրայ սէր, երկնանութիւն կը փայլէին . . .
 բնական է որ կին մը եթէ հաճելի ըլլայ, իր
 գեղեցկութիւնը կը կրկնապատկի:

Եղ. օւտըդ ալ ուրախութեամբ հագուեցաւ .
 տիկին ժեբովոյն պարծանօք իւր աղջկի կը դի-
 տեր. Ատէլին երկուքն ալ գրկեց, ձեռքը մօրը
 տուաւ որ շուտով վար իջնէ. եղ. օւտըդ ին մեծ-
 ցած գեղի տունը շուտով երթալ տեսնելու
 փախաքը զինքը կը տողորբ. իսկ եղ. օւտըդ
 անոր չափ իր աղայութեան տեղուանքը վե-
 բրտտին տեսնելու յիշատակաւր յախշտակուած
 էր. վերջապէս առտի մայրերին, վերջն ալ
 Ատէլին հեծան կառքը. եղ. օւտըդ ալ ասնօր
 ձեռքն առաւ, և սկսան դէպ ի վիճէօվ-Սէն
 ժօրժ երթալ:



ԳՂՈՒՄ Ե.

ԻՌՇՈՐ ՊԵՒԵՐՈՎ, ԳՂՈՒՄ ՄԸ.

Եդուարդ կառքը խիստ ազնի կը վարէր, որով քիչ ատենէն հասան դեղը: Երբ մեծ ճամբան լմացաւ և դաշտերն եկան, իրենց այնչափ տեսնել վափաքած տունն հեռուէն տեսան. այն ատեն Ատէլին ուրախութենէն ըսկրաւ տեղէն ցատկել, ու գլխարկը հանեց որ տունը աչէկ մը տեսնէ. Եդուարդ ալ ձին վազցուց, առանց մտիկ ընելու տիկին ժէրմէյլի աղաղակները որ կը վախնար թէ կառքը տապալի:

Վերջապէս տանը բալը շրջապատող վանդակապատին քով հասան:

— Ահա այս է տունը, ըսաւ Եդուարդ կառքէն վար ցատկելով, այս է, այս է . . . ահա տիկի դուռը . . . բակը . . . և մինչև իսկ զանգակը, զորս քաջ կը ճանչնամ . . . ամենքըն ալ իմ ժամանակինս են . . . ահա տիկ ծախու ըլլալն իմացընող ազդէն ալ:

Երբ Եդուարդ սիրտը յուզուած տունը կը դիտէր, Ատէլին մայրը կառքէն վար իջեցուց ձին կապեցին, մտան տանը բակը, որովհետև դուռը գոց չէր:

— ՈՏ, որչափ հանգիստ պիտի ըլլամ հոս, ըսաւ Ատէլին աչքը չորս կողմ պտտեցնելով մայր, այս տունը շատ աղուոր է, անանկ չէ:

— Բայց, աղջիկս, կեցիր քիչ մը, դեռ բան մը չի տեսներ:

Նայիս դեանայարկէն մարդ մը դուրս ելաւ, ետեւէն ահագին շուն մը ունենալով:

— Ինչ կուզէք, ըսաւ նա երեքն ալ բաւական անքաղաքապալու թեամբ դիտելով:

— Տունը տեսնել կուզենք, պատասխանեց Եդուարդ:

— Այո, և դենել ալ, յաւելցուց Ատէլին եռանդուն ձայնով մը:

— Խիստ բարի, ըսաւ մարդն ցած ձայնով մը, ետեւէս եկէք, որ ձեզի տիրոջ տանիմ:

Եդուարդ, Ատէլին և տիկին ժէրմէյլ մարդուն ետեւէն դացին, որ զերեսք սանդուխէ մը վեր հանելով ճաշի սենեակ մը մտցուց, և ըսաւ իրենց որ հոն սպասեն, մինչև որ երթայ իր տիրոջը իմացընէ:

Իսկոյն այս մարդուն մտած սենեակէն պզտիկ կծու ձայն մ'եկաւ, և մեր ճամբորդներն հետեւեալ խօսակցութիւնն լսեցին:

— Ինչու կուզես զիս, Պետրոս:

— Տէր իմ, ձեր տունը դնողներ եկած են:

— Դարձեալ եկար զիս անօգուտ տեղը դործէ արգիլելու, ինչպէս քիչ մը առաջ ալ ըլլի:

— ՈՏ, ոչ, տէր իմ . . . ասնք դենելու վրաք ունին . . .

— Այս անգամ մարդը մէյնը զիս բարկացուց . . . ճշմարիտ կրտսմ որ այս անգամ զիս պիտի հիւընդցընէ . . .

— Տէր իմ, այս եկողներն կառք ա ունին :

— Այդ ուրիշ խօսք, ուրեմն կուգամ :

Տիկին ժեյրմէջլ և իր որդիքը այս լամաներունն ինչ հետեցընելին չէին գիտեր, և ահա նիհար, դեղնած, խորշամած մարդ մը դիշեւրային հագուստով և բամպակէ գլխանացով սենեակէն դուրս ելաւ, և զիրենք ողջունեց այնպիսի եղանակաւ մը զոր ի զուր ջանաց հաճելի երեցընել :

— Տունը տեսնել կուզենք, բաւա եղուարդ . ես թէ պէտ խիստ աղէկ կը ճանչնամ այս տունը, բայց այս տիկիններն դեռ տեսած չեն :

— Ատիկայ անօրինակ բան մ'է, բաւա մարդը իր ծառային երեսը նայելով, ամեն մարդ իմ տունս գիտէ . . . միտք ունիք գնելա :

— Անուշտ, եթէ գինը յարմարցընենք :

— Ուրեմն, ես անձամբ զձեզ պատցընեմ :

— Ինչ օտարօրի մարդ է այս, բաւա Ատէլին ցած ձայնով իր ամուսնոյն, ևս կը հաստատեմ որ այս մարդը հին վաշխառու մը ըլլալու է որ հաս քաշուեր կը բնակի, և դեռ կը փափարի մայրաքաղաքին մէջ իր առուտուրը չարունակել :

Տունը պտտեցան, դեռնայարկէն մինչև վերնայարկը . մարդը ամնը վրայօք սկսաւ անդեկութիւններ տալ, և եղուարդ որ իր հին բնակութիւնը տեսնելուն համար շատ ուրախ էր, ձեր տան տիրոջ իր ամնը աղէկութեան վրայ առած մանրաման գովեստներն

համբերութեամբ մտիկ կրնէր, և երբեմն երբեմն ծագտելով իր կնոջը երեսը կը նայէր .

— Ահա այս է, կըսէր նա ամէն մէկ սենեակը մտած առեն . . . կը ճանչնամ այս տեղը . . . այս դահլիճը . . . այս պահարաններն :

Եւր պարսնն ալ ծայրելով իր ծառային երեսը կը նայէր, և երկուքն ալ կարծեա իրարու միտք կը հասկընային :

— Ըսել է որ դուք առաջ այս տունը նըստեր էք, պարսն, հարցուց տան տէրը եղուարդին :

— Այո, պարսն, այս, մանկութիւնս հոս անցուցած եմ :

— Շատ ծիծաղաչարժ բան, բաւա աման տիրոջ ծառան ցած ձայնով :

— Չարմանայի է, բաւա ամն տէրն ալ :

Տիկին ժեյրմէջլ ամուր հանգիստ և օգուէն գտաւ . Ատէլին ղմայլեցաւ, եղուարդ ուղեց որ պարտէզն ալ պտտին . իսկ աման տէրը ներսունն ինչոյնց բնակով որ ինքը յոյնած ըլլալով չի պիտի կրնայ պարտէզը հետերնին գալ, և աղաչեց որ իր ծառային հետ երթան, և մեր ճամբարդներն ալ վայլկեան մը սնար տեսութեանն ազատած ըլլալու համար երբէք չի ցուեցան :

Մտանաւ տընտուն կերթար, ետեւէն տիկին ժեյրմէջլ, և Ատէլին ու եղուարդ ալ իրարու թե մտած խիստ ետեւէն կերթային : Եղուարդ մանկութեան ամեն պտտած տեղուանքը իր կնկանը կը ցուցնէր :

— Հոս, կրօ՛ր նա տեղ մը ցուցնելով, հօրս քով նստած կը կարդայի . . . հսն ալ, կրօ՛ր ուրիշ տեղ մը ցուցնելով, Յակօրոսս եղբայրս կը վազուատէր, ու սա գեղեցիկ ձերանիներուն վրայ կենէր . . .

— Սա խեղճ Յակօրոսս եղբօրմէդ բնաւուր մը շաւի՛ր :

— Ոչ . . . Օտար երկիր մը մեռած ըլլալու է . . . եթէ այնպէս չըլլար, անչուշա կը դառնար իր ծնօղքը տենելու փափագով . . .

— Ահաւասիկ, ըսաւ տիկին ժերմէջլ, արդարացի վրայ լաւ չի հակելու հետեւանքը . . . կրնայ ըլլալ որ այդ տղուն վախճանը շատ գէշ եղած ըլլայ :

Եղուարդ բան մը չի խօսեցաւ . իր եղբայրը քանի որ յիշէր, կը արտմէր և կը խորհէր . գրեթէ համոզուած էր որ մեռած է, և կարելի է իր անձնախրօթիւնն մանուանդ զինքը այնպէս համոզելու պատճառ եղած էր, որպէս զի Յակօրոսն իրեն թափառական, թըշուառ և ստորին վիճակի մը հասած երեւցնող գաղափարներն մտքէն ջնջուին : Եղուարդ այն ատեն աւելի կը վախնար իր եղբայրը խեղճ և թշուառ վիճակի մը մէջ կնկած տեսնելէն, երբ Ատէլինի հետ դեռ նշանուած էր . վասն զի կը խորհէր որ այս կերպով կրնար իր նշանն ետ ըլլալ և ամեն անգամ որ կը տեսնէր թէ իր եղբօրը հասակակից եղող մուրացիկ մը իրմէ ուղորմութիւն կը խնդրէ, կնքը կատկարմիր կըտրած առանց մուրացիկին երեսը նայելու շու-

տով այն տեղէն կը փախէր որ չըլլայ թէ այդ մուրացիկն իր Յակօրոսս եղբայրն ըլլար :

Բայց և այնպէս Եղուարդ անզգայ ալ չէր, չէր ուզեր բնաւ իր եղբայրը մերժել, միայն զանի խեղճ վիճակի մը մէջ տեսնելէ կը վախնար . ահա ասանկ են մարդիկ . սա անիրաւ անձնատիրութիւնը ստեար մի, մարդուն ամենաքայքը զգացումներն կը ջնջէ . եղբայրը, քոյրը կը մոռցնէ . շատ անձնատէրներ ալ կան, որ հայրերնին, մայրերնին ալ կը մոռնան . այգպիտներն կերելի թէ կը խորհին որ երբ ասանկ չընեն, հասարակութեան առջեւ յարգ և համարում չեն ունենար : Աններելի վատութիւն :

Գառնանք մեր երիտասարդ ամուսիններուն որոնք պարտէզին չորս կողմը կը պտտին և կը ժպտին իրարու ձեռք սեղմելով, երբ մթնի փապարթ (գօփաղ և էր) մը առջեւէն կամ խիա ծառերու տակէն կանցնին : Տանտիրոջ ծառան իր շանը անուրը (թատմա) սեղմելու համար վայրկեան մը կանկ կատնու . տիկին ժերմէջլ և իր տղաքը կը շարունակեն շրջագայութիւններն կը հասնին պարտէզին ծայրը, այս կողմը դաշտերու վրայ կը նայէր և շատ բարձր պատով մը դրոշուած էր . բայց վարձկաններուն հանդատութեանը համար պատէն դուռ մը բացուած, և այդ դուռն ալ երկաթէ վանդակներէ ըլլալով տախտակներով ծածկուած էր, որպէս զի դուռն անցնողներն չի կարենան պարտէզին մէջ նայել :

Բայց և այնպէս այս տախտակներն կիսով

մայած, որ մէկն այ բրթած ըլլալուն՝ երբ տի-
կին ժէրմէզը և իւր սրգիքը վանդակէ դրանն
առջևէն կանցնէին. դուրսի կողմը երկաթէ
վանդակներուն կրթնած դուռն մը տեսան, որ
բրթած տախտակներուն տեղումնքէն ուշադ-
րութեամբ պարտէզին մէջը կը նայէր:

Տիկին ժէրմէզը այս տեսարանին վրայ վա-
խտէն սուտաց. Ատէլին գործոնի երկիւղ մը զգաց,
և յգուտարդ ինքն ալ շուտակցաւ մտաց տեսնե-
լով այնպիսի կերպարանք մը զոր հոն տեսնել
չէր յուսացուէր:

Յիրաւի պարտէզին մէջ նայող մարդուն
դէմքը առտօլին անգամ կրնար ստկում մ'ադ-
դել. վանս զի, աչքերը սև, դէմքը թուփ (էս-
մէր), պիտեքը խոշոր և ձօթ յօնքին վարի
ձայլէն մինչև ճակատին մէկ մասը պացած վեր-
քի նշան մը կրող մարդ մ'ըլլալով՝ իր կերպա-
րանքը դժնդակ տեսարան մը կը ներկայացնէր,
որով տեսնողին վրայ ազէկ պատգորտ թխն չէր
ըներ:

— Ո՛հ, Աստուած իմ. . . այս ի՛նչ զարհու-
րելի դէմք է. . . քաւ. աիկին ժէրմէզը յան-
կարձ կայնելով:

— Ի՛ր վախնաք, մայր, աօր պարտէզին
մէջ նայելով զուարճանալ ուզող մարդ մ'է, ք-
սաւ Եգուտարդ օտարականին երեսը նայելով, որ
առանց շիտեկելու շարունակ պարտէզը կը նա-
յէր:

— Գրեթէ ես ալ վախցայ, քաւ. Ատէլին
յած ձսցնով:

— Գրեթէ վախցար, աղջիկս, ուրեմն շատ
երջանիկ ես. . . իսկ ես, ճշմարիտ կըսեմ,
դեռ վախ անցուցած չեմ. . .

Տիկին ժէրմէզը այս խօսքն ըսելով վանդա-
կապատին քովէն հեռացաւ և իր փեսային քով
դնաց պահուրտեցաւ:

— Ո՛րչափ երկչառ էք, մայր, հաս վախնա-
լու բան մը չի կայ. այսպիսի դեղեցիկ պար-
տէզի մ'առջևէն անցնողը հարկաւ վայրկեան
մը աչքը կը դարձընէ ներս կը նայի. քոան
անդամ այս բանը մեղ պատահած է:

— Այո, այդպէս է. . . բայց այնպիսի խո-
շոր պիտերով և սարսափի առիթ տուող կեր-
պարանք տեսած չունէինք: Տեսէք. . . ամե-
նեւին չայլայլիք. . . մեզի ամենեւին ուշադ-
րութիւն չըներ:

Սոյն միջոցին տան տիրոջ ծառան քովերկին
կուգայ, և դաշաբերուն վրայ նայող դրանը
քով երթալով աիկինները սարսափեցնող գը-
լուխը կը տեսնէ, խոժոռ դէմքով անոր երե-
սը կը նայի, և ցած ձայնով կըտէ,

— Այս անիծեալ մարդը դեռ չի՛ պիտի եր-
թայ:

Անմանօթը ծառային երեսը նայեցաւ, և
աիկիններն անոր նայուածքէն խնայան որ ծա-
ռային դէմ խիտտ բարկացաւ, վերջը պարտէ-
զին մէջ եղողները վայրկեան մը քննելէն յե-
տոյ՝ գլուխը զանդակապատէն բաժնեց ու
մեկնեցաւ:

— Կուզէի գիտնալ թէ ո՛վ էր այս մարդը,

բաւ Ատէլին իր ամուսնոյն երեսը նայելով :

— Ճշմարտաբար ըսելով , այս մարդը ազէկ միտք չունէր , բաւ տիկին ժերմէօյլ , որ այդ սարսափելի դիտուն աներեւոյթ ըլլալէն վերջը ազատօրէն չունչ առնել սկսաւ : Այս մարդը գէշ տպաւորութիւն մ'առնենալ կը ցուցնէր , այնպէս չէ՞ , երգուարդ :

— Ո՛հ , սիրելի մայր , ես բնաւ ձեզի պէս չեմ խորհրդ . . . եթէ մարդը բորբոքիմ տեսած ըլլայինք , կարելի է իր կերպարանքը այնչափ ստակալի չի պիտի երեւէր մեզ , մինչդեռ Տին տախտակներու վրայէն և երկաթէ լանդակներու ետեւէն այնչափ գէշ երեւցաւ :

— Ամուսինս իրաւունք ունի , մայր . կարծեմ տեսած առարկաներնիս դատելու եղանակը անոնց մեր աչքին ինչ պիտիտես ներկայակալէն կրնայ կախում ունենալ : Հնոտիներ հագնող մարդ մը շատ տեղամ մեզի անվատհոսութիւն կը պատճառուէ . եթէ այդ մարդը նոր հանգերմներով մեզի երեւայ , զինքը տեսնելով բնաւ վախ մը չենք զգար : Գիշերքը , բուսթիւնք , յունի լոյսը , և անոր ամեն իրաց վրայ ձգած ստուերը մեր տեսնելու եղանակէն կը փոխուին , և շուտով մեր երեւակայութիւնք կը խռովին :

— Ինչ որ կուզես , բա՛ւ , սիրելի բարեկամահիտ . բայց այս գէժքը անկեղծ հետաքրքրութեամբ պարտեզ մը նայող մարդու մը գէժք չէ :

— Կարեւր է , բայց կուզէի մէյ մը սա

մարդուն հագածներն ալ տեսնել :

— Ճշմարտ , բաւ տան տիրոջ ծառան , այնչափ դեղեցիկ են , որ չեմ կրնար ըսել :

— Դուք այս մարդը կը ճանչնաք , բաւ Ատէլին :

— Ոչ , տիկին , չեմ ճանչնար , բայց առաւօտուն ալ տեսայ . . . գէշ գործ մ'ընելու մտքով դեղին մէջ թափառող աննշան մարդու մը կերպարանք ունի . . . Բայց եթէ անգամ մ'ալ գայ , շուն վրան պիտի թողում :

— Չէ՛ք գիտեր թէ ի՞նչ կը փնտռէ այս գիւղին մէջ :

— Ճշմարտաբար ըսելով , ամենտիկ փոյթ չեմ ընել , բաւական է որ իմ տունս չի մտնէ , իմ ուզածս այս է :

Այս միջոցին ալ տանը առջև հասած էին , և աման աէրն ալ դրանք տաջի իրենց կրպակներ , ուստի Ատէլին ծառային հետ ըրած խօսակցութիւնը կտրեց :

— Է՛հ , պարտեզս ի՞նչպէս է , բաւ տան աէրն Ատէլինին :

— Ո՛հ , խիտ դեղեցիկ , պարն , և այս տունը մեզի կրնայ յարմարիլ , անտեղ չէ՞ , մայր :

— Այո՛ , այո , խիտ լաւ կը յարմարի : Թէպէտ տիկին ժերմէօյլ պարտեղին դրանք առջև այդ չարագուշակ գլուխը տեսնէն ի վեր տունէն այնչափ չախօթեցաւ , և անոր դրութեան վրայ այնչափ չի զնայեցաւ , բայց որովհետև իր տղաքը զայն գնել կուզէին , և ինքն ալ կիմանար որ իր գլխագորութիւնն ա-

նօգուտ է , ուստի անոնց սակարկութեան մբռնելուն չի հակառակեցաւ :

Տան տէրը ի սկզբան ուղեց օտարակամներէն բարձր գին պահանջել : Բայց երբ իմացուցին իրեն որ ստակը կանխիկ է , հաճեցաւ զինքն քիչ մը վար իջեցնել , որով սակարկութիւնը լմնցաւ : Տանտէրը ուրախութենէն աղաչեց տիկիններուն որ վեր ելնեն քիչ մը հանգչին , մինչեւ անգամ անոնց մէյմէկ դուաթ ալ օշարակ հրամցուց : Բայց անոնք ծեր ազահին վրայօք կատարեալ տեղեկութիւն տանելու փոյթ չէին ընէր . որովհետեւ անօթի էին , և ճաշէն առաջ միայն զեղին նօտարին տունը երթալու ժամանակ ունէին :

Վասնորոյ տանտէրն ալ յօտիպեց զիրենք որ քիչ մ'ալ նստին . գլխէն բամպակէ դլխանոցն հանեց , զրկեց իր ծառան որ երթայ հին ձունձէ (քէշէ) գլխարկ մը բերէ , զոր թեւին տակն առաւ որպէս զի երկար տանն գլխանայ . զգետտ մը հագաւ կաշնագոյն (ֆրետրգը) , բայց հիմա ինչ գոյն ըլլալն յայտնի չէ . չի մտեցաւ նաեւ իր դուաղանն տանելու , որուն վրայ կամաւ կը կրթնէր , խորհելով որ իր մարմնոյն ծանրութեան մէկ մասը իր դաւազանին տալովը՝ ոտքի ամաններն շուտով չեն հիմար :

Այսպէս ելան գացին նօտարին տունը , որ երկու կողման հաւանութիւնն առնելէն վերջը խօստացաւ որ առուծախի դործն ըստ կանոնի քանքարոյ ժամուան մէջ կը լմննէ . ուստի հարկ եղաւ որ եղուարդ հետեւեալ օրը նորէն

գիւղ գոյ տանը օտակը հետն առնելով , Պ. Բընարէ (տանտիրոջ անունն է) ալ իր կողմանէ խօստացաւ խօքին վրայ հաստատ կենալ և նոր տանը բանալիներն յանձնել , Այսպէս ամեն բան կարգադրելէն վերջը մեկնեցան իրարմէ , ամենքն ալ այս առուտուրին վրայ խիստ գոհ եղած :

ԳԼՈՒԽ Զ .

ԳԵՂԻՆ ՄԷՉ ԵՂԱՅ ՃԱՇ ՄԸ

— Հիմա երթանք ճաշ ընենք , ըսաւ Եղուարդ տիկնանց հետ նօտարին տունէն դուրս ելնելով , և ջնանք գեղին մէջ ամենալաւ խոհարարի խանութ մը գտնել :

— Բարեկամս , պէտք էր որ Պ. Բընարէն ալ հրաւիրէինք :

— Ամենեին ոչ . . . ես ապահով եմ որ նա քիչ ստակ վճարելու համար խիստ գէշ խոհարարի մը խանութ կերթայ . . . բայց նայեցէք . . . սա վարը գուրտէն բաւական աղուոր պանդոկ մը կը տեսնեմ . . . հոն գինիի վաճառական մը , խոհարար մ'ըլլալու է . . . ինչ կրտէք , տիկնայք , երթանք :

— Այո , երթանք :

Կը մտնեն այս խոհարարին պանդոկը . կը տեսնեն որ պատերուն վրայ երլիկ , կարկանդակ , հնդկահաւ , վառեակ , տրցակով (աէմէթ)

ճնեբեկ (դուռ և օճանոց) և որսի մի նկարուած են . բայց և այնպէս դեղի խոհարարներն սովորաբար իրենց խանութին պատերուն վրայ նկարուած կերակուրներուն միայն քաւորդը կրնան ներկայացնել . ասիկց զատ իրենց ձըւները շնորհիւն այլ միշտ պակ են :

Երբ մեր փարիզցիք այն պանդոկին ընդարձակ սրահը մտան , տանտեղը՝ որ միանգամայն դիտար խոհարարն էր , նոյն միջոցին կածիլուէր , իր պղտիկ ծառան ալ դէտտե (1) (հաճը ետմանոց) ըսուած խաղալիկովը կը դբօսնուր , խոհարարին կինն ալ գուրպայ կը հիւսէր , և երկու աղջիկներ ալ ճերմակեղէն օճաուելու և ողորկելու (լութիւլէմէք) զբաղած էին :

— Վա՛յ անգղամ , ըսաւ Եզուարդ ցած ձայնով , կերելի թէ ծինելոյ զներն տաք չնն . . . ինչ և իցէ , գտածնիս կուտենք :

— Այո , բարեկամ , ախորժակն ամենէն լաւ կերակուրն է :

պանդոկին մէջ գտնուողներն՝ դրանք առջեւ կառք մը կենտրն ու գեղեցիկ պարտիկ մը հետ երկու վայելչապղեատ արկնանց գռնէն ներս մտնեն տեսնելով կոկոն իրար անցնիլ :

Գլխաւոր խոհարարը՝ որ մէկ երեսը միայն ամիրած էր , անմիջապէս ամէկին ձեռքէն ձըդեղով միւս երեսին օճաւը կը որբէ , և այնպէս եկողներուն դէմ կհնէ զանոնք հրամայըներու :

(1) « Պիլոզգէ » ըսուած խաղը զնոսակ մը փայտի վրայ գործարկելէ , որտեք իրարու հետ առասանով (սիհիմ) մը կապուած են :

համար . կինն ալ ձեռքի գուրպան չուտով մը փաթտելով՝ ողորկին սեղանին վրայ կը դնէ երթալ զանոնք բարեւելու համար . բայց նոյն միջոցին կօթօն՝ որ սպասուհիներէն մին էր , ձեռքը խնտ տաք ողորկով մը սեղանին քով եկած ասեա՛ այս գեղեցիկ տիկիններն անտեսու համար գլուխը անցին դարձնելով ողորկը անուշադրութեամբ խոհարարին կնոջը ձեռքին կը քսէ , կարծելով թէ գողնոց մը կողորկէ :

Ասոր վրայ կինը աղաչակ մը բրցընելով՝ ողորկին սեղանէն հետագամ ասեա՛ն խեղճը սըրտին ցաւէն ոտքին տակը դռնուտած օճաուի ջըրով լեցուն մեծ տաշտն չի կրնալով տեսնել գեւտին կը թափէ , պղտիկ ծառան ալ ձեռքի խաղալիկը զախուն սանի (թէնճիրէ) մը մէջ կը նետէ , և տիկնայք ալ ետ ետ կը քաշուին գետնին վրայ հեղեղի պէս թափուած օճաուի ջրոյն մէջ չի կոխելու համար :

Խոհարարը չուարելով ներուժն կը խնդրէ , և իր կինը լուեցընել կը ջնայ :

— Հաւար անգամ ներողամտութիւննիդ կը խնդրեմ , տիկնայք և պարոն . . . հաճեցէք ներս մտնել . . . կնիկ , դու ալ լուէ . . . Ի՛նչ է եղբք . . . Իմ ձեռքս օրը տասն անգամ կայրի . . . Բոլոր ուղածնիդ ալ ունինք , տիկնայք , ծինելոյ զն ալ արդէն շատ տաք է . . . այս պատու կօթօնն ալ բան մ'ըրած ասեա՛ն ուշադրութիւն չըներ . . . կնիկ , ձեռքիդ վրայ գեւանախնձօր մը խաչէ , դիր . . . Սն ու բնն , հրամանցէք , ակնայք , և ուղած սենեակնիդ գուցէք նստեցէք :

Տիկնայք չէին ուզեր ներս մտնել զտնա-
նուսը որ ոտուքնին կը թրջի . վերջապէս սոա-
տուհներէն մին երկայն տախտակ մը բերելով
ջուրին վրայ կերկնցրնէ, որուն վրայէն անց-
նելով ներս կը մտնեն, և շատ կը զուարճանան
տեսնելով որ իրենց գառվըր պանդակը այնչափ
կրտարանցում պատճառեցաւ :

— Յն ուրեմն, պարուն խոհարար, մեզ
ինչ պիտի տաք, բաւաւ էր ուարդ խոհարարին,
որ քովերեւուն չէր գառուեր պարծենարով որ
իրենց շատով ճաշ մը պիտի պատրաստէ :

— Պարուն, եթէ կուգէք, շուտ մը ձեզի
էկուցէ՛՛ (¹) մը պատրաստեմ :

— Վայ, ասանկ տեղուանք ալ ժիպլթէն
զատ բան մը չի գտնուիր . . . մենք այդ կե-
րակուրը չենք սիրեր . . . կողի խորոված (գա-
պուրկա գըզարթմ մասը) ունի՛ք :

— Այո՛, պարուն . . . հիմա կը պատրաս-
տեմ :

— Հաւ ունի՞ք :

— Մէկ հատ մը միայն ունիմ որ շատ ըն-
տիր է :

— Թարմ հաւ կի՛թ . . .

— Ահ, հաւ կիթ ներուն բնու խօսք չուզեր :

— Էհ, ահաւատիկ մեր ուզածն ալ տանք
են . քիչ մ'ալ աղցուն (սալաթ) և լուռ գոյն

(¹) Տեսակ մը կերակուր է որ միտի մանրածով
(խորձա) և հացի խմորով կը չիմուի խզի մէջ խորու-
փած, և դոր Եւրոպացիքը ընդհանրապէս ճաշարկաւաստ
Թափանջ) մեծ կը չիենն :

զինի կը բերէք, լաւ մը կը ճաշենք, անանկ
չէ՞, տիկնայք :

— Այո, բայց մեզի շատ մը սպասեցընէք,
վասն զի անօթի կը մեռնինք . . .

— Հող մ'ընէք, տիկնայք, վայրկեան մը
չի տեսէք :

Պ. Պոնօ (խոհարարին անունն է) գնաց իր
ծառաներն դտնելու :

— Շուտ բըէք, բաւաւ նա թաշկինակը մէջ-
քը կապելով (խոհարարը ասանկ պարագանե-
րու մէջ միայն այսպէս իրար կանցնէր) շուտ
բըէք, կնիկ, աղջիկներ . . . բնտեր կերակուր
ունինք եփելու . . . բայց հոս ժիպլթէ զատ
բան մը չունինք, դժբաղդարար զայն ալ չեն
սիրեր . ասկէ զատ անիծեալ հաւ մ'ալ ունինք,
զըր ութը օրէ ի վեր է խորովցի սա հրեային
համար, որ թարմ խոզի միս կերուաւ, այն օրէն
ի վեր է անոր տեղն ալ չի կըցայ գնել . կը յու-
սամ որ վերջապէս այսօր կուտուի . կօթօն, սա
հաւը չամփուրն անցուր . . . կարծեմ հինգե-
րորդ անգամն է որ շամփուրը կանցնի . . .
բայց հող չէ, հետք քիչ մը եզի ծուծ (իլիկ)
խառնելուս պէս համով բան մը կըլլայ . . .

— Ահ, Աստուած իմ, կրուք խոհարարին
կինը, այս ինչպէս կայրի ձեռքս, ահա աս
եօթներորդ գետնախնձորն է որ վրան կը գնեմ :

— Վայ կինս, միաքա աղէկ բան մը ձգե-
ցիր . . . այդ գետնախնձորներն ամենքն ալ
եփած են . . . չբլլայ որ նեւես . . . պահէ
. . . անոնցմով սա մարդոցը ազուտ կարկան

դակ (պէօրէկ) մը կը շինեմ . . . Դուն ալ տղայ,
չուտով մտաւճառին դնա, և քանի մը կտոր կող
(դասուրկա) առ . . . դուն ալ, Մարիան, գնա
հաւկիթ գնէ, և եկուք աղցան մը շինէ: Ծուռ
ըրէք: Ինձի ճրագ մը վառեցէք . . . քիչ մը
կնքամով բէրէք . . . սա շիշերս կնքեմ . . . որ
գինիիս համար լուսագոյն տեսակիէ բռնէ:

Իւր քանիւր ոք Պ. Պոնօյէն ընդունամ հը-
րամաններն կսկսի կատարել, ինքն ալ բուռը
կը վառէ, թեւերը վեր կը դարձընէ, որպէս
զի հաւկիթներուն համար ջուր տաքցընէ: Կօ-
թօն խեղճ հաւը շամփուրը կանցընէ, աղօթե-
լով որ ստի վերջին անգամն ըլլայ: Մարիան
հաւկիթները կը բերէ, և կերթի՛ց պարտեղէն
հազար (մարուլ) բրցընելու . . . վերջապէս խո-
հարարին կինն ալ անդագար գեանախնձոր
խաշելով ձեռքին վրայ կը դնէ, և վրայէն հա-
նելէն ետքն ալ սկաւառակի մը մէջ կը պահէ,
ինչպէս որ իր սյրը իրեն պատուիրած էր, ու-
րովհետեւ մարպետ խոհարար մը ամեն բանէ
օգուտ քաղել կուզէ:

Բայց և այնպէս պզտիկ ծառան մտաւճա-
ռուն խանութէն դառնալով տխուր լուր մը
կը բերէ. մտաւճառին քով կող չի կար, որով-
հետեւ գիւղին վերակացուն առաւօտուն ա-
մենքն ալ գնամ էր. ուտոի մտաւճառն բսած
էր որ եթէ ժամ մը կրնայ սպասուլ, խանու-
թին աշխերտը իր կարոյններն սրել տալու դա-
ցած էր, դառնալուն պէս սխար մը կը մտրթէ
և կողը կը խրկէ:

— Վայ չար ստամոյ, բուռ խոհարարը
զայս լսելով և իր հաւկիթներն ջուրը գնելով,
տեսար հիմա գլխուս եկածը, երթալու մար-
դոցը իմացընելու է:

Խոհարարը կերթայ եղբուարդին ու տիկ-
նանց քով, որք անհարեք կերակուրի կըստա-
սէին, իրենց անանկալ գարտեամբը պանդո-
կին մէջ տեղի ունեցած տեսարանին վրայ ան-
գագար ծիծաղելով:

— Մն ուրեմն, գեռ սպասե՛նք, բուռ եղ-
բուարդ խոհարարին երեսը նայելով:

— Վայրկեան մ'ալ պարոն, վայրկեան մ'ար

— Որչափ ալ երկար են ձեր վայրկեաննե-
րը, պարոն խոհարար:

— Կողի խորովածին համար ձեր կարծիքը
իմանալ կուզեմ:

— Ի՛նչպէս . . .

— Մտաւճառին խանութը կող չէ մտա-
ցեր, աշխերան ալ ժամ մը վերջը պիտի գայ ու
սխար մը մտրթելով կողը հոս զիտի զրկէ. ուս-
տի, եթէ կը հաճիք, երէք ժամանակ անցը-
նելու համար պարտեղէն պատեցէք:

— Ինչ ազուր ալ կը զուրցնի, Աստուած
սիրես, գիտես որ սպասելու ժամանակ ունինք
. . . մենք հաս քու պարտեղիդ հազարները
տեսնելու չեկանք:

— Կաղաչեմ, բարեկամս, մի բարկանար,
բուռ Ասէլին խոհարարին պաղարիւնութեանն
ու եղբուարդին բարկութեանը վրայ ծիծաղե-
լով, հիմա կողի խորոված թող չըլլայ:

— կուղէք նէ, տիկին, անոր տեղը ձեզի բնտիր էէշքն մը պատրաստեմ :

— Ինչ որ կուզես, այն տուր . բայց վերջապէս բան մը տուր որ ուտենք :

— Խնայն, տիկին, հիմա կը պատրաստեմ :

Պ. Պօնօ քսան աարիէ ի վեր այս կերակուրը եփելուն համար ալ գոթթէ լաւ մը սորված էր զայն եփելու եղանակը . ուստի ամենեւին չի դժուարացաւ : Գնաց մէջը քսնի մը կտոր ճագարի միւս գտնուած ստնն առաւ, դրաւ կրակին վրա, և զայն ծածկելէն վերջը պզտիկ ծառային յանձնեց որ երբեմն երբեմն խառնէ, և իր թարմ հաւկիթներն առաւ . եղուարդին և տիկնանց տարաւ :

— Կը տեսնէ՞ք, տիկնայք, որչափ շուտ բերի, ըսաւ խոհարարն հաւկիթները սեղանին վրայ դնելով : Ո՛հ, խորհեցայ ալ որ դեանտարն ձորով ու նարնջի ծաղիկով շինուած կարկանդակ մ'ալ շատ հաճելի պիտի ըլլայ ձեզ . . :

— Ինչ կըսես, պարոն խոհարար, հոս անակ կարկանդակ կրնայ շինուիլ :

— Այո՛ . պարոն . . . Ի՛նչ ըսել է, ես իմ վրաս կրնամ վտտահել . . .

— Ըսել է որ դու վարպետ խոհարար մ'ես :

— Ի՛նչ կըսէք, պարոն, այդ ալ խոսք է, ես այս արհեստը փարիզու Պատի՛նքն ըսուած պանդոկը սորված եմ :

— Այդ ուրիշ խօսք . . . Եթէ հոն սովորած ես, զարմանալի բան չէ . ուրեմն գնա շինէ, տեսնենք :

Պօնօ կը մեկնի իրեն եղած յարդանացը վրայ գուռազայած . տիկնայք կսկսին հաւկիթներուն կեղեւներն հանել, բայց անկարելի բան . այնչափ եփած են որ հարկ կըլլայ անոնց միայն մէկ կողմի կեղեւներն հանել ու ձեռքի վրայ ուտել : Ատր վրայ Ատէլին ծիծաղելէն կը մտի, տիկին Ժէրմէյլ դուխը կերերցընէ, և եղուարդ ալ վերջին զուարճութիւն մ'ըլլալու համար կիմացնէ որ հաւկիթները յարդ կը հոտին :

— Ասկէ կիմացուի որ այս մարդը կարկանդակ ամենեւին չի պիտի կրնայ շինել, ըսաւ մայրը հաւկիթը ձեռքէն ձգելով :

— Կեցիք, տիկնայք, դեռ մի յուսահատիք . . . Գիտէք որ մեծ մարդիկն պզտիկ բաներու ուշադրութիւն չեն ընեք . և կարելի է այս մարդն ալ լաւ հաւկիթ եփելուն ճամբան գիտցած ըլլայ :

Ատր վրայ Պօնօ ներս կը մտնէ ձեռքը մեծ սկաւառակ մը ժիպլոթ ունենալով, զոր եղուարդայ առջև կը դնէ :

— Պարոն խոհարար, կըսէ եղուարդ, ամեն բան դիտեմ, ըսիր . տես բերած հաւկիթներդ աղէկ եփած չեն, և յարդ ալ կը հոտին :

— Պարոն . . . յարգ հոտին իմ պակասութիւնս չէ, վասն զի հաւկիթներն անողն ես չեմ, այդ բանը բարորդին հաւերէն կախուածնի . իսկ աղէկ չեփած ըլլալուն պակասութիւնս ալ ժամացոյցիսն է, վասն զի հաւկիթներն հինգ վայրկեանէն աւելի Չուրը չեմ թաղուր . արգ ե-

Թէ անոնց կրտսիկն վրայ եղած ժամանակն ժա-
մացոյցս ետ մնացած ըլլայ, ատոր ես ինչ կըր-
նամ ընել. ասի խիտ վարդեա խոհարարներն
անգամ կը սխալեցնէ . . .

— Խիտ բարի, իրաւունք ունիք, բարե-
բաղդաբար ժխլբովն ո՛չ հաւկիթով կեփի. և
ո՛չ ժամանակով . . .

— Ինչ և իցէ, անոր ալ ինչպէս ըլլան ետ-
քը կիմանանք . . . ես երթամ որ հաւերնիք
կաննաւոր կերպով եփի :

Պոնո կը մեկնի ետ տանելով իր հաւկիթ-
ները որոնց ամենեւին դպած չէին, որ զանոնք
աղցանին վրայ անցընէ, և կրկին ստակ առնու
անոնց համար. ասի խիտ աղէկ շահ մ'է,
բայց որպէս զի մէջէն նորէն յարդի հոտ չի դայ,
խոհարարը վրանին ձէթ անցուց որ անոր հա-
մովը յարդին հօտը անցնի :

— Են ուրեմն, ըստ Եգուարդ տիկիննե-
րուն, որովհետեւ ալ ժխլբով աւալու որոշում
տուիք, տննենք սա կերակուրը մեր խոհա-
րարին պատիւ կը բերէ . . . Բայց այս ինչ է
մէջը . . . վա՛յ անդամ . . . առասան է,
ի՛նչ է . . . այո՛, առասան է . . . Արդեօք
այս մարդը ճաղարներն առասանով կը կապէ
ու այնպէ՞ս կը դնէ սանին մէջ . . . կեցիք,
նայի՛մ . . . ասի ուրիշ բան մ'ըջալու է . . .
Չայրն ալ չեմ կրնար գտնել . . . Զարմանալի
բան, կարծեմ ծայրն ալ բան մը կապած են . . .
ի՛նչ կը տեսնեմ . . . նայեցէք, արկնայք, սա
ի՛նչ է . . . ճաղարներուն ա՛ղդըն (գալչա) է :

Թէ գըւխը . . . Այս ի՛նչ տեսակ կերակուր
է . . .

— Ո՛հ, Աստուած իմ, ըստ Ատէլին, Եգ-
ուարդին պատուաբաղով սկաւառակին մէջէն
հանած բանն ընենելով, ասի զեղտե մ'է . . .

Այս ըսելով սկսաւ դիւահօրի մը նման ծի-
ծաղիլ, անանկ որ առջևի պնակը գետնին ին-
կաւ. անոր չտի Եգուարդ ալ ծիծաղեցաւ, և
տիկին ժերմեջլ իր փեսային ձեղքին մէջէն
դատած խաղալիկը տեսնելով նոյնպէս չի կրցաւ
իր ծիծաղը բռնել :

Ընթ երջոյզը անշուշտ կը յիշէ որ երբ ճառ-
բորդներն պանդոկը մտան, հոն ամենքն սկը-
սան իրար անցնիլ, և նոյն միջոցին խոհարարին
աշիկերսը պզտիկ պէղտեով մը կը գրօսնուր. երբ
խոհարարին կնիսներ ձեռքը այրեցաւ և օժա-
սի ջրով լեցուն տաշար սրահին մէջ թափեց,
ազան վախնալով որ ըլլայ թէ վառակեր զին-
քը յանգիմանէ, իր խաղալիքը իսկոյն քովը
գտնուած սանին մէջ նետած էր, ճիշդ այն
սանին մէջ ուր ձեղքեփ եփելու ճաղարի մտերն
կը դառնուէին : Վերջէն երբ Պ. Պոնո սանը ձեռ-
քին առաւ, առանց մէջը նայելու բերանը
դոցեց. աշիկերան ալ սկսաւ խառնել այնպէս
գիտնալով որ անոր մէջ մտէն զատ բան մը չի
կայ, և չի խորհելով որ իր խաղալիկը քիչ մ'ա-
ռաջ անոր մէջ նետած էր :

Պ. Եգուարդին և տիկիններուն ծիծաղի
ձայներն այնպիսի բարձր ելան, որ մինչև Պ.
Պոնոյի ակամայի հասան :

— Ո՛հ, ըստ պարոն խոհարարն, կերեւի թէ մեր փարիզեցիներն չէլոյթէն դո՛հ եղած են. ես ալ խիտ ապահոյ էի ասանկ բլլալուն վրայ . . . Լաւ ուրեմն . սակեց կը հետեւի որ հաւն ալ դիւրաւ պիտի քշուի . . . շուտ ընեմ, աղցանով աւանձմանիմ . . . Կոթօն, ձիթամանը տուր . . . Վրան հաւկիթ կոտորեցի՛ր . . . Լաւ, խիտ լաւ . . . Ահաւասիկ կերակուր մը, որ շարթուան մը ծախքերուս գինը կը հանէ :

Այս բոլորով կը մտնէ սե՛նեակը, ուր փոխանակ ճաշելու շարունակ կը ծիծաղէին : Հաւը սեղանին վրայ կը դնէ . և հոն կը կենայ շնորհակալութեան սպասող մարդու մը կերպարանքով :

— Ճշմարիտ, պարոն խոհարար, ըստ Եդուարդ իր ծիծաղը դպել ջանալով, խիտ անօրինակ կերպիւ մեզ կը պատուէք . . . Դէպտէ կերակուր կրնայ բլլալ . . .

— Ինչ ըսել կուզէք, պարոն :

— Մենք ասանկ բան կերած չենք, պարոն խոհարար, մեզի հետ ասանկ վարուել չի վայլեր . . .

— Նայէ, պարոն, ասի ճագար է :

Պ. Պօսօ ապշեցաւ մնաց, երբ համեմով (սայցա) թաթխուած Դէպտէ տեսաւ :

— Աս, ըստ Ատէլին, առ ժպլլթի տար. մէջէն ասանկ բան մը գտնուելէն վերջը որբտերնիս չի գաշէք որ ուսանք :

— Տիկին, ճշմարիտը խօսելով այս տեսածիս վրայ խիտ շիտթած եմ . . . Այլ սակայն

աղէկ դիտցաք որ պակասութիւնը իմն չէ . . . Ըսել է որ ճագարներն Դէպտէ կուտեն եղեր . . .

Հիմա նայինք սա հագ գինչպէս է . եթէ ան ալ առաջիններուն պէս բլլայ, պիտի պարտաւորինք երթալ ուրիշ տեղ ճաշել :

Խոհարարը առանց երկար խօսելու քովերնուն մեկնեցաւ . բարկութենէն կրակ կտրած գնաց խոհարանը, և աշխարհն ահանջները բուշեց Դէպտէ ճագարներուն օտնին մէջ նետելուն համար :

— Ինչ եղար, բարեկամս, ըստ Պ. Պօրնայի կինը իր ամուսնոյն, իր ձեռքին վրայ դըրած գետնախնձորներուն պնակը անօրտանելով :

— Ինչ եղայ, ինչ եղայ . այս անգղամբ աշկերտը ամեն ատեն ասանկ շարութիւններ կընէ, բան չի ձգեր, կերակուրներուս մէջ կընետէ . անցեալ օր երկու խեց (թափա) նետեր էր ձկան պորոնիի (եահնի) մը մէջ, բարեբաղդաբար օւտողներն գինով բլլալով ու շագրութիւն չըրին ու տունկ (մանկտար) կարծելով կերան . բայց այսօրուս եկողները խելքերնիի գլուխը մարդիկ են, և թշուառականք պատճառ եղաւ որ չէլոյթ չի կերուեցաւ . . . մարդիկը հաւր տարած ժամանակօ չէլոյթէ երեսիս զարկին . այս անգղամբ աղտուս պանդոկագետնիս քովը եղով ժամանակին պէս սղտեղիէ . . . Կնիկ, սա ձեռքիդ գետնախնձորը հանէ, ուրիշ մը դիր, ստակը մենք տալու չենք. ինչուդ պէտք . . . Օն ուրեմն, սա կարկանդակով պատիւնիս չախենք :

Մինչդեռ Պ. Պոնո պատրաստած կերակուրներէն շատ շահ քաղելու կը ջնար, անդին Եղուարդ հաւը ջարդելու ետևէ էր, տիկին ժերմէօյլ ալ ազցանը կը համսներ, բայց ի դուր կը ջնար, որովհետև հաւը շատ անգամներ խորոված բլլայուն այնչափ չորցեր էր որ մէջը գանակ չէր մտնէր :

— Աս ալ ետ տարու է, բնաւ Եղուարդ հաւին պնտիք մէկդի նետելով :

— Անկարելի բան է որայս ձէթը ուտուի, բնաւ տիկին ժերմէօյլ ազցանէն պատառ մը առնելով :

— Հասկցայ, բնաւ Ատէլին, այսօր չը պիտի կրնանք հոս ճայ ընել :

— Ճմարիտ կըսեմ, տիկնայք, բնաւ Եղուարդ սեղանէն ելնելով, կարծեմ գետնախընձորէ կարկանդակին ալ սպաննինս անօգուտ բան է . թերևս հոն ալ կտոր մը ձուկ գտնենք, Յփսիփ առէք, գլխարկնիդ դրէք, մինչև որ ես երթամ սա խոհարարը ոտքէն մինչև գլուխը լուամ, որ մեզի այոչափ ծաղը բրա :

— Զգուշացիր, բարեկամ, որ չի բարկանաս . գիտցիր որ մեր գլուխը պատահածնեբուն վրայ ձիծաղելէն ուրիշ խելացի միջոց չի կայ . անանկ չէ՛, մայր :

— Այո, աղջիկս . բայց ասանկ ճաշի մը համար բնաւ ստակ մը վճարելու չէ :

Եղուարդ սենեակէն դուրս ելնելով շիտակ խոհարան կերթայ, մեծ սրահէն անցնելու ատեն, սպասուհիներէն միոյն ձայնը ականջին

հասաւ, որ կարկանդակին վրայ կը խօսէր, Լսեց որ սպասուհիներն կարկանդակին վրայ կը վիճարանէին . հոն աեղ մը պահուրտեցաւ, և հետևեալ խօսքերն լսեց որոշ կերպիւ .

— Ճմարիտ կըսեմ, Մարիան, սա մեր վարպետին հիմա կուտն շինած կարկանդակը ձեռքս անցում չեմ առնէր, եթէ առջիս ստիկ սլ թափեն :

— Ինչ կրես, շատ աղուօր կը շինէ :

— Այո, շատ աղուօր . . . և միանգամայն խիտ համով :

— Այդչափ մեծանձնաթիւն (չիպարըդ) չուզեք . . . թէ որ հացագործներուն հաց շինելը տեսնես, ինչ պիտի ընես . . . հասաւ գիտնին . . . ես այգեպան մօրեղբայր մ'ունիմ, որ վրան գլուխը խաղաւարտ (չիպան) հանած է . բայց հնձանը կը մտնէ ու խաղաղ կը կոխէ գիտնին ալ շատ աղուօր է . . .

— Դու ուղածիդ պէս խօսէ, կօթն . ես ոչ գինի շինուիլը տեսած եմ, ոչ հաց շինուիլը, անոր համար այնչափ հօգ չեմ ընէր . բայց հիմայ երբ տեսայ որ մեր վարպետը իր կնկանը այրած ձեռքին վրայ գրած գետնանձորներէն կը շինէ այդ կարկանդակը, կրնայ բլլալ որ ուտեմ :

Եղուարդ ալ մտիկ չընէր . մէկէն սրահը կը մտնէ . երկու սպասուհիք կը շուարին և կը թողուն զինքը որ խոհարան երթայ, ուր կը գտնէ Պ. Պոնոն որ իր կարկանդակին վրայ հաւած շաքար կանցնէր :

խոհարան մտածին պէս կարկանդակին պը-
նակը ձեռքէն առնելն ու պարտէզին մէջտեղը
նետեղը մէյր կընէ, որուն վրայ խոհարարը
ապուշ դէմքով երեսը նայելով .

— Ինչ եղօք, պարոն . . . Ինչո՞ւ բարկա-
ցեր էք :

— Ահ, անիծեալ, թշուառական . . . կըն-
կանդ ձեռքին վրայ դրած գետնախնձորներովը
մեզի կարկանդակ կերցնել կուզես . . .

— Պարոն . . . Ինչ բսել կուզէք . . .

— Ահաւասիկ մենք կերթանք, բայց վաղը
ծորէն պիտի գտմհոս, և քեզի պիտի սորվե-
ցնեմ այդպիսի թունաւոր կերակուրներ ե-
փելը :

Եդուարդ այս խօսքը բսելով կը մեկնի խո-
հարանէն, կուգայ տիկնանց քով, որոնք սեն-
եակէն դուրս ելնելու վրայ էին :

— Մեկինք, տիկնայք, ըսաւ Եդուարդ
զանոնք տեսնելուն պէս, չուտով սա տեղէն
դուրս ելնելք. բարեբաղդ համարեցէք դուք
ձեզի զգետնախնձորէ կարկանդակն չուտելուդ
համար :

— Ինչ կայ, բարեկամս, Ինչ կայ :

— Վերջը կը պատմեմ. հիմա սա անիծեալ
թունաւորիլն պանդոկէն դուրս ելնելէն զատ
բան պէտք չէ մեզի :

Եդուարդ Ատէլինի ձեռքէն բռնեց, տի-
կին ժէրտէյլ ալ ետեւունս դուրս ելած, և այն
ինչ պանդոկին դրանն առջին հասած էին, նա-
յիս խոհարարը գէմերնին ելաւ ու բսաւ :

— Վայրկեան մը կեցէք, տիկնայք և պա-
րոն, վայրկեան մը կեցէք, կաղաչեմ. և բամ-
պակէ գլխանոցը վեր առնելով, կարծեմ, ը-
սաւ, պանդոկապետին ստակը չի վճարած
դուրս ելնելն անվայել բան է :

— Ստակ . . . Իրաւ անմիտ ես եղեր դու,
պարոն խոհարար, Ինչ բերեր մեզի որ ստակ
կուզես :

— Ինչ բսել է, Ինչ որ ուզեցիք, բերի-
բայց դուք չէք կերեր, այդ ինձի վերարե-
եալ բան չէ :

— Մեզ կը ծաղրե՞ս, պարոն խոհարար,
ինչ որ ուզեցիք, բերի բսելով. մենք քենէ
թարմ հաւկիթ ուզեցինք, դու գացիր հո-
տած հաւկիթներն առիր բերիր. կողի խորո-
ված ուզեցինք, անոր տեղը զլուսով ձուգե-
բերիր. գինիին տեղ քացախ առիր. աղձանիդ
ձէթը ուտուելու բան չէր. բերած հաւդ կա-
ցինով հազիւ թէ կրնար ջարդուիլ. անկէ ետ-
քըն ալ կարկանդակ մը պիտի կերցընէիր մե-
զի որ . . . Հաւատաւ, պարոն խոհարար, որ
քու ըրածդ անամօթութիւն է. ալ ձայնդ կըտ-
րէ, սպա թէ ո՞չ հիմա կերթամ կը հասկըցը-
նեմ ուր որ անկէ, և պանդոկդ գոցել կու-
տամ :

— Պանդոկս գոցե՛լ կուտաս, բսաւ Պոն
բարկացած, ատանկ խօսքերով զիս չես կըր-
նար վախցընել. շուտ ըրէ, ստակս տուր . . .
բաւասուն ֆրանկ և տասնըհինգ սանթիմ
պարտք ունիս . . . ահաւասիկ հայուց թուգ

Թր . . կամ ստակս տուր , կամ Պ . գիւղապետին տունը կը տանիմք քեզ :

Եղուարդ առանց պատասխանելու հաշուոյ թուղթը կառնու . և խոհարարին քթին բերնին կը նետէ . որուն վրայ խոհարարը սարսափելի աղաղակ մը կը բրցընէ , և բոլոր գիւղացիքը գլուխը կը ժողվէ :

— Տեսէք սա փարիզեցիներն , կերած կերակուրներնուն ստակը տալ չեն ուզեր , կը պոռար խոհարարը , որ ամեն ատեն քաղցրին բրնակիչներուն վրայ պահասութիւն մը գտնել կը ջանար . տեսէք մէյնը , տակերծին կառքունին , գրպաննին ստակ մ'անգամ չունին :

Եղուարդն ու Ատէրին խոհարարին այս խօսքերուն վրայ ծիծաղելէն մարելով Պ . գիւղապետին տունը կը շտկուին . տիկին ժէրմէօյլ կառքով ետեւուն կերթայ . բալոր գիւղացիք կը շրջապատեն զՊ . Պոնո որ անոնց մէջ տեղէն կերթար քովն ունենալով իր աշկերտը , որուն ձեռքը տուած էր հուլակուոր հաւք . սրովհետեւ Եղուարդ ստիգած էր զինքը որ հաւք Պ . գիւղապետին տունը քննութեան ենթարկուի : Եւ այսպէս բազմութեամբ գիւղին մէջէն անցնելով հասան Պ . գիւղապետին տունը . ճամբուն վրայ հանդիպող գիւղացիներէն ալ շատերը բազմութեան հետ միացան , որովհետեւ այսպիսի դէպք մը իրենց համար մեծ բան մ'էր :

Պ . գիւղապետին տունը հասնելով ուղեցին հետը տեսնուի :

— Հիմա ձեզի մտիկ ընելու ժամանակ չունի , ըսաւ սպասուհին . սեղան պիտի նստի :

— Բայց պէտք է որ մեր դատը տեսնէ , ըսաւ խոհարարը :

— Եւ սա հաւնալ գատէ , ըսաւ Եղուարդ ծիծաղելով :

— Ոհ , հաւ կայ , ըսաւ սպասուհին . լաւ ուրեմն , այդ ուրիշ խօսք . երթամ Պ . գիւղապետին բոսժ որ ասի հաւի մը խնդիր է , և պէտք է վար իջնէ :

Սպասուհին գնաց տէրը գտաւ , և խնդիրը այնպէս աղէկ հասկըցուց որ Պ . գիւղապետը՝ որ գրեթէ բան մը չիմացաւ , վերջապէս սրուցեց իր սեղանակիցներն վայրկեան մը թողուլ , և դատաստանի սենեակն իջնել :

Նոյն ժամանակներն գեղին գիւղապետութիւնն այնչափ հանճարեղ մարդու մը յանձնուած չէր , Այս մարդը իր պարտէղին մէջ հովանոց (քեօշկ) մը չիներ տուած էր , և այս պղտիկ իր միտքը գալուն համար վրան անանկ զմայլած էր , որ վախնալով որ չըլլայ թէ զայն տեսնողը ուրիշ տեղ մը տեսած ըլլայն յայտնէ , անոր դրանը վրայ այսպէս գրել տուած էր .
Այս հաւնոցը հաւնոց է :

Երբ դատաստանի սենեակը մտաւ , բազմութեան մէջ լուսիւն մը տիրեց :

— Ուր է վէճի ենթակայ եղած հաւք , ըսաւ նա ծանրութեամբ մը :

— Պարոն գիւղապետ , վէճը միայն հաւի վրայ չէ , այլ ամբողջ ճաշի մը վրայ , որուն

ստակը վճարել չեն ուզեր , ըսաւ խոհարար
սոսաջ երթալով :

— Ճաշ մը . . . այդ ուրիշ խոսք . . . կե-
րան :

— Ո՛յ , պարոն , ըսաւ Եղուարդ , ահաւա-
տիկ այս հաւը ձեզի օրինակ մ'ըլլայ :

— Հաշուոյ թուղթը քննեցէք , պարոն
դատաւոր , պիտի տեսնէք որ շատ ճիշդ նշա-
նակուած է . . .

— Տեսնենք սա թուղթը . . . Քարո՛մ հաւ-
կիթ . . .

— Աղէկ եփած չէին . . .

— Ի՛նչ փոյթ . . . ով որ գաւաթ կը կտա-
րէ , ստակը կը վճարէ . հետեւաբար ով որ
հաւկիթ կը կտարէ , ստակը վճարելու է :

— Ժէւա՛ . . .

— Մէ՛ջէն զէլտէ մը դառնք . . .

— Ատի ճագարներուն չի պատկանիր : Մը-
նաց որ զէլտէ մը չի կրնար համեմ մը աւրել . :
Անցնինք . . . հաւ մը . . .

— Ահաւասիկ հաւը , պարոն գիւղապետ ,
հաճեցէք զայն շոշափել և ինչ բլլայն իմանալ :

Պ. գիւղապետը խոհարարին աշկերտին նը-
շան կընէ որ քովը գայ . բայց խեղճ տղան
այնչափ բազմութեան մէջ սաստիկ վախնայով
դողոցուն ձեռքով սկաւառակը գիւղապե-
տին քով տարած տտեն , հաւը սկաւառակին
մէջէն դեռանքը կը գլորորի , և աղու մը ձեռքը
իբր խաղալիկ գտնուած թմբուկին (տալուլ)
պէս ձայն մը կը հանէ :

— Ո՛հ , ո՛հ , կերելի թէ քիչ մը չոր է . . .
ըսաւ գիւղապետն զայն քննելով :

— Արեւուն մէջ մնացած բլլալուն , քիչ մը
չօրցեր է , ինչ կըլլայ եզեր , ըսաւ խոհարարը :

— Աղէկ միտքս ինկաւ , ես հոս նոտար բա-
րեկամ մ'ուենիմ , որ իբ կնկանը ինձ ըսածին
նայելով աղէկ հաւ կը ճանչնայ եզեր . կանչեմ ,
անոք հարցնեմ :

Գիւղապետը դուռ մը կը բանայ և նոտա-
րը կը կանչէ , որ իբ տունը կը ճաչէր , որպէս
զի դայ և հաւին ինչպէս բլլայն վճուէ : Եղ-
ուարդի և իբ կնոջ համբերութիւնը հասնե-
լու վրայ էր . գիւղապետին ըսածներէն կը գու-
շակէին որ անոցամ խոհարարին ստակը պիտի
վճարուեր . խոհարարն ալ տեսնելով որ անոնց
պիտի յաղթէ , խոժոռ աչքով երեսնին կը նա-
սի , և գիւղացւոց քով կերթայ , որոնք կըս-
պատէին թէ ե՛րբ պիտի ծաղրեն փարկզու գե-
ղեցիկ պարոնն ու գեղեցիկ աիկինները , ասի
գիւղացւոց համար մեծ զուարճութիւն մ'է :

Երբ նոտարը եկաւ , ու տեսաւ Եղուարդն
ու Ասէլինը որք Պ. Բընարէի տունը գնողներն
էին , փոխանակ Պժնօրի իրեն ներկայացուցած
հաւը քննելու գնաց Եղուարդն ու իբ գեղե-
ցիկ ընկերուհին մեծ յարգանքով պջուցեց :

— Ի՛նչ , հարցուց գիւղապետը նոտարին
ղարմանալով մը , պարոնն ու աիկինը կը ճանչ-
նա՞ք :

— Այո , պատիւ ունիմ ճանչնալու , ասի Պ.
Բընարէի տունը գնող պարոնն է , որ ստակն

այ կանխիկ պիտի վճարէ . . . Գործն ալ իմ
ձեռքովս պիտի լմնայ :

Նօտարին այս խօսքերն խնդրոյն կերպա-
րանքը բոլորովին իրօնեցին . Պ. գիւղապետն
Եղուարդին հետ չափազանց քաղաքավարու-
թեամբ և իր կնոջը հետ ալ վերջին աստիճան
ազնուականութեամբ սկսաւ խօսակցիլ . աղա-
չեց անոց որ վայրկեան մը սրահը մտնեն հանգ-
չին : Վերջը խստութեամբ Պ. Պօնոյի դառնա-
լով, սրն որ նոյն միջոցին ինչ ընելիքը չէր գի-
տեր, սաստկապէս պօռաց :

— Դու խեղկատակ մը, խաբերայ մ'ես,
ինչ երեսով չի կերտած ճաշի մը ստակը կել-
լես կուղես . . . Չոր հաւ մը և հասած հաւ-
կիթ կուտաս, և անոնց համար քրտասուն Փը-
րանք կը պահանջես . . .

— Բայց Պ. գիւղապետ . . . քիչ մ'առաջ
ըսիք որ . . .

— Լռէ, ապա թէ ոչ՝ հիմա տուգանք ալ
կառնում քե՛նէ . . . Ես աղէկ գիտեմ որ դու
քու ծախած գինիիդ մէջ դեղեր կը խառնես,
և բոլոր կատաները գողնալով յաճախորդնե-
րուն ճագարի տեղ կը կլնցնես : Նայէ քեզի
բան մը ըսեմ, Պ. Պօնօ, և թէ գիւղին մէջ քիչ
մը գեր կատա մը կսրուի, պատասխանա-
տուութիւնը քեզ պիտի պատկանի . . .

Ասոր վրայ խոհարարը չփոթած դուրս ե-
լաւ կատղերով նօտարին դարուն դէմ, որ զՊ
գիւղապետն ճախարակի մը պէս դարձնելու
պատճառ եղաւ, աչկերսը առջին ձգեց, հաւն

ալ ձեռքը առնելով դնաց պանդոկը, և որ-
պէս զի հոն գտնուողներուն իւրաքանչիւրին
բրած պակասութեանը պատիժ մը տուած ըլլայ
իմացուց անոնց որ երեկոյցին հաւր պիտի ուտուի :

Գիւղապետն իմանալով որ Եղուարդ ու իր
կինը չէին ճաշած, աղաչեց անոնց որ իր տունը
ճաշեն և, պատրաստուեցաւ ալ անձամբ եր-
թ ալ վեր հանել զտիկին ժերմէջը որ կառքը
մնացած էր . բայց Եղուարդ ու Ատէլին դէմ
կեցան ըսելով որ ժամանակը չանցած փարիզ
կըստատուին, և չեն կրնար այլ ևս իրենց ճամ-
բորդութիւնն ուշացնել :

Ուստի մեկնեցան իրարմէ, գիւղապետը զի-
րենք ճանչալու պատիւն ունենալուն համար
զդացած ուրախութիւնը յայտնելով, և Եղ-
ուարդ ու Ատէլին ալ նօտարին դալէն վերջը
անոր իրենց ցուցուցած պաշտպանութեանն հա-
մար շնորհակալ ըլլալով :

Գիւղացիք գիւղապետին տանը առջին էին,
երբ Եղուարդն ու Ատէլին դուրս ելան, և
մեկզկէ քուլաեցան որ անցնին . ոմանք ալ գէպ
ի կառքը վազեցին որ տիկին ժերմէջը իմա-
ցնեն, և բոլորն ալ այս փարիզու մարդիկը
մեկնած աստենինչատ յարգանք օղջուեցին :

Բայց և այնպէս մին նոյն գիւղացիք էին որ
քիչ մ'առաջ այն անձանց այնչափ նախատինք
կրնէին, և անոնց վրայ կը ծաղրէին . սակայն
այն ատեն չէին գիտեր որ Պ. գիւղապետն զի-
րենք այնչափ պիտի մեծարեր . . . Մարդիկ
ամեն տեղ միեւնոյնն են :

ԳԼՈՒԽ Է.

ԽՈՇՈՐ ՊԵՒԵՐՈՎ, ՄԱՐԿՈՒՆ ԿՐԿԻՆ ՏՆՄՆՈՒԻՆԸ

Մեր ճամբորդներն փարեզ հասան խիստ ա-նօթի, ինչպէս որ յայտնի է: Սկսան կերակուր ուզել, ծառայներն իրար անցան, որ ասդին կը վազէ, որը անդին. զիրար կը փութացնեն, իրարու կը պուսն, և այսպիսի իրար անցումով իրենց պէտք եղածն առնելու տեղ ուրիշ բան մը կառնեն, համեմեւեր կը թափեն, կերակուրներուն որ մէկը այրած կուտան, որ մէկը պաղ. վերջապէս ամեն ինչ խառնաշփոթ, ինչպէս գործ մ'ընելու ատեննին աճապարող անձանց շատ անգամ կը պատահի:

Երապէսներն իրենց տէրերը կերակուրի համար չէին սպասեր. ձերուսին ըէման չի կրցաւ իմանալ թէ ինչո՞ւ անօթի ետ գարձան, և անոնց գացած տեղւոյն վրայ խիստ գէշ կարծիք մ'ունեցաւ, և խոհարարուն հին ալ շատ հետաքրքիր եղաւ իմանալու թէ ի՞նչ պատահեցաւ անոնց: Բայց և այնպէս մեր ճամբորդներն Պ. Պոնցի պանդոկը գեռ. աչքերուն առջև բլուրու պէս կարծելով՝ բոլոր կերածներն խիստ համով եկաւ իրենց:

Այս նշանաւոր օրուն հետեւեալ օրն՝ Ատէլին խիստ յաջնած ըլլալուն չէր կրնար եղուարդի հետ վիրնէօվ-Սէն-Յօրժ երթալ, և ուրովհետեւ Պ. Բընարէի ալ խօսք տուած էին:

ուստի պէտք եղաւ որ Ատէլին հաճութիւն տայ վերջապէս որ իր ամուսինը մինակ երթայ:

Եզուարդ խոտացաւ որ շուտ մը կը դառնայ, և մինչև ճաշի ժամանակ կը հասնի:

— Չգուշացիր, տղաս, բաս տիկին յէր-մէջը, չըլլայ որ գէշ մարդոց հանդիպու. . .

— Այնպէս կը կարծեմ, մայր, որ երէկուան պարտէզին դրանը առջև տեսնուած խոշոր պիխերով գէմընն վրայ գեռ կը խորհի:

— Ճշմարտը ըսելով, անանկ է. սա ևս կը խոտավանիմ, տղաքս, որ բոլոր գիշեր ալ վրան երազեցի:

— Ատի զարմանալի բան է. երբ ցորեկ տեսն որ և է բան մը զմեզ սաստիկ խողկելու պատճառ ըլլայ, երեւակայութիւննիս շիօթելուն դիշերն անոր վրայ կ'երազենք: Բայց ասով ըսել չեմ ուզեր թէ այսպիսի դէպքերու մէջ միտքն մըտ անով զբաղեցնելու է:

— Ճշմարիտ, մայր, զիս անհանդիսա պիտի ընէք, բաս Ատէլին, կուզէի որ Եզուարդ մինչև հիմայ գացած ու գարձած ըլլար. . . Բայց և այնպէս մարդս տղայ մ'ըլլալու է որ առանց բան մ'ըլլալու մտինայ. . . Օն ուրեմն, գնա, բարեկամս, շուտ գարձիր, և չըլլայ որ երէկուան պանդոկը ճաշելու երթաս:

Եզուարդ տիկին յէրմէջի ձեռքը պագաւ. կինն ալ զրիցեց. . . ինչպէս կը գրկեն ամուսնութեան հետեւեալ օրն, երբ առջի գիշերը բոլոր յուսացածներն կը գտնեն, կամ գայն

զ տած կը կարծեն, որն որ մի և նոյն բանն է, և որ կը պատահի անանկ շատ մարդոց որք այս ըսածս չեն գիտեր և ինքզինքնին ալ շատ խորամանկ կը կարծեն :

Եղուարդ հասաւ վիրիէօլ-Սէն-Ճօրժ, և քիչ մ'ատենէն վերջը իւր ստացուածքն ըլլալիք տանը առջեւ կառքէն իջաւ :

— Պ. Բընարէ հոն է, հարցուց նա ծառային :

— Նօտարին տունը դնաց, պարոն :

— Այս ի՞նչ ճշդագոյն մարդ է եղեր . . . ուրեմն երթամ որ չի սպասէ :

Եղուարդ կառքը հոն թողուց և գնաց Նօտարին տունը, Գործը արդէն ըննցած էր, և Պ. Բընարէ անհամբերութեամբ Եղուարդի գալուն կըսպասէր : վասն զի առջի օրուան պանդուկը պատահած դէպքը խնցած ըլլալով տանը առնուելուն վրայ տարախոսանաց մէջ էր . ուստի երբ Եղուարդը, և մանաւանդ աւնոր ձեռքը գտնուած ~~դժբերքներով~~ լի լծղթա պանակն տեսաւ, սիրտը հանգստացաւ :

Պ. Եղուարդ ստակը համբից, գործը արձանաբրուեցաւ, և Պ. Բընարէ ալ ուրախութեամբ տանը բանալիներն եղուարդի յանձնեց :

— Ահաւասիկ տանը տէր եղաք, պարոն, այսուհետեւ թէ տունը և թէ մէջը գտնուածներն կրնաք ուղածնուդ պէս դորձածել, որովհետեւ կարասիրովը ծախեցի ձեզ :

— Շնորհակալ եմ, պարոն, բայց մինչեւ

որ տունէն ելնելու պատրաստութիւններնդ տեսնէք, կրնաք հոն կենալ : չեմ' ուզեր որ նեղուէք :

— Ոհ, պարոն, ի՞մ պատրաստութիւններս եղած ըննցած են . . . Միայն ծրար մ'ունիմ, այն ալ թեւեւ տակը կառնեմ գուրս կելնեմ . . .

— Ըսել է որ ուրիշ տուն մ'ալ ունիք :

— Ինչ կըսէք, ըսաւ Նօտարը, վեց տուն ունի փարիզ, երեք ալ այս գեղը, ինչո՞ւ պիտի չուարի . . .

— Սա նայէ, ըսաւ Եղուարդ ինքնիրեն, փարիզ վեց տուն ունի և սա հագած թիկնոցքն ու դրած գլխարկը նայեցէք . . . ամուրի է . . . ժառանգ ալ չի պիտի ունենայ . . . Այս մարդը կարելի է կը կարծէ որ չի պիտի մեռնի :

Եղուարդ ձեռ ագահն աղչունելով Նօտարին տնէն գուրս կելնէ, կերթալ իր նոր տունը : Իրաւան բաղը իրեն կըսպասէր, և կարծեա թէ բան մ'ունէր իրմէ խնդրելու : Եղուարդ իր այս շփոթութեան պատճառն հարցուց :

— Այս տունն հիմայ իմն է, ըսաւ նա ծառային, ահաւասիկ իմ ըլլալն հաստատող վըկայագիրը : Պ. Բընարէ ալ հիմա կուգայ քեզ կիմացնէ :

— Ոհ, պարոն, անտարակոյս . . .

— Դու Պ. Բընարէի ծառան ես :

— Ո՛չ, պարոն, ես տանը ծառան եմ, և

եթէ դուք զիս չուզէք, կը պարտաւորիմ
եղնել:

— Չէ, ինչո՞ւ պիտի չուզեմ, ևս մարդ
ճամբելէ չեմ ակորժիր. այս վայրկենէն դուք
իմ ծառայ եք:

— Ի՞նչու աղէկ, պարոն, ևս ալ կը ջանամ
զձեզ զուհ ընել:

Թէպէտ այս ծառան Եղուարդի հաճոյ և
րեւցած չէր, վասն զի վայրագ և կոշտ մարդ
մէր, և Պ. Բընարէի քով երկար ատեն կեցած
ըլլալուն համար իր ամեն գործողութիւններն
մարդուս անվտանգութիւն մը կազդէին, այլ
սակայն Եղուարդ կրկին գալ և իր ծնողացը
բնակարանը գտնելուն համար չէր ուզեր գիւ-
ղին բնակացը վնաս մը հասցնել:

Որովհետև դեռ կանուխ էր, և Եղուարդ
իր յուսացածէն աւելի շուտով իր գործը լըն-
ցուցած էր, ուզեց անգամ մ'ալ իր նոր ստա-
ցած բնակարանը շրջագայիլ. ուստի հրտման
ըրաւ ծառային որ պարտեղին երկաթէ գրան
բանալին բերէ, և զանի կառքին քով ձգելով
գնաց:

Երբ մէկը տուն մը կամ գետին մ'առնու, ու
չաղբութեամբ ամեն տեղերը կը քննէ. Եղ-
ուարդ ալ տեսաւ որ Պ. Բընարէ պարտեղին
ծաղիկ անկէլու յատկացեալ տեղուանքը կա-
ղամբ և աջան է անկեր. գեղեցիկ աստիճանը
որք արդարև չուզէն զատ ուրիշ բան չեն տար,
կտրեր, և անոնց տեղ պաղպառու ծառեր տըն-
կեր է: Արտերուն բարդտիքը գանուած առ-

տախտերուն (շիմչիր) տեղ աղասքեղ (մաղ-
տանու) և հնդկաթարայ (հինա թէրէսի) ցա-
ներ է. վերջապէս, պղտիկ անտառի մը մէջէն
ալ, ուր երբեմն ծիրանածաղիկ (լէլլագ) և
վարդ անկուած էր, և բոսպական աղցանի
(ֆրէնկ սալթամար) և սոխ հոտ կուգայ:

Հոս շատ փոփոխութիւններ կան ընելու,
ըսաւ Եղուարդ ձեր ամառիսը աղասուրիւնե-
նը վրայ ծիծաղելով. բայց կը յուսամ որ ութ
օրէն կը լնցընեմ. . . կը յիշեմ որ սա կողմը
տնկուած աստիճաններուն վրայ յակուրջի (սալըն-
ճագ) մը շինելով մանկութեանս ատեն այն-
չափ անգամ օրորուել եմ:

Այս միջոցին պարտեղին ծայրը հասած էր,
մտեցաւ գրանը քով. — Կերելի թէ երէկ
տիկններն այնչափ զարհուրեցնող ստիկայի գը-
լուխը ամէն օր չերուիր, ըսաւ Եղուարդ ինք-
նիրեն, և պատրաստեցաւ պարտեղին դուռը
բանալու, մէյ մ'ալ նայիտ կոտորած տախտակ-
ներուն մէջէն այդ գուլիքը դարձեալ ճիշդ աշ-
քին դէմն ելաւ:

Ասոր վրայ Եղուարդ կանկ առաւ, զգաց
որ սիրտը սաստիկ կը բարախէ. բայց իսկոյն
ինքզինքին դալով.

— Ի՞նչ կուզես, պարոն, ըսաւ անոր, և
ինչո՞ւ համար ամէն օր կուգաս սա գրանը առ-
ջև. կը կայիր, և աչքդ պարտեղին վրայէն ան-
դին չես դարձներ:

— Բան մ'ալ չեմ ուզեր, ըսաւ անծանօթը,
ինչու ձայնով և վայրագ արտասանութեամբ

մը : Պարտէզին կը նայիմ, որովհետեւ շատ հաւ-
նեցայ . . . սակայն . . . ինչ ընեմ, ինձ մէջը պը-
տըտելու ազատութիւն չի տալնուն համար դը-
րանը ետեւէն կը նայիմ :

— Թէ որ ատր համար է, այսուհետեւ ա-
զատ ես հոս մտնալու . . . Եկաք, պարօն . . .
ներս մտիք և ուզածիդ պէս պտտէ :

Այս բտելով Եգուարդ՝ որ արդէն հետա-
քըրքիք եղած էր օտարական բոլորովին տես-
նելու, դուռը բացու և մարդը ներս առաւ :

Անձանօթը Եգուարդին առաջարկութեանը
վրայ զարմացած էր . բայց երբ դուռը բացուե-
ցաւ, երկրորդ անգամ հրաւիրուելու հարկ չի
ձգեց, և պարտէզը մտաւ : Այն ատեն Եգ-
ուարդ կրցաւ զանի աղէկ մը նայել . բարձրա-
հասակ մարդ մ'էր, հին կապոյտ վերարկու մը
հագած, որ վերէն մինչև վար կոճկուած էր,
ոտքն ալ սեւ և մաշած կօշիկ մը անցուցած էր,
ձեռքն այ հին գլխարկ մ'ունէր :

Եգուարդ այս անօրինակ մարդը գիտելով
որուն տոգոյն դէմքը, երկար պետերը և հա-
գած հագուստը թշուառութիւն և խեղճու-
թիւն կարտայայտէին, յիշեց իր զօրանլին կար-
ծիքն ու տարակոյտը, և իր վրայ անվտանգու-
թեան զգացում մը տիրեց :

Անձանօթը պարտէզը կը պտտէր, երբեմն
երբեմն պզտիկ անտառի մը և հին ծառի մը
առջև կայնելով, և կարծես թէ չէր խորհեր
որ քովը մարդ մ'եղած ըլլայ :

— Զարմանալի բան, ըսաւ Եգուարդ ինք-

նիրեն, ես այս մարդուն չեմ հաւնիր . պէտք
է ով ըլլալը գիտնամ, և իմանամ թէ ինչու
համար երկու օր իրարու վրայ այսպէս դրանն
առջև եկաւ անկուեցաւ . . . Մէյ մը քոյն
երթամ, և երբ ինքը բան մը չըտէ, ես խօսք
կը բանամ, հարկաւ պատասխան մը կընդու-
նիմ :

Նոյն միջոցին անձանօթը դնաց ճիշդ տանը
դիմացը գտնուած դայարիէ նոտարանի մը
վրայնստաւ, Եգուարդ ալ դնաց քովը նստաւ :

— Ոհ, ներեցէք, պարօն, ըսաւ անձանօ-
թը մէկէն խելքը դուրս եկած մարդու մը
կերպարանքով, մոռցայ ձեր հրաւերին համար
իմ շնորհակալութիւնս յայտնելու . . . և այն
ալ այս տեղուանքը տեսնելու համար զգացած
չափազանց ուրախութենէս :

— Հոգ չէ, պարօն, ըսաւ Եգուարդ :

— Դուք այս տանը տիրոջ ազան էք :

— Ոչ :

— Չեղի համար շատ աղէկ եղեր է :

— Ինչ պատճառաւ :

— Որովհետեւ այս տանը տէրը անկիրթ
ձեռ վայխառու մ'է : Ծառայ մ'ալ ունի իրեն
պէս, որուն պիտի սորվեցընեմ ուրիշ հետ
վարուելու և խօսելու կերպը :

— Այդ մարդիկը ինչ բրին ձեզ :

— Ես յատկապէս այս դիւղը եկայ այս
տունը տեսնելու համար : Երեկ յողնած դադ-
րած ելայ եկայ, մտայ բակը և հոն քարի մը
վրայ նստայ : Մտան եկաւ հարցուց թէ ին-

չո՛ւ հոն նստեր եմ : Բօի իրեն որ պարտեղը պատակ կուզեմ : Հարցուց ինձ թէ տունը գընելու գիտաւորութիւն ունի՞մ : Այս հարցումը ինքնին անկրթութեան հետեւանք է , վասն զի պէտք է գիտել որ իմ վրայ տուն գնելու բընա կերպարանք չկայ :

— Ճշմարիտ է , բնա մօքննելու արդ :

— Երբ իմացաւ որ ես ուրիշ նպատակաւ պատակ կուզեմ , հրամայեց ինձ որ դուքս ելնեմ : կրկին և կրկին ազաւեցի իրեն որ ինձի թոյլ տայ երթալ պարտեղը պատելու : Գնաց կանեց իր տէրը , նայեա ծեր հրեայ մ եկաւ , և երկուքը մէկտեղ ուղեցին զիս գոնէն դուրս ընել . . . վա՛յ անզգամներ . . . դոնէն դո՛ւրս . . . զի՛ս . . . մեկ . . . բայց , չէ , ալ առաջինը չի մնացի : Սակայն դարձեալ հող չէ , առանց զիս կրթող հին դէպքերն յղելու երկուքին ալ ազուտը ծեծ մը կրնայի քաշել . . . դարձեալ չըրի , և այս տեղուանքը տեսնելու փախաքէս , գացի այս դրանը ետեւէն դիտեցի , ուր դուք զիս երէկ տեսաք :

— Շատ ուրախ եմ ծառային անբաղաքավարութիւնը ուղղել կարենալուս և զձեզ այսօր կրկին այս տեղը գտնելուս վրայ :

— Ճշմարիտն ըսելով , այսօրուանը դիպուած մ'է : . . . ես հոս ընկերներէս մեկուն կըսպասեմ , որուն խօսք տուած եմ զիս այս գեղը գտնելու . ապա թէ ոչ , այսօր հոս չէի գտնուեր :

— Ընկերներէնդ մի՛ոյն կըսպասէք :

— Այո՛ , պարոն :

Եղուարդ պահ մը լուս կեցաւ . . . և անծանօթին բաժին վրայ խորհիլ սկսաւ . բայց նա խօսքը շարունակելով ,

— Ներեցէք պարոն , բնա . . . ես ալ ձեզի բան մը պիտի հարցընեմ . . . ի՞նչպէ՛ս եղաւ որ տան տէրը իր պարտեղին բանալին ձեզի յանձնեց :

— Այս տունը ալ Պ . Բընարեինը չէ . իմն է , գեռ այսօր ծախու առի :

— Եթաւ առի՞ք . . . ոհ , ճշմարիտ ուրախացայ . . . Շատ վշտացած էի այս տունը այդ ծեր ագահին ձեռքը տեսնելուս վրայ :

— Ըսել է որ այս տունը շատ կը սիրէք :

— Ինչ ըսել է , իմ մանկութիւնս հոս անցուցած եմ . . .

— Գո՛ւք . . .

— Այո , ես :

Եղուարդ աւելի ուշադրութեամբ օտարականին երեսը կը նայի . անորոշ կտակածներ և դաղտնի զգացում մը կը տիրեն սրտին վրայ : Կը տեսնէ այն առեն որ անծանօթն երիտասարդ է , և միայն խիտ յոգնած ըլլալուն պատճառաւ իր արդէն արեւէն այրած գէմքն թարչամեր է . աւելի բան կը փախաքի իմանալ , բայց կը վախնայ :

— Այո , պարոն , կրէ՛ օտարարական վայրկեան մը լուելէն ետքը , ես այս տունը բնակած եմ . . . և մանկութեանս մեծ մասն ալ հոս մեծցած է . . . Բհ , այն ատեն ես իմ ճնողացս

քոյն էի . . . այն ատեն երջանիկ օրեր կը փայլէին ինձ համար . . . Հայրս շատ բարի մարդ մ'էր . . . եղբայր մ'ալ ունէի . . . այս ամենքը թողուցի փախայ . . . ուստի հիմայ արժանի եմ այս ամեն բաները քաշելու :

— Արդեօք ճողոքդ մեռած են, ըստե եղուարդ կարուկ ձայնով մը՝ վեր ի վերոյ նայելով օտարականին երեսը զոր արդէն ճանչնալէ կը վախնար :

— Այո, պարոն, մեռած են . . . կարելի է իրենց պատճառած ցաւէս : Բայց և այնպէս մայրս զիս շատ չէր սիրեր . սակայն հայրս զիս կը սիրէր . . . ալ չի պիտի տեսնեմ զինքը . . . Ո՛հ, անիծեալ գլուխ, որ ինձի այնչափ անմիտ գործքեր գործեւ տուա :

— Եղբայրդ ո՞ղջ է :

— Այո, փարիզ եղած ատենս իմացայ որ ողջ է, և բսին թէ դեռ նոր ամուսնացաւ . . . ուր բնակիլը չի կրցան բսել . . . բայց հարկաւ կիմանամ, և կերթամ կը գտնեմ : Ա՛հ, խեղճ Եղուարդ, զիս տեսնելուն պէս պիտի զարմանայ . . . Ապահով եմ որ նա զիս մեռած կը կարծէ :

Եղուարդ բնաւ պատասխան չի տար . աչքերը գետին ծածկ ինչ ընելիքը չը գիտեր, և չի համարձակիր բսել թէ իրեն հետ խօսողը իր եղբայրն է : ✕

Ընթերցողդ անշուշտ իմացան այս անծանօթ մարդուն Յակոբոսը ըլլալը, որ խորին խորհրդածուծեանց մէջ ինկած՝ մէկ ձեռքովը

իր երկայն պիտիւրը կըլորէր, և միւս ձեռքովը ճակատը կը շփէր սրպէս թէ միտքը բան մը բերել կուզէր . Եղուարդ անշարժ և լուռ կեցած էր . իր աչքերը երբեմն կը դարձնէր արդարութեան բարեկամին վրայ, բայց անոր խոշոր վերարկուն, հին ոտքի ամանները և մաշուսանդ երկայն մորուքը իր եղբորը վիզը նետուելու ուրախութենէն կարգիլէին զինքը, որով առանց անոր այս կեցուարանքը ի նկատի առնելու իմանար թէ ի՞նչ անցքեր պատահեր էին իրեն :

Նայիս Յակոբոս մէկէն ի մէկ միտքը բան մը եկածի պէս Եղուարդին դառնալով ըստաւ . Պարոն, անկարելի է որ դուք եղբայրս չի ճանչնաք, մինչդեռ կերելի որ դուք մեծամեծ անձանց հետ կանցընէք ժամանակնիդ . և ընդհանրապէս փարիզ կը բնակիք :

— Ճշմարիտ է :

— Կարելի է լսած էք Եղուարդ Միւրվիլ անունով մէկը :

— Այո . . . ես . . . զինքը կը ճանչնամ :

— Եղբայրս կը ճանչնաք :

— Ես եմ Եղուարդ Միւրվիլ :

Եղուարդ այս խօսքն անանկ տկար ձայնով մ'ըստաւ, որ Յակոբոսէն դատ մէկը չէր կրնար իմանալ, բայց նա ուշադրութեամբ մտիկ կը նէր, և եղբայրը դեռ խօսքը չի լսնուցած անոր վիզը նետուած էր, և սաստկապէս կը սեղմէր իր գրկացը մէջ :

Եղուարդը թողուց որ եղբայրը զինքը գրկէ,

սակացն անիծակ պիտեբեր միշտ կամբին հակա-
ռակ կուգային . երբէք բան մը չէր զգար , և
չէր դիտեր թէ իր եղբայրը կրկին դանկուն
փրայ ուրախանալ պէ՛տք է թէ ջախի :

— Ո՛հ , ուրեմն երկու ժամ է ինչո՛ւ ինք-
զինքնիդ չէ՛ք յայտներ , բոս Յակոբոս կրկին
եղուարդը դրկեցով , չի կրցա՛ք իմանալ որ ես
Յակոբոսն էի . . .

— Այո , իմացայ . . . բայց հաւատի բլլալ
ուղեցի . . .

— Դուք հիմա հարուստ . . . երջանիկ էք ,
այնպէս չէ՛ . . .

— Այո . . .

— Ամուսնացած էք եղբր . . . ձեր կինն
ո՛ւր է , կը փափաքի՞մ զինքը տեսնել :

— Կին . . .

Եղուարդ լուեց , Ատէլինի և տիկին Ժէր-
մէյլի յիշատակը , և անոր առջի օրը այս մար-
դուն կերպարանքին պատճառաւ զգացած
սոսկումը , Յակոբոսի տղեղ դէմքն ու անոր ան-
շուք զգեցումները , որք իրենին բարբառովն հակա-
ռակ էին , այս ամեն սկանն իր միտքը նեղել , և ու-
նայն տեղը կը լանար իր անձնատիրութիւնն ու եղ-
բայրը կրկին գտնելու համար իր սրտին մէջ ծնած
զգացումները իրարու հետ համաձայնեցընել :

— Ինչո՛ւ այդչափ կը խորհիք , բոս Յա-
կոբոս եղուարդին թեւը բռնեցով :

— Ո՛հ , կը խորհիմ . . . որ ժամանակն ան-
ցաւ . . . պէտք է որ փարիզ դառնամ . հոն
խիստ կարեւոր գործեր ունիմ :

Յակոբոս պատախան մը չի տուաւ , բայց
երեսին դոյնը նետեց , և եղբորնէն քանի մը
քայլ հեռացաւ :

— Յակոբոս , դուք հիմա ի՛նչ կրնէք :

— Ոչ ինչ , բոս Յակոբոս անախորժ ձայ-
նով մը և ուշադրութեամբ եղուարդին նայելով :

— Ո՛րնչ . . . ուրեմն ինչով կայրիք :

— Մի՛նչև հիմա մէկու մը կարօտ չե՞զայ . . .

— Բայց և այնպէս հարուստ չէք երեւիր . . .

— Ոչ , արդարեւ հարուստ ալ չեմ . . .

— Բայց ի՛նչ պիտի բլլայ պիտերնիդ պղ-
չափ երկնցընելը . . . Եթէ ատանկ պիտի մը-
նաք , չեմ կարծեր որ կինս կարենաք տեսնել :

— Ես պիտեբոս բնաւ կտրել չեմ՝ ասք . ե-
թէ ձեր կինը այդչափ երկչոտ է , և զիս տես-
նելով պիտի վախնայ , հանդարտ եղիք , ես
չատ անգամ չեմ երեւար իրեն :

— Ըսածս չի հասկըցաք . . . ես այդ ը-
սել չեմ ուղեր . . . բայց պէտք է որ ձեզմէ
մեկնիմ . . . փարիզ ինձի կըսպասեն . . . ես
զձեզ այս կերպարանքով չեմ կրնար հիմա հե-
տքս տանիլ . . . մնաց որ դուք այս տեղը
կործեմ մէկու մ'ալ կըսպասէք եղբր . . .

— Այո , ընկերի մը , բարեկամի մը կըսպա-
սեմ :

— Ուրեմն . . . կը թողում զձեզ , բոս
Եղուարդ վայրկեան մը տարտիւսեղէն ետքը ,
կը յուսամ որ չուտով կրկին զերար կը տեսնենք
. . . Բայց . . . ատէք . . . սա քոյներնիդ թող
դտնուի . . .

Այս բերելով եղուարդ քաղիք հանեց, ուրուն մէջ տար դարդիական ոսկի կար, և դողդոջուն ձեռքով իր եղբորը տուաւ . բայց Յակոբոս գտնուով թեամբ եղուարդին ձեռքը անդին հրեց, գլխարկը գլուխը դրաւ, և այժմ ձեռքովն ալ իր վերարկունին կոճակները քակելով ուղեց կուրծքի նշանը եղբորը ցուցընել . . . բայց չըրաւ, և ցուրտ ձայնով մը եղբորը դարձաւ քաւ .

— Ոսկինիդ պահեցէք, ձեզի ալ պէտք կըլլայ, ես ձեզմէ ողորմութիւն ուղեւու չեկայ, և ձեր գթութեանն ալ երբէք արժանի չեմ . ես կը կարծէի որ եղբայր մը գտայ . . . բայց խարուած եմ եղբւր, իմ հանդերձներս ու կերպարանքս ձեր կինը վախցընելունն համար զիս չէք կրնար տուներնիդ տանիլ, այնպէս չէ . սորչալիք կը բաւէ . մնաք բարով, գիտցիք որ ալ զիս չի պիտի տեսնէք :

Յակոբոս այս խօսքերն ընելով իր եղբորը վրայ խոժոռ նայուածք մ'արձակեց, և շտապաւ պարտէզին դռնէն դուրս ելաւ :

Եղուարդ, միշտ վարանման մէջ մնացած, պահ մը սեղը անշարժ մնաց, աչքը դրանք վրայ տնկած էր ուրիշ եղբայրը դուրս ելած էր, վերջապէս բնական զգացումէ դրդեալ, վազեց պարտէզէն դուրս ելաւ, քանի մը քայլ յառաջ դնաց, և սկսաւ բարձր ձայնով պուռալ . Յակոբոս, եղբայր իմ Յակոբոս . . . բայց ի դուր . Յակոբոս անբերւելի՛ եղած էր, և այնչափ հեռացած էր որ իր եղբորը ազդակները չի կրցաւ լսել :

Եղուարդ ամուր սրտի պարտէզը դարձաւ, դրանք առջեւ կայնեցաւ, աչքը չորս կողմը պտտուց, և բնաւ մէկը չի տեսնելով վերջապէս պարտէզին դուռը գոցելու կայանք տուաւ :

— Ոհ, անի դարձեալ կուգայ, բաւա ինքերեն, որչափ բարկասիրտ տղայ մ'է . . . կարծեմ զինքը վտացընելու խօսք մ'ալ չըրի . . . ստակի պէտք ունենալ գիտնալով ստակ տուի . ասոր բարկանալ կուզէ : Իմացուցի իրեն որ այս հանդերձներով այս կերպարանքով չի կրնար բնկերականութեան մէջ հընել . . . այս ալ յանցանք է : Ես այս բանտէն ելած մարդոց նմանող մարդն ինչպէս կնկանս և զոքանչիս առջև հանեմ . . . մանաւանդ որ դեռ երկու օրուան ալ փետայ եմ . . . մարդ ամօթէն գետիներ կանցնի . . . տուած ստակովս կրնար ձեռք մը վայելուչ հանդերձ չինել . բայց եկուր տես, որ պետերը կարել չուզեր . . . Իրաւ որ ինք գիտէ . . . ես իմ պարտքս կատարեցի . իմ խիղճս ինձ կիմացընէ որ ես յանցանք չուրիմ . . . Եղուարդ այս խօսքերն ընելով այնպէս կը կարծէր թէ ինքը յանցանք մը չուրի, և չէր խառնվաներ որ իր ցուրտ և տագնապալից վարմունքն իր եղբորը բարկութեանը պատճառ եղած էր, այլ սակայն ներքին ձայն մը իր գործած պակասութեանը համար զինքը կը յարեւելանէր, վերջապէս ինքն իրմէ դժգոհ և այս դէպքէն ինչ հետեւելուն վրայ անհանգիստ ըլլալով կառքն հեծաւ և

գեղէն մեկնեցաւ առանց իր ծառային բան մը պատուիրելու :

Փարիզ մօտենալով տուն գացած ատեն ինչ ըսելիքը գետ որոշած չէր . վերջապէս միտքը դրաւ որ իր կնիկանն ու զոքանչիկն՝ այս մասին բնաւ բան մը չի խօսի , խորհելով որ երբ եղբայրը իր տունը դայ , այն ատեն զանի անոնց կը ճանչցընէ :

Երբ տուն եկաւ , Ատէլին գէմը վաղելով իր ուշանալուն համար քիչ մը զինքը յանդիմանեց և իր ճամբորդութեան վրայօք անկէ լուրեր ինքդրեց :

— Ամեն բան լինեցաւ , բոաւ Եղուարդ , և այն գեղեցիկ տունը ալ մերը եզաւ :

— Մէկն՝ մը պատահեցաք , բոաւ Ատէլին ժպտելով :

— Չէ , որո՞ւ պիտի պատահիմ :

— Սա երէկուան սասկալի մարդը սցօսը ալ տեսա՞ք , հարցուց տիկին Ֆելմէօյլ :

— Ոչ . . . չի տեսայ :

— Խիտու լաւ . այդ մարդը շիտակը աւազակագետ կը նմանէր . ես իմ կողմանէ կրօնմ որ բնաւ զանի կրկին տեսնելու հետաքրքիր չեմ . ըսածիս ապահով եղիք :

Այս խօսքին վրայ Եղուարդ կարմրեցաւ , վասն զի եղբայրը աւազակագետի մը կը նրմանցընէր , և սկսաւ խօսիլ , այնպէս կարծելով որ իր գաղանիքն իմացուր է , և չի համարձակեցաւ աչքերը վեր վերցընել , Բայց և այնպէս իր կնոջը գորովանքը իր անհանգստութիւնը քիչ մը վարատեց :

— Ի՞նչ եղեր ես , բարեկամս , բոաւ անոր Ատէլին , անհանգստութեան մը մէջ կը տեսնեմ գրեզ :

— Բան մը չունիմ , բարեկամուհիս . . . քեզմէ երկար ատեն հեռու մնալու համար միայն ցաւած եմ :

— Սիրելի Եղուարդ . . . իցէ թէ միշտ այդ զգացմամբ մնաս , որովհետեւ այն ատեն ալ ինձմէ չես հեռանար : Ահ . . . երբ պիտի երթանք գեղ . . . :


— Ութը օրէն :

— Ութը օրէն . . . ինչո՞ւ այդչափ պիտի երկարի :

— Պէտք է հին տան տիրոջ ժամանակ տալ որ տունէն ելնէ . . . :

— Իրաւունք ունիս , բարեկամս :

Եղուարդ շիտակը չէր տեր . ուրիշ պատճառ մը կար իր գեղը շերտալուն համար , զոր չէր համարձակեր Ատէլինի յայտնել , և տեսէք ամուսին մը որ հարստնեաց վրայ քառասուն և ութ ժամ անցնելէն և իրարու կատարեալ և փոփոխակի վստահութիւն մը խոտացուելէն ետեւ , դարձեալ իր կնոջմէն գաղանիք կը պահէ :



ԳԼՈՒԽ Ը.

ՊԷՏԻ ԶԵ ԶՄԱՐԴ ԻՐ ԱՐՏԱԲԻՆ ԵՐԵՒՈՅԹԷՆ
ԴԱՏԵԼ

Պահ մը Եդուարդն ու իր կինը թողլով, գառնանք եղբայր Յակոբուն քով, որուն հետ ալ պիտի սկսինք լիովին տեսակցութիւն ընել:

Յակոբու բարկութեամբ պարտէզէն դուրս ելնելով մտաւ դաշտին խորը. երկար ատեն առանց յոգնելու ճամբայ ըրած էր. իր միակ նպատակը եղբորմէն հեռանալն էր, որովհետեւ անոր վարմունքն ու խօսքերը իր սիրտը պաղեցուցեր էին:

Յակոբու ճամբան դացած ատենը եղբորը դէմ թշնամանք կարձակէր, աչքերն կը վերցընէր, ոտքը սաստկապէս գետինը կը զարնէր և խիստ խռովեալ կերեւէր: Գեղեցիկ ձորի մը քով հասնելով հոն գտնուած հին ընկուզենեաց տակ նստաւ քիչ մը հանգչելու համար. չորս կողմը նայեցաւ, որպէս թէ այսպէս հով ըլլալու համար թէ մէկը իր ետեւէն չի գայ. հոն ամէն բան թանդարտ և խաղաղ էր: Տեսաւ գեղացիներն որոնք դաշտին մէջ իրենց աշխատութեանցը զբաղած էին: Քիչ մը հանգչելէն վերջը սկսաւ Եդուարդի հետ ըրած խօսակցութիւնը ինքնիրեն յիշել:

— Որովհետեւ, ըսաւ, ազբատ եմ, երեսա

չի նայեցաւ. . . որովհետեւ երկայն պիտի երևիմ, վախցաւ զիս կնկանը առջև հանելու. . . ինծի հաներ ստակ կուտայ, և չառաջարկեր որ իր հետը բնակիմ. . . Մարդ իր եղբորը հետ պրպէս կը վարուի. . . եղբայրը ասանկ երեսէ կը ձգէն. . . Իս հօրս պատիւը պարտաւորեցի. . . Եթէ իմ կերպարանքս կուտ է, սակայն խօսքերս համարձակ են, և խղճմունքս ալ մարտու է: Մարդ աղքատ, թշուառ կըրնայ ըլլալ առանց յանգիմանութեան արժանի գործ մ'ընելու: Աղբարև ես երկուստարդական անխոհմունքիներն ու պակասութիւններ գործեցի. . . սակայն երբէք յանգիմանութեան արժանի գործ մը չըրի. . . և ես կուրծքիս վրայ կրած նշանս ալ զիս ամեն յանգիմանութեանէ ազատ կը պահէ, ինձի հրամայելով որ բնաւ յանգիմանութեան արժանի չըլլամ:

Նոյն միջոցին Յակոբու իր վերարկուն կոճակները քակեց, և հպարտութեամբ կուրծքին վրայ կախուած պատուոյ խաւանիչը դիտեց: Այս նշանն թէպէտ իր միակ միտքաթարութիւնն էր, սակայն ինքը միշտ կը ծածկէր զայն, որովհետեւ քանի մ'օրէ ի վեր է գեղին մէջ ասկէ անկէ ընդունելութիւն խնդրելու պարտաւորուած էր, ուստի չէր ուզած որ իր նշանն ցուցնելով նուստացնէ: Յակոբու իրաւունք ունէր ասանկ ընելու, վասն զի ասանկ պատուաւոր նշան մը կրող մէկը պէտքէն զրայց համար գթութեան առարկայ մ'ըլլայ:

Յակորոս այլքը նշանին վրայէն չէր զատեր. միտքը կը բերէր այն օրը երբ իր գնդապետը զայն իր կուրծքին վրայ կախած էր. կը յիշէր իր ըրած պատերազմները, և նոյն միջոցին իրեն այնպէս կուգար որ իր ընկերներովը պատերազմական դաշտին վրայ թշնամուոյն դէմ կը յարձակի. այսպիսի յիշատակութիւններով իր տխուր սիրտը քիչ մը կը մխիթարէր, և իր եղբօրը ցօրտա ընդունելութեանն համար զգացած ցար կը մոռնար :

Նոյն միջոցին գրեթէ Յակորոսին պէս հազուաւժ երիտասարդ մը, բայց ոչ թէ անոր նման անխուր և թշուառ, բլուրի մը վրայէն դէպ ի ձորը կիջնար, զինուորական երգ երգելով, և իր երգած երգին չափը ցուցնելու համար ձեռքի դաւազանը ձաւթուն բոլորովը գտնուած հազարճներն իրուն (Ֆրէնկ իւղիւմի) և ծիրանածաղիկներուն կը զարնէր :

Երբ ձորին քով հասաւ, հոն կանկր առնելով սկսաւ չորսդին նայել :

— Վայ անդգամ, այս ինչ է . . . ըսաւ, ահաւասիկ դեղը հասանք . . . բայց ոչ զինուորուն կը տեսնեմ, ոչ ալ խեղճուկ պանդակ մը . . . դժբաղդարար ծարան ալ զիս կը նեղէ . . . ինչ բնիւր է . . . Իսոյց նայինք, քիչ մ'ալլայուած երթանք :

Այս ըսաւ ու դարձեալ երգելով քանի մը քայլ առնելէն յետոյ Յակորոսը տեսնելով,

— Ոհ, զերջայէս մէկը դատայ . . . ինձ նայէ, բարեկամ. . . ըսաւ, ու դէպի անոր գնաց :

Յակորոս զանի տեսնելով իսկոյն ոտք ելաւ, և իր հաւատարիմ ընկերը ճաննալով վազեց անոր քով :

— Ոհ, դձու ես, իմ խեղճ Սան-Սուտի (1) բարեկամս :

— Վայ, դձու ես, Յակորոս . . . զարմանայի բան. դիտցածի պէս ալ ճամբաս այս կողմը շահեցի . . . եկող սա ընկուղենիին տաղը նըստինք . . . Աւելի աղէկ կըլլար եթէ գինոյ մը սակաւին շուքին տակ նստէի. բայց քնչ ընենք, հիմա դտնուածն այս է :

— Կը տեսնեմ որ միշտ մի և նոյն մտքն ես, բնաւ չես փոխուած, ըսաւ Յակորոս :

— Ոհ, ինչու փոխուիմ. զուարթութիւնը աղքատներուն հարստութիւնն է . . . Գու աղէկ դիտես որ ես պատերազմի դացած ատենս կերպէի : Մեզ արձ . . . ինչպէս կըսեն անոր :

— Արձակեցին :

— Այո, արձակեցին . . . և հիմա փոխանակ զինուոր բլլալու, ուզած անդերնիս կերթանք . . . ուստի պէտք է սակի օգուտ քուղել . . . բայց մենք միշտ զինուորականութեան հետ կապուած ենք, և եթէ պէտք բլլայ օր մը հայրենիքը պաշտպանել, յառաջ :

— Աղէկ, բայց հիմա ինչպէս պիտի ապրինք :

— Ուրիշներուն նման աշխատելով :

(1) Կերեկ թէ այս բառը տնուն մ'ըզգի չըլլայ, այլ մականուն, որ կը նշանակէ Անհօգ օտն (քամուր) :

— Իմ խեղճ Սան-Սուսիս , կան անանկ մար-
դիկ որ հարատւ թեամբ կապրին առանց ամե-
նափօքր վիշտ մը կրելու , և անանկներ ալ կան ,
որ ամեն օր շարունակ կաշխատին , և դարձ-
եալ չեն կրնար իրենց ապրուստը ճարել :

— Բէ՛հ . . . դու ամեն ինչ միօրինակ կը
դատես : Միթէ քու ճամբորդութիւնդ երջա-
նիկ չեղաւ : դու անշուշտ այս գեղը բանի մը
համար եկեր ես :

— Ո՛հ , չի յուսացածս դոտայ հոս :

— Եւ դեռ դո՛հ չե՛ս :

— Գո՛հ ըլլալու առիթ մը չունիմ . հոս եղ-
բայրս դոտայ . . . բայց նա ալ զիս իբրև մու-
րացիկ ընդունեցաւ :

— Եղբայրդ անպիտան մէկն է որուն թուրի
հարուած մը կուտայի , եթէ մե՛յմ՝ ալ ունենայի :

— Իմ հանգերձներս . . . իմ կերպարանքս
. . . իմ պեխերս . . . իրեն աչքին աղէկ չե-
րեցան :

— Զարմանալի բան . . . կուրծքի նշանդ
չի տեսաւ :

— Ոչ , ծածկած էի . . . և շատ ուրախ եմ՝
առանկ ընելուս վրայ . . . եղբայրս բնառ անօր
յարգը չը գիտեր . . . բայց օր մը հարկաւ իր
այս վարմունքին համար զինքը պիտի ամչցընեմ :

— Ըսել է որ եղբայրդ հարուստ մէկն է :

— Այո :

— Երեւելի՞ մարդ է :

— Այո :

— Ուրեմն դու բնասմիք ունիս :

— Անշուշտ :

— Ո՛հ , դժբաղդարար ես բնասմիք չու-
նիմ . ես ոչ հայրս կը ճաննամ՝ և ոչ մայրս . . .
բարբառին բնական մարդ մ'եմ՝ . . . բայց և
այնպէս դարձեալ ճակաստ բաց կը պատիմ ,
որովհետեւ իմ նախնեացս խայտառակութիւն-
ներն բնառ ինձի չեն վերաբերիր : Մնաց որ մեր
առաջին ծնողաց ատեն նոստար չի դառուելուն
համար կայենի սերունդներն կրնան աշխարհիս
մէջ երեւելի ըլլալ : Ո՛ր թողունք որ մեր յիս-
նապեան ալ որ իրատ զուարճալի կերպով կը
խօսի , ինձ կըսէր որ հայրերնին մայրերնին յայտ-
նի չեղող տղայք սովորաբար ուրիշ տղոցմէ ա-
ւելի աղէկ կը մեծանան , և այս մասին ինձ շատ
մը օրինակներ ալ պատմած էր , զորս եթէ մու-
ցած չըլլայի , քեզ կը պատմէի : Բայց դու-
նանք քու գործքիդ . դու երբեք քու բնաս-
միք սնենալդ և քու դէպքերդ ինձի բուծ
չես . ես գեղզ զինուորականութեան մէջ ճանչ-
ցայ : միատեղ շատ պատերազմներ ըրինք . եր-
կուքաւ Սպանիոյ և Ռուսիոյ մէջ մեծամեծ
գործքեր գործեցինք , և ես կըսեմ որ այս կեր-
պով դժացումներն աւելի լաւ կը հաստատուին .
դու խաչանիչ ընդունեցար , ես ոչինչ . ահա
ւասիկ մեր մէջ եղած տարբերութիւնը : Բայց
դու արժանի եղար այդ նշանին , որովհետեւ
գնդապետին կեանքը աշխատեցիր , և թէև հե-
տեւեալ օրն մեռաւ , բայց այն ալ իր դժբաղդ
դու թիւնն է , դու ի՛նչ յանցանք ունիս . . .
վերջապէս շատ մը դէպքերէ վերջը մեզի ար-

ձակեցին . ցաւայլ՝ իրողութիւն , կարելի է Գաղ-
ղիոյ մարաշախտ կըլլայինք : Զմեզ միմիտարե-
լու համար երբէք զիրար չի թողուցինք . մի-
այն դու մինակ այս գիւղը եկար , ես ալ գե-
ղին չըմակայքը դացի երբեմն հետառօտսս՝ շիչ
մը թուխ սիրահարս մտաւեայ . համար , որ երգ-
մամբ ինծի հաւատարմութիւն խոստացեր էր :

— Գտա՛ր ուրեմն բու թուխ սիրահարդ :

— Այո , դասայ . . . Բայց երկուքիս բազդն
ալ իրարու հաւատար է՝ եղեր . երբ քու եղ-
բայրդ գրեց այնչափ սիրով ընդունեցաւ , իմ սի-
րահարս ալ եկաւ . դասալ զիս . . . Բայց ի՛նչ
պէս . . . ամուսնացած ու երեք զաւակի ալ
աէր , մէկ զաւակով մ՝ ալ յղի : Կրնաս դասել
որ ասոր բակիք չիկայ : Նախ և առաջ ու գեցի
կունակին մէկ քանի դասաղան ի՛նչցնել , բայց
խորհեցայ որ այս բրածս կրնայ մարգասպանու-
թիւն յառաջ բերել , ուստի արգիլուեցայ :
Գրկեցի անզգամը , և մինչդեռ իր տղաքներն
անդին բաղերու (Էօրատէք) հետ կը խաղային ,
և իր ամուսինն ալ փայտ կը կտրէր , մենք առ-
դին հաշտուեցանք . . . և բարեկամական գո-
րովանօք իրարմէ մեկնեցանք :

— Բարեկամս . . . կանայք էրիվմարդոցմէ
աւելի խորամանկ են . այս վերջինները իրենց
ստախօտութիւնները ծածկելու մասին այնչափ
ճարտարութիւն չունին . . . Ես հիմն ճանցայ
զայշտորճ . և եղբորս ինձ ընելիք ընդունելու-
թիւնն ալ փոքր ի շատէ գուշակեցի . . . Բայց յու-
սացի որ այնպէս չընէր . . . ալ ինձմէ մեղքը ելաւ :

— (Սև ուրեմն , պատմէ նայինք սա դէպ-
քերդ . . . ահաւասիկ հանդարտ տեղը դատեր
ենք . մէկը չի կայ որ մեր խօսքերը մտիկ ընէ
կամ մեզի չփոթէ . դու խօսէ , ես ալ քիչ մը
հանդիմ՝ ու սիկաւ մը ծխեմ :

— Խիտ բարի , տասնըհինգ տարուան հա-
սակէս ի վեր գլխուս պատահած դէպքերը պի-
տի պատմեմ , որովհետեւ այս տարիքէս սկը-
եալ ճանապարհորդելու ձեռնարկած եմ :

Յակոբոս կրկին վերարկուէ կսճկեց , կըռ-
նակը ընկուզնիկն առաւ , և սկսաւ իր դէպ-
քերն ընկերին պատմել . ան ալ , որ արդէն
սիկառն վառած էր , հանդարտօրէն ծխել սկը-
սաւ , որպէս զի կրկին զուարճութեամբ իր
ընկերոջը պատմութիւնը մտիկ ընէ :

ԳԼՈՒԽ Թ .

ԵՂԲԱՅԸ ԵՎ ԿՈՒՐՄԻ ԴԵՊՅԵՐԸ

Տասնըհինգ տարեկան հասակիս մէջ հօրս
առունէն մեկնեցայ : Մայրս իմ վրայ շատ սէր
չունէր . անուն շատ տխրութեամբ կուտար :
Բայց և այնպէս կը յիշեմ որ երբեմն առններնիս
պատուաւոր մարդ մը կուգար , և բուրբ զօրու-
թեամբ զիս Յակոբոս կանուանէր : Կարծեմ
այս մարդը իմ կնքահայրն էր , որուն անունն
ալ Յակոբոս կըսուէր : Ստուգել չապ կը սիրէր

զիս, և ամեն տուներնէս դալուն ինծի խաղալիկ մը կամ շաքար կը բերէր: Բայց և այնպէս որչափ որ կնքահայրս վրաս այցածի սէր ունէր որչափ որ հայրս վրաս կը գուրգուրար, և եղբորս հետ ալ սերտ բարեկամութիւն հաստատած էի, դարձեալ տունը կենալ չէի ուղեր: Վայրկեան մը հանդարտ չէի կրնար կենալ. ուսման համար բնաւ փափագ չունէի, և որովհետեւ այխարհ պատիւ ունոր բաներ տեսնել կը խորհէի, լատիներէն և մաթեմատիք սովորելու հարկ չէի տեսներ: Աճ սիրելի Սան-Սուսիս . . . այս երիտասարդական պակասութեան վրասը արդէն կրեցի, և վերջապէս իմացայ որ դատարարական ինքնը գլխաւոր պէտք մ'է, ինչ վիճակի մէջ ալ որ գանտիկնք: Եթէ ես դատարարկուած ըլլայի, մինչև հիմայ պարզ զինուոր մը չի մնար . . . և երբ իմ քաջութեան համար զգրագետի աստիճան ընդունէի, ամենեւին չէի կրնար վայելցնել, որովհետեւ մեծամեծաց հետ նստած ատեն կամ պիտի պարտաւորէի լուռ կենալ, և կամ անանկ պարսպ խօսք մը պիտի բնէի որ զիս պիտի ծաղրէին: Բայց պատմութիւնս չարունակեմ. գեղեցիկ օր մը առաւօտուն տունէն մեկնեցայ առանց ձայն մը հանելու, և ուսանց երթալիք ճամբաս խորհելու: Գրպանս սակի մ'ունէի, զոր քանի մ'օր յառաջ կնքահայրս տուած էր ինձ, և այնպէս կը կարծէի որ այս ստակը չի պիտի լմնայ:

Երկար ատեն քալելէս վերջը գիւղի մը մէջ

պանդոկի մը ու ջեւ հասայ, մտայ հոն և կանոնաւոր կերակուր ուղեցի: Խիտա աղէկ հագուած էի, համարձակ կերպարանք մ'ունէի, և գրպանիս ստակին ձայնը կը հանէի խոհարանին մէջ պատելով ու բոլոր սաները բանալ տալով ուզած կերակուրս ընտրելու համար: Պանդոկայեալը ծիծաղելով երեսս կը նայէր և բոլոր բոսած կընէր: Վերջապէս աղուոր ճաշ մ'ըրի ու ճերմակ և կարմիր գինի խմեցի: Քովի սեղանս ճաշ ընող սապատող (գամպուր) մը ուշադրութեամբ զիս կը դիտէր: Կուղեր ինձ հետ խօսակցութիւն մը բանալ ու ուսկից դարս և ուր երթալս իմանալ: Բայց որովհետեւ ես հետաքրքիր մարդիկը չէի սիրեր, և սապատողին ըրած հարցումներուն ալ չէի հաւաներ, առանց պատասխանելու երեսը կը նայէի, կամ խօսած ատենը կը սուլէի և կերգէի:

Ճաշ լնցընելէս վերջը պանդոկայեալին հարցուցի թէ ի՞նչ էր պարտքս. անզգամբ մէկ ճաշի համար տանք հինգ ֆրանկ ուղեց: Թէպէտ քիչ մը խոթուեցայ, բայց վճարեցի և պանդոկէն դուրս ելայ խորհելով որ իմ չի լըմննայու սակիս երկրորդ անգամ ստանկ ճաշ մը ընել ուզած ատեն չի պիտի բաւէ:

Իմ ճաշ ըրած տեղս՝ որ գեղի մը կը նմանէր, Սէն-ժերմէնն էր. հոն անտառին ճամբան հարցուցի և սկսայ յառաջ երթալ երբեմբն երբեմբն փոսերու վրայէ անցնելով և ճամբուս վրայ գտնուած էջերուն գաւազանի հարուածներ տալով:

Ուստի մտնելու վրայ եղած ատենս լեցի որ ետեւէս ձիւնոր մը կուգար . ետիս գարձայ տեսայ որ պանդուկը քովը նստող սապատողն է , որ պզտիկ ձիւն մը վրայ հեծած՝ անդադար խարազանով կը զարնէր , վասն զի առանց անոր խեղճ կենդանին ամեն մէկ քայլին կը կենար :

Երբ քովս հասա . ալ զարնելը դադարեցուց , և սկսաւ կամաց քալելընէլ , որպէս զի ինձ հետ երթայ : Ուզեց հետս խօսք բանալ . և որովհետեւ յոգնած էի , և կենդանին որչափ ալ նիհարէր , կընար զիս ալ իր վրայ կրել , ուստի սապատողէն այսպիսի շնորհ մը յուսաւրով . ալ գուռողութիւն լըրի , և ի հարկէ ստիպեալ պատասխանեցի իրեն :

— Ո՛ւր կերթաս այսպէս . . սիրելի բաւեկամս , հարցուց ինձ :

— Ես ալ չեմ գիտեր . . կուզեմ ճանապարհորդել , այնպէսն որ պատիլ ու զուարճանալ . . :

— Ծնողք չունի՞ս :

— Ի՞նչպէս չէ . . . բայց անոնք փարիզ են և կուզեն որ ես իմ ժամանակս կարդալով . . . գրելով անցընեմ . . . այս բանը զիս ձանձարացուց , և տունէն մեկնեցայ . . . :

— Կիմանամ . . . յիմարութիւն է քրածդ , երկեսաարդու թեան հետեւանք . . . Ո՛հ , գիտեմ ինչ ըլլայ . . . հիմա ալ այդ ճարը գրատեր են : Բայց ճանապարհորդութեան համար չաա ստակ ունի՞ս :

— Դեռ ինը ֆրանգ ունիմ . . . :

— Ի՞նչ ֆրանգ . . . զարմա՛նք . . . ուրեմն կը պարտաւորիս կատաղած կովու միս օտեւել :

— Կովու միս , գու՛ն որո՛ւ տուն կը հարցընես . չի տեսա՞ր , այսօր հաւ , օձաձուկն , առանի և բազ կերայ :

— Այո , տեսայ . բայց տանըհինգ ֆրանգ ծախս ըրիր , և հիմա մնացած ինը ֆրանգով ի՞նչպէս պիտի կրնաս տանիկ ճաշ մ'ընել :

Ասոր պատասխան չի կըցայ գտնել , որովհետեւ սապատողս իրաւունք ունէր . բայց որովհետեւ անձնատէր էի և կուզէի զիս պըղտիկ չի ձգել , և տեսայ ալ որ սապատողս զիս լռեցուցած կը կարծէր , վայրկեան մը ետքը ըսի .

— Ի՛հ , ի՞նչ կըլլայ , կովու միս կուտեմ :

— Կը տեսեմ որ շատ քաջասիրտ պատանի մ'ես , ըսաւ ինձ . բայց վերջապէս ճախ բորդութեան ատեն կը բաւէ որ մարդ ապրելու լաւ միջոց մը գտնէ , ատի մտթ բան չէ . և եթէ կուզես , ես քեզի միջոց մը հաղորդեմ :

— Գո՛ւ :

— Այո , ես :

— Ի՞նչ է այդ միջոցը :

— Հիմա կրօնմ : Բայց ինձ հասցիստ մըտիկ ընելու և չի յողնելու համար , կուզես աս ետիս ձիւն վրայ հեծնել :

— Ո՛հ , ատկէ աւելի աղէկ բան կըլլայ :

Իմ ճամբորդութեան նոր ընկերոջս առաջարկութեանը վրայ ուրախացած , մէկէն խեղճ

կենդանւոյն վրայ ցատկեցի . . . բայց ինքը-
զինքս լաւ չի կրնալով բռնել, այն ինչ պիտի
սահէի, իսկոյն սասպտողը բռնեցի, և երկու-
քըս մէկտեղ գետլնը գլորեցանք . . . սա-
կայն բարերազդարար հիզ կենդանին չի փա-
խաւ :

Իմ նոր ծանօթս առանց արտունջ մ'ընե-
լաւ սուրի վրայ ելաւ, միայն այցալի մ'ըսաւ
ինձ որ այնուհետեւ այսպիսի բուռն վարժունք
մը չունենամ, վրասն զի կրնայ ըլլալ որ ուրիշ
անգամ ասանկ անկլաս չաղատնիք : Ես ալ
խոստացայ : Ստացատոցս ոտքը սասպանդա-
կը (էօզէնկի) դնելով ձին հեծաւ . ետեւէն
ես ալ հեծայ ամենայ զգուշութեամբ . և
երբ լիամբին (սէմէր) վրայ հաստատուեցանք,
և խորազանի հարուստով սկսաւ իր ձին յա-
ռաջ վարել, շարունակեց իր խօսքը զոր ընդ-
միջեցաւ պատճառ եղած էի :

— Սիրելի բարեկամս, այս աշխարհիս մէջ
ամեն մարդ ստակ չահլի ու հարստն ալ կու-
ղէ . . . իսկ եթէ ինքը հարուստ ծնած ըլ-
լայ, անոր խօսք չունիմ, բայց և այնպէս մի-
լիննաւոր սեղանաւորներ կան որոնք իրենց
յատուկ եղած մէյմէկ գործքերով զբաղած
են, նոյնպէս մեծազումար գրամագլխի տէր
մարդիկ որք իրենց գրամագլուխը կըրկ-
նապատկելու համար այլ և այլ գործերու կը
ձեռնարկեն, և հարուստ մարդիկ որոնք ըն-
կերու թխններ կը հաստատեն իրենց գործքե-
րը փայլեցընելու համար : Ես, որ ոչ հարուստ

եմ, ոչ գրամագլխի տէր, և ոչ ալ վաճառա-
կան, և ասոնցմէ մէկն ըլլալու ալ յոյս չունիմ,
երկար ատեն ջանացի եթէ ոչ հարուստ ըլլա-
լու դէմէ հանգստեամբ ապրելու միջոց մը
գտնել . . . Վերջապէս դատց այդ միջոցը . . .
Մարդս խելքով կրնայ շուտ մը մտորիկը ճանչ-
նալ : Ես ճանապահարկեցի . շատ կերպ ճաշակ
և բնուորութիւն արվեցայ . . . Տեսայ որ եթէ
մարդս քիչ մը խորամանկութիւն ունենայ, կրնայ
ուրիշները խաբել : Ասոր համար անոնց տկար
կողմը բռնեղէն զատ ուրիշ բան պէտք չէ,
զոր դիւրութեամբ կրնայ գտնել, եթէ ինձի
պէս շօշափողական կարողութիւն և կորովա-
մըտութիւն (ֆիրասէթ) ունենայ :

— Ո՛հ, դուք այդ կարողութիւնը ունիք,
ըսի ընկերոջս, երկուքիս մէջ տեղը գտնուած
վերաբերման վրայի գնդատեղներն ձիւն միսր
խօսեցաւ :

— Այո, սիրելի բարեկամս, և պարծենա-
լով կրեմ թէ ունիմ :

— Ըսէք ուրեմն, ինչո՞ւ համար ձեր ձին
չուտով կը քայլէ :

— Որովհետեւ խորազանի հարուստ մը ի-
ջայ, և կլիմանայ նաև որ հիմա երթայ գարի
պիտի ուտէ :

— Ճշմարիտ ըսիք : Հիմա իմացայ այդ կա-
րողութիւնը ունենալիկ . օն, շարունակեցէք
որ մտիկ ընեմ :

— Հանգստեամբ ապրելու համար գտած
միջոց կիրքերը շղթաբոլթելն է . սակեց աւե-

լի բան մ'ալ կայ . ես բուսաբանութիւն , բը-
 ժըչկականութիւն , քիմիարանութիւն և ան-
 դամազննութիւն ուսած եմ , և այլապի գի-
 տութեամբ չէ թէ միայն ամեն հիւանդու-
 թեանց համար գեղ կը պատրաստեմ , այլ և
 սէր , ստեղծութիւն և նախանձ գրգռելու և
 առողջ մտադիվն հիւանդացընեքու համար ալ
 գեղեր և կամ բմպելիներ կը չինեմ : Այս ետքի
 արհեստիս մէջ առջինէն աւելի վարպետ եմ :

— Ո՛հ , հիտա հասկըցայ . . . Անշուշտ գուք
 վէրքերու համար ալ գեղ կը ծախէք , սա փա-
 րիզու հրապարակներն ու փողոցներու անկիւն-
 ները տեսած մեծ կարմիր մտրուս նման . . .
 Չեզի պէսներուն կարծեմ ընդվայրախօս (շար-
 ւածան) կրօնն :

Այս ընդվայրախօս բառին վրայ , ընկե-
 ըբս անանկ խոռվեցաւ ձիուն վրայ որ երկու-
 քս մէկէն կրկին վար պիտի ինչայինք . բա-
 րեբաղդաբար ուժով մը բռնեցի զինքը , որով
 այդ վտանգէն ազատեցայ :

— Սիրելի բարեկամս , ըսաւ ինձ երբ քիչ
 մը խոռվութիւնը անցաւ , այդ ըսած խօսքեր-
 նուդ համար ներողամիտ կըլլամ . . . Դուք
 դեռ զիս չէք ճանչնար . բայց և այնպէս կը
 խոստովանիմ ալ որ ըսածնեղուս մէջ քիչ մը
 ընդվայրախօսութիւն կայ , և իմ գեղերուս
 ու բմպելիներուս երեք բարորդը իրենցմէ
 սպասուած արդիւնքն չեն ցուցներ . բայց
 ինչպէս ուրիշ բաներէ , անանկ ալ գեղերէ կը
 խարսի մարդ . մաքրողական գեղ կառնու ,

կը հիւընդնայ , ակուան կը ցաւի , քիչ մը ողի
 (բուհ) կը դնէ վրան , բարբաղին կը գէշնայ .
 պաշտօն մը կը փնտռէ , կը գտնէ , բայց չի
 կրնար կատարել . ծովային այլ և այլ գործու-
 զութիւններու կը ձեռնարկէ , մորիկ մը զայն
 կ'աւերէ . ինքզինքը խելացի կը կարծէ , բայց
 ձեռքէն բան մը չի գար . իմաստուն ըլլալ
 կուզէ , և բրածը յիմարութիւն է . երջանիկ
 ըլլալ կուզէ , կամուսնանայ , կին մը և աղաք
 կունենայ որք իրեն հազարաւոր հօգ կը պատ-
 ճառեն . . . Վերջպէս , սիրելի բարեկամս ,
 մարդս ամեն ասին խաբուելու վրայ է , և
 մեծ դիպուած մ'է , երբ գէպերն մեր գու-
 շակածին կամ յուսացածին համեմատ պատու-
 հին :

— Ո՛հ , պարոն , ըրի իմ սապատողիս , որուն
 շատախօսութիւնը սկսած էր ալ զիս ձանձրա-
 ցընել , վերջպէս սա բուէք ինձի , զիս ինչ
 պիտի ընէք :

— Կեցիք որ բռեմ . երբ գեղ մը կամ գիւ-
 ղաքաղաք մը կենամ , ես մինակ ինքզինքս չեմ
 կրնար ճանչնել . ինձի աշակերտ մը պէտք է
 որ իմ յայտարարութիւններս այն տեղը ցրուէ ,
 և երբ ես գործով մը զբաղած ըլլամ , իմ կող-
 մանէ եկողին պատասխան տայ , և ինձ առա-
 ջարկուելիք իրաց վրայօք լաւ տեղեկութիւն
 ընդունի :

— Բայց ես ձեզի աշակերտ ըլլալ չեմ ու-
 զեր , որովհետեւ բան սովորու փափաք չունիմ :

— Այնպէս ըլլան կիմանամ , բարեկամս ,

ոհ, ես զձեզ ծանր ե գ.ժուարին աշխատութեամբ մը չի պիտի նեղեմ . . . Միայն ձեզի դեղահատ (հայ) պիտի շինել տամ. ահա այսչափ :

— Գեղահատ :

— Այո, այլ ե այլ մեծութեամբ ե այլ ե այլ գոյներով . . . Բայց հանդարտ եղիք, ասի գ.ժուար բան մը չէ : Ասկից զատ բան մ'ալ կայ բնելու :

— Ի՞նչ :

— Պէտք է ուղուած ատեն քնանալ, ե եթէ հարկ ըլլայ, քնաչըջիկ ըլլալ :

— Ո՛հ, ո՛հ, դուք ինձի քնանալ ըսէք, ատի խիտ լաւ կընեմ :

— Քնացած ատեննիդ ալ ձեզ եղած հարցումներուն պիտի պատասխանեք . . .

— Քնացած ատենս ի՞նչպէս կընամ խօսիլ :

— Բայց դուք չէ թէ օտուգիւ պիտի քնանաք, այլ այնպէս պիտի ձեւացնէք . . . ես ձեզի ասոնք ամենքը կը սովորեցնեմ : Ո՛հ, ասի իմ չահուս գլխաւոր ճիւղերէն մինն է :

— Ի՞նչ, ուրիշները քնացնելը :

— Այ, քնաչըջիկները խօսեցնելը, որոց միջոցաւ հիւանդաց դեղ կուտամ :

— Ո՛հ, կեցիք . . . քնանալը ինչ որ է, այն հոգ չէ . բայց հիւանդներուն ոչ դեղ կուտամ, ե ոչ ալ դեղ կանոնում . . . Ատոր համար հորմէս ծեծ անդամ կերած եմ :

— Ձի հասկցաք ըսածս, գեղ որ ըսի նէ, բժշկական գեղերուն համար է :

— Գիտեմ, գիտեմ . . . սրինգ (չիրինկա) ըսուած դործիքով կը գործածեն, այնպէ՛ս չէ :

— Ձէ, գարձեալ չէք հասկըցած : Քնաչըջիկ եղած ժամանակնիդ պիտի խօսիք . . . ես առաջուց ձեզի կը հասկըցընեմ ինչ ըսելիքնիդ, ե այնպէս հիւանդ կամ հետաքրքիր անձանց կը պատասխանեք :

— Լաւ, բայց ես բան մը չեմ հասկընար :

— Ատոր այդպէս ըլլալը ես ալ գիտեմ. քնաչըջիկներուն բան հարցնողներն ալ բան մը չեն հասկընար . ե ահա մեր դործն աւելի պատուաւոր ընողը այդ կէտն է . եթէ բան մը հասկըցուի, ոչ ոք կընայ մագնիսեան զօրութեամբ ե քնաչըջիկ ըլլալով իր ասպրուտը ճարել, Վերջապէս կուղէ՛ք ինձ ընկեր ըլլալ ե իմ ձեռնարկութեանցս մէջ ինձ օղնել . . . Ես զձեզ լաւ կը կերակրեմ, լաւ կը հող շինեմ, ախարհներ ալ կը տեսնէք, որովհետեւ ես միշտ միևնոյն տեղը չեմ կենար :

— Խիտ լաւ, բայց գեղահատ շինելէն ու քնանալէն ուրիշ բան մ'ընելու է :

— Այ :

— Մե ուրեմն, հաճեցայ, հեանքնիդ կուգամ : Ահա այսպէս իմ սապատողիս ընկերս եղայ : Գիշերը գիւլ մը հառանք, ուր ընկերս ամենալաւ պանդոկ մը տանելով գիտ հոն բաւական աղէկ ընթրիք մ'ըրինք : Ձիով ճանապարհորդելն խիտ հանգիստ կերելէր ինձ, կերակուրի համար հոգ մը չունէի : Ասկից զատ ուզած ատենս ալ իմ նոր ընկերէս բաժնուելու :

ազատ էի , և այս պատճառաւ կրնայի անոր հետ բնկերանալ : Եթէ մէկը ազատ ըլլալուն վրայ ապահով ըլլայ , իր կեանքը հաճելի կըլլայ , և անոր ամենաթեթեւ պարագաներուն վրայ քաղցրութիւն մը կը տարածուի . ընդհակառակն գերութիւնը մեր գործողութեանց շատին վրայ տիրութեան քող մը կը ծածկէ . զուարճութիւններն կը քննէ , սիրոյ քաղցրութիւնը կանհետացընէ , հոգւոյ զօրութիւնը կը տկարացնէ , և երեսակոյտութեան զօտութիւնը կը վախցընէ :

Բոլոր այս բնածներս , Սան-Սուսի , իմ քովէս չեն , այլ կնքահայոյ շատ անգամ սասնք կը կրկնէր ինձ , զորս դիւրաւ ըմբռնեցի , որովհետեւ իմ բնութեանս յարմար խօսքեր էին :

Երբ հետեւեալ առաւօտուն արթնցանք , սառչատորս որուն անունը կըսէր *Սուսի* էր , անուն մը՝ զոր հասանականաբար ինքը յօրինած էր , և առանց ծամածռութեան անկարելի էր արտասանել , որով նա բոլորովին պատուաւոր կըլլար , իմ սպաստողս , ըսի , քնաշըբջիկի դաս մ'առաջարկեց զոր մեր եղած գեղը այնչափ կարեւոր չեղած սեղ մը պիտի գործադրէինք : Ընդունեցայ : Նստեցուց զիս , հըրամայեց որ հաստատապէս նայիմ , առանց բան մը տեսնել երեսցընելու , և վերջապէս սորվեցուց ինձ բաց այօք քնանալու եղանակը : Բայց որովհետեւ շարունակ այսպէս նայելով արտեւանունքս կը յոգնէին , հրամայեց ինձ որ

աչքերս գոցեմ , երբ դէմերնիս դեղացներ կամ խեղճ մարդիկ դանուին :

Վերջը կարգը դեղերուն եկաւ , ընկերս դեղ չունէր և հարկ էր ուրիշ դեղեր պատրաստել : Մինչդեռ ես տասնըհինգ հատ պղզտիկ շիշեր մաքրելու զբաղած էի , որոնց մէջ դեղ պիտի լեցուէր , կրտսկրայքիւս դնաց գեղը տունկ , արմատ և բաղադրութեան նիւթեր առնելու որք իր դեղերուն համար պէտք էին , Եկաւ կրակ վառեց , պանդոկապետէն խել մը անօթնեղ արուս , որով սենեակնիս՝ ուր ամեն ինչ տակն ու վրայ էր , քիմիագործի և մագի մը սենեակ դարձաւ :

— Ո՛հ , ըսի իմ սպաստողիս , երբ նա պարտան (տուլ գարը օդու) բուռած բոյսը կը մաքրէր , և ես ալ կինամնն (դարչին) կը ծեծէի , այս պատրաստած դեղերնից ինչո՞ւ համար է : Այ այսուհետեւ ես ձեր ընկերն եմ . ուստի պէտք է որ ձեր գաղտնիքը ինձ հազորդէք :

— Պիտի սովորեք , բարեկամս , մեր մէջը ամենեւին գաղտնիք չի պիտի մնայ : Հիմակուսան շինած գեղոս սիրոյ դեզ են . ստի շինելը դժուար չէ , ստոր համար զօրացուցիչ , սգեււօր և գրգռիչ նիւթեր պէտք է , Հիմա կինամննը , մեխակը (գարանֆիլ) , վանիլան (Ամերիկայի բոյս մ'է) պղպեղը (պիպէր) , շաքարը և օղին իրարու հետ պիտի երիեմ : Երբ մէկն ասկից ուտէ , շատ կը սիրահարի , և եթէ իմ այս դեղս առնող այլը կամ կինը իր սիրոյ

առարկային հետ քիչ մը դուրև գլխի գտնուի , կը տեսնէ որ իսկոյն արգիւնքը կը ցուցնէ , և չի տարակուսիր թէ ես վհուկ մ'եղած ըլլամ : Ասկից զատ՝ այս դեղը ակռայները փտեցընելու յատկութիւնն այս ունի : ակռայներն առանց ցաւոյ չեն փոփր , և որովհետեւ ասակիներն ակռային ցաւը սիրը ցաւ կանուանեն , ուստի երբ իմացուի թէ այս դեղն առնողը ակռայի ցաւ ունի , խկոյն կը հեռեցընեն թէ սիրահար կըլլայ : Ես այս դեղէն շատ կը ծախեմ . . մանաւանդ տիկնանց . ուստի շատ շինելու ենք :

Անցնինք հիմա սա դեղին , որ նախանձ կը դրդուէ : Ո՛հ , ստոր վրայ խխաւ շատ վարժութիւն և խորին խորհրդածութիւններ ըրած եմ : բայց կարծեմ վերջապէս յայողած եմ : Նախ և առաջ պէտք է գիտնալ թէ նախանձը ուսկից կը ծնանի . անշուշտ սիրուած առարկայի մը անհաւատարմութեան վրայ եղած կասկածներէն , այս կասկածներն հարկաւ պատճառ մ'ունենալու են , քանի որ առանց պատճառի գործ չի կրնար ըլլալ . մարդիկ երբեմն առանց պատճառի նախանձուտ կըլլան , բայց խիտ շատ անգամ ալ իրաւամբ : Այս խորհրդով ինքրիկն ըսի . Սիրահարներէն մէկն անհաւատարիմ ընելով , հարկաւ միւսը նախանձուտ կըլլայ . բայց իմ դեղը չի խմող ինչպէս կրնամ անհաւատարիմ ընել . ահա , ստոր մէկ ճարը գտնելու է . . . ազէտ մը չի կրնար ստոր հնարք մ'ընել , բայց ես առանց բժշկականութեան որ և է գրքի մը օգնութեանը

կարող եղոյ ասոր ալ ճարը գտնել : Ես այս դեղը օնգլիկի (հիւլա) շոգիով կը շինեմ , և հետին ալ խել մը բոյսեր կը խառնեմ՝ զոր միւր թիին վրայ կը կրեն : Այս դեղը անքերը մեքընցընելու , երեօք գոյնը կապոյտընելու և քիթը խորշոտեցընելու յատկութիւնն ունի . մարդ թիին վրայ խել մը խաղաւարտներ (չիտան) և մեծ ու պզտիկ խառն օգտւորներ (գապարահրդ) հանելով զանի անհաճոյ կընէ , և տասը քայլ հեռուն դտնուած ճանճերն դեռիքը ձր զեւու չափ շունչը կը դորացընէ : կարծեմ լաւ իմացաք որ իմ դեղս գործածող անձինք քով յաճախող այր մը կամ կին մը դիւրաւ անհաւատարիմ կըլլայ այնպիսի առարկայի մը որ ալ սչքի հաճելի չերեւիր , և երբ անոր անհաւատարիմ գտնուող ըլլայ , իմ տեղը առնողը սատանայի մը նման նախանձուտ կըլլայ . . և իր կենացը մէջ միշտ այնպէս կը մնայ , վասն զի ունայն տեղը կը յայնաց հաճոյանալ ու սէր ազդելու : Հիմա ստոր բոնիք մը չունիք , այնպէս չէ . . . տետէք , ի՞նչ հաշիւ է այս , ի՞նչ խորին խորհրդածութիւն , և ի՞նչ կիրքերու և անոնց արգեանցը վրայ լաւ հմտութիւն ունենալ է . . . Ալ գացե՛ք հասկըցե՛ք թէ ի՞նչ է աշխարհս . ես աս ջի բոսած դեղէս աւելի կը ծախեմ , քաւ թէ միւսին , և քիչ անգամ կը պատահի որ մի և նոյն անձն անձիկ երկու հեղ առնու :

Գալով այս վերջին դեղին , որոյ համար այս բոյսը կը մարեմ , բարկութիւն , ասեւու-

թիւն և գժտութիւն յարուցանելու կը ծառայէ, և միշտ արդիւնաւոր կը ըլլայ : և կը շինուի մանանայով (գուտարէթ հէլլասը), խաշընդեղով (բավէնտի), քացախով, բուեկնիի խէժով (թիբէմէնթիւն), և հնդկանդուզով (հինտիսթան ճէվիզի), զորս այս բոյսին հետ խաշնելով օշարակ (չուրուպ) մը կը շինեմ : Այս դեղը որ միտակաւմայն կազդացուցիչ և պընդացուցիչ է, խիթ (սանճը) և կէս գլխու ցաւ կը պատճառէ : արդ՝ եթէ մէկուն փոքր կամ գլուխը ցաւի, բարբը կը փոխէ : ամեն բանին դիւրաւ կը բարկանայ և կը կարծէ թէ ամենքն իրեն հետ ատելութիւն ունին, մանաւանդ երբ ցուներն երթալով կը սաստկանան : կը յուսամ որ ասի խիտ աղէկ խորհած եմ, և իմ վրայ եղած կարողութիւններն միայն պէտք էին այնչափ այլ և այլ կերբեր յառաջ բերելու համար :

Ուշագրութեամբ ընկերոջս ըսածները միտակ ըրի, և երբ խօսքը լնցուց, հարցուցի իրեն թէ իր դեղերը իմ վրայ փորձել կուզէ՞ր : Ըսաւ ինձ որ երբէք ատանկ դիտաւորութիւն մը չունի, և ասով առաւել հաճեցայ իր քովը մնալ : որովհետեւ ինչ որ ըլլայ, չի ուզեր երբէք պարն նրասօկայքիտի դեղերը ճաշակել :

— Հիմա կը մնայ, ըսաւ ինձ, դեղահաս շինելն ձեզ սովորեցնել : ասի շատ դիւրին է : Ես ամենքն ալ հացի միջուկով կը շինեմ և զանանք այլ և այլ փոշիներու մէջ կը լեցընեմ զանազան դոյներ տալու համար :

— Ուսանք ինչ բանի կը ծառայեն :

— Ամեն հիւանդութիւն բժշկելու :

— Ի՞նչ, հացի միջուկով հիւանդութիւն կը բժշկէ՞ք :

— Երբեմն կը բժշկեմ : որովհետեւ շատ հիւանդութիւններ կան որ երեւակայական են, և երբ հիւանդը կարծէ որ ինքը ճշմարտապէս դեղ կառնու, կը համոզուի որ զինքը կը բժշկէ, և այս համոզմամբ է որ կը բժշկուի, ու չէ թէ դեղահաստերով : Սա ևս պէտք է դիտնալ որ հացի միջուկ մը միշտ բան մ'է, և եթէ օգուտ չընէ, վրաս ալ չըներ : Ես այս դեղահաստերը ընդհանրապէս դայեակներուն ու պառաւներուն կը ծախեմ :

ԳՂՈՒԽ Ժ .

ՄԱԳՆԻՍԵԱՆ ԶՕՐՈՒԹԵԱՆ ԿԱՍ

Ահա այսպէս իմ ընկերոջս բոլոր գաղտնիքներն իմացայ : նա երգուընցուց զիս որ բնաւ չի մատնեմ զինքը : Բայց իրեն խորհըրդակցելու եկող անմիտներուն դիւրահաւանութեանը վրայ չի զուարճանալու համար չերգուընցայ, և զայս ես անձամբ առաջագրեցի ընել : որովհետեւ թէպէտ ևս այն ատեն տասնըճինգ տարեկան էի, բայց միտքս դրածս ընող, քաջասիրտ, կամակոր, և ըստ բաւականին խորամանկ մէկն էի :

Մեր իկած գեղը աւելի չէինք կրնար դըտնել մեր ազգանդները քործածելու և մեր գեղերը ծախելու, ուստի պատրաստուեցանք անկէ մեկնել. բայց և այնպէս իմ ընկերս պանդոկապետին կնկանը գաղտուկ տուի մը գեղահաս ճախած էր, որք էր մաղերը միշտ սև և ակապնեցն այ միշտ ճերմակ պահելու պիտի ծառայէին:

Ուստի նորէն ճամբայ ելանք, մեր բոլոր ունեցածը կողովի մը մէջ գնելով և ձիուն թամբէն վար կախելով: Բայց օդը մեզ համար անյաշդէր. ճամբան սաստիկ փոթորիկ մը բըռնուեցանք, և երբ հասանք այն պղտիկ քաղաքը՝ ուր մեր սքանչելի գիտութեանց ձայնը պիտի հռչակուէր, այնպիսի ողորմելի վիճակի մը մէջ կը դանուէինք, որ մեզի աւելի խեղկատակներու տեղ կը գնէին, քան թէ գիտուն մարդօք:

Բայց և այնպէս տեղւոյն ամենադեղեցիկ պանդոկին իմանք Պանդոկապետը նախ և առաջ մեզի ուշադրութիւն չբըտ, և իրար ալ շանցաւ զմեզ ընդունելու համար. բայց երբ ընկերս ամենադեղեցիկ սենեակ մը խնդրեց, և լուկերակոտը պատուիրեց, պանդոկապետը կասկածատ գէշբով մը սկսաւ զմեզ գիտել, որպէս թէ անոր բաժնեկրուն վրայ տարակոյս կը յայտնէր, ընկերս հանեց քանի մը սկուտ նետեց սեղանին վրայ, բռնով պանդոկապետին որ սենեկին ուր օրուան փարձքը կանխիկ ընդունի:

Ասոր վրայ պանդոկապետին կատեճօք բու-

լորովին վարատեցաւ, և հաւատաց որ այսպէս աննշան կերպով ճանապարհորդող անձանցմէ բաւական ստակ պիտի շահի. ուստի մեզի առաջին յարկը հանեց, և շուտով կերակուր պատրաստեց:

— Պարոն պանդոկապետ, բաւ ընկերս սեղան նստած ատեննիս, գուց իմ ով բլլալս չէք գիտեր. ուստի քաղքիս երջանկութեանը համար կը պարտաւորիմ ես զիս ճանչցնել. հաճեցէք ուրեմն այս քաղքիս բնակիչներուն իմացընել որ նշանաւորն կրտսկայաբիւս միայն ուրի որ իրենց քաղաքը պիտի կենայ, որն որ Չինուկայսեր գլխաւոր բժիշկն է, Մարօքի արքայական պալատին բնագէտն է, և Գալղաքներու իշխանին աստղաբաշխն է: Ասկից պատ ըսէք իրենց որ սոյն վայրկենիս մէջ երկրագունտիս վրայ չի գտնուած արտօքոյ կարգի և ամենահաշակաւոր քնարչիկ մ'ալ ունի իւր հետ: Ասի երեսուն ասրեկան երեսասարգ մ'է, որ տասներկնդ ասրեկան կը համարուի, որովհետեւ իր կենաց կէտը քնանալով անցուցած է: Այս երկան երկուսասարգը՝ որ Հնդկաստան ծնած է, ամեն լեզունեհն այ գիտէ, որ թէպէտ չի խօսիր, բայց ինձմէ ու ձեզմէ աւելի լաւ կը հասկընայ, երազի մէջ կը գուշակէ որ և է հիւանդութիւն մը, իր պատճառը և հետեանքը, ամեն կերպ ցաւերը, անոնց միջոցը. և գեղերն ալ կը ցուցնէ, զորս պէտք է առնուլ, թէ և ապագայ հիւանդութեանց համար ալ բլլայ: Նա կոմսերու, կուսակառնեղու, զօւրքե-

րու և նախարարներու առջեւ իսկ քննաւոր պատիւն ունեցած է: Քննացած ատեն անանկ գործքեր ըրած է որ մեծն Սորոմունի և Տակոպէրի թագաւորութեանց ատեն հրաշքի տեղ կանցնէին: Անգղիացի մը բռնկած է ծիրական ախաէն, Գերմանացի սեպուհ մը մորթի հիւանդութենէն, և իր ամուսինն ալ կաթուածէն: Երիտասարդ պարող օրերդ մը մարդոց ատելութենէն ազատած է, և պառաւ աղջիկ մ'ալ իր շանը վրայ ունեցած սէրէն: պալատական մը՝ կռնակը նայելու սովորութենէն, և անոր կինն միշտ ետեւը նայելու բնութենէն: Հարուստ մը՝ ստամոքսին տկարութենէն, և Բրուսիացի մը՝ անմարտչութենէն: Հեղինակ մը՝ ականջին դրնդիւնէն, և նուագածու մը՝ սրունքին տկարութենէն: արքունի դռնապան մը՝ մէջքին թուրութենէն, և մատակարար մը՝ մատուքներուն մարմայէն (կիճիչէն): փաստաբան մը՝ լեզուին շփոթութենէն, և երգիչ մը՝ շնչարգելութենէն: տարփածու մը իր օխտնդանաց (սէփտա) ցաւերէն, և ծեր սիրահար մը՝ սրտի հիւտնդութենէն: նախարար մը՝ զանակ ունենալու անկարողութենէն, և ջորեպան մը՝ շատ զուակ ունենալու գիւրութենէն: ստահակ ամուսին մը՝ ապառաժին վրայ աղէկ սերմ սերմանելէն, և իտալացի մը՝ պղտիկ աղւաքը ձաղկելու (գամը ըլլամագ) սովորութենէն, և ասոնց նման ուրիշ շատ անձինք, զորս չեմ ուղեր մանրամասնաբար պատմել վանն զի խիտ կերկարի, և ես ալ չեմ ուղեր նմանիլ այն ընդ-

վայրախօսներուն որք մարդուն երեսը մտիկը նետելէն զատ ուրիշ վարպետութիւն մը չունին: Այս պղտիկ աղւարարութիւնս՝ զոր ցըրուելնիդ կաղաչեմ, կը բաւէ այս քաղքին բընակչացը մեր արհեստին վրայ գաղափար մը տալու համար: Առէք, պարոն պանդոկապետ, առէք և հուսատացէք: 1

Պանդոկապետն աչքերը բանալով մտիկ բըրա սապատողին բաձնեբը որ արտաքոյ կարգի ճոռտմարանութեամբ և ապահովութեամբ կը պատմէր: վերջը աղւարարութիւններն առաւ և յարգանք խոնարհելով՝ անձուիրութիւն խոտացաւ, ուղեց ընկերոջս անունը սովրիլ, բայց չի կրցաւ: Երեսը ծամածուեց, գլխանոցն հանեց և ետ ետ երթալով սենեակէն դուրս ելաւ:

Երբ պանդոկապետը գնաց, ընկերոջս հարցուցի թէ յայդ երեսուն տարեկան և այնքան հիւանդութիւններ բռնող քնարջիկն ե՛ս էի:

— Այո, սիրելի բարեկամս, բաւ ինձ, ամենեւին մի զարմանաք: պատասխանատուն ես եմ: Ինձի ընթիւ թէ մտուննիդ Յակօբոս է: այս անունը ամենուս զիտցածն է: Երբ տեղ մը այցելութեան երթանք, ևս զձեզ թափափա պիտի անուանեմ: աղէկ միտքերնիդ պահեցէք:

Հիմա ես մէյնը երթամ քաղաքը պիտի պատիմ անգեկութիւններ առնելու համար: մինչև դամ տէ, գուք սա գեղերս գըրցցին մէջ աղէկ մը տեղաւորեցէք, և քանի մը տուփ դեղահամ շինեցէք: և ս շուտով կը գառնամ:

Երբ մինակ մնացի, փոխանակ դեղահաստ շինելու սկսայ հնդկաբնիկուդ, կինամոն և ուրիշ ասոնց նման նիւթեր ուտել, ընկերոջս մասաղն ալ բացի, հոն մեծ սև զգեստ մը, կեղծ քիթ մը, ծամ մը և երկար մորուք մը գտայ: Երբ ասոնք քննելու վրայ էի, նայլս սենեակին դուռը կամաց մը զարկին:

— Հրամանէք, ըփ, առանց այլայլելու. դուռը բացուեցաւ և քսան տարեկան օրիորդ մը սենեակէն ներս մտաւ: Աօի պանդոկապետին սպասուհիներէն մին էր, որ իրեն նման շատ օրիորդներու պէս խիստ հետաքրքիր և ըստ բասակահին համարձակ կերուէր: Այս սպասուհին՝ պանդոկապետին մեր սենեակէն դուրս ելած ատենն լսելով անոր պոռալու ձայնը, որ կը սէր թէ՛ պանդոկիս մէջ՝ երկու մարդունիմ որոնք տիեզերաց մէջ չի տեսնուած արտաքոյ կարգի մարդիկ են, մէկը՝ զխառն մը՝ որ Գաղղիացիքը Չինացի կը գարձնէ, և միւսը՝ քնաչրիկ մը երեսուն տարեկան որ հաղիւ տասներկու տարեկան կերելի, և արթուն մարդիկն կը քնացնէ, — այս սպասուհին կը սեմ, որուն անունը ֆլէրէթ էր, առաջին անգամ ինքը քնանալ ուլած էր, որպէս զի իր վրայ եղած արդիւնքը տեսնէ. և այնպէս համոզուելով որ եթէ մէյժը անունինս երէ, դժուար պիտի ըլլայ իրեն մեղի ներկայանալ, ուստի փութացած էր ամենէն առաջ սենեակինս գալ, որպէս թէ իմանալու համար թէ արդեօք բունի մը պէտք ունինք:

Աղջիկը ոտքին մատներուն վրայ կոխելով յառաջ եկաւ, և վախով ու հետաքրքրութեամբ լցուած կերուէր: Ինծմէ երկու քայլ անդին կեցաւ, և ուշադրութեամբ սկսաւ երեսո նայիլ. ես ալ անոր երեսը կը նայէի, և կը տեսնէի որ խիստ ազնիւ աղջիկ մ'էր: Ես տակալն կանանց հետ տեսակցած չէի. մանաւանդ որ այսպիսի օրիորդի մը հետ երբէք առանձին մնացած չէի. ուստի այս աղջկան քովս գտնուիլը, իր խորին ուշադրութիւնը, և իր կերպարանքին հաճելի սպասուրութիւնը զիս աստիակապէս խռովեցին, և այնպիսի ըզգացում մը տիրեց վրաս, որ մինչև այն ատեն ինձ անծանօթ էր:

Երկու քս ալ լուսութեամբ իրարու կը նայէինք. վերջապէս ֆլէրէթ խօսեցաւ, և

— Ինչպէս, պարսն, ըսաւ աչքերը բանալով, Ինչպէս, դուք երեսուն տարեկան էք:

— Այո, օրիորդ, ըփ շուտով ընկերոջս ինձ ըսածը միտքս բերելով, և խորհելով նաև որ այս սուրը կընար անօրինակ դէպքեր յառաջ բերել: Մնաց որ դուք գիտէք թէ տասնըհինգ տարեկան երիտասարդ մը շատ կը փափագի տարուօք և խնայցի երեսնալ, մինչդեռ երեսուն տարեկան մարդ մը կը ցաւի տասնըհինգ տարեկան երիտասարդի մը չի նմանելուն վրայ:

— Ոհ, Աստուած իմ, բնաւ հաւտալ չի դար. . . երեսուն տարեկան էք դուք հիմա, հաղիւ տասնըհինգ տարեկան կերուէր:

Եւ Քլէրէթ զիս աւելի մտնէն սկսաւ քրն-
նել, ես ալ կը թողուի որ երեսն նայեր, և կը
ջանայի հաճելի կերպարանք մը ցուցնել:

— Պարոն, գաղտնիք մը գիտցած ըլլալու
էք դուք, որ զձեզ ծերանալէ կարգիլէ:

— Այո, օրիորդ, բայց մէկէ աւելի գաղտ-
նիք կայ քովս:

— Ո՛հ, պարոն, իցէ թէ միայն սա գաղտ-
նիքը սորվեցընէք ինձ . . . շատ դո՛հ . . . շատ
երջանիկ պիտի ըլլամ . . . եթէ միշտ երիտա-
սարգ երեւիմ . . . Ո՛հ, որչափ հաճելի բան
մ'է . . . կը խոտտանամ որ ձեր գաղտնիքը
ուրիշի չի հաղորդեմ. ուր թողունք որ չեմ
ալ ուզեր որ տեղոյս միւս օրիորդներն ինձ
նման երիտասարդ մնան . . . աակէ հաճոյք
մը չեմ կրնար զգալ . . . Պարոն . . . կը հա-
ճի՞ք ինձ այս շնորհն ընել . . . Հաւատացէք
. . . որ ամեն ուզածնիդ կուտամ և ամեն ք-
սածնիդ կընեմ . . .

Երիտասարդ սպասուհին այնչափ յարած
կերելէր ինձ որ հոգեոյս վրայ հաղարաւոր
բողձանքեր սկսան տիրել. բայց ես չէի հա-
մարձակեր զանոնք երեւան հանել, վասն զի
դեռ անվարժ էի: Սակայն իմացայ որ պէտք
չէ անվարժութիւնն շարունակել, և նախնա-
կան վարժութիւններս ֆլէրէթէն կուզէի առ-
նուլ: Սա ալ պէտք է զիտնալ որ մարդ մը ե-
թէ ինքզինքը երեսուն տարեկան ցուցընէ,
պէտք չէ անվարժութեան կերպարանք յայտ-
նել. բայց ի սկզբան անյարմար խօսք մը չըսե-

լու կամ բան մը չընելու վախով ամենայն լը-
ուսութեամբ միայն ֆլէրէթի երեսը նայելով
դո՛հ կըլլայի:

Օրիորդը իմ լուսթեանս վրայ զարմացած՝
վախցաւ որ ըսածը չի պիտի ընեմ. բայց ո-
րովհետեւ երիտասարդ մնալու ստատիկ փա-
փազ մ'ունէր, լուսթեան կապը խզելով ը-
սաւ:

— Պարոն, կըսեն թէ դուք քնաչրջիկ
էք:

— Այո:

— Եւ զամենք կը քնացընէք:

— Իմ գիտութեանս հաւատացողներն կը
քնացընեմ:

— Ո՛հ, պարոն, ես կը հաւատամ ձեր գի-
տութեանը . . . կազալեմ քնացուցէք զիս . . .
կարելի է երիտասարդ մնալու միջոցն այդ քը-
նանայն ըլլայ:

— Այո, ապիկա սկզբնաւորութիւն մ'է:

— Ո՛հ, պարոն, սկսեցէք ուրեմն, կաղա-
չեմ . . . դոնէ այնչափ մ'ըբէք . . . օն, քա-
նի որ առանձին ենք . . . և եթէ ժամանակ
ալ ունիք . . .

— Ի՛նչ կուզէք որ ընեմ:

— Քնացուցէք զիս, պարոն . . . Ահաւա-
սիկ պատրաստ եմ:

Ասոր վրայ սկսայ շփոթիլ. չէի գիտեր թէ
քնացընելու համար ի՛նչ պէտք էր ընել, և
կը ցաւէի այս մասին իմ սապատողէս ընդար-
ձակ և մանրամասն տեղեկութիւններ չընդու-

ներու համար : բայց և այնպէս երիտասարդ-
 ֆէլէրէթի ազաւանքն ալ երկար ատեն չի մեր-
 ժելու համար , որովհետեւ խիտ սաստիկ կա-
 զայէր ինձ , ինքիբեմն ըրի . ինչ ըսելէ , ես
 սաստիկն ալ անասուն եմ . եթէ նա ու-
 ըրչեմքն քնացնելու կերպը ինձի չի սորվե-
 ցուց , ես իմ քովէս միջոց մը կը հնարեմ . թե-
 րեւս իմ գտած միջոցս անոր գտածէն աւելի
 աղէկ կըլլայ :

— Մն ուրեմն , կը հաճիմ , ըրի ֆէլէրէթի ,
 քեզի դաս մը տալու . բայց այս տարիք դասս
 զձեզ կարգի պիտի դնէ . վերջէն ուրիշ դասեր
 ունիմ տալու :

— Ո՛հ , պարոն , ինչպէս որ կուզէք :

Երիտասարդ տղատուհին այնչափ գոհ ե-
 ղաւ իմ հասանութեանս վրայ , որ արախու-
 թեանէն սիրաւ դիւտահարի պէս սենեակին մէջ
 ցտակաւեւր :

— Նախ և առաջ նստեցէք , ըրի իրեն
 խիտ ծանր գէմք մը ցուցնելով :

— Ո՛ւր նստիմ , պարոն :

— Բայց . . . հոն . . . քովս ամոռախ մը
 վրայ :

— Շատ աղէկ , նստիմ , պարոն :

— Ձեռքերնիդ ինձի տուէք . . . :

— Ո՛հ , երկուքն ալ տամ , պարոն . . . :

Երկու ձեռքն բռնեցի , և իմ ձեռքերուս
 մէջ սկսայ ուժով մը սեղմել . կարծեա թէ բու-
 ըր մարմնոյս վրայ քաղցր ջերմութիւն մը ըս-
 կըսու ախրել . արդէն այնչափ երջանիկ էի ,

որ չէի համարձակեր երբէք շարժիլ , վախնա-
 լով որ չըլլայ թէ իմ զգայարանքներս զմայրի-
 ցներոջ հաճոյքն կորսնցնեմ . աչքս ֆէլէրէթի
 աչքին վրայ անկամ էի , որուն փափուկ թըմ-
 րութիւնը առաջին սէրն կազդէր ինձ : փո-
 խանակ երիտասարդ աղջկան դաս մը տալու ,
 կը տեսնէի որ նա հաշարաւոր դասեր կընար
 տալ ինձ . կը դողայի , և ամեն վայրկեան կը
 կարմրէի ու կը գեղնէի . երբէք վճուկ մը ին-
 ձի չափ վախկտա եղած չէ . բայց ես իմ դերս
 մուցած էի , և ֆէլէրէթ անտարակոյս իմ գե-
 րըս յափշտակած էր :

— Չարմանալի բան , ըսաւ ֆէլէրէթ , որուն
 ձեռքերն հիշգ վայրկեանէ ի վեր սեղմած կեցեր
 էի , ամենեւին քնանալս չի դար :

— Սպասեցէք . . . սպասեցէք . . . Արի
 շուտով մը չըլլար . . . Հիմա պէտք է որ աչ-
 տընիդ գոցէք . . . :

— Ո՛հ , բարբոսի՛ն գոցելու է . . . :

— Այո , անպատճառ գոցելու է :

— Բարի . . . ալ բան մը չեմ տեսներ :

Ֆէլէրէթ ալ զիտ չի կրնալ անսելուին համար
 քիչ մը վախտ անցու . և կամաց մը վրի թաշ-
 կինակը փակելէս վերջը կուրծք բանալով իմ
 գեղեցիկ աչակերտահար վրիտ տակէն համբոյր
 մ'առի , անձանթի եռանդ մը սիրտս բորբո-
 քեց . քանի կը համբուրէի , այնչափ սէրս կա-
 ւեցնար , և անդադար կը համբուրէի : Իսկ ֆէլ-
 րէթ բնաւ չէր ընդդիմանար , սակայն ցած
 ձայնով կը արանջէր :

— Ի՛հ, ըսաւ նա վերջապէս . . . զարմանքս կաւերնայ . . . ինչո՞ւ չեմ քնանար :

Չգիտեմ թէ այս առաջին դասս ինչպէս պիտի աւարտէի, եթէ ընկերս յանկարծ սենեակէն ներս չի մտներ այն միջոցին՝ երբ Քլէրէթը թեւերուս մէջ սեղմած էի : Այնքը տեսնելուս պէս սենեակին մէկ ծայրէն միւսը ցատկեցի : Քլէրէթի ինծի չափ չի չփոխեցաւ, աթոռին վրայ նստած մնաց . մէյնը իմ երեսու կը նայէր, մէյնը անոր երեսը, գործոյն վախճանին սպասող մէկու մը նման :

— Ի՛նչ կընէիք, սիրելի թաթուօս, ըսաւ ստպատողս ժպտելով . որ իմ խռովութեանս պատճառը դու չակամ էր :

— Կու . . . կուզէի սա երկտասարդ աղջիկը քնացնել :

— Ո՛հ . . . ինչո՞ւ այդչափ կաճաղորէիք . . . Դուք լաւ դիտէք որ ասի նախապատրուտութիւններ ունի, և Տիմոն ալ ժամանակը չէ . . . Դուք ինծի մտիկ ըրէիք, և ձեր այս մագնիսեան զօրութեան դասը ուրիշ ժամանակի մը ձգեցէք :

Ընկերս այս խօսքերն ընելով՝ նշանացի շարժումներ ըրաւ ինձ, զորս խիստ լաւ հասկըցայ . վերջը Քլէրէթի քօթն երթալով, որ դեռ աթոռին վրայ նստած էր,

— Սիրելի աղջիկս, ըսաւ, ուրախութեամբ կը տեսնեմ որ դուք բան սորվելու փափագ ունիք և մեր գիտութեանն ալ կը հաւատաք : Հոգ մի ընէք, մենք ձեր փափագածէն աւելի

բան պիտի սորվեցնենք ձեզ . . . մանաւանդ Պ. Թաթուօսը, որ այս արհեստը կատարելապէս գիտէ, և միայն աշակերտ հասցնելու փափագ ունի : Բայց հիմա ժամանակը չէ : Վարպետնիդ խոհարարն է ձեզ կուզէ : Կարելի է կերակուրները կայրին, մեր ընթրիքն ալ ուշ կը մնայ . անանկ եղածին պէս ես ալ կը բարկանամ : Վասն զի ախորժակս տեղն է, թըթուած համեմ և չորցած միս չեմ ուտեր : Ուստի հիմայ ելէք, գործերնիդ գացէք, սիրելի աղջիկս, վաղը մեր մեծ փորձերը պիտի սկըսինք . . . Եւ եթէ իմ փափագածիս պէս մընաք, մեր գաղանիքները կրնաք խիստ լաւ սովորել . . . Վաղը վերջապէս կը քնանաք, և կարթննաք ալ :

Չգիտեմ թէ Քլէրէթը ընկերոջս ինչ բան ուղածն հասկցաւ . ելաւ տեղէն և յարգանքով՝ ընելով մեկնեցաւ : Երբ առջիւէս կանցնէր, անանկ նայուածքով՝ ըրաւ ինձ, որ չգիտանալով երեսու անգին գարձուցի : Բայց իրեն նըկատմամբ զգացած սիրոյս զօրութեանն ալ չի կրնալով գիտող ըլլ, և իմ ընկերոջս բակիքներն ալ երբէք միւսքս չի բերելով, երիտասարդ աղջկանը հետ դուրս ելայ :

— Եթէ կուզէք, բարի իրեն, ցած ձայնով որ գիտցածս ձեզի սովորեցնեմ, բուէք ինձ, ո՞ւր է սենեակնիդ, գիշերը կուգամ ձեզ կը դասեմ :

— Ո՛հ, իմ ուղածս ալ այդ է . . . Սա սանդուխին ամենէն վերի գլուխը կեցնէք . . . ա՛յ

կողմերնից սենեակ մը կուգայ պղտիկ դռնով

... ևս դուռը կիսով բաց կը թողում:

— Շատ աղէկ:

— Բայց անպատճառ գալու էք:

— Ահնոգ եղիք:

Քլէրէթ մեկնեցաւ, ևս ալ ընկերոջս քով եկայ: Կը տեսնես որ սերը միջոց մը հնարել առած էր ինձ. Քլէրէթի հետ սեր հաստատելու համար ամէն ինչ քնել որոշած էի, բայց դեռ առանըհինգ ատարուան և քանի մը ամսուան էի. սակայն հաստատ դիտարորութիւն մը, եռանդուն շնորթիւն մը և զօրեղ առողջութիւն մը զիս խմանակէն առաջ այսպիսի պարագայից մէջ կը մղէին:

ԳՂՈՒՐ ՎԱՆ.

ՅԱԿՈԹՈՍ ՔԼԷՐԷԹԸ ԿԸ ՔՆԱՅՆԷ ՆԻ ՍՔԱՆՁՆԵԼԻՔ ԿԸՆԷ

Ընկերոջս քովը դռննալով կը կարծէի որ նա երիտասարդ օրերդ ին հետ անպատեհ վարմանքի մէջ դանուելուս համար խտիւ դիս պիտի լայնդ իմանէ. ևս ալ միտքս դրած էի իրեն ընելու որ բոլոր ուզածներս ընելու պայմանաւ իր հետը կը կենայի. բայց շատ դարձացայ տեսնելով որ նա ծիծաղելով և զուարթութեամբ դէմս ելաւ:

— Կերեւի, սիրելի ընկերս, բնու նա ինձ ծանր դէմքով մը, որ դուք ձեր հաշտոյն հռամար աշխատել կուզէք. բայց . . . այս բրածնիդ անխոհեմութիւն է: Այլ սակայն չեմ ալ ուզեր զձեզ նեղել. ևս ոչ ձեր հայրն եմ, և ոչ ալ ձեր ինամականը. և ազատ էք իմ խօսքս մտիկ ընելու ալ, չընելու ալ: Միայն ներեցէք ինձ որ խոհեմութենէ և մեր անձնական շահէն գրգռեալ ձեզի քիչ մը խրատ տամ:

— Մտիկ կընեմ:

— Ես կորովամտութիւն ունիմ. . . կարծեմ դուք այդ երիտասարդ աղջկիկը կը սիրէք:

— Ստուգի՛ւ. ատի իմանալու համար կուրովամտութիւն պէտք չէ:

— Բայց պէտք է դիտնալ որ նա ալ զձեզ կը սիրէ:

— Ինչու չի պիտի սիրէ:

— Որովհետեւ դեռ պատանի էք:

— Նա զիս երեսուն տարուան կը կարծէ:

— Կրաւ աղէկ ըսիք, ատիկայ բնու չի չեցի: Բարեմն պէտք է ատոր սիրտը շահիլ և մեզի ընկեր ընել. դուք քաջ գիտէք, սիրելի Յակոբս, որ քաջքի մը մէջ մեծամեծ յաջողութիւններ ունենալու համար, պէտք է որ հոն ընկերներ ունենամ կամ գտնեմ:

— Ինչ, մինակ չէ՞ք կրնար յաջողիլ . . . Երեւոյթիմ նայելով դուք խիստ ճարտար մարդու չէք նմանիլ:

— Սիրելի Յակոբոս, դուք նոր ճանա-

պարհորդելու կսկիւր. դեռ աշխարհին ինչ
 քլլալը չէք գիտեր. եթէ դուք ալ ինծի պէս
 սողիւժ քլլայիք, կը գիտնայինք որ աւելի խո-
 բամանկ մարդիկն անդամ յաջորդութեան համար
 այլոց օգնութեան պէտք ունին. ահա այս է
 ընկեր ըսածս. վաճառականներն կը համա-
 ձայնին իրենց ապրանքը աւելի ուղ ծախելու
 համար. զիտարական անուշն զօրաց համար-
 ապեաներուն հետ կը համաձայնի իրենց սաակին
 վճարմանն համար. դերձակը կը համաձայնի չու-
 խայի վաճառականաց հետ դերձակու հին ազախ-
 նոյն հետ, նուազ ամ ուք իրաքու հետ, վերջապէս
 շատ արհեստաւոր ներ ուրիշ արհեստաւորաց
 հետ կը համաձայնին օտակ իրենց գործոց յա-
 ջորութեանն համար, և կանայք ալ խիստ լաւ
 կը համաձայնին իրենց ամուսնոյն բարեկամացը
 հետ. Ասոնց ամէնն ալ, սիրելիս, ձեռնասու-
 ութիւն կըսուի. Ուստի զարմանալի բան չէ,
 երբ կախարդ մը կամ ձեռնախաղ (հօգ դասպալ)
 մ'ալ ուրիշ օգնութեան կարօտ քլլայ. . .
 Ասի գիւրախաբ ախմարեհուուն համար շատ
 քէշ, կամ բաւ ևս շատ լաւ է. որովհետեւ եթէ
 խարէտթիւն ըսուած բան չլլար, այս մասին
 անկարելի էր այնչափ հաճոյք մը զգալ. իսկ
 ես, կանխաւ պէտք ունիմ գիտնալու, թէ ին-
 ծի խորհրդակցելու եղող անձինքն ս'ոլ են. լաւ
 կը հասկընաք որ ես անոնց նման վճակ մը չեմ,
 եւ որպէս զի քնացած ատեննիդ կարող քլլաք
 ուրիշներուն թէ նոյն միջոցին և թէ անկից
 յանաջ զգացած ցուերն դուշակիլ, պէտք է

որ առաջուց ձեզի սարկցնեմ. Այս ամեն բա-
 նալ, եթէ Տէր կամեցի, տարակոյս չունիմ որ
 այն ցուերն կը բժշկուին. բայց պէտք է բազ-
 մութեան առջև բան մը երեցնել, և մարդիկ
 անանկ յատկութիւն մ'ունին որ սքանչելի բա-
 ներէն կախարդին և միշտ պիտի ախորժին և
 Ուստի, այս սպասուհին որ խորամանկ և խիստ
 արթուն աղջիկ մը կերերի, պէտք է մեզի բն-
 կեր բնել. դուք անոր սէր տուէք, ես ալ
 ստակ ստակ կուտամ. այս կերպով այսինքն
 զանի մեզի ընկեր բնելով կամ շատ երջանիկ
 կըլլանք կամ բնաւ չենք յաջողիր.

Ընկերոջն առաջարկութեանը վրայ զմայլե-
 ցայ. սէր տալ քչէրէթի, ափ իմ միակ մտած-
 մունքս էր, միակ վաժարքս էր. բայց և այն-
 պէս, թէև սապատողն անդադար խոհեմու-
 թիւն կը պատուիրէր ինձ, և զիս կը պարտա-
 ւորէր որ առանց իրեն հետ խորհրդակցելու
 բան մը չընեմ. բայց ես սպասուհւոյն գէշեր-
 ուան համար տուած ժամադրութեանս վրայ
 բնաւ իրեն բան մը չի խօսեցայ. վախնալով որ
 չըլլայ թէ խիստ անվայել բան է կամ դեռ
 չուտ է ընելով զիս արգիլէ, և ես ալ իմ խոռ-
 տացած առաջին ժամադրութիւն չի կատար-
 ելով անպատիւ համարուիմ.

Պարոն կրտսերայբիւս վերջը յայտնց ինձ
 քաղքին մէջ պրտաբերով ստացած արդիւնքը.
 արդէն համառօտիւ իմացած էր նա հոն տեղի
 ունեցած նորանոր գէպերը, դաւաճանու-
 թիւններն, քլլալիք պաշտօնատուութիւններն,

նոր հիւանդութիւնները, նկատողութեան առ-
նելու անձինքը, անզի ունենալիք ամուսնու-
թիւնները, բաժանումները, վերջապէս տեղ-
ւոյն ամենակարեւոր դիպումները: Պղտիկ
քաղքի մը մէջ շատ դիւրին է այսօրվոյ նշանու-
ւոր գէպքերն իմանալ: բուսական է որ մարդ
հասցողորմին, սփռիլին է որդաժամառն խա-
նութիւններ մէյմէկ քիչ ժամանակ անցընէ:

Ինկերս՝ իրեն օգտակար եղածներն միւսք
պահելու մասին խիստ ճարտար էր: Իր մշ-
տութիւնը շատ սուր էր. անով միայն շահեր էր
բուրը իր գիտութիւնները, և ոչ թէ այլոց
նման խելքով:

Իրիկուն եկաւ, ճակերնիւ բերին: Նախ և
առաջ պանդակապետը եկաւ որ սեղաննիւ շրտ-
կէ և ինչ ուղեւնիս հասկընայ, վերջը Գլէրէթ
եկաւ. տեսայ որ իր առաջին այցելութեան
չափ վտահայ չէր երևեր. այլ աչքերը ծուած
էր. և իմ ազդու նայումքին ու սպասողին
ալ ժպտաներուն բնաւ ու չազրու ի ինչ չէր ընէր:
Ասոր վրայ սկսայ չլուծիլ վարձաւորով որ չըլլոց
թէ գաղափարն ու գիտաս. որութիւնը փոխած
ըլլայ. գեռ. գաղանկ սիրահարութեան մէջ
համբալկ էի, և չէի գիտեր որ կին մը իր փա-
փաքները լրացած միջոցին դա՛նոնք ծածկելու
համար կարելի եղածին չտի քանք կընէ:

Վերջապէս դուրս ելաւ, և կըրցածն չափ
անճապարեցի ճաշ ըմպընելու համար: սակայն
ընկերս՝ որ սիրահարած չէր, երկար ատեն սե-
ղանէն չի գատուեցաւ. քանզի ամեն տեսակ

կերակուրներէն ալ կուտէր և իմ անորժակ
չունենալուս վրայ ալ կատակարանութիւններ
կընէր, առանց իմ մտատանջութեանս ճըշմա-
րիտ պատճառք գիտնալու:

Կերակուրը ընեցաւ, և մտանք պառկելու
սենեակնիս, ուր իրարու քով երկու անկողին
կար պատրաստուած: Ես խիզոյն անկողինս
մտայ պարեգոտս (բանձալոն) ոտքերսն իրայ
դնելով, որպէս զի վերջը գիւրաւ գանձմ: Ըն-
կերս ասոր քան անգամ սենեակին մէջ գաս-
նայէն և իր դեղի շիշերը և գեղահատի տու-
փերը կարգադրելէն ետքը, որով իմ անհամ-
բերութեանս առիթ տուած պիտի ըլլար, վեր-
ջապէս պառկելու կայանք տուաւ: Ես ալ այս
վայրկենին կըպատէի իբր նշան իմ երջանկու-
թեանս, որովհետեւ դիտէի որ անկողին մը-
սածին պէս խորունկ կերպիւ քունը կը տա-
նէր:

Հուսկ ուրեմն այնչափ ետանդով սպասած
վայրկեանս հասաւ. տեսայ որ բ՛կերս անկող-
նոյն մէջ կը խորգայ. . . Ելայ անկողնէս, հա-
գայ պարեքոտս, և առանց ոտքի ամաններս
հաղներու համար ժամանակ անցնելու, գայի
դրանը քով, կամոց մը դուռը բացի, և ե-
լայ սանդուխն վրայ:

Կոյրի նման աղբիս անդին շոյափելով, բո-
պիկ ստքով, շունչս բռնելով և առանց ձայն
հանելու սանդուխէն վեր ելայ, պանդակին
մարդիկն արթնցընելէ վախնալով, որով ես զիս
այսպիսի նոր և փափաքելի երջանկութենէ մը

զրկուած պիտի տեսնէի : Վերջապէս հասայ ս-
րուշեալ տեղը . ելայ սանդուխին վերի ծայրը .
թեթեկ կերպիւ հազի մը ձայն առի , և իմա-
ցայ որ Գլէրէթի մասն եմ : Յիրաւի կիսարայ
դուռ մը գտայ , և կանթեղի մը լուսով տե-
սայ զԳլէրէթ որ ինձ կըսպատէր :

Երիտասարդ աղջիկը պղտիկ շրջազգեստ մը
և սպիտակ մը հագած էր , սնշուշտ գիտնալով
որ քնաչորջիկ ըլլալու գաղտնեաց համար զար-
գարուիլը անօգուտ բան է : Բայց և այնպէս
բնաւ կին մը կամ օրիորդ մը անոր շարի հրա-
պուրել չէր կրնար ըլլալ ինձ համար , և ես ալ
իւր վրայ տեսած գրասիչ գեմերս ուրիշի վրայ
տեսած չէի :

— Ձեզ կըսպատէի , բաւ նա ինձ , սն ու-
րեմն շարունակենք այն գաւր զոր ձեր բնկերն
այսօր այնչափ անլարմար կերպիս ընդ մէջեց . . . :
Շատ կը փոփոխիմ գիտնալ թէ զիս ինչպէս
կրկին երիտասարդ պիտի ընէք :

— Դուք կրկին երիտասարդ ըլլալու պէտք
չունիք , ըսի իրեն , բաւական է որ էք , այն-
պէս մնաք :

— Այո , իմ ուզածս այլ այդ է . . . սն ու-
րեմն . . . ահաւասիկ ես զորեկուսան նման կը
նստիմ ու աչքերս կը գոցեմ :

Եւ առանց իմ հրահանգիս սպասելու , Քը-
լէրէթ գնաց իր անկողնոյն ծայրը նստաւ , ա-
նոր համար որ իր սենեակին մէջ միայն աթոռ
մը կար , և այն ալ այնչափ հաստատուն չէր
երևէր մաքնիսեան գորտթեան փորձն բնելու

համար . ես ալ գաջի քովը նստայ . և սկսայ իմ
փորձս շարունակել . և Գլէրէթ որ աչքերը գո-
ցած կըրեմն ալ խօքերը կընէր .

— Ինչ . . . միայն այդպի է . . . այս կեր-
պով մարդ երիտասարդ կը մտայ . եթէ այս է
Պետրոս և Դէրով (1) ալ այդպիսի սարվեցուցած
են ինձ :

Ես առանց իր բաժնետերուն ունին գնելու շատ
անգամ իմ փորձս ի գօրծ գրի , և վերջապէս
Գլէրէթի թեկեալն մէջ քնացած էի , նայիտ
կարծր ձայն մը մէջ երկուքս ալ արգնցուց :
Այս ձայնը մեր ներքին սենեակէն կուգար . ու-
րջակի լսեցինք յանդիմանութեան ձայն մ'ըլ-
լալը , ստի պանդոկասպետին ձայնն էր որ զԳլէ-
րէթ կը կոչեր և ճրագ կուգէր :

Հիմա ինչ ընել պէտք էր . եթէ պանդո-
կասպետը յանկարծ վեր գար , ուր պէտք էր
պահուելով . Գլէրէթի սենեակէն զիս պահելու
համար տեղ մը կամ բան մը չկար : Ուստի երի-
տասարդ աղջիկը զիս դուրս հանց և աղաւեց
ինձ որ զինքը իր տիրոջը բարկութենէն ազա-
տեմ . վասն զի նա չէր յուսար որ իր պանդո-
կին սպասուհիները իրմէ զատ ուրիշի սեր տան

Երբ նա իր կանգեղը մարելով գայլախողը
(ազմադ թաք) սկսաւ զարնել , որպէս թէ
ճրագը վառել ուղերով , ես սանդուխէն վար
իջայ , չգիտնալով թէ ինչ պիտի պատահա-
նեմ : Հաջիւ թէ վարի ծայրը հասայ , նայիտ մէ-

(1) Պանդոկասպետին երկու ծառաներն են :

կը քայն եկաւ և թեւէս բռնելով սկսաւ ի վար ըստա :

— Գնաչըջիկ ձեացիր . ես անմարտադու թիւն մ'ունեցայ , և մեր պանդոկապետին սենեակը գործարան կարծելով հոն մտայ , և մութ տեղը թմանի ուսուման (չորստ քետաէտի) մը դռնելով միզանոց կարծեցի և . . . Աստնք ամենքը լուէք , մի վախնաք , ես ձեզ կաղտանմ :

Այս խօսքերն ընտը իմ ընկերս էր , որուն ձայնը առնելով քաջալերուեցայ : Պանդոկապետը՝ ճրագ չի բերուելուն համար համբերութիւնը հատած անձտաբ ֆլէրէթի սենեակը ելաւ , որ առանց վրան ուրեթի (դառ) գնելու իր գայլախաղը շարունակ կը զարնէր , որն որ առանց բան մը վառելու՝ կրակ չիսելու անօտայ միջոց մ'է : Վերջնապէս պանդոկապետը լաւ վառուած երկու ճրագով նորէն վար իջաւ , և իր սենեակը մանելու վրայ էր , երբ յանկարծ տեսաւ զիս որ սրահը կը պատէի , ծանրաբայլ և միայն չսպիկով մը , պարե թօտա ալ թեկա տակն առած , զոր հաղնելու մամանակ էի գտած :

— Այս ինչ կը նշանակէ , ըսաւ պանդոկապետը վախով խառն գարմացմամբ մը զիս քրննելով . ինչ կընէք հոս , պարոն . . . ինչ բան ունիք , ինչ կը փնտաէք հոս գիշեր ստան և մերկ : Արդեօք իմ սենեակս մնաղ և թմբուկի թնդիւնի նման խաւ աղաղակ մը հանելով զիս արթնցնող և միանգամայն չորս կողմն գարշահոտութիւն մը տարածող դձուք էիք : պատասխանեցէք նայիմ :

Պանդոկապետին այս հարցումներուն բնու չի պատասխանեցի . և միշտ դանդաղաբայլ կը ձեռէի . նա երկու ճրագը ձերքը շարունակ ետ ևս կուդար , և Պետրոս ու Ճէրոմ , որ իրենց արջըը ձայնը առնելով հոն եկած էին . ամենին բան մը չի հասկըցած դէպքին վախճանին կըսպառէին , վերջապէս պանդոկապետին սենեակէն խաւ մանջիւն մ'է եկաւ :

— Ահ , ըսաւ պանդոկապետը , պանդոկս մէկը մտած է , շուտ ըրէք , Պետրոս , Ճէրոմ , հետս եկէք :

Երեքը մէկէն վար իջան և տեսան որ սենեակին մէջ պանուողը ընկերս էր . ես սրահը մնացի , և լսեցի պանդոկապետին ձայնը որ ընկերջնա ուստիկ ըլայրացած կերևէր : Այն ատեն իմացայ որ այետք էր երկու զիրենք խաղաղըննել . ուստի ամենայն ծանրութեամբ իջայ կռուոյ սենեակը : Երբ զիս տեսան , կոխնին դարբեցուցին :

— Լսեցէք . . . լսեցէք . . . ուշագրութիւն ըրէք , ըսաւ ընկերս ցած ձայնով . աշուտակի թուաւ եկաւ , քնաչըջիկ կըսած է : Կեցիք որ փէ մը հետը խօսակցիմ , և պիտի տեսնէք որ իմ այս գիշերուան բոլոր ըրածներս պիտի պատմէ :

Իսկայն սուպատոզս քովն եկաւ . բանի մը անդամ ձեռքերն երեքոս առ Վն անդուց և դարձուց , ցուցամտաբ քթիս վրայ դրաւ , որպէս զի , ըսաւ , յարարերութիւնս հատաւտուի . և

սկսաւ սա հարցումներն ընել ինձ, որոց պա-
տախանեցի .

— Այս գիշեր ի՞նչ տեսակ ցաւ ունեցայ .

— Փորի ցաւ .

— Ղերջը .

— Սրտի ցաւ .

— Ուրիշ .

— Ինի՞ժ (տանձի) :

— Տեսա՞ք, ըստ ընկերս դարձացմամբ
լցուած ունկնդիրներուն դասաւարտի, թիչ մը
յառաջ ըստմա ելաւ .

— Բայց շարունակէնք, գեռ այս բան մը
չէ . կը հաստե՛ժ որ բարբ ըստմա ալ պիտի ը-
տէ . . . Այս ցաւը ո՛ւսովից յառաջ եկաւ .

— Ամաբարտդոյթ ե՛նէ մը .

— Այս անմարտդոյթ ի՞նչը .

— Շատ կերակուր ուտելէդ .

— Իբրա որ շատ դարձանալի բան է այս,
ըստ պանդոկապետը իր երկու ծառայներուն
մէջ սեղմուկով .

— Լսեցէք . . . ըստ ընկերս, մի ընդ մի-
ջէք մեզի, ի՞նչ ըրի այն ատեն .

— Անկողինէն ելաք .

— Ի՞նչ նպատակաւ .

— Գործարան երթալու նպատակաւ . . .

— Ճրագ առի՞նք .

— Ո՛չ չունէիք .

— Ուրեմն ի՞նչպէս վար ի՞ջայ .

— Կոյր զիւրայն .

— Կը լսէք, պարոններ, կոյր զիւրայն

վար ի՞ջայ, որովհետեւ ճրագ չունէի. նայեցէք,
ինչպէս ամեն ինչ ճշգիւ կը խօսի: Շարունա-
կէնք ու՛ր գայի:

— Սրահը. հոն գործարանը ձախ կողմը
բլլալով վստանակ դէպ ի ձախ երթալու աջ
կողմ գացիք, և սխալմամբ պանդոկապետին
սենեակը մտաք .

— Ի՞նչա լաւ: վե՛րջը .

— Հոն թանի ոտոման մը գտաք և այս
ամանը միզանոց կարծե՛րով մե՛ջը . . .

— Շատ լաւ գիտցաք. ուրի՞շ .

— Այս ձայնէն պանդոկապետն արթնցաւ,
սկստ պոռալ, ճրագ գտնելու համար դուրս
եկաւ, և նոյն միջոցին դուք ալ ոտոմանը այս
անկողնոյն տակը պահեցիք .

— Շատ աղէկ . . . Հիմա նայեցէք, պա-
րոններ, սա ըսածին մէջն ալ սխալ կա՞յ .

Ծրառներն արդարև ոտոմանը գտան ան-
կողնոյն տակ, զոր բլիժե՛րին սեղմելով նորէն
տեղը գրին: Պանդոկապետը շուտեցաւ մը-
նաց. ոտոմանին մէջ գտնուած մեի ջուրին կոր-
սուելուն վրայ թիչ մը զայրացաւ. վասն զի այն
ջրով բոլոր շարափը թան պիտի երկեր: Ինկե-
բըս պանդոկապետին ըրած մեծ կորուստը տես-
նելով, թովս մտտեցաւ և ըսաւ .

— Այս կորուստը պատճառելէս ի վեր իմ
դիտաստութիւնս ի՞նչ է:

— Պանդոկապետին տասնեկու Քրանդ
տալ ֆեստը տուածելու համար .

— Տեսա՞ք, ի՞նչ աղէկ գիտցաւ . . . տաս-

ներկա ֆրանսի . . . Ես ալ հիմա ձեզի այսպէս
չքով, սիրելի պանդոկապետս, ձեր բարկու-
թիւնը ինչնեղու համար:

— Ոչ, պարտն, կերգնում որ այն մասին
բնաւ բառ մ'տեղամ չըսեք:


— Այո . . . բայց ընդուն ծայրն էր: Հիմա
կը յուսամ որ ալ գոհ եղաք . . . ուրեմն ըն-
կերս արթընցնեմ:

Այս բռնով քոյս մտեցաւ . պղտիկ մա-
տին ծայրովը զիտ խիժեց, Գլուխ ցնցեցի և սկոյ
աչքերս շփել ջնէն արթնցող մտղու մը նման,
և հարցուցի թէ ես հոս ի՞նչ կ'ենմ:

Ընկերս պանդոկապետին ու իր ծառանե-
րուն երևոք նայեցաւ . սցնչալի զարմացած էին
այս տեսածներուն ու լուսմներնուն վրայ, որ
զիս իբր ասորորինակ էակ մը կը նկատէին:

— Հիմա, ալ երթանք պառկինք, բոս
ընկերս ճարգնեքէն մին առնելով: Վաղը, պա-
րոնայք, կը խոստանամ որ ուրիշ շատ զարմա-
նալի բաներ պիտի տեսնեք, եթէ թողուք մեզ
որ խաղաղութեամբ մեր փորձերն բնենք:

Ընկերս թիւ էս բռնելով միատեղ սենեակ
դացինք, թողլով սենեակը պանդոկապետն
ու ծառաները որք փոփոխակի զիտը կապա-
հովէին թէ բոլոր տեսածնին ստոյգ էր:



ԳԼՈՒԽ ԺԲ.

ՍԱԳԱՏԱԳԻՆ ՄԵՆԱՄԵՆ ՓՈՐՉԵՐՆ

Երբ սենեակին դացինք, ընկերս բազուկ-
ներս նետուեցաւ և ուրախութեամբ զիս դըր-
կելով:

— Բարեկամս, խիտ դո՛հ եմ քեզմէ, բոս
դուք ձեր մասը խիտ յաջողութեամբ կատա-
րեցիք . . . Որչափ թանկագին տղայ մ'էք
եղէր, դիտեցէ որ գործերն յաջող է: Այս
գիշերուան դէպքը մեր համբաւը պիտի տա-
րածէ:

Այսպիսի վտանգաւոր դէպք մը անջնատ
ազատեցնուս վրայ դո՛հ եղած պառկեցանք:
Ես ֆէէրէթի, իր և սնոր հաճոյից և ինձ պատ-
ճառած ու տակաւին անկէ վայելելիք զուար-
ճութեանցս վրայ խորհելով քնացայ, ընկերս
ալ իր համբաւը այնչափ ազէկ տարածուած
այսպիսի քաղբի մը մէջ ընկելք առաջին հան-
դէտով շահելու ստակը հաշուելով:

Սապտոզոս սխալած չէր ըսելով թէ այս
գիշերուան դէպքը շատ հետաքրքիր մարդիկ
պիտի բերեր մեր քով: պանդոկապետին մար-
դիկը առտուն կանուխ ելնելով քաղբին ամեն
կողմի գացած ու տեսածնին և լսածնին պատ-
մած էին: Սափրիչներն, հալազորմները և նը-
պարավաճառները ամենէն յառաջ իմացած ըլ-
լանուն մեր այս արհեստը սկսած էին համբա-

ւել: Դէպք մը բերնէ բերան պատմուելով
այնչափ կը մեծնայ, որ մարդս շատ անգամ
հաղիւ թէ կրնայ բուն իր պատմածը յիշել:
Թէեւ այն դէպքը իր գլուխն ալ պատահած
ըլլայ: Իսրաքանիւր ոք կրնայ իր լսածին վրայ
գիւրաւ եղական կամ սքանչելի բան մ'ալ ա-
ւելցնեն, և ուղածին օլես ընդլայնել: ա-
հա ասոր համար է որ առուն ստասիկ հեղեղ
մը կըլլայ, անխալ ճառախօսութիւն մ'ընող
տղան փիլիսոփայ մը, ձերնախաղն վհուկ մը,
փիչ մը գեղեցիկ ձայն ունեցողն ստիակ մը մի-
այն իր հայրենիքը սիրող մարդն ալ իր շահէն
զատ ուրիշ բան չի սիրողին առջև կասկածելի
կերեւի, և գիտաւոր մ'ալ աշխարհիս կատա-
րածը կիմացընէ: Ծարուհակնէք:

Հետեւեալ օրը սպասուհի մը նպարաժաճա-
ռէն խահուէ գնելու երթալով նպարաժաճա-
ռին աշխարհը կիմացընէ իրեն որ Թէթ-Նուա-
րի պանդակը երկու տարրինակ մարդիկ եկած
են, որոնք որ և մէկուն ըրածն ու ընելիքը ը-
սելու կարողութիւնն ունին:

— Իրա՛ւ կըսես . . . ուրեմն երթամ տի-
բուհիս բսեմ, անցնայ իրկիւն նա իր հօրեղբոր-
որդւոյն հետ պատեցաւ, և չուզէր որ ամու-
սինը այս բանն իմանայ. երթամ բսեմ իրեն
որ պարտալ տեղը վճուկներուն ստակ չի տայ:

— Ի՛նչ լուր, բսաւ մարդ մ'ալ իր սասի-
րիչն առջև նստելով և ամիլելու անձեռօցն
կուրծքին վրայ նետելով:

— Ի՛նչ լուր, պարոն Սօլամօն . . . Զար-

մանալի լուր մը . . . եղական լուր մը . . . հի-
անալի լուր մը:

— Այդ Ի՛նչ լուր է, բարեկամ, կաղաչեմ,
բսէք:

— Ի՛նչ պիտի ըլլայ. սա երէկուան օրս
Թէթ-Նուարի պանդակը եկող երկու օտարա-
կաններն . . . երկու ստառուներն իրենց փոր-
ձերը ըրած են:

— Իրա՛ւ կըսէք:

— Այո, Ժէրօմը պատմեց ինձ, որ նոյն
պանդակին ճառան ախանառես ու ականջա-
լուր վկայ մ'է:

— Վայ չար սատանայ . . .

— Գիշերաշրջիկը այս գիշեր իր գիշերային
փորձերն ըրեր է:

— Գիշեր տտեն . . . ըսէ՛ք որ այդ գիշե-
րաշրջիկներն գիշերատես են եղեր:

— Այո, պարոն, գիշե . . . ինչպէ՛ս ըսիք,
պարոն Սօլամօն:

— Գիշերատես, բարեկամ:

— Գիշերատես են, այո . . . Բայց գիշերա-
տես ըրածնիդ ի՛նչ կը նշանակէ:

— Կը նշանակէ գիշերը աղէկ տեսող:

— Հա, հիմա հասկըցայ. սըլոր կատու ըր-
սէ՛ք. վասն զի կատուներն ալ գիշերը աղէկ
կը տեսնեն: Բայց այս Թէթ-Նուարի գիշերա-
շրջիկը բոլոր ըրածնիդ կը գուշակ եղեր. և
այս գիշեր ալ անանկ եղելութիւն մը յայտնե-
ր է որ բնաւ մէկը չգիտէ եղեր . . .

— Ո՛հ, հանկրոջայ . . . վարդի ծաղկամանք
(սագսր) յայտնեք է . . .

— Չէ, վարդի ծաղկաման չէ, կեցիք որ
պատմեմ: Այս գիշերաչորջիկին ընկերը գիշերը
պառակած տեղը փոփեցաւ, խիթ ունեցեցր է:

— Կարելի է կերակուրները զինքը տարեր
են, որովհետեւ թէթ-Նուարի պանդոկը աղէկ
կերակուր չեն եփեր: Անգամ մը այդ պանդոկը
որթու խորոված (տանա գըզգթմասը) կերայ,
երեք օր ստամոքսիս վրայ մնաց, որովհետեւ
հետը հնդկաբնիկու խառնեք էին որ ինձի կը
գպչի: Լուսած բան է որ այդ կերակուրին
մէջը հնդկաբնիկու դրուի:

— Իրաւունք ունիք, այդ պանդոկը համ-
բաւուածին չափ աղէկ չէ. վասն զի քրոջս
հարսնիքին . . .

— Կեցիք, որ քոյրերնուդ հարսնիքին:

— Սա պարոն Լակրիբին առինք . . . փոխ-
քաղաքապետի տան տախտակամանք (տէօ-
չէմէ) մաքրողին . . . չի ճանչցաք . . . աչքե-
րը կապոյտ և քիթը կարմիր մարդ մ'է:

— Այո, այո, սա հնակարկատին (էսկիծի)
կնոջմէն զուակ մ'ունեցեք է, ըմբն, այն չէ:

— Ո՛հ, առի սուտ խօսք է . . . այդ խօս-
քը գէշ և զրարան մարդոց տարածայնու-
թիւնն է:

— Չդուշացիք, բարեկամ երեսս պիտի
կտրեք:

— Չէ, չէ, մի վախնաք. երեսներնուդ
վրայ յարդի շեղ մը կար, անձիւն (ուստուրա)

գարձուց . . . Աղէկ գիտցիք, որ եթէ այդ
բուսանիդ ստոյգ ըլլաք, քոյրս հետը չէր ա-
մուսնանար:

— Ինչու առանկ կըսէք, բարեկամ, մեր
մէջը, ձեր քոյրը . . .

— Ինչ բան կուզէք, պարոն Սօլվածօն:

— Բաւական է, պարոն, քիչ մ'ալ փոշի
(բուտրա) քսեցէք, և քնաչորջիկին պատմու-
թիւնը շարունակենք . . . Գուք ըսիք որ այս
գիշեր իր ընկերոջը խիթը բժշկեք է:

— Ես ձեզի բժշկեք է չբի, այլ թէ ամե-
նադաղանի իրողութիւնները երեսան հաներ է,
և առնցմէ զատ թանի ստոման մ'ալ որ պան-
դոկապետին անկողնոյն տակն է եղեր:

— Այդ թանի ստոմանն հաւանականաբար
գողցուած և միջու զոյն երեսան հանելու
վայրկեանը պահուած ըլլալու է:

— Խիտս կարելի է. բայց սա ստոյգ է որ
ստոմանին մէջը գտնուածն ալ ըսած է:

— Արդարև հոդ է գժուարութիւնը. թե-
րօմ բուսու ձեզ թէ ստոմանին մէջ ինչ կար:

— Ստուգիւ. անոր մէջ այդ մո՞գ է, բը-
ժիշկ է, սպապտո՞ղ է ինչ է, ատոր ընթրիքը
կայ եղեր:

— Այդ կէտը զիս կը զարմայնէ . . . ընթ-
րիք մը ուտել և զոյն իր բնական վիճակաւը
կրկին դաննել, ճշմարիտն ըսելով տախտակայ
կարգի խաղ մ'է:

— Բայց, պարոն Սօլվածօն, ես ձեզի չբի
որ ընթրիքը իր բնական վիճակաւը անոր մէջ

դանուեր է . . . հոն դառնուածը խիժի ար-
դիւնք է եղեր :

— Աստուած պատուհասնիդ չի տայ . Ինչու
երկու ժամ է զիս ստոմանովը կըզարդեցնէք
ու մէջը դառնուածը ճշգիւ չէք բեր . . . Գիշ
մը անուշահոտ իւղ (բովսթա) քսեցէք
զլուխս :

Վերջապէս այս պարոնն լաւ մը կամ իբր
ու կը զարգարուի , և սափրիչը զայն թողլով
կերթայ ուրիշ մէկ յաճախորդին , և հոն ալ կը
պատմէ զայն փոփոխութեամբ կամ իր քովէն
ալ բան աւելցնելով : Որչափ զուարճալի բան
է այսպիսի մարդոց համար լուր մ'ունենալը և
անոր վրայ իրենց քովէն յաւելուածներ ընելն
Դիտեմ ընթերցողք պիտի բռնէ ինձ :

Պարոն հեղինակ , որչափ շատախօս եք եղեր , որ
քաղքին մէջ տեղի ունեցած այս մանրամասն
խօսակցութիւններն ելեր ձեզ հեղինակութեանը
մէջ կը պատմէք : Ասկից զատ եղբայր Եսկու-
բոս այս սափրիչին ու իր յաճախորդին և սպա-
սուհւոյն ու նպարալաճառի աշխրոթին մէջ տե-
ղի ունեցած խօսակցութիւնը ուսկից իմացած
էր որ իր Սան-Սուսի բարեկամին այ պատմեր է :

— Ընթերցող , իրտունք ունիք , յանցաւոր
եմ . ալ այսուհետեւ իմ բուէլ ուզածս եղբայր
Եսկուբոսին դեպքերուն հետ չի պիտի խա-
նեմ , և բուն պատմութիւնը շարունակելու հա-
մար թողում որ ալ ինքը խօսի իր դէպքերը :

Հազիւ թէ առաստուն արթնցած և դան-
դակը զարկած էինք մեր նախաճաշը ուզելու

համար , նայիս պանդոկապետը սենեակնիս մը-
տաւ ձեռքը մեծ թուղթ մը բռնած զոր ըն-
կերոյս ներկայացուց :

— Պարոնայք , ըսաւ մինչեւ գետին խոնար-
հելով ու բորեւելով , ահա առիկ այն անձանց
ցուցակը որք կը փափագին այս իրիկուն գալ
ինքզինքնին ձեզ ցուցընէլ , և իմ պանդոկոս ալ
արձանագրուած են :

— Ի՞նչաւ լաւ . . . տուէք . . . այս ան-
ձանց անուններն , մականունները , տարիքն ու
պաշտօններն ալ նշանակած էք :

— Այո , պարոն :

— Բարի . . . Հիմա դացէք չուտով ձեր
սպասուհին հոս զրկեցէք . այս իրիկուան հան-
դիսին վերաբերեալ հրամաններ ունիմ իրեն
տալու :

Պանդոկապետը իր իշխանին անցնելը տես-
նող Չինացիի մը նման խոնարհելով դուրս ե-
լաւ սպասուհին անիմպայէս մեր սենեակը
զրկելու խոտամար :

Ընկերս թողի՞ր բացաւ , և տեսաւ որ բա-
ւական մեծ էր , և շատ աշխրտանբու օգնու-
թեան պէտք ունէր : Արդէն սկսած էր բարձր
ձայնով կարդալ և գուշակութիւններ ընել ,
երբ Գլէրէթի եկաւ :

Երկաստարգ սպասուհին ինչո՞ւ չիոթած
կերեւէր . ալ բերք գետին ծռած և ձեռքերն
ալ գոգնոցին յարած էր : Իսկ ես սաստիկ կար-
մըրած ինչ ըսելիքս չէի գիտեր , Գլէրէթի ներ-
կայութիւնը զիս բողբոջին բորբոքելով կա-

տարեկայէս սիրահարուեցայ անոր. իրեն նը-
կատմամբ ճշմարիտ կիրք մը կղգայի. և գի-
շերուան ինձ յայտնած սիրոյ նշաններուն նա-
յերով կը հաստատայի որ նա զիս անկեղծաբար
կը սիրէր: Ուտտի միտքս գրած էի որ եթէ ինձ
բռնէին թէ կամ այս ազնկանը հետ պիտի ա-
մուսնանաս, և կամ անկէ ետ պիտի կենաս,
առանց տարակուսելու ձեռքս կուտայի. և
ինչ որ ես կղգայի, կը հաստատեմ որ ուրիշ
չատ մարդիկ ալ ինձ նման կըղգային: Սէրը իր
առաջին օրերուն մէջ շատ քաղցր կըլլայ. . .
Ահ, սիրելի Սան-Սուսիս, ես այն ատեն խիստ
երիտասարդ ու խիստ համբալ էի. անկէ վերջը
իմացայ որ մարդս որչափ փորձառու ըլլայ,
այնչափ իր կէրքերը կանցնին:

Ինկերս ելաւ սենեակին դուռը գոցեց. պէտք
էր որ դուրսէն մէկը մեր ֆլէրէթի հետ ը-
նկիք խօսակցութիւնը լսէր: Վերջը քօփերնիս
եկաւ. և այնպիսի բարձրաձայն ձիւնաղով մը
սկսաւ խօսիլ, որ ապշութեանէս աչքերս բացի,
և ֆլէրէթ ալ իր գոգնոցին ծայրերը ձեռքէն
թողուց:

— Բարեկամներս, դուք գեռ. քիչ մը պարզ
էք, ըսաւ մեզ. դուք սիրելի Յակոբոս, այն-
պիսի ազնկան մը սիրահարուած էք, որ վայր
ձեր վրայ չի պիտի խորհի, և դուք ալ, փոք-
րիկ ֆլէրէթս, վնուկներուն կը հուստառք և
այնպէս կերեակայէք որ մարդս կրնայ բոլոր
կենացը մէջ երիտասարդ մնալ: Մենք այլոց
նման վնուկներ, սիրելի ազնկէս. բայց պէտք

է որ դուք մեզի օգնէք այս ցուցակաւ մեզ
ներկայանալիք անձանց հանգամանքներն ու
դէպքերը կանխաւ մեզ իմացընելով: Մեր այս
ըսածը ընելու պարտաւոր էք, նախ՝ որովհե-
տեւ ասով առիթ պիտի ունենաք խել մը արև-
մար անձացի վրայ ձիւնաղելու, որն որ միշտ
հաճելի բան է, և երբորդ՝ որովհետեւ մենք
ձեզի առատ փոխարէն պիտի վճարենք. ես
ստակ պիտի տամ. այս երիտասարդն ալ սէր.
եւ եթէ այս ըսածնիս չընէք, այսպիսի պըղ-
տիկ քաղցի մը մէջ հարուադիւս եղած մե-
ծամեծ շահերէ պիտի զրկուիք:

Այս ըսելով հանց ֆլէրէթի ձեռքը երկու
դաղընակն ոսկի դրաւ, և ֆլէրէթ տեսնելով
որ ընկերս ամեն բան իմացեր է, ժպտելով ըն-
դունեցաւ. և խոստացաւ որ մեզի հետ ընկե-
րանայ: Ամէն ինչ այսպէս կարգադրուելէն
վերջը՝ պարոն կրասօրոյս իւս հրամայեց ինձ
որ սպասուհւոյն ըսածները գրեմ, որպէս զի
չի սխալինք, և սխալ ինքը լմուղիմ կարգալ-
հոն գրուած անձանց անունը տարով, որոց
հանգամանքն ֆլէրէթ խիստ աղէկ կը բա-
ցատրէր:

— Անէթ-Սիզան-Լոթէլ կիներ, երեսունը
վեց տարեկան:

— Այդ կինը կըստէ, և գրեթէ քառա-
սունը հինգ անգամ սուս խօսած է. ինքը ա-
մուսնանալ կուզէ, բայց ամուսին չի կրնար
դանել. պատճառն որ կաղ է, և շատ ծխա-
խոտ կը գործածէ. . . :

— Այսպիսի բաւական է :

— Անտոն-Նիկողայոս Լա ժիրօտիէր քառասունըմէկ տարեկան պաշտօնեայ քաղաքագետստութեան :

— Աօր խոտր և բոլորովին կլոր մարդ մ'է, տեսակ մը փոշի հնարել կուզէ : կարելի է ձեզի դիմելուն պատճառը ձեզմէ խորհուրդ մը խնդրելն ըլլայ :

— Անկարելի բան . . . Ատոր համար ալ այդչափը բաւական է :

— Հա, կեցեք . . . Իր կինը չորս ազնիկ զաւակ ծնած է, և ինքը բարկացած է կնոջը մանչ չի ծնելուն համար :

— Հասկցայ . . . Եսել է թէ կուզէ որ մանչ ծնելու համար ճամբայ մը յուցընեմ : Անցնինք : Բովիւալտ-Սէզլոր-Հէրթոլ-ար-Ղասուչ, կուսակալ Վիէօ-Պուսոնի, եօթնստուներ հինգ տարեկան, հին որսորդացեալ, հին կայսերական պահապան զինուոր, հին պալատական պաշտօնեայ, հին . . . Զարմանալի բան այս մարդն իր պաշտօններուն վրայ հին բառն աւելցնելով ինքզինքը պատուել ուղած է . . . Յայտնի է որ ալ ոչ ձի կրնայ հեծնել, և ոչ ալ որօր երթալ . . . Ինձմէ ինչ կրնայ ուղեւ :

— Այդ մարդն ալ աս մտաբեր պզտիկ երկիր մը դնած է. և իր այդ երկրին մէջ զբռնուած հպատակներուն հետ միշտ կուի կրնէ : կենթադրէ որ ստոնք նստպատակ եղած ըլլան :

— Նստպատակ : Ի՞ր հպատակները :

— Ոչ, կեցեք . . . սխալեցայ . . . եղջերու, եղջերու (կէյիկ) :

— Հա, հասկցայ ինչ քսել ուղեղիդ . . . եղջերու ըլլալու են :

— Կուղէ այ որ երբ իր հպատակներն հարսնիք մ'ընեն, հարսը դայ ժամ մը իր հետ առանձին նստի : կարելի է որ իր հպատակները որք գիւղացի են, իր այս առաջարկութիւնն ընդունին : ասա ասոր համար հետեորնին միշտ կուի կրնէ :

— Շատ աղէկ : այդ մարդուն յատկութիւնն ալ բաւական իմացայ : Անցնինք : Անժէլիք Բրիւտով, երեսուն երկու տարեկան, մեծամեծ անձանց ճերմակեղէններն լուացող կլին մը . . . Ո՞չ, ինչ մեծ պատիւ է այս :

— Հա, այդ կինը հանրածանօթ է քաղքին մէջ . . . պարպապահ զորաց զբողոքաներուն ճերմակեղէններն կը լուայ և անոնց հետ պարահանդէս կերթայ . . .

— Ըսել է որ գեղեցիկ կլին մ'է :

— Այո, այո, կնճռոտած գէմք մը . . . համարձակ կերպարանք մ'ունի, հեծեալ զբահաւորի մը կը նմանի . . . տաներկու հոգիէն աւելի անձանց ձեռ ուտելուն պատճառ եղած է, և վերջին անդամալ, քաղքին հանդիսուոր օրը, փայտատաւորի (պալթածի) մը խոտանալով որ իր հետ չըլլապայելու երթայ, իրխոտմանքը չի կատարելուն և թմբկահար զինուորի մը հետևող պարելուն համար փայտատաւորը եկաւ զինուորին հետ կուրի բռնուեցաւ . . .

կուիւք պիտի մեծնար, եթէ իր այլը վրայ չի հասներ . . . Բարերարդարար եկաւ և երկուքն ալ հանդարտեցուց ընելով զինուորին որ իր կինը չէ թէ իր խոստմունքը կատարել չուզած էր, այլ մոռցեր էր :

— Այդ մարդը խիտ աղէկ վարմունք մ'ունի եղեր : Այս ալ անցնինք : Քինէն կ'օնա-Ալին թրույեար, քսանը չար տարեկան, շատ յաճախորդ ունեցող խանութպան մը :

— Հա, այդ ալ լեմունջուր ծախող կ'ին մ'է . . . Ինքը միշտ սրտի, գլխու ցաւ ունի, վերջապէս ամեն օր գրեթէ հիւանդ է, և դեղը տունէն և խանութէն չը պահիր :

— Ատի դեղագործներուն համար խիտ թանկագին կ'ին մ'է :

— Իր այլը քիմիադործ ըլլալու փափագ ունի. Ծներեկի (գուշ գօնմազ) սերմով խահուէ, և չորգամով (չալկամ) շաքար կը շինէ : Ապահով եմ որ ասոր համար ձեզմէ խորհուրդ ուզելու պիտի դայ :

Ես քիչէրէթի խօսածները միշտ կը քբէի, և դրեթէ ցուցակը շնորհակցած էինք, երբ դուռը զարնուեցաւ : Գացի բացի, տեսայ որ պանդօկապեան էր. եկաւ իմացուց մեզ որ Պ. քաղաքապետը կը փափագէր մեզ տեսնել և իր տունը մեզի կրօպատէր : Այս հրատելը չէինք կընար մերժել : Ընկերս իր ամենագեղեցիկ հանդերձը հագաւ, ինձի ալ սեւ չուխայէ պարեգօտ մը հագցուց որ մինչեւ կոճս (թօփուք) իջաւ . վասն զի ճեմարանի անդամ մը այդ պա-

րեգօտը իր սիրահարուած մէկ օրերդին տունը մտնալով դերասան մը զայն առած և ուրչի մը ծախած էր, և ընկերս ալ զայն այդ անձէն գնած էր, որն որիմ հասակես անյարմար եկաւ : Վերջապէս մեր այցելութեան հետեւանացը վրայ քին մը անհանդիստ ըլլալով ելանք դաշինք : Այլ սակայն ընկերս որ խելացի էր, կը յուսար որ կրնայ դիւրաւ աղատել : Հասանք Պ. քաղաքապետին տունը, հոն խօսց մը մասնք, ուր պզտիկ չոր մարդ մը նստած էր, որուն նայուածքն իմաստութիւն և աշխուժութիւն կարտայայտէին : Այս մարդուն բրած առաջին հարցումներէն ընկերս այնպէս կը կարծէր որ դիւրաւ չի պիտի կրնայ ձեռքէն աղատել : Քաղաքապետը դիտուն մարդ էր . շատ գիտութիւններու լուս տեղեկութիւն ունենայէն զատ, բժշկականութիւն, քիմիաբանութիւն, բուսաբանութիւն և աստղաբաշխութիւն ալ գիտէր : Ընկերս իր քովը ինքզինքն այնչափ դիտուն և վարպետ երևցընելու չէր համարձակեր : Քաղաքապետը մեր չիտթութիւնը իմանալով, ուզեց մեզի հանդարտեցնել :

— Ես ձեր շահուն արգելք ըլլալու դիտուարութիւն չունիմ, բոսւ ժպտելով մը . այլ ընդհակառակն . . . ըլին ինձ որ գուք մագանիտեան զօրութիւն ունիք, և սասնելով բոլոր ցաւերը կը բժշկէք . շատ աղէկ : Ես իմ իշխանութեանս տակ դտնուած անձանց աղէկութեանը կը փափագիմ, կը ջանամ մանաւանդ զիրենք աղատել այն յիմար նախապաշարմունք-

ներէն, այն Հին ունայն տաւաղութիւններէն որոց մարդիկ խիստ մեծ հաւատք կրնձայնեն: Մոգութիւնը, թողութիւնը, մազնիտեան զօրութիւնը և քնաշարիկութիւնը՝ սքանչելեաց սիրահար եղող մարդոց շատ գրգիտ կուտան: Գիտեմ որ մարդոց կարծեացը հետ պատեքազմին ունայն բան է. զանոնք բժշկելու համար միայն միջոց մը կայ, այն ալ է թողուլ որ անոնք իրենք իրենցմէ խորամանկ ըլլան: Ահա ասոր համար է որ բնօրոյրախօսներու այս քաղաքս գայը հաճութեամբ կուզեմ. վասն զի ժողովրդեան համար նոր դաս մ'է այս. որովհետև վհուկներն մինչև որ տեղէ մը լուս մը չի շահին, այն տեղէն չեն մեկնիր: Ուստի կը թողում որ դուք հոս ալ ձեր ուղածն դարձագրեք:

Պ. քաղաքագետն մեզի յարգանք չէր մատուցաներ. սակայն բնկերս ամենայն մեծարանօք խնամարհելով՝ քաղաքագետին շնորհակալ եղաւ իր բարութեան համար:

— Դուք, բաւ քաղաքագետը, անշուշտ դեղ մ'ունիք և չէ՛ ալ կուտաք . . . սա դեղերնիդ նայիմ ի՞նչ տեսակ բան է:

Սպասողը չուտով իր դեղահաստերուն տուփերէն մին հանեց. ֆաղաքագետն ձեռքը դեղահաստ մ'առաւ, և զայն լուծելէն ու քրննելէն ետքը երբ տեսաւ որ հացի միջուկ է, տուփը կրկին մեզի առաւ ժպտելով և բոսա.

— Դացէք, պարոնայք, դացէք այս դեղահաստը ուղածնուդ չափ ծախեցէք. . . ասի լիտանգասոր բան մը չէ:

Քաղաքագետն տնէն ելնելով՝ դարձանք պանդօղը, խիստ դո՛ճ մեր միւս դեղերն և մեր հմայութիւններն Պ. քաղաքագետին ցուցնելու տոխթ չունենալնուս վրայ:

Վերջապէս մեր հրապարակական հանդիպին ժամը հասաւ. բնկերս ամեն հրահանգ ցուցըցած և խմնաս շատ անգամներ կրկնել տուած էր ինձ: Այլմէքը վիտեց: Հագաւ սեւ երկայն զգեստ մը՝ որ կտրճ մարդիկը կերկնցընէ և տղեղներն ալ քիչ մը վայելուչ կերեւցնէ, և որով սպասաողը բոլորովին վհուկի կամ մոգի մը նմանեցաւ, որոնք հասարակ մարդոց նման զգեստ չեն կրնար հագնել: Վերջն երկար մտրութ. մ'անցուց երեւը, գլուխը սուր դլխանոց մը դրաւ, որով աւելի նկատողութեան արժանի մարդ մը կ'աւ:

Իսկ ես կարմիր պտտմուճան մը հագայ վերան դեղին ասաղեր բանուած. բնկերս ուղեց որ ես ալ դուրսէս իրենին նման գլխանոց մը դնեմ. այլ սակայն խորհելով որ եթէ Բլէբէթիլս այս գլխանոցովը տեսնէ, ինձմէ կը պղղի, չուցեցի զայն դուրս գնել. ուստի մազերս միայն շահեցի, որն որ թէպէտ հագած պտտմուճանիս հետ չի մոյլեց, բայց բնկերս իրաւունք տալով ինձ թողուց որ այնպէս կենամ:

Երբ սենեակին սրահը որոշուած էր հրապարակաւ կատարելիք գործողութիւններնուս համար, Սրահին մէջտեղը ջրով լեցուն տաշտ (թէքնէ) մը, երկաթէ շրջանակ մը և գաստըզան մը կար, չորս կողմը թիկնաթուներ խոր-

Տրբդակցողներուն համար, ամբողջեր հանդիսաստաններուն համար, նոտարաններ հետաքրքրելներու համար, և հագիւ լոյս տուող կանգեղ մը: Ահա այս կերպով ամեն ինչ պատրաստուած էր:

Երբ ընկերո պանդոկապետին միջոցաւ իմացուց որ եկողներն կրնան ներս մտնել, նա յիս խուռն բաղմուխիւն մը մտաւ որահը: Ումանք վատահուծեամբ կուգային, ոմանք վաճխով, և մեծ մ'ալ հետաքրքրութեամբ չարտեալ: բայց վերջապէս իրօք շատ բաղմուխիւն ունէինք:

Երբ ամենքն ալ մէյմէկ տեղ նստան, և իրենց միտունջներն ու շտակները դադրեցնելով սկսան մեզի նայիլ, ընկերո յարգանք բաղմուխիւնը ողջունեց, և բարձր տեղ մը ելաւ որ ամեն մարդ զինքը տեսնէ, և սկսաւ այսպէս խօսիլ:

— Տիկնայք և պարոնայք և օրիորդք, չեմ գիտեր թէ ձեր մէջը գիտցող կայ թէ ոչ, թէ բնութեան մէջ ցոյցօր անձանօթ եղած նիւթական սկզբունք մը կայ: այս սկզբունքը շիզերուն վրայ կը ներգործէ: Թէօր գիտեք զայն ատոր վրայ բնաւ չեմ խօսիր, և եթէ չէք գիտեր, ձեզ կը բացատրեմ: Ըսի թէ սկզբունք մը կայ, և խօսիմ անոր վրայ: այս սկզբունց միջոցաւ, և մասնաւոր մեքենայական օրինաց համեմատ կենդանի մարմնաց, երկրին և երկնային մարմնաց մէջ տեղը փոփոխակի ներգործութիւն մը կայ: հետեւաբար կենդանեաց

վրայ . . . աղէկ ուշադրութիւն ըրէք, պարոններ, կենդանեաց վրայ ըսի, և մասնաւոր մարդուն վրայ մագնիսի յատկութեանց նման յատկութիւններ կը գտնուին: Այս կենդանական մագնիսեան զօրութիւնն է այն գաղտնիքն որ հիւանդութեանց վրայ կը ծուռալի, և այս կերպով մարդս կարող կըլայ զանոնք ամենքն ալ բժշկել:

Այս մագնիսեան զօրութիւնը կրնայ ուրիշ մարմիններէ ալ հազարգուիլ և ներգործուիլ: Այս նուրբ նիւթը պատերէն, դռներէն, գաւաթներէն, մետաղներէն ալ կանցնի առանց իր զօրութիւնը կորսնցընելու: կրնայ ջուրին և գաւաթներուն մէջ ալ անցնիլ և հայելիներէն ալ թափանցել, մինչև անգամ ձայնով ալ կրնայ ուրիշին հազարգուիլ: վերջապէս իր զօրութիւնը անսահման է, և քաջ գիտցիք որ իմ բոլոր բաժնեքօս ես իմ քօլէս չեմ հնարեր, այլ գիտուն Մէսմէրի, Տէպլենի և այլոց բաժնեքօս կը կրկնեմ ձեզ, որք եթէ հիմա ողջ ըլլային, նոյնք պիտի բռնէինք ձեզ:

Ժողովը ամենախօսիին լռութեամբ մտիկ կը ներ: երիտասարդք կը զարմանային, փոքրիկ օրիորդք կը սպաւին, ծերերը գլուխ կը շարժէին, կանայք իրարու կը նայէին, և բնաւ մէկը չէր համարձակեր քօվը նստողին բտելու որ այս նոր սքանչելագործին բաժնեքօսն բան մը չէր հասկընար: Մագաւորը շարունակեց:

կը տեսնեմ, տիկնայք և պարոնայք, որ զձեզ համոզեցի: ուստի ալ չի պիտի երկարեմ

խօսքս . բայց և այնպէս գործողութեան սկսելէս յառաջ որ սա ևս կը յաւելում այնպիսի մարմիններ կան որ մագնիսեան զօրութեան ենթակայ չեն և բարբորլին հակառակ յառաջութիւն մ'ունին , որով ուրիշ մարմնոց ներգործուած արդիւնքն ալ կը փնջին : Կը յուսամ որ հոս այնպիսի գործող մարմիններու չի պիտի պատահիմ , ահաւասիկ կանխաւ իմացուցած կըլլամ ձեզ : Եթէ կարելի է , մտքերնիդ մեր առաջադրած դերադոյն գիտութեան գլուխը բարձրացուցէք . մի կարծէք որ ըրածս ընդ վայրախօսութիւն է . . . այլ ճամարութիւն մը , զօրութիւն մը , գաղանի ազդեցութիւն մը որ կը ներգոր . . .

Ընկերս խօսքը չի ընցնուցած նայիս յանկարծ տակի նստարանը կտարելով որահին մէջ աեզը դաւորեցաւ . սակայն իսկոյն ստք ելաւ և նոր եռանդով մը ժողովքին դառնալով :

— Գարնայք , պրուաց , ուղեցի խօսքս փորձով մը վերջացնել : Հիմա ձեզի հետ խօսած ժամանակի , տակի նստարանս ձախ ստքովս մագնիսացուցի , և զայն կտարելուս վրայ ապահով էի . . . տեսաք հիմա , ի՞նչպէս յայնոյնցայ :

Ժողովականք միաբան սկսան ծափահարել :

— Կը տեսնէ՞ք , ըսաւ ինձ ընկերս ցած ձայնով և ամենեւին չի չիթիւելով , խեղացի մարդք ի՞նչպէս ամեն բանէ օգուտ կը քաղէ :

Գործողութեանց ժամանակն հասաւ , և որովհետեւ յանդգնութիւնը մագնիսեան զօրութեանէն աւելի դելուաւ իր արդիւնքը կը

ցուցնէ , ուստի թիկնաթոռիս վրայ անհամբերութեամբ կըսպասէի որ իմ ալ կարողութիւնս ցուցնելու առիթ դասնեմ :

Նյախ և առաջ որչափ որ վիէէօ-Պուսոնի կուսակալը ուզեց յատեան ներկայանալ , առարկելով որ ինքը պատուաւոր անձ մը ըլլալուն համար պէտք է առաջինն ըլլալ , սակայն Անժիէք-Բրիւսամ , լուսացարար կիներ գէմ կենայով և բնաւ մէկու մը զիջանելու բնութիւն չունենալուն առաջինն ըլլալ ուզեց . աւելի աւելի անոր համար որ ինքը գեղեցիկ և երիտասարդ էր , իսկ կուսակալը ծեր , տգեղ և խորթարարոյ մարդ մ'էր :

Մայատողը անոր ձեռքէն բռնեց և զանի նստարանին բարձրեքը գարձուց . վերջը նրստեցուց զանի և երկաթէ գաւազանին ծայրօվը սկսաւ մագնիսացնել : Կիներ երբէք քնանալու կերպարանք չէր յայտնեիր :

— Հիմա ձեզի իմ քնայրիկիս կը ներկայացնեմ , ըսաւ : Լուսացարար կիներ ժպտելով երեսո նայեցաւ , և ինձ ներկայանալուն վրայ բնաւ տխուր չէր երևէր :

Ես իմ դերս դիտէի . այս կնոջ վրայ տեղեկութիւններ առած էի :

— Պէտք է ամեն ջանք ի գործ դնել , ըսաւ ինձ ընկերս ցած ձայնով , որովհետեւ այս կինը կրնայ զեզ ծաղրել :

Լուսացարար կիներ դիմացս նստաւ . պատուիրեցին իրեն որ լուս կենայ , և թողու որ իրեն մարմնոյն գպլին . ինքը թէպէտ այս

պատուէրը կատարեց, բայց ձեռքը բռնած ժամանակս չարասիրտարար կը ծիծաղէր. և վերջապէս քնանալ կեղծեւրով, լսեցի որ ցած ձայնով այս խօսքերը կընէր:

— ՈՏ, Աստուած իմ. . . որչափ ունայն բան է տփկայ . . . արդէն փայտատաւորս բնաւ որ ինձի ընելիքին ծիծաղելի և խեղկատակ բաներ են:

Ասոր վրայ ես անմիջապէս բարձր ձայնով յայանեցի ինչ որ ֆլէրէթ խօսած էր ինձ այս կնկանք վրայ: Բան մ'ալ չի մտնողայ, ոչ թըմբկահար զինուորը, ոչ էտը, ոչ փայտատաւորը, ոչ ժամագրութիւնը և ոչ ալ հետեւանքները: Իմ պատմութեանս միջոցին ժողովքը սկսաւ ծիծաղել, լուացարար կինը խօսվեցաւ, և դեռ պատմութիւնս չաւարտած իսկոյն ոտք ելաւ, արմուկովը (տիրսէք) բազմութիւնը ճեղքեց և պանդոկէն դուրս ելաւ երգութեանս ձայնով որ մենք վճարի ենք:

Այս առաջին փորձերինս մագնիսեան զօրութեան վրայ ընաւ տարակոչս չի թողուց. ուստի Պ. Վիէօ-Պուսօնի կուսակալն ալ ծանրաբայլ քովերնիս եկաւ, և ընկերոջս քաղաքավարական ձայնով մը ազալեց որ զինքն ալ անմիջապէս ինձ ներկայացընէ:

Սովորական նախապատրաստութիւններն լիմնալէն վերջը՝ հետեւեալ խօսակցութիւնը սկսաւ մէջերնիս տեղի ունենայ:

— Ես ի՞նչ եմ հարցուց կուսակալը:

— Ձեր հին բերդին մէջ շատ բարձր և

չատ զօրաւոր պարոն մ'էք, որուն միայն մէկ կողմը մնացած ըլլալուն համար այս օրերս հօս մտտերը նոր կալուած մը գնած էք:

— Այդ ստոյգ է. բայց այս վայրկենիս մէջ ի՞նչ ընել կուզեմ:

— Կուզէք որ ձեր հպատակներն առխճի մը առջեւ դատուած ոչխարներու նման ձեզի հնազանդին, ձեզմէ դողան ու վախնան. կուզէք անոնց բաղդին տէրն ըլլալ. կուզէք որ անոնք իրենց ունեցած ամենագեղեցիկ և ամենալաւ բաներնին և ճակտերնուն՝ քրտինքովը վատրկածնին ձեզ տան, և կուզէք նաև որ առը համար ձեզի վճարեն . . .

— Ըստձնիդ շատ ճշմարիտ է:

— Դուք կուզէք որ փոքրիկ աղջկունք առանց ձեր հրամանին իրենց կուսութիւնը . . .

— Այդ ալ ստոյգ է:

— Եւ որովհետեւ ամենեւին կարող չէք այս վերջինն ձեռք ձգելու, կուզէք իրենց ամուսնութեան առաջին օրը ձեր մերկ սրունքը երկտասարդ կուսին անկողինը մտցընել, որն որ իր իշխանն սրունքը տեսնելով պիտի սրտաւայ և լայ, և սրով իշխանն ալ շատ համարում պիտի շահի իր հպատակներուն ներկայացընելու համար սրունքէն զատ բան մը չունենայուն, և անոնց ուրիշ զգացումներ ազդելու անկարող ըլլալով՝ սրունքով միայն զանոնք վախցընել ու զեղուն պատճառաւ: Վերջապէս դուք կուզէք ձեր հպատակներուն հետ այնպէս վարուիլ, ինչպէս երբեմն կը վարուէին հեծեղա-

զորք, Դիզակը ձեռքերնին յառաջ երթալով, և երկու հոգի իրարու քովէ անցնիլն անկարելի եղող նեղ ճամբու մը մէջ իրարու ետեւէ երթալ չուղիւրն համար մէկմէկը հեռու ձեռնկուելով, և մեղի պատահող սնձն՝ մեր գեղեցիկներուն համար աշխարհիս ամենագեղեցիկներն են պատու չուզած ասեն հետք իսուռելով, (թէ է րնա տեսած այ չըլլայ) մեր երիտասարդ աղջկունքը առեւանգող դաժաններուն (եթէ այն ատեն կային) և հսկայներուն հետ պատերազմելով, որոնք իրենց ահագին վերգօյլը (թօփուզ) (որովհետեւ հսկայ մը առանց վիրդի ճամբայ չենէր), դարձեալ իրենց գէմը երնող առաջին հեծելազօրէն տկարներու նման կը յաղթուէին ու կը սպաննուէին . . .

— Ճիշդ խօսեցաք, այս, շատ ճիշդ: Ես իմ աղանջոցն զբամն առջեւ դաճած մը պիտի կայնեցնեմ որ իմ երկրիս վրայ երեւցող առաջին հսկայն սպաննէ, ուր ցայտօր տեսնուած չէ:

— Լուռ բռնն, պարոն կուսակալ, տիրոջմէս դեղահատ առեւք, և շատ ու ստէպ կըլըլեցէք, այդ գեղահատերը ձեզ երիտասարդ, թարմ, աշխոյժ և զուարթ կընեն. ձեր ձերմակ մազերն կը սևեցնեն, հասակնիդ կուղղեն, խորամանկիդ կը քնջեն, այսերնիդ կը լեցընեն, գոյներնիդ կը նորոգեն և ախպոյներնիդ կը բուսցընեն, իր հաւաստեմ գձեզ որ եթէ այս Ֆիզիքական վերակազմութիւնն ստանաք, այն ատեն ձեր հզատակներն բոլոր ուզածնիդ

կընեն, և մտնաւոր երիտասարդ աղջկունք ալ ձեզմէ չեն փախիր:

Կուսակալը իմ այս խօսքերուս վրայ զմայլած աստնեկիւ տուփ դեղահատ գնեց, և առանց սակարկելու (բազարիզ) ստակը վճարեց: Բոլոր գրպանները լեցուց, վեց տուփը իրարու ետեւէ կլլեց, և տուն դարձաւ բարձրադուխ, աշխոյժ աչօք և գրեթէ տասը տարի պակաս տարիքով երիտասարդացած:

Կուսակալէն վերջը Ալին-Ֆիւնէ կօնտթուլուեարն եկաւ. արկին թրույեարն մագնիսեան զօրութեան հուտացընելու համար յառաջարկաններու և ճառախօսութեան հարկ չկար. խեղճ կինը այնչափ զգայուն ջիղեր ունէր որ ընկերս իր դառաղանին ծայրով իրեն դպածին պէս մարեցաւ ինկաւ. Հետք խօսած ատենս դիպուածով ինչ որ բերնիս եկաւ, բսի. իրեն անուանած բոլոր հիւանդութիւններս ունէր, բոլոր իրեն իմացուցած ցաւերս կզգար, և ամեն իրեն խօսած ախտերս իր վրայ կը գլուտուէին: Ասանկ տկար ոգիները ընդվայրախօսներու համար ինչ աղէկ հարստութիւն են ճիկին թրույեար գրպաններն դեղահատով լեցուց, և մեր բոլոր հրապարակական և մասնաւոր հանդէսներուն բաժանորդ դուռելէն ետքը մեկնեցաւ:

Երեք Լաթէ կինարի կըսպանէինք, որն որ ինքզինքը արձանագրել տուած էր, երբ յանկարծ խոշոր մարդ մը կապուտ հագածափներ և կարճ բաճկոն մը հագած բաղձութիւնը

ճեղքելով քովերնիս եկաւ : Այս նորեկին համար պատասխաններ պատրաստած չլլալուս համար, զանի ընկերոջս զրկեցի որ զԲԻԷՐԷԹ կը փնտրուէր յուստով որ կրնայ անկէ մի քանի անհրաժեշտ տեղեկութիւններ ընդունիլ : Բայց երիտասարդ աղջիկը չի խորհելով որ կըրնանք իրեն պէտք ունենալ : Խոհարարնը իջած էր : Ուստի պէտք եղաւ այս փորձն առանց ընկերի ընել : Ընկերս յուսաց որ դիւրաւ կըրնայ զայն կատարել : Ժամաւանդ որ ներկայացողը գիւղացի մ'էր : մտեցաւ անոր որ զարմանալի դէմքով մը խորհրդաւոր տաշտին մէջ կընայէր, և իրեն աւելի ակնածելի կերպարանք մը տալով, սկսաւ հարցընել :

— Ո՞վ էք դուք :

— Ինչպէս կըլլայ որ ով ըլլալս չէք գիտեր, քանի որ վհուկ էք :

— Անշուշտ, ատի գիտեմ : Բայց ձեզի հարցընելուս պատճառը սա է որ անարակոյս գաղտնի բաներ ունիմ ձեզ հարցընելու : Ուստի առանց նենգելու պատասխանեցէք :

— Առանց նեն . . . առանց գելո՞ւ . . . Ըսիք, ինչպէս Ըսիք :

— Թողէք ատիկայ . անուներիդ կը հարցընեմ :

— Անուն եղորս պէս Էօթմաշ Միքօլ է :

— Ինչ գործով կաշխատիք :

— Ինչ բախ է, չի հասկընա՞ք : դաշտերը կաշխատիմ, կամ տիրոջս աղբանքները սայլելով կը տեղափոխեմ :

— Հոս ինչու եկաք :

— Սըվոր նայեցէք, ես ալ ուրիշներուն նրման մոզի մը ընելիքներն տեսնելու եկած եմ :

— Ո՞վ բտաւ ձեզի թէ ես մոզ եմ :

— Սպիրիտ, որուն այս առաւօտ մաղերս կտրել տուի : և որովհետեւ մեր դեղը շատ առտենէ ի վեր է վհուկ եկած շունի, ուստի դիտմամբ այս քաղաքը եկանք զձեզ տեսնելու համար :

— Կո՛ւղէ՛ք մագնիսանալ :

— Մագնիս . . . Ի՞նչ ըսել կուղէք այդ բտով :

— Կուղէք որ գաղտնիք մը կատարեմ ձեր վրայ :

— Ի՞նչ որ կուղէք, բրէք :

— Վերջապէս ի՞նչ կուղէք իմանալ :

— Ո՛հ, շատ բաներ . . . միթէ չէ՞ք կրնար գուշակել :

— Այո, կը գուշակեմ, և կուղեմ նախ և առաջ զձեզ մագնիսացընել :

— Շատ աղէկ, այդ բտածնիդ սու՛ղ բան է :

— Ատոր համար ստակ չեմ առներ :

— Ուրեմն ըսել կըլլայ որ դուք վհուկ մ'էք, որովհետեւ առանց ստակ ընդունելու արհեստնիդ կը գործադրէք :

Սաղատորս գեղացին մեծ թիկնաթուռի մը վրայ նստեցուց, վերջը մտպական գաւազանով քանի մ'անգամ դպաւ անոր . բայց գեղացին ընաւ չէր խօսեր, և երբէք ալ բան մը զգալ չէր երեւցըներ : Ան ատեն ընկերս մտտե՛րն

Թեթև կերպով մը աչքերուն առջևէն անցուց, որպէս զի մագնիսեան հեղանիւթն անոր հազորդէ, զեղացին դարձեալ չի խօսեցաւ, բայց երբեմն երբեմն իր թիկնաթոռին վրայ կը դառնար և աչքերը կը շիկեր: Տեսնելով որ ընկերս՝ սոյն գեղացին մագնիսացընելու ջանքով արին քրտինք մտած էր, ծիծաղելու մեծ փափագ մը կը զգայի:

Վերջապէս գիւղացին ընաւ բան մ'ալ չեղաւ, և թիկնաթոռին վրայ դառնալէն ու աչքերը շիկէին ալ դադարեցաւ:

— Հա, ըսաւ Պ. կրօնկրայքիս ցած ձայնով և իր դործողութիւնը շարունակելով, կամաց կամաց մագնիսանալ սկսաւ. շոր ստատանայ, ո՞րչափ յոգնեցուց զիս. բայց վերջապէս յաշողեցայ . . . : Տեսե՛ք, ինչպէս մագնիսացաւ. հիմա խօսելու պիտի սկսի:

Բայց գիւղացին որ ստուգիւր քնացած էր, փոխանակ խօսելու անտակ երկար փութ մ'արձակեց, որ ամենէն անխախ մագնիսացուցին անդամ չէր հատարձակեր իր արհեստը շարունակել: Ասոր վրայ ստացատող քիթը սեղմելով դէպի ետեւ ցատկեց. ես ալ ծիծաղ մ'էր բըցուցի, ինչպէս նաեւ բոլոր հանդիսականք:

Այս յանկարծակեան ձայնէն գեղացին արթընցաւ. ոտքի վրայ ելնելով հարցուց թէ գործողութիւնը լինցած էր:

— Ինչ անկիրթ մարդ է՛ք եղեր, ըսաւ ընկերս բարկութեամբ. այսչափ մարդոց մէջ ա-

տանկ բան կըլլայ. դուք մագնիսանալու արժանի չէք:

Գիւղացին անհամբեր մարդ մ'ըլլալուն բարկացաւ, և բոտու որ մենք դաշխարհ խարելու ելած ենք, և բնաւ վհուկ չենք: Այս խօսքերուն վրայ Պ. կրօնկրայքիս ուղեց զանի որահէն գուրս հանել որ իր դիտութիւնը արհամարհած էր, և ձեռքի գաւաղանովը անդին հրեց: Գիւղացին զայբացած յարձակեցաւ ստպատողիս վրայ և անոր մծուրքէն բռնեց. ստպատողս սկսաւ պոռայ. հետաքրքրիւններն յուսմիկան. կանայք օգնութիւն կը պոռային, ամենէն խնատուններն կը ծիծաղէին, և ընկերոջս կուսակիցներն անոր օգնութեան կը դիմէին, որն որ գիւղացույն հետ կը ձեռնուէր մծուրք ձեռքէն ազատելու համար: Այսպէս ձեռնուելով երկուքն ալ տաշտին վրայ ինկան, և վրանին զլուխին թըրջցաւ: Ասոր վրայ իրարմէ գատուեցան. գիւղացին ընկերոջս մծուրք ձգելով հանդարտութեամբ սրահէն դուրս ելաւ. ընկերս ալ բողբոլին թըրջեր էր, իմացաւ որ ալ չի պիտի կրնայ իր գործողութիւններն շարունակել, ուստի յայտնեց որ հանդէսն աւարտած է:



ԳԼՈՒԽ ԺԳ.

ԳԵՂԵՐՈՒ ԱՐԳԻՒՆՔԸ: — ԵՂԱՍԵՐ ՅԱԿՈՐՈՍ
ԻՐ ԸՆԿԵՐՈՋՄԷՆ ԿԸ ՀԱՏՈՒԻ

Մեր մազնիսականութեան առաջին հանդէսն որչափ որ անհաճոյ վախճան մ'ունեցաւ, սակայն թէ՛թ-հուարի պանդոկը բաւական գործ կը տեսնէինք: Քլէբէթ մեր խնդրած տեղեկութիւններն միշտ մեզի կուտար: Բայց քիչ մ'առաջ յիշուած գիւղացւոյն դէպքին նըման դէպքի մ'ալ չի պատահեր: Համար կանխաւ անունին արձանագրել տուող անձինքը միայն կընդգուցնէինք մեր քով:

Բայց և այնպէս հետաքրքրութիւնը կամայ կամաց սկսաւ տկարանալ, և մեր գեղահաստերուն արդիւնքը գնողներուն ակնկալութեանը չէր կընար պատասխանել: Իսպախ կողմանէ ալ Քլէբէթէն պաղղի սկսայ, տեսնելով որ ինծի հետ ըրած իրոճն Պետրոսի և Ժէրովի հետ ալ քանի մ'անգամ քրաւ, որով խնացայ թէ սյապիսի սիրահարք որչափ խաբէութիւններու կը ձեռնարկին եզեր: Ուստի առանց ցաւ մը զգալու որոշեցի իմ ընկերոջմէս զատուիլ, երբ նա ալ առաջարկեց ինձ:

Մինչև և վեց ամիս այս կերպով անցուցինք, միայն մեր խաբէրայ գործողութիւններն ի գործ դնել հարկ եղած ասնէն միտակ զըստնուելով: Բաւական յաջողութիւն կը գտնէինք, սյլ սակայն միշտ ընկեր չէինք կընար գտնել,

և այն ատեն մեծամեծ սխալմունքներ կը գործէինք: անանկ որ օր մը վախառուի (Քլայդ-ճի) մը ըսի թէ ստակը չի սիրեր, և գինովի մ'ալ թէ գինին չի սիրեր, խաղամուկ (գումարայ) մը թէ խաղի թուղթէն չախորժիր, պզտիկ տղա մ'ալ թէ իր կինը զինքը կը խաբէր: Կը տեսնե՛ս, Սան-Սուսի, որ ասանկով սոյն քաղքին մէջ չի կրցանք համար ստանալ:

Ասոր վրայ ալ սկսայ ձանձրանալ: արդէն ընկերոջս իմացուցած էի որ իրմէ պիտի բաժնուիմ: սակայն նա կը շնարար զիս քովը պահել, վերջնապէս օր մը միտքս դրի իմ այս գիտաւորութեանս հաստատութիւն տալ, և անոր անանկ խաղ մը խաղալ, որով ալ յուստակտուր ըլլայ իբր ընկեր զիս մինչև և վերջը քովը պահելէն:

Անգամ մը պզտիկ քաղաք մը գացած էինք հոն սրանելիք ընելու համար: Զոն մագնիսեան դորութեան և քնաշարչիկութեան հետաքրքիր անձինք շատ կային: ամեն մարդ ձեռնկուելով քովերնիս կուգար մեզմէ բան իմանալու համար: գեղահաս ու զոյններուն վերջը չէի կընար տեսուլ, այնչափ աղէկ կը ծախուէին: Հոն միտքս դրի մեզի դիմող ապուշներուն վրայ իմ միտքս գրած վորձս ընել:

Մեր վատտաբան մը միջահասակ տիկնայ մը ժամանակէ մ'իվեր սէր առած էր, սակայն կինը անոր սիրոյն պատասխանած չէր, թէ և անոր սիրահարական խօսքերն անդադար ալ մտիկ կընէր: Կէնք խորամանկին մէկն էր, շատ

դիւրութեամբ կը դրդուէր ուրիշներն , բայց կը վախճար որ իր սիրահարին խնդիրքը կատարելով անոր վրայ բանեցուցած իշխանութիւնը կը կորսնցընէ : Ասոնք երկուքն ալ մեզի գիտեցին - փաստաբանը՝ իր սիրահարն համոզելու միջոց մը գտնելու , և կէնն ալ իր վրայ եղած հրապուրիչ յատկութիւնն յարասեւ պահել ուղերուն համար : Ընկերս Պ . Ժէրարի (փաստաբանին անունն է) խոստացաւ որ ամենամանրագոյ կէնն ալ սիրահար ընելու կարող գեղ մը կուտայ իրեն , և տիկին Տիւպլէրի ալ (այս ալ կնոջն անունն է) իր համոզամանքն յարատեւ պահելու և անվնաս շարունակելու միջոց մը ցուցնելու խօսք տուաւ :

Տիկին Տիւպլէրի տանը մէջ՝ տեղւոյն փոխքաղաքացեալը կը բնակէր , որուն անունը Պ . Բօզ էր . սփ բարի մտքով մ'էր բայց իր կինը անոր վրայ մեծ պակասութիւն մը կը գտնէր . այրինքն թէ զինքը բաւական չէր սիրեր և բնաւ ալ նախանձօտ չէր : Անոր համար տիկին Բօզ եկաւ հարցուց մեզ թէ ինչ միջոցներով կրնայ իր ամուսնոյն այս անտարբերութիւնը փարաանել , և զինքն անոր սիրցընել :

Տասնընէնգ տարուան ամուսնութենէ վերջը ամուսնոյ մը իր կնիկանը վրայ սէր ձգել տալէն դժուար բան կըլլայ : Սակայն ընկերս խոստացաւ տիկին Բօզի որ նախանձ գրգռելու համար սքանչելի դեղ մը կուտայ անոր , և խեղճ կէնը՝ իր ամուսնոյն վրայ կրկին

սէր ձգելու յուսով ուրախութեամբ մեկնեցաւ :

Սապատուցս անմիջապէս սկսաւ դեղերը կարգադրել , և յանձնեց ինձ որ ամեն մէկն իրենց յատկացեալ տեղը տանիմ՝ պատուիրելով որ ստակը կանխիկ աւանում չմտնան խորհեցայ որ շատ զուարճալի բան մը պիտի ըլլայ , երբ այս դեղերուն տեղուանքը փոխելով բաժնեմ :

— Տեսնեմ , բոի ինքնիրենս , ինչ պիտի պատահի . . . տիկին Բօզի նախանձ գրգռելու դեղը տարուստեղ , սիրահարութեան դեղ կուտամ . Պ . Ժէրարի ալ բարկութեան դեղը : տիկին Տիւպլէրի ալ նախանձու գեղը . տսանկով շատ ծիծաղալարժ հետեւանքներ յուսով կուգան :

Սապատուցիս յանձնարարութիւնը կատարեցի , դեղերը տարի իրենց տեղերն յանձնեցի ապահովելով դիրեմք որ սքանչելի արդիւնք մը պիտի ունենան , և իմ խորամանկութեան հետեւանացը անհամբեր սպասելով ետ դարձայ :

Պ . Ժէրար տիկին Տիւպլէրէն հրաման խնդրած և ընդունած էր դեղը իր հետ մէկտեղ ուսելու : Ես անոր դեղը առաւօտուն կանուխ տարի , բայց խորհելով որ ինքրինքին համարձակութիւն և հաստատութիւն տայու համար աղէկ կընէր եթէ իր սիրահարին տալէն առաջ ինքն իր բաժինը ուտեր , ուստի նախ ինքը կերաւ . տիկին Տիւպլէր ալ վերջէն իր հրապուրիչ յատկութիւնն յարատեւ և անվնաս պահելու համար մնացեալը կե-

բաւ, և տիկին Ռօզ ալ շէշին մէջ դտնուած գեղէն մաս մը՝ իր ամուսնոյն ամեն առաւօտ խմած չիքօլաթօյին մէջ լեցուցած էր:

Գիտե՛ս, սիրելի Սան-Սուսիս, իմ սաղա-տողիս դեղերն ինչօ՞վ շինուած էին, և ի՞նչ պէ՛տ կրցած էր այսպիսի բարեգորութիւննե-րով անմիջական արդիւնք մը սուցընել. ասի հասկընալու համար կեցիր որ նոյն իրիկու-նը պատահած դէպքերն պատմեմ: Պ. Ժէ-րար իր սիրահարին տունը կերթայ, ճամ-բան գացած ատեն թեթև խիթ մը կը դ-գայ, գլուխը կը տաքնայ, և կը խորհի ջր դեղն իր արդիւնքը կը սուցընէ, կը փութայ տիկին Տիւլլէրի տունն երթալ. կը տեսնէ որ նա երկար ակտուի մը վրայ անտարբեր կերպով պառկեր է. բայց ո՞րչափ կը զարմա-նայ, երբ կը տեսնէ որ իր քաղցր բարեկա-մուհին այլակերպեր է, քիթը կարմրեր և ուռեցեր, մարթը քայուեր, և ճակտին վրայ ալ խեղ մը պտարներ ելեր են:

— Այո իրիկուն զեա ի՛նչպէս կը տեսնէք, պարոն Ժէրար, ըսաւ տիկին Տիւլլէր շարա-սիրութեամբ մը ժպտելով, ես ապահով եմ որ զեա փոխուած կը տեսնէք . . . :

— Յիրաւի, տիկին, ըսաւ խեղճ փաստա-բանը փորին վրայ ձռելով և քիթը բերանը ծամածռելով, շատ փոխուած կը տեսնեմ ըզ-ձեղ. հիւանդ էք, ի՛նչ էք:

— Հիւանդ մի, հիւանդ դուք էք, որ ա-տանկ տարօրինակ կերպիւ կը գլորուիք:

— Տիկին, իրաւ որ . . . վայրկեանէ մ'ի վեր է:

— Ֆիֆին, (տիկին Տիւլլէրի սպասուհւ-ւոյն անունն է), հայելիս բեր, նայի՛մ սա պա-րոնին ըսածին պէս հիւանդութեան նշան կը տեսնե՛մ վրաս:

Խեղճ Ժէրար չէր դիմանար, դեղն իր ար-դիւնքը ցուցըցած էր, գլուխը կը ցուէր, խի-թը կը սասականար: Սպասուհին հայելին բե-րաւ. տիկին Տիւլլէր մէջը նայեցաւ . . . սոս-կայի սղաղակ մ'է հանեց, հայելին կտորեց, ջիղերը սկսան տկարանալ, և իր խեղճ սիրա-հարն ալ Ֆիֆինի կազաչէր որ իր սիրուհւոյն ճերմակեղէնի պահարանին (տօլապ) բանալին ապ: Սպասուհին որ շատ ուրիշ սպասուհի-ներու նման շարարաբայ և խորամանկ էր, Պ. Ժէրարի վիճակը տեսնելով ծիծաղելէն չէր դադրեր, և տիկին Ռօզ ալ այս խառնաշփո-թութիւնը լրացընելու համար պուտալով վա-ղեց եկաւ բռնելով թէ ինքք ալ անպատուութեան ծայրը հասաւ . . . թէ իր ամուսինն հրէշ մ'է որ փոխանակ զինքը սիրելու իր գլու-նապանուհւոյն հետ սիրահարած և . . . : Մեր սիրահարական դեղը Պ. Ռօզն բորբոքե-լով խեղճ մարդը նոյն իրիկունը տուն գացեր է իր կինն հոն դանդուալ յուսով: Բայց կինը զա-նի նախանձոտ ընելու համար պահուրտած ըլլա-լուն խեղճ փաստաբանը իր դուռնապանուհին որ յիսուն տարեկան կին մ'էր պատրաստ գլու-նելով զինքը բորբոքող կերքն անոր միջոցաւ փարատեր է . . . :

Տիկին Բօզի աղաղակներն՝ որ կատարած կը պօռար, նոյնպէս և դռնապանուհւոյն որ բարկացած կը ձենանար, տիկին Տիւպլէրի գոռուժներն որ քիթը կտրել կուզէր, Պ. Ժէրարի ձայնը որ փորին վրայ ծռած հոս հնն կը վաղաւտէր, և Պ. Բօզի աղաղակը որ իր ըրածին վրայ կը զոյնար, խոզոյն բուրը թառեցեքը հոս հաւաքեցին: Ամեն մարդ զիրար հերելով, զիրար սեղմելով և իրարու ինչ կայ, ինչ կայ ըսելով վաղեցին եկան, որը տիկին Բօզի նարնջի ծաղիկ հաստեղ կուտար, որը դռնապանուհւոյն ծաղիկնուր (լավանտա), որը տիկին Տիւպլէրի անուշատրի ոգի (նիշատրը բուհու), որը Պ. Ժէրարի ջուր և օճառ կը հասցնէր, որն ալ Պ. Բօզի յակնիթ ծաղիկ (նունուֆար չիէյի) ջուր:

Երբ հանդարտութիւնը տիրեց ասն մէջ, ամեն մարդ լանաց այս գէւպքին պատճառն իմանալ. յայտնի եղաւ որ աօի մեղալան բանէ մը առաջ եկած է: Տիկին Տիւպլէր կապահովէր որ կենացը մէջ ոչ քիթին վրայ ոչ ուրիշ տեղ բնաւ պարար հանած չէ, Պ. Ժէրար ալ թէ ինքը երբէք անմարտդութիւն ունեցած չէ, և տիկին Բօզ ալ իր բարկութեանը չի նայելով կը խոստովանէր որ իր ամուսինն միայն զիսով եղած առեկն ուրիշ կնկան հետ . . . Ուտի այս գէւպքերն դաղանի պատճառ մը ունենալու էին: Այն ասան դեղերը միայն բերուեցան, փոխօրտակի իրարու գէւպք պատմեցին, և արդիւնքը ստեղաւ որ սպայտողը մեռնելու ար-

արժանի վնուկ մը, մոգ մը, ընդ վայրախօս մը և բանաբարու մէր. բայց մինչև իր մահուան օրը պէտք է զանի բանար դնել որ իր այս անօրէն և անկարգ հմայութիւններն այլ եւս չի գործադրէ:

Պ. Բօզ գնաց քաղաքացեալը գտաւ, և եղելութիւնը անոր պատմելով լիազօր իշխանութիւն ընդունեցաւ. յանցաւորը բանտարկելու: Երբ փաստաբանն ալ իր կողմնէ տեղոյն բուրք մեծամեծներն հաւաքեց, որոնք իրեն հետ բարկանալով վճռեցին որ այսպիսի երեսելի մէկու մը խիթ պատճառողն պէտք է որ իր պատիժը կրէ: Տիկին Տիւպլէր և տիկին Բօզ ալ բոլոր տիկնայքը ոտք հանեցին. տիկին Տիւպլէր միշտ սա խօսքը կըրէր. Այն մարդը որ ուրիշին քիթը կը կտրօցնէ, և գոյնը կալաւափուէ, մահուան արժանի չարագործ մէ: Իսկ Պ. Բօզի խմած դեղէն բուրք տիկնայք քանի մը կաթիլ ուղեցին իրենց յատուկ գործածութեանն համար, խորհելով որ այս դեղն էթէ այսպէս բաժնուի, շատ հաճելի արդիւնքեր կընայ յատաշ թերէլ:

Այս գէւպքերուն վրայ բաւական օրեր անցած էին, և ալ ժամանակը հասած էր որ պիտի դային զվեղ բռնելու. զվեղ ըսի, որովհետեւ լաւ կը խորհեմ որ ես ալ ընկերոջս վիճակակից պիտի ըլլայի: Բայց առջի օրը քաղքին մէջ պտտելով և բոլոր խօսակցութիւններն իմանալով գտտեցի որ անպատճառ մեղի բռնելու պիտի դային. և խոհեմութիւն չի սեպեցի այն

վայրկենին սպասելը՝ ուստի ընկերօջն քնացած ատենը՝ բոլոր ունեցածն և անոր հետ շահած ստակն այդտիկ ծրար մը բրի, և իմ'ստպատու զեա երջանկութիւն մարդիկեով՝ պանդոսիէն գուրս ելայ, թողլով որ նա կրցածին պէս այս վտանդէն ազատի:

Անկէ վերջը չեմ' զիտեր թէ իննն ինչ պատահեցաւ, որովհետեւ զինքը մէյ մ'ալ չի տեսայ. բայց որովհետեւ վճուկ չի գտնուիր տեսնուելէն ի վեր որ և է մէկը իբրև վճուկ սոցան ներն օրէնք եղած չէ, ապահով եմ' որ իմ խեղճ ընդ վայրտխօսու ալ քանի մ'ամիս բանտարկուելով մահու ընէ ազատած է:

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՎԵՐՋ ԵԱԿՈՐՈՒՄ ԴԵՊԵՐՈՒՆ

Բասկիս մէջ երեսուն գաղղլտիկան տիկ ունէի. տես թէ հացի միջուկէ դեղահատ ծախելով որչափ ստակ շահեր թէ՛ պէտ մարդ այս կերպով քիչ յառուջի իմութիւն կրնէ և երբէք համարում չունենար, որով կրնայ իմացուիլ թէ յարդ ալ չունի: Արդէն հասկըցար, սիրելի Սան-Սուսիս, որ ես լաւ զբօսներէն զատ ուրիշ բան չէի խորհեր. շատ քաղաքներ պըտըտեցայ և կեանքս զբօսանքով անցուցի. բայց Պրիսեւլ բան մը պատահեցաւ. ինձ որ իմ զբօսանացս վերջ տուաւ:

Երկու որ էր այս քաղաքս դացած էի, և ժամանակս բոլոր դատաշիպարիկ կամ օտարական մարդոց նման շատ ուտելով, շատ խմելով, առանց նպատակի մը ծառայելու ասդին անդին պտտելով, հասարակաց անգուանքը մտնելով, և ինձի քիչ մը հետաքրքրական երևեցած բոլոր իրերն տեսնելով ժամանակս կանչուէի:

Երկրորդ օրը՝ թատրոն երթալով տեսայ որ քոյս դուրսէն պատուաւոր երեցող երիտասարդ մը նստած էր. ինձմէ երեք չորս տարու մեծ կերև էր, և ոյնպէս կը ցուցնէր թէ մեծ փորձառութիւն մը շահած էր: Միատեղ խօսակցեցանք. շուտով իմացուց ինձ որ ինքը Լիոնէն էր, և իր զբօսանացը նա մանաւանդ իր ծնողացը իրեն համար կատարել ուզած մէջ ամուսնութենէն փախչելու նպատակաւ կը ճանապարհորդէր: Ասոր վրայ ինձի ալ վստահութիւն մ'եկաւ, ևս ալ սկսայ իմ զխուս պատահածները պատմել, և այնպէս երեցուց թէ իմ պատմութենէն շատ օգուտ քաղէց:

Համառօտն ըսելով՝ բարքերին և ճաշակներիս իրարու յարմարեալն մէկմէկու հետ բարեկամացանք, Պրէվիլ, այս էր նոր բարեկամիս անունը, հրաւիրեց զիս որ հետեւեալ օրը լաւ խոհարարի մը խանութ միտատեղ ճաշենք, զոր է բոլոր որտէ՛ ընդունեցայ. վասն զի օտար մէկու մը համար որ և ի՛ք քաղաք մը դացած ատեն մէկու մը հետ բարեկամութիւն հաստատելը մեծ երջանկութիւն մ'է:

Հետեւեալ օրը գացի գտայ իմ բարեկամս .
լաւ կերանք խմեցինք , վերջը պատելու , թատ-
րոն և զբօսարան դաջինք : Ոտարականի մը
համար Պրէվիլ խիստ լաւ կը ճանչնար այս քա-
ղաքը . բայր զբօսավայրերն ու հասարակաց
տեղուանքը զիս կը պտտցնէր . և տեսնելով թէ
ինչ գիւրով թեամբ քաղքին բայր զբօսավայ-
րերուն ճամբաները կը գտնէր , ծիծաղելով գո-
վում թիւն կուտայի և գանի երջանիկ կը համա-
րէի : Համառօտն ըսելով բայր քաղքին զբօ-
սավայրերն ու գեղեցիկ տեղուանքը պատելու
վանքով առաօտեան ժամ մէկին փոքոցը մտ-
ցինք խմուած քանի մը տեսակ ողկելից բմպե-
լիքներով բարորովին գինովցած :

Այլ գրեթէ օտարի վրայ կենայու ժամանակ
չունէի , և սաստիկ կը փափագէի երթալ ան-
կողին իյնալ , և այն ալ մէկու մը միջոցաւ կըր
նայ բլլալ , վասն զի կզգայի որ անկարելի էր
ինձ առանձին մինչև տեղս երթալ : Պրէվիլ ին-
ծի չափ տկարացած չէր երևէր , բայց սաստիկ
յոգնած ըլլալն ալ կը յայտնէր . լապտերները
գրեթէ մարելու մօտ էին : Ժամէ մ'ի վեր է
ընկերոջս կաղաչէի որ զիս իմ տեղս տանի . օտ-
կայն ունայն տեղը փոշոցներն ու հրապարակ-
ները կը պատէինք . պանդոկս բնաւ չէի տես-
ներ :

Վերջապէս ընկերս իմացուց ինձ որ ճամ-
բան կորսնցուցած ենք , և իմ տեղէս շատ հե-
ռու կը գտնուինք . ուստի բտաւ ինձ որ կը
տեղն աւելի մօտ է , և կուզէ իրեն պառկելու :

տեղ մը տալ : Յայտնի է որ առանց տարակու-
տելու ընդունիլ պէտք էր . . . Այլ անկարող
էի քարելու , հաղիւ թէ կրնայի յստակ ալ տես-
նել առաջ երթալու համար , որն որ մեր վա-
յելած բաղձնթիւ զբօսանաց անհրաժեշտ ար-
դիւնքն էր :

Պրէվիլ խիտ մուծ տեղ մը գուռ մը զար-
կաւ . նայալ պառաւ կին մը եկաւ գուռը բա-
ցաւ . աղտոտ և օձապտոյտ սանդուխտ մը վեր
ելայ , կամ լաւ եւս է ասել , զիս վեր հաննե-
ցին . վերջապէս գրեթէ մերկ սենեակ մը մտայ ,
որով եթէ լաւ խորհած ըլլայի , իմ'նոր բարե-
կամիս կացու թեանը վրայ չի պիտի կրնայի փայ-
լուն գաղափար մ'ունենալ : Սակայն նոյն մի-
ջոցին քնանալէն զատ ուրիշ բան չէի կրնար
խորհիլ . երկու վայրկեան վերջը գէշ աղտոտ
անկողնի մը վրայ պառկեցայ , և չուտով խո-
րունի քնոյ մէջ ինկայ :

Կերևի թէ մեր խմած բմպելիքներէն գի-
չերը խիտ սաստիկ անհանդստութիւն մը ըզ-
գացի , բայց և այնպէս բնաւ չարթնցայ , և
արդէն լաւ մը լուսցած էր , երբ շատ տեղ առ-
նէր զիս թթեխուն խկոյն աչքս բացի :

— Բարեկամ , բարեկամ . . . արթնցէք . . .
երկար ատեն է որ կը քնանաք . . . գէշ կըլլաք :
Այս խօսքերը եկան տիանջիս : Աչքս բացի ,
չորս կողմն նայեցայ , և չի կրցայ պատասխան
մը տալ . վասն զի այնպիսի տեսարան մը ներ-
կողացաւ աչքիս , որ ստուգիւ չէի գիտեր թէ
արթնցած էի :

Ալ զնա զարմանքս երևակայէ, խեղճ Սան-
Սուսիս, փոխանակ սենեկի մը և առջի գիշերը
պահ կամ անկողնոյս մէջ գտնուելու, քառա-
բաժ տեղ մը քարէ նստարանի մը վրայ փրու-
ուած մնացած էի, առանց հանդերձի, առանց
գլխարկի, միայն չապիկով, պարեզօտով և
բաճկոնով, բոլորովին խել մը մարդիկ կայնած
հետաքրքրութեամբ զիս կը քննէին :

— Սն ուրմն, բարեկամ, ըսաւ անոնցմէ
մին, խելքերնիդ զլուխնիդ բերեք, երէկ-
ուան ուտելիդ, խմելիդ, պատելիդ աղէկ,
ամեն մարդ կրնայ ասոնք ընել. բայց հիմակ-
ուան ալ թմբութիւնը միտք բերելու է. ինչ
որ է, թէ և առտուան գէճ քիչ մը կը թմբեք,
սակայն կամաց կամաց խելքերնիդ զլուխնիդ
կուգայ . . . :

Այս մարդուն խօսքերն արդարև իմ առջի
օրուան ըրած յիմարութիւններս յիշեցուցին
ինձ . . . անմիջապէս սկսայ գրաբաններս խառ-
նել . . . ստաղ, բոլորն ալ պարտապ էին, և
խել մը երիտասարդներու նման ամեն ունեցածս
վրաս կրելուս համար առաջակի մը դուաճա-
նութեանը զո՛հ եղած էի . . . Ունայն տեղը
բոլորովին գտնուող մարդոց Պրէվիլի տունը
կը հարցնէի, բնաւ մէկը չէր ճանչեր զինքը :
կրնայէի թէ կեցած տեղս այս դուաճանին զիս
ստորած ասնը կը նմանէր . ամենևին ոչ . . . :

Ոտքի վրայ ելայ ամհալով և միտնդամայն
կատաղութեամբ. և եթէ նոյն միջոցին այդ
անդդամը տեսած ըլլայի, ճշմարիտ կրնեմ, չսա

գէշ պիտի ընէի . . . սակայն բնական է որ եր-
բեք այնքան չերևաց, Ուստի պանդոկին ճամ-
բան հարցընելով տխուր դէմքով գէպի հոն
կերթայի . բայց չէի գիտեր թէ ինչ պիտի
ընէի, ինչ պիտի ըլլայի . վրաս ստակ մը չի
կար, կերպարանքս ալ մութացանի մը կերպա-
րանք կը նմանէր . . . այնչափ ասոնք խշտանի
մը նման ասորէլէս և փոլըր փափաքներս դո՛հ
ընելէս վերջը, սղորմութիւն խնդրելու վեճակն
հասած էի . . . ինչ սարսափիլի փոփոխու-
թիւն . . . ո՛հ, որչափ կը ցուէի յիշելով իմ
սուզտողս և մեր մազնիսեան ջրորութեան
հանդէսներն . . . Եթէ գոնէ այս արհեստը
սկսէի գործադրել, ինչ և իցէ կրնայի քիչ մը
ստակ շահիլ. բայց եկու տես որ գեղաճատի
համար պէտք եղած նիւթերն առնելու ստակ
չունէի, և խիստ լաւ գիտէի որ հանդերձ և
գուլպայ չունեցող քնաշըջիկ մը չի կրնար մարդ
բնացնել :

Բայց և այնպէս աւելի միտքս դրած էի մեռ-
նիլ, քան թէ մարալ, և այս դիտաւորու-
թեամբ եկայ պանդոկն, ուրիկ առջի օրը հա-
բուստ դուրս ելած էի . մտայ սրահը ուր ճամ-
բորդներն կը նստաճաշէին . հոն մէկը զիս չէր
ճանչէր, և սպասաւորք զիս պիտի վճանէին,
եթէ արտասուելով գլխուս պատահածներն
չի պատմէի :

Պանդոկագետը վրաս ցուեցաւ, բայց չի
թողուց զիս որ սենեակս երթամ, ուր գըտ-
նուած քիչ մը կարասիքս հաղիւ կրնար պարտ-

քրս վճարել, ճամբորդներուն մէջ անչարժ մնացի. բերանս չէր բացուեր. բայց աչքերս արցունքով լեցուած էին, և լուռ թեմէս շատ բան կրնար հասկցուիլ:

— Է՛հ ուրեմն, պատանի, հիմա ի՛նչ պիտի ընես, ըսաւ անդ ի՛նչ մէկը որ նոյն միջոցին մինչև սրտիս խորքը հնչեց: Գլուխ դարձուցի և տեսայ որ քովի սեղանս ճաշող երկու զինուորականներն էին:

— Աւագ, պարոն, ըսի անոնցմի միոյն, որ կարեկցութեամբ երեսս կը նայէր, ինչ ընելիքս ես ալ չեմ գիտեր... չգիտիք մնացեր եմ...:

— Շփոթե՛ր ես... մարդս երբ վատութիւն մը գործած չըլլայ, բնաւ չփոթե՛նու չէ... Ծն ուրեմն, նստէ, հետեւինս ճաշէ... և սիրտ առ, այդ հասակը եզոզը բնաւ յուսահասելու չէ:

Այս խօսքերը զիս ըստ բաւականին քաջութեանցին. հրաւէրը կրկնելու առիթ չի տուի, և նստայ այդ երկու զինուորականաց հետ քիչ մը խոզի պուրտաւ և պահիր կերայ, և ճաշ լմացնելէս վերջը անոնցմէ մին վերստին խօսեցու ինձ հետ ու բտաւ:

Տգստ, դուն քու ծնողացդ քովէն բաժնուեր ես, այս առաջին պակասութիւնդ է, զէջ մարդոց հետ ընկերակցութիւն ըրեր ես, այդ ալ երկրորդն է. բոլոր ունեցածդ ալ դողցուցեր ես, այս ալ վերջապէս երրորդն է. բայց և այնպէս մինչև հիմա այս պակասութիւններն ներքե՛ք են. սակայն ալ ստիպ վերջը

պէտք է որ գոչոյզ գտնուիս... մարդուս գլուխը մինչև որ ասանկ մորձանքներ չի պատահին, չի կրնար կրթուիլ...: Ասանկ դէպքեր խիտ շատ անգամ կը պատահին այնպիսի ապուշ երիտասարդաց որք քեզ նման հացկերութի մը հետեւեալ օրն բոլոր ունեցածնին կը կորսնցընեն. այն առևն կիկոն յուսահատիլ, և թափառական ու դատարկաշրջիկ կեանք մը վարել, ապուստ գտնելու համար ամեն վատութիւն գործել, և վերջապէս իրենց ապշութեամբը յանցաւոր կըլլան: Դու տակաւին երիտասարդ ես, տղաս, պէտք է որ գործ մը գտնես. ասանկ թեւերդ կապելով հաց չես կրնար գտնել, ոչ ալ աստղերուն նայելով կըրնաս հանդերձ ունենալ. արհեստ մը գիտե՛ս:

— Ո՛չ, պարոն:

— Ուրեմն զինուոր եղիր. ուսդ հրացան առ, և յօժարութեամբ առ. դեռ երիտասարդ ես, կազմուածքդ ալ խիտ լաւ է. ուստի եթէ քաջութիւն ալ ցուցընես, և քու մեծ բուռդ ալ հնազանդ գտնուիս, կը հաւատամ՝ զքեզ որ վերջդ խիտ լաւ կըլլայ:

Այս առաջարկութիւնը զիս այնչափ ուրախացուց սր խիղջն աթոռէս ցատքեցի, և զինուորականը դրկելու եռանդով սեղանը տապալեցի, սրուն վրայ բարբառողաբար բան մը չի կար, իմ այս այնուժուութիւնս երկու զինուորականաց ալ հաճելի երեցաւ. իսկոյն զիս միատեղ տունելով իրենց գնդապետին տարին, որն որ զիս լաւ մը քննելէն վերջը էր գնդի

մէջ ընդունեցաւ . ուր՝ կը համարձակիմ բնել,
ամեն կերպիւ իմ պարտաւորութիւնս միշտ կա-
տարեցի՝

Ահաւասիկ դէպքերս իմացար, սիրելի Սան-
Սուսիս . ալ զինուորականութեան ատեն ինձ
պատահածներն չեմ ըսեր քեզ, որոց լաւ տեղ-
եակ ես . մանաւանդ որ անոնք ամեն զինուո-
րականաց ալ կրնան պատահիլ . զինուորակա-
նի մը դէպքերն ինչ կրնան ըլլալ, պատերազմ,
կռիւ, կոտորած, յաղթութիւն, ձախորդու-
թիւն և այլ այսպիսիք՝

Տարիներ անցան, ընտանիքս բնու մտացած
չէի . բայց սա ևս կիմացնեմ որ պատուաւոր
աստիճանու մը կուգէի ընտանեացս երեւիլ .
այդ աստիճանը ընդունելու յոյս ունէի . . . և
դէպքերն այնպէս բերին, որ չուտայ ընդու-
նեցայ զայն՝ երբ զինուորականութենէ ար-
ձակուեցայ, մասածեցի որ պատուաւոր և
քաջ զինուոր մը իր ծնողքը չի կրնար ամէջընէլ,
ուստի ելայ փարիզ դասի զիրենք գտնելու
համար . . . Հոն իմացայ որ ծնողքս մեռեր
են . . . այս լուրը զիս խիստ շատ ցաւեցուց . . .
բայց եզրօրս ցուրտ ընդունելութիւնը . . .
արհամարհատ կերպարանքը և պղպ վարմունքը
անկէ աւելի վշտացուցին իմ արիւտ սիրտս . . .
Բայց հոգ չէ, Սան-Սուսիս, ապերախտք ալ ոչ
զիս պիտի տանէ, և ոչ ալ իմ վրայդ լուր մը
պիտի կրնայ առնուլ՝

Ահա այսպէս Յակոբոս իր պատմութիւնը
աւարտեց, և անոր վերջին մասը պատմած

ժամանակը աչքերն արտասուօք լցուեցան . այս
արտասուքը եզրօրը համար էր, զոր իւր ան-
վայել ընդունելութեանը չի նայելով գարձեալ
կը սիրէր :

Արդէն դիշերն հասած էր, Յակոբոսին պատ-
մութիւնը իւր կարծածէն աւելի երկար տևեց,
և Սան-Սուսի ալ այնչափ ուշադրութեամբ
մտիկ բրած էր որ ճաշելու ժամանակն երկար
ատենէ ի վեր է անցած ըլլալն բնու չէր իմա-
ցած : Ուստի երբ ընկերն իր պատմութիւնը
աւարտեց, ոտք ելաւ, գլուխը շարժեց և փո-
րին դարնելով իր ընկերոջը բնու .

— Ընկեր, լմնցուցիր :

— Այո :

— Խիստ լաւ, ուրեմն քալէ :

— Ո՛ւր պիտի երթանք :

— Բեկ ինչ փոյթի, բաւական է որ եր-
թանք ճաշելու տեղ մը գտնենք :

— Անօթի՛ ես :

— Ինչ բռնէ, ներսիդիտ կառնեն կու-
տան . . . իմ փոքր պատմութիւնով չի կշտա-
նար . սակայն քու պատմութիւնդ շատ դպաւ-
նածի . քանի որ խօսելու սկսար, կարծես թէ
հետզհետէ մտիկ ընելու փոսիւղ մը եկաւ
փրտու :

— Կուղե՛ս որ նորէն սիրիմ :

— Չե՛, չէ՛, ել երթանք :

— Բայց վերջապէս ո՛ւր պիտի երթանք :

— Մի հարցըներ ուր երթալինս, միայն
քալէ :

Յակորոս և իւր ընկերը սկսան դաշտերուն մէջէն յառաջ երթալ . արդէն մուտք կոխած էր և դրեթէ ուր երթալնին չէին դիտեր : Յակորոս բնաւ չէր խօսեր . Սան-Սուսի ալ մէյմը կերգէր , մէյ մ'ալ իր քայլերուն արգելք և զոջ մացաններուն և փուշերուն կը հայհոյէր : Վերջապէս ժամու մը չափ քալերնէն յետոյ լոյս մը տեսան :

— Մն ուրեմն , ընկեր , քայլ առ , սա լոյս տեսնուած տեղն երթանք ճաշենք , ըսաւ Սան-Սուսի :

— Սան-Սուսի , ստակ ունի՞ս :

— Չէ . . . դո՞ւն :

— Ես ալ քեզի պէս :

— Հոգ չէ , քայլէ :

Մտեցան լոյսը տեսնուած տեղոյն . այս տեղը բաւական մեծ տեղ մը ըլլալով ագարակի մը դիրք ունէր , բայց շատ մուտք ըլլալուն չէր կրնար որոշուիլ լէ ուրիչ անցնիլ պէտք էր : Սան-Սուսի կոյր զիւրայն յառաջ գնաց և ամենէն առաջ պատահած դուռն սկսաւ ձեռքով ոտքով ամենայն զօրութեամբ զարնել : Ի զուր Յակորոս կաղաչէր որ այնչափ աղմուկ չի հանէ . Սան-Սուսի խիստ անթի ըլլալուն իրմէ աւելի աղմուկ հանող ստամբակէն զատ ուրիչ սեկուն ականջ չէր կախեր :

Այս աղմուկին վրայ , բակը գտնուած երկու շուներն սկսան հաչել . անոնց ձայնէն կոփերն ալ արթննալով կը բառաչէին , և էշերն ալ կը զբոյրին : Այս ձիւնաղաղարժ աղմուկին

ժամանակ , կին մ'ալ պատուհանը ելեր կը պոռայ , բայց ատոր ձայնը լողը ս'լ է :

— Ո՛վ է այն . . . Ինչ կուզէք . . . պատասխան տուէք . . . :

— Տեսար , Յակորոս , եկած տեղերնիս ագարակ մ'է . . . այս ցայն ալ սիրուհոյս ձայնն է , որուն վրայօք ցորեկը խօսեցայ քեզ . ո՞հ , չեմ սխալիր ճիշդ ինքն է , իւր ձայնն է . . . բաց , նազելիս , բաց , շուտ բրէ . սէր և անթիութիւն միատեղ զիս քու տունդ առաջնորդեցին :

— Արդեօք իմ ճանցածս էք :

— Այո , այո , ես եմ , վերջապէս մենք ենք . . . : (Մն ուրեմն Լուիզա , ալ տարակոյր մէկդի դիր , և եկուր դուռը բաց . սակայն սա կենդանիներուդ ձայնը կտրէ , հոգեք սիրես , որ իրարու խօսք հասկնանք :

Ատոր վրայ կինը խոլոյն պատուհանէն մէկնեցաւ գալ դուռը բանալու համար , և Սան-Սուսի այն ատեն իմացուց Յակորոսին որ ալ ստուգիւ իր անհաստարիմ սիրահարին տունն են , որն որ ի ներքուստ շատ բարի , շատ զգայուն , (առաւօտուն փորձը ցուցուցած էր) շատ մարդասէր և շատ առատանեան կին մ'է անկայն իր ամուսինը այնչափ շատ չի սիրեր :

— Բայց , ըսաւ Յակորոս , ատոր ամուսինը տանը մէջ իշխանութիւն չունի՞ , և . . .

— Այ , ո՛չ , տանը էշխանութիւնը Լուիզայի ձեռքն է . ամուսինն ալ դէշ տղայ չէ : Լուիզա այս առտու ամեն բան խօսեցաւ ինձ . ու-

ղեց նաև որ զինուորականութեան արձակուած իր ազգականներէն մէկուն նման քիչ մը ժամանակ ազարակը անցընեմ. սակայն չընդունեցայ, պատճառն որ քեզի գալ գտնելու խօսք տուած էի, և քու բարեկամութիւնդ ամեն բանէ նախադատի համարեցայ: Բայց որովհետև ալ զքեզ գտայ, և հիմա ազատութիւն ալ ունինք, ճշմարիտ կրնեմ, խիտ ազէկ հոգ մը մեզի այս տեղ նետեց . . . Չայնդ կարէ, հիմա ժամանակը չէ, վերջը ընդարձակօրէն կիմանաս:

Լուիզա վերջապէս եկաւ դուռը բացաւ, բայց զՅակօբոս տեսնելով դարմացաւ:

— Կը ներկայացընեմ բարեկամս, ըսաւ Սան-Սուսի, աի խիտ ազնիւ և բարի ընկեր մ'է, որմէ զատուիլ չուզեցի:

— Շատ լաւ, շատ լաւ, բտել է որ իմ ալ բարեկամս է . . . չէ, ամուսինս կը քնանայ, բայց հոգ չէ, Սան-Սուսի, չըլլայ որ քեզի ըսածս մոռնաս. բսէ որ դու իմ հօրերօր որդիս ես:

— Գիտեմ, գիտեմ . . . օն ուրեմն խոհարարան իջնենք:

— Կեցիք որ ձեզի լաւ ձուռեղ մը ետեմ:

— Այդ աղէկ բարի . . . բայց մինակ ես, ուր է սպասարար:

— Սպասարար վաղը չէ միւս օրը պիտի ամուսնանայ. ուստի մէկ երկու օր առաջ ըրնանալ սխալ:

— Շատ աղէկ ըրեր է: Սա վատարանը առ զին բեր, նայիմ:

Քիչ ժամանակէն ճաշը պատրաստուեցաւ, Յակօբոս և Սան-Սուսի լաւ մը կշտացան: Լուիզա ծիծաղելով երեսին կը նայեր և կը խօրհչէր որ իր ամուսինն շատ պիտի զարմանայ, երբ հետեւեալ օրը իմանայ թէ երկու օտարական զիչերը իր տունը պատկեր են:

— Չեղի պանիրին պզտիկ օտնակը պիտի պտակեցնեմ, ըսաւ Լուիզա, ահաւասիկ այս սենեակին դիմացն է. կրնաք առանց մեր սենեակէն անցնելու և ամուսինս արթնցնելու հոն երթալ: Վաղը այս եղածն իրեն կը պատմենք:

Լուիզա շատ կը զգուշանար որ ամուսինը չարթնայ. երկու հիւրերն առաւ դիմացի պըզտիկ սենեակը տարաւ, ուր ձմեռուան համար շինուած պանիրներն պատին քովը ատրտակներու վրայ շարուած էին: Այս կերպով թէպէտ սենեակին մէջ անուշ հոտ մը չէր տարածուած, բայց աի զինուորականաց համար հոգ չէ: Յակօբոս անկողին իյնալով հանդարտութեամբ քնացաւ. իսկ Սան-Սուսի իմանալով որ պանիրներուն հօտը զինքը պիտի նեղէ, սենեակէն դուրս ելաւ, կամ ինչ փոյթ, եթէ ուրիշ նպատակաւ մը սենեակէն դուրս ելնելով լաւ զիչեր մ'անցուց, և բարերապաշար Լուիզայի ամուսինն ալ նոյն զիչերը ընաւ չարթնցաւ:

Հետեւեալ առաւոյն ամեն մարդ կանուխ արթնցաւ: Պ. կիյո (Լուիզայի ամուսնոյն ա-

նունն է) զարմացաւ իր կնիկանը պատմութեան վրայ, որն որ երես իմացուց որ իր հօրեղբոր որդիներէն մին, հին զինուորական, գիշերը իր մէկ ընկերովը ազարակ եկած էր: Պ. Կիյո գնաց անոր հօրեղբոր որդին գրկելու. նասացաւ խմեց հետերնին: անոնց որովոր զինուորականութենէ արձակուելուն համար իր ուրախութիւնն յայտնեց, և հեան առնելով տարաւ իր ազարակը, հաւերը, եզները, ցօրեններն ու խստերն աննեց ցուցուց: Մեր երկու զինուորականներն աննք ամենքն ալ խիստ գեղեցեկ և բարեկարգ վիճակի մը մէջ գտան, շնորհաւորեցին զՊ. Կիյո, և շուտով անոր ամենալաւ բարեկամներն եղան:

Յակոբոս դաշտերը, մարգերն, տնտառները և դաշտային աշխատութիւնները կը սիրէր. իսկ Սան-Սուսի զլուիցա և իր խոհարարնք, իրիկուններն Յակոբոս Պ. Կիյոյի կը պատմէր իր պատերազմները, պաշարումներն ու իր դէպքերը, որոնց վրայ կը զարմանար Պ. Կիյո և ուշագրութեամբ մտիկ կըներ զանոնք: Սան-Սուսի ինքն ալ կը լսէր և գիւղացուոց զուարճութեանցը կը մասնակցէր, և անոր քրոս պատմութեանը վրայ ուրիշ բաներ ալ աւելցնելով աւելի կերկարէր: Յակոբոսի այս դէպքերն գիւղացիներն այնչափ լաւ կը զուարճացնէին, որ առաջտուն աւելի հաճութեամբ դաշտը կերթային, երբ երկու զինուորականներն հետեւալ օրուան համար պատմութիւն մը խոստանային:

Գիւղին բնակիչները՝ Լուիզայի հօրեղբորդէն ու իր ընկերը գալ մտիկ ընելու հրամանն իրր շնորհ կը խնդրէին, և որովհետեւ գիւղացիք ոչ հրաւերի կը սպասեն, և ոչ քառուիլ գիտեն, ուստի դուրսի աշխատութիւններն ընկնելուն պէս կուղային ազարակին մեծ սրածը կը լցուէին: Պառաւաններն իրենց ճախարակն ու կտանին կառնէին կը նստէին. մանկամարդք կառնեց որձէին, երիտասարդուհիք խոտ կը գիղէին. անդին անկուս մ'ալ երիտասարդ մը իր ձիերուն կերակուրը կը պատրասէր. ուրիշ անկուս մ'ալ ձերունի մը գինոյ տակաւի մը կը ընծած գինի կը խմէր: մինչդեռ երկրագործ մ'ալ մէկ կողմ քաշուած կը ծխէր. աղայք որ մէկն ալ Սան-Սուսի պէխերուն հետ կը խաղային, Լուիզա անոնց թան կը պատրաստէր, Կիյո ցօրեն կը խարաղէր, բայց ամենքն ալ աչքերնին Յակոբոսին անկած անոր պատերազմական դէպքերն ուշագրութեամբ մտիկ կընէին: երբ պատմութեան մէկ ահարկու մասը պատմուելով Յակոբոսին վրայ աշխոյժ ոգի մը կը տեսնուէր, նոյն միջոցին ամենուն դէմքին վրայ մտատանջութիւն, միտ և սոսկում կը տեսնուէր. . . . Պառաւան իր ճախարակը կը դադրեցնէր. երկրագործը ձխափայտ բերնէն մար կառնէր, ձերունին իւր գինին կը մոռնար, երիտասարդը գօրծելէ կը դադրէր, և ամեն ոք վիզը ձուած և բերանը բացած պատերազմին միտնանին կըսպասէր իր աշ-

խատու թիւնք (շարունակելու համար :

Ահա այսպէսով ութը օր անցան արագութեամբ : Բայց և այնպէս մեր երկու ընկերներն իրենց եղած ընդունելութեան փոխարէնը միայն պատմութեամբ չուզելով հասուցանել, առաւօտները կերթ այլն գիւղացւոց աշխատութեանցը կը մտնակցէին : Յակոբոս Նիյոյի հետ դաշտերը կերթար, երկիր կը վարէր, և զօրութեամբ ու քաջութեամբ բաժ կը զարնէր :

Պ. Նիյո նախ և առաջ Յակոբոսի ախատելուն դէմ կեցաւ : Բայց Յակոբոս պնդեց, և քիչ ժամանակէն ալ հարտարութեամբ ամեն բան սորվեցաւ : Իսկ Սան-Սուսի աւելի ազարակը մնալ կուզէր : Լուիլա աշխատելու համար անոր գործ կը գտնէր, և զրեթէ ամեն օր կայխատցընէր : Ինքը գործունեայ կին մ'ըլլալով իր քովը գտնուած սպասարն երբէք պարտալ չէր թողուր, և թէ շտեմարանը, թէ ներքնատունը, թէ պարտեզը, թէ խոհարանը, վերջապէս ամեն տեղ զանի աշխատցընելու գործ կը գտնէր :

Քիչ մ'առնեն վերջը՝ ազարակին սպասուօրը որ ամուսնացած էր, դնաց իր խրճիթը կնկանը քով հասաատուեցաւ : Անոր տեղը Նիյոյի սպասուօր մը պէտք էր : ազարակը մեծ էր, քովը գտնուած երկիրն ալ բաւական ընդարձակ էր, և Պ. Նիյո ալ կըզգար որ Յակոբոս և Սան-Սուսի մինչև ետքը ի պիտի ուզեն իր աշխատութեանցը մեջ իրեն օղնական ըլլալ : այս ալ անոնց չէր կրնար առաջարկել :

բայց Լուիլա, որ որոշած էր զանոնք քովը պահել, յանձն առաւ գործը կարգադրել :

Լուիլայի առաջին խօսքերուն վրայ Յակոբոս ուրախութեամբ գրկեց զանի :

— Կը վախնայի, բաւ, որ ձեզի բռն կըլլամ : գ.օ.ք իմ ապրուստս պատուաւոր կերպով շահելու համար միջոցը կը պատրաստէք ինձ : երախտագիտութեամբ կընդունիմ զայն : Ես երկրագործ կըլլամ, և կը հաւատուեմ զձեզ որ Սան-Սուսի այ ինձ պէս կընէ : Մեք երկուքս ալ զննուորականութիւն ըրած ենք, հրացան կընը կամ արօր վարելը երկուքն ալ հայրենեաց ծառայել ըսել չէ :

Այսպէս ամեն ինչ կարգադրուեցաւ ի մեծ դժուանակութիւն ամենեցուն : Յակոբոս բարբոջին իր նոր աշխատութեանն յարեցաւ : երբեմն իր զբաղմանց ժամանակ իր եղբորը յիշատակը կը ներկայանար իրեն, ան ատեն դէմքը կը տրտէր, ձեռքը բահին վրայ կը կենար, և այբերը դէպ ի վերջեօլ-Սէն-Յորժի ճամբուն վրայ կը դառնային : Սակայն շուտ մը իր տխուր խորհրդածութիւնները փարատելով, կրկին բահը կամ արօրը ձեռքը կառնէր եղբուարդին յիշատակը մտքէն հանելու համար ամեն ջանք ի գործ դնելով :



ԳԼՈՒԽ ԺԵ.

ԵԳՈՒԱՐԳԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՉՈՐՍ
ԱՄԻՍՆԵՐՆ : — ՆՈՐ ԱՌԱՋԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եղուարդ , կինն ու զսքաննը վիղնեօվ-Սէն -ժօրօթի գեղեցիկ տունը հասատառեցան : Եղուարդ՝ որ երբէք իր եղբօրը վրայօք բան մը չի խօսեցաւ , գեղն եկած ատենը սկսաւ վախնալ , և իր վախն խիստ սաստկացաւ , երբ իր ծնողաց տունն ալ ոտք կոխեց : Ամեն վայրկեան այնպէս կը կարծէր թէ եղբօրը պիտի պատահի , և իր գեղը եկած օրն ալ ամենեւին չուզեց պարտէզն իջնել պաքախլ : Բայց և այնպէս հաստատ միտքն ալ գրած էր որ Բակոբոսի լաւ ընդունելութիւն մ'ընէ և զանի իր ընտանեացը ներկայացընէ : սակայն այս գիտաւորութիւնն ունեցած ատենն անգամ այնպիսի չփոթութիւն մը և դադարի երկիւղ մը կղզար որք իր հոգւոյն մեծ տոգոհութիւն մը ազգելու պատճառ կըլլային :

Գեղը եկած օրուան հետեւեալ օրն դաղտնի իր տանը սպասաւորին այսպէս հարցուց .

— Ի՞մ հոս չեղած ատենս մէկը եկաւ . . . սա ամեն օր պարտէղին դրանն առջեւ եկող կեցող մարդը անկէ ի վեր մէյ մ'ալ տեսար :

— Ոչ , պարան , ոչ , ամենեւին չի տեսայ , և մէկն ալ չեկաւ . զձեզ չի հարցուն :

Ատոր վրայ Եղուարդի երկիւղը փչ մը փա-

րատելով զուարթութեամբ տիկնանց քով եկաւ , և անկէ վերջը բաւական ժամանակ անցաւ և Բակոբոս բնաւ չերեցաւ : Տիկին ժերմէյլ երբեմն ծիծաղելով յիշեց զանի առանց այս մասին իր փեսային պատճառած ցաւը գիտնալու : Բայց վերջապէս յիշ մ'ատենէն վերջը բոլորովին մոռցան զանի , և Եղուարդ ալ իր հանդարտութիւնը դատաւ :

Ատէլնի սիրտը երբէք չի փոխուեցաւ . միտ փափուկ և զգայուն մնալով յանչափս կը սիրէր իր ամուսինը . Երմանիկ էր անոր քով դանուած և անոր նայուածքին մէջ միեւնոյն զգացումներն , միեւնոյն սէրը և միեւնոյն երջանկութիւնը տեսնելու կարող եղած ատեն : Նա Եղուարդի սիրայ դրաւակներ կը կրէր իր արդանդին մէջ : Ասի ուրախութեան , յուսոյ և սպայայի համար ըլլալիք առաջադրութեանց նոր առիթ մ'է : Ատէլն մայր ըլլալու երջանկութեամբ իր նախկին վարմունքը ըստ բաւական մոռցաւ , խորհելով որ պզտիկ անխոհեմութիւն մը կրնայ իր որդւոյն փեսասկար ըլլալ :

Թէպէտ նստած գիւղը շատ մարդ չկար , բայց Եղուարդ իր կնոջ վրայ ունեցած սէրէն բնաւ ձանձրութիւն չէր զգար : Սակայն երբեմն դիչերներն իրեն համար կերկարէին , տիկին յէրմէյլի հետ ԲԻԷԷԷ խաղալով կը ձանձրանար , և միշտ միեւնոյն տեղուանք շքրջագայինն ալ իրեն տոգոհութիւն կը պատճառէր : Բայց Ատէլնի գորովանքը և անոր

քաղցր համայնքներն միշտ զինքը կը զուար-
ճացնէին ու իր անհանգստութիւնը կը փա-
րատէին :

Գեղեցիկ օր մը առաւօտեան դէմ եղուար-
դի դրանն առջև կառք մը կայնեցաւ , և մե-
ջէն երկու կին և երիտասարդ մը ենեւով տանը
բախը մտան : Սպասուորը հարցուց իրենց ո՞վ
ըլլալը որ երթոյ իմացընէ տիկնանց որք պար-
տէզը նստած էին : Բայց անոնք առանց իմա-
ցընելու կուղէին ներս մտնել , և տիկնանքէն
մին որ իր ընկերներուն առաջնորդ եղած կե-
րեւեր , խոջոյն գէպ ի պարտէզ սկսաւ շտկուիլ
ըսելով իր բարեկամներուն որ ետեւէն դան :

Վերջապէս գացին պարտէզ : Տիկին թեր-
մէջը և Ատէլին զիրենք տեսնելուն պէս զար-
մանալով ոտք երան և տիկին Տօլպանի դէմ՝
վազեցին :

— Վա՛յ , սիրելի բարեկամահիս , զո՞ւք
եք . . . շատ ուրախացուցիք զիս :

— Ուղեցի որ առանց իմացնելու գամ-
կերկար ատենէ որ այս այցելութիւնը միտքս
դրած էի , որովհետեւ դեզը շատ կը սիրեմ :
Իմ հօրեղբորս աղջիկը ժաննին ալ հետս գալու
օտարտիկ փափաղ մը ցուցնելուն միտակը բերի-
ւ որովհետեւ հետերնիս երկի մարդ մ'ալ պէտք
էր առնուլ , համարձակեցայ Պ. Տիւ. ֆրէնսը ընտ-
րել , որ խիտ փափաղեցաւ . զաւր իր յարդան-
քը ձեղի ներկայացնելու համար :

Պ. Տիւ. ֆրէնս խորին մեծարանօք տիկին-
ներն ուղունեց , և տիկին թերմէջը սպասովեց

զտիկին Տօլպան որ իրեն հետ մեկտեղ եկող
անձինքն խիտ դուհունակութեամբ ընդունած
է :

— Բայց պարոնը ձեզ անծանօթ ըլլալու
չէ , ըսաւ տիկին Տօլպան , սիրելի Ատէլինիս
հարստնեացը ներկայ էր . տիկին Տէլօ զանի
մեզ ներկայացուց :

— Կարծեմ միտքս կրնամ բերել , ըսաւ
տիկին թերմէջը . սակայն յայտնի է որ այն օ-
րերը այնչափ զբաղած էի որ ետևած մարդիկս
աղէկ մը չեմ կրնար յիշել . ուստի ներելի է . . .
Դիտեք նաև թէ նոյն իրիկունը ի՞նչ անօրինակ
դէպքեր ալ պատահեցան . . . մէկ կողմէն
խեղճ տիկին Վօլանովիլի . . . մյուս կողմէն Պ.
Բօպինօյի . . . :

— Ո՛հ , սա դէպքերը մի յիշեք , սիրելու-
հիդ իմ , հիմա ծիծաղս այնպէս կը շարժի որ
չեմ կրնար զգալիլ . . . Բայց Պ. Եղուարդ մ'ըրէ :

— Քիչ մը մտտերը պտտելու գնաց , հիմա
կուգայ . ելէք տուն երթանք :

Տիւ. ֆրէնս թեւը տիկին թերմէջիլի տուաւ ,
Ատէլին ալ տիկին Տօլպանի և իր հօրեղբոր
աղջկանն հետ ելան տուն դացին : Քիչ մը վեր-
ջը եղուարդ ալ եկաւ , և շատ ուրախացաւ
կր տուր հիւր տեսնելուն վրայ : Այլ և կին
որչափ ալ զիրար սիրեն , երկար ատեն առան-
ձին մնացած ատեննին կը ձանձրանան . միայն
թէ երբ կինը ուրիշ մը սիրահարուած ըլլայ ,
կրնայ իր երկանը նախանձը գրգռելով վերջա-
պէս այդ ձանձրութիւնը փարատել , որով կրս-

տիպութիւն զիրար աւելի եռանդեամբ սիրել ։
Ասիայն Ատէլին այդ պիտի բնութիւն մը չու-
նէր . . . Դառնանք մեր պատմութեանը ։

Տիկին Տօլպան զեռ երկրասարդ կին մ'էր .
թէպէտ սիրուն չէր , բայց զէմբը զեղեցիկ
էր . մարդիկ ասանկներուն զիրաջանոյ անու-
նը կուտան ։

Իսկ իր հօրեղբոր աղջկը ժաննի տաննու-
ուիտ տարեկան աղջիկ մ'էր , շատ պարզ , շատ
հաճելի , և տիկին Տօլպանի խօսած տտենն ին-
քը լուս կը կենար ։ Իսկ զՊ . Տիւֆրէնն թէ-
պէտ յիրաւի լուս մը չենք ճանչնար , բայց ա-
նոր ալ ինչ մարդ ըլլալն վերջէն կը հասկընանք ։

Այս մարդը Ատէլինի (հարսանեաց օրը տի-
կին Տօլպանի հետ ծանօթացած էր , բայց ա-
նոր հետ սիրահարուած ըլլալն թէպէտ այն-
չափ հաւանական չէրեւիր , սակայն հարօտն-
եաց մէջ ինքզինքը անոր վրայ շատ սեր ձը-
ղածի պէս կը ցուցընէր . նոյն օրը սոյն տիկնոջ
սատտիկ մեծարանք մը յայտնելով անոր սիրաբ
զբաւած էր . տիկին Տօլպան ալ թէպէտ առա-
քինի կին մը չէր , բայց իր տկարութիւնը
ծածկելու մասին յաջող էր , և ասով միայն
կրնայր ընդունուիլ այն ընկերականութեանց
մէջ ։ ուր որ և է մէկուն բարբին ու վայել-
չութեանը կը նայուի , և տիկին թէրմէլլի
տունն ալ քիչ մը այդ կերպ ընկերականու-
թիւններէն էր ։

Տիւֆրէնն տիկին Տօլպանի սիրաբ կատա-
րելապէս շահած էր , որ զանի յանձնարինս կը

սիրէր և անոր համար ամէն ինչ կը զոհէր .
թէպէտ և իրատ լուս իմացած ալ էր որ այս
երրորտասարդը որ բոտ պարագայից ինքզինքը
զործունեայ , հարօտս , աշխատասէր , վաճա-
սական , սեղանաւոր և այլ այսպիսի բարձր
գործերու տէր կը ցուցնէր , խկապէս ուրիշ
բան չէր , եթէ ոչ Տէրութեան պարզ պաշ-
տօնեաց մը , բայց այն ատեն անպաշտօն . ար-
հեստ մը չգիտեր , և ինչ միջոցաւ իր ապ-
րուտը ճարելն ալ բնաւ մէկը իմացած չէ ։

Տիկին Տօլպան եթէ խոհեմ կին մ'ըլլար ,
այս մարդուն հետ իր յարաբերութիւնը կը
դադրեցնէր . բայց այնպէս չըրաւ , այլ բոլ-
բովին կապուեցաւ անոր հետ , ջրակը ձեռքը
յանձնեց , իր տանը բացարձակ տէր ըրաւ
զանի , Տիւֆրէնն ալ անոր սնեցած քիչ մը
հարստութիւնը ուղղման պէս սկսաւ գործա-
ծել , ապահովելով զանի որ քիչ ժամանակէն
իր գործերը մեծցընելով իր ունեցած հարքս-
տութիւնը պիտի եռապատկէ ։

Տիւֆրէնն առանց պատճառն իմացընելու
Ատէլինի և իւր ամուսնոյն հետ ընտանեանալ կը
փոփաքէր , վերջապէս օր մը իրենց գեղը եր-
թալու նպատակ յայտնեց . տիկին Տօլպան ալ
չուտ մը պատրաստուեցաւ , և որպէս զի տի-
կին թէրմէլլի տունը տանելիք երկրասարդին
հետ այսպիսի անբաժան յարաբերութիւն մ'ու-
նեցած ըլլալուն համար կասկածանաց տեղի
չտայ , ուստի իր հօրեղբոր աղջիկն ալ միտ-
տեղ առաւ տարաւ ։

Տիւֆրէնն շատ խելացի էր, ամենուն հետ կրնար վարուիլ, սիրելի երեւիլ ուղած ասեմն զուարթ էր. ուստի արիկն ժերմեղջիլ ատնը գտնուած ժամանակ ամեն ջանք ի գործ դըրաւ բորբիւն ալ հաճելի ըլլաւ. համար Սհա սյա կերպով իր ժամադրին հասաւ. որով թէ արիկն ժերմեղջիլ և թէ Ատէլինի քով բաւական համարում և յարգանք շահելէն զատ մասնաւորապէս Եգուարդի վտահաւթիւնն ալ վատրկելու համար պէտք եղածն ի գործ դնելէն վերջը՝ անոր բնաւորութիւնը, ճաշակը և զգացումները կատարելապէս իմացաւ:

Այնուհետև վերնեւթ-Սեն-ժորժի բնակարանը գրեթէ հարսանեաց տուն մը դարձաւ. ասանը մէջ երեք մարդ աւելի գտնուելով ատնը դիւրքը փոխուեցաւ. ամեն օր կերդէին, կը նուագէին, կը չրջագայէին և որսորդութեան ու ձկնորսութեան կերթային: Երուարդի համար՝ որ հիւր ունենալու պէտքը կը դարձար, այն օրերն իրատ չուտով կանցնէին. իսկ Ատէլինի համար որ բնաւ օր մը վայրկեան մ'անդամ չէր կրնար իր ամուսնոյն հետ առանձնանալ, իրատ երկար կերեւէին:

Տիկին Տօլպան իր սյցելութեան երրորդ օրը փարկի գաւնալու պարտատուեցաւ. Եգուարդ չի կրնալով Տիւֆրէնէն զատուիլ, ուղեց որ քանի մ'օր ալ կենան: Վասն զի երկուքը մէկուեզ ամեն առտու դեռ արկնայք չարթնցած որսի և պատելու կերթային. Եգուարդ զմայրած էր իր նոր բարեկամին վրայ:

Տիւֆրէնի խելքը, զուարթութիւնը, իրենին հաւասար բնաւորութիւնը, ճաշակի յարմարութիւնը զանի իրեն պիտանի բրած էին, և իբր իր կենաց երջանկութեան մէկ մասը չէր ուզեր որ քովէն բաժնուի:

Ատէլին չէր կրնար այս նոր յարաբերութեան վրայ նախանձիլ. սակայն զաղանի նեղութիւն մը կղզար տեսնելով որ իր գործանքը չէր կրնար իր ամուսնոյն սիրաբարբաւել բարբ ուրէշ զգացում անկէ մերժելու համար: Սէրը շատ անգամ կասկածոտ ըլլալուն օր և է բարեկամութիւն իր վրայ չուր կարձակէ. ուստի երբ մէկը իր սիրած առարկայիւր կարող ըլլայ զմայլել, կարծես սէրէն գուլութիւն ըրած կը համարուի: Այս չափազանց սէրը միշտ ներքի է. և այն ատեն բնա մը կերեւի, երբ ալ բաժնուել կը դադրի:

Վերջապէս արիկն Տօլպան և իր ընկերներն մեկնելու հրաման ինչքեցին. Ատէլին ուրախութիւն մը զգաց, որովհետև Եգուարդի հետ առանձին պիտի մնար, և ալ կրնար ամենայն համարձակութեամբ անոր հետ խօսակցիլ իր սովորային համար ընելիք առաջադրութեանց, որդւոյն դատարարութեանը և իբրև մայր վայելելիք բոլոր քաջգրութեանցը վրայ. . . ընդհակառակն Եգուարդ ցուեցաւ անոնց մեկնելուն վրայ, բայց պարտաւորեց զՏիւֆրէնն օր իր գործոցը զինքը ազատ թողած ժամանակը առանց զանցաւորութեան գայ և վերնեւթ-Սեն-ժորժ անցընէ:

Նոյն իրիկունը Ատէլին իր ամուսնոյն թեւը մտնելով զանի պարտէզ տարաւ . հոն իրեն հետ առանձին գտնուելուն վրայ իր խնդու-թիւնը յայտնեց . անոր ձեռքերն գործանօք իրեննէրուն մէջ սեղմեց . իր սիրով լն գեղեցիկ աչքերն անոր յարած էր , և երբեմն ալ կանխաւ իր մայրական յատկութեանն անտա-լով կուղէր իր ամուսնոյն ուշադրութիւնն հրաւիրել իւր արդանդը կրած էակին վրայ : Բայց եղուարդ զբողեւլ կերեւէր , և իր կնոջը պատասխան տուած միջոցին կարծեա բուն խնդրէն դուրս ուրիշ բանի մը վրայ խորհիլ կը ցուցնէր . ասոր վրայ Ատէլին հառաչեց , և Նոյն իրիկուան զբոսանքը սովորականէն շատ շուտ վննցաւ :

Հետեւեալ օրը նախաճախի ատեն , եղ-ուարդ՝ Տիւֆրէանի և անոր հետ հաստատած բարեկամութեան վրայ մեծ գոհունակութիւն յայտնեց , բնեւով թէ խիտ զմայլելի , խելացի և գործունեայ երիտասարդ մ'է , և քիչ ատե-նէն մեծ հարստութեան մը տէր պիտի ըլլայ :

— Բայց բարեկամս , բառ Ատէլին , կե-րեւի ինձ որ դուք այդ պարտնը դեռ լաւ մը չի կրցար ճանչնալ . . :

— Անշուշտ , բառ տիկին ժէրմէշը , դե-տեմ որ Պ. Տիւֆրէան ողնիւ երիտասարդ մ'է , բնկերականութեան մէջ հոճակի , մանաւանդ որ տիկին Տօլլպան ալ զինքը երկար ատենէ ի վեր կը ճանչնայ . . : Բայց վերջապէս , սիրելի եղուարդս , դեռ ութ օր է այդ մարդուն հետ

ծանօթանալիդ . եթէ հարսանեաց օրուան նայելով զանի դատած ըլլալու նպատակաւ կըսէք , կապահովեմ զձեզ որ դուք այն օրը լաւ ուշադրութիւն չի կրցար բնել անոր :

— Ոհ , այս , բառ Ատէլին հառաչելով , այն օրը ամեն մարդ իմ վրայ կը խորհէր . . :

— Յիրաւի , տիկնայք , դուք եղանակ անձ էք . եթէ ձեզի հարցուի , մարդու մը ինչ ըլ-լայն հասկընալու համար երկար ատեն պէտք է . իսկ ինձի համար երկու օրն ալ բառական է . . . մանաւանդ որ Տիւֆրէան մեզմէ ինչ շահ ունի որ զմեզ շորքորթէ . . : Նա մեր ծառայութեանցը պէտք մը չունի , և դուք գիտէք որ աշխարհիս վրայ մտրդ մը իր անձ-նական շահուն համար միայն կաշխատի . այս ալ թողունք և խորհնք որ Տիւֆրէան բանի որ հարստութիւն ունի , բանի որ գործի մը տէր է , ինչու համար մեզի պիտի կեղծաւորի :

— Ինչ գործի տէր է :

— Ոհ , սեղանաւոր է . . . վաճառական է մեծամեծ գործեր ունի ձեռքը . . . վերջա-պէս ինձ բսածին նայելով խիտ փայլուն վիճակ մ'ունի եղեր :

— Գրասենեակ մը , պաշտօն մ'ունի՞ , փաս-տաբան է , կամ ասոր նման երեսելի գործի մը տէր է :

— Ոչ . . . ոչ . . . բայց հիմակուան ժամա-նակը ատանկ բաներու հարկ չկայ . . : Մնաց որ , տիկնայք , ներքեցէք ինձ բռել ձեզ որ դուք ատնցմէ բան մը չէք հասկընար . . :

— Արդարեւ, բարեկամս, խիստ լուս կը խօսիք . . . Բայց ինչու համար այնպէս հաւատալ կուզէք որ մեք ալ ուրիշ մարդոց նըման մեզի օգտակար կամ վնասակար եղածն չենք կրնար դատել :

— Արտվհատե դուք այդ մտին տեղեակ չէք :

— Բարեկամս, ըստ տիկին ժերմէօյլ, Գաստիարտիօթիւնը ոչ խելք կուտայ, ոչ դատողութիւն : Հաւատացէք ինձ, կին մը կրնայ խիստ լուս խրատներ տալ, և մարդիկ միշտ կը սխալին անոնց առած խրատներն արհամարհելուն համար : Հիմա իմ ձեզի տալիք միակ խրատս սա պիտի ըլլայ որ ուրիշ օրէ ի վեր է տեսած մարդերնուդ հետ տատնկ չուտով չի բարեկամանաք : Բարեկամութիւն բրածնիդ այդչափ դիւրութեամբ չի կրնար հաստատուիլ :

— Բայց եղուարդ խիստ բարի և խիստ դիւրանաց բնուորութիւն մը ունի . . . :

— Ո՛հ, ես մարդ դատելուն կերպը դիտեմ . . . կը հաւատաեմ դձեղ որ Տիւֆրէսնի բարեկամութիւնը ինձ շատ օգտակար պիտի ըլլայ . . . :

— Ի՞նչպէս :

— Ի՛նչպէս պիտի ըլլայ, ես ալ իրեն պէս դորձերու զբաղելով նորո աջակցութեամբք հարբաութիւնս պիտի աւելցնեմ : Բայտնի է որ մարդս չի կրնար անդորձ մնալ . ուտի երբ փարիզ դառնանք, առտուքն մինչեւ իրիկուն չի պիտի պատիւ, սորորդութեան և ձկնորսութեան ալ պիտի չերկամ . . . :

— Ատիկայ ես ձեզի պաշտօնէ հրաժարած ատեննիդ ըսի, ըսաւ տիկին ժերմէօյլ, բայց այն ատեն խօսքս մտիկ չըրիք :

— Բայց, սիրելի մայրս, մինչեւ բան տարի դրասննակի մը մէկ փակուած մնալէն ի՛նչ օգուտ կրնայ ձեռք բերուիլ . . . կարելի է երկրորդական մը ըլլամ . . . և քանի մը տարի առաջ թոշակ մը արուի ինձ . տաի դեղեցիկ երևույթ մ'է . . . փոխանակ ասոր որ մը խիստ հարուստ ըլլաք աւելի աղէկ ըլլաք :

— Ի՛նչպէս, Եղուարդ, հիմա փառասիրութեան ելաք :

— Ես փառասէր չեմ, սիրելի Ատելինս, բայց ի՛նչ միջոցաւ հարուստ ըլլալու է . մեր ընտանիքը որ ըստ օրէ պիտի աւելնայ, և կարեմէ իր զուակացը բարորութիւնը խորհող մէկը սղակասաւոր չի համարուիր . . . :

— Անշուշտ, անշուշտ . . . ըսաւ տիկին ժերմէօյլ . բայց մարդս երբեմն ունայն եղջերուաբալներու ետեւէն վաղել ուղելով ձեռքը ունեցածն ալ կը կորսնցունէ . . . :

— Ո՛հ, հանդարտ եղիք, տիկնայք . ես եղջերուաբաղներու ետեւէ չեմ վաղեր . . . Ես խոհեմութեամբ պիտի վարուիմ, նախ և առաջ քիչ մը բան պիտի դնեմ, մանաւանդ որ Տիւֆրէսն ալ ինձի լուս խրատներ պիտի տայ : Այսպէս վերջացաւ այս խօսակցութիւնը : Եղուարդ դուրս ելաւ երկմալ իր հարստութեան նոր առաջադրութեանցը վրայ փորհելու համար . տիկին ժերմէօյլ տխրութեամբ իր

անենակը գնաց , Ատէլին ալ առանձին պարտէզը քաշուեցաւ իր վիճակին վրայ դեգերելու համար :



ԳԼՈՒԽ ԺԶ.

ՎԵՐԱԳԱՐԶ Ի ՓԱՐԻՉ : ԳՈՐԾՈՅ ՍԿՋՐՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Քանի մը օրէն վերջը Տիւֆրէնս դարձեալ գիւղը այցելութեան եկաւ . եղուարդ իբրև վաղեմի բարեկամ զանի ընդունեցաւ , տիկին ժերմէջլ քաղաքալարութեամբ , և Ատէլին քիչ մը պաղ կերպով վարուեցաւ հետը : Տիւֆրէնս իր գործերուն , իւր դրամագլխին և իւր մեծամեծ առաջադրութեանցը վրայ խօսեցաւ , որուն վրայ այնչափ զմայլեցաւ ու շրջաւ : Եղուարդ որ իր բարեկամին իր առջեւ բանալ ուղած տըր ստպարէզը մէկէն ի մէկ նետուելու փափագով կայրէր , և այս մասին իր զօրանչին ունեցած անխտանջութեան վրայ վրշտացած՝ կը ջանար որ զայս անտեղի երկիւղը անոր օրակն փարատէ :

Եղուարդ ինչ որ բրաւ ու բաւ , Տիւֆրէնս մէկ օրէն աւելի չի կեցաւ . դեղը , ըսելով թէ իր ժամանակը հասուած է . . . և թէ իր գործերը զինքը փարկղ կը կոչէ : Բայց ճըմբուան եղանակը եկած էր , և դաշտերն ալ կանաչեղէն չի գանուերուն ալ անկարելի էր

դեղը նստիլ : Հոկտեմբեր ամսուն մէջ էին , և վեց ամէն ի վեր է դեղը կը նորէին : Եղուարդի սիրտը ուրախութեամբ լցուած էր փարիզ դառնալու ժամանակը հասնելուն համար . այս պատճառաւ Ատէլին քաղցր յանդիմանութիւնները բրաւ անոր . տիկին ժերմէջլ լսեց , բայց արդէն ապագային համար երկիւղ ունէր , վասն զի իրերն իր աղջկան հարսանեաց ժամանակը յուսացածին պէս յառաջ չէին երթար . թէպէտ աղջկը իր ամեն կամքը կը կատարէր , բայց եղուարդ տկար և անխոճեմ՝ ճնաւորութեան տէր երիտասարդ մ'էր :

— Ո՛հ , կըսէր գաղտնապէս տիկին ժերմէջլ , աղջիկս շատ սիրուն և շատ զգայուն է . նա Եղուարդին վայրելիք կին մը չէ : Ասի տիրուհի ըլլալու էր , բայց հիմայ իր ամուսինը սիրելէն և կամ հառաչելէն ուրիշ բան չգիտեմ . . . և եթէ նա ուզէ անխոճեմ բան մ'ընել , չի կըրնար հակառակիլ . : Կը յուսանք որ այլ ևս այնպիսի անխոճեմութիւն չընէր :

Դարցան փարիզ , Հոն Եղուարդ խորհեցաւ իր բրած առաջադրութիւններն գործադրել : Ամեն օր Պրուէ կերթար , և կը յաճախէր այն սրճարանները ուր գործոյ տէր մարդիկ կերթան : Հոն դեռ գործի սկսած չէր , այլ կը պատէր , ստոր անոր բօսածները մտիկ կընէր , կը խօսակցեր և մարդ ճանչնալու ետեւէ էր , Տիւֆրէնս ալ գրեթէ միշտ հոն էր , և իր բարեկամին կը խօստանար որ զինքը իր մեծամեծ գործերուն ընկերակցէ : Իսկ երբ գործ չըլ-

լար, ժամանակին զուարճութեամբ ծիծաղելով, նոյն օրը ըրածնին պատմելով, թատրոններու, պարահանդէսներու, նորածնութեանց նուագադրութեան և ծիծաղաչարժիկներու վրայ խօսակցելով կանցնէին: Իրենց զբաղած դործերն նուագարանաց, պարի և ուրիշ ասոնց նման զբօսանաց վրայ խօսակցելէ չէին արգելիք զիրենք: Վիէննայի կամ Լոնտրայի վրայ եղած փոխանակարոյն վրայ տեղեկութիւն առնելովն Տանգերձ, նոյն դիշերն նոր բան մը խաղալու պատրաստած գերասանուհւոյն անունն ալ կ'իմանային. բաժանորդագրութիւններ ծախել կըտանձնէին և անոր հետ մէկտեղ ուրիշի մ'ալ բնակարան մը վարձել կուտան. այն ինչ վաճառականին պատիւն ու Լորտ Պայրքնի սկզբնական վիճակը կը պատմեն. յիշնորդի մը ճշգրտութեանը վրայ խօսելնէն վերջը՝ խօսքերնին տղեկի մը խաղալովն վրայ կը դարձնեն. սնանկազօղի մը սնանկանալուն պատճառները մէջ կը բերեն ու կը վիճաբանեն, և վերջը ողբերգութեան մը ուժգին մտաբերուն վրայ կը խօսակցին. վերջին գնդամ սեղանաւորի մը առած պարահանդէսին անցքերը և նորա կնիցը վանդակադատ փոքր սենեկին մէջ պատահածները գիտեն, վերջապէս ամեն բանի տեղեակ են, տմեն բան գիտեն, վասն զի ամեն բանի վրայ կը վիճաբանեն: Այսպիսի ժողովներու մէջ կուխ և միտնգամայն հաշտութիւն կըլլայ, փոթորիկ կընէ ու կը հանդարտի ալ. մէյժիմ կ'անհամահայնին, մէյժիմ կը համա-

ձայնին, գաւազանի և կամ ուռնելիք (մաշա) ծայրով տէրութիւններ կը մեծցնեն. և ամեն տէրութեանց խորհրդարաններուն դադանիքը գիտնալ կերեւցնեն. . . Վերջը կընեն տուն կերթան, և իրենց բացակայութեան ատեն հոն ինչեր պատահած ըլլալն բնաւ չեն կրնար իմանալ:

Ատէլին իր ամուսնութեան առջի օրերը գեղն անցուցած գեղեցիկ օրերը յիշելով կը ցաւի: Սակայն իր ամուսինը միշտ զինքը կը սիրէ. այս մասին տարակոյշ չունի, բայց առաջուան պէս միշտ բովը չէ. և երբ քոյն ալ գտնուի, ըստ սովորութեան չէ թէ սիրոյ, հաստատամտութեան և ամուսնական երջանկութեան վրայ կը խօսի, այլ մեծամեծ գործերու, հարստութեանց և բարձր շահերու վրայ:

— Ո՛հ, ի՛նչ պիտի բնենք այնքան հարստութիւնը, բարեկամն, ըսաւ Ատէլին իր ամուսինը թեւերուն մէջ առնելով, ես քիչ օրէն մայր պիտի ըլլամ, աօի ինձ համար ամենամեծ հարստութիւն մ'է. ես ձեռ սէրէն զատ ուրիշ բան չեմ ուզեր. . .

— Սիրելի բարեկամահիս, ձեր ըսածը շատ լաւ խօսք է. ես ալ այդ զգացումներն ունիմ, բայց ես ձեզմէ աւելի հեռատես եմ. . . Հանդարտ եղիք, օր մը շատ երջանիկ պիտի ըլլանք. . .

— Ո՛հ, բարեկամն. . . չեմ ուզեր այնչափ երջանկութիւն. . . հիմակուան վիճակիս Է՛նչ

ունի . . . աս, այն Տիւֆրէան դեռ չի ճանչցած, դուք միայն զիս կը խորհէիք :

— Տես, գարձեալ Տիւֆրէանի խօսքը կը նէ . . . չեմ գիտեր թէ այդ մարդը ձեզի ի՞նչ ըրած ունի որ այդպէս կատէք ու անկէ բնաւ չէք ակողմիր . մարդը ինձի աղէկ խրատներ կուտայ, զիս հարստութեան ճամբան կը վարէ. չեմ գիտեր թէ սա ըրածներուն մէջ գէշ երեւարու արժանի ի՞նչ կայ :

— Ես մարդու գէշ չեմ ըսեր . . .

— Ուրեմն ինչու՞ զիսքը ցուրտ կերպով կընդունիք, ինչպէս նաև զտիկին Տըլլան :

— Ես զինքը ուրիշներն ընդունածիս պէս կընդունիմ :

— Ո՛հ, անուշտ . . . արջի մը նման ապրիլ կուզէք . . . անոնց ընկերակախութեան մէջ ելնելու . . .

— Ես ձեզի ատանկ խօսք մը չըրի . . . ուրիշ անգամներ ես միայն ձեզի կը բառէի, և ձեր տանը մէջ ձեզի հաճոյ ըլլալու համար ուրիշ մարդ պէտք չէր :

— Մն ուրեմն . . . հիմա ալ կուլար . . . արցունքներն փաստաբանութիւն չեն նշանակեր . . . աղու գործ է ըրածնիդ . դուք լաւ գիտէք որ ես զձեզ կը սիրեմ . . . և միայն զձեզ կը սիրեմ . . .

— Ուրեմն ալ չեմ լար, բարեկամս, կուզէք նէ, բոլոր քաղաքը աներնիդ լեցուցէք :

— Բայց ես ատանկ չեմ ըսեր . . . տեսնենք . . . եթէ աւաջագործիւններս յաջո-

զին . Տիւֆրէան բաւ ինձ որ եթէ պարահանդէս, երեկոյթ, նուազադրօս, և այլ սյուպիսի հանդէսներ տամ, գէշ չեմ ըներ . . . Բայց հիմա ձեր մօրը առջև ատանկ խօսքեր մի ընէք . . . գիտէք որ նա դէմ կը կենայ . . .

— Բան մը չեմ խօսիր, բարեկամս :

Ատոր վրայ Եղուարդ իր գործին դնաց, և Ատէլին մինակ մնաց : Այն տանն սկսաւ համարձակ արտասուել, վասն զի լաւ խմացաւ որ իր ամուսինը առաջինը չէ : Բայց և այնպէս զինքը գորովանօք կը սիրէ և բնաւ անհաւատարմութիւն չունի . ուրեմն ինչու՞ համար ցաւելու է այնպիսի փոփոխութեան մը վրայ որ բնութեան մէջ կայ, և բան մը չի կրնար անոր արգելք ըլլալ : Ութ ամսուան ամուսնութիւնը Ատէլինի սէրը չի փոխեց . իր սէրը միշտ սաստիկ, միշտ մի և նոյն, և իր գորովանքը միշտ անփոփոխ և միշտ կենդանի մնացին . բայց մարդու մը սիրտը իր սիրած առարկային վրայ հանդէրու պէտքն ունի, չի կրնար զանի միշտ մի և նոյն սաստկութեամբ սիրել . մէյ մը սիրտը անոր վրայ կը բաբախէ, մէյ մը կը դադրի . . . կրկին կը բորբոքի, վերջն ալ կը պաղի . սաի կրակ մ'է, որ ամեն տեղ հաւասարապէս չի վառեր . ոչինչ բանով կրնայ մարեկ կամ կրկին բորբոքել :

Ատէլին այս խորհրդածութիւններով կը մըտիւթարուէր . և ինքրեն կը խոստանար իր ցաւերը մօրմէն ծածկելու . բայց երբէք Տիւֆրէանի երեսը չէր կրնար նայիլ . այս մարդը ի-

րեն անանկ անհաճոյ երեւցած էր որ պատ-
ճառք ինքն ալ չէր կրնար հասկընալ : Թեպէտ
սիրուն և ազնուական մէկը կերեւէր իրեն , և
իր վարքն ու բարքն ալ մեծարանաց արժանի
էր , սակայն վերջապէս իրեն խիստ տոեի կը
թուէր . . . Չգիտեր թէ ինչ պատճառաւ չէր
սիրեր զանի , և անոր նայուածքը իրեն այնպի-
սի խռովութիւն մը և նեղութիւն մը կազդէր
որ ինչ բանէ յառաջ զայն բնաւ իմացած չէր :
Տիւֆրէան ալ ատր վրայ շատ շփոթած կերե-
ւէր . Տիկին Տօլպանի տունը եկած ատեն ինքը
հոն չէր երթար . դիպուածով իր բարեկամին
կնոջը հետ առանձին գտնուած ատեն կը լսէր .
բայց այն ժամանակը Ատէլինի բոլոր շարժում-
ներն կը դիտէր , և իր վրայ անանկ տպաւո-
րութիւն մը կընէին որ չէր կրնար համբերել :

Եղուարդ՝ իր կնոջը հետ ըրած վերջնու-
եալ խօսակցութենէն քանի մը օր վերջը իրի-
կուն մը զուարթ դէմքով տուն եկաւ , երեսը
կը խնդար , և աչքերուն մէջ ալ ուրբաութիւն
կը փայլէին :

— Ինչ եղաք , փեսաս , ի՞նչ պատահեցաւ
ձեզ , ըսաւ տիկին ժէրմէոյլ , զձեզ խիստ ու-
րբա կը տեսնեմ . . .

— Արդարեւ ուրբա ըլլալու առիթ ալ ու-
նիմ . . .

— Բարեկամս , հարկաւ մեզ ալ պիտի ը-
սէք որ խնդակից ըլլանք ձեզի հետ :

— Անուշտ , տիկնայ , և պպահովեմ որ ալ
չե պիտի ըսէք թէ ես եղբորներու և այժեամբե-

րու կը հետեւիմ : Ամենայնոյդ առիթի մը օտ
վերջին օրերս փարիզ հաստատուել ուզող հո-
րուստ օտարականի մը հետ ծանօթացայ : Ին-
քը քաղերս ամենագեղեցիկ թաղերէն մէկուն
մէջ ընդարձակ , գեղեցիկ և զարդարուած
տուն մը կը փնտռէր . ետ դտայ , տարի պը-
տրտցուցի , հաւնեցաւ , դնեց և ինծի վեց
հազար ֆրանգ միջնորդչէք տուաւ , այնչափ
ֆրանգ ալ ծախողէն առի . հիմա քովո տաս-
ներկու հազար ֆրանգ ունիմ , զորս մէկ վայր-
կեանէն շահեցայ , աս սղէկ չէ՞ . . .

— Այո , շատ աղէկ շահ է . բայց սա ալ
խօրհեցէք որ այս վայրկեանը ձեռք ձգելու
համար երեք ամիս յողնեցաք :

— Սակայն աս հազար ֆրանգ է . . . և-
րեք ամիս յողնելուս շափ ալ արժէք ունի :

— Իրաւունք ունիք . բայց սասնկ դէպ-
քեր խիստ քիչ անգամ կը տատահին :

— Ո՛հ , եթէ ժողով ամեն օր տասներկու
հազար ֆրանգ շահէ , ստակ դներու տեղ չի
գաներ :

— Բայց կարծեմ այս գործոյն մէջ Տիւֆ-
րէանի միջամտութեանը կարօտ չեղար :

— Չէ , բայց անիկայ ասիե տուի աղէկ և
շահաւոր գործեր պիտի գտնէ ինձ . . . Սա-
կայն յաջողելու համար պէտք է որ սենեակ
մ'ունենամ . . . Դուք ալ գիտէք որ երբ յա-
ճախորդներս ինձ հետ տեսակցելու դան , ես
զանոնք ոչ սրտէք կրնամ ընդունիլ , և ոչ ալ
պատկելու սենեակս . . . Ուստի ինձի զարդա-

րուն սենեակ մը պէտք է . . . Ասի անհրա-
ժեշտ է . և որովհետև այս տունը անանկ յար-
մար սենեակ մը չկայ, ուստի . . . տուներ-
նիս փոխել պէտք է . . .

— Ինչ, այս տունէն ելնել կուզէք . . .

— Ո՛հ, բարեկամս . . . Հարսիքնիս այս
տունը եղաւ . . . մեր երջանկութեան առա-
ջին տեղը այս է, և ես հոս շատ երջանիկ եմ . . .

— Սիրելի բարեկամուհիս, մարդս ամեն
տեղ երջանիկ կրնայ ըլլալ, եթէ հարուստ է :
Կենք ասիէ աւելի գեղեցիկ տուն մը կա-
նենք . . . Այս սրահը շատ պղտիկ է . . .

— Բարեկամներ ընդունելու համար բա-
ւական մեծ է . . .

— Այո, բայց միայն բարեկամներ ընդու-
նելու համար չէ . հարկաւ ծանօթներ ալ կըլ-
լան . . .

— Փեսաս, լաւ խորհրդէք որ ձեր կար-
գութենէն վեր գործերու ձեռնարկէք . . .

— Տիկին, ստակ պիտի չափէք, և այս ալ
կարծեմ խիստ գովելի փախազ մ'է . Ինչո՞ւ
համար այսպիսի հաղարատ որ անծանց յաջողու-
թեամբ փորձած փորձերն ես ալ պիտի չը-
նեմ . ես անոնցմէ պակաս արժանիք, պակաս
խելք ունիմ . ես ընդհակառակը կը խոստո-
վանիմ : Սա ամենուն բերանը գոյնստով պը-
տառող գործարանապետը գիտէք, որ այնչափ
հարստութիւն ու այնչափ համարում չափեր է,
ատի առանց ստակի փարիղ 'եկած է, և այն
ատեն միայն գրեւ և հաշուել գիտէր . իբր ա-

չակերտ կը մտնէ այդ գործարանը որուն տէրը
հիմա ինքն է . կաշիատի, կը յոգնի, ստակ կը
չափէ և կը յաջողի ալ : Ասի թողունք . սա սե-
ղանաւորը՝ որ հիմա ինքն է . կաշիատի, կը
յոգնի, ստակ կը չափէ և կը յաջողի ալ : Ասի
թողունք . սա սեղանաւորը՝ որ հիմա զբոս-
ընդարձակ գործեր կընէ, իր գեղէն ստակ
մուրալով կըրը հոս եկեր է, բարդի վրայ պառ-
կեր, չոր հաց կերեր է . . . շատ անգամ ալ
անհնարին նեղութեանն ինքզինքը դետը ձգե-
լու է եղեր : Վաճառական տեսեր է զինքը, և
նամակ մը յանձնել է իրեն որ տեղ մը տանի .
սա ամենայն արագութեամբ և փութով այդ-
յանձնարարութիւնը կատարելուն համար ա-
մենքն ալ սկսեր են իրեն այլ և այլ յանձնա-
րարութիւններ ընել, ինքն ալ բաւական բս-
տակ չափէր է . իր հաշուոյն դրամական առև-
տուր ըրեր, և վերջապէս ամեն առևտուրին
մէջ յաջողելով այսօր միլիոններու տէր եղեր
է : Ասոնց նման հարիւրաւոր օրինակներ կըր-
նամ ցուցընել ձեզ . . . և որովհետև ոչինչ
բանով մը մարդս կրնայ այսպիսի հարստանալ,
ըսել է որ եթէ ձեռքը պատրաստ ստակ ու-
նենայ, աւելի գիւրութեամբ կարող պիտի ըլ-
լայ իր նպատակին հասնել, ու աւելի հարըս-
տութիւն ձեռք ձգել :

— Տղաս, ձեռքը ստակ չունեցողը փնաս
ընելու վախ ալ չունենար :

— Բայց տիկին, ապուշ և տխուր մարդիկ
միշտ փնաս կընեն :

— Աւելի աղէկ է ապուշըլլալ քան թէ խաբերայ . վասն զի կան անանկ մարդիկ որ ուրիշին կորստեամբը միայն հարստութիւն կը դիզեն :

— Կը տեսնեմ, տիկին, որ դուք զիս այս միջոցաւ հարստանալու կարող մէկը չէք համարիր :

— Անշուշտ ոչ . . . բայց ամեն բանէ յառաջ կարգ կանոն է խնայողութիւն պէտք է . . . Բիշ մը յառաջ նկարագրած գործարանապետնիդ և սեղանաւորնիդ ալ այս կերպով հարստացած են, և չէ թէ մնաստկար երեկոյթներ և պարահանդէսներ տալով :

— Տիկին, հիմակուան ժամանակն այնպէս կը վերցնէ . . . այսօր ամեն մարդ զրօսանքով միայն կրնայ գործ տեսնել : Առուծախ մ'ընելու համար զիմի խմել պէտք է, զբաժնկան փոխանակութիւն մը գաշնադրելու համար խաղի թղթոյ սեղան մը կազմելու է, և կալուած մը գնելու համար անդրիսկան պար մը խաղալու է : Այս ամենուն մէջ ես գեշ բան մը չեմ տեսներ . . . Այս այս է զուարճութեամբ գործ տեսնել ըսածս . . . :

— Այո, պարոն, բայց այդ ըսածնիդ ալ հաստատապէս չի կրնար ըլլալ : Իոկ ես, հարուստ սեղանաւոր ըլլալու համար այդպիսի զրօսանայ հանդէսներ սուսող մարդէն չեմ ախորժիր . և եթէ ձեր նպատակը ասանկ հանդէսներ տալու համար այս տունէն մեկնիլ է, կանխաւ կրնայնեմ ձեզ, որ հետեւրնիդ չեմ կրնար գալ :

Ասոր վրայ եղուարդ իր զգառնին բան մը չի խօսեցաւ, և զլլարկը առնելով բարկուած կամբ մը դուրս ելաւ, կշտամբելով այնպիսի կիներն որ չի հասկցած իրողութեանց խառնուիլ կուզեն : Տիկին ձեքմէջլլալ իր աղջկան հետ առանձին մնաց :

— Ա՛հ, մայր, ըսաւ Ատէլին մօրը գերկը նետուելով, եղուարդին դէմ մի բարկանաք . . . Աւա՛ղ, յանցաւորք միայն ես եմ . . . ես էի որ զինքը պարտաւորեցի իր վարած պաշտօնէն հրաժարելու . . . բայց, ասանկ ընելը կրնայի գուշակել . . . Ա՛հ, ինքը յանցանք չունի, յանցանքը Տիւֆրէսնի քոյն է, որ իր խրատներովը ամուսնոյս խելքը գլխէն առաւ :

— Մերելի Ատէլինս, քու ամուսնութեանդ առաջին օրերը պէտք էր որ ամուսնոյդ միտքը զբաւէիր և զանի քու կամացը հնազանդեցընելու վարժեցընէիր . այս ըսածս ան ատենները դիւրաւ կրնար ըլլալ . . . բայց դու բոլորովն ասօր հավատակը ըրիր :

— Իմ փափագս միայն իրեն հաճոյ ըլլալ էր . . . այն ատեն միակամ և միախորհուրդէինք . բայց քիչ ատենէն մայր պիտի ըլլամ . . . Ո՛հ, անհամբերութեամբ կըսպասեմ այս վայրկենին . ապահով եմ որ իր որդւոյն գորովանքն բազդէ . . . հարստութեան բոլոր գաղափարներն իր մտքէն ջնջելու պատճառ պիտի ըլլան . Իցէ թէ ըսածդ իրաւ ըլլար . . . :

Ատէլինի ծննդաբերութեան օրերը մտեցաւ, և եղուարդ ալ զգաց որ բնակութիւնը

փոխելու ժամանակը չէր : Այ անկէ վերջը իր առաջադրութեանց վրայ խօսք մը չըրաւ , և Ատէլին կարծեց որ զանոնք մտոցեր է : Մէկ քանի օրէն գեղեցիկ աղջիկ մը ծնաւ որ իր մօրը դէմքին իսկական նկարագրութիւնը կը կրէր : Եղուարդ կուզէր որ Տիւֆրէնի որ աղջկան կնքասայրն ըլլայ , բայց տիկին Ճէրմէյլ մերժեց զանի . Եղուարդ հարկադրեցաւ անոր հնազանդիլ , և անոր տեղ խիստ պարկիշա , պատուաւոր և հարուստ ծեր կալուածատէր մը ընտրեցին , որ իր սանամօրը երեք տուփ շարարեղէն և զոյգ մը ձեւնոց տուաւ , և խոստացաւ որ ամեն շարժու իր սանուհին տեսնելու զայ անոր ինչպէս ըլլալն իմանալու համար :

Եղուարդ բան մը չէր խօսեր , այլ իր կնոջը բոլորովին առողջմանալուն կրօնպատէր իր առաջադրութիւններն ի գործ գնելու համար . և ի ներքուստ ալ կը փափագէր որ տիկին Ճէրմէյլ իր բնակութիւնը փոխելու ատեն իրմէ զատուելու համար ըրած որոշմանը վրայ հաստատուն կենայ , որպէս զի այնուհետեւ ալ իր բովը չի գտնուի իր զոքանչն որուն խրատներն ու յանդիմանութիւնները իրեն անհասճօյ ըլլալ սկսած էին :

Իսկ Ատէլին մայր կուուելուն համար սաստիկ ուրախութեամբ լցուած էր . և թէպէտ Եղուարդ շատ բան ըսաւ որ հարուստ ընտասնիքներն իրենց դաւակը կաթնտու կնոջ կը յանձնեն . սակայն ինքը ամենեւին անոր ը-

սածներուն չանաւով իր դաւակը անձամբ կը սնուցանէր . այս առաջին անգամ Ատէլին իր ամուսնոյն չի հնազանդեցաւ , մայրական սէրը զինքը այն աստիճան բերկրեցուցած էր որ մինչև այն օրը իրօրը սրտէ սիրած ամուսնոյն այս առաջարկութիւնը ամենեւին չընդունեցաւ :

Իսկ մը ժամանակ կար որ Տիկին Տօլպան Եղուարդի տունը խիստ յիշ անգամ կուգար . Ատէլին և իր մայրը պատճառը չէին գիտեր , բայց Տիւֆրէնի երեսն ալ չի տեսնելուն համար շատ գոհ էին , որն որ սովորաբար տիկին Տօլպանի կրնկերամար , կը խորհէին որ Եղուարդ զանի ստէպ չի տեսնելով հարստանալու մասին անկէ ընդունած նոր գազափարներն ալ կամայ կամայ մտքէն կը ջնջուին :

Սակայն այս տիկնոյք այնպէս խորհելով կը սխալէին . Տիւֆրէնն միշտ եղուարդի հետ էր , և անոր բնութիւնը ալ կատարելապէս իմացած էր . գիտեր անոր հետ ծանօթանալէն քաղելիք մեծամեծ օգուտներ . մանաւանդ որ մեծամեծ նպատակներ ալ ունէր , զորս գէպքերն անշուշտ շուտով պիտի իմացնեն մեզ : Բայց որովհետեւ Տիւֆրէնն վարպետօրդի էր , կրօնպատէր իր նպատակներն դորձադրելու ժամանակը գայ : Երբ տեսաւ որ տիկին Ճէրմէյլ զինքը չը սիրէր , և անոր իր փեսային քովը գտնուիլը իր նպատակներուն գործադրութեանը արդեւք պիտի ըլլայ , համոզելով զԵղուարդ որ մեծահասոցէս երեկոյթներ տալու համար աւելի ընդարձակ տուն մը փոխադ-

րուի, զանի իր զօրանելէն բաժնելու միջոց մը
 գտաւ: Երկու բարեկամներն ամեն օր զիրար
 կը տեսնէին: առաւօտեան մէկ մասը միատեղ
 կանցնէին, և երբեմն ալ Եղուարդ իրիկուան
 դէմ առնէն դուրս ելնելով Տիւֆրէանի ժա-
 մադ իր եղած տուները կերթար: Այ այնու-
 հետեւ Եղուարդ չէր կրնար իր բարեկամէն
 անցնել, առանց անոր հետ խորհրդակցելու
 բան մը չէր ընէր, և առանց զանի տեսնելու
 բանի մը ձեռք չէր զարնէր: . . . Եւ երբ իր կինը
 իրեն ազդարարութիւն մը կրնէր, երբ իրեն
 զոքանքը որ իրեն խրատ մը կուտար, Եղուարդ
 կը սրգողէր, և կուղէր որ խօսքը իրը ըլլայ . . .
 Ինքզնք չէր գիտեր որ իր բարեկամը կարձած
 անձին ձեռքը խաղաղիկ մը եղած էր: Ահա այս-
 պէս Եղուարդ իր գիւրացուան բնաւորու-
 թեամբը, տկարամտութեամբը և անմիտ յա-
 մառութեամբն իր բարեկամէն զատ բնաւ մե-
 կու մը խօսքին շանսալով ու խրատներուն չի
 հետեւելով իր գիտաւորութեանցը վրայ հաս-
 տատ կը կենայ, և իր առաջադրութիւններն
 օր ըստ օրէ կը զօրացնէ, և Տիւֆրէան ալ քաջ
 գիտնալով որ տկար մարդ մը ասկէ զատ ու-
 ըրիչ միջոցաւ չի կրնար խաբուիլ, միշտ փայլուն
 գործքեր կ'առաջարկէր անոր, և զանի ուղած
 ձեւը մտցնելու համար ամեն ճիգ կը թափէր:
 Ատէլինի առողջութիւնը իրեն ներկայացած
 նոր խնամատարութեան համար երբէք չայլալ-
 լեցաւ: Ընդհակառակն իր դէմքը աւելի քաղց-
 բացաւ, աչքերն աւելի փափկացած էր նայ-

ուածքն աւելի վեճացաւ: նա առաւել ևս
 հաճելի կերուէր, երբ իր աղջիկն գիրկը առ-
 նելով առաւօտներն դուրս կը հանէր զանի
 քիչ մը զովացնելու համար: Ատէլինի այս գե-
 ղեցկութիւնը Եղուարդէն զատ ուրիշ մէկը կը
 տեսնէր: ամուսին մը այս կէտերը հաղիւ թէ
 նկատողութեան կրնայ առնուլ, և միշտ հակա-
 ուսիլը տեսնել կը կարծէ: Ասոր համար իր կրն-
 կանը գեղեցկութիւնը ուրիշներն կը նկատեն,
 անոր չի տեսածն իրենք տեսնելով կը զարմա-
 նան, անոր չի տեսածն իրենք տեսնելով կը
 զարմանան, անոր չի տուած գովեստն իրենք
 կուտան, և անոր եռանդը մարած տեսնելով
 իրենք կը բորբոքին և կը սիրահարին: Իսկ ա-
 մուսիններն այս կէտերը բնաւ չեն խորհրդ, այս
 մատերուն համար անհանգիստ չեն ըլլար, և
 այս է պատճառն որ շատ անդամ գեշ գարձ-
 ուածներու զոճ կըլլան:
 Մարդ մը Եղուարդին չի նկատածն կը նը-
 կատէր: միշտ Ատէլինը կը հետազօտէր առանց
 անոր գիտնալուն: կը զարմանար անոր չնոր-
 հացը վրայ: իր տեսնել չի կրցած բաներն կը
 դուռակէր, և տեսնել կրցած բաներուն վրայ
 ալ չափազանց կերպով կը զգածուէր: Սաստիկ
 կիրք մը կը տիրէր իր վրայ, և իր այս կիրքը
 յագեցնելու համար յաջող վայրկենի մը կըս-
 պատէր, թէ պէտ է իրտուլ ալ որ իր գիմացիը
 զինքը ամենեւին չի պիտի սիրէ: Ատէլին խիստ
 առաքինի և պարկեշտ կին մ'էր, նա միտն իր
 այրը և իր զաւակը կը սիրէր: Բայց իր սիրա-

հարին համար բնաւ արդեւք մը կամ պատճառ չկար զանի իր այս առաքինութենէն վրիպեցընելու համար։ Բան մը չէր կրնար իր վայրենական կրկց անըուսպ եռանդը գաղբեցնել, և իր սէրը սարսափեցնել, զոր առելի լաւ է անսանձ փափազ, զառանցանք և նախանձ անուանել որք երկար ատենէ ի վեր է սրտին վրայ տիրած էին։ Միտքը գրած էր որ ամեն փորձ փորձէ, ամեն բան ընէ և ամեն բանի յանդգնի իր վայրենական բարբոքումը անցընելու համար․ իր երկար ատենէ ի վեր գաղտնի մնացած սէրը որ ըստ օրէ կը զօրանար, և եթէ անգամ մը ձեռքը պատեհութիւն անցընէր, իր կիրքը յաղեցընելու մասին հաստատ որչում՝ ըրած էր։ Բայց ո՞վ է այդ մարդը, որուն վրայ այսպիսի սիրահարութիւն մ'ըլլան մինչև հիմա գաղտնի մնացած էր . . .

— Ընթերցող, գու կը ճանչնաս զանի, և ապահով եմ որ արդէն անոր ով ըլլալն իմացար։

Եղուարդ՝ որ սաստիկ եռանդեամբ իր նոր գործերուն ձեռք զարկած էր, և որոնցմէ բան մ'ալ չէր հասկընար, սակայն իրեն համար խիստ զմայելի կերեւէին, վերջապէս վաճելուչ տուն մը վարձեց, նորաձև կառք մը և գեղեցիկ կարասիք գնեց, և իր փափագանացը հասնմատ շքեղ դրասնեակ մը ունեցաւ խիստ լաւ զարդարուած, որուն մէջ վրանին տետրակներ շարուած սեղաններ կային․ և թէպէտ տետրակներն պարսպ էին, բայց ին-

քը ապահով էր որ շուտով հետզհետէ կատարած գործողութեանց արձանագրութիւններովն զանոնք պիտի լեցընէ։ Ուստի Եղուարդ այդ գործերն գտնելու համար յատկապէս պաշտօնեայ մը վարձեց, որն որ միշտ լրագիր կը կարգար և գրել կը կտրէր։

Ատէլին գնաց իր նոր բնակութիւնը․ հոն չորս դին նայելով սկսաւ հառաչել, Տիկին ժերմէյլ ընդհակառակն իր փեսային բարկացաւ և խտիւ յանդիմանեց զանի։ Ըսաւ որ շուտով պիտի կործանի իր այս ընթացքովը, Եղուարդ զայրացաւ և կռիւ մ'է հանեց։ Տիկին ժերմէյլ մեկնեցաւ իր փեսային տունէն երդոււմ ընելով որ ալ այնուհետև երեսը չի պիտի նայի, այնպէս որ իր աղջկանը արտասուացըն ալ ականջ չի կտնեց, թէև ի ներքուստ շատ ցաւեցաւ անոր վրայ։ զգաց որ աւելի աղէկ էր աղջիկը հաստատամիտ և բարեբարոյ մէկու մը տալ, քան թէ այսպիսի տկար և վատ մէկու մը, որ իր յանցանքը խոտտվանելու չափ խելք չունի, և ուրիշ անգամ այնպիսի յանցանք մը չի գործել խոտտանալու մասին յամառութիւն կընէ։

Տիկին ժերմէյլի տունէն մեկնելէն վերջը՝ երկու ամուսիններուն մէջ նոր տեսարան մը բացուեցաւ․ որովհետև Ատէլին ալ սկսաւ իր այլը յանգիմանել, և վերջապէս աղաչեց որ կրկին մօրերնուն քով երթան․ իսկ Եղուարդ յամառեցաւ․ իր բարքը չուղղելու մասին ունեցած հաստատամտութիւնը յայտնեց, և իր

կնկանք իմացուց որ մտադիր է իր կամքը կատարելու, և ալ այնուհետև ամեն համոզում իրեն համար անօգուտ է, իր բռնած ընթացքը ալ չի պիտի փոխէ, և իրեն անպատուութիւն կը համարի կանանց խրատներովը իր վարմունքը ուղղելն:

դուարդի նոր բնակարանը առաջին անգամ դառն արտասուօք ցուեցաւ. բայց ասի բնաւ իրեն փոյթ չէր, վասն զի մտքին մէջ մեծամեծ գործքեր կը դառնային: Տիւֆրէօն իրեն յիսուն հազար ֆրանգ պիտի շահեցընէր հարուստ նաւապետէ մը որ փորձը եկած ըլլալով իր ունեցած ստակն շահօժ տեղ մը յանձնել կուզէր: Արդ՝ այս հարուստ անձին հետ ծանօթանալու համար կերկոյթ մը, պարահանդէս մը տալ պէտք էր, և ասի ալ երրորդ անձի մը միջոցաւ կրնար ըլլալ: Ուստի որոշեց պարահանդէս մը տալ, և իր բարեկամին խրատներուն համեմատ եղուարդ մեծամեծ պատրաստութիւններ տեսաւ այնպիսի հանգիսի մը համար որով մեծ համբաւ պիտի ստանար: ձշմարիտ է որ ասանկ հանգիսի մը համար մեծագումար ծախք կերթայ, և որով եղուարդ ալ քանի մ'որ յառաջ շահած տասներկու հազար ֆրանգը մեծ մասամբ վատնեց, բայց որովհետև խիտ փայլուն հանդէս մը տալ կը փախադէր, ուստի պէտք եղաւ իր եկամտաներն առնուլ կարասիք դնելու և իր տանը դարդարելու համար: Սակայն այս ծախքերը բան մը չեն՝ պէտք է սերմանել հնձերուն հա-

մար: այս էր Տիւֆրէօնի սկզբունքը: որովհետև ինքը զուարճութենէ, զբօսանքէ խիտ կախարժէր, և այնպէս երջանիկ, ուրախ և զուարթ էր որ չի պատմուիր: Իսկ երդուարդ ալ մեծամեծ գործոց ձեւնարկելու յուսով կուրախանար:

ԳՒՌԻՍ ԺԻ:

ՄԵՆ ԵՐԿԿՈՅԹ: — ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ . . . ՍԻՐՈՅ,
ԵԹԷ ԿՈՒՂԷՔ ԽՄԱՆԱՍ,

— Սիրելի բարեկամուհիս, ըսաւ եղուարդ առտու մը իր կնկանք, վաղը հանդէս մը պիտի կատարեմ. . . պարահանդէս մը. ուստի պատրաստուեցէք որ եկողները պատուէք:

— Հանդէս պիտի կատարէք. . . որո՞ւ ուրեմն. . . մօրս հետ խորհրդակցեցաք:

— Ինչ հարկ կ'ոյ մօրդ հետ խորհրդակցելու. . . նա այնպիսի կին մ'է որ խելքը չի հասած գործերուն մէջ խառնուիլ կուզէ, և որովհետև ինքը նեղ շրջանակի մը մէջ ապրելն կախորժի, մեզի ալ անկէ դուրս ելնելի կարգիլէ. . . Աղէկ դիտցիք որ ասի բնաւ մէկը չընդունիր: Մնաց որ երբ խմանայ թէ ես այս կերպով յիսուն հազար լիբա եկամտա պիտի շահիմ, աղէկ դիտեմ որ իր խրատներուն շանտալուս համար պիտի ներէ ինձ:

— Ըսե՛լ է որ այդ ըսածնիդ շուտով չի պիտի ըլլայ . . . :

— Խորհածնէ՛դ աւելի շուտով, տիկին, անոր համար կաշխատիմ . . . :

— Ասոր համար կուտար պարահանդէսը :

— Անշուշտ :

— Ինչպէս մարդիկ են եկողները և ո՛րչափ :

— Ո՛հ, խիստ ազնուական, և բաւական ալ բազմութիւն պիտի ունենանք : Բայց առաջին անգամ այնչափ բազմութիւն պէտք է, վասն զի որչափ շատ ըլլան եկողները, հանդէսըն ալ այնչափ շքեղ ու դուարճալի կըլլայ :

— Ո՛հ, բարեկամս, ի՛նչ պարագ բան է ըրածնիդ . ո՞վ ըսաւ ձեզի ատիկայ :

— Ատնք պարագ բաներ չեն, տիկին : Դուք ձեր աղիկը քնացուցած ատեննիդ ես մեծամեծ անձանց հետ կը տեսակցիմ :

— Ո՛հ, դիտե՛մ որ երբէք քովս չէք կենար :

— Պէտք է որ այնպէս ընեմ, պէտք է որ մարդ ճաննալու համար ընկերականութեանց մէջ գտնուիմ :

— Այդ ընթացքը երբեմն վտանգաւոր կըլլայ :

— Ո՛հ, տէր Աստուած, ես տղայ եմ. ես իմ տեսակցած մարդս չե՛մ գիտեր . . . : Չեր և մօրերնուդ ըսածներէն այնպէս կերևի որ ես ինքզինքս կառավարելու անկարող մէկն եմ :

— Ո՛չ, բարեկամս, ես ոյդպէս ըսել չեմ ուզեր . . . բայց քանի որ ձեզի հետ անցուցած ժամանակներս կը յիշեմ, խիստ կը ցաւիմ . . . այն ատենները միշտ ինձ հետ կանցընէիք . . . ընկերականութեանց մէջ չէիք մտներ . . . այն ժամանակ երջանիկ չէիք :

— Անշուշտ . . . :

— Ուրեմն հիմայ ապրելու եղանակնիդ ինչու փոխեցիք :

— Ինչու՞ փոխեցի . . . այդ ինչպէս եղական հարցում է որ կընէք . . . կրնայ ըլլալ որ մարդ բոլոր կեանքը սիրով անցընէ :

— Այս, այդպէս է, բայց մեր ամուսնութեան վրայ դուռ տարի մ'անցաւ :

— Դարձեալ յանդիմանութեան սկսաք . . . կնիկ չէ՛ք, բնաւ դատաղութիւն չունիք :

— Չէ, ես զնեղ չեմ յանդիմաներ, բարեբարեկամս. պարահանդէս պիտի տաք, ի՛նչ պիտի ընէք, բրէք, քանի որ հաճոյք մը կըզգաք, ալ չեմ հակառակիր :

— Որչափ սիրուն էք . . . կը տեսնամ որ մօրերնուդ պէս յամուս չէք . . . բայց դարձեալ կըսեմ, այս ամենը մեր աղէկութեանք համար է. ուստի պէտք է զած պատրաստութիւններն ըրէք . . . ես ամեն բան ապօպրեր, կարգադրեր և հրամայեր եմ, դուք միայն իմ պատրաստութիւններս կատարե՛նիդ նայեցէք :

— Խիստ լուս : Բայց չի ճանցած մարդոցս հետ ի՛նչ խօսիմ :

— Ո՛հ, այս մասին հոգ մի ընէք . . . կող-

ջունէք . . . երեսնուն կը մտայիք . . . դուք ձեր դեղեցկութեամբն ու խելքովը ամենուն ալ սիրելի կըլլաք :

— Ես միայն ձեզի սիրելի բլլալ կուզէի :

— Ես ձեզի անհաւատարմութիւն բրամ ունիմ . . . ճշմարտ կրեմ՝ անանկ խոհեմութիւն մ'ունիմ որ . . .

— Որ որ մը զձեզ ինձմէ պիտի բամնէ . . .

— Մի վախնաք, ես միայն զձեզ կ'սիրեմ . . . Հիմա ես երթում հանդիսականներն հրաւիրելու, դուք ալ պէտք եղած պատրաստութեանց հոգ տարէք :

Եղուարդ գրկեց իր կինը ու դուրս ելաւ : Ատէլին ալ անոր հաճոյսնալու համար հետեւեալ օրուան ըլլալիքներն սկսաւ խորհիլ . սուկաց ծախուց մեծութեանը վրայ, բայց ի՞նչ օգուտ, դէմ կենալ անկարելի էր : Ուստի իր հրամաններն տալէն վերջը ելաւ մօրը տունը դնաց, հոն սկսաւ ցաւիլ իր երկանը ըրածին վրայ, բայց իր ցաւոց մեծ մասը ծածկեց անկէ, որպէս զի դանի ես առաւել չի գրգռէ իր ամուսնոյն գէմ :

— Ոհ, ըսաւ Ատէլին, ինքք ինձի սրչափ հաւատարիմ մնայ, ես ալ այնչափ դոհ եւ երջանիկ կըլլամ . . . Ամեն ինչ կը ներեմ իրեն, բացի իր անտարբերութենէն, որուն չեմ կըրնար համբերել :

Հեռեւեալ օրն առաւօտուն կանուխ եղուարդի տունը տակն ու վրայ էր . ծառուներն ամեն կողմէն եղած բաղմամբիւ պատ-

րատութեանց չէին կրնար բաւել . տունը դուրս գերով ծածկելու, ջահեր եւ մեծամեծ ճրարարաններ կախելու եւ սանդուխներուն վրայ ծաղկալից անօթներ շարելու համար դործատուներ բերուեցան . այս դործատուներն ու իրենց աշկերանները եւ հետերնին բերած կարասիքնին այնչափ շատ էին, որ դրեթէ տանը մէջ ոտք իրարու տեղ չի մնաց . սանցմէ վերջը եկան շաքարեղէն, խմորեղէն, տեսակ տեսակ ըմպելիքներ եւ պողպատակ շինողներն, եւ ամենքն ալ սկսան աշխատիլ ու կանխաւ պահարաններն լեցընել, որոնցմով գիշերը սեղանն ամենախառաւօր կերպով պիտի զարդարուէր, եւ անոնց հօտն ու ծառակը զհանդիսական պիտի զմայլեցներ : Միջոց մը Ատէլին ուղեց ասոնց մէջէն անցնիլ երթալ իր ամուսնոյն խոցը . բայց անոնց ազազակներէն, դուռու մներէն ու ձայներէն շիթեցաւ . եւ չէր գիտէր թէ ո՛ւր է . վերապէս տեսաւ զԵղուարդ որ սրահին մէջ կը պարտէր նոյն գիշերուան համար եղած պատրաստութեանց վրայ դոհ սրտով նայելով :

— Էհ, սիրելի բարեկամուհիս, ըսաւ նա հեռուէն դանի տեսնելով, ի՞նչ կը խորհիք ասոնց վրայ :

— Կը զարմանամ որ չճանցած մարդերնուդ համար այսչափ նեղութիւն կը կրէք եւ այսքան ծախք կընէք, եւ անոնցմէ ամենեւին ստակ մը չի շահած անօգուտ տեղը այսչափ մեծ գումարներ կը վատնէք :

— Բայց, սիրելի բարեկամուհիս, խորհե-

ցէք որ մարդ ստոնք ամենքը իր համբաւոյն համար կրնէ . . . Անտարակոյս եղիք, որ ես այս գիշեր ընդունելիք անձերս երբէք չեմ յարգեր . անոնց բարեկամութիւնն ալ չեմ ուզեր, միայն սա կուզեմ որ հոս եկողներն բռնութէ՝ Պ. Եղուարդի հանդէսը խիստ փառաւոր էր, պակաս բան մը չկար, ամեն ինչ այսր աստիճան օրինաւոր եղաւ . այսպիսի հանդէս մը մեծադուճար ծախուց կը կարօտի, և ինչ Գիտցիք որ ասի շատ պատու կը բերէ ինձ, և ամեն մարդ զիս նշանաւոր հարստութեան տէր կը կարծէ, ես ալ ուզածէս աւելի գործ կը տեսնեմ . . . Ուստի վասնցէք փայլուն զարդարանք մ'ընել ու գոհարեղէն զարդերով պճնիլ . . . Թէպէտ իմ ուզածին չափ աղէկ բաներ չեն, բայց կը յուսամ որ թիչ օրէն անոնցմէ աւելի ընտիրներն կը գնեմ ձեզ :

— Բարեկամս, գուք գիտէք որ աշխարհիս վրայ ես բան մը միայն կուզեմ, այն է՝ ձեր սէրը . . .

— Ժամանակը եկաւ, գացէք հազուեցէք : Հաւաքման վայրկեանն հասու . ժամը իննին տասնին միջոցները կառքերն ու հետեւակները (որովհետեւ աւելի մեծ պարահանդէսներն անգամ հետեւակներ կը դասուին) Եղուարդի տանը բակը լցուեցան : Հոն զիրար կը ննդէին, կառավարներն կը հայհոյէին ու ճամբայ կուզէին . մանկամարդք մուշակներու կամ ցիփսներու (չալ) մէջ փաթառուած, թեթեւ ոտքով սանդուխին վրայ կը ցատկէին, և

հոն որ մէկը իր մօրը որ մէկն ալ իր ամուսնոյն կըսպասէր սրահները ելնելու համար . երկատասարդ պարոզն պարկեշտութեամբ յառաջ կերթար, վրան կարծիր թախիչէ կրկնոցով լայն վերարկու մ'առած, որով գրեթէ բոլոր դէմքը ծածկած և միայն լքիկն ծայրը դուրս թողած էր, և իր ձեռքը կուտար այնպիսի երեսատարդ տիկնոջ մը որ բակը կայնոց ձիերէն վախնալով իր հետի ընկերը կորուսած էր : Իսկ զարդարեալ ազնուականն միայն խիստ թափանցիկ այքեր և մի քանի մազի գանդուրներ կը տեսնէր, վասն զի մնացեալն մուշտակին զլիսանոյին տակը պահուած է . բայց սիրուն դէմք մը և յաւերժահարօթի մը հասակ ըլլալը գուշակելու չափ կրնար նշմարել, և իրեն ներկայացած ձեռքըն ալ մեղմու կը սեղմէր : Այնուհետեւ առաջին պարին համար անձանիք տիկին մը կը գտնէր և դեռ նախասենեակը չի մտած անոր հետ համաձայնիլ կը վանար : Սակայն այս սենեակը մտնել անհնար էր . քանզի տիկնոյդ հոն անկիւն մը քաշուած իրենց զարդարանքը կը շտկէին, և կառքին մէջ աւրուած դիտու զարդերուն վրայ սկիւրի մը կարծիքէին . անդին ալ և աւելի լուսաւոր անկիւն մը մի քանի սեղանաւորի գործակատարք մուճակինն ոտուքնուն հանելով սեղոց պրօք պրօք հոգալով ափ կը հազնէին, և մուճակինն զգուշութեամբ մեծ թղթերու մէջ փաթեթալով ամուսի մը կամ ուրիշ անարթ կարասիքի մը տակ կը դնէին ուրիշ չէր կրնար կորսուիլ : Այս փոքրիկ փոփո-

խութիւնն ընենէն վերջը՝ շապիկնուն ասղնե-
 դ որձեալ օձիքը բաճկոննուն տակէն դուրս կը
 հանէին, փողպտոտնին վեր կառնուին, կապը կը
 ցուցնէին, ձեռքերնին մաղերնուն մէջէն կան-
 ցընեն, իրենց գէմքին յարմարելուն համեմատ
 մաղերնին կամ կը ցրուէին, կամ կը շտկէին, ետ-
 քը դռնօղութեամբ շակուելով սրահը կը մտ-
 նէին յիմար կամ անպարկեշտ կերպարանքով մը
 որով ամենուն իմացնել կուզեն թէ իրենք ոգե-
 լից ըմպելիքով եկած են :

Սրահը արգէն ամեն հասակի տիկիներով
 լի է, և չէ թէ իրենց հանդերձներէն այլ կեր-
 պարանքէն կրնայ որչափ թէ օրն է մայրը,
 օրն է աղջիկը, կամ օրն է մօրաքոյրը և օրն է
 քեռօրդին : Արք ձեռքերնին մէյակի գիտակ
 առած կը շրջագային, և երբեմն փոխանակ
 անով տիկնանց նայելու կերթան դրեթէ : Քի-
 թերէն կը մտնեն և անոնց առջին խել մը ժա-
 մաձու թիւններ կընեն, երբ իրենց դէմն ել-
 նողէն չախօրժին, մինչդեռ անոնք ալ փոխա-
 նակ անոնց երեսը թքելու, որուն խիստ ար-
 ժանի էին անվայել կերպով անոնց երեսը նա-
 յելուն համար, բեկրեկերով (էղիլմէք պիւ-
 զիւլմէք) անոնց երեսին կը ժպտէին : Իսկոյն
 բազմութիւնն այնպէս խռնեցաւ որ անկարելի
 էր շրջագայիլ : Ահա այս էր զուարճալի վայր-
 կեանս . երիտասարդն իր մօրք քոյր նստող օ-
 բիօրդին քով երթալով սկսաւ անտեղի շար-
 ժումներ ընել, և օրիորդն ալ միայն աչքերը
 դէպ յերկը խոնարհեցընելով կրցաւ անոր այս

անվայել վարմունքն մերժել, որով պարահան-
 դէսին զուարճութիւնները տեսնելէ կարգիլ-
 ուէր . բայց երիտասարդն հող չէր ըններ, բը-
 նաւ քովէն չէր զատուեր, և անոր ճակատը
 ծածկող կարմութիւնն ալ իրմէն չախորժելուն
 համար եղած ըլլալն երբէք չէր դիտեր : Քանի
 մը քայլ անդին ալ ուրիշ երիտասարդ մը մա-
 տին ծայրովը իր շորս ճինգ բարկկամաց բաւա-
 կան դեղեցիկ կին մը կը ցուցընէր, սրջ ամու-
 սինն անկէ շատ հեռու չէր, և գաղտնի անոնց
 կըսէր սր ութ աւուր չափ սիրած է զանի . ա-
 նոնք ալ այս մասին զինքը կը շնորհաւորէին, և
 այն կնոջը հետ ի սկզբան ինչպէս յարաբերու-
 թիւն հաստատած և ինչ կերպով սիրած ըլլա-
 լուն վրայ մանրամասն անդեկութիւններ կը
 խնդրէին : նա ալ բարձրձայն ծիծաղելով ա-
 նոնց կը պատասխանէր, այնպիսի յիմարեական
 և խեղկատակ շարժումներ ընելով որ բոլոր
 հանդիսականաց նայուածքը իր վրայ կը հրու-
 լիբէր և այն խօսքերը չի լսողներուն հետա-
 քըրքրութիւնը կը շարժէր : Բարեբաղդաբար
 այս կինն ալ չի լսողներէն էր, բայց անոնց խօ-
 սածն իմնալու համար, քովերնին մօտենալով
 — Ինչ ծիծաղաշարժ բանի վրայ կը խօսիք,
 պարոնայք, բնա :

- Ի՛նչ . . . պարանր իրեն պատահած մէկ
 զուարճալի դէպքը կը պատմէ . . .
- Այո, անառակ և վրբ ընթացքը, կերդ-
 նում որ դուք անմաթմ մարդիկ էք . . .
- Հիմա ի՛նչ ըլլալն կիմանաք :

Եւ երկրասարգք աւելի բարձր ծիծաղելով
ցրուեցան, և կնոջը ամուսինն այ առանց պատ-
ճառք գիտնալու թէ չպէտ ծիծաղեցաւ, բայց այն
եղբուրթիւնը իմանալու կերպարանք մը յայտնեց:
Վերջապէս պարեւու նշան արուեցաւ,
խիստ ճարտար նուազ ամուսաց խու մը մը գեղե-
ցիկ քառալիցներ նուազելով զամենքը ճրաբերցի,
խիստ բնախր անձանց յօրինած գեղեցիկ և
սիրուն եղանակներն ալ հիմա բնաւ մէկը հան-
գիտ չեն թողուր: Բայց ինչպէս չի պարեն,
երբ այս եղանակներն բօսինի, Մօզարի, Շե-
րիւպինի և Պօիէտլուիէօի յօրինածներն ըլլած,
որովք խիտ օքսնուելի կերպիւ կրնայ պարուիլ:
Մարդս այս եղանակներն միտքն լսելով ալ կըր-
նայ հաճոյք մը զգալ, բայց այժմեան պարերն
ալ նուազարաններու համար մէյ մէկ չարժա-
ւելիներ են, ասոնք ալ լաւ կատարելու համար
տաղանդ պէտք է: Մենք Մամօքայի, Բէր-
կուխինի, Ֆիւրթէնպէրիի տէս անձանց եղա-
նակներն խեղճ կոյրերուն թողած ենք. Վէ-
պէրի, Քօլինի, Բիւպնէրի, և շն պէս մարդոց
եղանակներն պարելու համար մեզի արհեստ-
գէտներ պէտք են:

Թէ և սրտհին մէջ պարելու քիչ տեղ կար,
և պարօգք խիտ շատ կը նեղուէին, բայց և
այնպէս կը պարէին, վասն զի հանգընն միայն
ասոր համար էր. ո՞րչափ հաճոյք կը գային ե-
րկասարգք իրենց ձիրքերը ցուցնելնուն, և
տիկնայք իրենց թեթեւ շարժումներն յայտնել-
նուն համար:

Իսկ անոնք որ նուազարաններէն ճաշակ մը
չէին զգար և կամ չէին ուզեր պարել, սեղա-
նի մը բոլորտիքը նստած թուղթ կը խաղային
և ստակ շահելու զբաղած էին. միշտ իրարու
ձեռք կը նայէին թէ ով ինչ ստակ պիտի հա-
նէ, ասոնք իրենց կիներ կամ աղջիկը մուսցած
էին, նմանապէս տիկնայք ալ սրահին մէջ ա-
մենեւին չէին յիշքը թէ իրենց այրը կամ հայ-
րը թուղթ խաղալու զբաղած էր, և գրեթէ
մուսցած էին զանոնք:

Թուղթի խաղը հետզհետէ կը սաստկանայ,
քսակներն կը բացուին և խկոյն մեծ գումար-
ներ երեւան կեցնեն, այն երկրասարգք սր միայն
տիկնանց և պարելու պիտի զբաղէին, մեծ
փութով կուսօսեն թէ իրենց արոյնանը երբ
պիտի կորսնցնեն. արիւննին կը բորբօքի, ու-
կին ու արածթը զիրենք կը բրգունեն, և վեր-
ջապէս շատերն քսակին պարպուած սեղանէն
կը բաժնուին հետեւեալ օրն իրենց գերձակին
և կօչկակարին աալու ստակին հատած, և մեր
մուսակնին ոտուընուն հանող և պարի հողա-
թափ հազտող երկրասարգչներն ցած ձայնով
իրարու կըսէին թէ փոխանակ իրենց ստակն
խաղամուրթեմասք վատնելու եթէ կառք մը
բանէին, աւելի աղէկ կըլլար:

Ոմանք ալ սրտերնուն կրակը մարելու հա-
մար ըմպելեաց յատկացած տեղը կը վազէին,
և հոն զով ըմպելիք մը կամ անուշեղէն մը
կառնէին. ամենէն աւելի որբարաններն ալ
խիտ բնախր անուշեղէններն կառնէին զանոնք

տիկնանց ասնելու պատրուակաւ : Այս միջոցին ինչ անկարգութիւններ տեղի կունենան . պընակներ կը կոտորին , սնուչեղէն մը կառնուն , և իսկոյն կճգնն դայն ուրիշ մ'առնելու համար , խմորեղէններն իշարու ձեռքէ կը յափըշտակին , շաքարեղէններն առանց ամենուն բերանն համեմելու կսպառին . մեծամեծ խնձորներու մէջ սոյորբար ասանկ անկարգութիւններ կը պատահին , անուշեղինաց յատկացեալ տեղը կը կողպտին , և զայն շրջապատող երկտասարգք կարծես խէ ութ օրէ ի վեր բան մը կերտմ չեն : Որչափ ամօթաբ բան է այսպիսի պատուաւոր խնջոյքներու մէջ տանկ անկարգութիւններ պատահելը :

Այս յուզմանց և անկարգութեանց ժամանակ Ատէլին ծանօթ անձ մը կը ջանար տեսնել , բայց ի զուր : Ուստի իրեն անձանօթ եղած անձերէն տեսած քաղաքաւարական ձեւերէն և անքնդհատ մեծարանքներէն ու հոն գտնուող պարտներու գիտակին ևնթակայ ըլլալէն այլ ևս ձանձրացած , երբ ամեն ոք իրեն անձնական հաճոյիցը զրաղած կերուէր , ինքը պատահուով ինչ գտնելով երաւ գնաց տեսնելու թէ աղջիկը կը քնանայ , և միայն զայն գրկելով իր այն գիշերուան զգալիք ուրախութիւնը վայելելու :

Ատէլին իր աղջկանը պառկած սենեակը երթալու համար հանդիսականներէն բարորովին հեռացաւ , վասն զի չուզելով որ աղջիկը անանց աղաղակէն անհանգիստ ըլլայ , անոնցմէ խիստ

հեռու տեղ մը պառկեցուցած էր զանի . անցաւ կիսով չափ լուսաւորուած խել մը տեղերէ , գնաց աղջկանը քով , կեցաւ անոր օրորոցին առջև և անտաւ որ նա անուշ անուշ կը քնանայ : Ասոր վրայ Ատէլինի սիրտը խաղաղելով դարձաւ հանդիսականաց քովն երթալու . բայց իր աղջկանը պառկած սենեակին կիցը գտնուող բաւական մեծին ներքնասենեակ մը մտնելով տեսաւ որ մէկը դուրդին վրայէն ստհելով ներս կուգայ . իսկոյն ստկուտ մը տիրեց սրտին վրայ :

— Ո՞վ է այն , ըսաւ չուտով :
 — Մի վախնաք , տիկին , շատ կը ցախիմ ձեզի վախ պատճառելուս համար :

Իսկոյն անոր ձայնէն ճանչցաւ Ատէլին որ Տիւֆրէնն էր նա :
 — Ի՞նչ բան ունիք հոս , ըսաւ Ատէլին :
 — Չայնեքն ու տարութիւնը զիս անհանդիստ ըրին . ուստի հանդիսականներէն հեռացայ հոս և կայ որ քիչ մը հանգչիմ :

Ատէլին զնաց քովի սենեակէն կանգեղ մը բերաւ . Տիւֆրէնն անոր ամեն շարժումները կը գիտէր , և խիստ յուզուած կերուէր :

— Եթէ տկարութիւն մ'ունիք , երթամ լեմնաջուր մը բերեմ ձեզ :

— Ո՛հ , ոչ , տիկին , կեցիք , կաղաչեմ . . . ձեր ներկայութիւնը անիւ հարիւր անգամ աւելի թանկագին է :

— Տիւֆրէնն Ատէլինի ձեռքը բռնած էր . նա անոր այս տարօրինակ ձայնին և խօսելու

եղանակին վրայ շուտարած, ինչ պատասխան տալը չէր գիտեր, և շփոթած կեցած էր անոր առջև: Տիւֆրէսն Ատէլինի ձեռքը սաստիկ սեղմելով թող չէր տար. նա ստակալով ձեռքը քաշեց և կուզէր փակելով, բայց Տիւֆրէսն դէմն անցնելով արգելեց:

— Ինչ կուզէք ինձմէ, բաւ սոսկումով խառն ձայնով մը, որուն պատճառը չէր գիտէր:

— Կուզեմ որ մտիկ ընէք ինձ, տիկին, կուզեմ որ ունկնդիր ըլլաք ինձ:

— Ինչ գաղտնիք ունիք ինձի ըսելու, կրնայինք սրահն ալ միատեղ նստիլ ու խօսակցել:

— Ձե, տիկին, չէ, յարմար տեղն հոս է . . . Ահ, երկար ատենէ ի վեր այս վայրկենին կը դիմադրէի, կողամ որ զիս առջորդ կը բակը ալ ասկից վերջը ծածկել անկարելի է ինձ. ոչ, ալ չեմ կրնար զձեզ ատենել, ուստի հիմայ ժամանակն է յայտնել ձեզ որ ձեզի համար ամեն վայրկեան կը հայիմ ու կը մտաչիմ . . .

— Ինչ կըսէք, պարոն . . .

— Կը սիրեմ զձեզ . . . կը պաշտեմ զձեզ . . . գեղեցիկդ Ատէլին . . . և պէտք է որ գուք իմն ըլլաք . . .

— Ո՛վ երկինք, ինչ կը լսեմ . . .

— Հիմա վերջապէս ամեն ինչ իմացընեմ ձեզ. գիտցիք որ զձեզ ատեամ վայրկենէս ի վեր դուք իմ բոլոր մտածմանց և բոլոր իմ խորհրդոցս առարկայն ու իմ ամեն գործողու-

թեանցս նպատակն եղաք. և տիկին Տօլպանի հետ յարարեալութիւն հաստատեցի, որպէս զի անոր միջոցաւը ձեր տունը մտնեմ: Այս և ասոր հետ մէկտեղ որ մը ձեզի հանելի երեւնալու յոյսը արգելեց զիս ձեր հարան, եաց որէն մինչև ձեր տունը եկած օրս որ և է այլանդակ գործ մը գործեղէ: Բայց գիտէք այն ատեն որչափ նեղութիւն կրեցի իմ զգացումներս զսպելու և զիս առջորդ բոցը աշխարհէն դաղտնի պահելու համար, և որչափ կը շարարուէի տեսնելով որ իմ երջանիկ նախանձորդ՝ սյսինքն ձեր այլը անտարբեր կերպիւ այնչափ գգուանքներ կընդունէր ձեզմէ, մինչդեռ անոնցմէ միայն մին զիս կատարելապէս երջանիկ ընելու կը ծառայէր . . .

— Ալ չափը անցուցիք, պարոն, բարկութիւն կը պատահի, եթէ քիչ մ'ալ աւելի խօսիք, կիրքս սաստիկ պիտի շարժի . . .

— Ինչու կը բարկանաք, տիկին, կարծեմ արժանի չեմ ձեր բարկութեանը:

— Ինչպէս արժանի չէք. իմ ամուսինն ձեր նախանձորդը կանուանէք, և անոր հետ ունեցած բարկամութեան չի նայելով իր կինը բռնարարել կուզէք . . . ըրածնիդ շատ ամօթալի բան է . . .

— Ըրածս ինսա սովորական բան է, և ձեզի ամօթալի երեւնալուն պատճառն ալ այն է որ դուք չէք ուզեր իմ զգացմանցս մասնակցիլ. վասն զի եթէ դուք զիս սիրէիք, ևս փոխանակ ձեր արջին ճիւղալ մը երեւելու, ան-

նուածելի կիրքով մը ամենուր, երկար ատենէ ի վեր ասուպող և իր կրած նեղութիւններն աշխարհէն և մանաւանդ զանոնք յառաջ բերելու պատճառ եղող անձէն ծածկող թշուառ էակ մը կը համարուէի . այն ատեն իմ այս վարմունքս ձեզի մեղապարտ չէր երևուեր . այնչափ սէր և այնչափ հաստատամտութիւն գտնէ ձեր գթութիւնը պիտի շարժէին , և ինձ պիտի զիջանէիք , տիկին , առանց բարկանալու իմ խօսքըս պիտի մտիկ բնէիք , և կարելի է աւելի քողցըր զզացում մը զիս ձեր սրտին ակտրժեկի երեսցնելով բոլոր իմ զգուշութեանցս փոխարէնը հատուցանել պիտի տար ձեզ . ահա տոբիկ զայս ի նկատի պէտք էք ասնուի , տիկին : իմ յանգանքս այս է որ ես զձեզ կը պաշտեմ . եթէ դուք իմ այս կրակս մարէք , յանցանքս ալ իր թողութիւնը կը դառնէ . յաջողութիւնն ամենայնպէս ձեռնարկութեանց կը ներէ . իսկ եթէ մինչեւ վերջը այսպէս իմ սէրս մերժէք , միշտ յանցաւոր կը մնամ . . . :

— Չեր խօսքերը , պարոն : զձեզ չեն կրնար արդարացնել իմ առջիս : կը ներեմ ձեզ իմ վերայ ունեցած սէրերուդ նկատմամբ , բայց մի յուսաք որ կրնաք ձեր փափաքին հասնիլ : Քաջ գիտեմ որ մարդ թէպէտ իր սրտին տէրը չէ , բայց իր վարմունքին տէրը է . ձեր վարմունքն ալ արնուական մարդու մը վարմունք չէ :

— Տիկին . . . :

— Ալ սիրոյ վրայ մի խօսիք ինձ , ապա թէ ոչ , բոլոր խօսածներնդ . ամուսնոյն կը հաղորդեմ :

— Ամուսննուդ կը հաղորդէք . . . նա ձեր խօսքին չի հաւատար :

— Ինչ կըսէք . . .

— Այ , տիկին , ինձ համար ինչ որ խօսիք , բնաւ չի հաւատար . դիտցիք որ ես ամեն ինչ յառավուց կարգադրած եմ . . . : Ես ձեր ամուսնոյն միտքը անանկ գրուած եմ . որ ամեն ինչ իմ աչքս միտուն կը տեսնէ , և միայն իմ կամքովս կը շարժի . վերջապէս սեքեմայ մ'է նա զոր ուղածիս պէս կը դարձնեմ . Ուստի լուզիտցիք որ եթէ իմ ինքիդքս մերժէք , եղուարդ բոլորովին կը գէշնայ : Այն ատեն պիտի իմանաք իմ զօրութիւնս , պիտի զգո՞ւք ձեր անիրաւ գուռզութեան վրայ . բայց օգուտ մը պիտի չունենայ . ատելութեան վրայ ալ ձեր վրայ ունեցած սիրոյս նման սաստիկ պիտի բլլայ :

— Ամբարկշտ մարդ . . . ձեր այս խօսքերովը սոսկումս ալ աւելի կը սաստկացնէք . ես անանկ սպառնալիքներէ չեմ վախնար . կորիք դէմէս , մէջ մ'ալ աչքիս մի երևար :

Ասոր վրայ Տիւֆրէնս բուլբոլին կատրեցաւ , ջիզերը կարկանդեցան , աչքերը կրակ կարեցան , բայց դառն ժպիւհ մը երևցաւ չրթանցը վերայ : Ատէլին զարհուրած ուղեց փախլիլ , բայց Տիւֆրէնս չի թողուց զայն , թեւերուն մէջ առաւ , ուժով մը սեղմել սկսաւ , և իր դառնաշունչ չրթունքներն խեղճ կնկան բարախող կուրծքին մօտեցնելով ուղեց իր գաղանական կիրքը յազեցնել . . . բայց նա սուր աղաղակ մ'է հանեց . . . : Իսկոյն վազեցին եկան . Տիւֆ-

րէան պատուհան մը բացաւ որ պարտէզին վը-
րայ կը նայէր, ցատկեց վար ու աներևութա-
ցաւ :

Իրաւյններ ու մի քանի երիտասարդք
մտան սենեակը, չըթարտեցին զԱտէլին և իր
խաւովութեան պատճառն հարցնել սկսան : Ա-
տէլին աչքերը չորս կողմը կը դարձնէր . բաց
պատուհանը տեսներուն պէս բոլոր եղածներն
կը յիշէր, և իմացաւ որ պէտք է զգոյշ ըլլալ
իր յուզմունքը չի յայտնելու համար :

— Ինչ եղաք, տիկին, ինչ պատահեցաւ
ձեզ, սկսան հարցնել իրեն ամեն կողմէն :

— Չեմ գիտեր, ըսաւ Ատէլին իր խռովու-
թիւնը ծածկել ջանալով . գէշութիւն մը խա-
ցայ . . . տաքը զիս անհանգիստ ըրաւ . . . :
Ուստի հոս եկայ որ քիչ մը օդ առնում . բայց
պատուհանը բացած ժամանակս . . . մէկ թրմ
ըութեան նման բան մը եկաւ վրաս . . . ջանք
ըրի որ ծառայ մը կանչեմ, բայց գորութիւն
չի մնաց վրաս :

Ատէլին այս ըսածը խիստ հաւանական ըլ-
լալուն համար, ամենքն ալ ստիպեցին զինքը
որ սրահը չի գայ, որպէս զի չըլլայ թէ տաքը
կրկին զինքը նեղէ : Ատէլին ալ զխառորու-
թիւնը սրահը չերթալ էր, որ հոն Տիւ ֆրէսկի
երեսը տեսնելով կրկին չի խռովի : Ուստի յանձ-
նարարելով մի քանի անձանց որ իր կողման
հանդիսականներէն ներումն խնդրեն, երաւ
իր սենեակը դնաց :

Ատէլին սպասուհւոյն ալ պատուիրեց ըսել

Եղուարդին որ հանգիսին աւարտու մէն վերջը
իրեն դայ : Սպասուհին անմիջապէս գնաց ը-
տաւ . Բայց Եղուարդ ամենեւին մտիկ չըրաւ,
վասն զի նոյն միջոցին խիստ գեղեցիկ երիտա-
սարգ կնոջը հետ թուղթ խաղալով քառասուն
սակի կրուսեթ էր . բայց հոգ չէր ըներ տես-
նելով որ կինը իր վրայ խիստ տպաւորիչ նայ-
ուածքներ կարծէր, իր ամենապիտակ ակ-
նայները ցուցնելով երեսին կը ժպտէր, և իբր
թէ անուշադրութեամբ իր վարքիկ ոտքերն
անոր ոտքերուն վրայ, և ծունկերն ալ անոր
սրունքներուն մէջ տեղը կը նետէր : Ուստի Եղ-
ուարդ ինչպէս չուզեր որ այսպիսի գեղեցիկ
կին մը չահէ . մանաւանդ որ ինքը թուղթերը
մերժել ուզած ատեն կինը անանկ շնորհալի
խեղաթխութիւն մի կընէր, որ ալ անկարելի
էր գիտարեղ . . . Եղուարդ միշտ յարթուե-
ցաւ . վերջէն ալ աւելի զմայնցաւ, երբ աղա-
չեցին իրեն որ պարելով արիւն քրտինքը մը-
տած կնոջ մը խիստ ճերմակ կուսակը թաշկի-
նակ մը գնէ . իսկոյն երաւ այս պատուսը կա-
տարեց . ձեռքը սեղմելով շնորհակալ եղան իր-
մէ, և ետքը հրաւիրեցին որ ուրիշ անգամ
դայ այն իրիկուան կորսնցուցած ստակին փո-
խարէնն աւանու :

Առաւօտեան ժամը հինգին պարահանդէսն
անդղիական պարով մը աւարտեցաւ : Մինչեւ
ըյս ցատկեցին, խաղացին, պուացին, սուներ
տակն ու վրայ ըրին և առաւօտուն սկսան մեկ-
նիլ . ամեն ոք իր ունեցած նոր գլխարկին տեղ

հին մը դնելով գլուխը, զոր կորուսած ըլլալով չի կրցաւ գտնել, ինչպէս նաեւ խիստ միժին անկիւն մը գրած գեղեցիկ գաւաղանն, բարեբաղդաբար թիկնօցներն ու վերարկուները փոխուած չէին :

Այս գէպքէն թող խրատուին երիտասարդք, ու առանկ մեծ ամեծ խնջոյքներու գացած առեկնին անանկ ծանրագին գաւաղանն ու նոր գլխարկ չունենան հետեւինն, ապա թէ ոչ իրենք ալ սոյն խնջոյից հանդիսականացը նրման առաւօտուն անպիտան գաւաղանով մը ու հին գլխարկով տուն կը դառնան :

Եղուարդ սիրտը ակրած և քսակը պարպուած դնաց իր սենեակը միտքը բարբոթին հետը թուղթ խաղացող գեղեցիկ կնկանը առած, և առանց յիշելու իր կնկր որ ի զուր երկար ասենէ ի վեր իրեն կըստասէր :



ԳՂՈՒՄ ԺԷ.

ԿՈՒՐՈՒԹԻՒՆ . . ՅՈՒՐԱՐՈՒԹԻՒՆ - ՏԿԱՐՈՒԹԻՒՆ . .

Ատէլին գիշերը քենն արթննալով իր ամուսնոյն ու շանաւուն վրայ անհանգիստ եղաւ, բայց լսելով որ շատ ուշ գացած էր սենեակը, չուղեց անոր քունը խռովել, և անոր արթննալուն սպասեց որ գիշերը իր և Տիւֆրէանի մէջ պատահած գէպքը անոր պատմէ, յու-

սալով որ վերջապէս անոր ինչ գէշ մարդ մ'ըլլալը կը հասկնայ :

Եղուարդ արթննալով նախաճաշի իջաւ, Ատէլին զսոյն առեկնելով սկսաւ քաղցր յանդիմանութիւններ ընել անոր գիշերուան անտարբերութեանը համար. բայց նա գրեթէ մտիկ չըրաւ. հօգ մը, մտմտուք մ'ունէր, գըլուխը սաստիկ կը ցուէր, և ուղեց դուրս ելնել քիչ մը զովանալու համար . . . Ատէլին չի թողուց ըսելով որ խիստ կարեւոր բան մ'ունի իրեն հաջորդելու : Եղուարդ իր ամուսնոյն այս ըրածին վրայ զարմացած մեքենայի մը նրման իր ակնոյն վրայ նստաւ, աղաչելով իր կնկանը որ չուստով ըսէ, որովհետեւ անհրաժեշտ գործքեր ունի դուրսը : Ծառայները գուրս հաննցին, և Ատէլին իր գլխուն պատահած գէպքը մի ըստ միովէ իր ամուսնոյն պատմեց :

Եղուարդ նախ և առաջ անտարբեր կերպով մտիկ ըրաւ իր կնկանը խօսածները. բայց շուտով դժգոհու թիւնն ու անհամբերութիւնը իր գէմքին վրայ տեսնուեցան :

— Հիմա, բարեկամս, բնաւ Ատէլին ամեն բան պատմելէն վերջը, ինչ կը խորհիք ձեր անկեղծ բարեկամին վրայ :

— Կը խորհիմ . . . կը խորհիմ որ թշուառ մը յանցաւ որ գասել կուզէք . . . և ոչինչ իրողութիւն մը մեծ գործի մը տեղ գնել կը ջանաք :

— Ինչ կըսէք, բարեկամս . . .

— Անշուշտ . . . կնկան մը սէր յայտնելը . . .
 ո՛հ, Աստուած իմ, մի թէ չի տեսնուած բան
 մ'է, և ասոր համար այսչափ աղաղակ հանել
 պէ՞տք է: Գեղեցիկ տիկնայք ամեն օր կը պա-
 ասահին այդ պիտի անձանց, բայց ձեռի նման
 ողբ պիտի մեծ կարեւորութիւն մը չեն տար . . .
 Դուք մէկ բառի մը համար միայն դողաղցեր:
 և պարզ սիրոյ յայտնութիւն մը գաղանական
 կրից անդ դրեր էք . . . պէտք չէ իրողութիւնն
 այսպէս բմբուներ . . . Բայց ես զձեզ կը ճանչ-
 նամ. ես գիտեմ որ դուք զՏիւֆրէսն կտտէք.
 և երկար ատենէ ի վեր կուզէք զիս անկէ բաժ-
 նել, հիմա ալ ձեր փափոցին հասնելու համար
 ասանկ պատրուակ մը կը ներկայացնէք. բայց
 կիմացնեմ ձեզ, տիկին, որ ինչ տղ ընէք ու
 ըսէք, չէք կրնար ձեր նպատակին հասնիլ:

— Այդ ի՞նչ կը խօսիք, պարսն . . . Դուք
 զիս յանցաւոր կը դատէք . . . և զիս միայն
 զձեզ խաբելու կարող կը համարիք:

— Կարելի է որ ասանկ ըլլայ. Ո՛վ ըսաւ
 ձեզի որ Տիւֆրէսն այդ բաները ձեզի ընելովն
 ձեր վրայ ծաղրած և ձեր կը վրայ ունեցած
 ատելութեան համար վրէժխնդիր եղած չըլլայ:

— Ատի ի՞նչպէս կրնայ ըլլալ որ ինքը կը
 համարձակի մինչեւ անդամ զիս համբուրել ալ:

— Համբուրել . . . այդ ուրիշ խօսք. ու-
 րեմն ձեր կամքը չըբաժնէ զձեզ գրկելուն հա-
 մար յանդիմանութեան արժանի է:

Բայց համբոյր մը զձեզ այս ատիճան բար-
 կացնելու չափ մեծ բան մը չէ:

— Ըսել է որ այսուհետեւ գարձեալ Տիւֆ-
 րէսնը ձեր տունը ընդունելու միտք ունիք:

— Անշուշտ, տիկին, ես չեմ կրնար կա-
 տակարար զձեզ գրկող բարեկամ մը տունէս
 վաճառելով ամենուն առջեւ ամօթագորտ ըլ-
 լալ ու իբր նախանձող ամուսին ամենին ծաղր
 ու թշնամանք լսել . . . Ես հասարակութենէն
 կամչեամ . . . միայն սա կրնամ ընել որ կը պատ-
 ուրիւմ Տիւֆրէսնի որ ձեզի նման կասկածոտ
 կնոջ մը այլ ևս սէր չի յայտնէ:

— Կը զարմանամ, Եղուարդ, որ այսպիսի
 եղբուր թեան մը երբէք կարեւորութիւն տալ
 չէք ուզեր:

— Ինչո՞ւ կարեւորութիւն չիտամ . . . ձեռ-
 քէս եկածս կրնեմ որ մէյ մ'ալ ասանկ դէպք
 մը չի պատահի:

— Աւաղ . . . գիտեմ որ դուք հիմա զիս
 չէք սիրէր . . . ո՛հ, երբեմն ո՞րչափ նախանձոտ
 էիք . . .

— Մարդ կրնայ իր կինը սիրել առանց նա-
 խանձոտ ըլլալու, տիկին. մտայ որ . . . Բայց
 ժամանակը անցաւ, գործերս կը կոչեն զիս:

— Բայց սա հարուստ նաւապետն ո՞ւր էր,
 որոյ համար ձեր երեկոյթը տուիք:

— Նա չի կրցաւ գալ:

— Ըսել է որ բոլոր ծախքերնիդ անօգուտ
 եղան:

— Անօգո՞ւտ եղան . . . անանկ կը կարծէք.
 գիտէ՞ք որչափ շնորհակալութիւններ ու գո-
 վեստներ լսեցի իմ հանդէսին համար . . . աղէկ

որ առւի այս հանդէսը, ասկեց վերջը տեսէք ինչ պիտի շահնիմ . . . բայց ալ վայրկեան մը կենալու ժամանակ չունիմ, պիտի մեկնիմ:

Եղուարդ շուտով գուրս ելաւ երթալ զՏիւֆրէան դանեւու համար. նա զինքը տեսնելով թէ պէտ քիչ մը խառվեցաւ, բայց իսկոյն հանգարաւ թխնը դատաւ: Եղուարդ իր կընկանը պատամանները Տիւֆրէանի հաղորդելու համար անոր քով չի վազեց, այլ ի կնիքը հետը թուղթ խաղացող գեղեցիկ կնկանը վրայօք խօսակցելու և իմանալու համար թէ այդ կնիքով է և ինչ կընէ, վերջապէս այն կնոջը համար ունեցած բոլոր վաճառքներն ու անկախուլութիւնները առանց քաշուելու իր բարեկամին ներկայացուց:

Տիւֆրէան յազեցուց Եղուարդի և հետաքրքրութիւնը իմացընելով որ այդ կնիք՝ Խիկին աը Ժէրան անուն, զբարպետի մը այրի է, իր գործերուն բացարձակ տէրն է, հարուստ թխն ալ ունի, բայց շուտով պիտի վասնէ, վասն զի գուարճութիւններն շատ կը սիրէ: Տիւֆրէան կը յառեւու նաև որ շատերը թէպէտ կը վաճառեն այդ կնոջ հետ յարաբերութիւն հաստատել, բայց նա բուրբոյլին կը մերժէ, կը ծիծաղի անոնց վրայ, կը ծաղրէ անոնց վրայ և արած բոլոր կերքերը. ուստի շատ դժուար է ատօք հետ յարաբերութիւն հաստատել:

Այս խօսքերուն վրայ Եղուարդի կերքը ևս առասել կը յուզուի ինչ կերպանկութիւն էրեն համար, որ ինքն այն կնոջ բոլոր սիրա-

հարներէն ասելի զօրաւ որ դանուելով կարող եղած էր առաջին անգամ անոր սիրաը շահել: Տիւֆրէան տեսնելով որ ակարբարարց և անհաստատ Եղուարդի սիրաը շատ զխրութեամբ յախշտակուեցաւ իր բնածններուն, պատեհ միջոց դատաւ Ատէլինի և իր մէջ պատահած դէպքին վրայ ինքը խօսք բանալու, ըզգուշանալով իմացընել որ իր բնածը սոսկ կատակ մ'էր, և չէր յուսար որ իր կնիք իր հետ այդ աստիճան խտտութեամբ վարուէր:

— Այո, այո, գիտեմ, ըսաւ Եղուարդ, արդէն կինս այս առաւօտ ինձի պատմեց . . .

— Ոհ, ըսա՛ւ ձեզի . . .

— Այո, որպէս թէ դուք հրեշ մը . . . ստահակ մը, սուտ բարեկամ մ'եղած ըլլաք:

— Իրա՛ւ կըսէք . . .

— Այո, և դուռ ուրիշ շատ բաներ . . . դիտցած ըլլաք որ նա սաստիկ կատողած է ձեր վրայ . . . բայց հօդ մի բնէք, ես զինքը կը հանդարտեցընեմ. նա տեսնելով որ առաջին անգամ դուք ինձի այս մասին խօսք բացիք, իսկոյն իր սխալմունքը կը ճաննայ ու կասկածը կը փարատի:

— Արդարեւ շատ զգլացի ալ բրածիս վրայ . . . սրշափ կատիժոտ եղական կին մ'ունիք եղեր:

— Ինքը յանցանք չունի. յանցանքը մօրը քօնն է որ իր միտքը սասնի գաղափարներով լցած է:

— Մարդ կը տարակուսի ձեր կնոջը փաբիզ մեծցած ըլլալուն վրայ:

— Այո, բայց դեռ ընկերակա՞նու թեան
անջև երած չէ . . . կը հաւատաս՞ք եթէ ը-
սեմ որ ձեր Երեսը տե՛մնել չուզեր :

— Եթէ այդպէս է, ուրե՛նն ալ տունը-
նիդ չե՛մ դար :

— Ի՛նչ կրէ՛ք . . . տեսա՞ք, դուք ալ
անտէք ինչ խօսք կրնէ՛ք. ահա այդ խօսքեր-
նուզ համար կը վշտանամ, Գրադէք որ ասկից
եւաքը առջինէն ասելի պիտի յաճախէ՛ք ասուս,
ահա այնպիսի կրտմ : Գուք ինչպէ՛ս բարեկամ
էք, որ հնկանս օտարասի վարժունքին ներող
չէք դժնուիր :

— Ո՛հ, ձեզի հետ ունեցած բարեկամու-
թիւնս ամենեւե՛ն տահման չուի :

— Սիրելի Տիւֆրէ՛անս . . . որպէ՛ս զի ի-
մանաք թէ ձեր վրայ օրհայ վառահալ թիւն
ունիք, և կնկանս խօսածներուն սրտի կարե-
ւորութիւն չե՛մ տար, հիմա դադունիք մը պի-
տի հանդիսէ՛մ ձեզ . . . կը յուսամ որ այս մա-
սին ձեր բարեկամական ձեռնտուութիւնը չէք
զըանար :

— Ամենայն անձնուիրութեամբ, խօսե-
ցէք :

— Բարեկամս, ես զտիրիւն տը ժեքան կը
սիրեմ, կը սլաշանեմ, և անոր վրայ գրելթէ
խենդ եղած եմ :

— Ինչպէ՛ս կըլլայ այդ, դեռ երէկ ճանչ-
ցաք զանի :

— Այնպիսի ժամանակը բաւական եղաւ
զայն ինձ սիրցընելու համար . . . այդ ալ

խօսք է, մարդ այս մասին չի կրնար համե-
րել, այս ըսածս հաւանութիւն համարեցէք,
տկարութիւն համարեցէք, ինչ որ կուզէք.
Բայց դեռացած ըլլաք, խելքս կը թագընեմ իր
վրայ :

— Բայց, եղուարդ, ի՛նչպէս կըտէք այդ
խօսքը դուք որ ամուսնացեալէք :

— Բայց, սիրելիս, ամուսնացեալներն ա-
մուրինեքէն աւելի կը գրգռին այս մասին : Միշտ
մի և նոյն կիսով ժամանակ անցնելն ալ մարդուս
ձանձորութիւն կը պատճառէ . . . :

— Սակայն ասանեք ձեր կի՛նն ալ ձեզի պէս
կը խորհի՛ . . . :

— Ո՛հ, այդ կողմէն անվոյթ եղիք. իմ
կի՛նս առաքելի է, և իր պարտաւորութիւնն
լու կը կատարէ. մնաց որ կի՛նը ուրիշ, այլը
ուրիշ . . . :

— Այո, բայց այս ըսածնիս հետեւանքին
կը վերաբերի. որովհետեւ ըստ բարոյականու-
թեան և ըստ բնական օրինաց, պէտք է զիտ-
նալ որ յանցանքն բացարձակապէս հաւատար է :

— Կատակ կընէք. հետեւանքն ի՛նչ կրնայ
ըլլալ. սիրահար ունեցող ամուսնոյն կնիկը կը
ձաղընէ կամ կը թշնամանեն : Ո՛հ, ոչ, ամենե-
ւին բան մ'ալ չեն կրնար բռնել, որովհետեւ այս
բանը շատ սովորական եղած է. բայց թէ որ
կի՛ն մը սիրահարներ ունենայ . . . :

— Այդ ալ սովորական կրնայ ըլլալ :

— Բայց այն ատեն անոր ամուսինը կը թըշ-
նամանեն և ամեն ատեն մատով կը ցուցնեն . . .

Մնաց որ մարդուն անհաւատարմութենէն ինչ
չարիք կրնայ յառաջ գալ . ոչինչ, անոր հետ սի-
րահարուող գեղեցիկ կանայք չեն երթար սա-
դիս անդին պարծենար : Բայց կնոջ մը համար
այսպէս չենք կրնար բնել . անոր սիրահարներն
միշտ նորա վարկը կանայտունեն, թէ խօսքով
և թէ գործքով, որոնք չեն կրնար չարախօս
և հետաքրքրի անձանցմէ դազանի մնալ : Վեր-
ջապէս կին մը երբ իր ամուսնը ուրիշին բազ-
կացը մէջը տեսնէ, ցաւելէն ու լալէն դատ
բան մը չի կրնար ընել . բայց այրն երբ իր կինը
ուրիշի մը քով տեսնէ, խկոյն զանի պատժելու
իրաւունքն ունի . կը տեսնէ՞ք, սիրելիս, որ
յանցանքը մի և նոյն չէ, որովհետեւ պատիժը
տարբեր է :

— Կը տեսնեմ որ այդ օրէնքը դնողը մենք
ենք, և խիտ աղէկ ալ կը կատարենք :

— Դուք ալ հիմա ելքը ինձի բարոյակա-
նութեան դատ կուտաք . արդարեւ, Տի. Ֆրէնսն,
կը տեսնեմ որ դուք ալ կնոջս պէս դժնդակ
առաքինութիւն մը կը ծախէք ինձ :

— Չէ, բարեկամս, ո՞հ, դուք դիւ դեռ չէք
ճանչնար . . . Ես ձեր ուղած ծառայութիւնը ձեզի
մատուցանելէս առաջ ուղիցի գիտնող թէ այս
սիրահարութեան հետեւնքն լաւ կըլաւ՞ էք :

— Ես ամեն բան հաշուած և կըլաւ՞ եմ :
Տի. կին ար Ֆերանը կը սիրեմ, կը յուսամ որ նա
ալ դիւ սիրած է . . . Իմ այս նպատակին հաս-
նելու համար բնաւ բան մը չի պակսիր ինձմէ .
բառս կը հասկնա՞ք :

— Ա՞հ, խիտ լաւ . . . որովհետեւ ալ մըտ-
քերնիդ դրած էք, կօղնեմ ձեզ . բայց խօսք
տուէք ինձ որ այս ծառայութեան համար եր-
բէք թշնամանք չի պիտի լսեմ . . . :

— Ոչ . ոչ . . . Ես եմ ձեզի աղաչողը որ
այս ծառայութիւնն ընէք ինձ, և օգնէք այս
սիրահարութիւնը կնոջմէս ծածկելու համար :

— Ռերմն ալ անհօգ եղիք և հաւատացէք
որ ձեր բառք պիտի ընեմ : Երբ միտք ունիք
տիկին ար Ֆերանի առնն երթալու :

— Այս իրիկուն . . . անշուշտ հօն թուղթ
կը խաղան . . . :

— Այո, և բաւական մեծ դու մարնեքով . . .

— Վայ չար սատանայ, եկէք տեսէք որ
ստակ չունիմ . . . պարահանդէսը գըպանս
ստակ մը չի թողուց :

— Ստակ ճարելը բան մ'ընել չէ : Կալ-
ուածներուն գինը հիմա շատ բարձր է . . .
ծախեցէք . . . քիչ ժամանակէն գիներնին վար
պիտի իջնէ . ան ատեն որովհետեւ ուրիշ գոր-
ծեր ալ կընենք, և հաւանականաբար դուք
ալ կը շահէք, նորէն կը գնէք . . . տեսէք :
այս ալ մեծ վաճառականութիւն մ'է որ կընենք :

— Ճշմարիտ է, իրաւունք ունիք . . . բայց
կալուածներն կնկանս վրայ են . . . :

— Չէ՞ք կրնար իրմէ ստորագրութիւն մ'առ-
նուլ բռնով թէ խիտ շահաւոր գործ մ'ունիք
ընելու :

— Այո, ատի բան մ'ընել չէ . ինչ ստորագ-
րութիւն որ ուղեմ, կրնամ առնուլ :

— Արեմն քանի որ ատանկ է, բոլոր ձեր կալուածներն ծախեցէք. դարձեալ կըսեմ, քիչ ատենէն զիննրնին վար պիտի իջնէ, և այն ատեն շատ քիչ ստակով կընաք այնչափ կալուածներ զենել, ի՛թէ դուք չէք համարձակիր, այս գործը ես իմ վրաս կանսուսմ:

— Ինձի մեծ շնորհ մը բրած կըլլաք . . . որովհետեւ գիտեք որ ես դեռ այսպիսի գործերու մէջ խակ եմ, և առանց ձեզի թերեւս վրասեմ:

— Մի՛ վախնաք, սրտերնիդ ամուր բռնեցէք. կը հաւատասեմ զձեզ որ ձեր երէկ գիշերուան ատեւ զանդէտը ձեզի անիրաւ համարում մը բերաւ . . . Եթէ 30,000 Ֆրանքի պէտք ալ ունենայիք, դիւրութեամբ պիտի գտնէիք:

— Ձիս կը բերիկեցընէք: Ես կնկանս երթամ, դուք գացէք սրճարան մը սպասեցէք ինձ, ես ալ շուտով կալուածներուն թուղթերը կառնում կուգամ:

— Խիտա բարի . . . Ձեր կնոջը հետ համաձայնութիւն կը բարեմտղթեմ . . .

— Ձիս տղու անդ կը գնէք, սիրելի Տիւֆրէնն, երթաք բարով չէք բերք:

Եղուարդ շուտով գարձաւ կնկանը քով, որ իր աղջկիը գիրկը առած նստած էր, և իր ամուսինը տեսնելուն պէս զարմացաւ. ցարեկ ատեն ատեն զայուն վրայ քաղցրիկ յշտ մը ծընաւ սրտին մէջ, խորհելով որ սէրը զանի ատեն առաջնորդեց, և երջանկութեան մպրտ մը իր տխուր դէմքը փայլեցուց:

Եղուարդ քիչ մ'ատեն բան մը չէ խօսեցաւ, կարծես թէ ծանր յանցանք մը գործած էր, թէպէտ ճշմարիտ է, բայց չուզեր բատինքեան խոտովանիլ զայն:

— Ահ, որչափ երջանկի եմ, բարեկամս, բտաւ Ատէլին, զձեզ հոս տեսնելով . . . շատ ժամանակէ ի վերէ տատնկ ըրած չունէիք . . . Բայց եկէք սա աղջկիկիդ գրկեցէք:

Եղուարդ մեքենայաբար գնաց աղջկանը քով, տհաճ գէմքով մը գրկեց զանի, առանց անօր տղայական շնորհներն գիտելու, կարծեց թէ կերաղէ, և չէր գիտեր թէ իր գալուն պատճառն ինչպէս իմացնէ:

— Տխուր կը տեսնեմ զձեզ, բտաւ Ատէլին, ցաւ մ'ունիք արդեօք. կաղաչեմ, ըսէք ինձ ձեր ամուսինէն զլատ աւելի գորովաչարժ և աւելի անկեղծ բարեկամ մը չէք կընար գրտնել . . .

— Գիտեմ, սիրելիդ իմ Ատէլին, բայց ցաւ մը չունիմ. այլ միտքս խիտա կարեւոր գործով մը զբաղած է որով շատ ստակ պիտի չահիմ . . .

— Դարձեալ գործ . . . դարձեալ շահ. դուք բնաւ սէր, հանդիտ և երջանկութիւն չէք խորհիր:

— Ահ, երբ հարստանանք . . . այն ատեն . . . Բայց բան մը պիտի խնդրեմ ձեզմէ . . . ձեզ պիտի աղաչեմ որ ստորագրութիւն մը տաք ինձ . . . սաի խիտա շահաւոր գործոյ մը համար . . .

— Շահաւոր բլլալուն վրայ ապահով էք , բարեկամս :

— Այո , խիտ ապահով . . . այս գործը . . .

Եղուարդ քիչ մնաց որ այս գործը ինձ ցուցնողը Տիւֆրէն է պիտի ըսէր , բայց խորհեցաւ որ կինը եթէ անոր անունը լսէ , պիտի մերժէ իր ուզածը , ուստի արգիլուեցաւ : Գընաց իրեն պէտք եղած թուղթերուն ամենքն ալ առաւ , թուղթ մ'ալ գրեց որով իր կինը բոլոր կալուածները ամուսնոյն կը յանձնէր , և գրիւք դադարով Ատէլին տուաւ որ այն թուղթը ստորագրէ : Ատէլին ալ իր ամուսնոյն խոսածներուն վրայ վառահայած հնազանդեցաւ անոր , և առանց կարգալու իսկոյն ստորագրեց :

— Ահա հիմա դործս լննցաւ , ըսաւ Եղուարդ թուղթերը գրպանը դնելով , Պորոս երթամ ու այս կարեւոր գործը լննցնեմ :

Գրկեց զԱտէլին և ուրախութեամբ մեկնեցաւ . Ատէլին թէպէտ խնացաւ որ Եղուարդ զինքը տեսնելու համար տուն եկած չէր , բայց ի սրտէ ներքեց անոր կտրծելով որ ալ բոլորովին գործքով պիտի զբաղի :

— Ինձմէ զատ մէկը չը սիրեր , ըսաւ ինքնիրեն , այս է նկատողութեան առնելու կէտք . ուստի պէտք է որ իր այս աշխատասիրութեանն ու իր կինը և դասակը հարստացնելու այս բնական փափագին համար ներդրամիտ գտնուիմ իրեն :

Իե՛ղձ Ատէլին , չգիտեր թէ իր ամուսինը այս ստակը ինչ բանի պիտի գործածէ զոր ստուգելն անհրաժեշտ է :

ԳՒՈՒԽ ԺԹ.

ՅԱՆՏԱՆՔԸ ԵՒՈՒԱՐԳԻՆԸ ԶԷ:

Եղուարդ ուրախութեամբ դնաց Տիւֆրէնը գտնելու . արդէն բաւական մեծ գումարի մը տէր եղած էր , և կրնար զայն ուղածին պէս գործածել . որովհետեւ իր կինը իրմէն հաշիւ պահանջելու չէր , զորանչն ալ բընաւ իր գործին չէր խառնուեր : Տիւֆրէն անհամբերութեամբ Եղուարդը կրպպատէր . և երբ քիչ մ'ուշացաւ , վախճաւ որ չըլլայ թէ Ատէլին դէմ կենայ անոր առաջարկութեան . բայց երբ թուղթերը տեսաւ , գոհունակութեան ժպիտ մը երևեցաւ չըթանցը վրայ , զգացում մը՝ զոր շուտով ծածկեց , իր դէմքին վրայ եղական տպաւորութիւն մ'ըրաւ զոր Եղուարդէն զատ ուրիշ մէկը կրնար նկատողութեան առնուլ . բայց Եղուարդ Տիւֆրէնին խօսելու ժամանակ չի աջարկ ստիպեց զանի որ երթայ շուտով ծախէ , և Տիւֆրէնն իւր թաց անոր ըսածը կատարել վստահալով որ միտքը կը փոխէ :

Ի զուր Ատէլին իր ամուսնոյնը արձին կըսպասէր . որը տարածանցաւ , բայց Եղուարդ չըրեցաւ : Ուստի կտրծելով որ իր նոր ծանօթներէն միոյն տունը հրաւիրուած ըլլայ , այլ ևս չի կտակածեցաւ . սակայն իրեն աւելի մտատանջութիւն պատճառող իրն իր ամուս-

նայն Տիւֆրէանի վրայ ունեցած մեծ համարու մն էր . և մանաւանդ այն անասարգերու թիւնը որով իր բարեկամը կարճած անձին զազանահան վարմունքը մտիկ ըրաւ . Տիւֆրէանի սպանալիքներն Ատէլինի միտքը եկան , և իր ամուսնոյն տկարութիւնը յիշելով սկսաւ սոսկալու գողալ խորհուրդ որ թէ իր և թէ իւր աղջըկանն երջանկութիւնն ու հանգստութիւնը անանկ մտի մարդու մը ձեռք անցած է , որ իր կիրքը յազեցնելու համար կրնայ ամեն տեսակ մեծամեծ գէշութեանց ձեռնարկել :

Ատէլին այսպիսի խորհրդածութեանց մէջ ինկած էր . ժամը երեկոյեան ինն էր , և ակուր գէժքով իր ամուսնոյն կրօպատէր , երբ յանկարծ փողոցին դրանք զարնուելուն ձայնը ականջին հասաւ . և վերջէն իմացաւ որ մէկը սանդուխէն վեր կիշնէ . կարծելով թէ եղուարդն է , դնաց սենեակին դուռը բացաւ . բայց եկողը եղուարդը չէր , այլ իր ծառայներէն մին , որ նամակ մը ներկայացուց իրեն ըսելով թէ օտարական մը բերած էր զայն իրեն յանձնելու համար , և առանց պատասխանին սպասելու գացած էր , իջաւան նամակը տիկինին տալէն վերջը մեկնեցաւ :

Ատէլին բացաւ նամակը , գիրքը չի ճանչցաւ . տկար և գողոցոյուն ձեռքով զբռնած կերեւէր . բայց տեսաւ որ տիկին Տօլպանի ստաբազբութիւնը կը կրէր :

— Այս կինը ինձի էնչ գրեթէ կրնայ ունենալ , ըսաւ Ատէլին ինքնիրեն , կարդանք .

«Տիկին»

« Երկար ատենէ ի վեր հիւանդ ըլլալու համար անէս գուրս չեմ կրնար ելնել . բայց չեմ ալ ուղեր աւելի սպասել , և ձեզի ամենակարեւոր ազգարարութիւն մ'ունիմ տալիք : Որովհետեւ ի սկզբանէ յանցաւորը ես էի , ուստի կուղեմ որ առաջին անգամ ալ ես ուղղեմ : Ես ձեր տունը Տիւֆրէան անունով մարդ մը բերի . . . աւա՛ղ , որչափ զղջացած եմ , զիտէ՛ք . սակայն այն ատեն չէի գիտեր որ այդ մարդը ամեն չարութիւն գործելու պատրաստ մէկն է . . . : Տխուր կիրք մը երկար ատեն զիս կուրցուց , բայց հիմա ալ հաստատ խմացած եմ կատարեալ ամբարիշտ մ'է : չարութեք մ'է , և ամեն կերպ վատութիւն կը գործէ . . . իր չարատարութիւնն փորձելու այլ ևս պէտք չունիմ : Դա բոլոր ունեցածէս զրկեց զիս . բայց ես իմ հարստութիւնս կորսնցուցած ըլլալէս աւելի իր գուսանութեանը երկակայ եղած ըլլալու վրայ կը ցաւիմ . Խաղ , զբօսանք , զեղբութիւն և այլ այսպիսիք բնական են իրեն , և իր սոսկալի կիրքերն ալ ծածկելու մասին խիտ վարպետ է . . . : Դե սակե աւելի խօսք չեմ ընէր ձեզ , բայց կը յորդորեմ որ ձեր ամուսնոյն հետ ունեցած կոպը չուտով խղէք , ապա թէ ոչ վերջէն նա ալ այդ հրէշին խրատուցը զո՛հ կերթայ . . . »

«ԱՅՐԻ ՏՕԼՊԱՆ»

Ատէլին նամակը կարդալուն պէս սկսաւ գողալ . հողոյն վրայ գազանի սոսկում մը տի-

րեց . քանի մ'անդամ կարդաց այն շարագոյժ նամակը , վերջը իր գեղեցիկ արտասուալից աչքերը գէպ է երկինք վերուց ու ըսաւ :

— Ո՛վ երկինք , այս ինչպէս մարդու համար մօրս հետ խոսվեր է եղբարդ , ո՛հ , Տիւֆրէնն իր խորհրդականը , իր խրատատուն . . . իր բարեկամն է . . . Ա՛հ , ո՛րչափ շարիք պատրաստեալ կան ինձ ապագային մէջ . ինչպէս կարող ըլլամ աննոց առաջքն առնուլ . եղբարդ , իմ խօսքս մտիկ չընե՛ր , իմ խրատներս կը մերժէ , ականջ կը դռցէ իմ աղաչանաչքս ալ . . . Բայց չէ . . . բարետիրտ անձ մ'է . չի կրնար իմ արտասուացս դիմանալ . . . գեռ կը սիրէ զին , չի մերժեր իր Ատէլինը . յանուն իւր աղջկանը կը պաղատիմ որ իր կորստեանը պատճառ ըլլալու մէկ շարտիրտէ մը բաժնուի . . . կը յուսամ որ այս նամակը իր միտքը կարթնցնէ . ալ ասոր վրայ յարաբերութիւնը կը դադարեցնէ այնպիսի մէկու մը հետ որ արդէն այնչափ նեղութիւն պատճառամ է ինձ :

Այս խորհրդածութիւններն Ատէլինի ցաւը քիչ մը մեղմացուցին . սաստի միտքը դնելով որ եղբարդ տուն եկածին պէս նամակը անոր ցուցընէ , որոշեց սպասել , գեռ ժամանակը կանուխ է , ըսաւ , հարկաւ կուզայ . քիչ մ'ալ կըսպասեմ . . . Խեղճ կին . չէր զիտեր թէ ինքը սասնկ արտում է ատարս զիչերային խոր լուսթեան մէջ անհանգստութեամբ և արտասուօք խօսվուած ատեն՝ ամուսինը անգին ինչով կըզբաղի . . . Գուք որ ապա-

զայն ընթեռնուլ կը ջանաք , ո՛րչափ ցաւելու արժանի կըլլայիք , եթէ ձեր աչքերն այդ անհուն միջոցէն թափանցէին և ականջներնիզ միշտ ճշմարտութիւն լսէին : Յնօրք մահկանացուաց երջանկութեան համար հնարուած է . նա երբեմն յայտն աւելի բարիք կը ծնանի իրենց :

Ատէլին կը ջանար ժամանակին երկարութիւնը մտռնալ ապագային համար առաջադրութիւններ ընելով : Ո՛ր բախտութեամբ կը տեսներ որ գեղեցիկ եղանակն հասած է , և չուտով պիտի կրնան գեղի զուարճալի տունն երթալ . նա իր ամուսնութեան առաջին օրերն հոն այնչափ երջանիկ էր , որ կը խորհէր թէ հոն մնալով մինչև այն օրը խազազ ու զուարթ կեանք կանչընէր : Եղբարդ իրեն հետ գիւղը պիտի երթար , հոն իր առաջագրութիւններն պիտի մտնար , զինքը անհանգիստ ընող գործերն պիտի ձգէր , և բօլորովին անզգամ Տիւֆրէննէն պիտի բաժնուէր : Այն ատեն բնուրան մը իրենց բարեկեցութիւնը չի պիտի վերդավեր , և յայնն ալ կրկին իրենց բով պիտի գար բնակելու և փոքրիկն Էրմանա պիտի մեծնար և իր ծնողաց աչքին սահ պիտի կրթուեր զանոնք յարգելու սիրելիւով : Ինչ զմայլելի ապագայ . . . ո՛հ , այն ատեն ժամանակը ո՛րչափ կարճ կերեւի , և ո՛րչափ աղէկ կը գործածուի . . .

Ատէլինի սիրտը՝ իր երեսակայութեան մէջ յառաջ բերած այս երջանկութեան գեղեցիկ

պատկերէն պատճառեալ հաճութիւն մը զգայ . . . բայց ժամանակը կանցնէր . . . նայեցաւ ժամացոյցը . . . սկսաւ հառաչել . . . Երջանկութեան պատկերը աներեւութացաւ, և վերան խոր արտմութիւն մ'եկաւ :

Տարբարզ գ մարդիկ այս կերպով կը ջանան իրենց նեղութիւններն փարտաւել, և իրենց անձնական վիշտը իրենցմէ ծածկել: Այն մարդը որ իր անչափ սիրով սիրած սիրելու հին կըրկոսնցնէ, ամեն վայրկեան անոր վրայ կը խորհի. կը կարծէ թէ կը տեսնէ զանի և անոր հետ կը խօսի, անոր հետ անցուցած ժամանակին մէջ կը գտնուի. և իրենց ամենաներջանիկ եղած տեղուանքը գացած է. կը լսէ անոր ձայնը, անոր քաղցրիկ հնչումները և անոր զորութիւնը ու խտերը որք զուարճալի կերպիւ իր սիրտը խռոված են. կը յիշէ այն զմայլելի խօսակցութիւններն որք միայն սէր կարտայայտեն, և այնպէս կը կարծէ որ տակաւին իր սիրելու հույն ձեռքերը իրեններուն մէջ կը սեղմէ . . . Կը փնտռէ նորա փայլուն չրթ ունքները որոց վրայ ամենաքաղցր հաճոյք մը կը ցուար. . . բայց խօկոյն ցնորքը կանհետանայ. կը տեսնէ որ քովը մէկը չկայ . . . այն ատեն ինչ ցաւ կը զգայ, և ո՞րչափ կը հառաչէ իր ցըծորքէն սմափիւրուն համար :

Այսպէս Առէլին յուզուած էր բոլոր այս երկուդի և յուսոյ զառանցանք. քսան անգամ ելաւ աղջկանք օրորոցին քով դնաց. դարձաւ պատուհանին քով և ամենափոքր ձայնին մը.

սասանջութեամբ ականջ կը դնէր. բայց մի քանի կառքերու ձայներ միայն գիշերուան հանդարտութիւնը կրնգ միջէին. և Առէլին երբ անոնց ձայնը կառնէր, մէկէն սիրտը ուրախութեամբ կը լցուէր կարծելով թէ կառքով եկողն իր այնն է. սակայն նային կառքն առանց կայնելու տանը առջևէն կանցնէր կերթար :

Վերջապէս շատ ժամանակ սպասեց, գիշերուան ցուրտը, առջի գիշերուան յոգնութիւնը իւր զգայարանքները թմրեցուցին. և թէպէտ կուզէր ալ աւելի սպասել, բայց տեսնելով որ չի պիտի կրնայ երկար տեսն քուշի գիմանալ, վերջապէս որոշեց պառկել. գրաւ գիշերուան սեղանին վրայ տիկին Տոյանի նամակը, որպէս զի եղաւորը եկածին պէս ցուցնէ անոր. այս անգին նամակէն կը յուսար իր հանգստութիւնն ու երջանկութիւնը, Սովորական կանգեղք վտակն և պառկեցաւ . . . բայց ցաւօք օրաի և ակամայ . . . կուզէր իր քնոյն յաղթել, սակայն յոգնութիւնը զինքը խիստ անհանգիստ բրած և արտեւանունքները ծանրացուցած էր, և խորունկ կերպիւ քնացաւ :

Միջոցը ժամ մ'անցնելէն ետեւ, Առէլին ակոռի մը յանկարձական անկումէն և այս պատճառաւ ելած ստափիկ ձայնէն արթնցաւ . . . բայց բան մը չի կրցաւ տեսնել, կանգեղք մարած էր. ուզեց անկողնէն ելնել . . . սակայն իր մարմինը սեղմոջ բազուկ մը զինքը արգի-

լեց, և երկու համբոյր ծածկեցին իր բերանը : Ատէլին դիտել որ սենեակին բանային միայն իր ամուսնոյն քոյն է, և ուրիշ մէկը չի կրնար գէշերը իր քովը գալ. ուստի այնպէս կարծեց որ եկողը եղուարգն է, և անոր բազկացը մէջ կը գտնուի :

— Ահ, բարեկամ, բնա Ատէլին, երկար ատեն սպասեցի ձեզ. եթէ դիտնայիք, սրչափ կուզէի զձեզ տեսնել . . . ձեզ հետ խօսիլ . . . Տիկին Տօլպանէն նամակ մ'ընդունեցոյ, խեղճ կին . . . սրչափ թշուառացեր է . . . տեսէք թէ Տիւֆրէսնի նկատմամբ ամենեւին խարուած չեմ եղեր. ոհ, այն ճիւղը . . . Տիկին Տօլպան իր նամակին մէջ գրած է թէ նա խիստ փեսակար մէկն է, ամեն մտլութիւն . . . տմեն մեղք կը գործէ . . . Սիրելի եղուարգն, կաղաչեմ, ալ ընկերակցութիւն մի ընէք այդ մարդուն հետ . . . վերջընիդ գէշ կըլլայ . . . Մի գիտնաք որ այս բոսմներս զտանցանք են. ահաւասիկ նամակը հոն է . . . հոն սեղանին վրայ . . . եթէ կանգեղը մարտը չըլլար, հիմա ձեզի կարող ալ կուտայի :

Ատէլին պատրաստուեցաւ ելնել կանդեղը վառելու, բայց սէրը զինքը անկողնոյն մէջ թողուց, ստուա որ ամենափափուկ գորովանք և անընդհատ համբոյրներ կընդունի. կարծելով թէ ամուսինը դատած է, յանձնեց ինքզին. ալ անոր գորովանացը և անոր սիրոյն, ինքն ալ փոխողարձ սիրոյ նշաններ յայտնեց. իր անցեալ վիշտերը իրեն համար երազի մը պէս

էին, և հիմախուան ուրախութեամբ բոլորովն ապշած էր :

Չուարճութիւնը հանգստեան պէտքն ալ կը բերէ. Ատէլին սիրոյ և երջանկութեան թրմութեանէն իր անկողնոյն մէջ գտնուողին բազկացը վրայ քնացաւ : Երբ աչքերը բացաւ, տեսաւ որ առաւօտեան լոյսը պատուհաններէն ներս թափանցեր էր. իր հօգին իր վայելած զուարճութիւններովն գեռ կը հրծուէր : Բայց երբ գլուխը դարձուց իր ամուսնոյն երեսը նայելու համար, որ դեռ կը քնանար, ստուա լի աղաղակ մ'է հանեց . . . սկսաւ դողալ . . . արիւնը ստուեցաւ . . . աչքերն անշարժ մնացին . . . սիրտը ալ չէր բարախեր . . . քանզի հետը պառկողը Տիւֆրէսն էր . . . գլուխը անոր կուրծքին վրայ դրած էր . . . այնչափ դուրովն ու սէր անոր յայտնած էր . . . վերջապէս եղուարգի վրայ ունեցած խանդաղատանացը հաղորդ ըրած էր զանի :

Ատէլինի աղաղակին վրայ Տիւֆրէսն արթնցաւ. տեսաւ զԱտէլին. անզգամ ժողիտ մը, բարբարոսական ուրախութիւն մը իր աչքերը կենդանացուցին. Ատէլին շարժելու անկարող մէկու մը նման նուազեալ կեցած էր. Տիւֆրէսն իրեն մնացած քիչ մը ժամանակէն ալ օգուտ բաղել ու զելով քովը մօտեցաւ . . . ուղեց իր վայրենական դրդուանքներն նորոգել . . . Ատէլին զօրացաւ, խեղքը վրան եկաւ, այն հրէշը ու ժով մը անգին հրեց . . . ցատկեց անկողինէն դուրս,

հազաւ զգեալոր, և զայրազին գիւմօք ու հաստատամտութեամբ իմացուց որ այս անգամ ալ կրնայ ինքզինքը պաշտպանել:

Տիւֆրէան կանկ առաւ. վայրկեան մը զանի լուսութեամբ գիտեց, վերջը ծաղրական ծիծաղով մը՝

— Այս ինչէ, աիկին, դարձեալ ընդդիմութիւն կրնէք, ըսաւ: Ճշմարիտ կրտեմ, ալ այս գիշերուան ըրած զուարթութիւններնուս վրայ գիտնալու էք որ ըրածնիդ տղայութիւն է . . . Հիմա ձեր գոռօզութիւնը շատ անցած ըլլալու էք . . . Օն ուրեմն, հաւատացէք ինձ . . . եկէք հաշտուինք . . . Կողազսովեմ զձեզ որ ամուսիննիդ այս բանը չիմանար, ես ձեզի դեռ աւելի բան մը չըրի . . . Մնաց որ խիտ ապահով եղիք որ ձեր ամուսինն ալ այս գիշեր ուրիշ մէկու մը թեւերուն մէջն էք: Եւստի զձեզ յանդիմանելու բնաւ պատճառ մը չունիք . . .

Տիւֆրէան քանի մը քայլ յառաջ գնաց Ատէլինի ժողովուրդ համար, բայց նա ստակալով հեռացաւ անկէ . . . Գնաց քովը, ուղեց նորէն յաղեցնել իր գաղտնական կիրքը . . . Ատէլին դէմ դրաւ, կարծես նոր զօրութիւն մը եկաւ վրան, և իր զեղուարդ կանչող ձայնը սենեակը թնդացուց: Տիւֆրէան կեցաւ, ալ չի մտեցաւ. իմացաւ որ Ատէլինի աղաղակներն կրնան չուտով լաւիլ, և տանը մարդիկը գայով բարբ ակնկալութիւններն կր խանդարէին: Պետք եղաւ ուրեմն Ատէլինէն հեռա-

նալ, բայց անոր վրայ կատաղութեան և բարկութեան նայուածքներ կարճըկէր: Գնաց տիկին Տօլպանի նամակն առաւ, և զայն Ատէլինի ցուցնելով ծաղրեց անոր նօրանօր փորձերն ու միջոցները:

— Ահաւասիկ, ըսաւ հեզնութեամբ ժրտակալով, ահաւասիկ այն նամակը որով մեծ օգուտ քաղել կը յուսայիք . . . Դուք իմ սէրս արհամարհեցիք ու մերժեցիք, այնպէս չէ՞, արեմն ձեր այդ անարգանաց փոխարէն ստակացէք իմ ատկութեանս ու վրէժնիդ զուժեանս հետեւանքէն: Մնաք բարով, աիկին Տօլպանի նամակը հեռա կը տանիմ, այսուհետեւ ալ նամակ չի գրեր ձեզ:

Տիւֆրէան այս խօսքերն ըսելով Ատէլինի սենեակէն արագութեամբ դուրս ելաւ:

ԳԼՈՒԽ Ի.

ԿՐԵՆԵՐ ԱՐԱԳՈՒԹԵԱՄԵ ԿԸ ՊՈՐՆԵՆ,
ԵՅԷ ԶԻ ՅԱՂՔՈՒԻՆ

Եղուարդ Տիւֆրէանէն հարկը հազար ֆրանգ ընդունած էր. այդպիսով ստակը ծախուած կայրածներուն միայն կէս գինն էր: Բայց Տիւֆրէան որ շատ կուգէր ստակին մէկ մասը իր քովը պահել, եղուարդի ըսաւ որ կայրածներուն բոլորն ալ չէր ծախած, վասն զի քիչ օրէն զանոնք այժմեան գինէն աւելի

բարձր գինով ծախելու յոյս ունէր . Գիրազաւ-
ւան Եդուարդ ալ իր բարեկամը կարծած ան-
ձին վրայ կտարբեալ վտտահուիթիւն ունենալու
համար յանձնարարեց որ յարմար դատած ժա-
մանակը զանոնք ալ ծախէ :

Եդուարդ տիկին աը ժեբրանի հետ ստտտիկ
սիրահարուած ելաւ անոր աւանը գնաց . այս
կնոջը համար իր տունը , իր ամուսինը և իր
զուակը մոռնալով : Հնն առանձին գտաւ զայն
որոյ ձիւքերը իր երեւակայութիւնը խռոված
էին : Կարծեցեալ այրի կինն իր սենեակն ա-
ռանցնացած կը կենար , և Եդուարդի համար
ալ մեծ շնորհ մ'էր զանի առանձին գանկելով
անոր հետ ժամանակ անցընեելն : Տիկին աը ժե-
բան ամեն կարելի միջոցներն գործադրեց , և
ամեն ջանք բրաւ Եդուարդի սէրը բոլորովին
գրաւելու համար . և զիւրաւ ալ իր նպատա-
կին հասաւ . որովհետեւ ավարներն շատ դիւ-
րութեամբ կը մըլորին . . . Ժպտա մը , նայուածք
մը զանոնք կը յախտասիէ , և այս կողմէն զո-
րաւոր մտքերն ալ շատ անգամ միկար մտքե-
րուն կը նշանին : Ճարտար և միանգամայն չը
սիրահարուող կին մը իր մերժումը վարպետու-
թեամբ կը ծածկէ . և երբ հաստտի ըլլայ որ
իւր սիրած անձին վրայ պիտի իշխէ , և անոր
պիտի կրնայ հրամայել , այն ատեն իր սէրը
անոր կը նուիրէ : Տիկին աը ժեբրան եթէ խորա-
մանկ և անզգամ մէկը սիրէր , է՛ր կրնար ա-
նոր վրայ իշխանութիւն գործածել . բայց Եդ-
ուարդի նման իր կնոջմէն զատ ուրիշ մէկը չը

սիրողին առջև շատ խաղ կրնար խաղալ . .
Անոր համար խեղացի կին մը պէտք է որ իրեն
համար այնպիսի ամուսին մ'ընարէ որ ուրիշներ
ալ սիրած ըլլայ , որովհետեւ զոնն անով կըր-
նայ մոլորութեան դէմին բղինքը զգուշացընել :

Այս ճշմարիտ է որ ուրիշ մը սիրահար բնե-
լու համար պէտք է սիրահար ըլլալ , այլ մի-
այն եղո՞մ ձեւ այնել : Ճշմարիտ սէրը մարդս
երկատ , ձախող , անխոհեմ և անյաջող կրնէ .
այս ամենուն ի՞նչպէս հաճոյ ըլլալու է : Երբ
մէկը այս սէրն ունենայ , իր բոլոր ձիւքերը կը
կորսնցնէ . երկտտարդուհի մը (աղէկ հասկը-
ցիք ըստծո , անմեղ երկտտարդուհի մը) երբ
տեսնէ որ իր սիրելին մտնէ այն օրահն ուր իր-
մէ զատ ուրիշ մարդ ալ կայ , խկոյն կը խռովէ ,
կերազէ և երեսն անգին կը դարձնէ . դէմքին
վրայ կարմրութիւն մը կը արիւն . եթէ հետը
խօսին , այլ ընդ այլոյ պատասխաններ կուտայ .
չի համարձակիր աչքերը վեր վերցնելու վախ-
նալով որ ինքզինքը կը ցուցնէ . կը դողայ որ
իւր ինք բաժը չի գուշակին . իրեն մտկեր է ,
րեւել որ ամեն մարդ աչքն իր վրայ տնկեր է ,
և ամեն ոք իր դպտնիքը իմացած է : Եթէ
երկու հոգի ցած ձայնով խօսին , նա այնպէս
կերեւակայէ որ իր վրայ կը խօսակցին :

Ամենափոքր իրողութիւն մը իր խռովու-
թիւնը կը յաւելու : Եթէ գաշնակ զարնել
գիտնայ և գաշնակին քով հրաւիրուի , մտա-
ները կը դողան և շին կրնար գաշնակին վրայ
սահել . եթէ երգէ , ձայնը կը վտտուի , և սէր

յայտնող խօսքերն լաւ արտասանելէ կը վախնայ . եթէ պարէ , իր սիրած անձին հետ պարելէ կը վախնայ , և ուրիշ մէկու մը հետ պարած ասեանն ալ կը խռովի . . . խեղճ երիտասարդուհի . . . եթէ դու չի սիրելիր . . . եթէ քու սիրած անձդ հոն գտնուած չլըլար , դու քու շնորհքներդ , քու շատարձութիւնդ չէիր կորսնցնիր . կարելի է շատ զմայելի կըլլայ և և աւելի հրապուրել հանգամանք մը կուեննաւ յիր , և քու մտերիմ բարեկամուհիներդ ալ քու այդ փոփոխութեանդ . և խռովութեանդ վրայ չէին ծիծաղեր :

Իսկ երիտասարդն ասկէ աւելի գէշ վիճակ մը կուեննայ . որովհետև երկասարդ կնոջ մը վրայ տեսնուած երկչտութիւնն ու շփոթութիւնը միտ անմեղութեան և պարզասրտութեան երեւոյթ մը կընծայեն իրեն , որով անոր անպատեհութեանցը ներողամիտ կը դառնուի : Բայց սիրահար մը երբ երթոյ սրահի մը անկիւնը նստի , և իր սիրելուհին գորովանօք իր երեսը չի նայի , և անոր քով գացած նըստած ժամանակ չի խօսի և միայն հառաչէ , և իր սէրն յայտնած ատեն բնաւ անկէ պատասխան մը չընդունի , այդպիսի մարդ մը ճշմարիտը խստապանակով այնպիսի սիրելի չէ . ընկերականութիւննց մէջ ասանկ մարդուն վրայ կը ծիծաղին : Իսկ ապուշ մարդ մը որ չի սիրեր , որ չըզար , որ կանայքը նեղելէն կախորժի , որ զգացումը խեղկատակութեան կը դարձընէ , և հաստատամտութիւնն ալ կատա-

կութեան կը դարձընէ , և հաստատամտութիւնն ալ կատակի , այնպիսին դիւրաւ սրտի մը տէր կըլլայ , և մէկ օրուան մէջ կը հրապուրէ այնպիսի երիտասարդուհի մը , որոյ համար զգայուն և երկչտ սիրահար մը շատ տարիներ հառաչելը է . . . : ճշմարիտ է որ այդ ապուշն շատ աշխոյժ և շատ յանդակ կըլլայ , և իր սիրելուհոյն հետ ասանձին եղած ատեն շատ բան կընէ . . . բայց ողորմելի սիրահարն ինչ կընայ ընել . . . : Իրաւամբ ըսուած է սա առածը՝ թէ « Ով որ կը սիրահարուի , յիմար է » :

Գիտեմ հիմայ շատ տիկնայք բարկանալով երեսս ի վեր պիտի պուսան ու բանն .

— Ինչ կըսես , պարոն հեղինակ , չե՞ս ուղեր որ մարդիկ ճշմարտապէս զմեզ սիրեն . ինչ զարմանալի մարդ ես . . . այդ ինչ արհամարհելի սեղբունք ունիս եղեր . . . :

Շնորհ ըրէք , տիկնայք , հանդարտեցէք , ըսածս լաւ չի հասկըցաք . ես կուզեմ որ զձեզ անվայելութեամբ և անմտութեամբ չի սիրեն . կարծեմ այս ըսածիս դուք ալ իրաւունք կուտաք . սիրահար մը երբ հառաչելէն զատ ուրիշ բան մը չընէ , շատ անուանի էակ մ'է . կուզեմ որ մարդիկ խելքով և զուարթութեամբ ձեզի սէր յայտնեն , որովհետև արիւրութիւնը երբէք աղէկ հետեւանք չուեննար . գաղտնի սիրեն զձեզ , որովհետև ասի սիրոյ հաճոյքը կաւելցնէ . եսանդով սիրեն զձեզ , որովհետև արժանի էք . սաստիկ սիրեն զձեզ ,

որովհետեւ ասի ձեզի անհաճոյ չերեւիր , և վերջապէս կեանքն ալ յաւիտենական չէ . և ասանկով երբ համաձայնութիւն ըլլայ , այս համաձայնութիւնն իրարու հաղորդելու համար դար մը ամբողջ սպասելու հարկ չեմ տեսներ , նկատելով որ այսօր ալ վաղուան չափ երջանիկ ըլլալ պէտք է :

Բայց թողունք հիմա այս խօսքերը և դառնանք եղուարդին քով , որ բնաւ մէկուն վըրայ սէր չունեցող կնկան մը սիրահարած է , և իրեն կարծածին պէս սիրահարութիւնն իրմէ չի սկսիր . կուզէ զինքը իրեն դեբի բնել . և ասօր համար սիրելը մտքէն անդամ չանցնիր . որովհետեւ մարդ իր սիրած անձին շըզթայ չի տար , բայց զանի իր հետը կը կրէ :

Տիկին տը յէրանի համար աղէկ հարատւութիւն մ' էր եղուարդ , բայց իրեն վրայօք Տիֆլիսն ինչ որ ալ խօսած էր , ինքը անոր խօսածներուն հակառակ եղուարդի նման հարուստ և սիրահարեալ երիտասարդի մը վայելելու չէր : Եթէ եղուարդ առաջուց այս կնոջը վրայօք տեղեկութիւն առած ըլլար , պիտի իմանար որ իր սիրած կինն իր կարծածէն շատ տարբեր վիճակ մ'ունէր . այսինքն երբեմն հարուստ Ռուսի մը , երեւելի պարունի մը , զօրաց հանդերձապետի մը և նշանաւոր վաճառականի մը հետ սերտ յարաբերութիւններ ունեցած , իսկ հիմա ալ իր տունը անխելք երիտասարդներու , ապուշներու , դաւաճաններու և խաղամունչներու կեդրոնն էր :

վերջապէս պատերազմական պայտօնատունըն խիտ լաւ վնասուած և դանուած չէր այն զօրապետին անունն որուն այրին կանուանէր ինքզինքը :

Սակայն եղուարդ ասնցմէ բնաւ մէկուն տեղեակ չէր . այլ կը կարծէր թէ այնպիսի կին մ'ունէր որ իր համակրութեան զօրութեամբը զինքը հրապուրելով զիրենք իրարու միացուցած է . կը փառաւորուէր այնպիսի գանձ մը ունենալուն համար զոր իրմէ առաջ քսան հօգի վայելած էին . յափշտակուեցաւ նորա շընորհացը առջև զորս իր կնկանը վրայ գտնուածէն աւելի գեղեցիկ դատեց , պատճառն որ սիրուհի մը միշտ ամուսինէ մ'աւելի քաղցրիկ մըրթ , հաստատուն վիզ և փոքրիկ ոտք կունենայ , որն որ մեծ մասամբ նենդութիւն է . բայց խեղճ կանայք կըստասն որ հմուտ անձինք իրենց բնարութեամբը զիրենք սիրել յօժարին :

Ռուսի եղուարդ նոյն օրը մինչև իրիկուն Տիկին տը յէրանի այն քաղցրիկ մըրթը , հաստատուն վիզը և փոքրիկ ոտքը դժուրեւով անցուց , և Տիկին տը յէրան ալ յօժարեցաւ , վասն զի չէր կրնար իր սիրոյն զօրութեանը և իր օրտին ձայնին դէմ կենալ . թերեւս այսպէս կըսէր նա եղուարդի դժուարքներն ընդունելով . յամանակն խիտ արագ կանցնի այսպիսի սիրուն զբաղմունքով : Եղուարդ իր տունն ու դօրծերը բոլորովին մոռցած էր : Այն տունն միայն իմացաւ իրիկուն ըլլալը երբ տե-

սաւ որ տանեցեալու հոգի եկան իր սիրելի այրիին առնը, որք անոր տանը սովորական այցելուններն էին և ամէն իրիկուն հոն թուղթ խաղալու կուգային :

Եդուարդ զանոնք տեսնելով ուղեց մեկնիլ, բայց Տիկին տը ժերան չի թողուց, աղաչելով որ այն գիշերն իր տունը կենայ և իր կորսընցուցած ստակին փոխարէնն առնու : Եդուարդ չի կրցաւ դիմադրել և իր ամենասիրելու հոյն հետ թուղթի նստաւ, որն որ այնպիսի զմայլելի վայելութեամբ մը իր խաղար, որուն վրայ խիստ կը դարմանար Եդուարդ :

Տիւֆրէան իրիկուան դէմ տիկին տը ժերանի տունը գալով զարմացաւ իր բարեկամին տակաւին հոն գտնուելուն վրայ . նոյն միջոցին Եդուարդ իր չի ճանչցած մէկ մարդուն հետ թուղթ կը խաղար : Իր սիրուհին ալ դարբեր էր խաղալէ, վասն զի նա խիստ աղէկ խաղացած էր, և կըսէր թէ չէր ուզեր Եդուարդի հետ ունեցած յաջողութեանը ձախող վախճան մը տալ : Այլ սակայն Եդուարդ Տիկին տը ժերանի տեղ յաջողող պարոնին հետ չէր յաջողեր . միշտ կորսնցընելու վրայ էր, և չէր ալ ուզեր խաղալէ դադրիլ յուսալով որ կըրկին կը շահի :

Տիւֆրէան Եդուարդի դէմը կայնած լըսութեամբ զինքը կը դիտէր : Գաղտնի ուրախութիւն մը կը փայլէր իր գէմքին վրայ . քանզի կըտեսնէր որ Եդուարդի վրայ կը տիրէին այնպիսի կիրքի մը նշաններն որ եթէ անդամ մը

սաստիանար, ալ սահմանէ դուրս պիտի ելնէր. անոր գէմքին գէշութիւնը, երանկերուն սուսիլը և շնչառութեան նուաղիլը տեսնելով դիւրաւ կրնար դատել թէ խաղը ինչ արդիւնք յառաջ բերած էր իր վրայ : Բայց և այնպէս յիշելով որ անխոհեմն Եդուարդ իր վրայ բաւական մեծ ներք պիտի անցնի, և սպասով ըլլալով որ ուրիշ ձեռք պիտի անցնի, մտաբանանոր քով և կամաց մը ըսաւ որ ալ չի խաղայ . բայց նա մտիկ չըրաւ . որովհետեւ այն մահառիթ կիրքն արդէն լաւ մը իր վրայ տիրած և զայն իրեն գերի բրած էր, մանաւանդ որ յամառութիւնն ու ունայնասիրութիւնն ալ զինքը խաղին սեղանէն ելնելու կարգիլէին :

— Գոնէ, ըսաւ Տիւֆրէան, եթէ խաղերնիդ շարունակել կուզէք, ձեր դրպաչն ու մէջի ստակը ինծի յանձնեցէք . սեղանին վրայ դրած ստակնիդ կօղտէ, մանաւանդ որ կը կորսնցըրէք ալ . ինչ, վրանիդ գանուած ըստակը մէկ գիշերուան մէջ ընցընել կուզէք :

Այս խրատը եթէ ուրիշ մէկը տար Եդուարդի, նա մտիկ չէր ընէր . բայց Տիւֆրէան իր վրայ այնպիսի իշխողութիւն մը հաստատած էր, որ խօզին հաննց առանց վարանելու դըրպաչն յանձնեց անոր, որմէ արդէն շատ զուշօքները առած էր :

— Առէք, ըսաւ նուաղեալ ձայնով մը և իր ստակը կորսնցընելուն համար զգացած սաստիկ ցաւը ծածկել ջանալով, առէք . . . Ա-

հաւաստի սենեակիս բանալին ալ . . . տունս սպասեցէք ինձ . . . :

Տիւֆրէան այս հրաւերը երկրորդեւ չի տրուաւ . և նոյն դիշերը եղուարդի տունը երթալով առանձին եղուարդի սենեակը մտաւ . և անոր կըսպասէր : Ետաններն այնչափ վարժուած էին զանի իրենց տունը տեսնելու , որ բնաւ ուշադրութիւն չըբին անոր : Տիւֆրէան հօն խիտ շատ սպասելէն վերջը տեսնելով որ եղուարդ չերևցաւ , Ատէլինի քնանալէն ետքը անոր սենեակը մտնելու յանդգնական առաջադրութիւնն դործադրեւ էր : Ատէ դիւրին էր իրեն համար , վասն զի առաջուց տեսած էր անոր սենեակին բանաւոյն ուր դըրուիլը , և արդէն տեսնուեցաւ ալ թէ ինչպէս յաջողած էր իր այս ձեռնարկութեան մէջ :

Գաղղը եղուարդի , բաղղը բաղղովին անյաջող դացած էր . իր վրը գտնուած ստակն ամբողջ երթալէն ետքը հաղար ոսկի ալ պարտքը բրած էր : Տիկինը աբ թերան անոր սիրան առնելու համար միայն զանի ընթրիքի համար վար դրուաւ , և ըստ որ իր ստակը շահող Տէֆէօրէօրէ սպետն խիտ ազնիւ մարդ մ'է , և ուղած ատեն իր կորսեցուցած ստակը իրեն կը վերադարձընէ , և թէ որովհետեւ ժամանակէ մը վերջը իր բաղղը հարկաւ կը դառնայ , ուստի պէտք է սպասել ուշ կամ կանուխ կըրկին իր ստակը ձեռք ձգելու համար : Այս ցօրուար խօսքերն եղուարդի կրած ձախորդութիւնն իրեն մտացուցին . պառկեցաւ նա իր

դեղեցիկ սիրելու հւոյն հետ , որ զինքը սքրով և հաճոյիւք զուարթացուց , և վերջապէս անոր բաղկացը մէջ քնացաւ : Հետեւեալ օրն արթննալով տեսաւ որ տան հաղար ֆրանքէն բան մը չէ մտացեր : ասի իր ընդունած սիրոյն և զգուանացը փոխարէն թէ է և խիտ մեծ գուժար մ'էր , բայց սէրը անանի հաշիւներու չուղեր մանել :



ԳԼՈՒԽ ԻԱ.

ԲՈՒՒԼԹ (1)

Ատէլին Տիւֆրէանի մեկնելէն երկար ատեն վերջն ալ իր վշտաց ծանրութեան տակ ճընշուած մնաց . տակաւին իր սենեակին մէկ անկիւնը քաշուած նստած էր դրեթէ կիսամերկ , բանգի Տիւֆրէանի հօն եղած . ատենն ձեռքը անցած զգետն առած և կիսով հագած էր իր լիբայ տիրած շփոթութենէն , և անոր մեկնելէն վերջն ալ դեռ հագուած չէր :

Երբ առտու եղաւ , և ծառաներն սկսան տանը մէջ վեր ելնել վար իջնել , Ատէլին վերջապէս ելաւ շուտով հագուեցաւ , և զնայ աթուի մը վրայ նստաւ . ալ մտացաւ իր առաջադրութիւններն , իղծերը և ակնկալութիւն-

(1) Տեսակ մը թղթի խաղ :

ները, սկսաւ առուսայլը, բայց ալ չէր խոր-
հեր :

Կամաց մը եկան դուռը դարկին . իսկոյն
սթափեցաւ իր թմրութենէն, խեղճը գլուխը
բերաւ, և իր կրած չափքն զգալ սկսաւ : Ե-
լաւ որ դուռը բանայ . . . բայց պահ մը կե-
ցաւ դրանք առջին . . . յանկարծական խոր-
հուրդ մը զինքը արդիւնց . զիցաց որ եթէ ե-
կողը իր ամուսինն ըլլար, չէր կրնար երեսը նա-
յիլ, կարծելով որ իր ճակտին վրայ դժուած
ազաը պիտի դիտէ . . . Խեղճ Ատէլին, յան-
ցաւորը գու չես, և կը վախնաս ու կը դողաս
. . . Ի՞նչ հակադրութիւն է այս մեր ամեն որ
ընկերականութեան մէջ տեսած իրողութեան
հետ :

Վերջապէս դրսէն ձայն մ'եկաւ . ասի սպա-
սուհի մ'էր որ հարցուց իր տիրուհւոյն թէ
կրնայ ներս մտնել . Ատէլին սիրտ առաւ ու
բացաւ :

— Ներեցէք, տիկին, ըսաւ սպասուհին,
վախցայ որ հիւանդ էք . ժամանակը անցաւ,
և ոչ զիս կանչեցիք, ոչ ալ նախաճաշի իջար :

— Ժամանակը անցած է, Մարիամ . Գ. Եղ-
ուարդ եկաւ :

— Այո, տիկին, հիմա եկաւ, սենեակը
վայրկեան մը նստաւ, և վերջը դարձեալ դուրս
եկաւ . . . :

— Դուքս ելաւ, ըսիր :

— Այո, տիկին :

Ատէլին սկսաւ շունչ առնուլ, և իր խոս-

վութիւնը քիչ մ'անցաւ . որովհետեւ քանի մը
ժամ յառաջ անհամբերութեամբ գալուն սպա-
սող իր ամուսնոյն հոն դառնուած ըլլալուն վրայ
սկսաւ տարակուսիլ :

Մարիամ իր տիկնոջը երեսը կը նայէր . ակ-
սաւ որ աժգոյն է և վրսուած, սկսաւ հռա-
չել ու ցաւիլ անոր վրայ . իմացաւ որ իր ա-
մուսնոյն վարմունքը զանի այս աստիճան կը
վշտացընէ : Ծռաւաններն են որ իրենց տիրոջը
վարմունքը առաջին անգամ կը դիտեն . նորա
ամեն ինչ կը տեսնեն, ամեն ինչ գիտեն . ըս-
պասաւորի մը համար բնաւ դավութեան ար-
ժանի տէր մը չկայ, և ծռաւաններու համար ալ
հաւատարիմ ամուսին քիչ կը գտնուի :

— Տիկին, այս գիշեր հիւընդցա՞ք, ի՞նչ
եղաք, ըսաւ վերջապէս Մարիամ ցած ձայնով :

— Ոչ, ոչ . . . բան մը չեղայ, պատասխա-
նեց Ատէլին կարմիրով, և երեսը թաշկնակին
մէջ պահեց որ իր հառաչանքներն չի տեսը-
ունին :

— Տիկին, ըսաւ Մարիամ, ինչ^ու այդ աս-
տիճան կը վշտանաք . . . ո՞հ, Աստուած իմ
. . . ամուսինք բնդ հանրապէս անանկ են . . .
սաստիկ կիրք մ'է այս որ իրենց վրայ կը տի-
րէ . . . մէկը չի կրնար զիրենք արդիւնել . . .
բայց վերջապէս անանկ չեն մնար . . . և
դուք, տիկին, այնչափ բարձրաւ էք որ . . .

— Թող զիս, Մարիամ :

Սպասուհին մեկնելու վրայ էր . Ատէլին
կրկին կանչեց զանի :

— Մարիամ, ըստ, գիշերը հոս մարդեկաւ :

— Գիշերը . . . մարդ գայ հոս . . . ըստ պատուհին զարմացմամբ երեսը նայեցաւ , այս հարցումէն բան մը չի հասկընալուն համար :

— Այո , ըստ Ատէլին , գիշերը դրան զարնուիլը իմացա՞ր . . . անանկ ձայն մը ետկաւ . . . :

— Դժուար զարնուի . . . Պ. Եղուարդէն զատ հոս ո՞վ կրնայ գալ . բայց այն ալ չեկաւ . փառք Աստուծոյ , այս գիշեր ամենքս ալ հանգիստ քնացանք . սակայն զարմանալի չէ . երէկ չէ առջի գիշերուան ծառայութեանց վրայ տակաւին ամենքս ալ յոգնած էինք :

Ատէլին քիչ մը հանդարտելով սպասուհին ճամբեց . ապահով եղաւ որ իր անպատեհութիւնը գաղտնի մնացած է . վերջը ելաւ իր ազնկանք քով գնաց , գիրկը առաւ զանի և ջանաց անով մխիթարուիլ . ներքին ձայն մը ըստ իրեն որ ինքը յանցաւոր չէ . զգաց զայն և քիչ մը սիրտ առաւ : Գիտաւ որ լեւաթիւնը միայն կը մեղանչէ , և Ատելին Տիւֆրէանի նըկատմամբ ամենաստտիկ ատելութիւն մը ըզգացած էր . այս ատելութիւնը մշտնջենաւոր պիտի ըլլար . իրեն այնպէս կերեւէր որ Տիւֆրէանի նկատմամբ քանի որ ստոկում զգար այնքան իր յատուկ աչացը առջեւը նուազ յանցաւոր կը համարուէր :

Բայց և այնպէս տխուր և ցաւալի խորհրդածութիւն մը իր միաքը գրաւեց յիշելով

Տիւֆրէանի վերջին խօսքերն թէ՛ Եղուարդուրիչ մը կը սիրէ , և այս գիշեր ալ ուրիշի մը գրկաց մէջը անցուցեր է : Կը խորհէր որ տուն եկած և ղինքը տեսնել չէր ուզած , ուստի վճռեց որ ալ զինքը մտացեր է , և անհաւատարիմ ընթացք մը բռնած է . . . Խեղճ Ատէլին այս խորհրդով բուրբողին խռովեցաւ , և երջանկութեան յոյսը ստեղծեցաւ գնաց սըրտին մէջէն :

Իսկ Եղուարդ առջի օրուան և նոյն գիշերուան զուարճութենէն բուրբողին թմրած տիկին աը Զէբանի տնէն մեկնեցաւ իր տունը գալու համար , և ամօթալից զգացում մը , գաղտնի ապաշաւ մը արգիլեցին զանի իր կընոյջը քով երթալէ . մարդս երկար ատենէ է վեր ամեն դէշութիւն գործեէ և հասարակաց կարծեացը դիմադրելու վարժուելէ վերջը պարապ տեղը կը ջանայ անմեղադրելի երեւիլ եթէ մեղաւից գործ մը գործեց , հարկաւ ներքին աժգոհութիւն մը կը զգայ , և վերջապէս իր խղճին յանդիմանութեանցը կարժատնայ : Եղուարդ գեւա մտութեան ճամբուն մէջ նոր մտած ըլլալուն չէր կրնար առաջին յանցանք մը գործելէ ետքը յառաջ եկած ներքին աժգոհութիւնն լաւ մը զգալ : Իր ամուսինն ու զուակը երեօի վրայ ձգելով տուն չեկող և բուրբ ժամանակը խաղամուտութեամբ անցընելով բաւական մեծ դուժմար մը կրպնքընող անձի մը համար ո՞րչափ զգուշաւոր խորհրդածութեանց արժանի իրողութիւններ կը

դանուին . . . Եդուարդ բուրբովին այս քա-
սածնեբնուս հախառակը վարուեցաւ . քանզի
փոխանակ խելքը գլուխը ժողովելու և ազա-
դային մէջ կանոնաւոր բնիմացք մ'ունենալու ,
կատարելապէս թմբեցաւ և ինքզինքը բուրբո-
վին իր կրիցը յանձնեց , նման այն թշուառնե-
րուն որ աշխարհիս կատարածին վախովը ինք-
զինքնին կը խեղդեն :

Եդուարդ իր մխիթարութիւնը Տիւֆրէանի
քով գտնել կը յուսար . ուստի ելաւ անոր քով
գնաց , տեսաւ որ առանձին էր , և խորին կեր-
պով կը խորհրդածէր : Եդուարդ այս առա-
ջին անգամ անոր հետ հաշի բառերով խօսե-
ցաւ . իր տունը երեսէ ձգեցնէ ի վեր է անոր
հետ մնալով խիտ մեծ հաճութիւն մը զգա-
ցեր էր . քով դիտնալով որ իրենց նման երկու
սիրակցորդ բարեկամաց մէջէն մեծարանք քս-
ուած բանը վերնալու է . իր սկզբունքն ու
տեսակցութեան եղանակը բուրբովին յայտնեց
անոր , նստաւ աթոռի մը վրայ և Տիւֆրէանի
երեսը կը նայէր , որն որ կըստպատէր որ նախ
ինքը սկսի խօսիլ :

— Ահա տանիկ ես եկայ , սիրելի բարեկամս ,
դրեղ տունը գտնել կը յուսայի :

— Իրիկունը ելայ դացի . բայց տեսնելով
որ դուք չերեցաք , շատ սպասելիս վերջը
մեկնեցայ :

— ձնարիտ խիտ լաւ ըրիր , պարտապ տե-
ղը պիտի սպասէիր , վասն զի գիշերը տիկին
տը թէրանի տունը անցուցի . . . հասկըցաք
ըսածս . . . :

— Այո . . . խիտ լաւ . . . կը շնորհաու-
րեմ՝ զձեզ . խիտ երջանիկ էք . . . այդ կինը
զձեզ կը պաշտէ . . . :

— Այո . . . կը խենդենայ վրաս . . . մին-
չև անգամ այս առտու մեկնիլս չուզեց . . .
Հագիւ հազ օձիքս ձեռքէն բըցուցի :

— Ինչ կըսէք . . . տիկին տը թէրան ե-
ռանգուն սիրահար մ'է . . . նա իմաստուն
գլխոյ և բարձր երեւակալութեան տէր կին
մ'է . իր սիրած անձին քովէն բնաւ բաժնուիլ
չուզեր :

— Ո՞րչափ աղէկ կը խօսիս . . . ասանկ կի-
ներն ալ կը սիրուին :

— Բայց եթէ ձեր կինը իմանայ . . . :

— Բէհ . . . իմ կինս անհոգ է . . . իր սի-
րելու եղանակը տիկին տը թէրանի սիրելու ե-
ղանակին չի նմանիր բնաւ :

— Ձեզի կրնամ խրատ մը տալ . . . :

— Խօսէ . . . բայց դու և Քլարա երբով մի
խօսիր . թողունք մեծարանքը , սիրելիդ իմ
Տիւֆրէան :

— Հաճութեամբ կընդունիմ . . .

— Կըսէիր ուրեմն որ . . .

— Եթէ ինձ մտիկ կընես , աւելի ազատ
ըլլալու համար կինդ դեզի տունդ զրկելու ես :

— Կեցցես , որչափ խելացի ես եղեր . . .

Ստուգիւ նա ալ ամեն օր գաշտերու , մար-
դադետիմներու և դաւարիներու վրայ կը խօ-
սի ինձ . . . զրկեմ որ երթայ հոն արածէ , ես
ալ փարիղ կենամ :

— Բայց Տէսֆլէօրէ սասկեփն հետ խաղա-
ցած թուղթիդ վրայ բան մը չի խօսեցար .
ի՞նչպէս բերի, շահեցա՞ր :

— Ոչ, ընդհակառակն անուր դժբաղ-
դութեամբ մը խաղացի, և բոլորովին կոր-
սընցուցի . . . միտքս ալ բերի որ հազար ոսկի
պարտք ունիմ իրեն, և այս առաւու իրեն վը-
ճարել խոստացած եմ :

— Խաղի պարտքերը նուիրական են, պէտք
է վճարել :

— Ես ալ անանկ պիտի ընեմ՝ Բալէ-Բուա-
յալ թիւ 9 ժամագիր եղած ենք . արդեօք
հոն կը բնակի :

— Ոհ, սրչափ ազէտ ես եղեր, սիրելիդ
իմ Եդուարդ, չե՞ս գիտեր որ թիւ 9 տունը
բա՛նջ խաղալու յատկացած տեղ մ'է :

— Բսել է որ այդ սասկեաբ հոգ կերթայ :

— Ինչո՞ւ չի պիտի երթայ . դեռ Էնչ մար-
դիկ պիտի տեսնես հոն . շատ աղնուականներ
որոնք անչա՛ն մարդոց ստակը շահելու համար
հոն կուգան, և պատուաւոր չինականներ ու-
րոնք ասպետի և կամ դերակամի մը հետ
խաղայու փափաքով հոն կը գտնեն . բայց թէ
շահին և թէ կորսնցքնեն, բնաւ ձայն չեն հա-
ներ : Կայահօյովեմ զքեզ, որ ամեն բնկերակա-
նութեան մէջ խաղացող կրնայ հոն խոհեմու-
թեան դատաւուր . հոն ամեն մարդ իր ըս-
տակը կը կորսնցընէ առանց բողբոջելու, և միայն
մտքէն կը բարկանայ . վերջնապէս խիստ կանո-
նաւոր տեղ մ'է :

— ձշմարտը ըսելով հետաքրքիր եղայ
այդ տեղը երթալու . . . ես անանկ կը կար-
ձէի որ մեզի նման գործի տէր մարդիկ ա-
տանկ տեղեր չեն երթար . . . ինձ այնպէս
բւսած էին որ այսպիսի տեղուանք երթալը մեր
պատուոյն կը դուչի :

— Խարեր են զքեզ . և փորձն ալ այս է որ
հոն շատ վաճառականներ, սեղանաորոնք,
գործոց տէր անձինք և անոնց նման պատուա-
ւոր մարդիկ պիտի տեսնես . . . հոն խիստ սի-
բուն միութիւն մը կայ . . . այդ տեղը զինուո-
րականներու, օտարականներու և յանձանօթս
ճանապարհորդող մեծամեծներու ժամադրու-
թեան տեղի է . ոստիկանութիւնն ալ կը հսկէ
որ հոն գող և աւազակ մարդիկ չի մտնեն .
միայն թիւ 113 ն է ուր սպասաւորք, գործա-
ւորք և գործարաններու ծառայք կը մտնեն,
վասն զի պէտք է որ այդ մարդիկն ալ զբօս-
նուն. սակայն թիւ 9 պատուաւոր անձանց
յատկացած է :

— Բսել է որ ես ալ կրնամ համարձակ հոն
երթալ :

— Այո, և Տէսֆլէօրէ սասկեան ալ հոն կըր-
նաս գտնել : Առտուները կերթայ հոն և մինչև
ճաշի ատեն կը կենայ . . . շատ անգամ ճաշի
համար ալ դուրս չելնէր : Կանայ սեղանին առ-
ջը նստած թուղթ կը խաղայ : Տասր տարի կայ
որ ստակ շահելու համար խաղացողներ դըտ-
նել կը ջանայ, և կապահօյէ որ շատ քիչ բա-
նով կը կտի . և երբ շահի, իր բարեկամացը կի-

մացընէ : Եթէ մարդ անգամ մը շահելու սկսի , ճշմարիտը բերով շատ դոււարճութիւն և հաճոյք կը զգայ . . . ալ հարկ չունենար բանի մը վրայ անհանդիստ ըլլալու . . . լաւ կը զբօսնու , և խիստ դուարթ կերպիւ կապրի աշխարհիս վրայ :

— Կըխորհի՞ս , որ այդ բաժնի կարելի ըլլայ :

— Ստուգիւ . . . շատ բաներ կան որ օտարութիւն կերևին . . . բայց օրինակներ ունինք . . . տես , քան մարդէն աւելի կը ճանչնամ որ այսօր մեծամեծ ծախսեր կընեն , նորաձևութեանց կը հետևին , ամեն ուղածնին կընեն . . . և ասոնց ամենքն ալ խաղի շահով կընեն :

— Ձիս կը հիացընես . . . այսպիսի չէի դիտեր . . . որովհետև ասի միշտ դիպուած մ'է :

— Բայց , սիրելիս , դիպուած բաժնի այն մարդուն համար չէ որ ծանրութեամբ դատել , ու բազմա՞ շրջանք և հաւանակա՞նութիւնը հաշուել կուզէ . . . մնաց որ իմ բաժնի դրեղ խաղարու ստիպելու համար չէ . . . որովհետև դու միշտ կը կորսնցընես , աւելի աղէկ է որ յարմար առթի սպասես :

— Խիստ լաւ . բայց դործե՞րը . . . :

— Հիմա դադարում կայ , սպասել պէտք է :

— Աղէկ , ԱՏ , սիրելիդ իմ Տիւֆրէնս , իցէ թէ ապահով խաղացող մը դ'տեսի՞ր . . . գիտես , որչափ աղէկ պիտի ըլլար , քանի որ կինս ալ դիւղը պիտի զրկեմ :

— Օն ուրեմն , հաւատա ինձ . . . ալ ասոր

վրայ չի խորհի՞ր . . . ասոնք յիմարութիւն և եղջերուաբաղ են . . . կը թողում զքեզ . . . :

— Այս երեկոյ տեսնուի՞նք :

— Ո՛ւր ,

— Տիկին տը փէրանի տունը :

Տիւֆրէնս ու Եդուարդ իրարմէ գատուեցան , Տիւֆրէնս իր խօսքերուն Եդուարդի տըկար մտքին վրայ ըրած ազդեցութեան , և Եդուարդ ալ խաղի , խաղացողներու խորհրդով , և այս մասին ամենայնապէս առաջադրութիւններ ընելով :

Այսպիսի տարօրինակ մտածմունքներով Եդուարդ ուղղակի ասպետին ցուցցած տեղը գնաց . ներս մտաւ , և շատ մը սրահներէ անցնելէ ետքը՝ վերջնապէս սրահ մը գնաց ուր խաղամայներն սեղանի մը բոլորտիքը շարուած էին : Հոն չիտիւթութիւն մ'եկաւ վրան , բայց ջանաց ծածկել և խաղալու վարժուած մարդու մը կերպարանք առնուլ : Տեսֆէօրէ ասպետը զինքը տեսածին պէս իսկոյն ոտքի վըրայ ելաւ , և իր հաղար սկուտը առնելու յուսով վճռեց քովը գնաց : Եդուարդ անմիջապէս վճարեց , որուն վրայ ասպետը սաստիկ ուրախացած հրուիրեց զԵդուարդ որ վայրկեան մը քովը նստի : Եդուարդ վարանեցաւ . . . անհանգստութեամբ չորս կողմը կը նայէր , վախնալով որ ըլլայ թէ ծանօթ անձինք տեսնէ : Յիրաւի տեսաւ շատեր որոնք Տիւֆրէնսի բարեկամներն էին , և ուրիշներ ալ որոնք իր երեկոյթին եկած էին : Բայց ասոնց ամենքն

ալ անանկ զբաղած էին սեղանին բարբոտիքը որ ամենեւին իրեն ուշադրութիւն չըրին . աս-
պետք թեւէն բռնեց . տարաւ սեղանին թով,
և զանի հոն նստեցուց , և թուղթը առնելով
սկսաւ իր խաղը շարունակել :

Եդուարդ առաջին անգամ իր դէմ պա-
տահածներն զարմացմամբ կը դիտէր և ազնու-
թեամբ մտիկ կընէր . որովհետեւ իր ամուսնու-
թեանէն առաջ ամենեւին խաղի տուն երթալ
ուզած չէր , դիտնալով որ իր տկարաբարոյու-
թեանը վրայ չի կրնար վտտահել : Մարդիկ երբ
հաւատարիք ըլլան որ բնաւ փորձութեան մէջ չի
պիտի իյնան , և երբ խաղին խեղճի մէկու
մը ազգելիք սոսկումը զգան , այն ատեն միայն
կրնան չարբուուն ընկերութեանը մէջ մտնել Որ-
չափ ընդարձակ տեղ մ'է անի այս մահառիթ-
մի կրքին արդիւնքը նկատելու և ուսանելու հա-
մար : Խորհրդածութեանց արդիւնքը ավտուր
է , բայց օգտակար գաս մը կուտայ , և երի-
տասարդ մը միայն ասանկ գէշ տեղուանք
կրնայ այս մտութեան ուղղութիւն իթէ փոխա-
նակ հոն գտնուողներուն գէշ շաւղին հետե-
ւելու , իր բարբոտիքը պատահածներն պաղ
արեամբ աչքէ անցընէ :

Ինչ յիմարութիւն չտիրեր արդեօք այդ
թշուաւանիւրուն վրայ որոնք այդ սեղանը կը
ըջապատեն , և հոն ոսկին , արծաթը և գան-
ձայներն խաղացողներուն առջին սիրուած կը
տեսնեն : Բնաւ չեն գիտեր որ անոնք ամեն
ալ նոցա մոլորութեան և խեղճութեան պատ-

ճառ պիտի ըլլան . կրանն մտքերուն . այս
անձը կը շահի , միւսը գրպանը պարպուած
դուրս կենէ , միթէ չենք կրնար մենք ալ ա-
նոնց նման շահիլ . . Լաւ , բայց այս կերպով
շահուած ստակը ո՞ր ընտանիքը կրցեր է հա-
րըստացընել , ո՞ր կինը ապրեցընել , ո՞ր աղջի-
կը օժտել , ո՞ր չբաւարը միսթարել : Ոչ , խա-
ղացողներուն սիրտը ցամաք և խիտ կըլլայ ,
և հոգիներն ալ ժլատ ու իրենց վրայ տիրած
մոլութեամբը ապականնալ : Եթէ այսոր շահե-
ցան , զաղը կրկին կը խաղան , մինչև որ ժա-
մանակ մը կուգայ որ այլ եւս իրենց այս մո-
լութիւնը գործադրելու համար բնաւ միջոց մը
չեն կրնար ունենալ : Եթէ գրպաններն ոսկւով
լեցուն հոն մտնեն , մի գիտնաք որ իրենց տա-
նը մէջ առատածեուն կըլլան : Այսպիսեաց կի-
ները գէշ հաղուած կըլլան , զաւակներն ամեն
բանէ զուրկ կը գտնուի , պարտատէրներն
գուռերն կը պաշարեն , բայց անոնք ստակ
տարու , պարտքերնին վճարելու համար բան
մը չեն ունենար . կը ծարրեն այն անձանց ըս-
պառնալիքը որոնցմէ իրենց թոշակն կընդու-
նին , և բնութեան ձայնին խուլ կըլլան : Իս-
կոյն յաջող բաղդիւ շահածին կը կորսնցընեն .
ան ատեն վաճ անոնց որ իրենց ձեռքը կը նա-
յին , վասն զի բոլոր բարկութիւններն անոնց
վրայ կը թափեն , զոր չեն համարձակիր օտար-
ներու վրայ գործածել : Ի ներքուստ կը բար-
կանան , կը կատղին , և շատ անգամ կատա-
ղութեան վերջին հետեւանացն ալ կը մատ-

նուիւն : Կրկին ստակ ճարելու համար ամեն վատութիւն կընեն . իրենց զաւակաց հին ըզդեւաններն անգամ կը ծախեն , մէկ օրուան շահածնին մէկ վայրկեանի մէջ կը վատնեն : Անատեն չորս կողմերնին միմիկ հայտնածքեր կարձակին , յուսահատութիւնը վրանին կը տիրէ , զայրապամբ կը նային այն ստակին վրայ զոր կորսնցուցին և ետ առնեն անհնարին բանէ , և անոնց ստակը առնողներն ալ ցուրտ անտարբերութեամբ մը կը դիտեն անոնց վիշտը : Այն ատեն մեղադիրց փափագներ , ծայրայեղ վատութիւններ իրենց գրգռեալ երեւակայութիւնը կը տանջեն . դրացւոյն ստակին կը ցանկան , և ձեռքերնին անոր կը մտեցընեն . . . և շատ անգամ ալ զիրենք մոլորեցընող մահաւորիք կը քէն մըուած , մեղքերուն ամենամանրը կը գործեն . . . Ասոր բաղմութիւն օրինակները տեսնուած են , խաղամոլութիւնը երեք արդիւնք կունենայ , և անհրաժեշտ են . այսինքն՝ դմարդ անձնասպանութեան , հիւանդանոց կամ շրթայակապ բանտարկութեան անաջնորդել :

Եղուարդ բնառ այս խորհրդածութիւնները չէր ընէր (զժբազդբաբար իրեն համար) : Իհաս ուշադրութեամբ խաղը դիտելէն և անոր ինչպէս երթալն հասկընալէն վերջը սկսաւ խաղալ և բազդբ յաջողելով քիչ ժամանակի մէջ տասը հազար ֆրանքէն աւելի շահեցաւ : Տէսֆիլէօրէ ասպետը որ եղուարդի այս մեծ յաջողութիւնը տեսնելով չէր կրնար իր զար-

մանքը բռնել , ցած ձայնով խրատեց զեղուարդ որ այս խաղը շարունակէ : Շատ ուրախ էր տեսնելով որ եղուարդ կը շահէ , և կը խորհէր որ կրնայ զանի կրկին տիկին տը ժեբանի տունը գտնել . վասն զի ինքը նոյն օրը միշտ կորսնցուցած ըլլալով եղուարդի շահիք իրեն համար մեծ բազդբ մը կը համարէր :

Իսկ եղուարդ իր շահիք երբէք չէր գիտեր , միայն գիշերը մինչև լոյս տիկին տը ժեբանի հետ ժամանակ անցուցած ըլլալուն ըստամբօի անհանգստութիւն մը իմանալուն համար երթալ հանգչելու պէտքը կըզգար : Ուստի ելաւ սեղանին առջեւէն խոտտանալով ասպետին որ իրիկունը կուգայ զինքը կը գբտնէ :

Նոյն միջոցին խաղցուած խաղը Տէսֆիլէօրէի յուսացածին հակառակ դարձեալ եղուարդի մեծ շահ մը ձգեց , որուն վրայ եղուարդ խիտ ցաւեցաւ սեղանին առջեւէն ելնելուն համար , բայց ինքնիրեն խոտտացաւ որ երկոյին այս կորուստը ձեռք անցընէ : Վերջը շահած ստակը դրպանը լեցնելով ուրախութեամբ ելաւ տուն գնաց :

Ճամբան դացած ատեն կը խորհէր իր կընտրելու վրայ , զոր առջի օրուքնէ ի վեր տեսած չըլլալուն անշուշտ խիտ անհանգիտ եղած և խիտ բարկացած ըլլալու էր իրեն դէմ . կը մըտածէր թէ ինչպէս պիտի խօսի հետը : Սակայն որոշեց որ երթայ անոր սենեակը , և ըս-

տակը իր սենեկին մէջ տանել ու պահելն վերջը, ուր տեսաւ իր սպասաւորն որ աթոռի մը վրայ կը քնանար, ելաւ կնիկանը սենեակը :

Եդուարդ ժամանակէ մ'ի վեր է իր ամուսնոյն նկատմամբ ունեցած անտարբերութեան չի նայելով խիստ ցաւեցաւ, երբ տեսաւ որ դանի չի տեսնելէն ի վեր բոլորովին դեղնեւր, փոխուեր ու նիհարցեւր է . իր կարմիր և ուռեցած աչքերն դեռ արտասուօք լի են, և իր դէմքին վրայ խորին վշտի մը նշաններն կրեւին : Իսկոյն խմացաւ որ իր կնոջը այս աստիճան փոխուելուն պատճառն իր երկար բացակայութիւնն էր . մտաեցաւ անոր քով, և սկսաւ համեղ խօսքերով անոր սիրտն առնելու ջանալ :

— Երէկ զձեզ շատ սպասցուցի . . . անշուշտ անհանգիստ եղաք ինձ համար . . . բայց ընկերութեան մը մէջ գտնուելով շատ դժուարաւ վար դրին զիս թուղթ խաղալու համար . . . և որովհետեւ չափեցայ, չուզեցի խնայն խաղէն զատուիլ . . . :

— Չեր դորժին տէրը դուք էք, պարսն, բտաւ Ատէլին առանց աչքը ամուսնոյն դարձրնելու, ինձի համար նեղուելիիդ ալ ձեզի պակասութիւն մ'է :

Եդուարդ չէր յուսար որ իր կինը ասանկ թեթեւ պատասխան մը տար, այլ յանդիմանութիւն, դանդաւատ և արտասուք կըստպատէր անկէ . իսկ Ատէլին ամենեւին ձայն չի հանեց, այլ լռութեամբ կը հաստատէր : Իր

այս վարմունքը Եդուարդի սրտին վրայ մեծ ապաւորութիւն բրտաւ, անանկ որ թիչ մնաց կնիկանը ոտքը կնիկայով ներուժ պիտի խնդրէր իր բրած պակասութեանցը համար . . . սակայն յանկարծ աիկին տը ժերանի պատկերն միտքն եկաւ . . . Իրիտեց իր բոլոր զգացումները, մերժեց իր դիտաւորութիւնը : ուտի դարձաւ իր նոր անաշխարհութեանցը :

— Տիկին, դուք դիւզը երթալու փափագ յայտնած էք ինձ . ահաւասիկ ամառը եկաւ, պէտք է երթալ : Կը խորհիմ մտնաւանդ որ աօթի մեր որդւոյն համար ալ աղէկ պիտի ըլլայ : Ուստի հիմա անմիջապէս պատրաստուելիդ կը փափաքիմ . . . Ես այս անգամ չեմ կրնար ձեզ ընկերանալ . վասն զի դորժոցս պատճառաւ պէտք է որ փարիզ մնամ, սակայն կը յուսամ որ շատ անգամ զձեզ տեսնելու կուգամ :

— Խիստ լաւ, պարսն, այս վայրկեանէն կըսկըսիմ դեզ երթալու և հոն բնակելու համար պէտք եղածներն պատրաստել, և հոն կը կենամ, մինչև որ ձեզմէ փարիզ դառնալու հրամանն առնուիմ :

— Որչափ աղէկ եղաւ, բտաւ Եդուարդին բնիքին . . . ոհ, կինս որչափ սիրուն է . . . աս ինչ հպատակութիւն . . . ինչ հնազանդութիւն . . . ճշմարիտ տարօրինակ բան . . . :

Բռնեց Ատէլինի ձեռքը և մեղմիւ իրեն ձեռքերուն մէջ սեղմեց, և առանց այն սիրելի ձեռքին դողալուն ուշադրութիւն ընելու համարուրեց զայն, և զբօսանաց ժամուն զար-

նուերուն սպասող գպրոցականի մը արագուսթեան բեռամբ մեկնեցաւ :

— Ի՞մ երթալը կուզէ, ըսաւ Ատէլին մի-նակ մնացած ատեն, ի՞մ հոս գտնուելը իրեն մեծ արդեւք մ'է . . . կերթամ . . . այսուհետեւ ինչո՞ւս պէտք ուր բնակիր, քանի որ բընաւ տեղ մը երջանկութիւն չի պիտի գտնեմ : Ամուսնոյս սէրը կորսուեցաւ, պատիւս ու հանգրստութիւնս ոչնչացաւ, երթեմ ծածկեմ եւրեօս, ես այսուհետեւ միայն իմ զուակիս համար ապրիլ կուգեմ, ի՞մ կեանքս բոլորովին անոր պիտի նուիրեմ . . . Խեղճ էրմանս, ի՞նչ պիտի ըլլայիր արդեօք, եթէ ես մեռնեի . . . :

Ատէլին գրկեց իր աղջկը, և յիշելով թէ ինքք մայր է, ջանաց իր յուսահատութիւնը փոքր ինչ փառատել, Վիլնէօվ-Մէն-ժօրէ երթալու պատրաստութիւններն սկսաւ տեսնել, ուզեց որ մայրն ալ միատեղ տանի . բայց նա գիւղէն չէր ակտիւրեք փարեց վարժուած բլլալուն ու իր ծանօթներն ալ հոն ըլլալուն համար մանաւանդ որ մերերն ալ միշտ անձնահաճ կըլլան, դիտնալով որ իրենք քիչ մը զընուարճութիւն ունին վայելելու, և չեն ուղեր բնաւ այդ զընարճութիւնն զոհել :

Ատէլին ութ օրուան մէջ կըրցաւ իր և աղջկանը համար գիւղի բնակութեան պատրաստութիւններն աւարտել . այնքան միջոցի մէջ հաղիւ իր ամուսնոյն երեք երկու երեք անգամ տեսաւ : Մեկնելէն առաջ վերջին ֆանք մ'ալ ըրաւ, չէ թէ իբ ամուսնոյն սէրը վերա-

գարձնելու համար, վասն զի քաջ գիտեր որ այս զգացումը երբէք չի բռնաբարուիր, այլ Տիւֆրէսնի որ աստիճան վատաբարոյ ըլլալն իմացնելու համար : Բայց եղուարդ ամենեւին մտիկ չըրաւ, և ամենեւին չի հաւատաց երբ Ատէլին ըսաւ թէ այն թշուառական իրեն կորստեանը կաշխատի : Ուստի ճարը հասնելով միտքը գրաւ որ երթայ տիկին Տօլպանի աղաչէ որ ուրիշ նամակ մ'ալ եղուարդին գրէ, և անոր մէջ իր բարեկամը կարծած անձին բարքն ու վարքը մանրամասնաբար նկարագրէ :

Ատէլին եղուարդին պատուոյն ու համարմանը համար այս վերջին փորձն ալ փորձելու չեց, որ չէ թէ միայն իր երջանկութեանը այլ իր ամուսնոյն ալ ապագայ բարօրութեան պատճառ պիտի ըլլար : Ուստի գնաց տիկին Տօլպանի տունը և սպասուհւոյն իմացուց որ տիկինը տեսնել կուզէ :

— Աստուած ձեզի շատ օրեր տայ, տիկին, տիկին Տօլպան երեք օր եղաւ որ մեռաւ . . .

— Ի՞նչ կըտէք, մեռաւ . . . դեռ ինն օր չկայ ինձի նամակ գրելը . . .

— Էհ, մարդաս զոյն ի՞նչ կայ . . . սաստիկ տեսիլ մը, վերջն ալ խիթէ մը բռնուեցաւ . . . վերջապէս գըլուխ չաղատեց, մեռաւ . . .

— Ամեն բան կորսուեցաւ, ըսաւ Ատէլին տնէն դուրս ելնելով : Եղուարդը բարօրեւելաւ ալ յոյս չկայ . . . Տիւֆրէսն յաղթեց . . . ամուսնոյս վախճանը շատ գէշ պիտի ըլլայ . . .

խեղճ Ատէլին այս դոյժը առնելով կրկին յուսահատած անմիջապէս մեկնեցաւ. փարիզէն, դնաց վիլնէօֆ-Սէն-ժորժ, և կառքին մէջ իր աղջիկովը առանձին, նախընթաց տարւոյ և հիմակուսն ճամբորդութեան մէջ եղած տարբերութիւնը յիշելով և խորհելով թէ ինչ արագութեամբ անցաւ իր այն երջանկութիւնն, չի կրցաւ իր արտատունքը բռնել, ու դառնաւ պէս բացաւ .

ԳԼՈՒԽ ԻԲ.

ԴԱՒԱՃԱՆԲ. — ԽԱՂԱՄՈՒԲ. — ԽԱՐԵԲԱՅԲ .

Եղուարդ իր կնոջը ներկայութենէն արձակուելով, որուն տեսքը աւելի ծանր է իր խղճին համար, ինքզինքն բուրբովին Տիւֆրէսնի խրատներուն, տիկին տը ժերանի սիրոյն և խաղամուրթեան տուաւ :

Տիւֆրէսն ծանած կալուածներուն ստակին կէսը քովը պահած էր : իր նպատակը այն էր որ Եղուարդին ստակին մէկ մասը իրեն սեպհականէ, որուն քսակէն ժամանակէ մ'ի վեր է անդադար ստակ կը քաշէր, ըսելով թէ դորձերն ազէկ չեն երթար : իր ամեն մնուածիւններովը մեկտեղ սաստիկ խաղամուրթ ալ էր : Ուստի իր քովը պահած ստակը խիղոյն կոր-

նցուց, ինչպէս որ տիկին Տոլլյանի հարստութիւնն ալ ասանկով քիչ ժամանակի մէջ կորնցուցած էր :

Եղուարդ ցրեկները խաղամոններու հետ և դիչերներն ալ տիկին տը ժերանի տունը կանցընէր, և հոն ալ խաղով կըրաղէր : Արտաքուստ պատուաւոր, խի ի'ներքուստ վատաբարոյ անձինք իրիկունները զօրապետի այրւոյն տունը կուգային, Եղուարդն ու անոր նման մի քանի սպուշներ հոն գտնելու յուսով, զորս դաւաճանք իրարմէ կը քաշեն և սիրահար կանայք մէկմէկու ձեռքէ կըյափշտակեն :

Բայց տիկին տը ժերան իր սիրահարն աչքին առջև էն չէր կորսնցընէր. չէր ուզէր որ իր գերին քովէն դատուի, ասոր համար ինչ որ պէտք էր կընէր, ամեն խորամանկութիւն, ամեն միջոց կը գործածէր զԵղուարդ թըմբեցնելու և կուրացնելու համար . Եղուարդ ալ ամեն զոհոյրութիւն կընէր իր սիրուհւոյն փափաքներն գոհ ընելու համար :

Տիկին տը ժերան խիտ աղէկ կըղմայեցընէր իր սիրահարներն. խաղ, ներկայացում, հացկերայիթ, շրջագայութիւն, զարդարանք, աղամանդեայ զարդեր, ընթրիք, զդուանք, խանդաղապանք, և այլ այսպիսիք կատարեալ էին իր քով . . . և այս ամեն բանով էր որ ինքզինքը հաւատարիմ կը ցուցընէր : Սակայն սա ալ պէտք է խստովանիլ որ այսքան զուարճութեանց մէջ Եղուարդ վայրկեան մը

ժամանակ չէր կրնար գտնել տիկին տը ժէրանի սէրը վայելելու, մինչև անգամ յողջութիւն առնելու ալ ժամանակ չէր ունենար. և շատ քիչ կը քնանար:

Ժամանակ մը բաղդը յաջողէին և բաւական ստակ շահելէն վերջը՝ հուսով ուրեմն կորսնցնելու սկսելով բաւական մեծ գումարներ վատնեց, և դարձեալ կը շարունակէր: Յայտնի և անհրաժեշտ ճշմարտութիւն մ'է որ խաղամոլներուն շահած ստակը միշտ այս կերպով պիտի վատնուի. ուստի սեղանաւորք երբ կը տեսնեն որ խաղամոլ մը գրպանը ոսկեով լեցուն խաղի սեղանէն կը մեկնի, Պը ժպտին, քաջ գիտնալով որ խեղճը հետեւեալ օրը իր շահածին կրկինը պիտի կորսնցընէ:

Եղուարդ քիչ մը ատեն իր խաղը շարունակելէն և մէկ ժամու մէջ քրան հազար ֆրանգ կորսնցընելէն վերջը, զոր Տիւֆէնն իր կնկանը մեկնելէն առաջ իրեն յանձնած էր, տխուր և յուսահատ ելաւ տուն գնաց. յանիրաւի յանդիմանեց իր ծառաները. բայց աօսի պէտք էր ընել, որ իր բարկութեան մէկ մասը դոնէ սասնկով անցընէր: Մտաւ իր սենեակը ուր դատաւ իր դորձակատարն որ դրասեղանին վրայ կը քնանար, խտտիւ արթնցուց զոյն:

— Ի՞նչ կը քնանաս . . . ստանկ գործակատարութիւն կրլայ:

Երկուստարդն իսկոյն արթնցաւ, թեւերը տարածեց, աչքերը շփեց, տեսաւ իր տէրը

որ բարկութեամբ սենեակին մէջ կը ճեմէր:

— Իս նայէ, պարոն, իմացա՞ր ըսածս, ոյդ ի՞նչ ծաւրութիւն է, ինչու գործի չես գացեր . . .

— Բայց, պարոն, ո՞ր է գործ . . .

— Ինչու դաւառնե՞րք շրջաբերական չես գրեր:

— Արդէն շատ շրջաբերականներ գրած եմ, բայց դեռ պատասխան ընդունած չեմ:

— Ի՞նչ ապուշ մարդ ես . . . գործ մը տեսելու ճամբան չես գիտեր . . . սա ծախուտունն ի՞նչ բրիր:

— Պարոն, երեք անգամ հոս մարդ եկաւ ձեզմէ տեղեկութիւն առնելու համար, բայց դուք հոս չէիք:

— Պէտք էր որ դու իմ կողմանէ պէտք եղածը խօսէիր:

— Ես ի՞նչ գիտնամ, ի՞նչ խօսելու է:

— Հապա օտ արժեք ուղիք՞ էր, զոր գնել կուզէին:

— Երկու անգամ զձեզ ուղեր են, դուք չէք գացեր:

— Այդ մարդիկը զիս իրենց սպասուօրը կարծեցին,

— Ոչ, բայց կըսեն թէ պէտք է ճիշդ ըլլալ:

— Լուէ, ապուշ, անգամ, քեզի պէս ծոյլ գործակատար պէտք չէ ինձի . . . շուտ բրէ գնա:

— Նախ ամսականներս վճարեցէք, պարոն

— Ամսականներդ . . . քննադուրդ համար ամսական կը պահանջես :

— Պարոն, գուր գործ չունիք, ևս ինչ բնեմ . . . եթէ զիս չէք ուզեր, առնելիք տուէք, և . . . :

— Կը վճարեմ, ժամանակ տուր . . . :

Եղուարդ աղէկ գիտեր որ իր դործակատարին ամսականները վճարելու ստակ չկայ, բացառ գործը, չորս կողմը նայեցաւ ու բան մը չի գտաւ : Միտըը եկաւ որ Տիւֆրէնի քովը դեռ ստակ ունի. ուզեց զանի տեսնել և ստիպել որ ֆնացած կալուածներն ալ ծախէ ինչ գինով որ ըլլայ, վասն զի անհրաժեշտ կերպիւ ստակ պէտք էր իրեն : Ինքը խաղէն սաստիկ յոգնած ու թմրած ըլլալուն չուզեց դուրս ելնել, որոշեց որ ծառայ մը զրկէ, երթալ զՏիւֆրէն կանչելու համար . զանգակը զարկաւ, բայց պատասխան տուող չկար . Առէլիւնի տնէն մեկնելէն ի վեր ծառաները իրենց տիրոջը երեսը տեսած չէին. Եղուարդ շատ գիշեր տուն եկած չէր, և ծառայներն ալ ամենեւին վրան չի կասկածելով ժամանակին զբօսանքով կանգընէին : Միայն Մարիամ որ պատուաւոր սպասուհի մ'էր, Առէլիւնի երթալէն ի վեր տնէն մեկնեց էր :

Եղուարդ սենեակէն դուրս ելաւ, տունը աչքէ անցուց . տեսաւ որ խոհարանը բան մը չկայ, բայց ներքնասան դուռը բաց է . իջաւ վար և տեսաւ որ դռնապանը նստեր խոհարարուհւոյն հետ գինի կը խմէ. ծառաներն

ապշեցան իրենց տէրը տեսնելով . Եղուարդ սկսաւ զանոնք ալ յանդիմանել, նախատել . բռնեց դռնապանին ականջէն, և իր խոհարարուհւոյն ալ ստքի հարուած մը տուաւ :

— Պարոն, թոյժովեց դռնապանը կէտ մը գինովցած, շատոնց է որ հոս հաց չուտնուրդ համար եկանք նայեցանք որ գինին թթուած չըլլայ :

Եղուարդ դամէնքն ալ աչքին դէմէն վրաքնաց . Երաւ ներքնատունէն, մտաւ առաջին յարկը, և հոն իր կնկանը զարդարուելու սենեակէն ձայն մը լսեց . յանկարծ հոն մտաւ և տեսաւ որ իր ծառաներէն մին դռնապանուհւոյն հետ . . . : վասն զի այս կնիք իր ամուսնոյն գինի սերածին չափ սէր կը սիրէր :

— վա՛յ անզգամ, պոռաց Եղուարդ, այս ինչ տուն է . . . այս ինչ անտեղութիւններ կըլլան . չարադործներ, առ ինչ ապուր է կերածնիդ, հիմայ ամէնքնիդ ալ դուրս պիտի ելնէք :

— Կամքը ձերն է, պարոն, պատասխանեց ծառան անխառն և իր հաղուստները շրտկելով, ինչպէս նաև դռնապանուհւոյն վրան գլուխը ծածկելով . . . հիմայ տուէք ամսականնիս, վայրկեան մը չենք կենար :

Եղուարդ բարկութեամբ դուրս ելաւ ու իր սենեակը գնաց, քանի որ կնիք գիւղ դասցեր էր, իր ծառայներուն ստակ մը տուած չէր, վասն զի խաղամուրթներէն ստակ աւելցուցած չունէր, և հիմայ ալ ստիպուած էր

իր տունը անանկ ծառաներ պահելու որոնք
իրեն բոլոր ունեցածը կը կողոպտէին, կը դող-
նային, և տանը մէջ ամեն բան տակն ու վրայ
կընէին: Բայց խորհելով որ Տիւֆրէան իրեն
ստակ կը ճարէ և զինքը այս շրթութեանէն
կազատէ, այն ինչ պատրաստուած էր երթալ
զանի դասնելու, և ահա Տիւֆրէան յուսահատ
գէմքով մը սենեակէն ներս մտաւ:

— Ո՛հ, խիտ յարմար ժամանակ եկաք,
պօռաց Եղուարդ, ես ալ ձեզի պիտի գայի,
սիրելիս. ինձի ստակ պէտք է, և այսօր պէտք
է:

— Շատ դժուար բան է ուզածնիդ, պա-
տասխանեց Տիւֆրէան նուազեալ ձայնով մը:

— Ինչու . . . կալուածներն ինչ բրէք . . .

— Ձեզի ստակի դժբաղդութիւն մը իմա-
ցընելու կուգամ. ես ձեր գործը մէկուն յանձ-
ներ էի . . .

— Վե՛րջը . . .

— Ա՛ն ալ ամենքը ծախեր, ու ստակն ա-
ռեր գացեր է . . .

— Գացեր է . . .

— Այո . . . աներեւոյթ է եղեր . . . և
զինքը գտնելն կամ իր վրայօք լուր մը առնե-
լըն ալ անկարելի է . . .

Եղուարդ այս խօսքերը լսելով. յուսահա-
տութեամբ աթոռի մը վրայ ինկաւ մնաց:

— Ո՛հ, կործանեցայ . . . ամեն բան կոր-
սընցուցի . . .

— Կործանեցա՞ք . . . այդ ի՛նչ յիմարու-

թիւն է բրածնիդ . . . մարդս երբ համարու՞մ
ունենայ . . . ծանօթներ ունենայ . . . պէտք
չէ հոգալ. օն ուրեմն, խելքերնիդ դուլնիդ
բերէք . . . ես կը խոստանամ այս ֆլաստուն փո-
խարէն ձեզի շահեցնել . . . վտահ եղիք իմ
նքանցս, իմ բարեկամութեանս վրայ . . . իմ
չափազանց վտահոթութիւնս է որ զիս այսպէս
կը սխալեցնէ . . . ես զձեզ այս փորձանքէն
կազատեմ . . .

— Բայց ի՛նչ միջոցաւ . . .

— Հազարաւոր միջոցներ կան . . .

— Մտածեցէք որ ես փող մը չունիմ . . . և
ամեն վայրեան ալ ստակի պէտք ունիմ . . .
մանաւանդ տիկին տը Ժերանի համար, որմէ
այս ձախորդութիւնը ծածկել պիտի ջանամ:

— Շատ աղէկ կընէք, թէպէտ համոզուած
եմ որ նա զձեզ կը պաշտէ . . .

— Իրեն աղուոր ցփսի (չալ) մը խոստացեր
էի, որուն շատ կը փափաքի . . .

— Կրնաք այդ ցփսին տալ իրեն . . . սա
թուղթը ստորագրեցէք:

— Ի՛նչ թուղթ է այդ:

— Ինձի յանձնուելու քսան հազար ֆրանդ-
նոց տոմսակ է . . .

— Բայց ես ձեզի պարտք չունիմ . . .

— Անչու շա . . . բայց անի ստակ ունենա-
լու համար է: Այս կերպ տոմսակներն դազա-
նի եղած տոմսակ կանուանին:

— Ո՛հ, ատանկ ընելու հրաման կայ:

— Հրաման . . . ատանկ բաներու համար
հրաման ի՛նչ պէտք է:

— Սակայն ինձի քիչ մը ծանր կուգայ . . .
 — Բէ՛հ . . . սա առարկութիւնովսիրդ որ-
 չամի կը ծիծաղեցնէք զիս . . . պայմանաժամք
 լրանալուն պէս կը վճարէք կերթայ, ո՞վ ինչ
 պիտի բռնէ :

— Կըյուսա՞ք որ վճարեն :

— Այո, ինչ բան է : ամեն մարդ զձեզ
 հարուստ կը կարծէ, տուած երեկոյթներդ ձե-
 ղի շատ բան շահեցուց. հանդարտ եղիք,
 վաղը ստակը ոտովընդ կուգայ . . . և այսօր-
 ուան կորսնցուցածնուդ կրկինը կը շահիք . . .

— Ահ, անիծեալ խաղ . . . ինչպէս եզաւ
 որ կորսնցուցի . . .

— Արիկայ գիպուած մ'է . . . ամեն ան-
 դամ շահ չըլլար . . . սակայն կըսեն թէ այդ
 անդգամ Տէոֆիլտօրէ ստպեալը շարունակ խա-
 ղալու համար մէկը գտած է . . . բայց անոր
 հետ խաղալու համար ստակ պէտք է :

— Կարծեմ բաւական ստակ չի պիտի կըր-
 նանք ձեռք ձգել :

— Կը գտնենք, կը գտնենք, անհոգ եղիք
 . . . բայց շուտ բռէք ստորագրեցէք, որ եր-
 թամ լինցընեմ :

Եղուարդ տամակը կըստորագրէ, և զրօ-
 սանքի համար կեննէ իր սիրուհւոյն տունը կեր-
 թայ : Տիկին ար ժէրան ուղած ցիփոն չի տես-
 նելուն համար քիչ մը կը խոժոռի . սակայն Եղ-
 ուարդ հեռուեալ օրն անպատճառ բերել խօս-
 տանալով անոր սիրտը կառնու . ախկին ար ժէ-
 րան անոր ուշանալուն համար քաղցր յանդի-

մանութիւններ կընէ, բայց նա ներումն կը
 խնդրէ բռնելով որ կարուստ դործով մը զբա-
 շած էր . կը գրկեն զանի, կը շողքորթեն, կը
 գդուեն և խիտ կը մեծարեն : Եղուարդի
 պէս մարդ մը որ մեծամեծ դործերու տէր և
 առատաձեռն է, յիրաւի գտնծ մը կը համար-
 ուի :

Տիկին ար ժէրանի տունը յաճախողներն քիչ
 մը վերջը տմբողջ եկան, որք խիտա բազմա-
 թիւ էին : Ատոնցմէ ոմանք Եղուարդի նման
 խաղամուրութեամբ կործանած, ոմանք ալ դա-
 ւաճան, խորամանկ, և ոմանք ալ ինքզինքնին
 գովող ապուշ երիտասարդներ էին : Այս բն-
 կերականութեան մէջ կը գտնուէին նաև իրենց
 արժանի ախկիններ, դաւաճան պառաւներ,
 միջնորդներ, սիրահար կանայք, որոց ամենքն
 ալ խաղամուրութեամբ կը զբաղէին, և սիրուն ու
 գեղեցիկ շարժումներով, համազ խօսքերով
 պարոններն կը զմայլեցնէին, և խիտ քաղաքա-
 վարական ձեւերով կը վարուէին նոցա հետ .
 ուրիշ բան էր, եթէ երբեմն շատկեկ ոգելից
 բմպելիք գործածելով իրարու անտեղի խօս-
 քեր բնէին, և զիրար նախատէին :

Տիկին ար ժէրան միայն քիչ կուտար ա-
 նոնց, որ խաղամուրներուն դուր թաքցընե-
 լու և ախկիններն սիրուն ու գեղեցիկ երեսըը-
 նելու յարմար պատուաւոր բմպելիք մ'է : Ո-
 գելից բմպելիքով գրգռուած երեւակայու-
 թեամբ մարդս ձգտեալ ու կեղծ գեղեցիկնե-
 րուն յարգ կը նուիրէ : դաւաթներն կը դառնան,

գլուխները կը տաքնան, խազը կը մեծնայ, տաքութիւնը կը կոխէ, արիկներն վզերնուն թաշկենակը կը հանեն. այն տան խաղացող տիկնոջ մը աթոռին դէմը սաքի վրայ կայնող սիրահարի մը աչքը մէկ կողմը ճերմակ պարանոց մը կը տեսնէ, միւս կողմը սիրուն ուսեր, ետեւը բոլորովին մերկ թիկունք մը, և կըսկսի զմայլել:

Եղուարդը բնաւ անոնց վրայ չի նայիր, այլ իր սէրը բոլորովին մէկ հոգիի մը տուած է. քովը կերթայ, և վրաս ստակ աննելու մտացայ ըսելով երեսուն ոսկի փոխ կառնու անկէ, և կը նստի խաղի. արիկն աը ժերան ալ քաջ գիտնալով որ հետեւեալ օրն շահովը մէկտեղ կառնու անկէ, առանց դժկամակելու իսկոյն կուտայ:

Տեսֆլէօրէ տասկեան սերտ բարեկամներէն մին Մօնջլէր անուն կուսակալ մը կըսկսի եղուարդի հետ խաղալ. Տեսֆլէօրէ եղուարդին ետեւը կայնած էր անոր շահեցնելու խոստմամբ. բայց եղուարդը չի շահէն զատ ունեցածն ալ վրայ կուտայ. ետքը կըսկսին ապառիկ խաղալ ապահով ըլլալով որ եղուարդը պարտքը վճարելու մասին ճշդ է:

Իսկ արիկն աը ժերան անդադար բռն կը բաժնէ. քանի մը գաւաթ ալ ինքը կը խմէ, որպէս զի ինքն ալ կարենայ անոնց հետ զուարճանալ. Ալ կըսկսին ոմանք խաղալու, ոմանք ալ սիրահարութեան զբաղիւ քիչ մը վերջը ամենքն ալ ինքզինքնին կը մոռնան. մէկ կողմը կուր,

միւս կողմը ուրախութիւն, աղին մեծամեծ խոստումներն, անդին բարկութիւն, մէկ խառնակութիւն մ'է կերթայ. ժամ մ'առաջ եղած տեսարանը հիմայ բոլորովին փոխուած կը տեսնուի: Տիկին աը ժերան միջոց մը եղուարդին քովն երթալով երբ կը տեսնէ որ նա բոլորովին խաղալու զբաղած է, սրահէն դուրս կեննէ քիչ մը զովանալու համար:

Իսկ եղուարդը միւս կողմնցնելու վրայ ըլլալուն կատաղութիւնը, յուսահատութիւնը սրտին վրայ կը տիրեն. արգէն տուած հինգ հաղար ֆրանք պարտք ունըր կուսակալին, և այս պարտքէն ազատիմ բերելով քանի որ կը խաղար, այնքան վրայ կուտար: Երեօին գոյնը նետած և աչքերը մտրտեալ ինչ բնէր չէր գիտեր, ջեռքերը կը դողային, և հաղիւ թէ չունչ կընար առնուլ:

— Տասնը հինգ հաղար ֆրանքի փոխարէն խաղանք, ըսաւ նա վերջապէս նուաղեալ ձայնիւ մը իր հակառակորդին:

— Խիտա բարի, պատասխանաց կուսակալը, կը տեսնէք թէ ես որչափ աղէկ կը խաղամ. . բայց ճշմարիտը բերելով ձեր շարունակ կորսնցնելուն վրայ կը ցուեմ:

Եղուարդը առանց ձայն հանելու կըսկսի խաղալ. քովերինն Տեսֆլէօրէ ասպետէն ու դաւաճան պառաւէ մը զատ ուրիշ մարդ չկար, որոց երկուքն ալ կուսակալին բարեկամներն էին: Միւսներն ուրիշ սեղաններու քով կը գտնուէին:

Եդուարդ տեսնելով որ այս խաղն ալ կորսրնցնելու վրայ է, դարձաւ Տէսֆլէօրէ ասպետին որ ետեւը կայնած էր, իր կորսնցներուն վրայ տրանջալու համար, և ահա յանկարծ տեսաւ որ նա ձեռքը ուրիշ թղթեր բռնած իր քովը գտնուածներն գաղտնի իր հակաակորդին կը դուցնէր. սպախտը մէկէն թուղթերը պահել ջանաց, բայց Եդուարդ ժամանակ չտուաւ, խլեց ձեռքէն թղթերը, և խմանալով որ անոր գաւաճանութեանը զոհ գացած է, կատաղութենէն սեղանը տապալեց, կուսակալին իմացնելով որ իր պարտքը չի պիտի վճարէ: Կուսակալը որ այսպիսի տեսարաններու վարժուած էր, ամենեւին չի խռովեցաւ, բայց իր առնելիքը պահանջեց: Եդուարդ խաբերայ անուանեց զանի, նա ալ ամբողջ մը առնելով գլխուն իջեցնել ուղեց. Տէսֆլէօրէ գետինը թափած քանի մը սակիները ժողովեց. պատաւը սկսաւ պոռալ, Եդուարդ ալ ջահ մ'առաւ, և կուսակալին քիթին բերանին նետերուն պէս աչքը պայթեցուց. սոսկալի աղաղակներ ելան, ամեն մարդ հոն վազեց, կանայք և արածցմէ ոմանք փախան, իսկ մնացածներն ղեդուարդ չըջապատելով այն ինչ պիտի ձեռնէին, և ահա Տիւֆրէսն սրահը մտաւ, և տեսնելով որ Եդուարդ գէշ վիճակի մէջ է, ճեղքեց բաղմութիւնը դնաց անոր քով, ինքը սկսաւ ամենէն աւելի պոռալ, և Եդուարդին նշան ըրաւ որ չուտով մեկնի անկէ, բոսաբաղմութեան որ ինքը գործը կը կարգադ-

րէ և աչքին տուգանքը կը վճարէ:

Տիւֆրէսնի ձայնը կուռոջ պարոններն հանգարակեցուց, և Եդուարդ տեսնելով որ չի պիտի կրնայ իր հակաակորդներուն դէմ դնել, սրահէն գուռ ելաւ պատասխանատու թողլով Տիւֆրէսն:

Եդուարդ տոյն դէպքին վրայ քիչ մը մտիթարուելու համար տիկին տը ժերանը կը փրնտըռէր. և տեսնելով որ սրահը չկայ, տանը ամեն կողմերն նայեցաւ, բայց չի գտաւ: և խորհելով որ թերևս իր վերի սենեակը գացած ըլլայ, մութ տեղը թռչնոյ արագութեամբ վեր ելաւ, խուցը բացաւ և յանկարծ ներս մտաւ. բայց ո՛րչափ զարմացաւ, երբ տեսաւ որ իր սիրելուհին իր ծառային հետ ամենայն հանդստութեամբ մէկ անկողնոյ մէջ պառկած միատեղ հեշտութեանց և զուարճութեանց զբաղած են . . . :

Եդուարդ ինքզինքը խաբուած կարծելով և աչքերուն չի հաւատալով քանի մը վայրկեան անշարժ կը մնայ. ծառան՝ որ տանեւութ տարեկան ջորատոր, կայտառ, լաւ կաղմուածքի տէր բայց իչոյ նման տխմար երիտասարդ մ'էր, տիկին տը ժերանի մասնաւոր զուարճութեանը յատկացած էր, և իր այս պաշտօնն ալ ամենայն փութով և հաւատարմութեամբ կը կատարէր: Իր տիրուհին անոր սովորական նշանը տարուն պէս իսկոյն կը պատրաստուէր, նա ալ մեծ դժուրանակութիւն և դժուրաւ կը յայտնէր միշտ անոր բարի վարուց և ծառայու-

թեանց համար, զորս ստեց կը մատուցանէր : Պէտք է բանը նաև որ Շարլո (յիշեալ ծառային անունն է) երկու ամսէ ի վեր է տիկին տը թէրանի քով ծառայութեան մտած էր, ուր թէպէտ ծառայը լաւ կը կերակուրէին, բայց շատ շուտով կը նիհարնային :

Տիկին տը թէրան մէկ երկու քմալ խմելուն համար սաստիկ գրգռուած էր, և տեսնելով որ Եդուարդ հազիւ պիտի կրնայ մէկ քանի ժամէն իր խաղը լնացնել, պզտիկ մատը աւանջը գնելով (այս էր վերը յիշուած սովորական նշանն) իր խուցը ելաւ, ուր էր Շարլո, և հոն սկսաւ նորա հետ զրօսանուլ :

Տիկին տը թէրանի սենեակը թէպէտ սրահէն բաւական հեռու էր, սակայն վարը ելած աղմուկը լսած էին. որուն վրայ Շարլո վայրկեան մը կանկ առաւ ինչ քլլան իմանալու համար. բայց իր տիրուհին որուն հոգը չէին աւանակ աղմուկները, քանզի վարուած էր, գորովանօք սաստեց զանի և ըսաւ :

— Մն ուրեմն, ապուշ . . . ինչ կեցեր ես թող որ անոնք ուղածնուն չափ կուռին, դու պաշտօնդ կատարէ : Շարլո խկոյն հնազանդեցաւ :

Եդուարդին յանկարծ ներս մտնելուն վրայ ծառան ամենեւին չի խռովեցաւ, գիտնալով որ նա վարը քիչ մ'առաջ ձեռկուողներէն մին է, և յիշելով նաև վայրկեան մը յառաջ իր տիրուհւոյն իրեն ըրած յանգիմանութիւնը, իսկ տիկին տը թէրան տեսնելով որ գործը ալ չի

կրնար ծածկուիլ, նոյնպէս չի խռովելով էր զըուարձութիւնը շարունակեց :

Եդուարդի բարկութիւնը քանի մի վայրկեան զարմանքէն զսպուելով վերջապէս բորբոքեցաւ. հոն հրաթի մը (աթէշ քիւրէյի) գտնելով սկսաւ ծառան սաստիկ հարուածել. սա բարձրաձայն կաղաղակեր և օգնութիւն կը կանչէր. տիկին տը թէրան ալ կը պոռար. վերջապէս Եդուարդ անոնցմէ աւելի կը պոռար, և ծառայն ձեռեղէն յոգնելով ձեռքի թին դէպի մեծ հայելին նետեց :

Հայելին դետինն իյնալով կտոր կտոր եղաւ. Եդուարդ ինքզինքը կորսնցուցած սասկալի հայհոյութիւններ կընէր. տիկին տը թէրան իր միւս կարասիքներէն և ինքզինքէն ևս վախնալով ալ որչափ ձայն ունէր, օգնութիւն աղաղակել սկսաւ. իր սաստիկ վախուն յանկարծ ծառան մէկդի հրեց որ գնաց սեղանի մը վրայ ինկաւ, և հոն գտնուած սրուակներն, ջրոյ բաժակներն և ուրիշ կարասիք դետինը ձգելով կտարսեց, և այս ձայնեղուն վրայ տանը մէջ գտնուողներէն շատերն վեր վազեցին :

Ամեն ոք զարմացաւ մնաց զտիկին տը թէրան և իր ծառան պնայիտի անկարգ և խառն վիճակի մը մէջ տեսնելուն վրայ, մանաւանդ զԵդուարդ որ Ալբրիլլէտի Տրոյիոյ պատնէշներուն բայրաքիչ պտտածին նման կարասեաց կտորտուքներուն մէջ պտտելով կարծես թէ ամեն բան հրոյ և որոյ մասնէլ կըստառնար :

Այս մարդիկը կուռոյն և այս կերպ ան-

կարգութեանց պատճառն խմանալ ուզելով
խռովութիւնն աւելի սաստկացուցին: Կուսա-
կայր թաշկինակն աչքին բռնած անոր ցաւը
մեղմացընելու ետեւէ էր, և կը պոռար որ այդ-
եղուարդը դիւաճարերէ, ուստի պէտք է փա-
կել: Տեսիլէօրէ ապակն թուղթերը ձեռքը
վեր վազելով իր խաղը կորոնցնելուն վրայ կը
զայրանար, և այս խռովութենէն օգուտ քա-
ղել ուզելով քանի մը նոր սրտակ և կուսայն
սեննակը փոխու: Տիկնանցմէ ոմանք Շարլո-
յի վիճակը տեսնելով և զթաղով անոր երի-
տասարդութեան վրայ, վէրքերը զննեցին ու
վրան այլ և այլ դեղեր դնել սկսան, ոմանք
ալ տիկին տը ժերանի դարդարանքն նորոգե-
լու ետեւէ եղան: Մէկ քանի անձինք ալ զեղ-
ուարդ հանդարտեցընել ջանացին և կուսայն
պատճառն հարցուցին. տիկին տը ժերան ա-
ռանց պատասխան տալու իր ֆիասուած կա-
րանաց ստակը կը պահանջէր: Եղուարդ զա-
նի խարերայ, դաւաճան անուանելով դէմը
եկողը մէկդէ կընէր. վերջապէս Տիւֆրէան,
որ Եղուարդին այսպիսի վայրկեաններն կը հե-
տաջօտեր մըշտ, անոր հանդերձէն բռնելով
սենեակէն դուրս քաշեց, և ամեն ոք սկսա-
ւոր ետեւէն զուռալ ու ծիծաղիլ:

— Ճշմարտապէս տղայ մ'ես դու, ըսաւ
Տիւֆրէան Եղուարդի երբ փողոց ելան. ինչու
համար ատանկ աղմուկ կը հանես:

— Այդ ինչ խօսք է . . . կը վայելէ որ
այդ անզգամ կնը ատանկ խաբէութիւն մը,

դաւաճանութիւն մ'ընէ ինձ, որ զիս պաշտել
կը կեղծէր . . . և այն ալ որո՞ւ համար . . .
ծառայի մը համար . . . :

— Բայց այդ ալ տուն մը տակն ու վրայ
ընելու չափ մեծ պատճառ մը չէ . . . պէտք
է իրերն փիլիսոփայօրէն նկատել . . . ստանկ
ոչինչ բանի մը համար ալ կահ կարասիք չի
կոտրուիր . . . դու կընաս ուրիշ հազարաւոր
կններ գտնել որք զքեզ կը պաշտեն . . . քու
ստակիդ համար:

— Իմ բրած այսքան զոճողութիւններէս
վերջը ատանկ ընել պէտք է:

— Գիտե՛մ, իրաւունք ունիս . . . բայց,
սիրելիս, կնկան մը տրուած ստակն մըշտ ան-
հիմն է . . . Աւելի ձախող գործն կուսակալին
պատահած դէպքն է . . . Գիտե՛ս քու փոխա-
նակագիրներուդ մեծ մասն անոր տուի որ
զքեզ կառավարութեան չի մատնէ. վերջը հար-
ցուփորձ, դատաստան, երթիւեկութիւն. ևն
խել մը ծախքի դուներ պիտի բացուէին: Ա՛յ,
ո՞րչափ բարկասիրտ մարդ ես եղեր . . . մե-
կուսն աչքը կը հանես, միւսայն վրան դու խը
կը վերադարձու. ուրիշին կահ կարասիք կը
կոտրես . . . Ի՞նչ երկու անգամուս ալ քօվդ
չի գտնուէի, վերջդ շատ դէձ պիտի ըլլար . . .
Բարբաղդարար ամենքն համողելով ամեն ինչ
կարգադրեցի . . . Բայց այս գնչեր քեզ շատ
սուղի նստաւ . . . :

— Բնէլ է որ այս ստակներս ալ այս կեր-
պով դացին, հէ՛ . . . :

— Հոգի թող չբուսայ . . . դու ստակ կը գտնես . . . բայց պէտք է ուրիշ փոխանակագիրներ գրել . . . ուր թողունք որ բաղդն ալ միշտ մի և նոյնը չի մտար . . . միշտ անյաջող չբուսար . . . ասոր համար միջոցներ ալ կան :

— Միջոցներ կան . . . :

— Այո՛, այո . . . դու ալ քիչ ատենէն կը սովորիս . . . Բայց ահա լուսնայն մտէ . . . Ժամանակ է որ երթաս պառկիս . . . վաղն ատու ինձի եկու, որ պէտք եղածը միատեղ խորհնիք :

Տիւֆրէան թողուց զիդուարդ, որ ժամանակէ մ'ի վեր իր տեսածներուն ու զգացածներուն վրայ մտորեալ, վհատեալ ու յուսակրտուր, ալ չի համարձակեցաւ ոչ անցեալն յիշելու, և ոչ ալ ապագային մէջ իրեն համար պատրաստուածն կանխատեսելու :



ԳԼՈՒԽ ԻԳ.

ԽԱՂԱՄՈՒԹՅԱՆ ՄԸ ՆԵՐՔԻՆ ՏԵՍԱՐԱՆԸ

— Ի՛հ ուրեմն, հիմա պէտք է որ գործերըդ կարգադրես, բոաւ Տիւֆրէան տիկին տը Ժէրանի տունն անցած խռովայոյզ գիշերք մը վերջն արժննալով : Հիմա աստնըհինգ հազար ֆրանգի փոխանակագիր մը գրելու ես . ես զս-

նոնք վճարել տալու կը ջանամ : Բայց և այնպէս կը խոստովանիմ ալ որ ասի խիտ դժուար բան մ'է : ստակ ուղուած ժամանակն անյայտ ստորագրու թիւննիս յարգելու ենք . . . քանի մը հրեայ կայ, որոնք ստակ կուտան, բայց հարիւրին յիսուն կը պահանջեն . . . Ի՛նչ կըսես . . . :

— Անդգամ կին . . . ծառայի մը համար զիս կը մատնես, հէ՛ . . . :

— Ի՛նչ, դեռ քու անհաւատարիմ սիրուհւոյդ վրայ կը խորհիս . Ի՛նչ անմիտ ես եղեր :

— Ի՛նչպէս կրնամ վրէժ առնուլ . . . :

— Ամենէն աղէկ վրէժինդ բուժիւնն ծախսընել, և ճօխ կեանքի մը համբաւ ստանալն է : ան ատեն տես թէ նա ինչպէս կը վշտանայ : Կը տեսնես ուրեմն որ միշտ ստակ պէտք է ես կերթամ կը գտնեմ : Իսկ դու այլ ևս մի վշտանար անցելոյն վրայ . թող այդ թմբեալ վիճակդ որ զքեզ շատ գէշ կընէ : Գնա խաղ մը դարձուր, անով զբաղէ որ քիչ մը ինքզինքդ գտնես :

— Վրաս ստակ մը չունիմ, ի՛նչպէս խաղամ :

— Պէտք է ստակ ճարելու միջոց գտնել . . . ես հիմայ կերթամ կը բերեմ :

Տիւֆրէան դուրս ելաւ, և դուարդ ալ տուն գնաց . հոն իր կնոջը մէկ նամակը գտաւ . խեղճ կենը գիւղն երթալէն ի վեր այս վեցերորդ նամակն էր որ իր ամուսնոյն գրած էր, և բնաւ պատահան մ'առած չէր : Այս նամակներուն մէջ

Ատէլին բարեմայթութիւնները բրած էր եղ-
ուարդի երջանկութեան վրայ, և աղօթք իր
առողջութեան համար. բայց սիրոյ վրայօք
բան մը չէր գրած, խորհելով որ անհաւատա-
րիմ մէկու մը սիրոյ վրայ բան մը խօսելը՝ կոյ-
րին գոյներու, խօսլին նուազարանաց և վայ-
րենիին մարդասիրութեան վրայ խօսք ընելու
կը նմանէր:

Եղուարդ իր կնոջը նամակներն չէր կար-
գար անոնց ինչ պատասխան տալը չգիտնա-
լուն համար: Թէպէտ սիրտը իրեն բան մը չէր
ըսեր, բայց խիղճը շատ անհանգիստ էր. առա-
ջինը խտացուցած և երկրորդին ալ անզգայ
եղած էր: Չմեռուան մօտենալը տեսնելով կը
վախնար որ Ատէլին փարիզ դառնալու խօսք
չընէ, գիտնալով որ անոր ներկայութիւնը զին-
քը խիտ շատ պիտի վշտացնէ: Կուզէր իր
գործերն անկէ ծածկել, վասն զի եթէ այն-
պէս չընէր, թէ իր ամուսնոյն և թէ զոգրանչին
վախերն պիտի աւելցընէր:

Եղուարդ իր սենեակն մտնելով՝ զարմա-
ցաւ, երբ տեսաւ որ խել մը կառավարու-
թեան նուիրակներ իր կահ կարասիքն գրաւե-
լու եկած էին:

— Ինչ կընէք, պրտաց եղուարդ, ո՞վ
զրկեց զձեզ հօս . . . :

— Պարոն, պատասխանեց անոնցմէ մին,
տանտէրը զրկեց մեզ հօս իր տանը վարձքը
չի վճարելուդ համար:

— Առաջուց ինձի խմացընէլ պէտք չէ՞:

— Ձեզի գրեր զրկուեցան . . . :

— Ես դիր չընդունեցայ . . . :

— Ատիկայ դուք խորհեցէք . . . :

— Ես ատանկ օրէնք չեմ ճանչնար . . . :

— Ինչ, կատակ կընէք, պարոն գործա-
կատար . . . :

— Ես հիմա գործ չեմ ընէր:

— Ատի մեր գիտնալու բանը չէ:

Եղուարդ թողուց այդ մարդիկը, ելաւ
իր գրասենեակը. իր պաշտօնեայն հօն չէր.
Թուղթերն սկսաւ զննել, բայց ինքն ալ իր
գործերը չի կրցաւ հասկնալ. թուղթերը նե-
տեց սենեակին մէջ տեղը, ինչու վար, ծա-
ռաները կանչեց. բայց աննք մեկնած էին,
բաց ի դռնապանէն որն որ իր տիրոջը կործա-
նումը գիտնալով յանդգնօրէն պատասխանեց
անոր:

Եղուարդ անէն դուրս ելաւ և դանդա-
ղաբայլ գէպ ի Բալէ-Րոյալ գնաց, ինչ ընելի-
քն ու այդ նուիրակներէն ինչպէս սպասե-
լիքն չգիտնալով: Տիւֆրէսնի սպասեց անկէ
խորհուրդ խնդրելու համար: Վերջապէս ե-
կաւ նա, և դո՛հ գէմքով խմացուց որ ստակ
գտած է. ասոր վրայ եղուարդ ողի առաւ,
և իր առնը պտտահածն Տիւֆրէսնի խմացուց:

— Ինձի կը հարցընես, բռաւ Տիւֆրէսն,
Թող որ առնուն, և առ սյժմ քեզի պէտք չե-
ղած կահ կարասիքդ ալ ծախէ: Քանի որ կինդ
հօս չէ, այդքան կահ կարասիքն ի՞նչ պիտի
ընես. հիմա ստակին նայինք:

— Բայց եթէ կինս գեղէն դառնայ . . .
 — Բէ՛հ, անի դեղը չի ձգեր . քսենք որ
 դայ ալ նէ, ձեռքդ ստակ ըլլալէն ետքը քա-
 ըրիզու պէս տեղ մը մէկ ժամու մէջ տուն մը,
 կահ կարասիք և ծառաներ չե՛ն կրնար գտնը-
 ուիլ :

— Ծ՛մարտու է . բայց դու կրնէիր թէ ճոխ
 կեանքի մը համբաւ ստանալու եմ . . .

— Դարձեալ կրնաս ստանալ . բաւական է
 որ ձեռքդ ստակ ըլլայ :

— Բայց իմ համար ո՛ւմն . . .

— Հողդ թող չըլլայ, աղէկ վիճակի մէջ
 է : Ստակ ձեռք ձգէ, տխմարներն թող ապ-
 չին . ամենէն աւելի պէտք եղածն այս է :

— Աղէկ, բայց ստակ չեմ կրնար չահիլ . . .

— Որովհետև կանոնաւոր դորձ չես տես-
 ներ :

— Քու ամեն քսածդ կրնեմ :

— Չէ, տակաւին տղայական բնութիւն
 մ՛ունիս որ դքեղ կը տխալեցնէ, և պարտաւոր
 ես այդ բնութիւնը ձեռքէ ձգել, եկու եր-
 թանք պանդուկը, ուտենք խմենք, և դէպ-
 քերուն տկանջ չի կատենք :

Եղուարդ կայր դիւրբայն Տիւֆրէնի խը-
 րատներուն թետևելով ելաւ հետը գնաց . իր
 ամուսնութեան միջոցին զինքը տեսնողներն
 շատ դժուարաւ ճանչցան զանի, այնքան
 փոխեր էին զինքը զեղխութիւնն ու խաղամ-
 լութիւնը :

Ինչ ստակալի կեանք է խաղամոյլի մը կեանք

քը, երբէք հանդիստ, հանդարտութիւն չու-
 նի : Տաղնապալից տեղ մը կարճեա կը տիրէ
 բոլոր դարձարանացը վրայ . աչքերն խորը ի-
 ված, կարմրցած, երեսը ամբոյն, այտերը նի-
 հարցած, կերպարանքը խառն և անկարգ,
 քայուածքը արագ և անստոյգ, գաղտնի ան-
 հանգատութիւն մը կը նշմարուի աչքերուն մէջ .
 ժպտը դառն, հոգիին տխուր, և միշտ սոկւոյ
 ծարաւով, բազդի անյաշտութեամբ և բրած
 կորուստներովն խռովուած :

Այսպէս էր Եղուարդ . ուստի ո՛վ կրնար
 զանի ճանչնալ, որ երբեմն սիրոյ և երջանկու-
 թեան զմայլելի նշաններովն կը հրճուէր : Ալ
 հիմա իր երեսներն թառամեալ, կերպարանքը
 փոխուած և ձայնն անձանօթ եղած էր զ՝ քան-
 զի ամեն օր զգացած որտամաչուքներովն, հո-
 գեբովն, յուսահատ շարժումներովն, կտա-
 ղութեամբը, գէշ տպաւորութիւններովն ու
 ձախորդութիւններովը իր ձայնին ներդաշնա-
 կութիւնն բոլորովն կորուսած էր : Իր խօ-
 սակցութիւնն անգամ կերպարանավոյս եղած
 էր . վրան զի մարդ մը չարաց ընկերութեան
 մէջ մտնելով երեկոյ ճոն ամեն պարկեշտու-
 թիւն, համեստութիւն ու զգուշութիւն կը
 կորսնցընէ : Եղուարդ որ առաջ բարկութեան
 ինչ ըլլալն չէր գիտեր, հիմա վայրկեանը ան-
 դամ մը կը բարկանայ և կը հայհայէ . իր բար-
 քը, վարքը և սկզբունքներն տեսակցած ան-
 ձանցը հետ յարմարեցան : Առաքինի, համեստ
 և իտելացի մէկը եթէ դժուարաւ կարենայ դէշ

ընկերութեան մը ազդեցութեանը դիմադրել, հապա տկար և իր կրիցը մասնուած մէկը ինչպէս կրնայ այնպիսի ազդեցութեան մը տակալ:

Չմեռը եկաւ . Եդուարդ ալ իր կնոջմէն նամակ չէր ընդուներ: չէր դիտեր որ Տիւֆրէնն զանոնք կաններ, և իր ամուսնոյն կողմէն պատասխան կը դրէր: Առաջին փոխանակագրերն ենր կարասեաց ծախուելովը վճարուեցան . երկրորդներն ինչպէս պիտի վճարուին . երկուքին քոյն ալ ստակ մը չի մնաց: Ունայն տեղն Եդուարդ սակէ անկէ փոխ ստակ առնելով իրիկունները կերթայ մահաուիթ ոնզանին առջև կը նստի, և շատ կերպ խորամանկ ձեւերով ստակ շահելու կը ջանայ: ամենեւին չի յաջողիր: վերջապէս քոյը ստակ չի մնար . սքրտահն մէջ չորս կողմը կը նայի, ծանօթ մը կը փնտռէ ստակ փոխ առնելու համար . չի գըտներ, քանզի խաղամոններն բարեկամ չեն ունենար . անկէ դուրս կենէ . Բայէ-բոյալի փողոցներն կը շրջի, Տիւֆրէննը կամ ուրիշ մէկը գտնելու համար, չի գտներ . կերթայ թիւ 113 խաղատուը, ուր նոր կը մտնէր, կը տեսնէ հոն խեղճ գործատրներ, որք իրենց օրական շահը կուգան կը ձգեն հոն, և զրոյանին պարսպ տուն կը դառնան . ուր իրենց այխատասէր կանայքը աղաքնուն հետ նոցա դարձին կըսպասեն որ գան և իրենց փոքրիկ ընտանեացը ուտելիք գնեն . . . բայց սնունք ուտելիք գնելու ստակ չունին . խեղճ աղաքը անօթի կը պառկին, և ողորմելի կանայք ար-

տասուօք կողողին իմանալով որ իրենց ամուսիններն ստակնին խաղով կորսնցուցած են:

Եւ սա վաճառականն որ իր գործքերովը զբաղած կերելի, դիտէ ք ինչ կընէ այդ մուլութեան այրին մէջ . . : Հոն կը կորսնցընէ իր ստակը, համարումը, պատիւը և իր գործակցաց ստացուածքը: Հետեւեալ օրն իր ստորագրած տոմակներն պիտի վճարէ, բայց ստակ ուսկից պիտի դանն . . : Աչքը թուլութեուն յարած է յուսալով որ բաղդն կը յաջողի . և երբ իր յոյսը ի գերև երէն, իր ձեռքը որ ծոցը պահած էր, դուրս կը հանն և անով վրան դուրս կտկտի խզել . . : ալ բան մը չըզգար . . . քանզի իր բոյսը զգացողութիւնն խաղին վրայ կեդրոնացած է:

Հապա սա երեսասարքը որ գրէն պարկեշտ, խոհեմ ու զգուշութիւնը մէկը կերելի, և վաճառականի մը կը ծառայէ, տեղ մը տանիլ յանձնելու համար իրեն տրուած ստակը կը տանի խաղամուլութեամբ կը վատնէ . . . այն վատարարոյ ընկերութենէն բաժնուելէն վերջն ինչ կընէ, ուր իր պատիւը կորսնցուց . . : խեղճ ընտանիք մ'ունի նա, բայց համեստ . ուստի չուղեր զայն անպատուել, չուղեր իր ծնողաց յանդիմանութիւններն լսել: յուսահատութիւնը հոգւոյն վրայ կը տիրէ, և զինքը ստիկացընող ապագայէն ազատելու ճար մը միայն կը գտնէ: Գուրս կեննէ անկից . . . քայլերը կը փութացընէ, կերթայ դէպի գետը, և ինքզինքը անոր ախաքը մատնելով կենացը

վերջ կուտայ : Տեսէք անգամ մը , նա որ իրեն երջանիկ և պատուաւոր ասպարէզ մը կրնար պատրաստել , նա որ իր ընտանեակայ բարեկեցութիւնը պիտի յարգարէր , խաղամուլութեամբ ինքզինքը սպաննեց քան տարեկան հասակին մէջ :

Այս ըսածներնուս յայտնի օրինակներն ամեն օր աչքերնուս առջևն են . ա՛հ , ե՛րբ պիտի գոցուին սա մեղաւից և վտանգաւոր յարկերն . . . :

Եզուարդ իր աչքին առջև ունեցած դասերէն օգուտ քաղել կը պարտաւորէր . փոխանակ այնպէս ընելու անցաւ սեղանին գլուխը . իր վրայ դեռ տասր և ուներ . սկսաւ խաղալ այնպիսի անձանց հետ որ աղքատ մարդոց մինչև վերջին բնիոնն կը քայլեն կողովն :

Աստեկ մուրացկաններու նմանող մարդոց քով նստելէն վայրկեան մը ետքը՝ նայիս եկաւ Տիւֆրէան ու ակնարկեց որ եղէ իր ետեէն գայ :

— Աղէկ լուրեր ունիմ քեզի թալու , ըսաւ նա ուրախ դէմքով մը . նախ զոքրանչդ երէկ իրիկուն յանկարծական կաթ ուտած է մը մեռեր է :

— Ի՞նչ կրես :

— Իր տունը բնակող պատանի մը եկաւ ինձի իմացուց : Երկրորդ՝ փոխանակագիրներով գալ ստակ գտայ , սա սլայմանաւ որ վիճելով Սէն-ժօրժի տունդ իբր գրաւ (բէհէն) պիտի տաս :

— Տո՛ւնս . . . բայց . . . :

— Է՛հ , զարձեալ դժուարութիւն ցուցրնելու մի ելներ . . . կրնայ ըլլալ որ զօքրանչդ մնացած քիչ մը ստակով փոխանակագիրներդ կը վճարես ու տունդ ձեռքէ չես հաներ : . . . ա՛խ , իցէ թէ երկու որ առաջ միտքս դար պլդ աունդ . . . բայց ինչ և իցէ , հիմա ստակ ունինք , ան պէտք է : Այժմ տիկին ժէրմէյլի ձգած հարստութիւնն ձեռք ձգելու համար կնովձէզ ստորագրութիւն մ'առնելու է :


— Ի՞նչպէս առնելու է . . . ես չեմ կրնար իր մօրը մահը իրեն իմացընել . ետքը ի՞նչպէս հանդարտեցընելու է զանի :

— Դու հոգ մ'ըներ . թէ որ կուզես , ես քու տեղդ վիճելով Սէն-ժօրժ կերթամ , և այս լուրն և ուրիշ պէտք եղածներն քու կողմէդ կը հաղորդեմ :

— Ինձի մեծ շնորհ մ'ըրած կըլլաս . . . Իրեն ըսէ ալ որ զինքը չեմ մոռնար , և քիչ օրէն մէյնը կուգամ զինքը տեսնելու . . . :

— Շատ լաւ , ես գիտեմ անոր բոնիքս . զու ապահով եղիր իմ ընելիք բարեկամական ծառայութեանս վրայ :

Ասոր վրայ Տիւֆրէան սկսաւ ճամբու պատրաստութիւն տեսնել Ատէլինի երթալու համար , զոր տեսնել կը փափագէր . Եզուարդ ալ իր գեղի տունն ևս ձեռքէ հանելէն և բաւական մեծ գումար մը ստանալէն վերջը՝ գարձեալ իր վրայ տիրած մուլթեան հրապուրանացը հետեւիլ սկսաւ :



մ'ընելու սպասել որ իր ամուսնոյն խեղճը զին-
քը զգաստացընէ :

Որ մը Ատէլին երբ խորին մտատանջու-
թեամբ իր սիրելի Լուսննը գրկած գեղը կը
պատէր , չիմացաւ սովորական ճամբէն խոտու-
րած ըլլալն . և սաստիկ յողնելով քիչ մը նըստ
տեղու պարտաւորեցաւ : Աչքը շորս դին պը-
տըտցուց . և իր գտնուած տեղը չի ճանչնա-
լով վախցաւ որ ետ դարձած ատեն պիտի մու-
լարի . ուստի հեռուն ազարակ մը տեսնելով
գէտ ի հոն շտկուեցաւ , որպէս զի կամ ճամ-
բայ հարցընէ , և կամ եթէ պէտք ըլլայ , ան-
կէ առաջնորդ մ'առնու իր հետ :

Այս ագարակը կիցիլի ագարակն էր , ուր
էր Յակոբոս ալ . Լուսնա դրանն առնլե կայ-
նած իր բաղաւերն ու հաւերը ներս կուսներ .
Սան-տուսի բաղի խոտի խորճեր կը գեղէր .
տղայք ալ ըստ սովորութեան սագերուն ,
վառեակներուն և աղբի հետ կը դրօննուին :

Այս տեսարանը զուարճացուց զԱտէլին .
ցաւեցաւ գեղը ծնած չըլլալուն վրայ , ուր
մարդս թէպէտ միամէ և միօրինակ բայց գէթ
խոսովութենէ ու դառնութենէ ազատ կեանք
մը կը վարէ :

Լուսնա իսկոյն երիտասարդուհի տիկինն
ներս առաւ . գրկեց զԼուսնն , և գգուեց զա-
նի Ատէլինի հարցումներուն ալ պատասխանե-
լով , որով իմացաւ թէ իր տնէն շատ հեռու
կը գտնուէր , և գիւղացուց այս սիրտիւր ըն-
դունելութեանը վրայ զմայլած՝ հաճեցաւ քա-

ԳԼՈՒԽ ԻԳ .

ԲԱՐԻ ԱՆՁԻՆՔ . — ԵՐԱՅԱՏԳԻՏՈՒԹԻՒՆ

Ատէլին տակաւին իր դեղի գեղեցիկ տունն
էր : Թէպէտ հոն գացած ատենն շատ տխուր
և շատ թշուառ էր , բայց վերջապէս գաշտե-
րուն զուարճութիւնը և իր աղջկան առաջին
գգուանքներն փոքր ի շատէ իր սիրտը հան-
դարտեցընելով իր այս խեղճ կացութիւնը
մեղմացուցին : Ի սկզբան յոյս ունէր որ Եդ-
ուարդ քիչ տեսնէն խելքը գլուխը ժողվե-
լով այնպիսի պատիւր զուարճութիւններէն և
զինքը չըջապատող խաբերայ ու անզգամ մար-
դոցմէ ետ կը կենայ , և անմիջապէս իր բոլոր
կը դառնայ : Ի վերջոյ այս յոյսն ալ կըրնցուց :
Շատ անգամներ նամակ գրեց իր ամուսնոյն
առանց պատասխան մ'ընդունելու . միշտ իր
մերձէն յուսահատական լուրեր ընդունեցաւ
անոր վրայօք . իմացաւ թէ իր սիրած անձն
ինչ անկարգ վիճակ մ'ունեցած է , և գողաց .
խորհեցաւ Տիւֆրէանի վրէժխնդրութեանն ու
Եդուարդի տկարութեանը վրայ : Իր ամուս-
նոյն կողմանէ տեսած այս ծայրայեղ անտար-
բերութիւնն իր սիրտը սաստիկ վիրաւորեց .
ալ պարտաւորեցաւ լռել . և առանց արտունջ

նի մը վայրկեան հոն հանգիստ առնուլ և պատ-
րաստուած սեղանէն ալ քիչ մը կերակուր ու-
տել :

Ժամը վեցը զարկաւ . այս միջոցին ազարա-
կի մը բնակիչներն զուարճութեամբ կը հաւա-
քին պարզ, բայց աղէկ, սննդալար և միշտ
ակործանօք համեմուած կերակուր մ'ուտե-
լու համար :

Կիլիջ դարձաւ եկաւ ըստ սովորութեան
փայտ շակած . Սան-Սուսի երգելով եկաւ սը-
րահը, և Յակոբոս իր երկրագործական գոր-
ծիքներն անկիւն մը դրաւ . Կիլիջ իրեն սովո-
րական եղած ապշութեամբն զՍտէլին սկսաւ
դիտել . Յակոբոս բարնեց զանի առանց ա-
նոր երկար ուշադրութիւն բնելու . իսկ Ատէ-
լին զինքը տեսածին պէս՝ արդէն իր յիշգրու-
թենէն հեռացած պարագայ մը յիշելու ջա-
նաց :

Նստան կերակուրի . Յակոբոս Ատէլինի քով
նստաւ . զարմացաւ Ատէլին անոր մարդավա-
րութեանը, քաղցր հանգամանացը և աղա-
յոց հետ ունեցած համեզ բարուցը վրայ : Եր-
բեմն երբեմն իր խիտ և լայն պիտերով գոց-
ուած դէմքին վրայ նայուածք մը կտրճըլէր,
սրն որ շատ վէրքի նշաններով ծածկուած էր :
Յակոբոս անոր այս գիտօրութիւնը չէր տես-
ներ, չի կրնալով ճաննալ այնպիսի մէկը որ մի-
այն մէկ անգամ պարտէղի մը վանդակներէն
տեսած էր, և շատ ալ ուշադրութիւն ըրած
չէր : Սակայն Ատէլին Յակոբոսի դէմքը, մա-

նաւանդ անոր լայն պիտերը տեսածին պէս
խտոյն զանի ուր տեսած ըլլալն յիշեց . և սրբ-
տին խորէն հառաչանք մ'արձակեց :

— Պարոն, ըսաւ Ատէլին Յակոբոսին, ես
զձեզ կը ճաննեմ, վասն զի անգամ մը տեսած եմ :

— Ինչի՞ կրտէք, տիկին, ըսաւ Յակոբոս
զարմանալով :

— Այո, ձեզի կըտեմ . . . և ճիշդ դուք
այն անձն էք :

— Բնկերս ճաննցա՞ք, տիկին, ըսաւ Սան-
Սուսի . ըսել է որ քաջ, պատուաւոր մէկը կը
ճաննեաք :

— Տարակոյտ չկայ . . . բայց և այնպէս
պարոնն զիս սաստիկ վախցուցած է . . .

— Ինչ, վախցուցած եմ . . . Ինչպէս ե-
ղաւ ատիկայ . . .

— Կը յիշէ՞ք, ըսածս գրեթէ տասնըվեց
ամիս կայ, որ մը Վիկէտօվ-Սէն-ժորժ դաւով
պարտէղի մը դրանն առչեւ երկար տուն կե-
ցաք . այս դուռն հին և վանդակազատ ըլլա-
լուն պարտէղէն միայն դէմքերնիդ կերեւար
. . . ուստի այն միջոցին ձեր աչքերն, ձեր
վէրքի նշաններն և ձեր պիտերը զիս արգա-
րկ սաստիկ վախցուցին . . .

— Ինչ կրտէք, տիկին, ըսաւ Յակոբոս
զԱտէլին ուշի ուշով քննելով, դուք այն օրը
այդ պարտէղն էիք :

— Այո, պարոն, ատի իմ տանս պարտէղն
է, և այն օրը առաջին անգամն էր որ մօրս
և ամուսնոյս հետ հոն եկած էի :

Յակոբոս երազ տեսնել կարծելով բան մը չի պատասխանեց . ձեռքը ճակտին կրկնեցուց , վայրկեան մը պեխերը խառնեց և խորին հա-
սաւանք մ'արձրկեց :

— ԼՏ , ըսաւ Կիլլօ մեծ գաւախ մը դինի նետելէն վերջը , այս պեխերէն վախնալու բան մը չկայ , բայց . . . ո՞վ դիտէ . . . բան չենք կրնար ըսել . . . վախկոտ մարդն չի մեղադ-
րուիր . . . և . . .

— Իրաւունք ունիս , ըսաւ Լուիզա անոր խօսքը կտրելով , սակայն տիկինը եթէ Յակո-
բոսին կուրծքը կախուած խաչը տեսներ , ա-
ղէկ գիտեմ որ չի պիտի վախնար :

— ՈՏ , ըսաւ Ատէլին , ալ պէտք չունիմ այդ խաչը տեսնելու իմ սխալմունքս ուղղելու համար : Բայց ե՛նչ ըսեմ . գիտէք որ կանայք ընդհանրապէս երկչոտ կըլլան . երբ պարտե-
ղին դրանք ետեւէն այդ խոշոր պեխերով գը-
լուին ալ տեսայ . . . :

— ԼՏ , հասկըցայ , ըսաւ Կիլլօ , եթէ ա-
տանկ ըլլար , մենք ալ վախնալու էինք . . .
ինչ և իցէ . . . Իրաւունք տուի ձեզի , տիկին ,
բայց վախ ըսածնիդ ալ քիչ մը չստիար որ ըլլա-
լու է , և . . .

— Ալ լուէ , Կիլլօ , Սան-Սուսի ալ երկչոտ է ,
ամօթ է եղեր :

— Վախկոտ եմ , ըսաւ Սան-Սուսի , եթէ
գողեր մտնեն ստ ագարակի , տես թէ ինչ
ձիւն կը բերեմ գլուխուսն . . . :

— Ամուսիննիդ ալ վիշնէօլ-Սէն-ժօրժ է ,

ըսաւ Յակոբոս Ատէլինի վայրկեան մը լուէէն
վերջը :

— Ոչ , երկար առենէ ի վեր է փարիզ է :

Ատէլին այս խօսքն ըսած առեն այնչափ
տխուր երեւցաւ որ Յակոբոս զղջաց հարցընե-
լուն վրայ : Քանի որ իր եղբօրը կինը կը գի-
տէր , այնքան սիրտը կը կապուէր անոր հետ
և զանի սիրտը հակամետ կերէէր . չէր տա-
րակուսեր որ եղբուարդ իրեն հետ տեսակցած
ըլլայն անկէ ծածկած չըլլայ :

— Ատէլին զիս չէր մերժեր , ըսաւ ինքնի-
րեն , այսպիսի համեղ վարք մը և չնորհալի
խօսուածք մ'ունեցողն խիտ ու անդգայ սիրտ
մը չի կրնար ունենալ . . . : Յանցաւորը եղ-
ուարդն է . բայց պէտք չէ կնոջը բան մ'ը-
սել . պարտադ տեղը պիտի վշտանայ . մնաց որ
զիս վաճառող ապերախտին քովն ալ ո՞վ պիտի
երթայ բնակի :

Գիշերը ծոցեցաւ , Ատէլին երթալու պատ-
րաստուեցաւ . ամեն ոք հետք ընկերանալ կու-
ղէր . բայց ինքը Յակոբոսն ուղեց , անոր յայտ-
նելու համար , որ ալ անկէ վերջը անոր նկատ-
մամբ վախու յիշատակ մը չի կրեր : Յակոբոս
դաշտուկ ուրախացաւ զինքը միայն ուղեւուն
համար . մէկ ձեռքովը Էրմանոր դրկեց , միւ-
սըն ալ Ատէլինի առաւ , որն որ դիւղացուց
սիրալիր ընդունելութեան համար չնորհակա-
լութիւն յայտնելով և կրկին գալ և զանոնք
առենել խօստանալով ճամբայ ելաւ :

Քիչ մ'առեն լուռութեամբ քաւեցին . Յակո-

բոս երբեմն երբեմն էրմանսը կը գ.դ.ու.էր որ հազիւ ութ ամսուան կար . բայց Յակոբոսի երեսը կը սպասէր և իր փոքրիկ ձեռքովը անոր պեխերը կը քաշէր :

— Շատ վշտացած եմ գձեղ ձանձրացրելուս վրայ , բնա Առէլին , չէի կարծեր որ այնչափ ճամբայ պիտի քալէի . . . :

— Տիկին , հոգ մի ընէք , առի ինձ համար մեծ հաճոյք մ'է :

— Տղեկը զձեղ կը յոգնեցրնէ . . .

— Չիս կը յոգնեցրնէ . . . ամենեւին ոչ , և չեմ ուզեր երգում ընել , վասն զի տիկնանց առջև երգնուլ չի վայելեր :

— Չեղի համար ներքի է ամեն ինչ , քանի որ հին զինուորական մ'էք . . .

— Իս աղեկներն շատ կը սիրեմ . . . մանաւանդ այսպիսիներն , որոնք խիստ սիրուն կըլլան :

— Ոհ , իմ միակ միտքն արութիւնս է այդ բնա Առէլին ցած ձայնով , անանկ որ Յակոբոս չի լսեց դայն . բայց նա տեսնելով որ խիստ ախար է , խօսքը փոխեց , և բնա .

— Չմեռն եկաւ , անշուշտ փարիչ պիտի գառնար . . . հոկանման ամիսը մտանք . . .

— Ոչ , դեռ չի պիտի մեկնիմ գիւղէն . . . Թերեւս ձմեռն ալ հոս նստիմ :

— Այս ինչպէս բան է , բնա Յակոբոս ինքնիրեն , ինքը հոս է , ամուսինը քաղաքն է . . . արդեօք որդուած են իրարու հետ . ուրեմն , բնա , զձեղ երբեմն երբեմն ազարակը

տեսնելու բարեբաղդութիւնը պիտի ունենանք :

— Այո , ես ալ կը վազադիմ գալ : Դուք , կարծեմ ազարակապանին ազդականն էք . . .

— Ոչ , տիկին . . . իմ ընկերս անոնց հորեղորորդին է . ես հին զինուորական մ'եմ , ընտանիք չունիմ , ծանօթ չունիմ . բովերնին կայխատիմ :

— Ապահով եմ որ շատ կը սիրեն զձեզ . . . Դուք գեռ երիտասարդ էք , չէ՞ք կրնար երկար առեն աշխատիլ . . .

— Երեւցէք , տիկին , ես կանուխ ծերացած եմ . . .

— Բանակէն մեկնելնէդ վերջը մայր մը , քոյր մը չունեի՞ք որ զձեզ խնամեր և պատերազմական յոգնութիւններնիդ մոռցներ :

— Ոչ , տիկին . . . Միայն ազդական մ'ունէի . . . բայց նա ալ հետս ազէկ չի վարուեցաւ . . . թէպէտ ինձի օգնութիւն ընել ուզեց , բայց սրտանց չընելուն և զիս նուստացրնել ուզելուն համար չընդունեցայ , վասն զի պատիւ ունիմ :

— Անտարակոյս առի հեռուոր ազդական մ'ըլլալու է :

— Այո , տիկին :

— Իմ ամուսինս եղբայր մ'ունի , և անոր անունն ալ Յակոբոս է . շատ տարիներէ ի վեր է իր հօրը տնէն բամբուած՝ հիմա անշուշտ մեռած ըլլալու է . եթէ ողջ ըլլար , կը վերագառնար . . . ոհ , ապահով եմ որ եղուարդ

խիստ շատ պիտի ուրախանայ զանի տեսնելուն վրայ :

Յակորոս բան մը չի պատասխանեց . և զբլուխը անդին դարձուց իր աչքէն հասած կաթիլը մ'արցունքն Անէլինէն ծածկելու համար :

Վերջապէս տուն հասան : Ատէլին ստիպեց զՅակորոս որ ներս գայ ինչ մը յոգնութիւն առնու . բայց նա մերժեց վախճանով որ չի կրնար գիմանալ ու ինքզինքը կը յայտնէ :

— Գոնէ, ըտաւ Ատէլին, երբ մէյմ'ալ այս կողմը դաւու ըլլաք, եկէք հանդիպեցէք և ձեզի ձեր փափագած պարտեզին ամէն կողմը պատեցընեմ' :

— Խիստ բարի, աիկին, դուք ալ մեր ագարակը մի մտնաք :

Ատէլին խոստացաւ . դալ, և Յակորոս տանը վրայ նայուածք մ'արձակելով մեկնեցաւ :

— Ո՛րչափ աղէկ մարդ է եղեր, բտաւ Ատէլին տուն մտնելով, և ես ու մայրս ինչեր խօսեցանք իրեն համար . . . Ես ապահով եմ որ դրսէն առանկ կոչա ու խիստ երեցող մարդիկն զգայուն սիրտ մը և վիճ հօգի մ'ունին : Ո՛հ, արտաքին երևոյթներն մարդս կը խաբեն :

Ինչ մը ժամանակէն վերջը Ատէլին՝ աղջիկը իր գիւղացի սպասուհւոյն գիրկը աւալով ելաւ կրկին ագարակը գնաց . Գիւղացիք ուրախութեամբ ընդունեցան զինքը . Ատէլին այնչափ սիրուն, քաղցր և պարզ էր իրենց հետ որ անոնք ալ ուղածմուն պէս կը վարուէին ա-

նոր առջև : Կիյո ի քթթեւ ական խօսքեր կը գրորէր, Լուիզա զերման կը գգուէր . Սան-Սուսի կերպուէր որ իր բանակին մէջ ասանկ քաղցրարարց կին տեսած չէր, և Յակորոս մեծ յարգանք ու համակրութիւն կը յայտնէր Ատէլինի, և այնպիսի եռանդեամբ որ Ատէլին անոր ինչ փոխարէն ընելն ու ինչպէս շնորհակալ ըլլալն չէր գիտեր : Իր սիրտը սաստիկ սիրով ու բարեկամութեամբ կապուած էր անոր հետ, առանց պատճառն դիտնալու :

Ատէլին տուն դառնալու ատենը ամենքն ալ հեան երթալ կուզէին . Կիյո թէ եր կուտար անոր, Լուիզա աղեկը գրկել կուզէր, Յակորոս առաջնորդել և Սան-Սուսի ալ ճամբան զանի զուարճացընել կը ցանկային : Բայց Ատէլին առանց ձանձրութիւն տալ չուզելով իր սպասուհւոյն հետ առանձին տուն կը դառնար, միայն թէ՛ եթէ օդը աղէկ ըլլար, այն ատեն իրեն հետ կընկերանային թէ՛ զանի իր տունը տանելու և թէ՛ պղտիկ չըջաղայութիւն մալ ընելու համար :

Այսպէս շատ ամիսներ անցան . ձմեռն եկաւ, կանանկեղէնն անցաւ, և ցուրտ հովերն իջել սկսան : Այն միջոցներն Ատէլին առանձին մնաց իր տունը իր սպասուհւոյն և ծեր պարտիպանի մը հետ : Ատէլին տանը բուն ծառան ճամբած և այս պարտիպանը քովը առած էր, լսելով որ նա իր տունը պատառ մը հայ ուղեկու եկող աղբամանն ու մուրացկանները խտտութեամբ կը վառնէ :

Ատէլինի միակ գրօսանքն էր ազարակը եր-
թալ, երբ օգը զեղեցիկ ըլլար, և իր աղեկին
մնասակար եղաղ ջուրա չընէր: Յակօրոս զանի
տեսածին պէս կուրախանար. բայց իր զգաց-
մանց մեծ մասը կը ծածկէր որ չըլլայ թէ գիւ-
ղացուց հարցուփորձին ենթակայ ըլլայ. միայն
Սան-Սուսի Յակօրոսի մտերմին ըլլալուն գի-
տէր որ Ատէլին իր ընկերոջը եղբոր կինն էր,
և երդում բրած էր որ այս բանը մէկու մը չի-
մացնէ, և Յակօրոս ալ վտահ էր անոր գաղտ-
նապահութեան վրայ. թէ պէտ նա կը նեղուէր
Յակօրոսի այսքան սիրոյն ու դորովանացը պատ-
ճառն Ատէլինի չի կրնալ իմացնելուն համար:
Բայց Յակօրոս այնպէս կուզէր. քանզի իր
հարօին ջուռոց և տառապանացը մեծ մասն
իմացած ըլլալով չէր ուզեր անոր վշտերն ա-
ւելցնել եղուարդի իրենց ջուռոցած վարմունքն
ալ անոր յայտնելով:

Բայց և այնպէս փարիզու մէջ եղածներն
անծանօթ էին ազարակի և դիւզի մարդոց:
Քիչ ատենէն Ատէլինի վայելած գոյն հանգըս-
տութիւնն ամուր լուրերով պիտի վերովուէր.
քանզի ինչպէս որ ասկից յառաջ պատմեցինք,
Տիւֆրէան եղուարդի կողմանէ պիտի դար Ա-
տէլինի ստորագրութիւնն առնելու իր մօրը
ստացուածոցը համար:

Օր մը Ատէլինի եկան իմացուցին որ փա-
րիզէն մէկը եկեր և իրեն հետ տեսնուիլ կուզէ-
անմիջպէս ելաւ արաճը գնաց, ուր ստկաց
տեսնելով զՏիւֆրէան, որ թիկնաթոռի մը վը-

րայ նստած հանգարտութեամբ անոր գալուն
կըսպասէր:

— Ինչ բան ունիս հոս, ըսաւ իր քաջու-
թիւնը վրան բերել ջանալով. ինչ աներեսու-
թիւնն է այդ, որ դարձեալ աչքիս կերելիս:

— Տիկին, ներեցէք... պատասխանեց
Տիւֆրէան կեղծաւոր ձայնով մը, կը յուսայի
որ ժամանակը... ձեր ասելութիւնը մեղմա-
ցուցած է...:

— Երբէք... լաւ գիտես որ քու ըրած
չարիքներդ չեն կրնար մտքես կընել... շուտ
ըրէ, ըսէ, ինչո՞ւ եկար հոս...:

— Կրկին դձեց պիտի վշտացնեմ... բայց
ինչ ընեմ, ձեր ամուսնոյն հրամանն այս է...:

— Խօսէ, խօսէ, շուտ ըրէ...:

— Մայրերնիդ, անուշա գիտեք որ...:

— Մայրս... Աստուած իմ, հիւանդ է
...: Բայց դեռ շատ ժամանակ չընեք ինձ նա-
մակ գրելը...:

— Կաթուածածաֆար եղաւ...:

— Ո՞վ Աստուած, այս ինչ գժբագգու-
թիւնն է... վերջին վայրկեաններուն ալ քովը
չի գտնուեցայ...:

Այս ըսելով Ատէլին աթոռի մը ինկաւ, և
այնպիսի դաճնութեամբ սկսաւ ըսլ ու հառա-
չել, որ ամենէն խտտասիրտն անգամ կրնար
մեղմացնել. սակայն ասե Տիւֆրէանի համար
չէր, որուն վրայ մարդկութիւնը տառապող
կրքերէն զատ ուրիշ կիբք չէր գտնուեր. Թե-
ուութեամբ կը գիտէր այս երիտասարդ ու գե-

զեցիկ կնոջը արտասուքն ու հառաչանքները , որուն թշուառութեան պատճառն ինքն եղած էր . և առանց զըլման ամենափոքր նշան մը ցուցնելու , կը ջանար անոր վշտերն աւելցընելու համար տխուր խօսքեր հնարել :

Տիւֆրէանի ներկայութիւնը Ատէլին վիշտը առաւել ևս սաստկացուց . անոր առջև չէր ալ համարձակեր ազատօրէն լալ և միայն իր մօրը վրայ խորհիլ . ուստի այս չարարարոյ և ատելի անձը չուտով ճամբելու համար քիչ մը ուժ առնելով և իր արտասուքը դադարեցնելով ոտքի վրայ ելաւ ու ըսաւ :

— Իմ մօրս մահուան դոյժը ինձի տալը ւ համար հաս եկար :

— Տիկին , պէտք է որ ձեր մօրը թողած գործերն կարգադրէք , խորհեցայ որ այս մասին ձեզի համար դժուարութիւններ կան , և ես ձեր ամուսնոյն հետ պիտի կարգադրեմ . . . բայց ձեր ստորագրութիւնն պէտք է . . . և ահաւասիկ թղթերն ալ բերքը եմ :

— Բեր , բեր , ամենքն ալ կը ստորագրեմ . . . ինձի բան մ'ալ պէտք չէ . . . միայն թէ քու երեսդ տեսնելով չի խուսիլմ :

Այս ընելով Ատէլին թղթերն առաւ , և կոյր զկուրայն ստորագրելով յանձնեց Տիւֆրէանի և ուղեց մեկնիլ . . . բայց նոյն միջոցին Տիւֆրէան թեւէն բռնելով քայեց . . .

— Վարկեան մ'ալ կեցիք , տիկին , ինչու կաճապարեք . . . թողէք որ քիչ մը երեսնիդ նայիմ . այս որչափ ատեն է որ զձեզ չեմ տես-

ներ . . . կեցիք , ձեր ամուսնոյն վրայօք լուրեր ունիմ ձեզի հազրդեցու :

Ասոր վրայ Տիւֆրէանի դէմքը դառն ժըպիտով մը փայլեցաւ . Ատէլին դողաց և ուղեց փախչիլ :

— Թող զիս , պոռաց նա , ապա թէ ոչ վերջդ գէշ կըլլայ :

— Ո՛հ , մի բարկանաք , գեղեցիկ Ատէլին , և մի սպառնաք . . . կը կարծէ՞ք որ ես կանխաւ ամեն ինչ դիտած չըլլամ . . . պարտիզպանը պարտէզին հետու տեղուանքը կայխատի , սպասուհին ալ խոհարանն է , չի կրնար ձայներնիդ լսել . . . այս ասանը ամեն կողմն ալ դիտեմ . . . ուստի կեցիք , կըսեմ , կեցիք , ըսածս կատարեցէք . . . վերջը կը տեսնուինք :

— Թշուառական . մի կարծեր որ զիս կը վախցնեն . . . քեզի դէմ ունեցած ատելութիւնըս զիս կը զօրացնէ :

— Զիս միշտ պիտի առէ՞ք . դեռ խելքերնիդ գլուխնիդ չեկա՞ւ . տեսէք ես ձեզի պէս չեմ , ձեր բըժժ նախատինքը կը մոռնամ , եթէ վերջապէս զիս սիրել ուղէք . . . բայց զգուշացիք որ համբերութիւնս չի հատցնէք , թէ չէ ամեն բան կընեմ :

— Ով Աստուած իմ , դեռ պիտի լսե՞մ այս անպատեհ խօսքերը :

— Օն ուրեմն . . . բարկութիւննիդ անցուցէք . . . դուք ալ ձեր ամուսինը չէք կրնար տեսնել . նա զձեզ թողուց , մոռցաւ ու կործանեց , ալ ուրիշ կանանց ու խաղամուրութեան

գրադած է . . . ալ հիմա վարպետ խաղամուլ մ'երդաւ . և աւելի գէշն որ կուզէք , զձեզ մեկորի վրայ պիտի նստեցընէ . . . Ես ձեզի հարուստ բնել կուզեմ . . . ձեր փափաքներն լեցնելու համար բանի մը չեմ խնայեր . . . աչուրնիդ բացէք , և տեսէք թէ ձեր ապուշ Եդուարդին չափ արժէք ունի՞մ թէ չէ : Լուսկեցեր էք : կարծեմ ըսածներուս իրաւունք կուտաք . ուրեմն հաստուխք :

Տիւֆրէան Ատէլինի քով երթալ ուզեց . սա սուր աղաղակ մը հանեց :

— Ինչ . . . դարձեալ ընդդիմութիւն . . . ճամբորդութիւնս ունայն տեղը ըրած չըլլամ : Դոնէ համբոյր մը առնում . . .

— Գաղան , մեռնիւն աւելի աղէկ է ինձ համար . . .

— Ոչ , ասանկ ոչինչ բանի համար մեռնիլ պէտք չէ :

Ատէլին ունայն տեղը փախչիլ կուզէր , Տիւֆրէան զայն պիտի բռնած՝ իր պեղծ բերնովը աւնոր այտերն աղտեղել կը ջանար . . . և ահա դուրսը մեծ աղմուկ մ'ելաւ . . . և խկոյն Յակոբոս մտաւ սրահը , ետեւէն ալ Սան-Սուսի :

Տիւֆրէան ժամանակ չի դուռ դուրս ելնելու . Ատէլին անոր դէմ դնելէն տկարացած միայն այլա՞փ մը կըցաւ թիօնովել . — զիս սա գաղանէն աղտեղէք . . . և մարեցաւ ինկաւ տախտակամածին վրայ :

Յակոբոս վաղեց Ատէլինի քով Տիւֆրէանի սպաննալով . սա փախչիլ ուզեց . Սան-Սու-

սի անոր ճամբան կտրեց բռնով . — կեցիր նա . ինք , բնկեր , 'դու այս կնկանը բան մ'ըրեր ես . ասանկ չուտով փախչիլ չըլլար . . .

— Կը սխալէք , ըսաւ Տիւֆրէան Յակոբոսը տեսնելուն վրայ իր խռովութիւնը ծածկել ջանալով : Այս տիկինը ջղային թուրութիւն ունի . . . ձայնը լսելով վաղեցի եկալ որ օգնեմ իրեն , թողէք որ երթամ ծառան կանեմ :

Սան-Սուսի ինչ բնկիբք չէր գիտեր . և ահա Յակոբոս որ Տիւֆրէանը ձայնէն ճանցաւ , ետին դառնալով զայն լաւ մը դիտեց , և պուռաց Սան-Սուսիի :

— Բռնէ այդ անօրէնք , թող մի տար որ երթայ . . . ստի Պրիվինէ , այն աւազակը որ զիս Պրիւսէլ կողոպտեց . մի թողուր որ վրէժս առնում :

— Ոչ , բնկեր , ըսաւ Սան-Սուսի , ինչ չուտով ալ ճանցուցար . . . հիմա օձիբդ ձեռք առիր , իմացայ , կեցիր որ տեսուինք :

Տիւֆրէան տեսնելով որ խաբելու միջոց մը չկայ , փախչիլէն զատ ուրիշ ճար չի գտաւ . . . Յակոբոս Ատէլինի քովն էր . Սան-Սուսի չի կըրցաւ մինակ զանի զսպել . բանգի Տիւֆրէան օւժեղ և զբաւար էր , և Սան-Սուսի նիհար և կարճ . ուտի Տիւֆրէան փութաց իր հակառակորդին կից մը տուաւ , և զայն դետինը ձգելով դուռը բացաւ , ելաւ դուրս ու արտորնօք սանդուխէն վար իջաւ : Լուիգա տը Յակոբոսի ու Սան-Սուսիի հետ հնն եկած էր , զԱտէլին կիցյի անուան տոնախմբութեան հը-

ըստ իրերէլու համար . և այս մարդիկը երբ տուն դալով պարտիզպանը չէին տեսած , Լուիզա խոհարանը դացած էր ակիկինն ուր ըլլալն իմանալու համար , և Յակոբոս ու Սան-Սուսի ալ սանդուխտի վարի կողմը կըռայասէին , երբ Ատէլինն ազազակներն լսելով անոր օգնութեան հասնելու համար վեր վազեցին :

Տիւֆրէսն իր փախչելու ատենը հանդիպեցաւ Լուիզայի որ սրահը կէրէր . սաստիկութեամբ հրեց դանի , և իր ոտքերուն տակը ձըգեց , և երբ փախչելու վրայ էր , Սան-Սուսի որ ոտքի վրայ ելած ու այնպիսի թշուառկանէ մը յաղթուելուն վրայ կատաղած էր , վազեց իր դաւազանովը , և Տիւֆրէսնը բռնելով օտտօտիկ գանակածեց . բայց նա դարձեալ օձիքը բրցնելով փախաւ պարտէղը . Սան-Սուսի ետևէն վազեց , սակայն Տիւֆրէսն որ պարտէղին ճամբաներն լաւ գիտէր , իր հակառակորդին ձեռքէն փախաւ և որթով (սամա) գոցուած պատի մը քով հասնելով անոր վրայէն ցատկեց փողոցը և ճամբան շտկեց ի փարիզ իր ըրած հանդիպումը անիծելով :

Սան-Սուսի տեսնելով որ Տիւֆրէսն փախաւ , դարձաւ տուն եկաւ . տեսաւ որ Ատէլին Յակոբոսի օգնութեամբը սթափեր է : Ատէլին աչքը բանալով տեսաւ զՅակոբոս և զԼուիզա որք իր քովը կեցած էին :

— Ո՛հ , բարեկամներ , ըսաւ անոնց նուազեալ ձայնով մը , առանց ձեզի պիտի մեռնէի . . . :

— Անդգամ մարդ , ըսաւ Յակոբոս , երկար ատենէ որ զինքը կը ճանչնամ . . . աօի ժամանակաւ կողողացեց զիս . . . վերջը ձեզի կըպատմեմ , ակիկին :

— Սրիկայ , ըսաւ Լուիզա , զիս անանկ գերտինը նետեց որ . . . կարծես թէ ութը տարեկան տղայ մ'էի . բայց Սան-Սուսի աղէկ դանակածեց զանի . . . անանկ որ դաւազանին ելնեն ու իջնելը չէր տեսուեր :

— Է՛հ , Սան-Սուսի , ի՛նչպէս ըրիր , նա յինք . . . :

— Ձեմ դիտեր ուր աներևութացաւ թըշվառականը . . . պարտէղին մէջ կորսնցուցի . . . ամեն կողմ նայեցայ ու չի գտայ . . . բայց աղէկ ծեծ կերաւ . ակիկին , եթէ կուղէք , երթամ դեղը , փնտռեմ գտնեմ :

— Ձէ , պարտալ բան է , այսպիսին ալ չընորհակալ եմ : Բայց այս աս անօրէն մարդուն խօսքը մի ընէք . ի՛նչ համարձակութեամբ այսուհետեւ այս կողմերը պիտի գայ :

— Հոսկէ ալ բան մը գողցաւ , ակիկին . . . :

— Ձէ . . . գործի մը համար եկած էր . . .

լուր մը տուաւ ինձ . . . վերջը սիրայ վրայ խօսեցաւ . . . և իմ անարգանացս վրայ կատաղելով գործը գէշի պիտի դարձնէր , եթէ դուք վրայ չի հասնէիք :

— Գազան , ա՛հ , արդեօք մէյմ'ալ ձեռքս պիտի անցնի' . . . :

— Սա ամբարիշտին չէք նայիր , Ատէլինի պէս սիրուն ու գեղեցիկ կիները կը հետազօտես . . .

աստանի ձագ, ժանտախտը վերջընէ աշխարհէս ասանկ թշուառականներն, քսաւ Լուիզա:

— Չէ թէ զձեզ համբարեւրու, այլ և երեսնիդ նայելու անգամ արժանի մէկը չէ, քսաւ Յան-Սուսի. եթէ պատերազմական սուրս քովս գտնուէր, յախտենակամութեան տարտարոսը կիջեցընէի զանի:

Խաղաղութիւնը վերահաստատեցաւ. բայց Ատէլին իր մօրը մահուան դոյժը առնելուն և անզգամ Տիւֆրէնիին եղբուարգի համար քսածները լսելուն վրայ ալ չուզեց կիյրջի սօնակմարութեան երթալ, որով գիւղացիք շատ վշտացան: Ունայն տեղը Լուիզա և իր ընկերներն ջանացին իր միտքը դարձընել. պէտք եղաւ առանց Ատէլինի ագարակը վերադառնալ, և զանի իր այս վշտացը մէջ առանձին թողուլ:

Յակորոս և Սան-Սուսի այն գիշերն Ատէլինի առնը մնալ ուզեցին, որպէս զի կրկին անզգամ Տիւֆրէնի կողմանէ ըլլալիք խոշտանգանացը գէ՛մ զանի պաշտպանեն. բայց նա չնորհակալ եղաւ անոնց ուղաճովելով զերեսնք որ ալ վտանալու բան մը չկայ, և ազալեց որ շատ անգամ իրեն յայելուութեան դան:

Ագարակին մտքէկը դժուարաւ մեկնեցան անկէ, և Յակորոս միտքը գրաւ իր եղբոր կնոջը վրայ հսկելու:



ԳԼՈՒԽ ԻԵ.

ՅԱՐԿ ՎԻՃԱԿԱՂԱՆՈՒԹԵԱՆ

— Ինչո՞ւ համար կը կորսնցընեմ ես, մինչդեռ կը տեսնեմ որ ուրիշներն կը շահին. միթէ չուտով հարստանալու միջոց մը չե՛մ կըրնար գտնել:

Այսպէս կը խօսէր եղբուարգ ինքն իրեն Տիւֆրէնի Վիլնէօլ-Սէն-ժօրժ գացած օրը. դուրս ելաւ խաղամոլի տնէ մը, ուր իր տանը միջոցաւ փոխ ասած ստակին մեծ մասը կորսընցուցած էր. սկսաւ անճանգստութեամբ փարիզու փողոցները պտտիլ, և անզաղար խաղամոլի մը գլխուն մէջ դարձող այլ և այլ խորամանկ հնարքներով երազել: Այս անճեթեթ խորրըղածութեանց մէջ եղած առեն յանկարծ նուագարաններու ձայներ առաւ, և այս ձայներուն ուսկից գալը հասկընալու համար գլուխը վերցընելով տեսաւ որ վիճակահանութեան յարկի մը առջնէ է: Այս նուագարաններն քառասուն — վարձքով սոյն յարկին դրանը ներսի կողմը աղմուկ մը կը հանէին, և բոլոր ապուշ շատախօսներն հոն կը հաւաքէին դրանը վրայ կախուած վիճակահանութեան թիւերու ցանկ մը անոնց ցուցընելու

համար , ուր կր դանուէին շաքարալաճառի
խանութինման կապոյտ և կարմիր շահու կամ
կորստեան նշաններ :

Հօս կանկ առաւ Եդուարդ և ուրիշներուն
պէս ինքն ալ սկսաւ այն կախուած ցանկը դի-
տել , Քսան ստով եօթնասուտնը հինգ հազար
Ֆրանկ շահ . Ինչ աղէկ բան . . . բսել է զը
չորս թիւ մէկ տեղ շահուած է . այս ալ խիստ
հազուադիւտ է . բայց վերջապէս չըլլաւ բան
մը չէ . . . :

— Ա՛հ , բնկեր , ըսաւ ձկնալաճառ կին մը
մրդալաճառ կնոջ մը , որ ճիշդ Եդուարդի
բով կեցած՝ 11 , 20 , 44 , 19 , 76 թուոց ար-
դիւնքը կորինակէր , այսօր թագուհիի մը պէս
հարուստ պիտի ըլլայի . . . տարի մ'է որ սա
ելած առաջին երեք թուոց ետեւէն ինկերեմ
. . . երէկ չէ առջի որ պիտի քաշուէր . . . Սոյն
օրը ամուսնոյս կըստպէի որ վալէ կաշխատի
և ինձի փորը լեցուած սագ մը պիտի բերեր
դուիս գլխի տալով ուտելու համար ընտիր դի-
նիով , Ես միտք ունէի ճայս երթալ առանձին
տեղ մ'ընել ու տուն գառնալ պառկելու . . .
Պարսպ տեղն սպասեցի . ամուսնու չեկաւ . . .
Ելալ ետեւէն զացի , տեսոյ օր կիրակի օր ն-
ոստից ընկերութեան մէջ շատ Էւս պարբերուն
համար խիթ (սանձի) ունեցեր է : Պէտք եղաւ
դեզ ընել . վիճակահանութեան ժամանակն ան-
ցաւ . ես ալ իմ շահս կորսնցուցի :

— Խեղճ ընկերուհիս . . . մեծ դժբաղդու-
թիւն է ասի . . . Ա՛հ , իմ ալ ողորմած հոգի ա-

մուսինս եթէ քիչ մ'ալ չի մեռներ , ինձի հա-
մար շատ աղէկ կըլլար . . . տարբ տարի է որ
20 թուոյն ետեւէն ինկեր եմ . այս անգամ
թէեւ քիչ մը ժամանակն անցաւ , բայց հոգ
չէ . վերմակս ծախեցի ու դրուեցայ . . . եթէ
այս անգամ ալ չի շահիմ , չապկիս ալ պիտի ծա-
խեմ . . . :

— Արդեօք մեծ թիւը ո՞վ շահեր է :

— Կըսեն թէ նորաձեւութեանց վաճառա-
կանին խոհարարուհին շահեր է :

— Ո՛հ , ո՞րչափ երջանկացաւ հիմա :

— Չարմանային սա է որ խոհարարուհին
երազ մը տեսեր է եղբր . իբր թէ իր տէրը կը-
րակի ամանին մէջ գործ է ըրեր :

— Հա՛ , ըսել է որ ատի ոտակն ըլլալու է
. . . ծիծաղաշարժ բան . . . ո՞րչափ գժբաղդ-
եմ խաղի մէջ . . . ես ասանկ երազներ չեմ
տեսներ :

— Ողորմած հոգիիս ողջութեան ատենը ես
ասանկ երազներ շատ կը տեսնէի , բայց բնաւ
չէի շահեր :

Եդուարդ յարկին առջև գտնուած բազ-
մութիւնը ճեղքելով կը մեկնի անկէ . ճամբան
գացած ատեն կը խորհի որ ասի թղթի խաղէն
աւելի չուտով հարստանալու միջոց մ'է . և թէ-
պէս այս ալ բազդի արուած բան մ'է , բայց
արդիւնքն անկէ աւելի է , ուր մնաց որ ամե-
նաշնչին գումարով մ'ալ խիստ մեծ գումար մը
կը շահուի :

Այս խորհրդով կանցընէ այն օրն , և հե-

տեւեալ օրն այս նոր կերպովն ալ իր բազմը
 փորձել կորչէ . իր ճամբուն վրայ պատահած
 առաջին վիճակահանութեան յարկը կը մտնէ ,
 և հեռուն չերթար այս կերպ յարկ մը դտնե-
 լու համար . որովհետեւ բարերարութեան յար-
 կերէն աւելի այսպիսի յարկեր շատ կը դտնուին :

Առաւօտեան ժամը տան էր և վիճակահա-
 նութիւն մը պիտի բացուեր . այնչափ բազմու-
 թիւն կար որ հաղիւ ոտք կիսելու տեղ կը
 դտնէին , և ամեն ոք երթալ իր ստակը թղթի
 կտորներու հետ փոխանակելու համար մեծ
 դժուարութիւն կը կրէր :

Եդուարդ որոշեց սպասել . նայեցաւ հոն
 դտնուած բազմութեան վրայ , որուն մէջ ե-
 դածներն ըստ մեծի մասին խոհարար , խոհա-
 րարուհի , մրգավաճառ , և ասոնց նման մար-
 դիկ էին : Թէեւ հարուստներն ալ այս կերպ
 խաղերու կը հետեւին , բայց անոնցը գաղտնի
 է . իսկ գիւղացիք՝ որք մեծամեծներէն կակ-
 նածնն , ծածուկ դռնէ մը հոն կը մտնեն :

Եդուարդ այդ պարոններուն ու տիկիներնե-
 րուն վրայէն եկած խառն ի խուռն հտոր առ-
 նելով քիթը թաշկենակը գոցեց . իսկ անոնք
 իրենց շահուն ետեւէն ինկած ըլլալով բան մը
 չէին իմանար : Սկսան այնուհետեւ իրարու հետ
 խօսակցիլ իրենց ընկիւք շահին կամ կորստեան
 վրայ . և աղմուկ մ'է փրթաւ օրահին մէջ , թէ-
 և յարկին աէրը հինգ վայրկեանն անգամ մը
 կը պոսար :

— Լուեցէք , տիկնայք . պարոններ , այդ

ինչ գուռուք է այդ անկիւնը . . :

Եդուարդ ասանկ աղմուկներու վարժուած
 ըլլալուն՝ դուրսը թմրեցաւ . բայց իր շահը
 խորհելով աչքին բան մը չերեցցաւ . մանա-
 ւանդ երբ եղած խօսակցութիւններէն իմացաւ
 որ ասով շատ դիւրին շահ կրնայ ըլլալ :

— Աղջիկս , ըսաւ հնոտի հագած պառու-
 մը մուրացիկ կնկան մը , այս անտու անթիի
 փորուս տեսայ որ մամուկ մը անկողինիս վրայ
 եկեր կպարտէր :

— Մամուկ մը , ահ , ես ամեն օր ինչ մա-
 մուկներ կը տեսնեմ :

— Էհ , մամուկը աղէկ է , կրտն , հարբս-
 տութիւն կրերէ . ես այսօր 9, 30 և 51 թուոց
 վրայ սկուս մը պիտի դնեմ . ապահով եմ որ
 պիտի շահեմ :

Եւ թշուառ կինը՝ որ ոտքը դուրպայ չու-
 նի և հագած չըջագեւտան հաղար կտոր է ե-
 ղեր , գրպանէն սկուս մը կը հանէ . և իր մա-
 մուկին բազդին կը դնէ : Հաստատապէս երազ-
 ներու հաստատացողներուն աչքին առջև թիւե-
 րն ոչ թէ թիւ , այլ երազնուն մէջ տեսած նիւ-
 թերնին են , և վիճակահանութեան տէրերն
 զանոնք թիւերով կը նշանակեն , զորս բաժա-
 նորդք բերնուց սոքրած են , և վիճակահաննե-
 րըն ալ անոնց տեսած երազնուն համեմատ կը
 վարուին :

— Պարոն , սա երեսուն սա եղներուս հա-
 մար դիր , կըսէ խեցեկաճառ մը :

— Պարոն , սա քսանըրորս ճերմակ կա-

տուի մը համար գիր, կըսէ ուրիշ մը . . .

— Պարոն, սա մօրաքեռսս Գրիգոր գիր . . .

— Տիկին, սա մանր ձուկերս գիր . . .

— Իմ ալ կանկառներս . . .

— Տղաս, այս գիշեր մինչև լոյս ձիեր տեսայ, որոնք սենեակիս մէջ այնպէս կը վազվառտէին, իբր թէ ակոռը եղած ըլլային . . .

— Ինչ գոյն ունէին, ըսաւ վիճակահանին կինը, ծաղրական ժպտով մը . . .

— Հա, կեցիր որ ըսեմ . . . կարծեմ ճերմակ էին . . . չէ, չէ, սև . . .

— Ասոր թիւը Չնէ : Լծուած էին . . .

— Կարծեմ . . .

— Այս ալ Չնէ : Սաստիկ կը վազէին . . .

— Այո, ինչպէս հրապարակներն . . .

— Այս ալ 72ն է . . .

— Ուրեմն այս ամենը պէտք եղածին պէս կարգադրէ . . . Ասանկ երազ մը տեսնելէս ետքը աղւոր կառք մը կը քալեցընեմ . . .

— Ես ալ այս գիշեր ասիկէ ծիծաղաշարժ երազ մը տեսայ . . . քաղաքի մը մէջ էի, ուր կովեր կային որք հովիւներու . . . ու հովուհիներու հետ կը պարէին . . . ետքն ալ տուներ տեսայ որոնք հացով շինուած էին . . .

— Պէտք էր որ գիրնալու համար անոնց պատերը լղէիր . . .

— Չգէ որ խօսքը լինցնէ, խեղկատակ դու ալ . . .

— Վերջն ալ գետի մը վրայ կը պատէի, որուն ճուրը կրակի վրայ դրուածի պէս կեռար . . .

— Ըսել է որ եփած ձուկ ալ որսացիր, այնպէս չէ . . .

— Լուէ ըսինք ա', շաղակրատ : Վերջապէս տեսայ որ գետին միւս կողմը գետնէն աղւոր պալատ մը դուրս ելաւ . . . այն պալատին տանիքը գոհարէ, պատերը ոսկիէ, պատուհաններն արծաթէ և դռներն յակիրթ է էին . . .

— Վայ չար սատանայ, տեսած հացէ տունիդ բոլորովին հակառակը . . .

— Ես այս պալատը տեսածիս պէս նաւավարին ըսի որ դիս հոն տանի . . . նաւավարս որ գեղեցիկ երիտասարդ մ'էր, նաւուն վարձքին փոխարէն ինձ հետ գէշութիւն ընել ուզեց . . . ես դէմ կեցայ, մտիկ չըրաւ . . . զիս նաւէն դետը նետեց . . . վերջապէս անգագամը զիս . . . հասկրցա՞ք, աղաքս . . .

— Ինչ կըսես, քանի՞ անգամ . . .

— Չի համբեցի . . .

— Լ՛հ . . . աս խիտ աղւոր երազ է . . . վերջն ալ աղէկ կապեցիր . . . այս նաւավարը անուշա ամուսինդ ըլլալու է, որ քնացած առանդ կարելի է քեզի . . .

— Այո, վեց ամիս առաջ ասանկ երազ մը տեսայ . . .

— Ըսել է որ հիմա կուի ունիք իրարու հետ . . .

— Ոհ, անգամ մը ինձի վայրէ գետնախնձոր կերուց, այն ժամանակէն ի վեր երբ քովս գայ, պարտալ կընէ . . .

— Բայց իրաւունք չունիս, այո, իրաւունք

չունիս . . . վերջը բարբոսին կըձգէ զքեզ .
գիտցած եղիբ որ եթէ այս շուները անգամ
մը ուրիշ վանդակ մը գտնեն , ալ անկարելի է
դանոնք ուղիղ ճամբան մտցնել . . . ալ լինցաւ . . .

— Այս , իրաւունք ունիս , բարեկամս , կի-
րակի օրը հայտուիմ :

— Խիտա ազէկ կընես :

— Տիկնայք , ո՞րչափ սիրուն էք , ըսաւ խո-
հարարուհի մը իր դնած ու կողովը դրած վառ-
եակը շօշափելով , զոր Պեգասեան թռչունինը-
ման կը յարգէք . ներեցէք , տէրս կըսպասէ .
կանուխ դուրս պիտի ելնէ . պիտի երթամ որ
կրակ չինեմ ու իր չօգօշաթը պատրաստեմ . . .
Առ , շուտ քրէ , տիկին , իմ սովորական գրամս . . .
ահաւասիկ երեսունըփեց . . . :

Խոհարարուհին տոմստին առնելով և իր հա-
շիւն կարգադրելով դարձաւ տուն . վառեակն
յիսունս — գնած էր . բայց չորս ֆրանք վեց
որ — պիտի հաշուէք որ փնձակահանութեան դր-
րած գրամն ստանար . այս ալ ազէկ շահ . Ա-
սոր տէրերն ամեն բան ասանկ սուղ ուտելու
վարժուած ըլլալու են :

— Ինձի կը հարցնէք , ըսաւ պղտիկ մարդ
մը որ երեք քառօրդէ ի վեր է կըսպասէր ,
միակ թիւերով խաղուն միշտ ազէկ է :

— Նայէ , ըսաւ ուրիշ մը , 6 ը բանտարկը-
ուեցաւ . . . հիմա պիտի ելնէ :

— 2 թիւը ելաւ . այս թիւը 20 և կը բերէ :

— 30 թիւը երեք անգամ կը քաշուի . Զը-
բօներն երկար ժամանակէ ելած չեն :

— Այնպէս է . կարծեմ անոնք երկերկու
թիւերով պիտի ելնեն :

— Գտառուսն թիւը ո՞րչափ շուտ կը դառ-
նայ . . . Պարոն , եթէ ես իմ խելքիս հետեւէի .
Սթրազուրակի մէջ երկու թիւ պիտի շահէի .
և տես թէ ինչպէս . կինս երբ երազ տեսնէ
թէ տղայ մը ծնած է , 44 թիւը անպատճառ
կելնէ . . . ասցեալ գիշեր ասանկ երազ մը տե-
սաւ : Էս շուն մ'ունիմ որուն քօակի մը մէջէն
թիւեր քաշել սորվեցուցած եմ որ խիտ ա-
ղէկ կընէ . ինձի 46 թիւը հանեց . այս թիւը
44 թուոյն հետ դնել ուղեցի . կնոջս հետ բո-
լոր օրը խորհեցանք . վերջապէս կինս ուզեց
որ անոր տեղը իր տօնախմբութեան օրը դնեմ
և մօտ ալ էր . . . տես թէ հիմակուան ելածը
իմ շանն ու իր երազին թիւն է . . . ահ , ա-
սանկ շան մը եթէ հարիւր սկուտ ալ տան ,
ո՞վ կուտայ :

— Բայց , սիրելի բարեկամս , ըսաւ պտառ-
չաքարալավճառ մը , ես յուսումն (թըլըսում)
ունիմ . . . :

— Յուսումն թ . . . :

— Այո . ասի թուղթ նայող կին մը տուտա
ինձի . . . :

— Ի՞նչ անասկ բան է այդ , հարցուցին
մէկ բերան ամենքն ալ :

— Կտոր մը չի դորձածուած մագաղաթ ,
որուն վրայ իմ արևնոյս գիրեր գրած եմ :

— Ոհ , Աստուած իմ , ո՞րչափ գէշ բան
է . . . այդ գրերն ի՞նչ կը նշանակեն :

— Իրաւ որ ես ալ չեմ գիտեր . այդ կինն ըսաւ որ անոնք երբայեցեբէն են :

— Զգուշացիր, ժամօթ, մի հաւատար . ա- տի աստանայական բան մ'ըլլալու է . . . այդ յուռութոյ շիտակ գ-տիոքը կերթաս :

— Բէ՛հ, ես չեմ վախնար և չեմ զատուիր իմ մագաղաթէս . . . Էս փէրփայ կեմ :

— Ապուշի պէս ասանկ բաներու կը հաւա- տայ, ըսին ամենքն ալ ժամօթի մեկնելէն վեր- ջը : Զարմանալի է որ այս կերպով հարտանա- լու կը ջանայ : Թաղին մէջ ամենուն ալ պարտք ունի և վճարելու ժամանակ չունի : Բայց չու- կայի ժամանակն եկաւ . և ես դեռ . . . :

— Ես ալ հիմա տեղ մը պիտի գտնուէի . . .

— Ո՛հ, Աստուած իմ, աղէկ միտքս ձգե- ցիրք, տղաքս դեռ անկողինն են, աղէկ գի- տեմ որ հիմա աղմուկ պիտի հանեն, անասակ- ներն . . . կերակուրենիս ութը ժամ է որ կրա- կին վրայ է :

— Հիմա երթաս կերակուրին ամանը պա- րապ պիտի գտնես :

— Երթամ, երթամ, մնաք բարով :

— Դեռ պիտի սպասե՞նք . կերելի թէ ցան- կը վաղը առտու պիտի ստանանք :

Եղուարդ այս տեսակ անձանց և այսպիսի խառն խօսակցութեանց մէջ երեք քառորդ սպասելէն վերջը՝ կարգը իրեն գալով գնաց ներս ու միտքը եկած առաջին թիւերուն վը- րայ քսան ֆրանգ դնելով դուրս ելաւ փոխա- րէն մեծ գումար մը շահելու յուսով :

Ճամբան դացած ատեն բաւական աղքատ անձինք տեսաւ որոնք տաներկու սուի փոխա- րէն յիտուն սկիւ տալ կը խոստանային իրեն, կերելի թէ այս պարոններն կամ տիկնայք ի- րեն բաղդն այն աստիճան կանարգեն որ ան- ցորդներուն այսչափ ատման կը ծախեն : Բայց եղուարդ մերժեց . իր գրպանը եղածն հազիւ իրեն կը բաւէր . սակայն արդէն ինքզինքը հարուստ կը կարծէր, վիճակահանին ըսածին համեմատ կը գրած թիւերէն անպատճառ շա- հիլ երեւակայելով : Կը խորհէր որ պիտի կա- րենայ իր գործերը կարգադրել, մեծ համբաւ ստանալ, ամենազեղչեցիկ կանանց յաճախել, վերջապէս ամեն կողմանէ փայլել, ու զտիկին ար ժերան զայրացնել :

Աստու եղաւ . ժամը երեքին ցանկը դրա- նը վրայ կախուեցաւ . Եղուարդ որ նոյն մի- ջոցներն անհանգիստ սրտիւ այն կողմերը կը պտտէր, վաղեց գնաց ցանկին քով . բայց տեսաւ որ իր թիւերը շահած չէին :



ԳԼՈՒԽ ԻԶ.

ԶԱՐ ԲԱՐԵԿԱՄԻՐ ԵՒ ԱՆՈՐՏ ԱՐԻԻՒՆՔԸ

Տիւֆրէնս սրտի կատաղութեամբ և վրէժ- լանդրութեան ոգւով գեղէն փախաւ . այլ ևս Ատէլինով իր գապանական կիրքը յագեցնելու

ժափաքը զինքը չէր ներելը, քաղ զխնայում որ այնուհետեւ անկարելիութիւն կայ այս մասին. անկից յառաջ ալ մէկ երկու անգամ ամենա- վատ խորամանկութեամբ միայն կրցաւ իր կամքը կատարել. բայց Ատէլին իր առաքելութիւնը չի կորսնցուց, Ասանկ միջոցներով պարագ տեղը յուսաց նա եղուարդի ամուսնոյն զգացումներն եղծել, և առաւել ևս արժանի եղաւ անոր անարգանացը: Մտկայն Ատէլին շատ թշուառ էր. չի գործած մէկ մեղացը համար միշտ կուշար. նա կորսնցուց իր ամուսնոյն գորովանքը, և խմացաւ որ վերջէն մեծ չքաւորութեան ենթակայ պիտի ըլլայ. . . ասկէ աւելի գէշութիւն կրնար ըլլալ իրեն համար:

Եղուարդ այլ ևս խաղամուրթեան հետեւելու համար Տիւֆրէսնի խրատներուն կարօտ չէր. թշուառական օր մը չէր անցընէր առանց խաղ խաղալու. այսպէսով կը ջանար իր վիճակը բարւոյցել, և իր փոխանակագիրներն ալ որոշեալ ժամանակին վճարել: Բայց միշտ կորսնցունելու վրայ էր. և չէր ալ մտածեր որ ասանկ կորսնցընելով ի՞նչպէս պիտի կրնար իր տոմսակներն վճարել, և գեղի տունն ալ ձեռքէն երթայէն վերջը կինն ու զաւակը ուր պիտի բնակէին. այլ միայն ինքզինքը կը խորհէր, և եթէ երբեմն ստակ ալ շահէր, այն ալ իր ընտանեացը պիտոյքը հոգալու համար չէր: Ոչ, երբէք չէր յիշեր այն սրբազան կապը որ զինքը սիրուն և գեղեցիկ կնոջ մը հետ միա-

ցուցած էր. խաղամուրթիւնը ամեն ինչ մուցուցած էր իրեն:

Իր բնական առանձին և գեղեցիկ սանդուղ թողու պարտաւորելով գնաց Տիւֆրէսնի հետ բնակեցաւ: Տիւֆրէսն գեղէն դարձած ասեն քանի՞ օր անհանգստութեամբ անցուց, վախնալով որ լըլլայ թէ Յակոբոս փարեզ դայ և զինքը խուզարկէ: Այս բանը զինքը սաստիկ կասկածի մէջ ձգելուն համար. անուսնը փոխեց Գուրիալ դուռ, և զԵղուարդ ալ ստիպելով որ ինքն ալ այնպէս ընէ, զանի ալ Մօնպրէսն անուանեց: Այս անուններով երկուքն ալ անշուք պանդոկի մը մէջ կը բնակէին, ընկեր ունենալով իրենց խաբեբայ մարդիկ, և անանկ դաւաճան ու նենդաւոր անձեր որք Տիւֆրէսնի նման երեսնին պահելու պատճառներ ունէին:

Ատէլինի մօրը մտնելէն երեք շարաթ վերջը՝ անկէ մնացած ժառանգութեան բոլորն ալ լնացաւ, և ալ այնուհետեւ հնարքներ կը մտածէին իրենց օրական հացն հայթայթելու համար:

Իրիկուն մը որ Տիւֆրէսն ու Եղուարդ միտակ նստած էին, և խաղալու ստակ չունենալով ըստ սպորութեան հնարք մը կը մտածէին, նայիս յանկարծ դուռը զարնուեցաւ, և լամբէն անունով մէկը՝ որ ճարտար դող մը և Տիւֆրէսնի ալ մտերիմ բարեկամներէն էր, ուրախ դէմքով ներս մտաւ, թեւերուն տակն ալ չըս շիչ առած:

— Ո՛հ . . . դո՛ւ ես Լամբէն, ըսաւ Տիւֆ-
րէնն խել մը բարեկամական յարգանքներ ընե-
լով անոր, որոց պատասխանեց Լամբէն, զորս
Եդուարդ չի տեսաւ խորին խորհրդածութեանց
մէջ ըլլալուն համար :

— Այո, պարոնայք, ես եմ : Մն ուրեմն,
Մոնպրէօն, մի մտածեր . . . զբեղ զուարթա-
ցընելու բան բերի :

— Ի՞նչ է բերածդ . . . :

— Գինի, օղի եւ մրդօղի (բոմ) :

— Վոյ չար ստատանայ, ըսել է որ ստակ
չահեր ես . . . :

— Ճամբրիտ հիմա տասը ֆրանգ շահեցայ,
և բարեկամներուս հետ պիտի ուտեմ :

— Կեցցես, Լամբէն, աղէկ ժամանակին
եկար. մեղի զուարթացնելու միջոց է . . .
Մոնպրէօն ու ես քսակիս ստակ մը չըլլալուն
համար նստեր կը խորհէինք :

— Հիմա խմենք, որ քիչ մը զօրանանք,
ետքը ասոր վրայ կը խօսինք :

Չորս չիչերը գրին սեղանին վրայ, իրենք
ալ բարբոտիքը նստան, և բաժակներն սկսան
արագ արագ լցուիլ ու պարպուիլ :

— Գիտես, Լամբէն, ստակ մը չունինք
այս ալ խիստ գեշ հիւանդութիւն մ'է :

— Բէ՛հ. այդ ալ ձեր անմոռութենէն է . . .
Կենացնուդ :

— Իրա՛ւ կըսես, Լամբէն :

— Այո՛. եթէ ես ձեզի չափ բան դիտնա-
յի, մանուսնուդ, Մոնպրէօն, քեզի չափ, ս'ը-
չափ երջանիկ կըլլայի :

— Ի՞նչ ըսել կուզես, ըսաւ Եդուարդ օղի
լեցընելով. պարզ խօսէ որ հասկընանք :

— Հոս չի հասկնալու բան մը չկայ. եթէ
ես քեզի չափ դիր գիտնայի, հիմա մեծ գոր-
ծեր կը տեսնէի . . . բայց դուք վախկոտ էք :

— Բաւական դործեր տեսանք, բայց չի
յաջողեցաւ :

— Բայց ի՞մ ըսածս ուրիշ գործ է . . . խը-
մենք, բարեկամք :

— Ըսէ, նայինք, Լամբէն, ի՞նչ կընէիր :

— Ի՞նչ պիտի ընեմ, նենգութիւնը ողջ
ըլլայ . . . բայց ի՞նչ ընեմ, որ գիրս մաքուր
չէ :

— Ի՞նչ գիր պիտի գրէիր :

— Գործը գիտէ . . . Նայեցէք, հիմա ի՞մ
քովս տոմսակ մը կայ, զոր բարեկամիս մէկը
ինձ յանձնեց, և որուն մէջ նշանակուած է իր
հօրը ստացուածոց գումարը, և հոս պիտի վը-
ճարուի :

— Ո՛րչափ ֆրանգի է :

— Հազար երկու հարիւր ֆրանգի, զոր
փարիզու երեւելի սեղանաւորներէն մին ընդու-
նած է . . . ասոր համար ամեն մարդ կը զեղ-
ջէ ստի, և բարեկամս մէկը կը ճաննայ փարի-
զու չըջականքը որ իրեն առաջարկած է իր
տոմսակն զեղել տալ : Արդ, դուք ալ ստանկ
բան մը չընէք. անմիջապէս կը զեղնն :

— Ի՞նչ . . . ինչ կըսես . . . կեղծ տոմսակ
մը գրենք :

— Չէ, կեղծ տոմսակ գրեցէք, չեմ ըսեր

. . . որովհետեւ հազար երկու հարիւր ֆրանքը տասներկու հազար չի կրնար ըլլալ կենացնուդ :

— Քչու առական, առի կեղծ չըլլար, ի՞նչ կըլլայ :

— Չէ, կեղծ չէ, այսպէս չէ՛ : Տիւֆրէսն . նոր տումակ մը կը հանենք շրջաբերութեան մէջ . միայն սեղանաորք կը ճանչնան . բայց անոնք ալ բառական հարուստ ըլլալով մեզի հարկաւ նուէր մը կընեն :

— Այնպէս է, իբաւ կեղծ չըսուիր ատոր, ըսաւ Տիւֆրէսն, տումակ մը կը հանենք, կերթայ, և ուրիշ մը վճարել կուտանք :

— Ահա այսչափ, ատոր վարպետութիւն կըսեն, և ոչ ուրիշ բան . բայց Մօնպրէսն գեւ չի համոզուեցաւ :

— Չէ, չէ, շատ աղէկ համոզուեցայ, պարոններ . բայց ես ատանկ բաներէն կը վախնամ :

— Աղէկ . բայց խորհէ որ այդ բնութիւնով վերջապէս ձմեռուան մլուկներուն նման անօթ ու լիճենէ պիտի մեռնիս :

— Ես աղէկ կը խօսի, ըսաւ Տիւֆրէսն . նայէ, հազաճնուս ուրիշ ճերմակեղէն և հագուստ չունինք :

— Խորհեցէք որ հաս կորսնցնելու բան մը չկայ . այլ միշտ շահ :

— Հապա պատիւնին, ըսաւ Նդուարդ անդոր ձայնով մը :

— Պատիւնին . ի՞նչ զարմանալի մարդ ես գուն . քու պատիւք երկար ատեն կայ որ եր-

կինք թոսած է . Տիւֆրէսն որ ըսես, երբէք պատիւ ունեցած չէ, վախճալով որ որ մը կը կորսնցնէ :

— Դու ալ տանն տեղ այդ զուարճախօսութիւնը կընես . . . խմենք պարոններ :

— Այս ալ խորհեցէք որ տասներկու հազար ֆրանքով խիստ բաւ կը վերահաստատիք . . . Ես շահու ապահով եղանակ մը գտայ . իբաւ որ եթէ ձեռքս երեք հարիւր սօկի ունենամ, հաղարուս որ սօկիներ կը շահիմ :

— Իրա՞ւ կըսես :

— Այդ ալ խօսք է . եթէ կուզէք, ձեզ ալ սորվեցնեմ, և շահը մէջերնիս կը բաժնենք :

— Ճշմարիտ աւ աղէկ բան է . ըսաւ Տիւֆրէսն ամուսին ուշադրութեամբ քննելով, մինչդեռ Լամբէն ալ մրգօղի կը լեցնէր Եդուարդի : որուն դուրսը դառնալ սկսած էր : Լամբէն, ըսիր որ գուն քու բարեկամիդ . ամուսակը զեղնող մէկը կը ճանչնաս :

— Այո, գիտե՞ր տսի քո՞ւ է, և կտակածելի բան մը չէ . մանաւանդ որ պիտի հաստայ ալ թէ վերջը շահուս որ պիտի ըլլայ :

— Այնպէս է . . . ըսաւ Տիւֆրէսն, մեր մէջը գաղտնի մտովն ետքն ո՞վ պիտի իմանայ :

— Խեղճերնիս ի՞նչ ընենք . . . թոթովեց Եդուարդ :

— Խեղճն ի՞նչ է, գուն ալ . կարծես թէ գիմացիները տղայ են :

— Ամենէն աղէկը յաջողին է, ըսաւ Տիւֆ-

բէսն, եթէ Մծնպրէօն տոմսակը դրէ, ևս կըստորագրեմ. վճարքն ալ վրաս կառնում:

— Ի՞նչ կըսես, Մծնպրէօն, դեռ առարկութիւններ պիտի ընեն. տես, ֆուրվալ ամեն բան իր վրայ առաւ. այս ալ ըտարեկամական ծառայութիւն մ'է:

— Ի՞նչ . . . Տիւֆրէսն . . . կուզես որ . . .

— Ճշմարիտ այս էքաւորութենէն ազատելու համար ուրիշ միջոց չեմ գտնելք . . . ուստի դարձեալ կըսեմ. այս գործոյն մէջ քեզի վտանգ մը չկայ:

— Աղէկ գեղեցիկ:

— Գնա բանդ դուռն ալ, քեզի կըսեն թէ վտանգ մը չկայ . . . Ահա առիկ ևս իմ քովս կնքուած փոխանակադիր մ'ունիմ. . . գրիչ կտրէ, Տիւֆրէսն:

— Իմ ձեռքս կը դողայ, ըսաւ Եդուարդ, ես չեմ կրնար գրել:

— Էհ, դու ալ շատ դէմ կը կենաս. ահ, սրչափ երջանիկ պիտի ըլլայի, եթէ քեզի չափ դիր գիտնայի. . . բայց ժամանակին անհոգութիւն ըրի . . .

— Եթէ գողութիւննիս երեւան ելնելով բռնուինք . . .

— Անկարելի բան է . . . բայց եթէ բռնուինք ալ, քանի մ'ամիս բանապարտելով կաղատինք. բանա ըսած գ. ալ դէշ աեզ չէ, հանգիստ կը նստիս, կրղբօտնուս, մարդ ալ կը ծանշնաս:

Եդուարդ իր քովը գտնուած անգլամեն-

բուն այս խօսքերովը մտրտուած, և երկար ատենէ ի վեր մտլութեամբ և ցոխութեամբ իր բարբը ազաւազած ըլլալով՝ վերջապէս պատժական օրինաց ենթակայ եղող թշուառնէրուն ալ զասակից կըլլայ, կը խնդէ իր խղճին վերջին ձայնն ալ. և ամենամօթապարտ մեղք մ'ալ կը դործէ:

Փոխանակադիրն կը գործի. Տիւֆրէսն անոր ստորագրութիւններն կը յարմարցնէ. և խիստ աղէկ կ'յաջողի, որուն վրայ կը դարձանայ Եդուարդ. ինքն ալ գիրը փոխելով անոնց տուած անուններն տոմսակին ետին կը գրէ:

— Լամբէն կը հրճուի, և աւելի ապահով ըլլալու համար տոմսակն՝ հազար երկու հարիւր ֆրանցի տոմսակն զեղջէլու խօսք տուող անձին զեղջէլ աալ որոշեց, որ փարիզէն քիչ մը հեռու պզտիկ քաղաք մը կը բնակէր, Գործն ասանկ կարգադրելին: Տիւֆրէսն Լամբէնի հետ պիտի երթար, որովհետեւ, այս պարտններն իրենց տոմսակն յանձնելու չափ վստահութիւն չունէին անոր վրայ. Եդուարդ ալ որ ատենց չափ անվախ չէր, փարիզ կենալով գործոյն արդեանցը պիտի սպասէր:

Ամեն ինչ լմնալով կրկին խմցին. Եդուարդ աւելի թմրելու և միտներն զուարճանալու համար՝ վերջապէս ապագային մէջ շահելիք այս ստակոյնին խնջ մը դործեր կարգադրելէն ետքը՝ արմուկնին (տիրուէք) սեղանին վրայ դնելով քնացան:

Եդուարդ՝ որ միտներէն աւելի խմած էր

և անոնց չափ է՛ր կրնար բմոյելիք վերցնել, առաւօտեան մամուլ թի՛ն հաղիւ կրցաւ արթննալ Արթննայաւն պէս առջի իրիկուան բրած անպատիւ գործը միտքը գալովն անոր ծանրութիւնը յիշելով դոց մ'եկաւ վրան : Տիւֆրէանք փրնառեց որ այն կեղծ փոխանակազիւրն ուզէ ու պատուէ : բայց նա առաւօտուն կանուխ լամբէնի ճեա ճամբայ ելած էր վաննալով որ չըլլայ թէ Եգուարգ իր այս բրածին վրայ զգնայ :

Եգուարգ դուրս եկաւ և զինքը նեղող անհանգստութեանն համար դրօտանք մը դանկ կը ջանար . արդէն ինքզինքը յանգաւոր ճանչնալով աչքը չորս կողմը կը պտտցնէր . և եթէ մէկը երեսը նայէր , իսկոյն կը կարմրէր , կը խռովուէր կարծելով որ զինքը պիտի բռնեն : Ունայն ակողք կը ջանար իր վախուն ու սկարութեանը յաղթել . և այս կերպով շահելիք ստանկն կանիծէր :

Եգուարգ այսպիսի վրդովեալ մտքով փողոցէ մը դարձած ատեն՝ յանկարծ ձայն մը կը լսէ , որ իր անունը կուտար . . . Ասոր վրայ առանց տակն նայելու քայլերը կը փութացնէ . բայց ետևէն կը վազեն . . . կը հասնին . . . թեւէն կը բանեն . . . կը գողայ . . . պաղքատինք մը կը հոռէ ճակտէն . . . աչքը կը վերցնէ , և ինչ տեսնէ . . . կինն ու զուակը կեցեր են առջին :

— Ո՛հ , դու ես , սիրելիս . վերջապէս դոստ պընք , ըսաւ Ատէլին , ա՛հ , սրբափի փնտռեցի զքեզ :

— Ո՛րչափ վախցուցիր զիս , ըսաւ Եգուարգ . այս հանդիպման վրայ ևս առաւել չուարած : Բայց հոս ի՛նչ բան ունիս . . . ինչո՛ւ գեղէն դարձար :

— Պարտատէրներդ զիս անէն վաճակեցին . . . ալ մերը չէ . . . Ծամանակէ մը ի վեր է նօսարը ինձի իմացուցած էր որ քու հարբտութիւնդ փճացրել է , և քու բոլոր անեղածդ բաղմամբիս փոխառութիւններով ծանրացած է :

— Ես դիտեմ , տիկին , պարագ ակողք ինձի տրտունջի և յանդիմանութիւնի մի բնէր :

— Չէ , ինչու բնեմ . . . բայց . . . բարեկամս , սրբափի փոխուեր ես :

— Հուրեղացայ :

— Ինչո՛ւ ինձի չի գրեցիր , կուգայի կը նայէի քեզի :

— Ինձի մէկը պէտք չէ :
— Այդ ի՛նչ լսօք է : . . ինձի ատանկ ընել կըլլայ . . . Մայրս մեռաւ , դու ալ զիս կը ձգես . . . դիտուածով գոտայ զքեզ . հոս ամեն բնական անհամարք զքեզ հարցուցի , մէկը չի ճանչցաւ : Տասը՛հինգ օրէ որ հոս եմ . . . ալ յոյսս կտրած էի , երբ յանկարծ քեզ պատահեցայ . . . սիրելի Եգուարգ . . . և հիմա ինձի ճեա սպայէս կը վարուիս . . . դոնէ սա զուակդ մէյմը չե՛ս դգուեր :

— Փողոցին մէջ ամենուն ծաղր պիտի ընել տաս զիս :

— Չաւակը դգուող հօր մը սեւաբտանը կըլը :

նայ պարկեշտ մարդոց անջին ծաղրական երևելի . . . եթէ կուզես, սա տեղ սրճարան մը մտնենք . . .

— Ժամանակ չունիմ . . .

— Ո՛ր կը բնակիս . . .

— Շատ հեռու տեղ մը . . . որովհետև մինակ սիրտս կը նեղանար, Տիւֆրէսն դիտիր քոյն առաւ :

— Տիւֆրէսնի հետ կը բնակիս, այն անդգամին հետ որ ամեն կերպ վատութիւն դործեց . . .

— Լուէ, դու ալ բարոյականութիւն մի կարիք դիտուս . . . ես ուզածս կընեմ, ուղածիս հետ կը տեսնուիմ, դու ալ գնա գիտցածդ ըրէ :

— Այս ի՞նչ ձայն, այս ի՞նչ վարմունք է, բոսա Ատէլին ինքնիրեն ղեղաւարդ զննելով . հոգ չէ, վերջին փորձ մ'ալ ընենք : Պարոն, բոսա Եղուարդին, եթէ զքեզ ապականող թշուառականի մը հետ բնակելուդ պատճառը ստակ չունենալը է, եկու ինձի հետ, թողունք այս քաղաքը որդբեղ աւելի թշուառ պիտի ընէ, երթանք առանձին գիւղ մը . ես թէպէտ բան մը չունիմ, բայց կաշխատիմ, եթէ պէտք ըլլայ՝ դիշերներն ալ, և մեր հացը կը ճարեմ : Աղքատիկ խրճիթի մը մէջ մարդս աւելի երջանիկ կըլլայ, երբ ձախորդութեան քաջութեամբ դէմ դրուի, և երկնք մեր համբերութիւնն տեսնելով անշուշտ մեզ կուզորմի : Դու քենէ խոյս տուող հանգստու-

թիւնդ կը դանես, ևս ալ իմ ամուսինս . . . Ատուած սիրես, Եղուարդ, խօսքս մի կուրեր, կաղաչեմ, փախիր այս քաղքէն, փախիր անդգամ խրատաուներէն, փախիր վտանգաւոր ընկերներէն, թէ չէ վերջդ . . .

Այս խօսքերուն վրայ Եղուարդի սիրտը դիժով ու կարեկցութեամբ լցուեցաւ, նայեցաւ ազդիւնը երեսը, ու բոսա Ատէլինի,

— Շատ աղէկ, կուգամ . . . եթէ դործերս ըննջնեմ . . .

— Հիմա ինչու չես գար :

— Շատ կարեւոր բան մը կայ . . . պէտք է դիտնամ թէ . . . ո՛ր կը բնակիս :

— Սէնթ-Անթոնի փողոցը պնդողի մը, աս հաւատիկ հասցէս :

— Տուր, վաղը կուգամ :

— Հաստատ խօսք կուտամ . . .

— Հա ըսինք ա՛ . . . մնաս բարով, երթամ պիտի :

Եղուարդ չուտով բաժնուեցաւ անկէ, Ատէլին ալ տուն գարձաւ մէյմը վախով մէյմը յուտով . վասն զի դիտէր որ իր ամուսինն իր խոստմունքը չէր կատարել, և անհամբերութեամբ հետեւեալ օրուսն սպասեց :

Բայց հետեւեալ օրն Տիւֆրէսն ու Լամբէն ստակը ձեռքերին եկան . Եղուարդ ալ զայս տեսնելով մոռցաւ իր խոստմունքը . սկսան կրկին խաղի, զուարճութեանց հետեւի և կանանց յաճախել . թմրեցուցին զԵղուարդ, մտրեցին նորա բարբ զգացումներն, ծաղրեցին

անոր ցուցուցած վանքը, և Ատէլին հետեւել
օրը մոխանակ զեղուարդ տեսնելու տամակ
մը ընդունեցաւ անկէ որ սա խօսքերը կը պա-
րունակէր :

« Ալ զիս մի մնառներ . մի յուսար որ քեզի
հետ կերթամ խրճիթի մը մէջ կը թաղուիմ,
ինչ կընէս ըրէ, փարիզէն հեռացիր, վերջին
անգամ այսպէս կը հրամայեմ քեզ, և կամբդ
ինչ որ ուզէ, արձակ համարձակ կատարէ : »

Ատէլին սոյն գրուած ինչը արտասուօք թըր-
ջեց :

— Խեղճ աղջիկ, ալ հայր չունիս, ըսաւ
նա իրմանսի . . . Ինչ պիտի ըլլայ վիճակդ : Ա-
մուսնոյս վերջին հրամանն կատարելով հեռա-
նամ այս քաղքէն . երթամ ազարակը . ուր
բարի գիւղացիներ պիտի գտնեմ, որոնցմէ ա-
ռանց կարծելու գործ ալ պիտի ուզեմ . . .
Ահ, մայր իմ, եթէ ողջ ըլլայիր, հիմա քու
գիրկը կ'ընայով իմ մտիթարութիւնս կ'գտնէի
. . . ահ, եթէ ես քու խրամներուդ հետե-
ւէի . . . կարելի է Եղուարդ . . . բայց ժա-
մանակը անցաւ . . . գտնէ դու իմ այս խեղճ
վիճակս չի տեսար :

Ատէլին ալ այնուհետեւ իրեն սէտք չըլ-
լալէ բաներուն ըողորն ալ ծախեց, ոչ գո-
հարեցէն ունէր, ոչ ծաղիկ, և ոչ ալ աւելորդ
զարդարանքներ . հագաւ պարզ գգեստ մը,
պարզ ժապաւէնով յարդէ գլխարկ մը, աղջիկը
գիրկը առած պղտիկ ծրարով մը ճամբոյ ելաւ
կիլլոյի ազարակը երթալու համար :

ԳՂՈՒԽ ԻԷ.

ԱՏԵՂԻՆ ՊԱՇՏՊԱՆ ՄԸ ԿԸ ԳՏԵՒ

Ազարակին բնակիչները Ատէլինի վախչե-
լուն վրայ խռովեցան : Տիւֆրէնը գիւղէն
վառտած օրերնէն ի վեր, Ատէլին խորին աղիւ-
րութեան մէջ ինկած տնէն դուրս չէր ելներ .
և թէպէտ գիւղացիք շատ անգամ կուգային
զինքը կը թախանձէին որ գտնէ զիւ մը շրջա-
գայելու ելնէ, բայց նա քաղցր խօսքերով կը
հրատարէր :

Յակոբոս իր եղբօրը վարմունքին վրայ ինչ
խորհիլն չէր գիտեր . աղէկ գիտէր որ նա իր
կինը թշուառացուցած էր, բայց անոր չափա-
զանց անկարողութեանց հետեւած ըլլալն մրա-
քէն չէր անցնէր : Այս մասին Ատէլինի ալ բան
մը հարցնել չէր համարձակեր . բայց Ատէլին
կիմանար որ ինքն ալ խիստ ցաւակից է իրեն,
որոյ համար անկեղծ բարեկամութեամբ մը
կապուած էր անոր հետ :

Յակոբոս երկու օրն անգամ մը Ատէլինի
վիճակն իմանալու համար դեղը կերթար : Առ-
տու մը ըստ սովորութեան դուռը զարկած ա-
տենն ծեր պարտիզզանն աչքերն արտասուօք
եկաւ դուռը բացաւ :

— Ի՞նչ կայ, Ֆորէ, ի՞նչ կըզու տիկինին, բնաւ Յակոբոս անհանգստութեամբ. սա անցեալ օրու ան անզգամ մ'արդն եկաւ դարձեալ:

— Ահ, պարոն, այսօր մէկէն աւելի անզգամներ եկան հոս. և ի՞մբարի տիկինս տընէ՞: դուրս բրին:

— Տեսն դո՞ւրս բրին. . . ի՞նչ պատճառաւ. . . Գ՞օղ էին ատոնք, ի՞նչ էին:

— Ո՛հ, պարոն, կտռաղարութեան նուիրակներ. . . պարաստերներ. . . ի՞նչ գիտնամ. . . խել մը թղթեր ցուցնելով տիկինիս բլին որ այս տունն ալ իբր չէ. . . խեղճ կինը. . . լացաւ, բայց մտիկ չբրին. . . նա ալ իր ունեցածը ծրար մ'ընելով ազնիկը գրկեց, ու մեկնեցաւ:

— Իրեկեցաւ հէ՛. . . ահ, թշուառական. . . տես ի՞նչ թշուառութեան մէջ ձգեց կինը:

— Ահաւասիկ հոս ալ տախտակ մը կախեցին տանը ծախու ըլլալը խմբանելու համար. զիս ալ հոս թողուցին որ եկող տեսողներն պտտցնեմ:

— Տիկինին ուր երթալը գիտես:

— Անտարակոյս փարիզ գացած ըլլալու է:

— Որ երթայ ամուսնըդ գտնէ:

— Այո, հարկաւ էր ամուսնոյն պիտի երթայ. . . բայց ասոր ամուսնոյն համար դէշ մարդ մ'է կըսեն. փարիզ աղէկ համբաւ չունի եղեր. եթէ այնպէս է, պարոն Յակոբոս, մե՛ղք

իր դեռահաս, աղնիւ և խելացի կնկանը, որ կատարեալ բարի և առաքինի ալ է. . . մե՛ղք իր զաւկին ալ. . . և վերջապէս մեղք այնչափ հարստութեան որ քիչ ատենի մէջ սպառեցաւ:

Յակոբոս պարտիզպանն բարեւելով վերջին անգամ մ'ալ տանը վրայ նայեցաւ ու մեկնեցաւ. Հալարաւոր միջոցներ ինկան միտք. ուղեց փարիզ երթալ, զԱտէլին գանել, եղբայրը ձեռք ձգել, իր գէշ վարմունքին համար զինքը յանդիմանել, կինը ասանկ երեսի վրայ ձգելուն համար երեսը վար առնուլ: Այսպիսի խորհրտածութիւններով դնաց ազարակը. եղեւութիւնը պատմեց, անոք ալ ցաւեցան, բայց յուսացին որ Ատէլին զիրենք տեսնելու կուգայ. այս յուսով Սան-Սուսի համոզեց զՅակոբոս որ իր ընեկըք քանի մ'օր ալ ետքը ձգէ:

Բայց և այնպէս Յակոբոսի համբերութիւնը կը հատնէր. և երբ ալ պատրաստուած էր փարիզ երթալ, յանկարծ առտու մը տղայոց ուրախութեան աղաղակներն՝ Ատէլինի իր պղտիկ էրմանսին հետ ազարակը գալը ծանուցին:

Ամեն մարդ վազեց դուրս. որը տղեկը ձեռքէն առաւ, որը ծրարը. և ամենքն ալ իրենց ուրախութեան կուլային. Ատէլին անոնց այս համակրութիւնը տեսնելով զգաց որ տակաւին ուրախութեան առիթ մը կայ իրեն համար:

— Ահ, ըսաւ անոնց, քանի որ ձեզի պէս

ճշմարիտ բարեկամներ ունիմ, տակաւին ամեն բան կորսնցուցած չեմ:

Յակիրոս ինչ ընելը չէր գիտեր. Ատէլինի ձեռքը բռնած կը համբուրէր, կը պոռար. ստքերը գետինը կը դարնէր, ու երեսը մէկդի դարձուցած կուլար. Սան-Սուսի ալ Ատէլինի դալուն և Յակիրոսի զգացած ուրախութեան վրայ հրճուելով կը ցատկէր, հաւերուն ու բազերուն մէջէն կանցնէր կը դառնար. արդարեան հետ կիցնար, ինչպէս որ սովորութիւն ունէր ընելու իր զուարթ եղած միջոցները:

— Բարեկամներս, բաւ Ատէլին ազարակին բնակչացը, ես հիմա առջինը չեմ. դժբաղդ պատահմունքներ իմ հարստութիւնս փճացուցին. այսուհետև միայն քաջութիւն մ'ունիմ իմ ձախորդութեանցս համբերելու համար, և խիղճ մը որ իմ այս վիճակին անարժան ըլլալս ինձի կիմացնէ. Հիմա պէտք է որ ես աշխատիմ իմ ու զաւկիս հացը ճարելու համար. հարուստ եղած ատենս զիս հիւրընկալեցիք. հիմա՞ որ ազբաստ եմ, դարձեալ ամենայն փտահութեամբ ձեզի կը դիմեմ աղաչելով ձեզ որ ինձի գործ մը ցուցնէք, որ ես ալ այստեղ կենալու հաճութիւն տամ:

Ատէլին այդպէս խօսած ատեն, ամենուն դէմքին վրայ ալ մեծ տխրութիւն մը կը տեսնուէր. Լուիզա չէր կրնար իր արտասուքը զօպել Կիլո բերանը բացած և աչքը Ատէլինի վրայ տնկած՝ սրտէն խորին հառաչանք-

ներ կը հանէր. և Սան-Սուսի ձեռքը աչքերուն վրայէն չէր զատեր:

Յակիրոս ալ Ատէլինի առանց իր ամուսնոյն դէմ տրտունջ մ'ընելու քաղաքային ամեն զուարճութիւններն ու բոլոր զբօսանքներն մերժելով դաւ և ագարակի մը անկիւնը առնանձնանալ ու զին տեսնելով՝ ամենէն աւելի սիրտը ելած Լուիզան ալ Կիլոն մէկդի բրաւ, և Ատէլինը մէկ կողմ քաշելով բաւ:

— Չէ, ինչու պիտի աշխատես, և աշխատութեամբ քու փախուկ և գեռահաս անձը պիտի չարարես... ես քու տեղը կաշխատիմ, և քու ու զաւկիդ հացը կը ճարեմ, և զձեզ կը խնամեմ. հաւատաւ, տիկին, որ եթէ կաթիլ մը արիւնս ալ մնայ, այս պարտաւորութիւնը կատարել կը խոստանամ:

— Ինչ կըսես, Յակիրոս, այդ քու պարտքդ է:

— Այո, տիկին, այո, իմ պարտք է... քանի որ քու այդ թշուառութեանդ պատճառն իմ եղբայրս է. իմ քեզի ընելիքս ալ խիստ քիչ բան մ'է իր այս բրածներուն փոխարէն մ'ըլլալու համար:

— Ինչ կըսես... գուր եղբարդին եղբայրն է:

— Այո, ես եմ Յակիրոս Միւրլիլ, որ տասներկէր տարեկան հասակիս մէջ հօրս տնէն բաժնուեցայ երթալ քաղաք տեսնելու փափագով... բայց խօսքը մէջերնիս մնայ, այս ճամբորդութեանս գլխաւոր պատճառը ծնողքս

էին, որք անիրաւ տեղը ինծի հետ ցուրտ կերպով վարուեալով իրենց ծնողական սէրն ու գորովանքը բոլորովին եղբորս կը նուիրէին: Սակայն պատիւս կը ճանչնամ, և այնչափ երիտասարդական յիմարութիւններուս մէջ անգամ պատուոյս արատ մը բերած չեմ: Ահաւասիկ իմ պատմութիւնս . . . գրկեմ զքեզ, քոյր իմ, ես արժանի եմ քու բարեկամութեանդ, և դու ալ կրնաս առանց կարմրելու զայն ինծի նուիրել:

Ատէլին գրկեց զՅակոբոս, և ամենամեծ ուրախութիւն մը զգաց իր ամուսնոյն եղբայրը գտնելուն համար. միւսներն ալ զարմացած մնացին, և Սան-Սուսի ձեռքերն իրար զարնելով ըսաւ .

— Էս ասիկայ գիտէի . . . բայց որովհետեւ երկերս պատուիրած էր ինձ որ բան մը չըսեմ, եթէ աշխարհիս բոլոր հարստութիւնն ալ ինծի տայիք, դարձեալ չի պիտի ըսէի:

— Բայց ինչո՞ւ համար այսչափ ժամանակ է չի յայտնեցիր զքեզ, ըսաւ Ատէլին Յակոբոսի միջեւ կը տարակուսէիր որ ես իմ ամուսնոյս եղբայրն չընդունէի:

— Ոչ . . . պատասխանեց Յակոբոս քիչ մը շփոթած . . . ես ամեն բանէն առաջ զքեզ լաւ ճանչնալ ուղեցի . . . մարդ չատ անգամ իր ազդականներէն կամչնայ . . .

— Ահ, բարեկամ, ատանկ բան մը կրնայ ըլլալ, քանի որ այս պատուոյ խաչը վրադ կը կրես . . .

— Էհ, ինչ պիտի ընես, ըսաւ Սան-Սուսի, ես ամեն օր իրեն կը սէի. աղէկ է, սիրուն բնութիւն մը ունի. բայց քիչ մը յամառ է. երբ միտքը բան մը դնէ, բնաւ չի դառնար:

— Հիմա ինչ որ է, ըսաւ Յակոբոս, զիս գտար անկէ աղէկը չկայ. զիս քու եղբորդ և այս տղեկին հօրը տեղը դիր, որովհետեւ քու ամուսինդ ասանկ զգացումներէ զուրկ է. չը դիտեր թէ ինչ է կինն, ինչ է զաւակը . . . ինչ և իցէ, դարձեալ լուծմ, վասն զի կը տեսնեմ որ դու զանի կը սիրես. ալ անոր վրայ խօսք մը չեմ ընել, և ջանանք ամենքս ալ զանի մտնայ . . .

— Ահ, ըսաւ Ատէլին, եթէ քեզ տեսած ըլլար, կարելի է ձեր խորատներն . . .

— Եթէ զիս տեսած ըլլար . . . նայէ ինչ կըսէ . . . բայց մտնանք, ըսի, սա ապեւրակաբար, որ քու թափած արտասուքիդ մէկ կամիջին ալ արժանի չէ:

— Այս, այո, մտայէք, ըսաւ կիցք, այդչափ ցաւիլն ալ աղէկ բան չէ, քիչ մ'ալ զըռուարթ և ուրախ եղիք . . . օն, սեղան նստինք, և այս իրիկուն պարոն Յակոբոս զմեզ զըօցընելու համար թող պատերազմ մը պատմէ . . . Ասանկ պատմութիւն մը ըրած ատեն ես բոլոր գիշերը պատերազմ կերազեմ . . . կնոյս սրունքներն զինուորաց քառակուսի դունդ մը, և կ'ստանալ ալ մարտկոց մը կը կարծեմ . . . ինծի անանկ կուզայ որ թնդանօթի ձայն ալ կ'առնում . . .

— Լուէ, դու ալ, մարդ, բտաւ Լուիզա :
 Կերտիւնէն ետեւ Ատէլինի ագարակը բը-
 նակելուն պատրաստութիւններն սիրան ըլլալ :
 Լուիզա անոր համար պղտիկ սենեակ մը որո-
 շելով ագարակը դանուած կահ կարասիքով
 դանի դարգարեց : Ունայն տեղը Ատէլին դէմ
 կը կենար այս ամենուն . երբ Լուիզա միտքը
 բան մը դնէր, պէտք էր որ ընէ . ուստի մտիկ
 չըբաւ Ատէլինի որ զինքը այնուհետեւ իբրև
 պարզ գիւղացի մը նկատեն, այլ ջանաց մու-
 ցընել անոր իր վիճակին փոփոխութիւնը անոր
 ծուայելու համար ջանքն ու աշխատութիւնը
 կրկնապատկելով : Յակորոս եբբ կը տեսնէր որ
 Լուիզա իր քրոջը համար բան մը կընէ, գորո-
 վանօք ձեռքերը կը բռնէր կը սեղմէր, և Սան-
 Սուսի ալ կըլլայի կունակը ձեծելով կըսէր .

— Ինչ աղէկ կին մ'ունիս, կըլլօ, տես ինչ
 աղուօր կը ծառայէ :

— Ճշմարիտ է, բտաւ նա, ես բնաւ բանի
 մը չեմ տառնուիր, մինչև իսկ տղոցն ալ . . .
 անիկայ ամեն ինչ կը հօգայ և կը կարդադէր :

Ատէլին ագարակին մէջ հաստատուեցաւ,
 սկսաւ առնեգործել, և Լուիզա թողուց որ
 նա դրօսանքի համար բոլոր օրը կար կարելով
 և կամ բուրդ մանելով անցընէ : Յակորոսի
 զօրութիւնն աւելցաւ իր եղբորը կինն ու զա-
 ւակը ագարակը ըլլալէն ի վեր, և իր դաշ-
 տային աշխատութիւններն կրկնելով ագարա-
 կապետին մուտքերն աւելցուց : Սան-Սուսի ալ
 իր կողմանէ ընկերովը աշխատութիւնը տեսնե-

լով սուցաւ պարտազ կենալու, ու ինքն ալ
 սկսաւ անդուլ աշխատել . կըլլօ և իր կինը զԱ-
 տէլին կը յանդիմանէին չարիէն աւելի աշխա-
 տելուն համար, և զՅակորոս ալ կ'արդիւնէին
 անդադար աշխատելէ . բայց ամենք մտիկ չէին
 բնէր, և բարի գիւղացուց բեռ ըլլալէն կը
 վախնային :

Այսպէս շատ ամիսներ անցան առանց ա-
 դարտիկ բնակաց վիճակը փոխուելու : Ատէ-
 լին շատ դժէ կըլլար, եթէ իր ամուսինը մու-
 նար, բայց անկարելի բան էր . Եղուարդի յի-
 շատակը անդադար կը խռովէր իր հանգրստու-
 թիւնը : Արդեօք հիմա Եղուարդ ինչ կընէ . . .
 սս կըսէր ամեն օր . և խորհելով որ Տիւֆրէնն
 անոր հետ է, իր ցուտը կաւելնային ու սնն
 հանդատութիւնը կը շատնար : Ետան անդամկը
 մտածէր երթալ Փարիզ, ու իր ամուսնոյն վը-
 րայցօք լուր մը սուտուէր . բայց կը վախնար որ
 Յակորոս կը սրդօղի, որն որ իր եղբորը գէտ
 ստատիկ բարկացած ըլլալով չէր ուզէր անոր
 խօսքը լսել, և Ատէլինն ալ աղաչէր էր որ եր-
 բէք Եղուարդին վրայ խօսք չի բանայ :

Սակայն Յակորոս թէպէտ գրաւն այսպէս
 կը խօսէր, բայց ի ներքուստ անտարբեր չէր
 իր եղբոր համար, կը խորհէր միշտ անոր վրայ .
 յիբաւ իր կնոջը և դուկին ըրածներուն հա-
 մար շատ սրտմտած էր, բայց շատ պիտի ու-
 ըրախանար, երբ նա իր սխալմունքն ճաննալով
 դար ներողութիւն խնդրէր, զոր պատրաստ
 էին անոր մատուցանելու :

Այսպէս Յակօբոս և Ատէլին փոփոխակի իրենց ցաւերն իրարմէ կը ծածկէին, և երկուքն ալ զիրար վշտացընելէ կը զգուշանային: Սան-Սուսի երկուքին ալ խորհրդապահն էր: Կիլիօ գործ ունէր փարիզ, կամ ցորեն ծախելու և կամ աղարակիէ պէտքը բլլալիք բաներն դնելու համար. ուստի միշտ Սան-Սուսի կերթար, որովհետև Յակօբոս իր եղբայրն հան պատահելէն վախնալուն չէր ուզէր երթալ: Սան-Սուսիի գացած ատենը՝ Ատէլին զանի առանձին տեղ մը տանելով կաղաչէր որ իր աճուսնոյն վրայօք լուր բերէ իրեն: Յակօբոս ալ անոր հետ մէկտեղ աղարակէն դուրս ելնելով՝ գաղտուկ այսպէս կըսէր անոր:

— Եթէ եղբօրս վրայօք գէշ լուր մը առնես, ու դաս քրոջս իմացընես, գիտցած ըլլաս որ բարեկամն չես:

Սան-Սուսի ճամբայ կենէր երկու կերպ յանձնարարութեամբ, բայց միշտ առանց բան մը իմանալու ետ կը գառնար, որովհետև Եդուարդ անունը փոխած ըլլալուն մէկն ալ չէր կրնար անոր ինչ ըլլալն ըսել:



ԳԼՈՒԽ ԻԸ.

ԵՐՈՒԱՐԿԻ ԵՒ ԻՐ ԸՆԿԵՐԱՑ ԲՈՒՆՈՒԻԸ

Բաղդը կարծես կրկին կուրախացընէ այն թշուառներն որ զայն շահելու համար պատիւը կը մատնեն և բնկերականութեան բոլոր օրինաց դէմ կը դործեն. ասի նոր փորձ մ'է որով միշտ կը մեղանչեն և չեն կրնար իրենց այս վիճակէն խորշիլ. առաջին անգամ աեսած յաջողութիւննին կարծես ապագային մէջ անպատիժ մնանին կերպիւստօրէ. ուստի, յանցաւորը կը համարձակի, անանկ որ ի սկզբան դողալով մոլորութեան տապալիցը կը մտնէ, բայց շուտով ամեն ակնածութիւն մէկդի կը ձգէ, և կը ջանայ զինքն յանպատուութիւն հրապուրող անձինքն ալ գերադանցել:

Եդուարդ այս անգամ ուրիշ անդամներէ աւելի կատարութեամբ խաղալով՝ ալ անյաջողութիւն չի կրեց. շահեցաւ, և իր հարստութիւնը նորէն ձեռք ձգելու համար գտած միջոցն վրայ սաստիկ ուրախացաւ: Տիւֆթէնն և Լամբէն անոր սովորեցուցին այն ամեն միջոցներն որոնցմով կրնան ապուշներն խարել և աճունց բոլոր ստակն առնուլ: Այնուհետև երև-

քը մէկանց կը սկսէին մէջերնին ծիծաղել այդ-
խեղճ մարդոց վրայ, և իւրաքանչիւր ուր իր
ընկերը դերազանցելու համար միշտ նորանոր
խորամանկութիւններ հնարել կը ջանար:

Լամբէն իր երկու բարեկամացը հետ կը
ընտելէր. Տիւֆրէան իմացուցած էր Եդուարդի
որ ողէտք չէ զանի որդոցընէլ. քանզի Լամ-
բէնի դուրսը խորամանկութեան և նենգու-
թեան հնարքներով լի ըլլալուն՝ դատաճաննե-
րու համար մեծ հարստութիւն էր:

Երբ բազդը յաջողէր իրենց, և կամ նոր ա-
պուշ մը դանկելով ձեռքերնին ստակ անցնէր,
միայն զբտնու և զուարճանալ կը խորհէին,
և այնպիսի կանանց հետ ժամանակ կանցընե-
ին որ ամեն տեղ կերթան, և ստակն համար
անխտիր ամեն կարգի և աստիճանի անձինքը
կը սիրեն: Այսպիսի կանայք միայն կրնան յի-
րուի յարմարիլ այն մարդոց որք ամենազգչ-
ուելի զբտանօք և ամենպիւր զեղխութեամբ
կանցընեն ժամանակնին:

Իրիկուն մը որ Լամբէնի կըսպասէին սեզան
նստելու համար, նայիս ասիկայ ծիծաղելով ե-
կաւ և մտովաց իբր ծաղրական լուր մը իր
բարեկամացը իմացընէրու. որ իրենց կեղծ փո-
խանակադիրն երևան ելած է, և զեղջուղն իր
ստակը կուզէ: Եդուարդ զայս լսելով խռովե-
ցաւ և դայնը նետաց. Տիւֆրէան զինքը ապա-
հովեց համոզելով որ չեն կրնար զիրենք զբտ-
նել: Քանզի այն օրէն ի վեր անուռնին և բնա-
կութիւննին փոխած էին. ուստի զիրենք չի

կրնալ ճանչնալով՝ բան մ'ալ չեն կրնար ընել:
Միայն Լամբէնը կրնան փնտռել, ան ալ այն-
չափ վարպետութեամբ կը փոխէ իր դէմքն ու
կերպարանքը որ ստիկանութեան զինուոր-
ներն չեն կրնար ամենին ճանչնալ:

Բայց Եդուարդ չի հանդարտեցաւ, թէ և
կը ջանար ալ իր այս վախը փարատել, նոյն
միջոցին այս պարոններուն բարեկամութիւնը
երկու օրիորդ ներս մտան, որք խիստ յար-
մար ժամանակ եկած էին այն ընկերութիւնն
զուարթացընելու համար:

— Բէ՛հ, ըսաւ Լամբէն, վերոնիքաւ (օրի-
որդներէն միոյն անունը) մեզի ծիծաղաշարժ
գործ մը պիտի պատմէ . . . նա խիստ զուար-
ճալի լուրեր ունի. ասով մեր Պէլքուր (Եդ-
ուարդին նոր անունը) բարեկամն ալ քիչ մը
կը զուարթանայ, որովհետեւ այս իրիկուն աբր-
ատում կերէի:

— Չէ, ըսաւ վերոնիքաւ հառաչանք մ'ար-
ձակելով, ծիծաղաշարժ գործ կամ լուր չկայ
այսօր խիստ տակնուվրայ եմ. . .

— Բայց կարծեմ զու. ասանկ բաներու
վարժուած եմ. . .

— Պարտալ խօսքեր մի ընէր . . . ճշմարիտ
կըսեմ, շատ վշտացած եմ:

— Իշխանական պաշտօնեային հետ աւ-
բուած եմ . . .

— Այդ չէ . . . բարեկամութիւն ունիմ որ
դէշ գործով մը դրաղած է . . . այս բանը
զիս սաստիկ կը նեղէ:

— Ինչ գործ է ատիկայ, ըսէ, մենք կըր-
նանք զանի ազատել:

— Ամենեւին ըլլալու բան չէ. կառավա-
րութեան ձեռքն է գործը. բայց խեղճը այս
մասին ինձի և ձեզի պէս անմեղ է:

— Հասկըցանք. բայց մէյմը ըսէ նայինք,
ի՞նչ գործ է . . .

— Այս բարեկամուհիս՝ որ բաւական ժա-
մանակէ ի վեր վաճառակահանութիւն կընէ, եր-
բեմն շատ տուներու մէջ սպասուհի է եղեր.
նոյն միջոցներն այրի տիկնոջ մը քով պատան
վարած է, որ ժամանակէ մ'ի վեր մեռւ է:
Այս կնոջը մահուան վրայ թաղին մէջ տարա-
ձայնութիւն մ'է ելեր թէ կիներն թունաւորուեր
է, անանկ որ կառավարութիւնն ալ իմանալով
մեռելը դերերմանեն հանել և զննել տուեր է,
և յիբաւի թունաւորուած է եղեր: Ատոր
վրայ խաղաղկութիւններ եղեր են, և բարե-
կամուհիս ձերբակալուեր է նոյն միջոցին անոր
քով ըլլալուն համար. բայց խեղճ աղջկան ա-
մենեւին յանցանք մը չուենալուն և սա գա-
ւաթին պէս մաքուր ըլլալուն խիտ ապահով
եմ:

Տիւֆրէան վերոնիքայի պատմութիւնն ու-
շագրութեամբ մտիկ կընէր, մինչդեռ լամբէն
ալ միւս օրիորդը կը դուռէր, և եղուարդ որ
կեղծ փոխանկարգըոյն խորհրդածութեան-
ցը մէջ կըլքեցնէր, սենեակին մէկ ան-
կիւնը թիկնաթուռի մը վրայ նստած միշտ կը
խորհէր առանց մտիկ ընելու վերոնիքայի

պատմութիւնը որ իրեն վերարեբեալ բան մ'ը
չէր:

— Այս գործը յիբաւի տարօրինակ բան մ'է,
ըսաւ Տիւֆրէան իր աթոգը վերոնիքայի աթո-
սին մտնոցնելով, բայց այդ բարեկամուհիդդ
անուեն ի՞նչ է:

— Սիւզան է. պատուոյս վրայ կերդուամ
որ անանկ լաւ և բարեբարոյ աղջիկ մ'է որ
մարդուն գլխին հաղ մ'անդամ բրցնելու կը
վտիմնայ:

Տիւֆրէան այս անուոր լսելուն պէս խռո-
վեցաւ. բայց շուտով ինքզինքին գալով սեն-
եակին շորս կողմը նայեցաւ, և տեսաւ որ եղ-
ուարդ իրենց մտիկ չընէր, և լամբէն օրիոր-
դին հետ զբաղած է, սկսաւ վերոնիքան հար-
ցաքննել:

— Ինձի կերէի որ այդ Սիւզանը շատ դժ-
ուարաւ պիտի ազատի այդ գործէն, եթէ ը-
սածիդ պէս այն միջոցին այդ կնկանը քոյն է
եղեր:

— Ինչու, Սիւզան մեկու մը վրայ կտակած
ունենայն արդէն կառավարութեան յայտներ է:
— Ի՞՞՞՞՞ է եղեր այդ մարդը:

— Այս տիկնին տունը երկուսարդ մը
կուգայ եղեր, խաղամոլ, դաւաճան, աւազակ,
որն որ իր սիրահարն է եղեր:

— Լաւ . . . լաւ . . . իմացայ . . . վերջը . . .

— Այդ խեղճ կիւնը շատ մատուեր է այդ
երկուսարդէն, անանկ որ մէկ ստակը չէ մը-
նացեր . . . կնոջը անունը դիտեմ. աիկին Տու
. . . Տօլ . . .

— Խիստ աղէկ , ըսաւ Տիւֆրէան վերանխ-
քան յանկարծ ընդ միջերով , անունը հասկնալու
պէտք չունիմ . . .

— Իրաւունք ունիս , անունը հասկնալով
բան մը ըլլաւ . չերկնցնենք , այդ կիկը շատ սէր
ձգեր է այդ երիտասարդին վրայ . բայց նա
զանի չի սիրեր և ուզածին պէս ստակ կը քա-
չէ եղեր . . . Կերևի որ վերջէն իրարու նեղա-
ցեր են , և այդ հրէշը դանի թունաւորեր է իր
ըրած գէշութիւններն երևան չընելու համար :

— Հաւանական է :

— Ոհ , հիմալուան մարդիկը շատ անզգամ
են . . . կին մը ճանճի մը նման կըսպաննեն :

— Հիմա Սիւզանն ինչ պիտի ընէ :

— Ինչ պիտի ընէ , այս բաժնեբաժնու ամենքն
ալ կ'առաջարկեան հաղորդեր է , և հիմա
այդ երիտասարդը վնասելու վրայ են :

— Շատ աղէկ , Աստուած տար որ դ'տնուէր
Տիւֆրէան այս վերջին խօսքերն խիստ կա-
մայ կըէր . որչափ որ ինքը իր չի ճանչցուե-
լուն վրայ ապահով էր , այսու ամենայնիւ իրան
խռովութեան փոքր նշաններ կը տեսնուէին :

• Սոյն երեկոյեան խնջոյքը սովորականէն կա-
նուխ աւարտեցաւ . Եղուարդ անհանդիստ էր ,
Տիւֆրէան ալ խիստ խռոված . երկու օրերոգը
երան դացին , և Լամբէն որ միայն զուարթ
կերուէր , լեցուց դաւաթներն իր բարեկամաց
տրտմութեան վրայ ծիծաղելով : Եղուարդ
խմեց թմրելու համար , բայց Տիւֆրէան ամե-
նեւ ին բերանը չի դրաւ , Լամբրէն ալ իր ըն-

կերները խնդացընելու համար ինչ ընելը չէր
գիտեր :

— Մն ուրեմն , բարեկամ , այս ինչ տըխ-
րութիւն է , ըսաւ դաւաթներն լեցընելով ,
ինչ եղաք այս իրիկուն . . . բտենք որ Պէլքու-
րը դեռ անփորձ ըլլալուն համար իրաւունք
ունենայ այսպէս ընելու . . . բայց բարեկամ
. . . դու . . . վերմոնթրէ՛ ես , Գուրվա՛ ես ,
Տիւֆրէան ես , ինչ ես . . .

— Լուէ , սպուշ , պոռայ Տիւֆրէան բար-
կութեամբ , մէյ մ'ալ այդ վերջին անունը չի
պիտի տաս ինձ . . .

— Չի՛ պիտի տամ . . . տես ինչ կըսէ . . .

չէ՛ որ երբեմն այս անունը կը կրէիր , երբ
կապրէիր այն խեղճ Տօլպանին հետ . . . որն
որ այնպէս կը կարծէր որ դուն զինքը կը սի-
րես . . . և օր . . .

— Բայց լուէ կըսեմ , դիմեմու . . .

— Գինեմու մի . . . բէհ , քեզի ալ ս'ըլափ
կը վայել ինձի դիմեմու ըսել . . . դու չէիր ե-
րէկ սեղանին տակը պառկող և ճաթելու աս-
տիճան քծն լամդը . . . Բայց ինչ և իցէ , ես
բարեկամներուս հետ չեմ սրգողիր . . . որով-
հետեւ վերջապէս բարեկամ ենք . . . կը տես-
նեմ որ երկուքդ ալ այս իրիկուն խիստ տըր-
տում էք . . . Եղուարդը կեղծ փոխանակա-
զրոյն պատճառաւ . . . և դու ալ . . . ահ ,
դու ալ , ինչ ըսեմ . . . անանկ բան մ'ըրիր որ
տակէն չի պիտի կրնաս ելնել . . . Բայց վե-
րանխա ինչ կը պատմեր . . . թունաւորու-

Թիւն . . . այրի կին . . . սիրահար . . . Էն ,
ինչէին ասոնք . . . իս նայե , տիկին՝ Տօլլա-
նի հետ ունեցած բարեկամութիւնդ . . . հե՛ ,
աղէկ հետեանք չունեցաւ . . . շիտակ ըսէ
. . . դռն թունաւ . . . եթէ թուն ըրիր ,
ճշմարիտ նայինք կ'նշպէս պիտի ազատիս :

— Լամբէն , ալ հերքիք է , դնա պառկէ ,
տես Եդուարդ կը քնանայ . քու խեղկատա-
կութեամբդ զանի ալ պիտի արթնցընես :

— Հա , հա , հա , տես՞ր մի բանը , ան
ալ պիտի արթնցընեմ եղբր . . . չար սատա-
նայ , դուն այս իրիկուն արտում ես եղբր , ո-
րո՞ւ հոգ . ես զուարճանալ , ծիծաղել , խմել
կուզեմ . . . քուն չունիմ , կ'նշ ընեմ . . . ախ ,
կ'նշպէս թողուցինք օրիորդներն որ դացին . . .
այս իրիկուն աղէկ ժամանակ կանցընէինք . . .
թրա , լա , լա , լա :

— Այս դիչեր քնանալու չե՞ս . . .

— Կամբոս երբ որ ուզէ , այն ատեն կը
քնանամ . ո՛հ , կը տեսնեմ որ այս իրիկուն իր-
ուսովուած ես . . . կ'նշ դործ է այդ ըսէ ինծի .
վերոնիքայի պատմութիւնը լեզուդ բերնիդ
մէջ չորցուց , խեղճ Տիւֆրէսն . . .

— Թշուառական , պիտի ունէ , ըսաւ Տիւֆ-
րէսն Լամբէնի վիզէն բռնելով , և սկսան ծեծ-
կուել . Լամբէն դնաց Եդուարդին վրայ ինկաւ
որ նոյն միջոցին սենեակին մէկ անկիւնը կը
քնանար . որն օր որ յանկարծ արթննալով ըս-
կըսաւ վախնալով չորս կողմը նայել ու պո-
ռալով ըսել :

— Ահաւասիկ . . . ահաւասիկ . . . զիս
բռնելու եկան . . .

— Զրեղ բռնելո՞ւ եկան , ըսաւ Տիւֆրէսն ,
ո՞վ են ասոնք . . .

— Ո՛հ , ո՞րչափ տխուր են , ըսաւ Լամբէն
ոտքի վրայ կ'ենելով , և իր հաւասարակչուու-
թիւնը պահել շանալով . մէկը կերպով , միւ-
սին ալ այլքը չի տեսներ . . .

— Ահ . . . արդեօք տեսածս երա՞զ մ'էր ,
ըսաւ Եդուարդ ճակատը շփելով . . .

— Այո , երկուքդ ալ դեռ տղայ էք . . .
բայց դու եթէ մէյ մ'ալ դաս ու զիդէս բըռ-
նես . . . այն ատեն կը սովրեցընեմ քեզի . . .

— Հիմայ առտու կըլլայ , պարոններ , ը-
սաւ Տիւֆրէսն , ես յոգնած եմ , պիտի քնա-
նամ :

— Դու դնա պառկէ . . . այս բարեկա-
մը ընկեր պիտի ըլլայ ինձ այս չէրք պարպելու
համար :

— Չէ , ես ալ պիտի պառկիմ . գլուխս կը
ցաւի . . .

— Երկուքդ ալ պառկեցէք , ես մինակ
կը խմեմ . . .

— Մէյ մ'ալ կըսեմ , Լամբէն , աղաղակ
մի ըներ , դրացիներն անհանդիստ կըլլան :

— Որո՞ւ հոգ է դրացիներուն անհանդիստ
ըլլալը . ես տակաւին պիտի նստիմ ու զուար-
ճանամ . . . թրա , լա , լա , լա :

Լամբէն բարձրածայն կերպէր մեծ դա-
ւաթ մը պարպելով . Տիւֆրէսն ու Եդուարդ .

Տրադն առած իրենց սենեակը կերթային, և ահա յանկարծ փողոցին դուռը երեք անգամ սաստիկ դարնուեցաւ :

Ասոր վրայ Տիւֆրէան ստիկաց, Եդուարդ սկսաւ դողալ, և լամբէն ամոռի մը վրայ նետուեցաւ :

— Դուռը դարկին, ըսաւ Եդուարդը դողալով :

— Այո . . . ես ալ լսեցի . . .

— Էհ, ես խուլ չեմ . . . ես ալ լսեցի . . .

Բայց բաւական սաստիկ դարկին . . . սակայն ո՞վ է ան . . . դուրսը մարդ չունինք . . . առաւօտեան դրեթէ ժամ երեքն է . . . չըլլա՞յ որ մեր օրիորդներն ըլլան դալ մեզի օր օր Ըսելու համար . . .

— Լուէ . . . կարծեմ դուռը կը բանան . . .

— Պէտք է որ դուռը բանան ներս մտնելու համար . . . Ասիկայ պանդուկ մ'է . . . այնպիսի պանդուկ մը . ուր գէշերը մինչև ըջո մարդ կուգայ . . . բայց ո՞վ կըլլայ, ըլլայ, ինչո՞ւս պէտք, ես կը խմեմ :

— Չայները կտրեցան, ըսաւ Տիւֆրէան, ըսել է որ մեզի համար չէ . . .

Եդուարդը գնաց սանդուխին վրայ նայող դրանը գէժ կեցաւ և ուշադրութեամբ մտիկ կանէր, լամբէն սկսաւ երգել ձեռքը գաւաթ մը բռնած զոր բերանը տանել կը շնորհ բայց կարողութիւնը չէր մնացեր, Եդուարդը յանկարծ խռովեցաւ :

— Ի՞նչ կայ, ի՞նչ կայ, ըսաւ Տիւֆրէան ցած ձայնով :

— Վարը շատ մարդոց ձայն կայ . . . ձայնը կը մօտենայ . . . այո՛, այս սանդուխն վեր կեննեն . . . ահ, տարակոյս չկայ որ մեզի բռնելու կուգան . . . ճանչցուեցանք :

— Լուէ, անխոհեմ, ըսաւ Տիւֆրէան իր վախը զսպել ջանալով, եթէ յիբաւի հոս ալ գան, չի խռովինք. բաժնդ ալ աղէկ դիտցիր . . . մանաւանդ զիս Տիւֆրէան մի սնուաներ :
— Ուր ըլլաք չեմ գիտեր, ըսաւ Եդուարդը, որուն վախը կաւենար, քանի որ ձայները կը մօտենային :

— Լաւ . . . ահաւասիկ ես ալ . . . ես ալ իմ սնունդ մտացայ, ես . . . ըսաւ Լամբէն գաւաթը ձեռքէն ձգելով. բայց ես կրտեմ . . . որ . . . ասիկայ մեղի համար չէ :

Նոյն միջոցին դուռը կը դարնուի. Եդուարդը դրեթէ նուազեալ ամոռի մը վրայ կկենայ. Տիւֆրէան սենեակին մէջ տեղը անշարժ կը կենայ ձեռքովը վրաններուն նշան քնելով որ տեղերնուն չի շարժին : Իսկոյն նորէն կը զարնեն դուռը և տեսիլ սաստիկ :

— Հոս մարդ չկայ . . . կը պոռայ Լամբէն, ո՞վ կուղէք :

— Կեցիր, կրտէ Տիւֆրէան, բանալու է . . . Ո՞վ է ան :

— Պարոնայք, բացէք, թէ չէ՛ պիտի ըստիպուինք դուռը կտարելու :

— Դուռը պիտի կտորէք, ըսաւ Լամբէն . . . որուն հոգ, տունը իմն չէ որ փոյթ ընեմ . . .

Տիւֆրէան տեսնելով որ վիտխելու միջոց չը-
կայ, վերջապէս կորոյէ դուռը բանալ կրկին
պատուիրելով իր ընկերներուն որ խոհեմու-
թեամբ վարուին. բայց Լամբէն զինով և
Եդուարդ ալ դմբած ըլլալուն համար անոր
այս պատուէրը չեն կրնար լսել:

Երկու զորական և յիննպստ մը սենեակը
կը մտնեն. Տիւֆրէան զստանք տեսնելով կը
զուռնատի. Եդուարդ սոսկալի աղաղակ մը կը
հանէ, և Լամբէն ակթուռն վրայէն դետինը կը
զլորի:

— Հետերնիս դուրս պիտի ելնես, պարոն,
կըսէ յիննապետը Տիւֆրէանի: Սա կը շանայ
ինքզինքը բռնել, և կը հարցնէ թէ ինչ իրա-
ւամբ իր հանգստութիւնը կը խռովին:

— Այո, ինչ իրաւամբ... մեղի պէս հա-
մեստ մարդիկն զիշերով կը խռովէք, կը թո-
թովէ Լամբէն. ես իմ բարեկամիս երաշխաւոր
եմ... անձս կը զոհեմ անոր համար:

— Քու երաշխաւորութիւնդ արժէք չու-
նի, պարոն Լամբէն, քեզի լաւ կը ճանչնանք:

— Ուրախ եմ որ զիս լաւ կը ճանչնաք ե-
զեր...:

— Դուն ալ հետերնիս պիտի դաս...:

— Ե՛ս... ո՛հ, դժուար բան է այդ...
ո՛ւր պիտի դամ... բո՛նչ խմելու, թէ բանտ:

— Գալով այս պարոնին, ըսաւ յիննապետը
Եդուարդը ցուցնելով, հրաման չունիմ զայն
տանելու. բայց կիմացընեմ իրեն որ տեսակցած
անձինքն լաւ ընտրէ:

Եդուարդ դողալով և աչքերը դետին ծը-
ռած սենեակին մէկ անկիւնը քաշուեր նստեր
էր: Յիննապետին իրեն համար ըսածը չի լսեց,
այնքան համոզուած էր որ զինքն ալ պիտի
տանին, որ արդէն բանտը մտած կը համարէր
ինքզինքը. և միտքը դրած էր որ իր յանցան-
քը խոստովանի յուսալով որ այս կերպով կրնայ
կառավարութեան ձեռքէն ազատիլ:

Տիւֆրէան կատգեցաւ տեսնելով որ Եդու-
արդը չի պիտի տանին, և թէ մինակ բանտը
պիտի մանէ:

— Կը սխալիք, պարոնայք, ըսաւ նա, ես
ինչ ըրած ունիմ որ պիտի տանիք...:

— Քու անունդ Տիւֆրէան չէ՞, որ տիկին
Տօլլանի հետ ժամանակ կանցընէիք...:

— Սխալ է ըսածնիդ... իմ անունս Վէր-
մանթրէ է:

— Այո, այո ըսաւ Լամբէն առանց զօրա-
կանաց օգնութեանը ոտքի վրայ նշնել ուղե-
լով, երկու ամիս կայ որ Վէրմանթրէ կանուա-
նի:

— Պարապ տեղը կուրանաս. կառավարու-
թիւնը երկար տանէ ի վեր է զքեզ կը դիտէ,
և քու վրայօքդ եղած սպանութեան ամբաս-
տանութեան վրայ շատ դիւրաւ կրցանք զքեզ
դանել, թէև քանի մ'անդամ անունդ ալ փո-
խեցիր:

— Սպանութիւն... սպանութիւն, պո-
ռաց Լամբէն, ուրեմն ատոր չեմ խառնուիր...
Ես կարծեցի որ սա կեղծ փոխանակազրոյն հա-

մար պիտի տանիք . . . որն որ ոչինչ բան մ'է . . . բայց սպանութիւն մը . . . վայ անդգամ, որչափ գէշ բան է . . . Ես այս մասին ձեռնի պէս ճերմակ եմ. և Ֆլիւէ որ վարը անկիւնը նստած է, ան ալ ինծի պէս է . . . Մեք երկուքս դուրսեանց մէջ միայն աշխատեցանք :

— Գրութեանց մէջ . . .

— Այո . . . մեք ըսերիս ու վարը անկիւնը . . . դողացող մարդն ու զիս հասկըցնել կուզեմ . . . բայց չար սատանան աղ ոք ի՛ր ունի . . . անանկ որ ծեր հրէայն իսկոյն ստակները համրեց . . . և անով աղու որ մը կերանք խըմեցինք . . . Եթէ կուղէք մեզի ալ հետ տանել, վաղելով կուգամ :

Թինապետն այս խօսքերը ուշադրութեամբ մտիկ ընելէն վերջը Եդուարդին վրայ տիրած սոսկումն ալ տեսնելով անմիջապէս իմացաւ որ այս պարոններն ուրիշ տեսակ դաւաճանութիւն մ'ալ գործած են իրենց դատածէն բոլորովին տարբեր . իրենք տիկին Տօլպանի սպանութեանն համար զիչեղանց այս պարոններն անհանդիստ ընելու եկած էին որ Տիւֆրէան գտնեն, կառավարութիւնն առջի օրը իմացեր էր այս կեղծ ժողովականագրոյն ինչո՛րը, և անոնց հեղինակները գտնելու համար դեռ միջոց մը ձեռք առած չէր :

— Այո լսածիս համար դու ալ հետերնիս պիտի գաս, պարոն, ըսաւ յինապետը Եդուարդին, եթէ անմեղ ես, կրնաս դիւրաւ ինքըղինքդ արդարացնել :

— Այո, ամեն բան կը խոստովանիմ, ըսաւ Եդուարդ ոտքի վրայ ելնելով և ինքզինքը զօրականաց յանձնելով :

— Որչափ տխուր ես, ըսաւ Լամբէն, ես բան մ'ալ չեմ խոստովանիր . . . (Մն ուրեմն, բարեկամք, եթէ զիս ալ պիտի տանիք, հետերնիդ գամ :

Տիւֆրէան դէմ կենալուն համար գետնաքարչ տարուեցաւ . Եդուարդ ընդհակառակն առանց խօսք մը ընելու կերթար . իսկ Լամբէն ոտքի վրայ կենալու ժամանակ չունենալուն համար քանի մը զօրական վերուցին տարին, և ամենքը մէկտեղ զիչեղուան մէկ մասը բանտը անցուցին :

Հետեւեալ օրը դատարորին առջին գացին հարցաքննուելու համար . Եդուարդ խօսուեցաւ և սկսաւ թոթովել . բայց չի կրցաւ իր յանցանքը ուրանալ . ի զուր Լամբէն առաջուց իր տալիք պատասխանին գէշ հետեւանքըն անոր իմացընելով խրատեց զինքը . Եդուարդ խոստացաւ Լամբէնի որ իւր տուած խրատներուն կերելի . բայց խեղճը դատարորին դէմ բաջութիւնը կ'որոնցընելով ըսածն ալ չիմացաւ :

Եդուարդ Լամբէնի հետ չլիթ այսակապ բանտարկութեան դատապարտուեցաւ մինչև որ իրենց դաւաճանութիւնը հյամտոտպէս խոստովանին : Տիւֆրէան անոնց հետ չէր . այլ գտիկին Տօլպան թունաւորած բլլալու ամբաստանութեամբ իր երկու ուրիշ բարեկամացը

հետ պիտի դատուէր . ուստի մահապարտից բանաբ գրուեցաւ :

Եդուարդ որ առաջուց վրան ստակ առած չէր, Լամբէնի հետ դարչահատ տեղ մը գըրուեցաւ խել մը անզգամ և ստահակ անձանց մէջ, որոց ամենքն ալ գորութեան և կամ նենդութեան յանցանքով հոն եկած էին : Իր անկողինը քիչ մը յարդ, և կերակուրն ալ բանտարկիւրց սովորական եղած կերակուրն էր : Լամբէնի հոգը չէր բնաւ . կերգէր, կը պոռաբ և իր ընկերներուն հետ կը զուարճանար . իսկ Եդուարդ զղջողով և ցաւելով իր բրած յանցանքին վրայ՝ գիշերը քնանալու տեղ կուլար, և իր թափած արտունքը քովը դանուած սրիկաներուն համար ծաղրանայ և զուարճութեան պատճառ եղած էին :

Յօրեկը բանտարկեալներն հրաման ունէին բանտին առջևը երջած մեծ բակը պտտելու . Եդուարդը բնաւ դուրս չէր ըններ, որպէս զի քիչ մ'ատեն առանձին մնալով կարող ըլլայ համարձակ լալ ու հառաչել : Մէկը չէր գար զինքը տեսնելու համար . ալ բարեկամ չուներ, իր ուրախութեան ընկերներն զինքը այցելելու չէին դար, մինչդեռ միւս բանտարկեալներն որք իրմէ վար չէին մնար, ամեն օր այցելու կուենային և իրենց արժանաւոր բարեկամներէն չէին մոռցուեր : Բայց Եդուարդը սոյ պարոններուն քով տկար և վատասիրտ մէկը համարուած էր, և տար համար անոնց առջև համարում չուներ : Բանդի Եդուարդի

պէս անձինքն ամենախորք ձախորդութեամբ կը վհատին, կը յուսահատին, վասն որոյ այնպէս ատելի են յանցարեքներուն առջև, ինչպէս դէշ մարդիկ պարկեշտ և պատուաւոր անձանց առջև :

Եդուարդը առաւել եւս կը վշտանար յիշելով զլատելին և իր աղջկիւր . մարդ թշուառութեան մէջ միայն կը յիշէ ճշմարտապէս զինքը սիրողը : Մերժեց նա իր կիներ ու զաւակը, և մոռցաւ զանոնք առանց խորհելու թէ խեղճերըն կրնան իրենց ապրուստը ճարել . բայց համազուտ էր որ եթէ Ատէլին իմանար իր բանտը ըլլալն, խիոյն կը վաղէր և կը միտիւտաբէր զինքը . և թէպէտ ինքը անոր չարիք ըրած էր, բայց տարակոյտ չուներ որ Ատէլին խիտ կարեկից սիրտ մը կը կրէր :

Օր մը Լամբէն Եդուարդի քովն եկաւ այնպիսի ուրախ դէմքով որ կարճեւ թէ աղէկ լուր մը պիտի տար :

— Ինչ կայ, ըսաւ մէկէն Եդուարդ, պիտի աղատե՞նք :

— Աղատել . . . բայց հարկ չկայ ասոր սպասել . . . ա՛խ, ինչ բեւեմ քեզի որ գործերնիս երեւան հանեցիր, և եթէ այսպէս երթայ, նայինք վերջերնիս ուր պիտի երթայ . . . Ա՛հ, եթէ դուռն միայն իմ տուած խրատս խօսէիր, այն տտեն մեզի ամենելին երկարօրէն չէին հարցաւըններ . բայց ինչ բեւեմ . . . դատարարին դէմ զլուես թէ տխրակ կարեցար :

— Ինձի ինչ իրաւունք ունիս բան ըսելու,

դուռն չէի՛ր ամենէն առաջ դործը երևան հա-
նողը :

— Այդ ուրիշ խօսք . չե՛ս գիտեր որ ես այն
խրիկունը գինով էի . . . այնչափ դինի խմած
էի . գինիին մէջ ճշմարտութիւն կայ, կըլէ առա-
ծը . . . Բայց հիմայ խնդիրն անոր վրայ չէ . մեր
Տիւ.Քրէան բարեկամը մեզնէ երջանիկ է, դիտե՛ս
— Ինչո՛ւ , ազատեցա՛ւ :

— Չէ , բայց իր ազատարարն ինքը եղաւ .
պարզ խօսելով , իր երկու ընկերներովը բան-
տէն փախաւ : Ահ , բարեկամ , Տիւ.Քրէանի կ'նչ
մարդ ըլլալն դիտե՛ս . անի մեղիպէս թոյլ մարդ-
չէ , յանդուգն է , յանդուգն . . . բանտին կը-
բակ կուտայ մէջը չի կենալու համար : Ասանկ
մարդիկ բարեկամներէ զուրկ չեն մնար . Տիւ.Ք-
րէան ծանօթներ ունեցաւ ու փախաւ , և շատ
ալ աղէկ ըրաւ . եթէ ասանկ չըներ , մահուան
պիտի դատապարտուէր :

— Մահուան . . . ի՛նչ է ըրեր որ . . .

— Վայ դեռ չե՛ս գիտեր ինչ ընելը . . . աս
աղէկ . . . բռնուած ժամանակը միտտեղ չէի՛ր ,
չիմացար :

— Ես կարծեցի որ ան ալ մեղի պէս կեղծ
փոխանակագրոյն համար բռնուեցաւ :

— Չէ , անկէ ալ գէշ բանի մը համար . . .
Բայց դիտե՛մ , այն միջոցին վախը քեզի այն-
չափ չուարեցուց որ ինչ ըլլալը չիմացար : Գիտ-
ցիր որ Տիւ.Քրէան ակիկն Տօպան անուամբ այ-
րի մը թուեաւորած ըլլալու ամբաստանութե-
ամբ բռնուեցաւ :

— Վայ անդգամ հրէշ . . .

— Կերեկ թէ գործը գէշ էր . մահուան պի-
տի դատապարտուէր . սակայն գիտցած ըլլա-
ս որ այլ ևս օձիբը ձեռք չիտար . մենք ալ զա-
նի չր պիտի տեսնենք : Երեսու , խեղաջի տղայ
մ'էր , հիմա ո՛ւր տեղուանքն է արդեօք :

— Մե՛նք ինչ պիտի ընենք . . .

— Մենք քանի մ'օրէն մեծ ասեան մը պի-
տի երթանք դատուելու համար . տեսնենք հոն
ինչպէս պիտի վարուիս . եթէ հոն ալ ասանկ
լաս , դործ երնիս ըմբած է . . . արքունական
նաւարանը ծառայելը ծառայել համար է :

— Թշուառական , ատանկ բան կրնա՛յ ըլ-
լալ :

— Լուէ , խօսակցութիւննիս մտիկ կընեն .

. . . բաւական խօսեցանք . . .

Մինչդեռ Եղուարդ այսպէս վախու և զղջ-
ման տառապանաց որս եղած է , և իրենց
յանցանաց բանտարկութեան վրայ պատժող
խել մը ստահակներու մէջ անոնց նախատեսա-
ցն ու արհամարհութեանը ենթակայ դանուած
անոնցմէ բնաւ զթութեան և կարեկցու-
թեան բառ մ'անգամ չի լսեր , անդին Ատե-
լին Կիլլոյի ազարակը երջանիկ օրեր կանցընէ :
Կտեսնէ նա իր ազլիկան մեծնալը , որ արդէն
կըսկէր մօր մը հասկնալ կրցած քանի մը բա-
ուերն թոթովել : Յակրուայ ալ միշտ ամենայն
լննքով և քաջութեամբ ծանր և խիստ աշխա-
տութեան կրղբաղէր . ազարակը երկու մար-
դու գործ կը տեսնէր և տալ մեծ զուարճու-

Թիւն կը պատճառէր իրեն : Իրիկունները կուգար Ատէլինի քով : Էրմանսը ճնկանը վրայ կաւներ, և զինուորական երգով մը զանի կը խաղցընէր : Դիւզացիք բոլորն ալ կը սիրէին զեղբայր Յակոբոս, և այսպէս կանուանէին զանի, երբ իմացան անոր Ատէլինի տագըը ըլլալը, և շատ ուրախ էին Ատէլինի պէս կին մը և Յակոբոսի պէս քաջ մարդ մը իրենց զիւղը գտնուելուն վրայ :

Բայց այս խաղաղ կեանքը, երկար չի տեսեց : Սան-Սուսի անգամը փարիզ գնաց ըստ սովորութեան Ատէլինի և Յակոբոսի գաղտնի յանձնարարութիւններովն, որոց երկուքն ալ իրարմէ գաղտուկ մի և նոյն խորհուրդը, մի և նոյն փափագը ունէին, և եղուարդի վրայօք ըւր աւնուլ կուղէին :

Սան-Սուսի մինչև այն օրը բնաւ տեղեկութիւն մ'առած չէր : այս անգամ պատահեցաւ իր մէկ բարեկամին զոր երկար ատենէ ի վեր չէր տեսած : Այս մարդը այլ և այլ գործերու պարագեկէն վերջը՝ հիմա ատեսական գործակատար մ'երգած էր : Այս էր որ դեռ ընկերականութեան հետ հաղբգակցելու հրաման ունեցող բանտարկեալներն կը տանէր ու կը բերէր : Սան-Սուսի եղուարդի ատուը իր բարեկամին տալուն պէս՝ սա շուտով ճանչցաւ, և ըսաւ թէ բանան է, և իր գատատանը վաղը պիտի ըննայ :

— Բանան է, պուաց Սան-Սուսի, իմ քաջ ընկերոջ եղբայրը բանար դերեր են : վայ

չար սատանայ, այդ ինչ ըսիր . . . տես թէ խեղճ Յակոբոս ո՞րչափ պիտի վշտանայ :

Գործակատարը տեսնելով որ Սան-Սուսի եղուարդի վրայ խիստ կը վշտանայ, այսչափ մ'ալ ըսելուն վրայ զղջացաւ :

— Բայց ինչու համար բանան է, հարցոց Սան-Սուսի անհանգստութեամբ : Ինչ է ըբեր . . . խօսէ . . . իմացուր ինձի : պարտքը՞ համար է . . . :

— Այո, այո : Կարծեմ մուրհակի մը համար, պատասխանեց գործակատարը տարակուսելով, որ կը ջանար ճշմարտութիւնը ծածկել, բայց ի զօր :

— Յաւալի բան . . . եղբայրը . . . ամուսինը . . . բանար . . . խեղճ կին . . . խեղճ ընկեր . . . :

— Չըլլայ որ իրենց բան մ'ըսես, բան մը խօսիս, բարեկամ, ես արդէն զղջացի քեզի իմացընելուս վրայ :

— Իրաւունք ունիս, չեմ ըսեր . . . վանս զի ասոր ճարը գտնելն անկարելի է, Բու եղուարդը սածղ չար մարդ մ'է, խիստ աղէկ եղաւ :

— Այո, այո, պատմուած ինչայելով խիստ անզգամ մարդ մ'է եղբր : Ուստի ասանկ մարդուն անունն անգամ տալու չէ :

— Իրաւունք ունիս . . . բայց այդ խօսքը մեզի համար է . . . սակայն եղբայր մը, ամուսին մը ինչպէս կրնայ այդ բանն ընել : երբ իրենց սիրելոյն վրայ անանկ բան մ'իմանան, մարդը անհանգիստ կընեն . . . Միաս

բարով, բարեկամս, դառնամ ազարակ . . .
 Իցէ թէ չի պատահէի քեզի, թէև դուն ի՞նչ
 յանցանք ունիս . . . Եկուք տես որ անանկ
 սիրտ մ'ալ ունիմ որ ասանկ բաներու չի կրք-
 նոր գիմանայ :

Սան-Սուսի բարեկամէն զատուելով կը-
 դառնայ ազարակ . Ատէլին և Յակոբոս ըստ
 սովորութեան զինքը կը հարցաքննեն, և Սան-
 Սուսի միւս անդամներուն պէս տեղեկութիւն
 մ'առած չըլլան կիմացոյնէ . բայց պարսպ
 տեղը կը ջանայ ծածկել իր տխրութիւնը, զին-
 քը կը մատեն . Ատէլինի Եդուարդի վրայ խօ-
 սած ատեն իր վրայ տիրած չվտթութիւնը ա-
 նոր կասկած կուտայ . կին մը մեր զաղտնի
 զգացած վշտերն գիւրաւ կը գուշակէ : Ատէ-
 լին համոզուած ըլլալով որ Սան-Սուսի Եդուար-
 դի վրայօք աղետալի բուր մ'առած է և իրմէ
 կը ծածկէ, միշտ խեղճին չորս կողմը կը պտտի,
 կըստիպէ զոնի, կաղաչէ որ չիտտիկ լսօյի :

Սան-Սուսի երկու աուար չափ Ատէլինի ա-
 զաչանացը դէմ կը դնէ . բայց վերջապէս Եդ-
 ուարդի կացութիւնը յիշելով, զորն որ պարտա-
 քի համար բանտարկուած կը կարծէ, խորհե-
 լով որ իր կինը փարիզ դեռ ծանօթներ ունե-
 նալով կրնայ անչուչտ անոր աղատութեան ճա-
 րը գտնել, և թէ Եդուարդ թէպէտ յանցա-
 ւոր, բայց կարելի է որ իր այս գէպըովը ըզ-
 դատացած ըլլայ ու օգնութեան և մխիթա-
 բութեան կարօտ գտնուի, չի կրցաւ իր գիտ-
 ցածը յաւիտեան Ատէլինէն պահել մանաւանդ :

որ երբորդ օրն այ Ատէլին ամեն անգամնե-
 րէ աւելի աղաչեց իրեն որ իրմէն բան մը չի
 ծածկէ, խոստացաւ ըսել երգում առնելով ան-
 կէ որ Յակոբոսին բան մը չըտէ, անկէ յանդի-
 մանութիւն լսելէն վախնալով, և ամեն բան ի-
 մացուց անոր :

Ատէլին իր ամուսնոյն բանտը ըլլայն իմա-
 ցածին պէս գնաց սենեակը, բարբ գոհարեղէն
 զարդերը ժողվեց, իր բոլոր ունեցածը պզտիկ
 կապոց մ'ըբաւ, և իր հեռանալուն վրայ ան-
 հանգստութիւն մը չի պատճառելու համար
 դրուած թուղթ մը ձգելէն յետոյ էրմանսը
 դիրկը առաւ և զաղտնի ազարակէն դուրս
 ելաւ, միտքը դնելով որ ամեն ջանք ընէ իր
 ամուսինը ազատելու համար . և կամ եթէ ան-
 կարելի ըլլայ, անոր հետ բանտարկուի :

Նոյն միջոցին առաւօտեան ժամը ինն էր .
 Յակոբոս դաշտը գացած էր, և միւսներն ալ
 այլ և այլ գործերով զբաղած էին : Ատէլին
 փարիզու ճամբան ձեռք առած էր, քանի որ
 ազարակին մարդիկը իր երթալը էին տեսած :



Գ Լ Ո Ւ Մ Ի Թ Օ,

Հ Ի Ա Պ Ա Ր Ա Կ Բ Ա Ն Տ Ի Ն

Ատէլին դեռ չգիտեր թէ ինչ միջոցաւ պի-
 տի կարենայ մինչև իր ամուսնոյն քովն եր-
 թալ . այս մտին բնաւ բան մը զազափարած

չէ. չդիտեր նաև թէ ինչպէս պէտք է բան-
տարկեալի մը հետ խօսիլ. միայն բան մը կը
խորհի, այսինքն թէ՛ Եդուարդ խեղճ է, բան-
տի մը մէջ կը տառապի, և ամեն միտխարու-
թենէ զուրկ է . . . որովհետև Ատէլին քաջ
դիտէր որ Եդուարդի հարստութեան ատեն ա-
նոր հետ ընկերակցողներն հիմա զանի երեսն
ձգած են . . . Ուրեմն հիմա ո՞վ պիտի երթայ
նորա արտասունքն սրբելու, եթէ ոչ՝ իր կիներն
ու զաւակը. բայց և այնպէս նա մերժեց զա-
նոնք. մերժեց նոցա դուրովանքը. սակայն երբ
սիրելի անձ մը դժբաղդ գէպքերու ներքեւ
կը ճնշուի, մարդասէր հոգի մը նորա պակա-
սութիւններն երբէք չախշի :

Ատէլին Սան-Սուսիի տուած տեղեկութեանց
համեմատ ուղղակի բանասպետին պիտի դի-
մեր. կը յուսար որ իր աղաչանքը, արտասունքը
և զաւակին անսքը նորա գութը կը շարժեն, և
այնպէս կրնայ իր ամուսնոյն քովն երթալ : Այս
խորհրդով յառաջ երթալով հասաւ Վիինէօլ-
-Սեն-ժորժ իր պղտիկ Էրմանսին հետ որ հա-
ղիւ տարի ու կէսի չամի կար, և հոն գտաւ այն
գէշ կառքերէն մին որ փարիզեցիքը գեղջկա-
կան աօներու կը տանին : Չամիւս որ դնով մը
մտաւ այդ կառքը և սկսաւ ուղեւորիլ ի փարճի :

Ատէլինի հեծած կառքը մէկ ճամբորդ մը
միայն կար որ դրեթէ եօթանասուն տարեկան
ծեր մ'էր համեստ ու պատկառելի, որուն վրայ
ամեն ոք կրնար վտահ ըլլալ : Իր կերպարան-
քէն կիմացուէր որ զուարթ և ընկերականու-

թեան յարգն ու մեծութիւնը խիստ լաւ ճանչ-
ցող մարդ մ'էր :

Ատէլին յարգանք ողջունելով զանի գնաց
քովը նստաւ : Երբը նախ ուշադրութեամբ և
վերջը մեծարանք սկսաւ դիտել զԱտէլին, և
անոր աչնուական և գրաւիչ կերպարանքը տես-
նելով փախազեցաւ իր համակրութիւնն անոր
յայտնել և անոր ով ըլլալն ճանչալ :

Էրմանս մօրը ծնկանը վրայ նստած էր . իր
տղայական շնորհքն զմայլեցուցին զձերբը, որն
որ անոր շարքադէն տուաւ և քիչ մ'ալ զքզ-
ուեց : Ատէլին շնորհակալ եղաւ անոր իր մար-
դասիրութեանը համար . ժպտեցաւ իր աղջկա-
նը երեսը, վերջը դարձեալ տխրեցաւ :

Երբը ջանաց խօսակցութեան մտնել Ատէ-
լինի հետ. բայց Ատէլինի պատասխաններն այն-
չամի կարճ էին և այնչամի զբաղած կերեւէր որ
ձերբ տհաճութիւն մը պատճառած ըլլալէն
վախնալով լռեց. բայց կը տեսնէր Ատէլինի արխ-
րութիւնը, կը լսէր նորա հառաչանքներն, և
կը դիտէր որ անոր գեղեցիկ աչքերն միշտ փա-
րիզ գործած և արտասուօք լինէ : չէր համար-
ձակեր անոր վշտացը վրայօք խօսք մը բանալ,
և գաղանի կը վշտակցէր :

Ատէլինի համար ճամբան շատ երկարեցաւ .
ձիերը իրենց սովորական ընթացքը չէին փո-
խեր. անոր համար երբեմն համբերութիւնը
հատած՝ կը պատրաստուէր կառքէն վար իջ-
նել յուսալով որ եթէ քախլով երթայ, աւելի
չուտ կը հասնի : Բայց մտածելով որ Էրմանսը

տանելու կարողութիւն չունի, կեցաւ կառքը
և խորհեցաւ որ անխնեքուն ամեն մէկ դարձ-
ուածքը զինքը իր ամուսնոյն կը մօտեցընէր:

Երբը ժամացոյցը նայեցաւ, և այն ատեն
Ատէլին առաջինն եղաւ որ խօսք բացաւ ու
ըսաւ:

— Պարոն, շնորհ ըրէք ըսել թէ ժամը քա-
նին է:

— Մէկը կերթայ, տիկին:

— Փարիզէն շատ հեռո՞ւ ենք:

— Չէ, երեք քառորդէն կը հասնինք:

— Երեք քառորդ . . . Ոհ, դեռ որչափ
ճամբայ կայ . . .

— Տիկին, կը տեսնե՞մ որ ստիպողական գոր-
ծով մը կերթ՞աք փարիզ . . .

— Այո, պարոն . . . ոհ, այո . . . ուշ ալ
մնացի . . .

— Հարկաւ հոն ծանօթ ունիք . . . թէ ոչ՝
ես կը փափագիմ ձեզի ծառայութիւն մ'ընելու:

Ատէլին բան մը չի պատասխանեց. իր ըն-
կերին խօսքը չի լսել ձեռացնելով կրկին տըրտ-
մեցաւ իր ամուսնոյն վիճակը միտքը գալով:

Երբը փոխանակ անոր լուսութեանը վրայ
ըսչորանալու, աւելի կարեկից եղաւ անոր տես-
նելով որ խորին վշտաց ենթակայ եղած կե-
րեւի:

Վերջապէս հասան փարիզ. կառքը կայնե-
ցաւ. Ատէլին շուտով վար իջաւ, ու կառ-
քին վարձքը տալն, ազնիվը գիրկը առնելն,
ծեքը ողջունելն ու աներևոյթ ըլլալը մէկ ե-

ղաւ, անանկ որ ծերը դեռ կառքէն վար ի-
ջած չէր, այլ սովորաբար ճամբուն վրայ դըռ-
նուող դատարկաչրջիկ մէկու մը իրեն ներկայա-
ցուցած պողտիկ կթողին վրայ սօքին մէկը
դըրած վար իջնելու կը պարտաստուէր:

— Խեղճ կին . . . ըսաւ նա Ատէլինի գա-
ցած կողմը նայելով, տես ինչպէս կը վազէ . . .
այս կինը ցաւ մ'ունենալու է . . . ահ, իցէ
թէ դէշ լուրեր չառներ:

Ատէլին այնչափ շուտ կը քալէր որչափ կա-
րելի է գիրկը աղկի մ'ունեցող մէկու մը, Հար-
ցուց բանտին ճամբան, ցուցուցին. և առանց
կանկ առնելու յառաջ կերթար: Սերը, ան-
հանդատութիւնը իր զօրութիւնն աւելցուցին.
վերջապէս մօտեցաւ, տեսաւ հրապարակ մը
որն որ իր ամուսնոյն բանտին հրապարակն
էր:

Այս հրապարակին վրայ մեծ բաղմուտիւն
մը կար, անանկ որ հազիւ կրնար մարդ յա-
ռաջ երթալ:

— Պէտք է որ սա կողմը անցնիմ, ըսաւ
ինքնիրեն տրամութեամբ. օն ուրեմն, որով-
հետև ուրիշ ճամբայ չկայ, վերջին ջանք մ'ալ
ընեմ և ինձի ճամբայ մը բանամ:

Բայց ի՞նչ է այս բաղմուտիւնը. տօն մը
կայ, հանդէս մը կայ, ի՞նչ կայ, միթէ ընդ-
վայրախօս մը (չարութան) կեցեր կը վայրաբա-
նէ. կամ թէ երգիչներ, պարողներ և ձեռ-
նախաղեր կան, որք իրենց երգերովը կամ
հետաքրքրական խաղերովը սյալափ բաղմու-

Թիւնն հոն հաւաքեր են : Չէ , սոսնց մէկն ալ չկայ . եթէ անանկ ըլլար , այս մեր ապուհներն այսչափ բազմութեամբ հոն չէին խռներ . այլ գործողութիւն մը պիտի կատարուի . այսինքն՝ խել մը թշուառականներ պիտի բերուին այս հրապարակը՝ պատժական նստարանին վրայ գնելու և մարմինն այրելու համար . այս ցաւայի հանդէսը տեսնելու համար է որ այնչափ բազմութիւն , ծերք , տղայք , կանայք և կուսանք հոն հաւաքուեր են , և զիրար կը նեղեն . . . Գիտեմ՝ կը զարմանաս ասոր վրայ . . . Բայց զիտցիր որ այս հրապարակի բազմութեանէն զատ՝ հոն գտնուած տուներուն պատուհաններն ալ նոյն օրը վարձուած են : Բայց այս գործողութիւնն տեսնելու համար զորոնք աւելի հետաքրքիր կը կարծես . . . կանայք : Ուրեմն մարդուն սրտին խորէն ի՞նչ կանցնի , եթէ այս չափազանց արիւթիւնը ասանկ տկար և երկատ սեռի մը քով հարկ ըլլայ ինտուել : Բայց և այնպէս իրաւունք կուտամ անոնց որք այսպիսի անհաճոյ տեսարաններէ կը վախչին , և ասանկ գործողութեան մը պատկերը զիրենք խիտ կը շուարեցնէ : Այս տեսակ մարդոցմէ է Ատէլին ալ . չգիտեր թէ ի՞նչ պիտի ըլլայ հրապարակին վրայ , և ի՞ր բարբառքը գտնուած ամբոխին ալ ուշադրութիւն չընէր :

— Ահաւասիկ , ահաւասիկ , պոռային շատ մարդիկ , պէտք է տեսնել թէ կարծած երկաթն իրենց մարմնոյն դպած ատեն ի՞նչ պիտի ընեն :

Ատէլին ջանաց յառաջ երթալ . բայց չի

կրցաւ . բազմութիւնը դանի մէկ կողմէն միւսը կը մղէր . ասանկով այնչափ յառաջ դնաց որ վերջապէս դատապարտեալներուն բոլորտիքը գտնուող զինուորականաց քով հասաւ : Աչքը վեր վերցուց որ ճամբայ մը դտնէ , տեսաւ պատժական կնքով շահնակուած թշուառներն . . . աչքը մէկդի դարձուց . . . ուղեց այս սոսկալի տեսարանէն վտախլի . . . Նոյն միջոցին ցաւայի աղաղակ մը լսուեցաւ . . . դատապարտեալի մը ձայն էր ասի որ կայրէր . այս ձայնը մինչև Ատէլինի օրտին խորը հասաւ . . . աղիքը կը դալարէին . . . նոյն ձայնը անդադար կը լսէր . . . ճանչցաւ այն աղետալի աղաղակներն . . . Այն ատեն սիրտը չը իմանալով դարձուց աչուքները յանցաւորներուն վրայ . . . ի՞նչ տեսնէ . . . դեռ երիտասարդ . բայց տժգոյն , անկերպարան մարդ մը կը հանդիպի իր աչքերուն . . . Ատէլին կը դիտէ գանի . . . կը ճանչնայ . թշուառին աչքերն իրեն աչքերուն կը յարին . . . այս մարդը Եղուարչուն է , իր ամուսինը՝ որ բնկերականութենէ մերժուելով հիմա պատժական նստարանին վրայ կը գտնուի :

Ինզճ Ատէլին զայս տեսնելով՝ սոսկալի աղաղակ մ'է կը հանէ . . . յանցաւորը դուրսը կուրծքին վրայ կը ծռէ . և Ատէլին մտորուած և նուազելու սրտով և իր զգացած ցաւուն ստատուութեանը չգիտնալով վերջապէս անըզգայ դետիքը կիցնայ , երկու ձեռքով ազնիկը պինդ կերպով քրկած :

ԳԼՈՒԽ Լ.

Բ Ա Ր Ե Բ Ա Ր Ո Յ Ն Ժ Է Ր Վ Ա Լ

Դազդիացիք մանաւանդ ժողովրդականազգեր աղէկ բնութիւն մ'ունին, և այն ալ մէկ զգացումէ մը դիւրաւ ուրիշ զգացման մը փոխուելնին է: Վերը յիշուած գործողութեան հանդիսատես ըլլալնէն վերջը՝ միմտներու տեսարանի մը առջև կանկ կառնեն, շարմանալի դիւրութեամբ մը մէյմը կուլան, մէյմը կը ծիծաղին, և իր քովը կեցողն դազանարար մէկդի հըող մարդը՝ որովհետեւ թողչէր տուած որ կազախանը տարուած թշուառ մը տեսնէ, կը փութայ իր միւս կողմը դառնուած և դեպուածով կամ անակնկալ կերպիւ իր ոտիցը ներքև ինկած գոբաղջիւն օգնել և դանի գետնէն վերցընել:

Բանտին հրապարակը խոնոզ կանայք և օրերդք իրենց հանդիսատես եղած գեղեցիկ տեսարանը ձգելով խկոյն Ատէլինի քով եկան անոր օգնելու համար որ անզգայ գետինը փուռած մնացած էր. և զինքը իր աղջկանն հետ մտապայ սրճարան մը տանելով սկսան դարման ընել անոր, և այս դէպքին նկատմամբ խել մը առարկութիւններ մէջ բերել:

— Կարելի է, կըսէին ոմանք, բազմութիւ-

նրն ու տարութիւնը խեղճ կինն անհանդիսաբերին: Ոմանք ալ թէ այսպիսի ոչինչ պատճառ մը չի կրնար զմարդ այս աստիճան անզգայացընելը Այս վերջիններուն առարկութիւնը խիստ իրաւացի էր:

— Թերեւս, ըսին ուրիշներ ալ, այս կինը յանցաւորաց մէջ անանկ մէկը տեսած ըլլայ որ իր ծանօթն ու միանգամայն սիրելին եղած ըլլայ:

Մինչդեռ ամեն ոք այս դէպքին պատճառը դուշակելու կը ջանար, Էրմանս օրտառու ճիւղեր կարճէկէր, և թէպէտ խիստ պզտիկ ըլլալով չէր կրնար իր գլխուն պատահածն իմանալ, բայց ստեղծին կուլար մայրը զինքը չի գրկելուն համար:

Վերջապէս հաջիւ հազ կրցան խելքը դըլուխը բերել. խեղճ կին . . . այս իրեն ըրածնին ծառայութիւն մ'է. . . ամեն ոք հետեւաբարութեամբ կը նայի թէ նա ինչ պիտի ըսէ. . . Բայց Ատէլին աչքերը չըս ասնելով զոր իբր թէ վտանգէ մը ազատել կուզէ, առանց խօսք մ'ընելու սրճարանէն գուրս կեղնէ:

Ատէլինի այս ըրածին վրայ բուրբ կեցողներն կը դարձնան:

— Ինչո՞ւ կերթար, տիկին, ըսաւ բարի պատու մը զԱտէլին բռնելով, քիչ մը հանգչեցէք որ աղէկ մը խելքերնիդ գուլխնիդ դայ:

— Ահ, պէտք է որ երթամ. . . պէտք է որ քովը երթամ, պատասխանեց Ատէլին դէ-

պի փողոցը նայելով . . . հոն է, ինձի կըստա-
սէ . . . ինձի ականարկեց որ զինքը այն տեղէն
ազատեմ . . . չղթաները քակեմ . . . դեռ կը
լսեմ իր ձայնը . . . այո . . . զիս կը կանչէ . . .
տեսէք . . . դուք այ կըլսէ՞ք . . . կը ցաւի . . .
ինչ սրտաշարժ աղաղակ . . . թշուառը . . . աչ,
ինչպէս կը ցաւը քնեն մարմինը . . .

Ատէլին նուազեալ ինկաւ ամօռի մը վրայ,
իր աչքերը կարծես թէ տռչեց դանուած սու-
կայի տեսարանէ մը կը փախչէին : Հոն դանու-
ողներն այս խեղճութիւնը տեսնելով՝ սկսան
լալ, իմացան որ Ատէլին խելքը կորսնցուցեր
էր. ամեն ոք ցաւելով անոր վրայ ջանացին խել-
քը դուրսը բերել ու միտքը հանդարտեցը-
նել : բայց պարտալ տեղը հազարաւոր մեծիմա-
րական խօսքեր կընէին . Ատէլին անոնց ըսած-
ները մտիկ չէր ըներ . միայն աղչիլը գիւրկը
առնուլ ու փախչելը կը նայէր :

Ինչ ընելու է, ասոր ո՞վ ըլլալն ուսկից ի-
մանալու է, այս խեղճ կնկան ծնողքը ո՞վ է,
հազուաաներն հարուստ մէկը ըլլալն չեն իմա-
ցընէր, քովը եղած կապոցն ալ որուն մէջ իր
ուռեցած քիչ մը ստացուածքն կային, սրճա-
րան բերած ատենինն քովը չէր . անշուշտ ան-
զգամին մէկը այն միջոցին զինքը դիտելով ա-
ռիթմը դատած էր Ատէլինի այս մտացած հա-
լատութիւնն անկէ խլելու : Ուստի մնաց ամեն
բանէ զուրկ . և որովհետեւ կան անանկ մար-
դիկ որք թէ պէտ մէկու մը վրայ կը գլխան,
բայց անոր բան մ'ընել չեն ուղեր, վասն որոյ

այս մարդիկն ալ խեղճ կինը հիւանդանոց, և
աղջիկն ալ որբանոցը զրկել կը խորհէին, և
այն ինչ ի գործ պիտի դնէին, նայիս սրճա-
րանէն ներս մէկը մտաւ ու զիրենք արդիւնց :
Այս մարդը ձերունի մ'էր, որ բազմու-
թեան պատճառն իմանալու համար եկաւ . ա-
մեն մարդ մէյմէկ պատմութիւն ըրաւ, իսկ
ինքը Ատէլինի քով դանուող հետաքրքիրներն
մէկդի ընելով մտացաւ անոր : և զարմացաւ
տեսնելով որ իրեն հետ Վիլինօւլ-Սէն-ժօրժէն
փարիզ եկող կինն էր :

— Այո այն է . . . պոռաց նա, և իբրման
ժպտելով թեւերը անոր երկնցուց . վասն զի
ճանցաւ զանի որ քանի մը ժամ առաջ իրեն
չաքարեղէն տուած էր :

Այն առեւն այս ձերունին բաղմութեան հա-
մար օգտակար անձ մ'եղաւ, որունք այս խեղճ
կնկան ով ըլլալն հասկնալու ուղիւր. համար
սկսան ձերունիին այլ և այլ հարցումներ ուղ-
ղել : Բայց նա մէկ քանիներուն կարճ պատաս-
խաններ տալով չուտով կառք մը բերել տուաւ,
և խեղճ կինը պատահածներն սրճարանին տի-
րոջմէն լաւ մը ստուգելէն վերջը, Ատէլինն
ու աղջիկը կառքը դրաւ, և զանոնք բազմու-
թեան առջիւէն հեռացուց :

Ատէլին ինքզինքը այն աստիճան կորսնցու-
ցած էր որ իր չորս կողմը եղածներէն ամե-
նեւին տեղեկութիւն չունէր, աղջիկն անգամ
գրեթէ աչքին չէր երեւար, և առանց խօսք
մ'ընելու թողուց որ զինքը տանին :

Պարոն ժեբովալ (ասի յիշեալ ծերունւոյն ա-
նունն է) սաստիկ խղճաց Ատէլինի վրայ, և չի
կրցաւ հաւատալ որ ասի առաւօտուն տեսած
կինն ըլլայ, որ նոյն միջոցին թէպէտ Թխուր
էր, բայց խելքը գլուխն էր, և հիմա այս աս-
տիճան անզգայացած տեսաւ, և որուն պատ-
ճառն ալ չէր կրնար գուշակել :

Կառքը գեղեցիկ դարդարուած պանդոկի
մը առջև կեցաւ : Պ. ժեբովալ փարիզ եկած ա-
տեն միշտ հոն կանցընէր . ուստի պանդոկին
մարդիկը զինքը լաւ կը ճանչնային, և ամեն ոք
անոր հասակին և բնաւորութեանը արժանի
յարգանքը կը մատուցանէր իրեն :

Ատէլինն ու իր ազջիկը կառքէն վար իջե-
ցընելով պանդոկապետուհւոյն առջին տարաւ :

— Առ, տիկին, ըսաւ, ահաւաստիկ քեզի
օտարական կին մը՝ զոր քանի մ'օր աղէկ խը-
նամելը կը խնդրեմ :

— Ո՛հ, Ատուած իմ, որչափ սիրուն է այս կինը
. . . բայց ինչու Թխուր է . . . այդ ինչ մթին
նայուածք է . . . համբ է, ինչ է, Պ. ժեբովալ :

— Ձէ, հիւանդ է . . . թշուառ գէպք մը
պատահած է իրեն . . . կրտն թէ խելքն ալ . . .

— Ով Ատուած, ինչ ցաւայի բան . . .

— Կը յուսամ որ անզաղար խնամելով
կրնանք խելքը գլուխը բերել . . . այս կինն
եր դաւակովը քեզի կը յանձնեմ . . .

— Հոգ մի բնէք, պարոն ժեբովալ, ես ա-
ղէկ կը նայիմ : Ասանկ թշուառներն ալ ձեր
գլխէն չեն պակսիր :

— Ինչ ընեմ, տիկին, մարդս իր ձեռքէն
եկածն ընելու է : Ես դաւակ չունիմ, ծեր ալ
եմ. ունեցածս ո՛վ պիտի ուտէ, քանի որ ողջ
եմ, միշտ բարիք ընելու եմ. դ.ու. լաւ դիտես
որ բարիք ընելն ինձի համար մեծ հաճութիւն
մ'է :

— Ահ, պարոն ժեբովալ, իցէ թէ բուրբ
հարուստներն ալ ձեզի պէս խորհէին :

— Ըօէ, տիկին, Տիւրբէ (սպասաւորին ա-
նունը) եկա՛ւ :

— Այո, պարոն, սենեակնիդ ձեզի կըս-
պասէ .

— Երթամ գանեմ . . . կաղաւեմ սա կըն-
կանը վրայ աղէկ հոգ տար . ինչ որ ըսէ, ըրէ :

— Խիտա բարի, պարոն, դ.ու.ք անհոգ ե-
ղիք :

Պարոն ժեբովալ գնաց իր սենեակը, և հոն
դաւաւ իր ծերունի սպասաւորը որ անհամբե-
րութեամբ իրեն կրպտաւ :

— Ահ, պարոն, ո՛ւր մնացիք . ուշանալ-
նիդ զիս անհանդիսա ըրաւ . . . ճամբորդու-
թիւննիդ երջանիկ եղաւ, բան մը իմացա՛ք :

— Ձէ, բարեկամս, երբեմն Միւրվիլի ըն-
տանեաց բնակած տունը հիմա կը ծախուի :
Ինձի պատմեցին որ Եդուարդ Միւրվիլ անու-
նով մէկը ժամանակաւ իր կնոջը հետ հոն կը
նստի եղեր . բայց հիմա ո՛ւր և ինչ ըլլալին
չեն գիտեր : Դուռն, Տիւրբէ, ինչ իմացար :

— Ես ալ, պարոն, ձեր իմացածն միայն
իմացայ : Ձեր հին բարեկամներն մեռեր են և

աղաքներն ալ չեմ գիտեր ուր են եղեր : Քանի մը հոգի Միւրվիլ անունով մէկու մը վրայ խօսեցան ինձ , որն որ երբեմն գործոյ տէր , իսկ հիմա դաւաճան , խաղամուլ և վերջնապէս խիստ գէշ մէկն է եղեր . . . Բայց չի կրցան կամ չուզեցին ինձ ըսել թէ ի՞նչ եղած է : Կարելի է այս Միւրվիլը այն երիտասարդն ըլլայ , որ տասներեք տարեկան եղած ատեն հօրը տընէն փախաւ . . . այսպիսի մէկն ալ ապագաւ յին մէջ աղէկ չի կրնար ըլլալ . . .

— Խիստ վշտացած եմ երկար ատենէ ի վեր փարիզէն հեռու մնալուս վրայ . տասը տարի կայ որ չեմ եկած , և տարիէ մ'ի վեր է վաճառականութենէ դադրած ըլլալուս համար կրցայ կրկին հոս գալ : Բայց տասը տարուան մէջ ի՞նչ փոփոխութիւններ եղած են , իմ բարեկամներս (ճշմարիտ է որ դացած ատենս ճեր էին) մեռած կամ աներևութացած են : Այս ամենը զիս կը վշտացնէ , Տիւրբէ , այս քաղաքը միայն յիշատակներ կը ներկայացընէ ինձ . . . Թողունք ուրեմն այս քաղաքը և երթանք վժժի պղտիկ տուն բնակինք . իմ կեանքս հոն աւարտել կուզեմ Բայց հիմա թողունք զայս . բան մը պիտի իմացընեմ քեզ իմ ճամբորդութիւնս բողբոջին անգուս չեղաւ . երիտասարդ կին մը ճանչցայ , գիտե՞ս , խիստ այնիւ , բայց աստիկ թշուառ . . .

— Բէ՛հ , ո՛ւր հանդիպեցար ատոր , պարոն :

— Փարիզ եկած ատեննիս մէկ կառ. քի մէջ էինք , որովհետեւ քու խրատներուդ չի նայելով հոս

գալու համար սա դէշ կառ. քերէն մէկը հեծայ :
— Ահ , պարոն , այդ բրածնիդ խելացութիւն չէ . . .

— Չդէ , շատ աղէկ եղաւ , ուրախ եմ քու խրատներուդ չի հետեւելըս համար , որովհետեւ անտիկ կնոջ մը հետ ճանապարհորդեցի որդիպուսածը վերջէն ամենատնուր վիճակի մը մէջ ներկայացուց զանի ինձ :

Պարոն Ժերվալ պատմեց իր ծառային թէ թէ ինչ պատահեցաւ իրեն և թէ ինչպէս վերջէն այդ կինը սրճարանին մէջ գտաւ անանկ վայրկեան մը որ զանի հիւանդանոց պիտի տանէին : Տիւրբէ որ իր տիրոջը պէս բարեփորտ էր , խիստ փափաքեցաւ տեսնել այդ կինն ու իր աղջիկը . ելաւ գնաց իր տիրոջը հետ Ատէլինի սենեակը , ուր Ատէլին խառվեալ սըրտիւ կը ճեմէր , և Էրմանս թիկնաթոռի մը վրայ կը քնանար :

Ատէլին ստոնց ներս մտնելը տեսնելուն պէս ստիկում մը զգաց . վաղեց աղջկանը քով այնպէս երեսցընելով որ կը վաննայ թէ աղջիկը կը յափշտակէն կը տանին :

— Մի վաննաք , տիկին , ըսաւ ծերունին քաղցրութեամբ քովը մօտենալով , ես ձեր բարեկամն եմ որ գձեզ մխիթարել կուզեմ :

. . . Ըսէք , ի՞նչ է ցուերնիդ , կը յուսամ որ անոր դարման մը կրնամ ընել :

— Այս ի՞նչ բազմութիւն է բողբոթիքս , ըսաւ Ատէլին չորս կողմը չարագուշակ նայուածքներ արձակելով , այս ո՛րչափ մարդ է . . .

ինչո՞ւ եկեր են հոս . . . ահ, չեմ ուզեր, չե՛ ,
 չեմ ուզեր հոս կենալ . . . հոս թխուսաներու
 հանդիսատես ըլլալու համար եկեր են . . .
 Թողէ՛ք որ իսխչիմ . . . բայց, ահ, չեմ կըր-
 նար . . . անգութնեհն զիս բռնե՛ր են . . . զիս
 կը սեղմեն . . . ահ, դոցեմ՝ աչքերս, որ չի
 տեսնեմ . . . նայեցէ՛ք, նայեցէ՛ք . . . հոն է
 . . . քօօս եկաւ . . .

Ասոնք բտելով ամոռուի մը վրայ ինկաւ և
 ձեռքերը երեօփն վրայ բռնեց :

— Խեղճ կին, ըսաւ Տիրբրէ, սոսկալի դէպք
 մը պատահած ըլլալու է իրեն . . . : Գիտէ՛ք,
 պարոն, այս կինը քցուական ընտանեաց մը
 սերունդ ըլլալ կերեի՛ . . . Իր հանդերձները շատ
 պարզ են . . . գրեթէ գիւղացիի հանդերձ-
 ներու կը նմանին : Բայց և այնպէս կը հաստա-
 տեմ որ ասի գիւղացի մը ըլլալու չէ՛ :

— Այո, անտարակոյս . . . Ես ալ քեզի
 պէս կը դատեմ . . . Բայց ասոր ո՞վ ըլլալն
 ինչպէս հասկընալու է . . . Եթէ սա ազան
 քիչ մը խօսէր . . .

— Տղեկը արթնցաւ, պարոն, շաքարեղէն
 տուէ՛ք իրեն և արտասանել իրցած անուններն
 լաւ որոշել ջանացէ՛ք :

Պարոն Ժէրվալ Էրմանսին մօտեցաւ և զայն
 գոգեց . . . Էրմանս ճանչցաւ զանի, և ինքնի-
 բեն քօլը գնաց . . . շաքարեղէն տուին անոր,
 խաղցուցին, նայիս Յակոբոս անունը թօթօվեց,
 որովհետեւ Յակոբոս ամեն իրիկուն զանի ծուռ-
 կին վրայ կը խաղցընէր և հետը կը զրօնուէր :

— Կարծես թէ շատ ժամանակէ ի վեր զձեզ
 կը ճանչնայ, պարոն, ըսաւ Տիրբրէ իր տիրու-
 ջը, կերելի թէ Յակոբոս անունը կարտասա-
 նէ . . . տեսէ՛ք . . . մտիկ քրէ՛ք . . .

— Խեղճ աղեկ . . . յերուէ այնպէս կըսէ
 . . . կարելի է հօրը անունը եզած ըլլայ . . .
 փորձենք մէյժը, նայինք Յակոբոս կըսէ . . .
 մայրը հարկաւ այս անունը կը ճանչնայ . . .

Երեւունին մօտեցաւ Ատէլին և բարձր
 ձայնով Յակոբոս հանցեց . . . Ատէլին իսկոյն աչ-
 քերը վեր վերցնելով ինքն ալ այս անունը
 տուաւ :

— Լաւ, ձայներնիս լսեց, ըսաւ Տիրբրէ
 ցած ձայնով :

— Յակոբոսը կը փնտռէք, ըսաւ Ատէլին
 Պ. Ժէրվալին. ահ, կազուեմ, չըլլայ որ այս
 սոսկալի գաղտնիքը իրեն իմացնէք . . . Թող
 ինքը չգիտնայ այս ամօթալից գործքն . . .
 Խեղճ Յակոբոս . . . Շշմարիտ իմանալուն պէս
 ցաւէն կը մեռնի . . . Ահ, խոտացէ՛ք ինձ այս
 մասին իրեն բան մը չըսելու :

Պ. Ժէրվալ խոտացաւ, և Տիրբրէ տիրու-
 թեամբ զլուխ երեքըցնելով՝

— Անօգուտ բան է, տէր իմ, ըսաւ, յոյս
 չկայ բժշկուելու . . . Բայց ձեր նպատակն ի՞նչ է :

— Հիմա երթանք պէտք եղած խուզար-
 կութիւններն ընենք, Դու Տիրբրէ, գնա միւ-
 նէօվ-Սէն-Ժօրթ, և հոն գտնուած բոլոր Յա-
 կոբոսներն գտիր, կարելի է բան մը կիմանաս
 . . . Եթէ վերջապէս բան մը չի հասկընանք,

այն ատեն տեսնենք, ինչ կընենք . . .

— Ոհ, ես խիտ ապահով եմ, աէր իմ, որ դուք այս երկտասարդ կիկն ու իր դժբաղդ զուակը չի պիտի թողուք :

— Չէ, Տիւրքէ, չի պիտի թողում: Բայց ժամանակն ուշ է, ես յոգնած եմ, պիտի երթամ պառկիմ: Վաղը հարկ եղած խուզարկութիւններն կընենք :

Պ. Ժէրվալ Ատէլինն ու իր աղջիկը կրկին պանդոկին մարդոց յանձնարարէն վերջը գնաց պառկեցաւ :

Ատէլին դէշերն ալ ցորեկուան պէս անցուցերբեմն սաստիկ խռովուելով անյարմար խօսքեր կընէր, երբեմն ալ ամենախորին տարտմութեան մէջ ինկած կարծես թէ իր քովը եղածներն չէր տեսներ, Բայց և այնպէս սա ալ կը գիտէին որ աղաղակ մը թէ բարձր ըլլար, և թէ ցած, յանկարծ զինքը կըթափեցընէր և ցնորական խօսքեր ընել կուտար անոր :

Հետևեալ օրը Պ. Ժէրվալ բժշիկ բերել տուաւ խեղճ կնոջը դեղ մը բնելու համար. Բայց նա փոխանակ դեղ մը տալու ըսաւ թէ հանդարտ և զուարճալի բնակութիւն մը միայն կընայ իրեն այս հիւանդութեանն օգտուողար ըլլալ. իր բժշկութեանն համար ալ քիչ մը յոյս ցուցուց, չգիտնալով թէ ինչ պատճառաւ իր խելքը կորսնցուցեր է :

Տիւրքէ ելաւ գնաց Վիլնէօլ-Սէն-ժօրժ, և հօն երկու Յակոբոս միայն դատաւ, որոնք ոչ կըցան զԱտէլին ճաննալ, և ոչ ալ անոր վրա-

յօք տեղեկութիւն մը տալ : Ուստի Տիւրքէ առանց բան մ'իմանալու դարձաւ տիրովը քով :

Պ. Ժէրվալ ալ փարիզու մէջ կըցածին չափ խուզարկեց. բարտ լրագիրներն աչքէ անցուց որ կարելի է այս երկտասարդ կնոջ և իր աղջկան աներեւոյթ ըլլալուն վրայ ազդ մը, ծանուցում մը կը կարդայ. սակայն ամենեւին բան մ'ալ չի դտաւ :

Տասր օր անցաւ. Ատէլին միշտ մի և նոյն վիճակի մէջ էր. երբ դիպուածով յանկարծական ձայն մ'առնուր, խելոյն կը ցնորէր ու սոսկալի կերպարանք մը կը տեսնուէր իր վրայ: Միայն իր աղջկանը ձայնէն բան մը չէր ըլլար, և այս ձայնը խեղճ մօրը մինչև սրտին խորերը կը թափանցէր :

— Սիրելի Տիւրքէս, ըսաւ Պ. Ժէրվալ տասր օրէն վերջը. կը տեսնեմ որ այս աղջիկը նոյ՛ ընտանիքը գտնեն անկարելի պիտի ըլլայ. ուստի ես որոշեցի զանի հետս տանիլ, Գիտես որ ես այսուհետև երթամ վօստի առնու պիտի նստիմ. այս տունը որ առանձին տեղ մ'է և բոլորտիքը պղտիկ անտառներ կան, մեր հիւանդին համար խիտ յարմար պիտի գայ : Բրժիկն ալ այնպէս ըսաւ. պէտք է անոր խրատին հետեւիլ. գոնէ այնտեղ այս խեղճ կնոջ հանդարտութիւնը վրդովող բան մը չի գըտնուիր. հօն կըզգուշանանք որ բնաւ ձայն մը չառնու. աղջիկն ալ կը մեծցնենք. կատարինէ (Պ. Ժէրվալի սպասուհւոյն անունը) պղտիկ տղաքը շատ կը սիրէ. ուստի սիրով կը մեծցը-

նէ այս խեղճ ազնիւն ալ, և այս անմեղ աղեկին դ.գ.ու.անքն ընդունելով իր մօրը վրայ տարած խնամացը հատուցումն ընդունած կըլլայ, ինչ կըսես, Տեւրբէ :

— Ի՞նչս ուրախ եմ, պարոն . . . ևս գիտեմ որ դուք մարդասէր և բարերար մարդ մ'էք, և ունեցածնեք ազգատներուն կուտաք :

— Ատիկայ մեծ հաճութիւն մ'է ինձ համար. որովհետեւ զաւակ չունիմ, ազգատները իմ զաւկներս են : Գուն գիտես որ ևս փարիզ կուգայի իր ժամկտովեան ատեն ինձի սիրելի եղած պղտիկ մանչ տղու մը վրայօք լուրեր առնելու յուսով, սրն որ իբաւունք ունի իմ պաշտպանութեանս . (այս խօսքը Յակոբոսին համար է) բայց որովհետեւ զանի չի գտայ, պղտիկ ազնիւն անար տեղը թող անցնի : Այս վայրկեանն որդեգիր կընեմ ինձ, հոր կը ասանիմ իր մօրը վրայ, և շնորհակալ կըլլամ Աստուծոյ որ զիս իրենց պաշտպան կարգեց :

Գ. Ժերմով հետեւեալ օրն իր այս ըսածը գործադրեց. հանգիստ և ընդարձակ կառք մը բերել տուաւ, մէջը դրաւ Ատէլինն ու իր աղջիկը և ճամբան իրենց պէտք ըլլալիք բոլոր բաները : Վերջը պանդոկապետուհոյն իր հասցէն տալով՝ որպէս զի եթէ Ատէլինն ու իր աղջիկը փնտառող մ'ըլլայ, իրեն նամակաւ մը իմացնէ, ինքն ալ իր ծառային հետ մտաւ կառքը երթալ իր կենաց վերջին օրերն դեղձկան տունն անցնելու համար :



ԳԼՈՒԽ ԼԵ.

ՅԱԿՈԲՈՍ ԵՒ ՍԱՆՍՈՒՍԻ

Մինչդեռ Գ. Ժերմովի կառքը զԱտէլին և իր աղջիկը Դաղղիոյ հիւօխային կողմը կը տանէր, անդին Յակոբոս իր սիրած երկու հօգեներուն աներեւութանալուն վրայ ինչ խորհելու էր : Չայս գիտնալու համար դառնանք ագարակը :

Յակոբոս դաշտէն տուն դառնալով տեսաւ որ Ատէլին և իր աղջիկը ըստ սովորութեան դէմը չեղան . հասարակայ սրահն ալ չեն . ուստի անհանգիստ ըլլալով հարցցու Լուիզայի թէ արդեօք Ատէլին հիւանդ է :

— Կը յուսամ որ չէ, ըսաւ Լուիզա . բայց այսօր մինչև իրիկուն չերեցաւ . գիտես որ ինքը երբեմն առանձն իր սենեակը նստիլը կը սկրէ, ուստի չուղեցի զինքը անհանգիստ ընել : Բայց և այնպէս մինչև հիմայ վար իջնելու էր . . .

— Երթամ նայիմ ինչ եղաւ, ըսաւ Յակոբոս, և խոլոյն Ատէլինի սենեակը ելաւ : Ագարակին բնակիչներն ալ սկսան վախնալ որ չըլլայ թէ Ատէլին հիւանդ ըլլայ . Սան-Սուսի բան մը չէր խօսեր, բայց միւսներուն պէս ան-

հանգիստ էր յիջելով առաւօտուն Ատէլինի տը-
ուած լուրք, որուն համար խելքին դպած ըլ-
լան ալ մտքէն կանցնէր: Ամեն ոք անհամ-
բերութեամբ կըսպոսէր որ Յակոբոս վար իջ-
նէ . . . վերջապէս ի՛լա . . . տխուր և ցաւա-
լի դէմքով, արտասուալից սափք և ակնկոր:

— Ի՛նչ կայ, ի՛նչ կայ, ըսին ամենքը մէկ
բերան:

— Հոն չէ . . . գացեր է . . . մեզի ձգեր է,
ըսաւ Յակոբոս սրահին մէջ մեծաբայլ չըջելով:
բուռերը գոցելով և ոտքը սաստկութեամբ
գետինը զարնելով:

— Գացե՛ր է, ըսաւ Լուիզա մեծ զարման-
քով:

— Ո՛հ, անկարելի բան, ըսաւ Կիլյօ:

— Առէ՛ք, կարդացէ՛ք . . . ըսաւ Յակո-
բոս, և Ատէլինի ձգած թուղթը անոնց ներ-
կայացուց: Կիլյօ առաւ թուղթը և քանի մը
վայրկեան վրան նայեցաւ . . .

— Կարդա նայինք, ի՛նչ է դրեր, ըսաւ
Սան-Սուսի Կիլյօյի քոյի երթալով:

— Դժբաղդարար կարդալ չեմ գիտեր,
ըսաւ Կիլյօ միշտ թուղթին վրայ նայելով: Սան-
Սուսի թուղթը ձեռքէն առաւ և բարձր ձայ-
նով կարդաց:

— Կը տեսնե՛ք, գրեր է որ իր բացակա-
յութեան վրայ անհանգիստ չըլանք, ըսաւ
Լուիզա, ուստի հաւատարեմ որ ըստով պետի
վերադառնայ:

— Այո, ես ալ այնպէս կը յուսամ, ըսաւ

Կիլյօ: Ատէլին առանց մտք բարով բերու-
մեզնէ չի զատուիր, կարելի է որ . . .

Սան-Սուսի Կիլյօյի կարծիքէն ըլլալով իր
բարեկամը հանդարտեցընելու ջանաց:

— Բայց վերջապէս, ըսաւ Յակոբոս, ո՞ր
գնաց . . . Ինչո՞ւ սասնկ յանկարծակի մեկ-
նեցաւ . . . Դեռ երէկ սասնկ խօսք մը չը-
րաւ . . . և այսպիսի դեռահաս, վտառակ
կին մը գրկուելու տղայով մը ճամբայ ելնէ . . .
Պիտի հիւանդանայ . . . անշուշտ փարիզէն
լուր մ'առած ըլլալու է . . . Ինչո՞ւ ինծմէ կը
պահեն, չեմ գիտեր . . .

Յակոբոս այս խօսքերն բերով Սան-Սու-
սիի նայեցաւ. սա աչքերը գետին ծռեց, պե-
տերը ուրեց, չիտիեցաւ, և չէր գիտեր թէ
իր շիտթուլիւնն ինչպէս ծածկէ:

— Իս նայէ, եղբայր Յակոբոս, ըսաւ Լու-
իզա Յակոբոսը հանդարտեցընելու ջանալով,
չի յուսահատինք, վաղը կարելի է կը վերա-
դառնայ:

— Այո, ըսաւ Կիլյօ, և վաղը խիտ աղ-
ուար ու բախտութեան ճայ մը կընենք, և անց-
եալ տարուան գիլիկն տակառն ալ կը բանանք
որն որ անուշաւ սկսեր է:

— Քանի մ'օր պիտի սպասեմ, ըսաւ Յա-
կոբոս, և եթէ չի վերադառնայ, պիտի եր-
թամ գտնեմ գի՛նքը . . . Թէ և աշխարհիս մէկ
ծայրն ալ ըլլայ:

Տխրութեամբ մեկնեցան իրարմէ: Անցան
չատ օրեր, և Ատէլին չերեցաւ: Հանդարտու-

թիւն, զուարճութիւն և ամեն ինչ ազարա-
կէն հեռացան. Յակոբոս իր աշխատութիւն-
ներն մոռցաւ, կիցո իւր մշակութիւններն, և
լուիզա իր անտեսական խնամքներն, Սան-
Սուսի ալ զլուիզա, և իւրաքանչիւր ոք տըխ-
րութեամբ լցուած էր: Երգ, ուրախութեան
ճաշ, պատմութիւն, պատերազմի խօսք, ա-
մեն բան վերջացաւ: Սան-Սուսի Ատէլինի վե-
րադառնալէն յոյր կտրել սկսաւ. շատ զզջաց
իր ամուսնոյն վրայք անոր խօսք բանալուն
վրայ, և Յակոբոսին քօվերը կը պտըտէր ա-
ռանց ճշմարտութիւնն յայտնել համարձակե-
լու:

Ութերորդ օրը Յակոբոս իմացուց որ իր
հարօք փնտռելու պիտի երթայ: Սան-Սուսի
այն տանն որոշեց ամեն բան խօտիլ. մէկդի
տարաւ իր ընկերը, և սկսաւ դիտուն մազերը
փետել խորին հառաչանքներ հանելով:

— Սա խենդութիւններդ վերջացուր, և
ինչ որ պիտի խօտիս, խօտէ, ըսաւ Յակոբոս:

— Ախ, բոլոր յանցանքը իմ քօլս է . . .
ի՞նչ ըսեմ . . .

— Ի՞նչ ըսել կուզես . . .

— Քու սիրելի հարսիդ ազարակէն մեկ-
նելուն պատճառն ես եմ:

— Դո՞ւ, թշուառական . . .

— Եթէ ինձի չի ներես, իրաւ որ ինքը-
ղինքս պիտի մեռցնեմ:

— Մն ուրեմն, խօտէ, կազակէմ:

— Իմացայ որ եղբայրդ բանան էր . . .

չի համարձակեցայ քեզի ըսել . . . չուղեցի նա-
ւ իր կնոջն ալ յայտնել. բայց այնչափ աղա-
չեց ինձ . . . և դիտես ալ որ ես կանանց ա-
ղաչանքին չեմ դիմանար, մանաւանդ անոնց
զորս կը յարգեմ . . . սա ալ խորհեցայ որ Ա-
տէլին պիտի կրնար փոքր ինչ իր ամուսինը
մխիթարել:

— Կը կարճե՞ս որ ես քարասիրա եղած
ըլլամ, եղբայրս թշուառացեր է, լլինցաւ. ես
ալ անոր ինձ դէմ ունեցած վարձունքին կը
ներեմ, և զայն մխիթարելու կը փութամ:

— Գիտեմ թու սիրտդ . . .

— Եւ եթէ դու լուէիր, անզգամ, և մին-
չև ետքը զիս անհանգստութեան մէջ ձգելիք,
ան ատեն պիտի տեսնէիր թէ . . . Ըսել է որ
խեղճ Ատէլին հիմա ամուսնոյն քօլս է:

— Այո, ատոր տարակոյտ չկայ:

— Եզուարդ ալ փարիզ բանտարկուած է:

— Այո, այնպէս իմացայ:

— Ամեն բան կերած ու ծախած ըլլալու
է որ իր պարտատէրներն ալ զինքը բանտար-
կել տուեր են:

— Ճիշդ այնպէս, ինձ ըսին որ տոմսակի
մը համար էր:

— Ահ, եղբայր իմ, եթէ հարուստ ըլլայի,
կուղէի քեզի օգտակար ըլլալ . . . Բացց վի-
ճակս չի ներեր . . . հօգ չէ. դոնէ կերթամ
իրեն կիմացընեմ որ բարեկամ մը կայ իրեն
համար: Սան-Սուսի, ես փարիզ պիտի եր-
թամ:

— Ես ալ հետզ կուգամ . . . քեզ մինակ կ'ըող՞ւմ . . .

— Լաւ . եղբօրս բանտարկուիլը անոնց չենք խմացըներ . . . վասն զի այդ բարի մարդիկը մեզի ոգտակար ըլլալու համար խել մը նեղութեան տակ պիտի մտնեն , մենք ալ չի պիտի ընդունինք . . . մեզի համար կրած նեղութիւնին բաւական է :

— Իրաւունք ունիս, ըսածդ հասկըցայ . երթանք մնաք բարով ըսենք ու մեկնինք :

Սան-Սուսի և Յակոբոս մեկնեցան ագարակէն խմացընելով որ Ատէլինք գտնելու կերթան , և կէս օրին հասան փարիզ :

— Դու ճամբան դիտես , ըսաւ Յակոբոս իր բարեկամին , զիս բանտը տար . . . : Ես կերթամ հրամանատարին , գնդապետին , կառավարին , վերջապէս ամենուն հետ ալ կը խօսիմ , եթէ պէտք ըլլայ : Այս պատասնչանքս ինձի համար մեծ առաջնորդ մ'է :

— Մտիկ ըրէ . ես ալ քեզի պէս բանտը չեմ գիտեր . բայց քեզ իմ հին բարեկամիս կը տանիմ որ բանտարկելոց պաշտօնակալն է . նա մեզի կ'մացընէ թէ ինչպէս կրնանք եղբայրդ տեսնել :

— Լաւ . երթանք բարեկամդ գտնենք . . . ո՞ր է այդ մարդը :

— Ես հիմա կը գտնեմ :

Քայլերնին փութացընելով հասան պաշտօնակալին քով , որն որ իր բարեկամը ճանչցաւ , և հարցուց թէ ինչ գործով եկած է փարիզ :

— Քեզի բարեկամ մը կը ներկայացընեմ , ըսաւ Սան-Սուսի , որ քաջ մարդ մ'է :

— Իր վրայ տեսնուած վէրքի նշաններն ու պատուանշանը իրեն ինչպէս մարդ ըլլալն կ'ըմացընեն : Կրճամ ձեզի ոգտակար ըլլալ , պարտնայք :

— Այո , կարեւոր գործի մը համար եկած ենք . . . բանտարկեալ մը տեսնել կուզենք . . . կը ճանչնա տղ ըլլալը . եղբօրդ Միւրվիլ , որուն վրայ անցեալ անդամ խօսեցար ինձ . . . այս բարեկամը անոր եղբայրն է :

— Դու անոր եղբայրն ես , ըսաւ պաշտօնակալն զարմանքով Յակոբոսին նայելով . . . ցաւալի բան :

— Իմ վրայ մի ցաւիք , ըսաւ Յակոբոս , այլ եղբօր վրայ որ թշուտու է հիմա . . . ապահով եմ որ նա անպատիւ գործ մ'ըրած չէ :

— Հիմա հոս ի՞նչ ընել եկիք ես , ըսաւ պաշտօնակալն առանց Յակոբոսին ըսածին պատասխան տալու :

— Ինչ պիտի ընեմ , եղբայրս պիտի տեսնեմ . արդէն իր կ'ինն ու զուակը քովը եկած են :

— Մինչև հիմա բնաւ կ'ին մը եկած չէ քովը , մէկն ալ եկած չէ զինքը տեսնելու համար :

— Այդ ի՞նչ խօսք է . . .

— Ալ այսուհետեւ ամեն ջանք պարտալ է . . . վասն զի հիմա անի ուրիշ տեղ է . . .

— Ո՛ւր է :

— Ես ստեղծ աւելի խօսք չեմ կրնար ընել ձեզ :

— Ինչ ըսել է . . . եղբորս ուր ըլլայք չի պիտի խմանամ :

— Կեցիր, Յակոբոս, մի բարկանար, ըսաւ Սան-Սուսի, կարելի է ինքք ազէկ չգիտեր. կերթանք ուրիշէ մը կը հասկընանք :

— Կը կրկնեմ ձեզ, պարոնայք, որ եղուարք Միւրջիլ իր բանար չէ. վաղը փարեղէն պիտի մեկնի, Մնաք բարով, քով բարեկամ, հաւատա ինձ ու գեղդ. դարձիր . . . առկէ աւելի տեղեկութիւն առնուլ մի ուղեր . . . մոռցիր այնպիսի եղբայր մը, որ անարժան է քեզ :

Պաշտօնական այս խօսքերն ըսելով Յակոբոսի ձեռքը սեղմեց և մեկնեցաւ :

Յակոբոս անչարժ մնաց . երեսը տխրեցաւ, նայուածքն աւելի խստացաւ . Սան-Սուսի ալ լուռ կեցեր էր, և սկսաւ ժպտնուլ որ իր բարեկամին եղբայրը միայն պարտքի համար բանար դուռած չըլլայ : Երկու բարեկամք չի համարձակեցան իրենց խորհուրդներն իրարու հաղորդել, և գտնուած աղեղնին մնացին, մինչև որ գիշերը վրայ հասաւ :

— Ինչ պիտի ընենք, ըսաւ վերջապէս Սան-Սուսի, երկուքս ալ մոլորեալ այլտար դարձանք. բան մը որոշելու է :

— Երթանք Ատէլինը գտնենք, ըսաւ Յակոբոս նուազեալ ձայնով մը և մոռնանք շեղուարք . . . վախճամ թշուառականը ծանր . . .

երթանք Ատէլինը գտնենք. ահ, նա զիս երբէք չամչցներ . . .

— Ոհ, անոր համար իմ կեանքս գրած եմ . . .

— Խեղճ կին . . . խեղճ էրմանս . . . արդեօք հիմա ո՛ւր են . . . կարելի է իր ամուսնոյն համար զգացած ցաւը հիմա . . . ահ, Սան-Սուսի, ինչո՞ւ այս բանը իրեն խմացուցիր . . .

— Այ մի խօսիր . . . բան մ'էր ըրի, բայց շատ զո՞ւցայ :

— Ամենեւին հանդատութիւն չկայ ինձ համար, մինչև որ ինչ ըլլանին չիմանամ . . . բոլոր փարիզը պարտնք, և ամեն տուն հարցընենք, եթէ պէտք ըլլայ . . . և եթէ հոս չի գտնենք, բոլոր Գաղղիոյ աւանները, գիւղերը, քաղաքները երթանք վնասենք :

— Այո, այս . . . բայց ապահով եղիր, ընկեր, որ անտարակոյս գտնուք պիտի գտնենք :

Յակոբոս և Սան-Սուսի նոյն գիշերը աղբատիկ պանդուխ մ'անցընելով հետեւեալ օրն ելան քաղաքն բոլոր թաղերը պարտեցան, և ամեն տեղ հարցուցին զԱտէլին և իր աղջիկը . բայց մէկն ալ չի կրցաւ տեղեկութիւն մը տալ իրենց . շատ անգամ անանկ աղբատներ կը գտնուին որոնց վրայ այնչափ հօգ չեն ըներ . ասանկ աղբատներու աներ ալ ելան գացին, բայց իրենց վնասածն չի կրցան գտնել :

Յակոբոս և Սան-Սուսի իրենց փարիզ գալէն տասներմէկ օր ետքը առտու մը ամբողջներուն վրայ կը պարտէին միշտ Ատէլինի վրայ խորհուրով թէ ինչ կերպով զինքը կրնան գտնել :

Նայիս ամրոցներուն վրայ գտնուողներն
դէպ ի մեծ ճամբան վազել սկսան , Նետաքրը-
քական բան մը տեսնելու կերպով :

— Ի՞նչ կայ , ի՞նչ կայ , հարցուց Սան-Սու-
սի իր քովը կեցող գործաւորի մը :

— Խեղ մը բանտարկեալներ կան որ Թու-
լոնի բանտը պիտի երթան . . . տես , ահա
ւատիկ կառքերնին ալ կուգայ . . . երթանք
նայինք . . . :

— Այդ անդգամներն տեսնելու համար
այդքան աճապարելու հարկ չկայ , ըսաւ Սան-
Սուսի :

— Ճամբուն վրայ ողորմութիւն կը խնդրեն

— Եթէ մարդ են , հրացան կը խնդրեն . . .

Եկուր , Յակոբոս , չի կենանք հոս . . . ես ա-
սանկ մարդոց վրայ չեմ գլծար :

— Ես պիտի կենամ , ըսաւ Յակոբոս , որ
տեսնեմ գիրենք :

Կտօքը կամաց կամաց առաջ կուգար .
Յակոբոս գաղտնի դրօշուով մը մղուած՝ խիտ
մտը դնաց զբալանէն քանի մը — հանելով :
Բանտարկեալք իսկոյն առջին շարուեցան ,
ձեռքերնին երկնցուցին ողորմութիւն խնդրե-
լով : Յակոբոս վրանին նայեցաւ . . . տեսաւ ա-
նոնց մէջ մէկը որ միւս անդգամներուն չէր նը-
մաներ , և փոխանակ ողորմութիւն խնդրելու
բազմութեան առջևէն փախելու կը ջանար .
բայց իրեն հետ կապուող անդգամն խիտ անա-
մօթ մէկը ըլլալուն միշտ առջին կը քաշէր . . .
Ասով Յակոբոս կրցաւ աղէկ մը տեսնել զայն ,

և ճանչցաւ իր եղբայրը . . . Պաղ քրտինք մը
մը իջաւ ճակտէն ի վար , և իր ձեռքը իսկոյն
պատուանչանին ասնելով զայն վրայէն բրցուց
ու ծոցը պահեց :

Կառքը անցաւ դնաց , և Յակոբոս ետևէն
կը նայէր : Սան-Սուսի իր ընկերոջը թևէն
բռնելով առջին քայլեց :

— Եկու , ըսաւ , այդ մարդոց վրայ նայե-
լով ի՞նչ հաճոցք կդգաս . . . Բայց ի՞նչ եղար ,
երեսիդ գոյնը նեւեր է . . . :

— Ահ , Սան-Սուսի . . . պատիւս կորսուե-
ցաւ , մեռայ . . . :

— Ինչո՞ւ . . . խելքդ գլուխդ բեր . . .

— Եղբայրս . . . :

— Ի՞նչ է եղեր . . . :

Յակոբոս չի համարձակեցաւ աւելի խօսիլ .
բայց ձեռքով ցուցուց բանտարկեալներն ու-
րոնք խիտ հեռուն կը տեսնուէին :

— Այն քու եղբայրդ չէ , ըսաւ Սան-Սու-
սի , կը սխալիս :

— Ահ . . . երանի թէ սխալած ըլլայի . . .
բայց չէ . . . սխալած չեմ . . . պաշտօնակա-
լին խօսքն եկաւ ելաւ . . . Ինձի հետ խօսած
և վերջէն ալ ձեռքս սեղմած ատեն իմացայ որ
բան մը կայ ու չի կրնար ըսել . . . ահ , ալ
տարակոյս չկայ . . . հիմայ ամեն բան իմա-
ցայ . . . :

— Իսենք թէ եղբայրդ բանտարկելոց մէջ
գտնուի , դու ի՞նչ յանցանք կուեննաս . դու
քու հայրենեացդ քիչ ձառայու թիւն ըրած ես

․․․ ճակտից և կուրծքից վրայ զէրքի նշաններ չկան․․․ Այդ էնչ տղայու թիւն է բրածըդ․․․ քեզ ճանցողը կարելի է որ ամբշնայ․․․ ճշմարիտ ասանի բան մ'ընողին հոգին կը հանեմ․․․

— Ահ, բարեկամս, անուռն արատեցաւ․․․ Ոհ, հայր իմ․․․ եթէ իմանայիր որ․․․
— Հայրդ մեռած է․ եթէ կենդանի ալ բլլար, քու վառքը եղբորդ իրեն պատճառած անպատուութիւնը կ'ունչացընէր։

— Չէ, Սան-Սուսի, սասնի անպատուութիւն մը անկարելի է մոռնալ․․․ Ահ, հիմա կը մնայ ինձ բան մ'ընել․․․ այսինքն՝ բանտարկելոց հետ երթալ, մտանալ անոր քով զոր ալ չեմ կրնար ինձ եղբայր անուանել, ըսպաննել զանի, վերջն ալ զիս։

— Ատիկայ գէշ խելք չէ․․․ բայց անկարելի է որ ընես, որովհետեւ պիտի խորհիս որ հարս մ'ունիս, որ զքեզ իր եղբորը պէս կը սիրէ․ պիտի յիշես փոքրիկ էրմանսը, զոր ծունկերուդ վրայ կը խաղցընես, և չի պիտի կրնաս զիրենք իրենց միակ բարեկամէն զբրկել․ գուրու ցաւդ պիտի մոռնաս զանոնք միտիծարկելու համար, և անոնց քով այնպէս պիտի ցուցընես որ դու բնաւ բան մը կորուսած չես․․․ Որովհետեւ մենք անյուշտ դանոնք պիտի գտնենք, ընկեր․ աշխարհիս չորս կողմը պիտի պտրտինք․․․ ո՞վ գիտէ, կարելի է հիմա կամ ագարակը եղած բլլան, և կամ աղբատի մը խրճիթ ուր մեր օգնութեանը

սպասեն, և դու այս աշխարհէս բաժնուիլ կուզես, մինչդեռ երկու թշուառ իրենց մը խիթարութիւնը քեզմէ կանկկալեն․․․ Ոչ, Յակորոս, ոչ, այդ բանը չբլլար․․․ սակայն գիտեմ, դու ալ սիրող ելած բլլալուն համար կըսես․․․ Սն ուրեմն, Յակորոս, ցաւոց մէջ քաջութիւն պէտք է, ինչպէս պատերազմի աստեն․ ել, երթանք․․․

Յակորոս իր բարեկամին այս խօսքերուն վրայ մեկնեցաւ անկէ․ Սան-Սուսի ասկէ օգուտ քաղելով ուզեց զՅակորոս հեռացընել այնպիսի քաղքէ մը ուր անկարելի է զլստէլին գտնել, և զանի ագարակը գտնելու յուսով դարձան ագարակ։

Երբ հոն հասան, ու այս վերջին յոյսերնին ալ պարսպը ելաւ, Յակորոս անմիջապէս ուզեց կրկին ճամբայ ելնել երթալ զլստէլին գետնելու համար, և շատ դժուարաւ համոզեցին զինքը որ գոնէ զիչեր մը ագարակը մնայ։ Տեսան որ Յակորոս փարիզ երթալուն վրայ աւելի տխուր և աւելի տրտում էր․ բայց առանց բան մը գուշակելու կարծեցին որ իր խուզարկութեանց ապարդիւն բլլալուն համար է։

Սան-Սուսի գիտնալով որ իրենց այս անգամուան ճամբորդութիւնը երկար պիտի տեւէ, մեծ պատրաստութիւններ տեսաւ, լուսի զա շատ ցաւ զգաց տեսնելով որ իր հօրեղբորորդին իրմէ պիտի բաժնուի․ բայց աս ալ գիտէր որ նա իր բարեկամն չէր կրնար միմտակ թողուլ։ Եւ որպէսզի անոնց երկար ժամանաւ

կուան աշխատութեանցը փոխարէն մըն է, իւրաքանչիւրին մախաղին մէջ բաւական ըստակով լի մէյժմէկ քրակ դրաւ. խմացաւ որ եթէ իրենց տայ, չի պիտի ընդունին, ուստի այս միջոցը խորհեցաւ որ իր նուէրը չի մերժուի: Բարի մարդիկ երբ բարերարութիւն մ'ընել ուզեն, կրնան շատ միջոցներ գտնել:

Հեռեկեայ առաւօտուն կանուխ Յակոբոս արթնացաւ. Սան-Սուսի ալ եկաւ գտաւ զինքը մաստղը կռնակը առած, ձեռքն ալ գաւազան մը, և բնաւ Յակոբոսին:

— Երբ որ կուգես, ճամբայ կերնենք:

Երկու ընկերք ճամբայ պիտի երնէին. ագարակին բնակիչներն լալով իրենց երթաք բարով բնելու եկան: Տղաքը՝ որ երկար ատենէ ի վեր է վարժուած էին Յակոբոսի պիտերուն հետ խաղալու և Սան-Սուսիի հետ խոտին վրայ գլորելու, ճամբորդներուն օտքերէն կը բռնէին և չէին ուղեր զանոնք թողուր Լուիզա գողնոցին ծայրը աչբերուն վրայ բռնած էր, և իր հառապանքներով իր ցաւը կը յայտնէր: Կիցր ալ միւսներուն չափ վշտացած ըսաւ.

— Ահաւասիկ կնկանն հետ առանձին թողուցիք զիս. ո՞րչափ պիտի ձանձրանանք... Աս, պարոն Յակոբոս, ներէ որ քեզի ընծայ մը տամ քու ճամբորդութեանդ համար. ասի կրնայ քեզ օգտակար ըլլալ... վասն զի ճամբորդութիւն ըսածը ուրիշ բան է...:

Կիցր այս խօսքերն ըսելով զոչ մը պզտիկ ատրճանակ առաւ Յակոբոսի:

— Անցեալները ծեր զինուորէ մը զնեցի, ըսաւ, իմ գիտաւորութիւնս անուանդ տօնախմբութեան օրը նուիրել էր, բայց որովհետեւ հիմա կը ճանապարհորդես, հետք թող գըտնուի:

Յակոբոս շնորհակալ եղաւ Կիցրի և անոր ընծայն ընդունեցաւ. վերջը զամենքն ալ ողջունելէն զկնի, Սան-Սուսիի հետ մեկնեցաւ երդում ընելով որ Ատէլիի հետ վերադառնայ ագարակը, և մինչև որ զանի չի գտնէ, չի հանդատանայ:



ԳԼՈՒԽ ԼԵ.

Բ Ա Ն Տ Ա Ր Կ Ե Ա Լ Գ

Յակոբոս երբէք սխալած չէր. իր եղբայրը բանտարկելոց մէջ էր: Թշուառական Եղուարդը իր գործած ամենամանր յանցանոց պատիժը կրեց, քանզի քան տարի շղթայակապ բանտարկութեան դատապարտուեցաւ:

Լամբէն՝ որ արդէն գողութեան մը համար կառավարութեան կը փնտուէր, մշտնջենաւ որ բանտարկութեան դատապարտուած էր: Ունայն անոց համոզեց զԵղուարդ որ ամեն ինչ ուրանայ. սա այն քաջութիւնը չունեցաւ, այլ ամեն բան ճամբարտութեամբ խոտովանելով երկուքն ալ իսկոյն դատապարտուեցան:

Եդուարդը հրապարակը տանջանք կրած ատեն տեսած էր իր կինն ու աղջկիւր, տեսած էր Ատէլինի կիսամեռ գետինն ինչալը, Այս աղեկտուր տեսարանը երկար ատեն աչքին առջին էր. կնոջ մը պատկերը որ զինքը կը սիրէր և որուն թշուառութեանը պատճառ եղած էր, զակի մը տեսքը որոյ դուրալով արտասանել պիտի տար իր հօրը անունը, և իր տանը մէջ վայելած երջանկութիւնը՝ ասոնք ամենքն տառապեցուցին զինքը, և իր վիճակին սոսկումն ևս առաւել սաստկացուցին:

Եդուարդը զգլաց իր բրաններուն վրայ, և որչափ որ կրցաւ, հեռացաւ միւս բանտարկելոց ընկերակցութենէն, որոնք իր վշտաց և իր վշատութեան վրայ կը ծիծաղէին: Հարկւր անգամ որոշեց ինքզինքը սպաննել, բայց իր տրկարութեանը պատճառաւ դողաց իր որոշումը գործադրելու: Եդուարդը այսպիսի շիտթութեամբ և տատանեալ վիճակաւ փարիզէն թուրն գնաց, և փարիզէն անցած ատեն չի տեսաւ իր եղբայրը որ ընկերներուն ողորմութիւն տուած էր:

Իսկ Լամբէն միշտ մի և նոյնն էր. բանտին մէջ ալ միշտ անհոգ և զուարթ կերեւէր, ամբին իրեն համար բան մը չէր, և ջանաց նաև Եդուարդի իմացընել որ այս իր բրածը նախապաշարմունք մ'է:

Զգացող յանցաւոր մը բանտարկելոց ընկերակցութեան մէջ չի կրնար օգտակար խրատներ ընդունել, վասն զի բանտին մէջ խստա-

սիրտ եղողներն իրենց զուարճութիւն մը կը համարին բուրբոլին եղծել զանոնք որք անկեղծ զղմամբ կրնան առաքինութեան դառնալ:

Ատէլինի և Էրմանտի պատկերներն կամաց կամաց Եդուարդի մտքէն ջնջուեցան, և անոնց յաջորդեցին իր ընկերներուն ամեն օր խորհած միջոցներն: Մերժեց իր զղումը որ անօգուտ էր իրեն համար, և փախելու հնարք կը խորհէր. և այսպէս վեց ամիս անցնելէն յետոյ իր այս կեանքէն ձանձրացած ազատութեան ճամբայ մը դանելու ջանաց:

Վերջապէս դտան հնարք մը. որովհետև բանտերն անգամ բանտարկեալներն վայրկեանական կերպիւր իրենց ազատութիւնը վայելող բարեկամներուն հետ յարաբերութիւն կը հաստատեն, անոնք ալ իրենց ընկերներն ազատելու համար ամեն միջոց կը դործածեն, որովհետև զիտեն թէ օր մ'ալ իրենք այնպիսի ծառայութեան մը կարօտ կըլլան:

Լամբէն այս գործոյն կատարմանը հսկեց, բանդի զուարթ քլլալուն համար միշտ խելքը զլուին էր: Ժամանակը, օրը հասաւ, կաշառեալ պահապան մը բանտին դռները բաց թողաց. բանտարկեալք իրենց երկաթները խորտակեցին, գիշերը մտաբանեցան, երեք պահորդ սպաննեցին, մասն բակ մը, որուն պատին վրայէն կրնան այսպիսի մարդիկ գիւրութեամբ վեր ելնել. ուստի նախ Լամբէն վեր ելաւ, վերջը Եդուարդը ալ Լամբէնի ոտքը դանուած շղթայն բռնելով ետեւէն ելաւ,

ուրիշ շատ բանտարկեալներ ալ ինքզինքնին պատին միս կողմը դանուած փոսը նետելով ազատեցան : Բայց խիոյն հրացանն ձայներ սկըսան լսուիլ, աղմուկը շատցաւ, պահապանք զէնք առին, զինուորք վազեցին և բանտարկելոց վրայ զէնք պարպեցին : Անոնցմէ շատերը մեռան, միւսներն վախան . ձայները դադրեցան, բայց ժամանակ չեղաւ իմանալու թէ քանի հոգի փախած էին :

Լամբէն ու Եդուարդ զէնքերուն ձայնը իմացան . և թէպէտ փոսէն դուրս ելան, բայց ո՞ր երթային . . . Ինչպէս արագութեամբ փախէին . արդէն զինուորք քաղաքը կը պտըտէին . . . Իրենք ալ չուսով անոնց ձեռքը պիտի իյնային : Եդուարդ յուսահատեցաւ, և Լամբէն միտքը դրաւ որ ողջ ողջ անոնց ձեռքը չիյնայ : Բայց քիչ մը ետքը ձեռք մը բոժոժանբու ձայնն առին . և տեսան որ բանջարեղէն բեռցուած սայլ մը կանցնի իրենց քովէն : Սայլավորը որ երկուստարդ գիւղացի մ'էր, սանձը ձեռուն կռնակը դրած, ինքն ալ կառքին առաջը նստած կը քնանար . ձին ալ իր սովորական ճամբան կերթար ծանր քայլերով :

— Ետեւէս եկու, ըսաւ Լամբէն Եդուարդին դէպ ի սայլը վազելով, հաղտեցանք : Իսկոյն սայլին ետեւէն սայլը հեծաւ, և որոշներուն ՚կաղաքներուն ու ստեպղիններուն մէջէն մեծ ծակ մը բանալով մտաւ մէջը, ինչպէս նա և Եդուարդ, առանց ձայնի և առանց շունչ առնուլ համարձակելու : Գիւղացին իրենց դար-

ձաւ, որովհետեւ դեռ աղէկ մը քունը տարած էր, աչքերը չփեց, բայց բան մը չի տեսաւ, և աղէկ մը իր տեղը տեղաւորուեցաւ որ քնանայ, երբ զինուորներն սայլին քով հասան :

— Մէկը տեսար ճամբուն վրայ, բարեկամ, ըսաւ յինասպետը գիւղացիին :

— Չէ, ո՞վ պիտի տեսնեմ. պարոններ, էշէն, սայլերէն ու մեր գիւղացիներէն դատ մէկը չի տեսայ :

— Չդուշացիք . բանտարկեալներ կան փախած, եթէ ճամբան պատահիս, որ կողմ երթալին աղէկ միտքը պահէ, ու մեզի ձայնը :

Զինուորներն մեկնեցան անկէ, և գիւղացին կրկին պառկեցաւ քիչին տակէն ըսելով .

— Որչափ հոգ էի ըրեր բանտարկեալներուն փախչիլը . . . Իմ սիրելի Մանելմս (իբ կինն է) պիտի ձգեմ ու բանտարկելոց վրայ պիտի խորհնիմ . . . Ինձի համար վախնալու բան չկայ . . . այդ բանտարկեալներն կաղաքներս ու ստեպղիններս գողնալու չեն ա' :

— Աղապեցանք, ըսաւ Եդուարդը իր ընկերոջը :

— Տակաւին չէ, ըսաւ Լամբէն, այս գիւղացին իր բանջարեղէններն չուկայ կը տանի, և երբ մեզի հօտ տեսնէ, չեմ կարծեր որ զմեզ բանջարեղէն կարծէ :

— Ինչ ընենք ուրեմն :

— Ինչ պիտի ընենք, պէտք է կտուքը դէպ ի դաշտերը դարձնել . նախ և առաջ սպասենք

որ սա ապուշը մէյմը խորդալու սկսի, որովհետեւ իր սիրելի Մանթիթին վրայ կը խորհի:

Վերջապէս գիւղացին քանի մը վայրկեան վերջը սկսաւ խորդալ: Նոյն միջոցին Լամբէն ձեռքը բանջարեղէններուն վրայէն երկնցնելով ձիուն սանձը բռնեց ու ձին ճամբուն միւս կողմը դարձուց: Կեդգանին երկու ճամբայ գիտէր. մին չուկայինն էր, միւսը Բոտոնիք: Ուստի երբ զգաց որ իր առաջին ճամբայէն սաստկութեամբ միւս կողմը կը մղուի, կարծելով որ իր տերը տուն դառնալ կուզէ, առանց խտորելու գիւղին ճամբան սկսաւ երթալ:

— Վերջապէս ալ հիմա աղատեցանք, ըսաւ Եդուարդը գլուխը բանջարեղէններուն վրայէն դուրս հանելով և իր բոլորտիքը ծաւերէն, դաշտերէն զատ ուրիշ բան չի տեսնելով:

— Դու ալ միշտ աղատեցանք, կըսես, ըսաւ Լամբէն. բայց դեռ վտանգէ աղատ ենք... հիմա Թուլոնէն միայն դուրս ելանք, այս գիւղացին մեզ իր գեղը կը տանի, ուր զմեզ պիտի մատնէ:

— Պէտք է սայլէն վար իջնել ու պահուըտիլ...:

— Ազէկ, պահուըտիլ, բայց ո՞ւր... թռչնոց պէս ծաւերուն վրայ... այս շղթաներով ուր կրնանք երթալ:

— Շղթայներն խաբոտողերով կը հանենք:

— Ժամանակ կա՞յ այդ բանը ընելու... (Մն ուրեմն, խոր ճամբու մը մէջ ենք... ամե-

նելին տուն չկայ... շուտ... իջը դու առաջ:

— Վերջը...:

— Իջը, կըսեմ, և կամաց մը ձին կայնեցուր... ես ալ կիջնամ գիւղացիին վրայ կը խուզարկեմ:

Եդուարդը սայլէն վար իջաւ. Լամբէն սանձը քայնեց, ձին կայնեցաւ:

— Պէտք է ձին կառքէն հանել, ու միատեղ առնելով փախչել, ըսաւ Լամբէն, շուտ ընենք:

Այս ըսելով գիւղացւոյն գրպաններն սկսաւ խուզարկել, և գտաւ դանակ մը և քիչ մ'ալ ստակ: Եդուարդը ձին սայլէն հանելու ճամբան չդիտնալով Լամբէնը իրեն օգնութեան կանչեց: Սա գիւղացւոյն կերպարանքը գիտելով ուրիշ նպատակ մը գործադրել ուզեց:

— Վախնամ որ հիմա արթննայ, ըսաւ Եդուարդը:

— Եթէ արթննոյ, կը մեռնի, ըսաւ Լամբէն սայլէն վար իջնելով ու ձին սայլին կապող չուսաններն քակելով, բայց սայլին այնպէս շարժելը գիւղացւոյն այնչափ սովորական էր, որ սայլին կայնելէն քանի մը վայրկեան վերջը արթնցաւ:

— Ի՞նչ կուզէք... Ի՞նչ է այդ... պրոնաց նա աչքերը չիբելով:

— Կորտուեցանք, ըսաւ Եդուարդը նուազեալ ձայնով: Լամբէն բան մը չի պատասխա-

նեց՝ բայց վաղեց սայլին վրայ, և երբ գիւղացին ոտքի վրայ ելնելու կը պատրաստուէր, մէկէն դանակը անոր կուրծքը խոթեց:

Գիւղացին տկար ձայն մը միայն հանեց, և Եդուարդը սոսկաց զայն տեսնելով:

— Թշուառական . . . այս ի՞նչ ըրիր . . . բնառ դողալով:

— Ինչ որ պէտք էր, պատասխանեց Լամբէն. գէշն այն է որ իր արիւննաթաթառ ըզգեստներն չի պիտի կրնամ առնուլ . . . պէտք է որ միայն գլխարկն ու վերարկուն առնուամ:

Անդգամը այս խօսքերն ըսելով վերաբիւն կռնակն առաւ, հեծաւ ձիուն վրայ, վերջը Եդուարդի դառնալով որ դեռ սոսկումով գիւղացին կը գիտէր, ըսաւ:

— Հիմա բարեկամ, ինչպէս որ կրնաս, դու ալ ինքզինքդ ազատէ:

Իսկոյն դանակին ծայրովը խայթեց ձին և աներևութացաւ, թողլով զԵդուարդը իր ըստաննած գիւղացւոյն բով:



ԳՂՈՒԻՄ ԼԳ.

Փ Ա Յ Տ Ա Հ Ա Ր ԵՒ Գ Ո Ղ Ք

Գիշերը վերջանալու մօտ էր, և Եդուարդը դեռ սայլին բոյն կեցած էր, Լամբէնի փախչելուն վրայ չփոթած, և քանի մը ժամէ ի վեր

պատահած իրողութեանց վրայ այնքան խռոված էր որ ինչ բնելիքը չէր գիտեր:

Խեղճ գիւղացին տակաւին շունչ կտանուր, և ժամանակ ժամանակ տկար հառաչանքներ կարձակէր: Եդուարդը չէր գիտեր թէ խեղճին օգնէ՞ թէ փախչի: և այս տարակուսանաց մէջն էր, երբ արեգակին առաջին ճառագայթներն ծագել սկսան: Այն ատեն իր վրան գլուխը գիտելով՝ դողաց տեսնելով որ իր հանդերձներէն բանտէ փախած ըլլալն երեւան պիտի ելնէ. վախցաւ որ ըլլայ թէ գիւղացին սպաննողը զինքը կարծեն: Այս խորհուրդը զինքը սոսկումէն ստուեցուց. գիւղացւոյն անսքը զինքը սարսփեցուց, և որչափ որ կըրցաւ, սկսաւ արագութեամբ փախչիլ, և հասաւ սղոթիկ անտառ մը՝ ուր ամեն խուզարկութիւններէ ազատ մնալու յոյս ունէր:

Իր առաջին գործն եղաւ երկայններն խորտոցել ու նետել. մնաց հիմա հանդերձներն փոխել, վրան զի գիտէր որ անոնցմով անտառակոյս պիտի բռնուէր: Այս մտածմունքը վայրկեան մը կատարեցուց զինքը, և խիտ ցաւեցաւ խեղճ գիւղացւոյն հանդերձներն վրայէն չառնելուն համար:

Առտու եղաւ. գիւղացիք իրենց գործերուն դացին. Եդուարդը մտաւ անտառներուն մէջ, թուղ և ձիթ ապտուղ ժողվեց, և ծառի մը վրայ ելաւ նոյն օրը անցնելու համար:

Բայց ս՛րբափ երկար երեւցաւ իրեն այն օրը, և քանի անգամ դողաց տեսնելով որ գիւղացւոյն

ցիք անտարբ մտան և իր ելած ծառին մտ
տեղ մը նստան, ըսեց որ խեղճ գիւղացւոյն
սպանման վրայ կը խոսակցէին :

— Բանասարկեալ մ'է այս ոճիրը գործողը ,
բսին գիւղացիք , շատեր գիշերը թուօթի բան-
տէն փախեր են . բայց կը վիտուօւին , և ան-
շուշտ օր մը պիտի բռնուին :

Եղուարդ կիմանայ որ շատ դժուարաւ պի-
տի կրնայ փախչիլ և կոկիս յուսահատել : Վեր-
ջապէս գիշեր կըլլայ , կիջնէ ծառէն և ճամ-
բայ կենէ : Ամենախոր ձայն մը որ ականջին
կը հասնի , կանկ կառնու և ամենախիտ մա-
ցառներու մէջ կը մտնէ : Երեսն ու հանգերձ-
ները փուշերէն և տատակներէն պատուած
էին . բայց անոնց ցաւը չէր իմանար . և եթէ
կարելի ըլլար , հոգը պիտի փօրէր ու հոն պահ-
ուրաէր :

Որչափ որ կըցաւ , քայեց , ճամբուն վրայ
գտած պտուղներն փողկըլով հետևեալ օրն ու-
տելու համար . խիտ անապատ տեղերն յոգ-
նութիւն կառնուր , և ցորեկն ալ տերեւախիտ
ծառի մը վրայ կը պահուրտէր :

Չորրորդ օրը գիշեր ատեն պարտէզով շըր-
ջապատեալ պզտիկ տան մը առջևէ անցաւ .
նայեցաւ հոն յուսալով որ պտուղ կը դտնէ .
բայց որչափ ուրախացաւ երբ չուաններու վը-
րայ փռուած ճերմակեղէն ու հագուստներ
տեսաւ : Իսկոյն միտքն ինկաւ զանոնք օղջնայ
և իր բանասարկեալի զգեստն հանել . այս գո-
ղութիւնը զինքը չի ստակցաց , քանզի իր վի-

ճակը այնպէս կը պահանջէր : Չորս ոտք բարձ-
րութեամբ կիտով փլած պատ մը միայն զինքը
այն հագուստներէն կը բաժնէր . Եղուարդ այս
առաջին անգամ վտանգը աչքն առաւ , անցաւ
պատէն անդին և իրեն պէտք եղած հագուստ-
ներն գողցաւ , և առանց ըրած գէշութեան
վրայ խղճահարեցու փախաւ . վտան զի իր հի-
մակուան ըրածը անկէ առաջ տեսածներուն
հետ բաղդատելով ոչինչ բան մ'էր :

Մտաւ խիտ անտառ մը , և հոն իր հա-
գուստներն հանելով գողցածներն հագաւ : Ա-
սոր վրայ քիչ մը սիրտ առնելով և խորհելով
նաև որ թուօթէն շատ հեռու է , ճամբայ ե-
լաւ , գիշերը գիւղացիի մը տուն կրթալ հիւ-
րընկալութիւն խնդրելու համար , յուսալով որ
իրեն պատառ մը հաց կուտան , որն որ գանձ
մ'էր իրեն համար , քանզի իր զորութիւնը ա-
նով պիտի վերագառնար : Բայց և այնպէս չու-
ղելով որ ըստ գիւղաց անանկ գիւղ մը երթայ
ուր զինքն ու իր ընկերները խուզարկող զին-
ուորները դանուին , առանձին և խիտ անտառ-
ներով շրջապատեալ խրճիթ մը տեսնելով գնաց
գուռը զարկաւ :

Նայիս դիւզացի մը եկաւ գուռը բացաւ և
հարցուց թէ ինչ կուզէ :

— Շատ բան , բտա Եղուարդ , ես խեղճ
մ'եմ . . . յոգնութենէ և անօթութենէ տա-
ռապակալ . ներէ որ այս իրիկուն տունդ անցը-
նեմ . գիտցած ըլլաս որ զիս մահուրնէ կազա-
տես :

— Արդարև, ըստ դուրացիին ուշադրութեամբ դանի դիտելով, շատ յօգնած . . . շատ նեղեալ կերելիս : Բայց ինչ որ է, դու ո՞վ ես . . . վասն զի տունս ընդունած մարդուս ով ըլլալը գիտնալու եմ . . . :

— Ես . . . ես մէկ խեղճ փոխտական զինուոր մ'եմ . . . քեզի կապաւնիմ, զիս մի մերժեր . . . :

— Փոխտական զինուոր . . . բայց առիկայ աղէկ բան մը չէ . . . ինչ և իցէ, ալ եկեր դուռս ինկեր ես, ներս եկու և պատմէ ինձ թէ ինչու զինուորութենէ փախար :

Եդուարդ ներս մտաւ, ինքզինքը պատուաբերելու տեղ մը գտնելուն վրայ քաղցր ու բախտութիւն մը զգալով :

— Աս, իմ ունեցածիս կէսը քեզի կուտամ, թէև աղէկ բան մը չըլլար . . . բայց հոս հանգիստ կրնաս ընել . . . : Ես թէև աղքատ փայտաճար մ'եմ, և օրական աշխատութեամբս կապրիմ, բայց շատ դո՛հ եմ ձեզի պատսու մը հաց և անկողին մը տալու կարող ըլլալուս համար . . . : Ես հաց, պանիր և քիչ մ'ալ գինի ունիմ որոց բոլորն ալ քեզի հետ կուտենք . . . : Անկողին ալ գէշ չէ, տանս մէջ գտնուած կարասեաց ամենէն լաւն է. ուստի կրնաս խիստ հանգիստ քնանալ . . . : Մն ուրեմն, բարեկամ, գէտքերդ պատմէ ինձ : Ես ալ ժամանակաւ զինուոր էի, բայց քեզի պէս չի փախայ : Կուղեմ գիտնալ թէ ինչ պատճառաւ ասանկ բան մ'ըրիր :

Եդուարդ իր մտքէն պատմութիւն մը հնարելով սկսաւ պատմել փայտաճարին . սա ուշադրութեամբ մտիկ ըրաւ : Այս պատմութեան ասորիականութիւնը, գէտքերուն այնչափ ճշմարտանման չըլլալը և փայտաճարին իր գունդին և իր բանակատեղւոյն վրայ մանրամասն տեղեկութիւն խնդրած ատեն իր վրայ տիրած շփոթութիւնը փայտաճարին սկսան կասկած տալ, որն որ կը վախնար թէ բարբարական մէկու մը ձեռք ինկած չըլլայ :

Բայց և այնպէս իր կասկածը բոլորովին ճշմարտացընելու զըսաւոր առիթ մը չի գտնելով Եդուարդին հետ ճաշեց : Վերջը հրաւիրեց զանի որ հանուի ու անկողին մտնէ : Եդուարդ հաճութեամբ ընդունեցաւ այս հրաւերը : Հաշտեց վրայի զրեօտը, և այն ինչ բաճկոնն ալ պիտի հանէր, յանկարծ միտքը բան մ'ելնալով կեցաւ և ապշեցաւ մնաց փայտաճարին առջև :

— Ինչ, չէս ուղեր պառկիլ, ըսաւ փայտաճարը, որն որ Եդուարդին յանկարծական շփոթութիւնը տեսած էր :

— Ներուսն կը ինդրեմ . . . այո . . . պիտի պառկիմ . . . :

— Կարծեմ պիտի հանուէիր, ու յանկարծ կեցար առանց ինչ ընելիքդ գիտնալու :

— Այո, պատճառն որ . . . կը խորհիմ թէ . . . աւելի աղէկ է որ հագուած պառկիմ վաղն առտու մեկնելու պատրաստ գտնուելու համար :

— Ինչպէս որ կուզես, անանկ ըրէ :

Եղուարդ մտաւ անկողին, ինչպէս նաև փայտաճարն ալ, բայց չէ թէ քնանայու դիտաւորութեամբ : Վասն զի դարձունի անհանգըստութիւն մը զինքը կը նեղէր, կը վախնար որ չըլլայ թէ չարագործ մը հիւրընկալած բլբլայ, և իր կասկածը ճշմարտացնելու կը ջանար :

Եղուարդ՝ որ սաստիկ յողմած և քանի մը օրէ ի վեր է անկողնոյ երես տեսած չէր, անմիջապէս քնացաւ : Փայտաճարը՝ որ քնանալ կը կեղծէր, կամաց մը տեղէն ելաւ երբ տեսաւ որ եղուարդ աղէկ մը քնանալ սկսաւ :

Փայտաճարը սենեակէն դուրս ելաւ, դնաց ճրագը վառեց, հրացանը առաւ ու եկաւ անոանց ձայնի եղուարդին անկողնոյն քովը նստաւ : Եղուարդը քնացած տեղը սկսաւ յուզուիլ, ծեծկուիլ, և անկողնոյն մէջ սողին անդին դառնայ, երբեմն ալ սա ընդմիջեալ խօսքերն արտասանել, զորս փայտաճարը խիստ ուրոշ կերպիւ կիմանար : Ճամբուն վրայ . . . գիշեր ատեն . . . սպաննուեցաւ . . . երկաթներս հանեցէք, սա չղթաներէն զիս ազատեցէք որ կարենամ փախիլ :

— Սպաննուեցաւ . . . կրկնեց փայտաճարը ցած ձայնով . . . հա՛, իմացայ որ այս մարդը չարագործ մ'է . . . վայ՛ անդդամ . . . սա նայէ, եկեր պատուաւոր տեղ մ'ալ կը քնանայ . . . Ո՛վ գիտէ որ իր խումբն ալ հիմա հոս չի գաց . . . Ստուգիւ կրսն թէ ժամանակէ

մ'իվեր է որ չըջակայ տեղերը աւազակներ երևան ելած են : Թերևս այս գիշեր գան տունս ձեռքէս առնեն իրենց պատասպարան մ'ընելու համար . . . չար սատանայ . . . եթէ գիտնայի, հիմա սա մարդուն դին կը փռէի . . . Բայց սպասենք . . . նայինք ինչպէս մարդ է սա . . . :

Փայտաճարը եղուարդին սգեստին ու բաճկոնին կռնակը կամաց մը կտրեց, ուսերը բացաւ, ճրագը առաւ եկաւ, և մէկ ձեռքն ճրագին լոյսին դէմբունելով որ չըլլայ թէ եղուարդին աչքը յայցընէ, սոսկաց տեսնելով անոր վրայ եղած լսնցաւորութեան նշաններն :

— Այ չեմ սխալիւր, ըսաւ նա ճրագը տեղը դնելով և հրացանը լեցընելով : Աս մարդը չարագործ մ'է . . . գիշերը հոս ձգելու չի գար . . . գլուխ փորձանքի հանդպցնելու չեմ ես . . . պէտք է որ հիմա զինքը դուրս բերեմ . . . :

Իսկոյն դնաց անկողնոյն քով, և հրացանին միւս ծայրովը եղուարդին կողք խթեց . . . սա արթնցաւ, ելաւ նստաւ անկողնոյն մէջ և վախցաւ տեսնելով որ փայտաճարը սաստիկ զայրացած և հրացանը երեսին վրայ բռնած առջևը կեցեր է :

— Հիմա տնէս դուրս պիտի ելնես, պոռուաց փայտաճարը սաստիկ ձայնով և հրացանը եղուարդին ուղղելով, դուրս ել նայիմ . . . չարագործ . . . Թագա թէ ոչ՝ հիմա հրացանը պիտի ուռես . . . :

— Ի՞նչ եղար . . . Ի՞նչ կայ . . . Ինչու՞ այդ-
չափ բարկացեր ես . . . Ըսաւ Եղուարդ զար-
մանքով չորս կողմը նայելով : Երեկ Էրեկուն
հիւրնկալուած տունն չե՞մ . . . դու չե՞իք ինձի
հայ կերցնողն ու անկողին մը տուողը . . . հի-
մայ ինչու՞ կը վռնտես . . . Ի՞նչ բրիք երեկ որ
դիս այսպէս անհանգիստ ընել կուղես . . .

— Չե՞ս գիտեր ինչ ըլլալը, Թշուառական,
գնա ընկերներդ գտի՛ր, որք մեծ ճամբուն
վրայ քեզի կսպասեն . գնա ճանապարհորդներ
կողոպտէ, սպաննէ . . . Իմ տունս դողնալու
բան մը չկայ . . .

— Կը սխալիս, պարոն, և ծանրապէս կը
սխալիս . ոչ, ոչ, կերդնում քեզի որ ես գող
չեմ . ես չեմ կրնար անանկ գէշութիւններ բ-
նել :

— Իրաւունք ունիս . . . Թերևս պատուա-
ւոր մարդ մ՞եղած ըլլաս . բայց սա մարմնող-
նչանններն ի՞նչ բնենք . . . կարելի է անոնք
բու գեղեցիկ գործոցդ համար եղած ըլլան :

— Աստուած իմ . . . Ըսաւ Եղուարդ ձեռ-
քը զգեստին վրայ սանելով և տեսնելով որ
կտրուած է . . . Ի՞նչ, համարձակեցա՞ր վրաս
ալ նայել :

— Գու ինչ մարդ ըլլալդ իմանալ ուղեցի .
բու վարքդ ինձի կասկածի մէջ ձգեց . ուստի
հարկ երաւ որ ասանկ ընեմ . . . Օն ուրեմն կը
տեսնեմ որ բու խօսքերդ, պատմածներդ բո-
լորն ալ սուտ են . դարձեալ կըսեմ, դուրս ել
ես քեզի պէս մարդուն հետ չեմ կրնար պսակիլ :

— Որչափ Թշուառ եմ . . . պուայ Եղ-
ուարդ անկողնէն ելնելով և յուսահատու
Թեամբ ճակտին զարնելով : Ալ ազատելու ճար
չկայ . . . կորսուեցայ . ամեն մարդ զիս կը վը-
ռանտէ . . . ալ պարտաւորած եմ ամեն ընկե-
րութենէ հեռանալ, և խաւարի մէջ կեանք
անցընել . . . Այս չարագուշակ նշաններն զիս
ամեն ատեն պիտի մատնեն . . . միայն աւա-
ղակաց մէջ կրնամ հանդատութիւն գտնել . . .
այսուհետև չմեռնելու համար նոր չարագոր-
ծութիւններ ընել պէտք է . . . այլ ևս զըջ-
ջումը պարապ բան է . հարկ է որ աւաղակ ըլ-
լամ . . .

Այս խօսքերն ըսելով գետինն ինկաւ և
յուսահատութեամբ փայտահարին ոտքերուն
պլլուեցաւ : Փայտահարը Եղուարդին յուսահա-
տութիւնը տեսնելով պահ մը դիմաց անոր վը-
րայ և հրացանը գետինը դրաւ : Բայց քիչ մը
ետքը անտառին ալլ և ալլ կողմերէն սու-
լելու ձայներ լսելով իսկոյն կասկածն նորու
գեցաւ և սկսաւ ալ աւելի վախալ : Ամենևին
չի տարակուսեցաւ որ այս ձայներն աւաղակաց
միանալ ուղեկու նշաններն եղած ըլլան . ուստի
կրկին հրացանը ձեռքն առաւ . . . Եղուարդ
դարձեալ անոր դիմութիւնն հայցեց . մտեցաւ
փայտահարին և ձեռքն դէպ ի անոր երկնցը-
նելով սկսաւ աղաչել : Փայտահարը անոր այս
աղաչանացը չի հաւատալով և կասկածելով որ
այս չարագործ կրնայ ըլլալ որ զինքն աւաղանէ,
քանի մը քայլ հեռացաւ և հրացանը պարպեց :

Բայց և այնպէս աղէկ նեառած չըլլալուն մահացու կապարը Եդուարդին ուսին վրայէն անցաւ գնաց և պատին մէջ խրեցաւ : Այն ատեն կատարութիւնն ու յուսահատութիւնը Եդուարդին քաջութիւնը կենդանացուցին . սենեակին անկիւնը տեսած կացինը առաւ , և այն ինչ փայտահարը կը պարտատուէր հրացանին ծայրովը անոր զարնել , Եդուարդ կայնտով դիւռուն հարուած մը տալուն պէս գետինը ձգեց զանի : Փայտահարը առանց ձայն հանելու ինկաւ մեռաւ . արիւնը ժայթքեց Եդուարդին վրայ , որն որ մեծ սոսկումով բռնուած էր :

Նոյն միջոցին տանը դուռը բացուեցաւ , և չորս մարդ հնոտիներ հագած , սոսկալի կերպարանքներով և սպառազինեալ ներս մտան , և սենեակին առջին դալով սկսան իրենց առջև ներկայացած տեսարանը զարմանօք դիտել :

— Ո՛հ , ո՛հ . . . բռաւ վերջապէս անոնցմէ մին , որ մեծերնին ըլլաւ կերեւէր . կերելի թէ հոս արտաքոյ կարգի դէպքեր կըլլան , և մեզի ընկեր ըլլալու մարդիկ կրնան դանուիլ . . . վայ չար սատանայ , նայէ սա չարագործը , ինչպէս աղէկ հարուած մը տուեր է :

Երուանդ սենեակին մէջ տեղը անչարժ կեցած էր , դեռ ես արիւնամած կացինն ձեռքը բռնած , որով փայտահարն սպաննած էր :

Աւաղակները մտան սենեակը , մեծերնին Եդուարդը լաւ մը դիտելէն ետև ուրախութեամբ սկսաւ բռնել :

— Այն է , այո , այն է . . . եկու , ընկեր , դու ալ կրնաս զինքը ճանչնալ :

— Այո , մեր բարեկամն է : Օն ուրեմն , Եդուարդ , քու հին ծանօթներդ և զուարճութեան ու ձախորդութեան հաւատարիմ ընկերներդ դրկէ :

Եդուարդ իրեն խիստ ընտանի եղած այս ձայներն լսելով՝ աչքերը վերուց և տեսաւ լամպէնն իր առջև , բայց միւսը չի կրցաւ ճանչնալ : Մեծերնին անոր ձեռքէն բռնելով՝ Եդուարդի քով տարաւ : Եդուարդ երեսը նայեցաւ և անոր սարսափելի կերպով փոխուած դէմքէն չի կրցաւ վերջապէս ով ըլլալն ճանչնալ :

— Ի՞նչ , բռաւ լամպէն , Տիւֆրէնն մեր վաղի մի բարեկամը չե՞ս ճանչնար :

— Տիւֆրէնն է , սրուաց Եդուարդ , սխալ ըլլալու է . . . :

— Այո , Եդուարդ , ես եմ , բռաւ Տիւֆրէնն երեսին վրայի վերքին նշաններն ծածկելու համար կապած լաթերն ու աչքին ու ճակտին վրայ փակցուցած խարանճ (եռազը) մէկդի առնելով , Ռուրախ եմ զիս չի կրնալ ճանչնալուդ վրայ , որովհետև ասով զիս դիմակաւորելու մասին ունեցած ճարտարութիւնս կըբնաս իմանալ . և այսպիսի ճարտարութիւն մ'ալ խիստ կտրուոր է , եթէ մարդ մահուան դատապարտուի բայց դու դրեղ չի տեսած ժամանակես ի վեր քիչ մը վարժուած կերելու . ինչ և իցէ , այս ալ քեզի պատիւ կը բերէ :

— Ընկերք, ըստ Լամբէն տանը չորս կողմը լաւ մը զննելէն ետև, հոն մեղի համար բան մը չկայ, մեր լսած հրացանին հարուածը կրնայ ըլլալ որ հոս խել մը մարդ բերելով՝ մեղի անոնց մասնէն, Հաւատացէք ինձ, մեկնինք այս տնէն ու մտնենք դարձեալ անտառք հոն աւելի դիւրութեամբ և ապահովութեամբ կրնանք խօսակցել :

Ամէն ոք Լամբէնի այս առաջարկութիւնը յարգեց. դողերն տնէն դուրս ելան Եդուարդըն ալ հետեւինքն առնելով, որն որ դեռ զարմանքը չէր անցուցած չի կրնալով համոզուիլ որ Տիւֆրէսն աւազակաց խումբի մը մէջ գրտնուի :

Ինչ մը ժամանակ քաղնէն վերջը՝ հասան խիտ անտառի մը մէջ տեղուանքը. հոն կրակ չկնեցին, գետինը գտնուած պտուղներն ժողվեցին, և կրակին բոլորակքը նստած կերան :

— Չեմ գիտեր, ըսաւ Տիւֆրէսն դժնդակ ուրախութեամբ մը Եդուարդին՝ երեսը նայելով, թէ ի՞նչ զգացում մը յուսալ կուտար ինձ որ որ մը անշուշտ պիտի միանանք . . . ես ալ ամեն ատեն մեր միութեանը համար ջանացի . . . այնպէս չէ՛, Լամբէն :

Լամբէն առանց պատասխան տալու միշտ կուտէր և ամենէն աւելի գիտի կը խմէր : Միայն երբեմն երբեմն ծիծաղելով Եդուարդին երեսը կը նայէր Եդուարդ ալ իր նոր բնկերները կը դիտէր, չգիտնալով թէ դանսք գրտնուրն վրայ ուրախանալ պէտք էր թէ չէ :

— Ի՞նչպէս եղաւ որ ես դքեզ Լամբէնի հետ այս անտառները կը գտնեմ, ըսաւ վերջապէս Տիւֆրէսնին . այսպիսի վտանգաւոր կեանք մը վարել ուզելուդ պատճառն ի՞նչ է :

— Այդ ալ խօսք է. մեղի պէս ընկերակաշու թենէ մերժուած մարդիկն ի՞նչպիսի կեանք կրնան անցընել . . . միթէ դու անմեղ մէկն ես . . . խեղճ փայտահարէն ի՞նչ կուզէիր որ սպաննեցիր :

— Եթէ ես այն մարդը չսպաննէի, հիմա ինքզինքս ո՛ւր պիտի գտնէի, գիտե՛ս . . .

— Տեսա՛ր, ինչ աղէկ կը խօսիս . . . Բայց ինչո՞ւս պէտք . . . մենք մեր գործը նախինք, Գու գիտես որ զիս մահուան դատապարտեցին. բարեբաղդաբար իմ վճիռս չընդունած այս երկու բարեկամացս շնորհուր բանտէն ազատեցայ : Ալ այնուհետև մարդու մէջ չէինք կրնար պտտալիլ . ուստի ասանկ անտառներն ընտրեցինք մեր արհեստը ի դործ դնելու համար : Անցեալներն հոտեղուանքը ձիաւոր ճամբորդ մը տեսնելով նայելոցայ որ Լամբէնն է, որ խոյն հետեւինիս միացանեցաւ, Գու ալ պէտք է որ միանաս մեզի հետ, սիրելի Եդուարդս, վասն զի ալ ուրիշ ի՞նչ կրնաս ընել, և պէտք է որ ուրախանաս զմեզ գտնելուդ վրայ :

— Այո, այո, ըսաւ Լամբէն . . . ես ապահով եմ որ այն դիշերն դքեզ սայլին քով առանձին թողելուս վրայ ինձի գէ՛մ բարկացած ես . բայց ի՞նչ բնէի, բարեկամ. տեսայ որ ձին

այնչափ զորաւոր չըլլալով՝ երկու ընկա մէկտեղ
իր վրայ չի պիտի կրնար կրել, ուստի բնական
էր որ ես ինքզինքս ազատելու ճարը պիտի
նայէի:

— Ինչ տխուր վիճակ, ըսաւ Եղուարդ
աչքերը չորս կողմը պարտօցնելով. անտառներ
բու և մթութեան մէջ ապրիլ . . . միշտ բըռ-
նուելէ վախնալ . . . և քանի մը ոսկիի համար
կեանքը վտանդի ենթարկել:

— Այնպէս է, ըսաւ Լամբէն, գիտեմ որ
վերոնիքայի հետ ժամանակ անցընեն ու պատ-
ուական զինի խմելն աւելի տղէկ և աւելի
զուարճալի բան է. բայց ինչ ընենք. մարդս
միակերպ կեանք չի կրնար վարել:

— Քաջաբերուէ, սիրելի Եղուարդս, ըսաւ
Տիւֆրէն. եթէ ուրիշ երկիր մը երթանք,
կրնանք դարձեալ հարստանալ և հանգիստ ապ-
րել. ես ալ չեմ ուզեր մի քանի խեղճ ճամ-
բորդներու համար անտառներն կեանք անցը-
նել. մնաց որ չորս հինգ հոգի չեն կրնար սոս-
կալի խումբ մը կաղմել և մեծամեծ կառքեր
կողոպտել. Անոր համար ես ուրիշ աղէկ նպա-
տակներ ունիմ, և որովհետև հարկ եղած ա-
տեն կրնամ ես զիս գիմակաւորել, կը յուսամ
որ իմ ընկերներս ալ իմ խրատներէս օգուտ
քաղելով կրնանք լաւ բաղդ մը ձեռք բերել,
թէ հարուստներու տներ գողութեան երթա-
լով և թէ ըստ տեղոյն և ըստ պարագային մե-
ղի այլևայլ անուններ ու մականուններ տալով:
— Ալ բաւական է, ընկերներս արդէն հա-

մոզուեցաւ. հիմա կուզենք քու պատմու-
թիւնդ լսել, ըսին միւսներն Տիւֆրէնի:

— Զձեղ կրնամ գոհ ընել, բարեկամներ,
իմ պատմութիւնն ընելով, որն որ խիտ երկար
չէ և զձեղ շատ պիտի զուարճացնէ: Մնաց որ
Եղուարդ ալ մեծ օգուտ պիտի քաղէ անկէ.
վասն զի դէպքեր կան որ յատկապէս իրեն կը
վերարերին, և ալ հիմա աներկիւղ կրնամ ի-
րեն յայտնել:

— Պատմէ, պատմէ, ըսաւ Լամբէն. քու
խօսած տեսնդ մենք ալ կը խմենք. այս անտա-
ռին մէջ խմելէն զատ ուրիշ ճար չկայ. վասն զի
երկու գիշեր է որ զուրտէն վրանիս հոգի չի մը-
նաց: (Են ուրեմն, ընկերք, կրակը կենդանա-
ցընենք, և առանց խօսելու խմենք):

Աւազակներն կրակը կենդանացուցին, ա-
մեն մէկն մէյմէկ շիշ առին և նստան կրակին
բոլորով: Իսկ Եղուարդ զլուխը ձեռքերուն
մէջ առած կըսպասէր որ Տիւֆրէնն իր պատ-
մութիւնը սկսի:



ԳԼՈՒԽ ԼԳ.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Տ Ի Յ Ր Է Ս Ն Ի

Ռէնի շրջակայները պղտիկ գիւղ մը ծնած
եմ, Հայրս հարուստ և նշանաւոր անձ մ'էր,
բայց վերջէն իր հօրեղբորդիներէն մին իրեն

դէմ դատ մը բանալով, հայրս դատը կորսնցուց և իր հարստութիւնն փճացաւ: Ուստի իր պարտուտը ճարելու համար պարտաւորեցաւ ծերունի հարուստ անտառապահի մը քով սպասուորութեան մտնել, անոր որսի պահապանն ըլլալու պաշտօնով:

Հայրս իր այս աղքատութեանն համար իր թշուառութեանն պատճառ եղող անձէն վրէժ առնելու փափաք մ'ունէր իր որսին մէջ: Անտառներուն մէջ շինուած պղտիկ խրճիթ մը կը բնակէր: զիս այ հոն տարաւ ու իր քովը պահեց: Ան տանն ես վեց տարու էի. բայց համարձակ, դործունեայ, քմայտիրտ, կամակոր և իմ դիտասորութեանցս մէջ հաստատուն տղայ մ'էի: Շատ տարիներէ ի վեր վարած գրեթէ վայրենի կեանքս չի կրցաւ իմ վարքս ու բարքս ուղղել: Ամեն օր անտառները կը պարտէի, բարձր լեռներու և սեպպեալ ժայռերու գլուխը կենիւի, հեղեղներէն և դահալիճ տեղերէն կանցնէի. և իրիկունները երբ տուն կը դառնայի, հայրս իր գլխուն եկածները կը պատմէր ինձ. կը սովորեցընէր զմարդիկ ստել, որոց անիրաւութիւնը իր սիրտը վշտացուցած էր. կը պատուիրէր ինձ որ բնաւ մէկու մը վրայ չի վստահիմ, և իմ նրմաններուս արդարութեանը կամ երաստադիտութեանը չի հաւատամ. և այս ըսածներն հաստատելու համար հարուստ եղած տանն ըրած բարեբարութիւնները մանրամասնաբար կը պատմէր ինձ, որոց փոխարէն միայն ասկե-

րախտութիւն տեսած էր: Վերջապէս պատմեց ինձ այն անիրաւ դատաստանն, զոր առանց իրաւանց և արդարութեան կորսնցուցած էր, և կրկին կրկին պատուիրեց ինձ որ իր թշուառութեանն պատճառ եղող անձէն վրէժս լուծեմ:

Հօրս այս խօսքերը մտքիս մէջ տպաւորուեցան: Կարելի է ուրիշ խրատներ զիս զգաստացընէին և իմ ատելու ու անարգելու մարդիկս ձեռքս աղատէին: Բայց իմ ընդունած առաջին տպաւորութիւններս մանկական մթապս զրայ մեծ ազդեցութիւն ըրին, և այնպէս իմ կամացս հակառակող բոլոր արգելքներն առանց քննութեան խտրատկելու որոշում մ'ըրի:

Դէպք մը որուն ակնատեսս եղայ, մարդոց համար իմ ատելութիւնս աւելցրնելու պատճառ եղաւ: Տասներեք տարեկան եղած տանն՝ հօրմէս ընթերցանութեան դաս կառնէի. ուրովհետեւ կըսէր ինձ որ կրթութիւնը կրնար ինձ օգտակար ըլլալ, և այս պատճառաւ միտքը դրաւ ինձ բան մը սորվեցնելու: Օր մը երբ անտառները կը պարտէի, յանկարծ խիտ մտէն հրացանի երկու հարուած լսեցի: Իսկոյն ձայնն եկած տեղը վազեցի, և երկու մարդ տեսայ որոնք այն անտառները որսի ելած ըլլալուն համար բռնուած էին:

Ասոնցմէ մին վայելուչ, գեղեցիկ և հարուստ մէկու մը կերպարանք ունեցող երիտասարդ մ'էր. իսկ միւսը հնտախներ հագած և

վերջին աստիճանն աղքատ երեւոյղ գիւղացի մը : Առաջինը այժեամբը և երկրորդը ճագար մը սպաննած էր . բայց և այնպէս երկտասարդն պահապաններուն մէջ կը ծիծաղէր ու կերդէր . և գիւղացին երեսին գոյնը նետած և գողալով հազիւ կրնար ինքզինքը բռնել :

Այս գործոյն վախճանն տեսնելու հետաքրքրութեամբ ելայ ետեւնուն գացի . անտառապահը հոն չէր , և իր փոխանորդն անոր պաշտօնը կը վարէր : Լիակատար իշխանութիւն ունէր և իր աէրը կը ներկայացընէր , անոր համար այս երկու անձինքը փոխանորդին առջին հաննցին : Բազմութեան հետ ես ալ ներս մտայ . նայիս փոխանորդն եկաւ , և տեսնելով այս երկտասարդը իմացաւ որ իր սպառնայիքներէն վախոյղ մէկը չէն ներկայացուցած իրեն : Ուստի ամենքն ալ սրահէն դուրս հանեց դանի առանձին հարցաքննելու համար : Ես փոխանակ դուրս ելնելու գորգով ծածկուած սեղանի մը տակ պահուլանցայ , և խիստ որոշ կերպիւ հետեւեալ խօսակցութիւնը լսեցի :

— Պարոն , չեմ կրնար ձեզի հետ խտուութեամբ խօսիլ , բայտ փոխանորդը մեզմ ձայնովմը . բայց իմ տէրս խիստ մէկն է , և իր հրամաններն անդառնալի են :

— Խորամանկ , զիս ձեր տիրոջը խտուութեամբը պիտի վախցընէք , բայտ երկտասարդը փոխանորդը ծաղրելով , գիտցիք որ ես հարուստ ընտանիքէ մը եմ , և եթէ հիմա զիս չարձակէք , ականջներնիդ տեղէն կը բըցընեմ :

— Պարոն , այդ ի՞նչ սպառնալիք է . . . ասոր չեմ կրնար տակալ . . .

— Առէք , հասկըցայ ձեզի պէտք եղածը : Դուք փոխանորդ մ'էք , ըմբաս խօսքը . . . առէք սա քսակը , որուն մէջ տասնըհինգ ոսկի կայ , ասի ձեր տիրոջը բոլոր այժեամբէն լաւ է :

Այս ըսելով երկտասարդն դրպանէն քսակ մը հանեց տուաւ փոխանորդին որն սր առանց դժուարութեան ընդունեցաւ : Յետոյ դադանի պղտիկ դուռ մը բանալով՝

— Հոսկից պարտէզը կրնաք իջնել , բայտ ցած ձայնով , աջերնուդ դարձիք , և հոն ուրիշ դուռ մը կայ որ դաշտերը կը հանէ : Ես զինքս ձեզի համար վտանդի կենթարկեմ , վասն զի դուք լաւ և աղնիւ բնութիւն մ'ունիք : Երկտասարդը առանց անոր այս խօսքերուն ականջ դնելու իջաւ պարտէզը : Փոխանորդը զգուշութեամբ կրկին դուռը գոցեց , ետքը ծառայ մը կանչելով հրամայեց որ յանցաւորը իր առջին բերեն :

Իսկոյն գիւղացին ներս բերին , որուն հետ փոխանորդը դարձեալ միտակ մտաց :

— Ինչո՞ւ որոսնորդ , բայտ գիւղացոյն տինպիտի խիստ և դժնդակ ձայնով մը որ միւս յանցաւորին գործածած ձայնին բնաւ չէր նմաներ :

— Պարոն , բայտ խեղճ գիւղացին ծնկան վրայ դալով , ներեցէք ինձ . . . այս առաջին անգամն էր որ տասնի բան մ'ըրի , կերպնում որ ալ չեմ ընէր :

— Գեղի պէս անդգամներն ալ ասիէ զաս խօսք մը չեն գիտեր :

— Ես անդգամ չեմ, պարոն փոխանորդ, այլ խեղճ գիւղացի մը որ կին մը . և հինգ-ղաւակ ունիմ, և զանոնք սնուցանելու բան մը չունիմ :

— Անդգամ, ինչո՞ւ զուակ ունեցար :

— Բե՛հ, պարոն փոխանորդ, ձրի բլլալու զուարճութիւն մ'ալ վայելըր ամօթ է եղեր :

— Գեղի պէս ոչինչ մարդիկը ինչո՞ւ զուարճութիւն պիտի վայելեն : Այլատէ, անպիտան, աշխատէ . քեզի պէս մարդոց ասիէ զատ բան մ'ընել չի վայելեր :

— Գործ սունիմ, պարոն փոխանորդ, և այնչափ քիչ ստակ կը շահիմ որ հազիւ թէ կը բաւէ ինձ . . .

— Պատճառն որ յարաւէղի (գարադօնճօլօս) չափ բան կուտես :

— Ես շատ անգամ բան չեմ ուտեր իմ տղաքս կշտացնելու համար :

— Տղա՞քդ . . . տղա՞քդ . . . Այդ չարաճճիներն ալ իրենց այն հասակին մէջ քաղաքը սով պիտի պատճառեն . . .

— Չարմանք, պարոն փոխանորդ, ձեր տէրը յիսունէն աւելի շուն կը կերակրէ, ես չորս հինգ զուակ կը կերակրեմ՝ աս ալ մեծ բան մ'է եղեր :

— Կը տեսնես սա անդգամը, իր գարշըի տղաքը իմ տիրոջն շուներուն հետ համեմատել կուզէ : Ղերջապէս շատախօսութիւն պէտք չէ . յանցանքդ յայտնի է, գող մ'ես դու, ուս-

տի չարայար պիտի դանակոծուիս, տուգանք տաս ու բանտարկուիս :

— Ահ, չնորհ բըէք, պարոն փոխանորդ, սպաննածս ճագար մ'էր :

— Ճագար . . . անպիտան . . . ճագար . . . չի հաւնեցար . . . չես գիտեր որ իմ տէրս ճագարը կը սիրէ . պէտք է որ վրէժ առնու՞մ քեզմէ :

— Պարոն, շատ անգամ ձեր տիրոջը սեղանին համար ճագար սպաննած են . . .

— Այդ ուրիշ խօսք . հիմա քու սպաննած ճագարդ տիրոջն բերանը մտաւ . աւելի խօսք չեմ ուզեր, գող մ'ես դու . . .

— Պարոն փոխանորդ, գլծացէք կնոջն և զուկրներուս վրայ . մենք շատ ազքատ ենք . . . տուներնիս ստակ մը չկայ . . .

— Դուն կախուելու արժանի մէկն ես : (Ին ուրեմն ի բանտ, և վազն ալ ծեծ :

Փոխանորդը զանդակը զարկաւ, ծառաները վազեցին, և խեղճ գիւղացին աւրին տարին առանց իր աղաչանաց և արտասուաց մտիկ ընելու :

Ես սեղանին տակը բարկութենէս կատրեցայ : Երբ ամեն մարդ դուրս ելաւ, պատուհանէն վար ցատկեցի և այս տեսածներս զացի մի բոտ միովէ հօրս պատմեցի : Հայրս իմ պատմածներուս վրայ բնու չի դարմացաւ, վասն զի աս ալ մարդոց անխառութեան և բարբարոսութեան մէկ ապացոյցն էր : Իսկ ես միտքս դրի վրէժ առնուլ : Գիտէի որ անտառապաշն հետեւեալ

օրը պիտի վերադառնար . ուստի որոշեցի եր-
թալ անդգամ փոխանորդը պատժել տալ :

Յիրաւի հետեւեալ օրն կանուկ ելայ բեր-
դը գացի : Հոն համեկով տեսայ բակը խեղճ
դիւղացին որ ծառայներէն անննայ ծեծ կու-
տէր , և անտառապահն ալ իր պատշգամէն
այս տեսարանը կը դիտէր իր օրսի շանն պար-
օխման և իր մատակ շանն ալ շարքար տալով :

— Հիմա քու վրէժդ պիտի պահանջեմ ,
ըսի դիւղացւոյն քովէն անցնելով . և անմիշտ
պէս սանդուխէն վեր ելայ , մտայ անտառա-
պահին սենեակը առանց ծառայներուն ժամա-
նակ թողու . որ զիս արդիւնն : Փոխանորդը իր
տիրոջը քով նստած ոսկի կը համրէր . գացի
տիրոջն առքն ինկայ . բայց անուշադուլութեամբ
իր շուներէն միոյն ոտքին վրայ կոխելով սիր-
տը ցածրնելուս համար սէրը բարկութեամբ
երեսս նայելով հարցուց թէ ինչու առանկ հա-
մարձակ իր սենեակը մտած եմ : Առանց ասոր
պատասխանելու աւջի օրուան եղելութիւնն
մի քատ միջէ պատմեցի :

Անտառապահն իմ պատմութեանս վրայ
զարմացաւ իմանալով որ ուրիշ յանցաւոր մ'ալ
կայ եղեր . բայց փոխանորդն որ իմ խօսած
ատենս բարկութենէն կը կատղէր , տճապարեց
ըսաւ իր տիրոջը որ այդ յանցաւորն կուսակալ
մ'ըլլալուն չէր կրցած բանտարկել :

— Կուսակալ , ըսաւ տէրը քթախոտ մը
քաշելով , կուսակալ . . . վայ չար սատանայ
. . . արդարեւ չեմք կրնար այդպիսի մէկը գա-

նակոճել . ուստի պէտք է որ դիւղացին կըրկ-
նակի պատիժ կրէ :

— Ես ալ ատանկ խորհեցայ , տէր իմ :

— Շատ աղէկ բերեա . հիմա այս անըզ-
գամ տղան ալ պատժէ , որ եկաւ շանս ոտքին
վրայ կոխեց :

Փոխանորդը առանց այս հրամանը երկրոր-
դել տալու թեւէս բռնելով դուրս հանեց . ես
առանց ընդդիմութեան գացի իր հետ չգիտ-
նալով թէ ինչու համար անտառապահն իր ա-
նըզգամ փոխանորդին գէմ՝ չի բարկացաւ :
Դուրս ելնելնէս վերջը փոխանորդն ինձի տասը
ապտակ և կանակիս ալ ոտքով տասը անգամ
զարնելով դուրս բրաւ , և այս եղաւ բերդէն
ընդունած փոխարէնս :

Կատաղութեամբ տուն դարձայ , և գլխուս
մէջ վրէժ խնդրութեան հազարաւոր միջոցներ
դարձան : Հայրս որ իմ այս կատաղութենէս
յառաջ գալիք հետեւանքը կը գուշակեր , ջա-
նաց զիս հանդարտեցնել , բայց ի զուր :

Հետեւեալ օրն փոխանորդին կողմանէ մէկն
եկաւ հօրս իմացուց որ իր պաշտօնէն դադարած
է իմացայ որ այս բանը իմ առջի օրուան բրածիս
հետեւանքն էր . իսկ հայրս տարակուսեցաւ , և
զիս բնաւ չի յանդիմանեց : Մեկնեցանք մեր
խրճիթէն առանց ինչ ըլլալիքնիս գիտնալու :

Իսկ ես իմ հօրս եղած այս վնասը տեսնե-
լով ալ բոլորովին միտքս դրի վրէժս առնուլ ,
և կարելի եղածին չափ շուտ կերպով :

Նոյն գիշերը՝ երբ հայրս ծառի մը տակ

քնանար, առանց ձայն հանելու ելայ հօրս լսայտերը ու հրացանը առի, և վաղեցի անտառապահին տունը: Թրբ հոն հասայ, շատ մը չոր փայտեր ժողվելով բերդին չորս կողմերը դիզեցի, զգուշանալով որ հրդեհը մէկէն ի մէկ չի ճարակի, և աւելի ակոսներուն կողմէն սկսի բռնկիլ:

Շուտով տեսայ իմ վրէժխնդուութեանս յաջողութիւնը: կրակը բերդին ամեն կողմերը հաւասարապէս տարածուեցաւ: Իսկոյն հրդեհին զանգակը զարնուեցաւ, դիւզացիք վազեցին եկան, և անոնցմէ շատերն ինկան բոցերուն մէջ աղտոտելու համար ծերունի անտառապահն որ միշտ զիրենք դաժակոծելով կը զուարճանար: Այս խառնակութեանց և շփոթութեանց միջոցին ես սենեակներն ելայ և տեսայ փոխանորդը որ թեկն տակը պզտիկ սքնտուկ մը պինդ բռնած փախիլ կուզէր: Կեցայ իր առջին, և հրացանը վրաս շտկելով

— Առ, ըսի, զիս ապտակելն ու օտքով ծեծելը: Պարպեցի հրացանն, ինկաւ գետինը, ու սնտուկն առնելով դիւրութեամբ պատուհանէ մը վար ցատկեցի, և փախայ դղեակէն որն որ քիչ մը ետքը բոլորովն մոխիր եղաւ:

Փութացի գառնալ հոն ուր հայրս թողած էի: Ուրախացայ իմ վրէժխնդուութեանս և սնտուկ մ'ալ շահելուս վրայ որն որ սակիով լի բլլալ կը յուռայի: Միշտ դիտած էի որ մարդկրնայ սակիով ամեն ուզածն ընել, և ամեն վասնդներէ ալ աղատիլ:

Բայց որչափ զարմացայ երբ տեսայ որ հայրս

հոն չէր, որն որ կը կարծէի թէ տակաին ծառին տակն եղած բլլայ: Ունայն տեղը պարտեցայ այն կողմերը բարձր ձայնով իր անունը տալով: ուստի պէտք եղաւ ուրիշ զիւղ մը երթալ առանց իրեն ինչ բլլալն ցիտնալու: Իմ դանձիս վրայ անհանգիստ քլլալով հին կաշիի մը տակ թաղեցի զայն քանի մը հատ վրաս առնելէս վերջը, և այն ատեն տեսայ որ սքնտուկը արդարև սակիով լի էր:

Գացի պառկեցայ պանդակի մը մէջ խորհելով որ դղեակին հրկիզութեան պատճառն արշայ մ'ըլլայը իրաւամբ անկարծելի բան մ'է: Յիրաւի ինծի բնաւ ուշադրութիւն ընող մը չեղաւ: ամեն ոք դղեակը պատահած աղէտքին վրայ կը խօսէր: բայց ցորեկը դիւզացի մը եկաւ քսաւ որ յանցաւորը բռնուեցաւ: և ասի անտառապահին նախկին որօի պահապանն էր, որն որ ճամբուած բլլալուն համար այս կերպով ուզած էր փոխանորդէն վրէժ առնուլ: Մա դղեակը կրակի տուած էր, որպէս զի դիւրաւ կարենայ իր թշնամոյն քով երթալ, և փոխանորդն ալ մեռած գտնուեցաւ: այն հրացանին հարուածովը որուն որօի պահապանին բլլալն շատ մարդիկ ճանչցան:

Այս պատմութիւնը լսելուս պէս իմացայ որ հայրս իմ տեղս բռնուել է: դողցի իրեն համար և միտքս դրի զիս կորսնցունել զանի աղատելու մտօք: պանդակէն դուրս ելայ և դացի դէպի այն դիւղը ուր զանի տարած է:

ին ։ ճամբան ամենևին չի կեցայ գիտնալով որ վայրկեաններն շատ սուղ էին . վերջապէս հասայ գիւղին մեծ հրատարակը՝, և հոն անայ որ հայրս կախեր էին ։

Չայս տեսնելով չի ցաւեցայ , այլ բուրբովին կատղեցայ . անոնկ որ բոլոր գիւղին կրակ տալ և բնակչներովը մէկտեղ մխիթը դարձնելու ձեռք դարնել ուղեցի ։

Գեշերը հօրս մարմինը վերցնելով տարի անտառը թաղեցի . երգուրնցայ իր գերեզմանին վրայ որ իր մահուան ու թշուառութեան վրէժը ամեն մարդոցմէ առնում , և երբէք չսփրեմ զաննք որք անիրաւութեամբ զանի թշուառացուցին և նորա տարապարս մահուան պատճառ եղան ։

Վերջը վացի անտուկս առի ու գիւղէն մեկնեցայ ։ Իմ ունեցած սկիներուս շնորհիւը կըրցայ բոլոր փափազներս գոհ ընել և ամեն զուարճութիւն կատարել ։ Այսպէս ապրեցայ մինչև հինգ տարի , իմ հասակիս բնական եղած ամեն հաճոյքներն վայելելով . գինի , խաղ և կին շատ կը սիրէի . և քանի որ սակի կար քովս , բանէ մը չէի զրկեր ինքզինքս . սակայն ասանկով իմ սակիս չէր կրնար երկար ատեն դիմանալ ։ Տասնևութ տարեկան հասակիս մէջ սընտուկիս տակը տեսնուեցաւ . բայց փոխանակ այս մասին վշտանալու ուրախացայ խորհելով որ հօրս գերեզմանին վրայ բրած երգումս ի գործ գնելու ժամանակն հասաւ ։

Ալ անկէ վերջը սկսայ չարիք և խորաման-

կութիւն ընելու , որն որ ինձ համար բնաւ դժուար չէր . իմ սակիս շնորհիւը մեծ անձանց հետ անսակցելով անոնց սովորութիւններն ու գեղեցիկ եղանակներն սորվեցայ ։ Մեծ վարպետութիւն մ'ալ ունէի որ զիս կրնայի դիմակարորել և պէտք եղած ատեն ալ ձայնս փոխել . ասոր վրայ աւելցուցէք նաև հանձար , յանդգնութիւն , հաստատմութիւն և ճարտարխօսութիւն , որով կրնաք դատել թէ որչափ յաջողութիւններ պահուած էին ինձ համար ։

Պրիւսէի մէջ անուան Պրեվիլը գնելով Յալուս Միւրվիլ անուամբ մէկուն պատահեցայ որ իր ծնողացը տնէն փախած էր ։ Աս մարդը քու եղբայրդ էր , խեղճ Նդուարդս , որուն վրայէն վարպետութեամբ մը բոլոր ունեցածն զողցայ , փարիզ ուրիշ անուն մ'առնելով քու հարսանեացդ գանուեցայ ։ Միւրվիլ անունն զիս հրճուեցուց . քու վրայօքդ տեղեկութիւններ առնելով իմացայ որ եղբայր մ'ունիս եղեր , և միտքս դրի որ փոքրին ստակը սպառելէս վերջը մեծին հարստութիւնն ալ ինձ սեպհակնեմմ : Բայց կենդ տեսնելուս պէս միտքս ուրիշ խորհուրդ մ'եկաւ . Ատէլինի գեղեցկութիւնն ու շնորհքը զիս զմայլեցուցին . անհնարին կերպով սիրահարուեցայ անոր , և հաստատապէս որոշեցի զանի սիրելու . . .

Ասոր համար նախ և առաջ քու տունդ մտնել պէտք էր . այդ ալ բրի , և զբեղ քաղցրութեամբ քու կործանմապէ վարելով տանդ

մէջ բաժանում ձգեցի . իմ նպատակս ալ այս էր : Տեսայ որ խաղի շատ սէր տուիր , ասով շատ դիւրին եղաւ ինձ քեզի ամեն մուրթին զորձել տալու : Բայց և այնպէս քու կորքստեամբդ ես հարստնալ կուզէի . սակայն անիծեալ խաղն ինձ չյաջողեցաւ : Կնոջմէդ տեսած անարգանացս համար քեանէ վրէժ առնել ուզելով և տեսնելով ալ որ դու իբրև մեքենայ ուղած կողմն կը դառնաս , զքեզ մեղաց մէջ թաւալեցի :

Ատէլինի ընդդիմութեան յաղթելու համար ամեն միջոց գործադրելէս վերջը՝ խորամանկութեան դիմեցի , և դիւեր մը իր սենեակը մտնելով կարող եղայ կիրքս յազեցընել . հարկաւ հիմա կը սոսկաս ասոնք լսելով . . . էհ , ինեզձ Եդուարդս , կնիկդ խաբուեցաւ . դու կըսէիր թէ առաքինի է , տեսա՞ր հիմա առաքինութիւնը ինչ օգուտ ունեցաւ . . . տեսնելով որ դու զինքը կատես , ինձ հետ ատելութիւն հաստատեց , բայց ես վերջապէս իր երջանկութիւնը յաւիտեան ֆնջելու ձեռքն հաս եղայ :

Հիմա ճանցար դիս . այս կորստեամբդ ըզմարդիկ դատել սորվէ : Իսկ ես , որ ամեն տեղ ստութեանէ , առփանքէ , ապերախտութեանէ , անիրաւութեանէ , շահասիրութեանէ , փառասիրութեանէ և նախանձէ զատ ուրիշ բան չի տեսայ , և նախապաշարմունք ըստածն իմ կըրիցս զոհեցի , անտարբեր կերպով գողերու գլուխ կըլլայի , եթէ այս կերպ կենցաղավա-

րութեան մէջ կարենայի իմ բոլոր վտականերս դոհ ընել : Բայց ինչ որ ալ ըլլայ իմ գըտնուած վիճակս , ինչ որ ալ ըլլայ իմ ձեռնարկելիք գործս , հօրս դերեզմանին վրայ բրած երգումս միշտ պիտի պահեմ . զմարդիկ պիտի առեմ : և դձեղ ալ կը մեռցընէի , եթէ դուք ալ ինձ նման ուսմիկն առածին համեմատ մարդոց թշուառութեան համար ծնած չըլլայիք :

Տիւֆրէնս իր պատմութիւնը աւարտեց , և գողերն խիստ հպարտացած այսպիսի սրիկայ և անզգամ մէկն իրենց հրամանատար ունենալնուն վրայ , Եդուարդ անոր պատմածներն լըսելով սաստիկ օտկաց երբ տեսաւ որ իր կորուստը նիւթող և իրեն անպատուութիւնը հանդարտութեամբ պատմող դազանի մը խըրատներովն որ աստիճան թշուառութեան ենթակայ եղած էր , Բայց զասոնք խորհելու ժամանակն ալ անցած էր . միայն կըզգար որ կատէր զՏիւֆրէնս . սակայն չէր կրնար անկէ բաժնուիլ . զի մյուս թիւնը զմարդ կաղաւաղէ և կոչնչացընէ : Եդուարդ իր սոսկալի կացութիւնը կը տեսնէր , բայց չէր ուզեր կամ լաւ ևս է ասել չէր կրնար անկէ ազատիլ :

Վերջապէս առաւօտ եղաւ , և արևուն ճառագայթներն սկսան լուներուն գագաթին ու մինչև անտառին պարսպ տեղուանք ծագիլ : Գողերը կրակը մարեցին , և աւելորդ կերակուր մակաղներնուն մէջ դրին :

— Ընկերք , ըսաւ Տիւֆրէնս , պէտք է որ

այս դաւառէն մեկնինք . հոս մեզի աղէկ չի գար . ուստի ճամբայ երնենք . և առաջին անգամ որ քաղաքն որ հասնինք ուր կարենանք հանդարտ սրտով բնակիլ, մեզնէ ամենէն աներկիւղն պէտք է որ երթայ մեզի պատուաւոր մարդու կերպարանք տուող հագուստներ գնէ . վասն զի հաւատացէք որ մեր արհեստէն եղողներն միշտ այնպէս կընեն . ասանկ արհեստի մէջ յաջողութիւն դտնելու համար պէտք է մարդոց աչքին մոխիր փշել . մեր այս պատուած բաճկոններովն ու բանթալոններովք չենք կընար այս անտառէն դուրս երնել, և բոլոր մեր կենացը մէջ թշուառ և թափառական կըլլանք :

Տիւֆրէսնի այս խօսքերն իբրև պատգամ ընդունուեցան . ուստի որոշեցին անոր խրատաներուն հետևիլ, և ճամբայ ելան՝ ցորեկ ատեն խիտ բանուկ ճամբայներէն զգուշանալով, Տիւֆրէսն կ'առաջնորդէր անոնց . Լամբէն երգելով և խմելով յառաջ կերթար, միւս երկու առաջակներն ալ իրենց ընելիք գողութեանը վրայ խորհելով, և եղուարդ ալ տարակուսելով թէ իր այս ընկերներուն քովէն փախչի՞ թէ անոնց հետ մնայ :

ԳՂԻԻՒ ԼԵ .

Վ Օ Ս Ժ Ի Տ Ո Ւ Կ Ը

Լեռներու մեծ գօտի մը Ալլասն ու Ֆրանշ - ֆօնթէն Լօրէնէն կը բաժնէ, և մինչև Ար-

տէն կընդարձակի : Այս վօստ անուանեալ լեռանց վրայ շինուած է Պ . Ժէրվալի տունը . ուստի հօն տարաւ զՄտէլին ու իր աշխիլը և որոշեց զանոնք խնամել :

Պ . Ժէրվալի տունը պարզ բայց վայելուչ էր . դեղեցիկ բակ մ'ունէր հաստատուն երկաթէ վանդակով մը գոցուած՝ որ քարայտակը կը տանէր, և երկու պատուհան ունէր փողոցին վրայ, որոնք երկաթէ վանդակներով ու փեղկերով փակուած էին, անտառներու մէջ առանձին տեղ մը շինուած այս տունն գողերէն պատապարուելու համար : Տանը առաջին յարկը բակին և մեծ պարտէզի մը վըրայ կը նայէր որն որ չորս կողմէն հաստատուն պատով մը գոցուած էր և տանը ետին կիյնար : Այս տունը բլուրի մը վրայ շինուած ըլլալով Մօնթիլեիի գիւղաքաղաքը տանող պղտի ճամբէն շատ հեռու չէր, և իր նկարչական դիրքը, ուրիշ տուներէ հեռու գըտնուած ըլլալը և շրջակայքը տիրող շարունակական հանգարտութեամբը այս անանձնակի տանը հանգստեան և խաղաղութեան բնական մ'ըլլալը կը յայտնէին :

Պ . Ժէրվալի ծառաներն էին Տիւբրէ, զոր արդէն գիտենք, Կատարինէ որ խոհարարութիւն կընէր, և պառաւ կին մ'էր, թէպէտ քիչ մը շտապօս և քիչ մը հետաքրքրի, բայց հաստատարիմ, մարդասէր, բարի, և իր տիրոջը վրայ շատ սէր ունէր . մէյ մ'ալ Դուկաս անունով երիտասարդ գիւղացի մը, որ անոր

պարտիզպանն ու միանգամայն մատակարարն էր :

Պ. Ճէրվալ իր շրջակայքը և աւելի հեռու տեղուանք գտնուող տառապեղաւ անձանց բարիք և օգնութիւն բնեւում համար իր անունը գովեստիւ կը յիշուէր այն կողմերն : Միշտ իր այս տունը չէր բնակեր, այլ շատ անգամ երկար ատեն ուրիշ տեղ կը կենար դործով և անատեն Տիւբրէ և Կատարինէ՝ որք իրենց տիրոջը բարեսրտութիւնը դիտէին, անոր բնեւորիք բարիքն կընէին, որպէս զի կարօտեալները իրենց պաշտպանին բացակայութենէն չի նեղուին :

Գիւղացիք երբ իմացան Պ. Ճէրվալի փարիզ երթալը, վախճանն որ ալ չի դառնայ. Կատարինէ ալ իր կողմանէ վախճաւ, վասն զի կը կարծէր որ իր տէրը իր վաղեմի բարեկամներն երկար ատենէ ի վեր տեսած չըլլալուն և դանոնք տեսնելու մեծ փախազ ունենալուն համար շատ ժամանակ կամ բողբոջին հոն մնայ : Բայց Պ. Ճէրվալի մէկ նամակն Վոստի բնակչաց մեծ ուրախութիւն պատճառեց, վասն զի իմացան որ իրենց բարեկամը, պաշտպանը և հայրը շուտով պիտի վերադառնայ ալ զիրենք չի թողելու պայմանաւ : Այս լուրը բոլոր շրջակայքը տարածուեցաւ . ամենքը վազեցին Կատարինէի քով անոր սոյոգ ըլլալն հասկընալու համար . նա ալ իր տիրոջը նամակն ամենուն առջին կարգալով անոր դալու օրն անց կենացընէր :

Այս օրը եկաւ հասաւ, և տանը մէջ իրանցում մը կար Պ. Ճէրվալի վերագարծք տանելու համար : Ղուկաս իր պարտէզին ծաղիկներէն փունջեր շինեց ճաշարանը զարդարելու համար . Կատարինէ քաղցրահամ կերակուրներ պատրաստեց . շրջակայից գիւղացիներն ու բոլոր Պ. Ճէրվալէ բարերարեալք խմբովին տուն վազեցին :

— Դեռ չեկաւ, բաւ Կատարինէ, բայց ալ չուշանար :

Ամենքը խոնեցան ճամբուն վրայ, և բարձր տեղեր ելան կառքը շուտով տեսնելու համար : Վերջապէս տեսան և վրան թափեցան . ձերունի բարերարին անունը բերնէ բերան տարածուեցաւ, և կարօտից օրհնութիւններ քը նորա վերագարծքը շնորհաւորեցին :

Պ. Ճէրվալ գիւղացեց այս տարօրինակ ուրախութիւնը տեսնելով՝ սիրտը ելաւ ու սկսաւ լալ :

— Ահ, բարեկամս, բաւ նա Տիւբրէին, սրբափ քաղցր բան է բարիք բնելը :

Կառքը մտաւ տանը բակը, գիւղացիք ուրախութեան աղաղակներ հասնեցին :

— Լուեցէք, լուեցէք, բարեկամներս, բաւ ձերունին կառքէն վար իջնելով . չափաւորեցէք ձեր ուրախութիւնը, թէպէտ զիս մեծարելու համար կընէք, բայց հետո տառապեալ կին մը կայ, որոյ համար ամենափոքր մէկ ձայնն խիտացաւալի է :

Այս բնելով Պ. Ճէրվալ զԱտէլին կառքէն

վար իյնցուց, և Տիրբէ Ղէրմանս գրկելով
կառքէն դուրս հանեց :

Ատէլին անհանգիստ նայուածքով մը չորս
կողմը նայեցաւ . և երբ իր բոլորտիքը խոնած
բազմութիւնը տեսաւ , սոսկաց և ուզեց փախ-
չիլ : Ժէրվալ պարտաւորեցաւ ակնարկել զիւ-
ղացուց որ քիչ մը հեռանան , որպէս զի խեղճ
կինն տուն մտնել ուզէ :

Գիւղացիք Ատէլինի այս տխուր վիճակը
տեսնելով՝ իրենց ուրախութիւնը արամութեան
փոխեցին :

— Եւեղճ կին , ըսին ամեն կողմէն , արդեօք
ինչո՞ւ համար խելքը կորսնցուցեր է . . : Սա
պղտիկ աղջիկը նայեցէք , ի՞նչ սիրուն է . . : Պ.
Ժէրվալ այս թշուառներն ալ պիտի խնամէ :

— Ձաւակներս , ըսաւ Կատարինէ , երբ որ
այս թշուառ կնոջ պատմութիւնը իմանամ ,
ձեզի կըսեմ . և շուտով ալ կընամ իմանալ , վա-
սըն զի իմ տէրս ինձմէ բան մը չի պահեր :

Դժբաղդաբար Պ. Ժէրվալ ալ չէր գիտեր
Ատէլինի պատմութիւնը . բայց իր սպասուհւոյն
հետաքրքրութիւնը գոհ ընելու համար համա-
ռօտի . պատմեց իրեն անոր հետ ինչպէս ծա-
նօթանայն ու վերջէն ինչ ողորմելի վիճակի մէջ
գտած ըլլաին : Սպասուհին խիստ զարմացաւ ,
երբ Ատելինի պատահած դէպքերն իմացաւ .
բայց ապահով եղաւ որ քիչ քիչ նորս թշուա-
ռութեան պատճառն բարբոջին պիտի կարե-
նայ իմանալ : Առ այժմ թէ այս խեղճ կինն և
թէ նորս շաւակը սքրելու պարտաւոր համա-

րուելով տանը ամենէն գեղեցիկ սենեակն ա-
նոնց համար պատրաստել որոշեց :

Ատէլին անտառի վրայ նայող դեռնայարկ
սենեակ մը տարւեցաւ , որոյ պատուհաններն
երկաթէ հաստառուն վանդակներով գոցուած
ըլլալուն չէր վախցուեր որ Ատէլին ստօտիկ զա-
ռանցած ատեն կընայ փախչիլ : Աղջիկն ալ իր
քովը ձգեցին , վասն զի տեսնու որ կը ճանչ-
նար զանի , և շատ անգամ գորովանօք գիրկն
առնելով կը սիրէր :

— Ձաւակը քովէն չի դատենք , ըսաւ Պ .
Ժէրվալ . մինչեւ այս խեղճ կինն տակաւին
կընայ այս վերջին երջանկութիւնն փայլել ,
դէթ զաւակը իր մօրը գորովանքէն չի զրկե-
լի :

Կատարինէ ամենայն յօժարութեամբ յանձն
առաւ Ատէլինի ու իր զաւակին վրայ հսկել , ին-
քն էր որ օդը աղէկ եղած օրերն կը տանէր
կը պատցընէր զանի : Դուկաս ալ իր տիրօջմէն
պատուիրուած՝ ամեն առտու նոր ծաղիկներով
Ատէլինի սենեակը կը զորդարէր : Այսպիսի
խընամոց և հսկողութեան միջոցաւ Պ. Ժէրվալ
այս խեղճ կնկան սիրտը հանգարտեցընել կը
յուսար :

Պզտիկ էրմանսի անունը ստրված էին , ու-
րովհետեւ Ատէլին իր յիմարութեան ատեն շատ
անգամ անոր անունը տուած էր : Բայց իր ա-
նունը դեռ չէին գիտեր , և Պ. Ժէրվալ որո-
շեց որ զինքը ֆոնօթման անուանեն : Այս քաղ-
ցըր անուան Կատարինէ շատ հաւնեցաւ , և ի-

մացաւ որ այս կինն սիրոյ համար միայն թըշ-
վառացեր է: Ուստի տանը մէջ զտնուողներն
ամենքն ալ այս անունը կուտային անոր, բայց
Ղուկաս ինչպէս նաև զիւղացիք երբեք յիմար
կանուանելն զանի:

Վօսթի տանը մէջ տիրած հանգարտութիւ-
նը, հոն վարուած խաղաղ կեանքը և Ատէլինի
վրայ տարուած խնամքը կարծես թէ քիչ մը
զինքը հանգարտեցուցին. նա կը գգուէր իր
զաւակը, և շատ անգամ գիրկն առնելով կը
սիրէր. կը ժպտէր իր բարեբարին և քօլը գա-
նըսողներուն երեսը. բայց հազիւ թէ քանի
մը խօսք կը հանէր բերնէն, նայիս իսկոյն այն-
պիսի խորին մտատանջութեան մը մէջ կեցնար
որ բան մը չէր կրնար զինքը զուարճացնել:

Օրուան մէկ մտքը պարտէզը կանցընէր, որ
մեծ և զեղեցիկ զարդարուած էր: Երբեմն ծա-
ղիկներ քաղելով վայրկեան մը զուարթ կերե-
ւէր, բայց յանկարճ նորէն տրտելով կերթար
դալարիէ նստարանի մը վրայ կը նստէր, և ժա-
մերով կը կենար հոն առանց անգէն շարժելու:

— Ինչ գժբարդութիւն, բնաւ Պ. ժէք-
վալ զանի դիտելով և Նրմանսին հետ խաղա-
լով, որ արդէն իրեն հետ լաւ մը վարժուած
էր. . . կարծեմ այս կինը չի պիտի բժշկուի:

— Ինչո՞ւ չի պիտի բժշկուի, պարոն, բնաւ
կատարինէ, պէտք չէ բանէ մը յոյս կարել. . .
համբերելու է. . . կրնայ բլլալ որ անահնկալ
կերպով կը բժշկուի: Ո՛հ, միայն թէ իր ցաւե-
րուն պատճառը հասկընայինք:

— Անշուշտ. . . փարեզու բժիշկն ալ այն-
պէս բնաւ. . . բայց ինձի կերևի որ սոյդ պատ-
ճառը բնաւ չի պիտի կրնանք հասկընալ:

— Ո՞վ գիտէ. . . Երբեմն կը խօսի. . . տե-
սէք, կը ժպտի. . . իր աղջկան խաղալուն կը
նայի. . . այսօր շատ աղէկ կերևի ինձ. . .
մէջ մը հարցուցորձ բնեմ. . .

— Զգուշացիր կատարինէ, չբլլայ որ զին-
քը վշտացընես. . .

— Անհօդ եղիք, տէր իմ:

Կատարինէ մտեցաւ Ատէլինի քով որ պար-
տէզը խիտ ծառերով հովանաւորուած տեղ մը
նստած էր, և Պ. ժէքովալ, Տիրբէ և Ղուկաս
խիստ մօտը կայնեցան անոր պատասխաններն
լսելու համար:

— Տիկին, բնաւ Կատարինէ քաղցր ձայնով
մը, ինչո՞ւ համար անբաղար կը վշտանաք,
գուք բովերնեղ զձեզ սիրող մարդիկ ունիք.
պատմեցէք ձեր թշուառութիւններն. մենք
կը ջանանք զձեզ մխիթարել. . .

— Ձիս մխիթարէլ. . . բնաւ Ատէլին զար-
մացմամբ Կատարինէի երեսը նայելով: Ո՛հ, ես
երջանիկ եմ. . ., շատ երջանիկ. . . ես մելի-
թարութեան կարօտ չեմ. . . Եղուարդ զիս
կը սիրէ. . . նա երգում բրաւ ինձ. . . մենք
միացանք. . . նա զիս երջանիկ պիտի ընէ. . .
որովհետև որ էշ մարդ չէ. . .

— Բայց ինչո՞ւ համար զձեզ թողուց. . .

— Թողու՞ւ. . . չէ, նա զիս չի թողուց. . .
նա ինձ հետ է այն տանը մէջ ուր ինքը մեծ-

ցաւ . . . մայրս , աղջիկս և իր եղբայրը մեզ
հետ են . . . ոհ , չեմ ուզեր որ փարիզ երթայ .
կրնայ բլլալ որ հոն պատահի . . . ոչ . . . ոչ . . .
մի թողուք որ երթայ :

— Չուշաջեր , կատարինէ , ըսաւ Պ. Ժէր-
վալ ցած ձայնով , աչքերը կը դառնան , զա-
ռանցանքը կ'աւերնայ . . . չնորհ ըրէ , ալ մի
նեղեր զանի :

Կատարինէ հնազանդեցաւ իր տերովը , բայց
կը փափագէր ալ աւելի բան իմանալու : Յիրա-
ւի Ատէլին շատ խռովեցաւ . ոտքի վրայ ելաւ ,
և ուղեց փախչիլ . կատարինէ ջանաց զանի ար-
դիւնէ :

— Թողէք զիս , ըսաւ Ատէլին անոր թէեւ-
րէն փախչելով , թողէք որ փախչիմ . . . հոն է
. . . զիս կը հալածէ . . . նայեցէք , չէ՞ք տես-
ներ . . . ամեն տեղ ետևէս կուգայ . . . երդուըն-
ցաւ որ զիս կորսնցընէ . . . դեռ և կը համարձա-
կի խօսիլ ինձ իր սիրոյն վրայ . . . դաղան . . .
ահ , չնորհ ըրէք . . . մի թողուք որ քովս
դայ . . . :

Այս խօսքերն ըսելով հեռացաւ , և արա-
դաբայլ սկսաւ պարտէզին մէջ ասդին անդին
պտտիլ , մինչև որ յոգնած և իր կրած ստկում
ներուս չդիմանալով նուազեալ և անզգայ դե-
տինն ինկաւ :

Փութացին զանի իր սենեակը տանելու , ուր
ամեն կարևոր դարմաններն ընելով խելքը
դուլը բերին , որուն վրայ Պ. Ժէրվալ խստիւ
պատուիրեց որ ալ նոր բան մը չի հարցընեն ,

վան զի տեսաւ որ այս բանն զինքը միշտ կը
վշտացնէ ,

— Իմացուեցաւ , պարոն , ըսաւ Կատարի-
նէ . կը տեսնէ՞ք որ հիմա դիտցանք թէ ինքն ա-
մուսնացած է . և իր ամուսինն տը եղբայր մ'ու-
նի , և այս ամենուն մէջտեղը դէշ մարդ մը
կայ , որ իրեն սիրահարեր է և սաստիկ կը
վախցնէ . . . Ոհ , դիւրաւ կը դուշակեմ ես . . .
կը հաստատեմ որ այս դէշ մարդն իր ամուսի-
նը փարիզ տարեր , և հոն իր կինն ու զա-
ւակը իրեն մտացնել տուեր է . . . սա այսպէս
բլլաւու է . . . Ոհ , մեզք որ աւելի չեմ կըր-
նար խօսեցնել . սակայն քիչ օրէն ամբողջ կիմա-
նանք :

Բայց որովհետև Կատարինէ չէր ուզեր
խեղճ կնկան դառանցանքն աւելցնել , ալ չի
համարձակեցաւ անոր բան մը հարցնելու : Շատ
անգամ անիկայ տանը բոլորտիքը եզած ան-
տառներուն մէջ կը պտտէր . երբեմն ինքը կը
դրկէր դէրմանս , երբեմն ալ մայրը , Ատէլինի
ամեն շարժումներն կը դիտէր , անոր բերնէն
եւրած բառերն միտքը կը պահէր , իրարու քով
կը կցեր , և աննցմով խօսք կը շինէր . սակայն
երբ ամիս այսպէս շարունակեց և արդէն իր
դիտցածէն աւելի բան մը չիմացաւ :

Ատէլինի այս խաղաղ կեանքը անակնկալ
դէպքով մը խռովեցաւ : Օր մը որ տանը բա-
ւական մօտ եղող բլուրի մը վրայ իր աղջկանը
հետ կը պտտէր , և Կատարինէ ալ անոր ետե-
ւէն երթալով անոր վայելելու հասակին , չնոր-

հայր և գեղեցիկ դարձուածքներուն վրայ զարմանալով՝ կրտէր ինքնիրեն ,

— Այս կինը խրճիթի մը մէջ ծնած ըլլալու չէ . իր հանգամանքներն ու խօսուածքը աղնուական սերունդէ մ'ըլլալն կը յայտնեն . ուստի յուսահատելու չէ իրեն ով ըլլալը իմանալու միջոց մը գտնելէ . . .

Պատանի հովիւ մը ծառի մը վրայ ելած էր բոյն մը վերցնելու համար . նայիս ոտքը ստահեցաւ . իր բռնած ոտն ալ նոյն միջոցին կոտրեցաւ . ինկաւ գետինը , և գլուխը վիրաւորուելուն ցաւայի աղաղակ մը հանեց :

Ատէլին՝ որ խիստ մօտ էր վիրաւորելոյն , այս ձայնն առածին պէս կանկ առաւ , սկսաւ դողալ . յանկարծական սոսկում մը եկաւ վրան , և աչքերը գետինը յարած՝ կարծես թէ իր այս սոսկումը աւելցնող բուն մը կը տեսնէր . ասոր վրայ խկոյն տղան տուաւ ու փոխաւ անտառները : Ի դուր կատարինէ կը կանչէր զանի անդադար ետէն վաղելով . Ատէլին կատարինէի ձայնէն ալ աւելի վախնալով՝ առանց շունչ առնելու կը փախչէր : մինչև բարձր լեռներէն ալ վեր ելաւ , և կատարինէ շատ շանցաւ աչքին առջէն կորսնցուց խեղճ կինը :

Ասոր վրայ յուսահատ տուն դառնալով՝ պատմեց իր տիրոջը : Պ. Ժէրվալ գլխոնալով որ դիւղացիք անձնուէր են իրեն , անմիջապէս զրկեց զՏիւրքէ և զՂուկաս երթալ աղաչել անոնց որ ամեն կողմ երթան փնտառն , որոնք շուտով անտառներուն ամեն դին ցրուեցան :

Վերջապէս իրենց յողնութիւնը պարապը չեւաւ . դտան զԱտէլին ու իր աղջիկը ծառի մը տակ քնացած : Ատէլին երկար ատեն վաղելէն յետոյ յողնած մնացած էր հոն առանց աւելի հետուն երթալ կարենալու :

Իսկոյն ծառերուն սոսերէն պատգարակ մը շինելով վրան դրին զԱտէլին ու իր աղջիկը ու բերին իրենց բարերարին տունը : Կերունին զանոնք վարձատրելէն յետոյ արձրկեց , և սկսան խեղճ կինն հանգատեցնել . վասն զի այն պատանի հովուին աղաղակը անանկ սաստիկ զառանցանք մը բերէր էր իր վրայ , որուն նըմանն երբէք պատահած չէր վճռի տունը գալէն ի վեր :

Ալ ասոր վրայ Ատէլին զառանցանքն՝ հետդճետէ ստասկանալով՝ աւելի խօսիլ սկսաւ : Կատարինէ քովէն չէր զատուեր . բայց նորա սա քանի մը խօսքերը լսելով սոսկաց .

— Սա պատժական նատարանին վրայէն ասդին առէք զինքը , բսաւ նա ձեռքերն աչքին վրայ բռնելով . . . զթացէք . . . զանի դահիճներուն ձեռքը մի տաք . . . զանի կը մեռցընեն . . . ձայնը կը լսեմ . . . բայց չէ . . . այն ցաւալի աղաղակն սնոր բերնէն չեւաւ . . . ապի ուրիշ պատժապարտ մ'է . . . ահ , չեմ խաբուիր , կը ճանչնամ նորա ձայնը . . . միշտ իմ սրտիս խորքը կը թափանցէ :

Կատարինէ սկսաւ արտասուել . Պ. Ժէրվալ ահազին գաղանիք մը կը նշմարէր , և կատարինէ անդադար իր տիրոջը կըսէր .

— Այս ինչ է . . . պատժական նստարան . . . դահլիճ . . . ահ, պարոն, այս ինչ սոսկալի բան է :

— Ինչո՞ւս պէտք, ըսաւ Պ. Ժէրվալ, կամ իր ամուսինը և կամ իր ազգականներէն մին պատժապարտ են եղեր. ես զինքը միշտ քովս կը պահեմ: Գիտեմ որ ինքը պատժապարտ չէ, այլ թշուառ մը, կարօտեալ մը . . . :

— Այո, պարոն, բայց ի՞նչ դազանաբարոյ մարդիկ են եղեր ատանք որ զինքը այս աստիճան թշուառացուցեր են . . . ահ, այդ մարդիկը շատ մեղապարտ են, և խտիր պատժուելու արժանի :

— Այո, խեղճ կատարինէս, բայց մենք այդ մարդիկը չենք ճանչնար. թողունք որ նախախնամութիւնը այս թշուառ կնկանը վերէժը պահանջէ . . . անի իրաւարար է . . . Շատ սոսկալի բան է խորհիլ որ չարերն իրենց չարագործութեան արդիւնքն խաղաղութեամբ կը վայելեն, մինչդեռ գրկեալը իր կեանքն արտատուօք և յուսահատութեամբ կը կնքէ :

Պ. Ժէրվալ նորէն իր ծառաներն ժողկելով կրկին և կրկին պատուիրեց որ զԳուշանան խեղճ կնոջ ցաւալի երևցող աղաղակներ հանելէ :

— Ամենակն ոչ ձայն կուզեմ և ոչ ազազակ մը իր սենեակին քով. եթէ տեղ մը ժողվուիք խօսելու և ծիծաղելու համար, զոր չեմ ուզեր արգիլել, քօնթխանի սենեակէն հեռու սենեակ մը ժողուեցէք: Մանաւանդ կը

պատուիրեմ քեզ, կատարինէ, որ չըլլայ թէ խեղճ կինը վշտացնող հարցում մ'ընես :

— Ո՛հ, ալ լինցաւ, պարոն, ըսաւ կատարինէ, ալ չեմ փափաղիր աւելի բան մը հասկընալու . . . Ինձի համար շատ ծանր բան է ասիկայ . . . Այսուհետեւ չեմ ուզեր իմ հետաքրքրական հարցումներով խեղճ կնկան թշուառութիւնն աւելցնել :

Ատէլին այս տեսակ զգուշութեանց միջոցաւ կրկին հանդարտեցաւ ու խաղաղեցաւ և ամեն ինչ սովորական կարգը գտաւ: Գիշ մ'ատեն չթողուցին որ անէն դուրս ելնէ. վերջն ալ Գուկասի և կատարինէի հետ շրջակայ անդուանքը կը պտտէր. և գիւղացիք երբ զինքը տեսնէին, Պ. Ժէրվալի տուած հրամանին համեմատ կամաց մը ճամբուն վրայէն կը հեռանային: Եթէ գիւղացուց տղաքը խաղի զրազած ըլլալուն գիտուածով զանի չի տեսնէին, խաղերն, պարը և երգերը խիօյն կընդմիջէին :

— Յիմարը կանցնի, կըսէին կամաց մը իրարու, ձայն չի հանենք, որ չի դառանցէ :

Ծամանով մը այսպէս անցաւ առանց Ատէլինի վիճակը փոխուելու . պղտիկ Էրմանս մեծցաւ և իր կազմուածքը սիսաւ զարգանալ :

Արդէն իր ժպիտն մօրը ժպիտին քաղցրութիւնն ունէր, և քիչ քիչ իր հոգին կըզգար անոր գորովանքը: Պ. Ժէրվալ տարիէ մը ի վեր է զԱտէլին և իր աղջիկը տունը կը պահէր: Էրմանս կը սիրէր զԷրուսնին իր հօրը պէտ:

իր պղտիկ ձեռքերովը անոր ճերմակ մազերը կը գ-գուէր, որուն վրայ ծերունին օր քստ օրէ աւելի կը սիրէր այս սիրուն աղջիկը :

— Գու ծնողք չունիս, քսաւ անոր իրիկուն մը ծնկանը վրայ առնելով: Գու մայրդ, խեղճ զատակ, քեզի համար մեռած է . . . հայրդ անչուտ մեռած կամ զքեզ երեսէ ձը-գած է, և քու սիրոյդ արժանի չէ: Ուստի ես քու վիճակդ բարւոքել կուզեմ . . . Գու հարուստ պիտի ըլլաս, երանի թէ երջանիկ ըլլալով յիշես զքեզ հիւրընկալող ծերունին, որն օր մինչև իւր այնչափ սարգեններն վայելելու կարող եղած ատենդ չի պիտի կրնայ տպւրել:

Չմեռն՝ ծառերը իրենց տերևներէն ու երկիրն ալ զինքը զարդարող դաւարիքէն զըրկեց. անտառներն անառապացան. թռչուններն ուրիշ կլիմայի տակ հովանի և առու գտնելու գացին: Չիւնը խոշոր կաթիլներով լերանց վրայ տեղալով՝ վօսի վրայ դիզուեցաւ, և ճամբաներն հետիներուն համար դըժուար և կասկերու համար անգործածելի եղան: Գիշերներն երկնցան, և հովերն սկսան ցուրտ փելլ: Անտառներուն մէջէն անցնելու պարտաւոր եղող դիւղացին կը փութար տուն գառնալու վախնալով որ գիշերը վրայ կը հասնի. կը վազար մասներուն վրայ շնչելով, և իր ձիւնին մէջ հետք ձգող քայլերն շատ անգամ մոլորեալ ճանապարհորդաց ուղեցոյց կըլլային:

Բայց և այնպէս Պ. Ժերվալի տունը եղողներն բնաւ չէին ձանձրանար. ամեն օք իր փամանակը օգտակար կերպիւ կանցընէր: Երբունին կը կարգար, կամ իր գործերը կը կարգադրէր և իր ագարակապաններուն նամակ կը գրէր. վասն զի Գաղղիոյ շատ մասերուն մէջ կալուածներ ունէր: Տիրբէ իր հայիւնէրը կընէր ու տանը պէտքերը կը հօգար. կատարինէ տանը մաքրութեանը կը հսկէր, և խոհանոցը կը կարգադրէր. Գուկաս ալ պարտեղը կը դարմանէր, և ծառերն ու ծաղիկնէրը ձմեռուն ցրտէն կը պատասպարէր: Ատէլին առտունէրը սենեակէն դուրս երնելով միայն պարտէղը կիջնէր քիչ մը պտտելու համար, և խիստ քիչ անգամ տանը միւս կողմերը կերթար, իսկ իրիկուն եղածին պէս իր սենեակը կը քաշուէր. էրմանս երբեմն մօքքով կերթար, երբեմն ալ անոնց հետ մնալով կատարինէն քով կը նստէր, որ իրեն բան կը պատմէր, և Պ. Ժերվալ ալ Տիրբէի հետ թուղթ կը խաղար. իսկ Գուկաս մեծ գրքի մը մէջէն գողի կամ ուրուականի պատմութիւններ կը կարգար:

Երբ սաստիկ հով մը սպալկները կերերցընէր, և տանը բոլորտիքը գտնուած ծառոց ոտներն մինչև պատուհանները կը հանէր, Գուկաս՝ որ արդէն վախիտ էր և սոսկալի պատմութիւններ ալ կարդալով իր վախն աւելի կը շտտցընէր, յանկարծ դիւրքը ձեռքէն ձգելով չորս կողմը կը նայէր: Տանը վրայ դարձող

կողմացոյց դրօշակին միօրինակ ձայնը, պատին գէ՛մ զարնուող երկաթէ կեռի (չէնկէլ) մը միակերպ հնչումը զՂուկաս սաստիկ կը վախցընէին: Երբեմն Ատէլին ալ անոնց քով գտնուելով յանկարծ կը պոռար:

— Ահաւասիկ . . . կը լսեմ . . .

Ասոր վրայ Ղուկաս խկոյն տեղէն կը ցատկէր կարծեելով թէ մէկը եկաւ . կատարինէ կը ծիծաղէր անոր վրայ, և իր աէրն ալ կը յանդիմանէր զինքը իր վախկոտութեանը համար: և Ղուկաս իր վախն անցնելու համար զիբքը կրկին ձեռքը առնելով ուրուականներու պատմութիւնը կը շարունակէր:



ԳԼՈՒԽ ԼԶ.

ՃՇՄԱՐԻՏԸ ԵՐԲԵՄ ԿՐՆԱՅ ՃՇՄԱՐՏԱՆՄԱՆ ԶԸՂԼԱԼ

Ձեւը սովորականէն աւելի սաստկութեամբ տեղացած էր . փոթօրիկը ամեն վայրկեան ծառերուն ճիւղերը կտարելով՝ զանոնք խիտա հեռուն ճամբաներուն վրայ կը նետէր, որոնք անանցանելի եղած էին: Ժամը ութը զարկած՝ և արդէն երկարատենէ ի վեր մութը կոխած էր:

Ատէլին՝ որ փոթօրիկին ձայնէն սովորականէն աւելի տխուր էր, նոյն օրը սենեակէն գուրա ելած չէր: Կատարինէ Լրմանսը տարեր իր մօրը անկողնոյն քով պառկեցուցեր էր. և

Ատէլին ալ իր սենեակը աթուռ մը վրայ նստած՝ չէր ուզեր ելնել պառկիլ, թէ և կատարինէ շատ կաշաչէր իրեն: Պ. Ժէրվալ ալ ըստ սովորութեան Տիւրքէի հետ թուղթ կը խաղար, և Ղուկաս իր դիբքը ձեռքն առած այն ինչ կարգալու պիտի սկսէր, և ահա գրանդան գալը զարնուեցաւ:

— Դուռն է, ըստ Պ. Ժէրվալ. այս ի՛նչ է, այս ատեն՝ ատանկ օդին ո՞վ կրնայ ըլլալ:

— Շատ զարմանալի է, կրկնեց Ղուկաս:

— Դուռը բռնանք, պարոն, հարցուց Տիւրքէ: Բայց առաջ նայելու է թէ ո՞վ է . . . կարելի է ճանապարհորդներ ըլլան որ չեն կրցած իրենց ճամբան շարունակել, և կամ լեռներն մնորած են . կամ թէ աղքատներ ըլլան զորոնք գիւղացիներն հոս դրկած են, ինչպէս շատ անգամ կը պատահի: Տեսներք Կատարինէ ի՛նչ լուր կը բերէ:

Կատարինէ դնաց նայեցաւ, և շուտով վեր ելնելով՝ ըստ իր տիրոջը .

— Պարոն, երեք ճանապարհորդ եկած են. կերևի թէ վաճառական են, որովհետև կըռնակին բռաներ ունին: Այս դիչեր հիւրընկառուիլ կը խնդրեն, պատճառն որ ճամբաներուն վրայ երկու ոտք բարձրութեամբ ձին ըլլալուն համար չեն կրնար ճամբանին շարունակել . անոնցմէ մին խեղճ ծերունի մ'է որ ցուրտէն շատ նեղուած կերևի: Պէ՛տք է ընդունիլ:

— Անշուշտ, և կարելի եղածին չափ լուկերսով:

— Բայց, պարոն, ըսաւ Տիւրբէ, երեք մարդ . . . գիշերանց . . . առի խոհեմութիւն չէ :

— Ինչո՞ւ համար, Տիւրբէ, ասոնք վաճառական են, և իրենցմէ մին ալ տարուօք է եղեր . . . Ի՞նչ վախ ունինք իրենցմէ : բնական է որ մարդ ասանկ դէշ օգերուն պատասխարուելու տեղ մը կը փնտռէ : հիմա՞ այս մարդիկը թափառական չըլլան ըսելով վախնալու և զիրենք ասանկ օգին լուսնէրը ձգելու է . . . ոհ, բարեկամս, եթէ բարիք ընելու անձանցդ սիրար քննել ուղես, խիստ քիչ անգամ բարիք ընելու կը պարտաւորիս : Գնա չուտով դուռը բաց, կատարինէ : . . . մի թողուր որ այդ մարդիկը երկար առեն դրանն առջև կայնին . . . դու ալ, Տիւրբէ, աշուօր կրակ մը շինէ որ տաքանս ու հագուստնին ալ չորցնեն, Գուկասն ալ ճանապարհորդներու յատկացած սենեակն թող երթայ պատրաստէ :

Կատարինէ գնաց դուռը բացաւ, և օտարականներն չնորհակալութիւն յայտնելով ներս մտան : Երկու երիտասարդներն ծերունիին թուեբը մտնելով հաղիւ կրցան զանի սանդուխէն վեր հանել առաջին յարկն ելնելու համար, Տիչդ այն օրահը՝ ուր տանտէրը իրենց կըսպասէր :

— Բարի եկաք, պարոնայք, ըսաւ Պ. Ժէրովալ զանոնք կրակին քով հրամայնելով : Նախ և առաջ սա ծերունին հանգչեցնենք . . . կեբևի թէ շատ յոգնած է :

— Ոհ, այո, պարոն, ըսաւ ծերունին նըուաղեալ ձայնով մը : ցուրտը դիս այնքան նեղեց որ եթէ այս սղաքօ չըլլային, ճամբան պիտի մնայի :

— Այ հանգիստդ նայէ, պարոն . . . Պարոնայք, դուք ալ սա բեռերնիդ վար առէք, և տուէք սպասաւորին որ սենեակնիդ տանի :

Վաճառականներն իրենց բեռները սենեակին մէկ անկիւնը դրին, որոնք կտաւ, թաշկինակ և այլ նիւթեր բլլալ կերևէին : Տիւրբէ, որ քիչ մը անվտաս էր, մտեցաւ բեռներուն և զանոնք քննել սկսաւ : Վաճառականներէն մին դայն տեսնելով՝ փութաց ուրիշ կապոցներ բանալու, և իր ապրանքն անոր ցուցուց :

— Եթէ արորժած մէկ ապրանքնիդ տեսնէք, ընտրեցէք, պարոն, ըսաւ անոր, գիներնիս չուտով կը յարմարի :

— Շնորհակալ եմ, ըսաւ Տիւրբէ, որ կապոցները զննելուն համար իր արնոջը դժգուհութիւնը տեսած էր : վաղը առտու աւելի ուշադրութեամբ կը քննենք :

Երկու վաճառականք ծերունիին մօտենալով ծխնելոյղին քով նստան : Կատարինէ շիշ մը դինի ու բաժակներ բերաւ, Գուկաս ալ եկաւ ու բեռներն առնելով վեր տարաւ :

— Ահաւասիկ զձեզ կազդուրելու ըմպելիք մը, մինչև որ ճաշը պատրաստուի, ըսաւ Պ. Ժէրովալ օտարականաց դինի լեցնելով, խմեցէք, պարոնայք, աղէկ դինի է :

— Խիստ լաւ, ըսաւ երիտասարդներէն մին

որ արդէն Տիրբրէի հետ խօսած էր: Պինին լաւ բնպէսիք մ'է . . . առ, հայր լիմ . . . առ Յովհաննէս. կենացնուդ, պարոն:

— Ասոնք ձեր աղափն են, հարցուց Պ. Ժէրվալ ծերունիին:

— Այո, պարոն, ատոնք իմ ծերութեանս գաւազաններն ու նեցուկներն են . . . ահաւասիկ Ժէրվէ, անդամսիկս . . . այդ անդգամը միշտ զուարթ է, և միշտ կը ծիծաղի. ահաւասիկ Յովհաննէս, կրտսերը. նա իր եղբօրը չափ զուարթ չէ. քիչ կը խօսի. բայց բարեկարգ, աշխատատէր և խնայող տղայ մ'է . . . Երկուքն ալ շատ կը սիրեմ . . . որովհետեւ պատուաւոր և բնաւ մեկը խաբելու անկարող են . . . ասանկ տղոցմով խիստ լաւ դօրծ կը տեսնեմ:

— Կը չնորհաւորեմ զձեզ ասանկ դաւակններ ունենալնուդ համար. բայց ինչո՞ւ համար այս հասակնուդ մէջ իրենց հետ կայխատիք:

— Ահ, պարոն, Մէցի մօտ պիտի փոխադրուինք. տղաքս հօն իրենց դօրծակիցներէն մեկուս աղջկանցը հետ պիտի ամուսնանան. ես ալ երթամ քովերնին պիտի կենամ:

— Այդ ուրիշ խօսք. բայց գիպուածո՞վ իմ տունս եկաք, թէ գիւղացիք զձեզ հօսըրկեցին գիշերն անցընելու համար:

— Պարոն, բնաւ Ժէրվէ, մենք այս երկիրը աղէկ չենք ճանչնար, և քիչ մ'ալ ուշ ճամբայ երնելուս համար գիշերը վրայ հասաւ. այս պատճառաւ բնակարան մը փնտաւեցինք, մա-

նաւանդ մեր հօրը համար, որ շատ տարուօք բլլալուն չի կրնար ցուրտի դիմանալ, Եթէ անիկայ հետեբնիս չբլլար, մենք չէինք պարտաւորերը տուն մը փնտաւելու, ու ես և եղբայրս գիշերը ձիւնին վրայ կանցընէինք. այնպէս չէ՞, Յովհաննէս:

— Այո, բնաւ Յովհաննէս ցած ձայնով և աչքը վառարանին վրայէն չի դատելով:

— Մեծ յանցանք մը դօրծած կըլլայիք, պարոնայք, բնաւ Պ. Ժէրվալ օտարականներուն գինի լեցնելով. ես կը սիրեմ իմ նմաններուս օգտակար բլլալ, և պիտի ջանամ հանգիստ գիշեր մ'անցընել տալ ձեզ:

— Գուք խիստ առանձնակի տուն մը կը բնակիք, բնաւ Ժէրվէ իր բաժակը պարպելով միթէ գողերէն չե՞ք վախնար:

— Տիրբրէ, դ'նա նայէ կատարինէ կերակուրը կը պատրաստէ . . .

— Այո, պարոն, կըթամ նայիմ ալ որ տիկին Բօնսթանս ու իր աղջիկը բան մը կուղեն:

Տիրբրէ Ատէլինի քով գնաց. բայց շատ ուրախ էր տանը մէջ մարդ ու զէնք գտնուած բլլալն օտարականներուն խմացուցած բլլալուն վրայ. վասն զի գիշերն անոնց տունը մնալն աւմենկին ուղած չէր:

Լով. միթէ գողերէն չէ՞ք վախնար:

— Ամենկին չէ. . . վասն զի մինչև ցայսօր ասանկ բան մը պատահած չունի:

— Եթէ անանկ բան մը պատահի ալ, բնաւ Տիրբրէ շտկուելով, ամանք մէջ բաւական

մարդ կայ . և փառք Աստուծոյ , զէնք ալ կը գտնուի . . . :

Վերջը խոհանոցն երթալով հարցուց կատարինէի թէ օտարականաց վրայ ինչ կը խորհէի :

— Ճշմարիտ , ըսաւ , կարծեմ ասոնք աղէկ մարդիկ են . ծերունին պատկառելի կերեի :

— Երբունի է , բայց աչքերն ստտանայի աչքերու կը նմանին . . . տղոցը մէկն ալ ո՞րչափ ստահակ կերեի . . . խօսած ատենք միշտ բարձրաձայն կը ծիծաղի . . . և լեցուն բաժակներ կը պարսպէ . . . :

— Այո , ստուգիւ ատի զարմանք կը պատճառէ . . . :

— Միւս տղան ալ . . . ո՞րչափ տխուր կերպարանք մ'ունի . . . աչքերն վեր չի վերցըներ . . . մինչև հիմայ միայն այր մը ըսաւ . . . խիտա տրտու՞մ կերեի . . . Վերջապէս սա մարդոցմէն չախորժեցայ , դնայ :

— Բէհ , ո՞րչափ ալ անխտաս հես , սիրելի Տիւբրէս :

— Չէ , սակայն պէտք է որ ընդունած մարդիկս ճանչնամ :

— Լա . բայց սա տարիէ մ'ի վեր է հօս բնակող խեղճ կինը կը ճանչնայի՞նք :

— Ոհ , որչափ տարբերութիւն ասոնց ուննոր մէջ . . . անի երիտասարդ , դեղեցիկ , դիթարժան կին մ'է զոր մարդ տեսնելով կը կարեկցի . զուական ալ աղուօր , սիրուն . . . ես մարդը իր դէմքէն կը ճանչնամ . . . սակայն

այս վաճառականներն . . . ահ , ինչ ըսեմ , կատարինէ , այս դիչեր քունս չի պիտի տանի :

— Կը յուսամ որ ես խիտա լաւ պիտի քընանամ :

— Նայէ որ դուռդ աղէկ գոցես :

— Ըսածիդ խնդալս կուգայ . . . դու ալ Ղուկասը կը նմանիս . . . եթէ դիչեր մը սա տունը ելնէ գող մը դայ , ո՞րչափ քաջասիրտ մարդիկ ունինք ինքզինքնիս պաշտպանելու համար :

— Կատարինէ , կը սխալիս , ես վախկոտ չեմ . . . սակայն կը խորհիմ որ քսան տարու ալ չեմ . . . ահ , եթէ քսան տարու ըլլայի , այս երեք հոգիէն ինչու պիտի վախնայի :

— Պարտապ խօսքեր մի ընէր . . . ձգէ որ կերակուրս պատրաստեմ :

— Թող իմ խօսքերս պարտապ ըլլան . . . Տիկինն ալ ճաշելու պիտի գա՞յ :

— Գիտես որ անի այս ատեն ճաշելու սովորութիւն չունի . . . Անիկայ հիմա կարծեմ կը քնանայ . կերթաս կարթնցնե՞ս . . . :

— Կատարինէ . . . :

— Ինչ է ան . . . :

— Կարծեմ վարք բակը դրան առջին ձայն կայ . . . :

— Հովին ձայնն է որ ծառերն ու պատուհանները կը շարժէ . . . բայց և այնպէս գնա մէյժը նայէ . . . :

— Այո , այո , երթամ նայիմ որ իմանաս թէ քու դիտցածիդ պէս վախկոտ մէկը չեմ ես . . . :

Տիւրբէ կանդեղ մը վառելով բակը իջաւ .
տեսաւ որ բան մը չկայ . դուռը լաւ գոցուած
էր . վայրկեան մը կեցաւ դրանք առջին դուրս
նայելու համար . բայց կոյտ մը ձիւն եկաւ
դարկաւ երեսին : Ասոր վրայ երբ աչքերը կը
չփէր , խորէն ձայն մը լսեց , որ կարծես Ատե-
լինն նստած սենեակէն կուգար :

— Խեղճ կին . . . դեռ չէ քնացեր , ըսաւ
Տիւրբէ . չեմ ալ կրնար քովը երթալ որ նա-
յիմ բան մը կուզէ . որովհետեւ ատէր հրամա-
յած է որ այս ատեն չերթանք դանի անհան-
գիստ բնէնք . . . Ինչ և իցէ , երթամ նայիմ
որ վաճառականներն ի՞նչ կընեն :

Տիւրբէ վեր ելած ատեն օտնդուտին վրայ
պատահեցաւ Ղուկասին , որ կերպէր ու կը
ծիծաղէր . վրան զի այս մարդը շատ կուրա-
խանար երբ տունը հիւր կը գտնուէր . . .

— Հիւրերուն սենեակը կարգադրեցի՞ր ,
հարցուց անոր Տիւրբէ :

— Այո . . . բեռներնին ալ վեր տարի . և
երբև վարձ ինձի ստակ առաւ ուղեցին , բայց
չառի . . .

— Շատ աղէկ ըրիր . . . մարդս ոտքով ճա-
նապարհորդողներու համար միշտ առատա-
ձեռն ըլլալու է . . .

— Բայց սա քիչ մը կարմիր մաղերով մեծ
երիտասարդը տեսար , որչափ զուարթ մարդ
է . . . կը ծիծաղի . . . կը խմէ . . . Ինչպէս
աղուոր կը խօսի . . . Եթէ ամեն ատեն ասանկ
զուարթ հիւրեր ունենայինք , ու ասնք երեսը

քիչ մը կը խնդար . . . սակայն ունեցածնիս
ալ խեղճ . . . յիմար կին մ'է , որուն վրայ ցա-
ւեղէն զատ ուրիշ բան չենք ընեք . . .

— Լուէ դու ալ . . . դու մարդը չես ճանչ-
նար եղեր . . . ես չեմ ըրեր որ այս վաճառա-
կաններն զէջ մարդիկ են . . . բայց . . .

— Բայցը ի՞նչ է . . .

— Ձեմ դիտեր . . . դու նայէ որ այս գի-
չեր դուռը լաւ գոցես :

— Այո , պարոն Տիւրբէ , այո . . . կը հաս-
կընամ բաժնդ . . . պատասխանեց Ղուկաս ,
որուն զուարթութիւնք իսկոյն անցնելով երե-
սը տխրեցաւ ու սկսաւ անհանգիստ ըլլալ . և
Տիւրբէ կամաց կամաց իր տիրոջը քով գնաց :
Ծերունին ու ժէրվէ Պ. ժէրվալի հետ կը
խօսէին . միւսը իրեն հարցուած բաներուն
միշտ կարճ պատասխաններ կուտար :

— Եղայրս քիչ մը ծանրաբարոյ է , ըսաւ
ժէրվէ ցած ձայնով Պ. ժէրվալի . քիչ մ'ալ իր
իր կնոջը վրայ կը խորհի , զոր երկու տարիէ ի
վեր է տեսած չէ :

— Հասկցայ ըսածդ . կերևի թէ դու անոր
չափ անհանգիստ չես :

— Ե՛ս , ամենեւին չէ . կիներն զիս անհան-
գիստ չեն կրնար ընել . . . ես ամենուն վրայ
կը խնդամ . . . և կարող եմ . . .

— Լուէ , ժէրվէ , ըսաւ ծերունին դանի
յանկարծ ընդմիջելով . քիչ մը համարձակ խօ-
սիլ սկսար . . . ներքեք , պարոն , պատճառն
զինուորութիւն ըրած ըլլալն է . . .

— Վա՛յ, զինուորութի՛ւն ալ ըրեր է . . .
 — Այո, և ուր որ կուիւ ըլլայ, ետ հոն եմ . . .
 անանկ չէ՞, հայր իմ . . .

— Հո՞ ալ ինչ մարդ ըլլալդ հասկցուցի՛ր :
 Կատարինէ եկաւ խմացուց որ կերակուրը
 պատրաստ է :

— Ելէ՛ք սեղան նստինք, պարոնայք, ըսաւ
 Պ. Ժէրվալ իր հիւրերը ճաշարան տանելով :
 Նստան սեղան. ծերունին Պ. Ժէրվալի քով
 նստաւ . Տիւրբէ ալ որ Պ. Ժէրվալի հին ծա-
 ուան ու անոր բարեկամն եղած ըլլալուն իր
 տիրոջը հետ կը ճաշէր, նստաւ իր սովորական
 տեղը, և իր քով պարասպ տեղ մը թողուց :

— Այդ տեղը որո՞ւ համար է, Տիւրբէ,
 հարցուց Պ. Ժէրվալ :

— Պարոն, մեր տիկինին կամ իր աղջկանն
 համար, եթէ դան :

— Անոնք հիմա կը քնանան . Գոնթանս այս
 ատեն արթնուն կենալու սովորութիւն չունի . . .

— Քնացած չէ, պարոն, սենեակէն ձայն
 աուի :

Երբունին իր երկու ընկերներուն երեսը նա-
 յեցաւ, վերջը դարձաւ ըսաւ Պ. Ժէրվալի .

— Տուներնիդ տիկին ալ կայ, պարոն. ե-
 թէ կայ ու մեզի համար սեղան չի դար, մենք
 մեր սենեակը կերթանք :

— Չէ, կին մը և աղայ մը կայ . . . խեղճ
 մայր . . . աւաղ . խեղք կորսնցուցած է . . .
 Ասի դժբաղդ կին մ'է որ շատ սիրուն կերպա-
 րանք մ'ունի . . .

— Յաւալի՛ բան . . .

— Խմենք նորա կենացը, պարոնայք, ըսաւ
 Ժէրվէ իր և ընկերոջը դաւաթը լեցնելով :

— Այս մարդը բնաւ չի քաշուիր, ըսաւ
 Տիւրբէ ինքնիրեն . եթէ ասանկ երթայ, մա-
 ուանը գինի չի պիտի թողու :

Երբունին երբեմն երբեմն իր մեծ որդւոյն
 երեսը նայելով անոր ստէպ գինի խմելուն վը-
 րայ դժգոհ կերեէր . և խնայող չըլլալուն հա-
 մար դանի կը յանդիմանէր :

— Բայց չես գիտեր, հայր, խիտա աղուոր
 գինի մ'է, ըսաւ Ժէրվէ, դիտես որ ասանկ գի-
 նիներուն չեմ գիմանար :

— Գու խմելդ նայէ, ըսաւ Պ. Ժէրվալ .
 ասով պիտի դորանաք և վաղը ձեր ճամբան
 շարունակէք :

— Շնորհակալ եմ, պարոն, ես ալ կը խոր-
 հէի որ մէյմ' ալ նետեմ :

Տիւրբէ խոտուեցաւ, տեսաւ որ Ժէրվէ եւ-
 դական խօսքեր կընէր, և որչափ կը խմէր,
 այնչափ կը վախցնէր : Իսկ բարի Ժէրվայ միշտ
 կը ներէր և անոր զուարթութեան վրայ կուրա-
 խանար, թէ և ծերունիին հաճելի չէր երևէր :

— Գու ալ խմէ, Յովհաննէս, ըսաւ Ժէրվէ
 դանի մղելով խեղճ դու ալ . . . Իսկ դու . . .
 ո՛հ, ներեցէք, դուք պիտի ըսէի . . . դուք . . .
 սիրելի և պատուական հայրս, աչքերնիդ տըն-
 կեր միշտ երեսա կը նայիք . ինչո՞ւ չէք խմեր
 չեմ գիտեր . . . Խնծմէ զուարթը չկայ մէջեր-
 նիդ . անանկ չէ՞, պարոն : Պ. Ժէրվալ . . .

կենացնուդ . ձերն ալ , ձեր բնտանեացն ալ , ձեր յիմար տիկնոջն ալ . քուկդ ալ , ծերունի ընկերս , որ երկու ժամէ ի վեր է երեսնիս կը նայիս , որպէս թէ ապառաժ Արարիայէն եկած ենք . . . ամենուդ ալ կենացը . ես դէշ մարդ չեմ . . .

— Ներքէք , պարոն , ըսաւ ծերունին Տիւբրէի , երբ քիչ մ'աւելի խմէ , ըսածը չը գիտեր :

Տիւբրէ յոնքը կնճռեցուց ու բան մը չի պատասխանեց :

— Անանկ է , ըսածս չեմ գիտեր . ո՛հ , աւանկ կը կարծէք զիս , սիրելի Հայրս . . . տեսաւ , սուտ խօսեցար . . . որչափ խորթարարոյ մարդ ես . . . անանկ չէ՛ , Յովհաննէս , Հայրերնիս խորթարարոյ չէ՛ :

Ծերունին բարկութեամբ ոտքի վրայ ելաւ :

— Առանց այս պարոնին նկատմամբ ունեւնայիք ակնածութիւննիս միտքս բերելու , ըսաւ , հիմա քեզի կը պատժէի . բայց ի՛նչ ընեմ որ յանցանքը քու քովդ չէ . ինչ ե իցէ , ել երթանք պառկինք , որ այս պարոնն ալ մեզի համար երկուրտ տանն անհանգիտս չըլլայ :

— Իրաւունք ունիս իրաւունք , բարի Հայրս , ըսածիդ պէս ալ ըսածս չեմ գիտեր . երթալ պառկիլը խելացութիւն է . . . բայց ե այնպէս օրհնութիւնդ կուզեմ . . .

Ժերվէ դասըսելով ծերունիին քով գնաց , որ զանի անդին հրեւոյ կրկին Պ . Ժերվայէն ներողութիւն խնդրեց իր որդւոյն ըրածներուն համար :

Ղուկաս ճրագ աննելով օտարականներն իր սենեակը պիտի տանէր , երբ յանկարծ բաւկէն ձայն մը լսուեցաւ . վաճառականներն այս ձայնն աննելով շփոթեցան , և Տիւբրէ գնաց պատուհանէն նայեցաւ , և տեսաւ որ Ատէլին գիշերազգեստը հագած , ձեռքն ալ ճրագ մը բակը դիզուած ձիւնին վրայ յուզմունքով կը պտտէր :

— Տիկինն է , ըսաւ Տիւբրէ իր տիրոջը , զարմանալի է որ այս ատեն իր սենեակէն դուրս ելեր է :

— Չեր խեղճ կի՛նն է , պարոն , հարցուց ծերունին :

— Երթամ աս յիմար կինը տեսնեմ , պուռաց Ժերվէ , նայիմ աղաւոր է :

Շուտով պատուհանը վաղեց , բայց Ատէլին իր սենեակը գացած էր :

— Գիշեր բարի , պարոնայք , ըսաւ Ժերվայ օտարականաց . վաղն առտու մեկնե՛նէք առաւ կը տեսնուինք :

Վաճառականներն վեր ելան , Ղուկաս ճրագը քովերնին ձգելով իջաւ իր սենեակը որ խոհանոցին քովն էր , և Տիւբրէի ըսածին պէս լաւ մը դողեց :

Տիւբրէ իր տիրոջը հետ առանձին մնալով , որովհետեւ կատարինն ալ իր սենեակը գացած էր , օտարականաց նկատմամբ սկսաւ գիտողութիւններ ընել :

— Հաւատացէք պարոն , ըսաւ , որ այդ մեծ երիտասարդը սրիկայի կերպարանք մ'ու-

նէր . . . այն ինչ խօսուածք, այն ինչ վարժուածք էր . . . Լեցիք, հօրն ալ ինչէր բնաւ :

— Չէնչ չունի, քիչ մը եւել խմեց :

— Հապա իր անօրինակ խօսքերը . . . :

— Զինուորութիւն է ըրեր, հող չէ :

— Չէ, ատիկայ զինուորի լեզու չէ : Աստուած տար, սիրելի տէրս, որ այս մարդիկը հիւրընկալելնուդ վրայ չի գընայիք . . . :

— Ինչու կը վախնաս :

— Չմ գիտեր . . . բայց ինձի կասկած տուին . . . միւսն ալ լուռ կեցեր, ամենեկն չէր խօսեր. ատոր ալ տխուր դէմքը պատուաւոր մէկը ըլլալն չի յայտնէր :

— Տիւրքէ, թող միտքդ հանդարտի . . . և դնա հանդիստ պառկէ . . . մէկ գիշերը բան մը չէ, շուտ մը կանցնի :

— Այո . . . բայց երբ քնանան. սակայն երբեմն կերկարի ալ. բարեբաղդաբար իմ սենեակս ձերինին մօտ է. և եթէ ձայն մ'առնուք, շուտով զիս կը կանչէք. այնպէս չէ, պարոն :

— Այո, բարի Տիւրքէս. դնա, հանդիստ քնացիր :

Տիւրքէ ցառով մեկնեցաւ. տիրոջը քովէն . Պ. ժէրվալ հանդարտ սրտով պառկեցաւ, և անմիջապէս քնանալով իր ծառային խօսքերը մոռցաւ :

Տիւրքէի սենեակն առաջին յարկն էր Պ. ժէրվալի սենեակին դիմացը, և դուռն ալ ճիշդ երկրորդ յարկը տանող սանդուխին և բակին վրայ կը նայէր :

Տիւրքէ իր սրտին անհանգստութիւնը չի կրնալով փարատել միտքը դրաւ արթուն կենալ և իր կասկածներն տտուգելու ջանալ : Պատահանէն կամաց մը օտարականներուն սենեակը նայեցաւ, տեսաւ որ ճրագը դեռ կը վառի : — Տակաւին պառկած չին, ըսաւ, կրնամ խօսքերնին մտիկ ընել . . . մէյմը փորձեմ . . . :

Առանց ձայնի և առանց ճրագի իր սենեակէն դուրս ելնելով՝ ելաւ երկրորդ յարկը, և վաճառականաց սենեակին առջև կայնեցաւ. բայց միտքը դառնով որ անոնց պառկած սենեակին ու իր կայնած տեղին մէջտեղը փոքր սենեակ մը կայ, որով չի կրնար անոնց խօսածներն լուսմտիկ ընել, նորէն վար իջաւ, և խորհելով որ օտարականաց պառկած սենեակին ծինելոյցը ճիշդ համբարանոցին երդին (թէ՛փէ՛ ճամբ) քով կը հասնի, իսկոյն համբարանոցն ելաւ ամենայն զգուշութեամբ քայլելով : Կամաց մը բացաւ երդը, փորուն վրայ պառկեցաւ, և սկանչը ծինելոյցին երկնցնելով շատ դիւրութեամբ կրցաւ հետեւեալ խօսակցութիւնը իմանալ :

— Որչափ անզգամ ես, Լամբէն, քու անիծեալ գինովութեամբդ հարիւր անգամ օձիքնիս ձեռք պիտի տայինք . . . :

— Բէ՛հ . . . ինչ կրնար ըլլալ, եթէ տայինք ալ. այս առեւը ո՞վ կայ. երեք ծէր զառամեալ, ապուշ մը, կին մը ու տղայ մը . . . ասոնցմէ ո՞վ կը վախնայ . . . Եթէ ինձի մտոր, տունէն ներս մտնելնուս պէս նպատակնիս դոր-

ծաղրելու էինք . . . ես ծերունին ու իր ծառան վրաս կառնէի :

— Ասանկ ընեցին աւելի աղէկ եղաւ . ինչ պէտք է իրարանցում, Գիտցիք որ հոս չեկած այս տանը փորոյը վրայ տեղեկութիւններ առնի . ինքը շատ հարուստ է, և ամենուն բարիք կընէ եղբր :

— Խիստ լաւ, թող մեզ ալ բարիք ընէ :

— Հոս շատ ստակ ունենալու է . դիտե՛մ որ ութը օրէն ի վեր է իր աղարակապաններէն ստակ առած է . կերուի թէ այդ ստակներն իր սենեակն է . եթէ դիւրաւ հոն մտնենք, դանձեբը կառնունք ու յիմարին պատուհանէն կը փախչինք . որովհետեւ փողոցին դուռը շատ ամուր և շատ լաւ դռնուած է . չնք կընար դիւրութեամբ բանալ :

— Ոհ, անտառին վրայ նայող սենեակին պատուհանը երկաթէ վանդակներ կան, աղկից ինչպէս դուրս պիտի ելնէ :

— Ապուշ դու ալ, դիտե՛ս որ ես քեզի չափ չի խորհեցայ ատիկա . մեր ընկերներն այդ վանդակները պիտի խարաոցին, և իրենց պատուիրեցի որ աներկիւղ աշխատին . որովհետեւ այն սենեակը պառկոյն իրենց ամենևին բան մը չի կընար քսել :

— Կեցցես . . . խիստ աղէկ խելք ես քրեր . այնպէս չէ՞, Եղուարդ . . . խօսէ, դու ալ, այս իրիկուն ինչ ես եղբր :

— Այո, այո . . . խիստ կանոնաւոր կարգադրութիւն . . .

— Բայց եթէ այդ անդգամ ծեր ծառան մեր այս կարգադրութիւններն չի խանգարէ :

— Վայ իրեն եթէ անանկ բան մ'ընէ . . . խիղի՛ն ընկերներին ներս կառնունք, կը զօրանանք, և մեզի դէմ դնողներն անմիջապէս կը լռեցնենք :

— Լաւ կըլայ . . . այս աղէկ միջոց է :

— Բարեբաղդարար սեղանին վրայ համբերեցի . եթէ ես ալ քեզ նմանէի, օճիքնիս ձեռք պիտի տայինք :

— Ստատանայ, որչափ ալ աղէկ ծերունիի նմաներ էիր . . . բայց իմ խմելուս նպատակը քաջութիւնս աւելցնել էր . հոս ոսկի կայ շահեալ, ուստի քիչ մ'աւելի զօրութիւն պէտք է . . . Հիմա նայինք սա պաշտօններն ինչպէս պիտի բաշխենք :

— Քանի մը վայրկեանէն ընկերներնիս ներս կառնենք . կը թողունք որ այդ ծերերն լաւ մը քնանան : Եղուարդը յիմար կնկանը քովը պահպան կը դնենք, որպէս զի եթէ յանկարծ դիւահարութիւնը բռնէ, սենեակին դուռը չի գօցէ, ապա թէ ոչ՝ վերջը հոս կը մնանք : Մեր ընկերներէն ալ մին պարտիզպանին քով կը թողունք, միւսն ալ խոհարարուհւոյն քով : դու ալ, Լամբէն, ինձ հետ պիտի ընկերանաս ստակ փնտռելու համար :

— Լաւ, խիստ աղէկ կարգադրեր ես . բայց Եղուարդին պաշտօնը քիչ մը դժուար է եղեր, հող չէ . . . վասն զի բաւական քաջութիւն պէտք է կնոջ մը և տղու մը քով սպասելու համար :

— Բայց ըրլայ որ արթննան . եթէ ամենա-
փոքր ձայն մը հանեն . . . կը հասկնաս , Եգ-
ուարք . . . որովհետեւ ապահովութիւննիս ,
կեանքերնիս աննոյ ձեռքն է :

Ալ բաւական է . . . հասկցայ ըստծնիդ . . .

— Ես ալ , ըսաւ Տիւրբէ կամաց մը դլուխը
քաշելով , ձեր ով ըլլալն հասկցայ : Անզգամ-
ներ . . . խարուած չիմ եղեր . աւազակներ ըն-
դուներ ենք տուներնիս . . . ավ Աստուած իմ . . .
զօրացուր զիս . . . որ տէրս և այս խեղճ կինն
ազատեմ :

Երբ ծառան ամանիքին վրայ սահելով նո-
րէն համբարանոցը մտաւ , ինչ որ ալ կընէր իր
միտքը հանդարտեցնելու և իր քաջութիւնը
վրան բերելու համար , դարձեալ առքերը կը
դողային , հազիւ կրնար ոտքի վրայ կենալ , և
իր երեւակայութիւնը արեան ու մահուան պատ-
կերներով սկսաւ խռովիլ : Տիւրբէ վաթսուէնը-
հինգ տարեկան ըլլալով չէր կրնար բռն մ'ը-
նել , և այսպիսի վտանգաւոր պարագաներու
մէջ ինչ ճամբայ բռնեն խորհելու համար վատ-
նուած ժամանակով վտանգն ատելի ստոյգ
կըլլայ :

Տիւրբէ խորհաբերով համբարանոցը կը պը-
տըտէր . կը խորհէր որ երթայ իր տէրը ու
Ղուկար արթննան . բայց Ղուկաս զիւրու-
թեամբ չէր արթննար . պէտէ էր դրանը առ-
ջև պոռալ , և գիշերուան լուսութեան մէջ ա-
մենափոքր ձայն մը կրնար դողբուուն կասկած
տալ : Կատարինէ ալ խոհանոցին մէջի սենեակը

պոռկած ըլլալով չէր կրնար իրեն օգնութիւն
մ'ընել . . . ուտաի խորհելով որ դողբուուն ըն-
կերներն արկնաջը սենեակէն ներս պիտի մտնեն ,
որոշեց այն պատահանք փակել քօնսթանն
ու իր աղջկը անկէ դուրս հանելով :

Այս միջոցը խիստ լաւ և յաջող երեցաւ
Տիւրբէի . որոշեց վար իջնել , բայց կը դողար
ոտքը սանդուխին վրայ դնելու , Եթէ գողերն
յանկարձ սենեակէն դուրս ելնէին և զինքը
տեսնէին , պիտի մեռցնէին : Ուտաի սանդու-
խին ամեն մէկ ոտքը իջնելուն քիչ մը կանկ
կառնէր , ու մտիկ կընէր . և այսպէս երբ վեր-
ջին ոտքն իջնելով դողբուուն յարկը պիտի մըտ-
նէր , խօսելու ձայն առաւ . վերջը դուռը
բացուեցաւ , որուն վրայ Տիւրբէ արագու-
թեամբ կրկին համբարանոցն ելաւ :

Կարծեցեալ վաճառականներն իրեն գլխուն
վրայէն եկած այս ձայնն առին . Տիւրբէի ծա-
նրը քայլուածքը ստախտակներն շառաչեցուց
և գիշերուան լուսութիւնը խռովեց : Նախ Տիւֆ-
րէան մէկ ձեռքը ճրագ և միւսը դաշոյն մը
վեր ելաւ , ետեէն ալ լամբէն , մտան համբա-
րանոցը նոյն վայրկենին երբ ձեր սպասուորն
ինքզինքը յարդերուն մէջը ծածկել կը ջանար :

— Վայ անզգամ , ըսաւ Տիւֆրէան , մեզ
մտիկ ընող կայ եղեր , բայց այս թշուառա-
կանը մեզի ինչ վնաս կրնայ ընել :

Չայս ըսելով դաշոյնը խօթեց Տիւրբէի
կուրծքը , երբ նա ձեռքերն միացուցած գը-
թութիւն կը հայցէր : Տիւրբէ առանց ձայն հա-

ներու հողին փչեց . արիւնը տախտակամածին վրայ տարածուեցաւ , և լամբէն յարդերով ծածկեց խեղճ ծառային մարմինը :

— Վար ի՛նչնք , ըսաւ Տիւֆրէան , և որովհետեւ կը կտակածին մեր վրայ , շուտ գործերունս տեսնենք :

— Ի՛նչ եղաւ , հարցուց Եղուարդ , որ սանդուխին վրայ պահպանութիւն կընէր :

— Ոչինչ , ըսաւ լամբէն , հետաքրքիրներուն մին պակսեցուցինք :

— Շուտով յիմարին սենեակն երթանք , մեր ընկերներն հիմայ գործերնին լննուցած են . պէտք չէ ղիրենք երկար տեսն գուրք թողուլ :

Գողերը գետնայարկն ի՛յան , և որովհետեւ Ատէլինի սենեակին բանային դրանը վրայ էր , խփոյն ներս մտան . . . Կանդեղ մը կիսով կը լուսաւորեր այս սենեակը . Էրմանտի անկողինը մօրը անկողնոյն քով գրուած էր , որով վարագոյրներն բլլարովին գոցուած էին : Տիւֆրէան հաւատարի բլլարով որ այս կինն չի կրնար արթննալ իրենց քրտածները գիտելու համար , զնայ շուտով պատուհանին փեղկերը բացաւ , և ներս առաւ իր ընկերներն , որոնք երկաթները խարտոցած ըլլալով պատուհանին տակը կըստատէին :

— Ամեն բան յաջողութեամբ կը կատարուի , ըսաւ Տիւֆրէան , սա փեղկերը բաց թողունք որ դիւրութեամբ փախչինք : Եղուարդ , գուհոս կեցիր . մանաւանդ . . . արթննալուն պէս

խնայել պետք չէ : Դուք , բարեկամք իմ , ետեւէս եկէք որ ձեր պաշտօններն ալ ցուցենեմ : վերջը լամբէն ու ես մնացեալը կը հողանք :

Տիւֆրէանի խօսած տեսելու լամբէն հանդերձին քղանցներն վեր առաւ , զէնքը հանեց , իր գաշոյնին մարք զննեց , դժողակ ժբպետ մը փայլեցաւ աչացը մէջ , և իր սոսկալի դէմքը դինիով և դողութեան յուսով կենդանացած ըլլալով կարծես իր գործելու մեղքին տպաւորութիւնն ուրախութեամբ իր վրայ կը կըր :

Չորս աւազակներն սենեակէն մեկնեցան , և Եղուարդ առանձին մնաց հոն , որ սկսաւ մէյմը անկողնոյն և մէյմ՝ ալ պատուհանին քով երթալ գալ որ տեսնէ թէ անասուն մօրդ կանցնի : Հուսի ուրեմն եկաւ անկողնոյն քով նստաւ . նայեցաւ Էրմանտի անկողնոյն վրայ . . . բայց տղեկը հոն չէր . վասն զի Ատէլին իր փեղկերուն ետևի կողմէն եկած ձայնով սովորականէն աւելի խռովուած աղջիկն իր անկողինը առաւ , և ինքն ալ լաթերով անկողին մտաւ : Եղուարդ այս յիմար կինը տեսնելու հետաքրքրութեամբ այն կնչ վարագոյրը մեկդի պիտի առնէր , և ահա անտառէն եկած ձայն մը իր օւշադրութիւնը դրաւեց : Խփոյն պատուհանը վազելով ձամբորդներու սարկ ձայն բեց , որոնց չոր սոսերու և կիսով սասած ձիւներու վրայէն անցնելով յառաջ կուգային . . . Քիչ մը ետքը ձայններն ալ առաւ . և Եղուարդ խորհելով որ կարելի է ասանք իրենց ետեւէն

դրկուած ոստիկանութեան զինուորներ ըլլան ,
 և պատուհասնէն սենեակին մէջ նայելով զինքը
 տեսնեն , սկսաւ դողալ ու վախնալ , կամաց մը
 փեղկերը գոցեց որ սենեակը չի նային , հագիւ-
 թէ շունչ կանուոր . . . իր այս զգուշութեանցը
 հակառակ , Առէլին արթնցաւ , յանկարծ , բա-
 ցաւ իր անկողնոյն վարագոյրները , և կիսով
 անկողնէն վեր ելնելով

— Դ՛ու ես . . . Դ՛ու ես . . . պուստի նա
 ամենայն զօրութեամբ :

— Այս թշուառականը մէզի ձեռք պիտի
 տայ , ըսաւ Եդուարդ , իր ձայնէն ճամբորդ-
 ներն հոս պիտի թափին . . . օն ուրեմն . . .
 պէտք է . . .

Չայս բսելով վաղեց անկողնոյն քով դա-
 շոյնը ձեռքը . . . և երբ պիտի զարնէր , տե-
 սաւ որ իր կինն ու իր զուակն է :

Թշուառն Եդուարդ ստակալի աղաղակ մը
 հանելով մահաախիժ երկաթը ձեռքէն ձգեց
 և իր սպաննելու անձին դէմ անշարժ մնաց :
 Այս աղաղակը Առէլին հուշոյն խորը թա-
 փանցեց . ճանցաւ նա իր ամուսնոյն ձայնը :
 այն ձայնը որ իր խելքը կորսնցուց . ջանաց խել-
 քը գլուխը բերել . . . տեսաւ զԵդուարդ :
 ճանցաւ զանի , և ուրախութեան աղաղակ մը
 մղելով վաղեց վերջ ինկաւ .

— Եդուարդ . . . գ՛ու հոս . . . իմ քովս
 . . . պուստի Առէլին զանի դիւրեւով , բարե-
 կամս . . . այս ինսո՞ր եղաւ . . . ահ , չեմ գի-
 տեր ի՞նչ ըսեմ . . . գլուխս հանդիստ չէ . . .

— Եկու , ըսաւ Եդուարդ , եկու . . . տուր
 ինձի տղեկը . . . փախչինք , փախչինք այս
 տեղէն , թէ չէ՛ պիտի կորսուիս :

— Ինչու փախչինք . ի՞նչ վտանգ կայ հոս
 . . . քայսած նեղութիւնդ ձեռք չի՞ տուաւ . . .
 կառավարութիւնը գրեզ տակաւին կհալածէ՞ . . .

— Այո , այո . . . և դու ալ գողերու ձեռք
 ինկած ես . . . մտիկ բրէ . . . կը լսես սա վե-
 րէն եկած ձայներն . . . գողերը անգթաբար
 ձերունի մը կսպաննեն . . . եկու , կըսեմ քե-
 զի , ապա թէ ոչ՝ զբեղ աչքիս առջև պիտի
 մեռցնեն . . . ահ մի մերժեր զիս . . . ես հը-
 բէշ մը . . . թշուառական մ՛եմ . . . բայց զբեղ
 աղաւակ կուզեմ :

Առէլին իր ամուսնոյն խօսքը մտիկ բնելով
 աղջիկը գրկեց և երբ միատեղ դուրս պիտի
 ելնէին , յանկարծ փեղկերը բացուեցան , և գը-
 բան զանգակն ալ հնչուեցաւ :

Մարդ մը երևցաւ պատուհանին առջև ,
 որ սենեակը մտնել կը ջանար իր ընկերոջը պո-
 աւելով .

— Ընկեր , հոսներս մտնելու տեղ կայ , հոս
 եկուր . . . հոս . . . մտնենք սա սենեակը ,
 այս տունը գողեր ըլլաւու են . . . բայց հոգ
 չէ , գետին կը ձգենք զանոնք . . . օն յառաջ . . .

Եդուարդ այս մարդը տեսնելով շուարած
 և մտրուած՝ հաւաստի եղաւ որ զինքն ու ըն-
 կերները բռնելու կուգան : ուստի գլխուն դա-
 լիք տանջանքէն աղատելու համար թողուց
 կնոջը ձեռքը , մէկդի հրեց զանի , որ իր ե-
 սակէն գալ կուզէր , և ըսաւ .

— Դու աղատեցար, թող զիս . . . ետեւէս մի դար . . . մնաս բարով, մնաս բարով յաւիտեան . . . :

Իսկոյն սենեակէն դուրս ելնելով բակը իջաւ, փացաւ բողոջին դուռը և փախաւ անտառները . . . նոյն միջոցին Յակոբոս և Սան-Սուսի ալ պատուհանէն Ատէլին սենեակը մտան, որն որ իր հոգւոյն զգացած սաստիկ խռովութենէն նուազեալ իր ամուսնոյն աներևութանալէն ետեւ անզգայ գետինն ինկաւ :



ԳԼՈՒԽ ԼԷ .

Պ. ԺԵՐՎԱԼԻ ՈՎ ԸԼԼԱՍԸ

— Ո՛վ երջանիկ ժամ . . . հաւատամ՝ աչքերուս . . . պուսաց Յակոբոս Ատէլինի խելքը դըլուխը բերելու համար քովը վազելով՝ Այս կինը . . . նոյն ինքն Ատէլին է . . . Սան-Սուսի . . . եկու . . . եկու, տես զանի . . . :

— Այո, այո . . . ան է . . . վերջապէս դատանք զանի . . . տես, ես կըսէի թէ պէտք չէ յուսահատիլ . . . :

— Տես աղիլին ալ . . . այո, ճիշդ այն է . . .
— Բայց այս փեղկերը բացած ատենս աչքիս մարդ մը երևցաւ . . . ըսել է որ փախեր է . . . ո՛հ . . . այն ի՞նչ ձայն է . . . կը լսես . . . օգնութիւն կը պոսան . . . դու հոս կեցիր . . .

մի զատուիր քովէն . . . նա ամբձանակներէ դին ինծի տուր . . . :

Յակոբոս իր ամբձանակներէն մին Սան-Սուսիի տուաւ, որն որ մէկ ձեռքը զայն և միւսն ալ իր գաւազանն բռնած՝ ձայնն եկած կողմը գնաց . . . ելաւ առաջին յարկը, մտաւ սենեակ մը՝ որուն դուռը կտարած էր, և տեսաւ ծերունի մը ծնկան վրայ որ անզգամէ մը գլխովիւն կը հայցէր, մինչդեռ ուրիշ անգամ մ'արքայի մը ստակ շարկած փախչելու վրայ էր :

Սան-Սուսի ամբձանակը պարպեց Տիւֆընի մը վրայ, որ պատրաստուած էր Պ. Ժէրվալին սպաննելու, և ունի գաւազանը ծերունիին տալ և դետին փոսցոյ իր բնկերը քտակը թողլով փախչելու կուգէր . . . սակայն Սան-Սուսի անոր փախչելու ժամանակ չի տուաւ, Սան-ճուխին վրայ բռնեց զանի, և անոր անանկ սաստիկ հարուած մը տուաւ որ սանդուխէն վար գլորելով գլուխը գնաց պատի մը զարկաւ, և ինքն ալ հոն հոգին փչեց ստակալի անէծքներ տեղադրով :

— Դու իմ ազատիս, իմ փրկիչս ես, պուսաց Պ. Ժէրվալ, երբ Սան-Սուսի նորա ձեռագ և ոտից կապերը քակելու վրայ էր :

— Ճշմարիտ է, սիրելի պարոնս, որ վտանգաւոր միջոց մ'է . . . բայց կարելի է ձեր տանը մէջ տակաւին աւազակներ դրնուին, կըթամ չորս կողմը լուս մը նայիմ :

— Ես ալ հետզ կուգամ . . . ես ալ հետզ կուգամ, պարոնս, ըսաւ ծերունին . . . քեզի ա-

ուսմանը ըլլամ : Աւազ . . . հաւատարիմ
Տիւրքէս չերևիր :

Երջն միջոցին տարճանակի հայն մը բուե-
ցաւ : Սան-Սուսի չորս տար մեկէն առնելով
Եջու սանդուխէն վար ե հասաւ Յակոբոսի-
կերը նա դեռանայարկէն փախելու ուզող աւա-
զակներէն մին դեռին ձգեց , խի միւսը եղ-
ուարդի փախած ճամբայէն փախաւ այսպիսի
պարագաներու մէջ յաջողակ ըլլալուն համար :

Զէնքերուն ձայնէն , կրար անցումէն և ելած
այաջակներէն Կատարինէ և Ղուկաս արթն-
ցան . բայց այն առան իրենց սենեակէն հա-
մարձակեցան դուրս ելնել , երբ իրենց ակրոջը
ձայնն առին : Այնուհետև ամենքը մեկանց
Ատէլինի սենեակը դացին :

Արդէն Ատէլինի խելքը դլուխը եկած ըլ-
լալով զարմացմամբ Յակոբոսի վրայ սկսաւ նա-
յիլ որ քոյք կայնած էր :

— Ո՛հ եղբայր իմ , բարեկամ իմ . . . դո՛ւ
ես , ըսաւ վերջապէս . երա՞ դ է տեսածս . . .
բայց ի՛նչ դէպքեր պատահեցան . . . քիչ մը
առաջ եղուարդ հոս էր . . .

— Եղուարդ . . . խելքդ գլուխդ բեր . . .
սիրելի Ատէլինս , և ալ բնաւ մի վախնար . ա-
ւազակներն կրտուեցան :

Ատէլին պատասխան չի տուաւ . բայց աչ-
քերը չորս քին պաշտօնակով իր ամուսինը կը
փնտաւէր :

— Յաղթօւթիւնն . . . պառաց Սան-Սու-
սի , ես իմ կողմանէ երկու աւազակ սպաննեցի :

— Մենք մեր կեանքը ձեզի կը պարտաւ-
ւորինք . քաջ օտարականներ , ըսաւ Պ. Ժէր-
վալ Յակոբոսի մտանալով . ձեզի ի՛նչ փոխա-
բէն ընեմ , չեմ դիտեր :

— Արդէն ես ձեզի երակտապարա եմ , ը-
սաւ Յակոբոս , որովհետև իմ քրոջն ու իր ազ-
լըկան վրայ ինամտարած էք :

— Առնք իր քոյրն ու անոր աղջիկն են ,
ըսին զարմացմամբ Պ. Ժէրվալ ու իր ծառաները :

— Ամեն բանէն առաջ սա տունը լաւ մը
աչքէ անցընենք , ըսաւ Սան-Սուսի . կրնայ ըլ-
լար որ անկիւնին մէկը պահուցուած աւազակ-
ներ դանուին :

— Տիւրքէ ո՛ր է . . . վախնամ իր հաւա-
տարմութեանը զո՛հ եղաւ խեղճ ծառան . . .

— Ապահովենք սա մարդիկը . . . օն յա-
սաւ . . .

Պ. Ժէրվալն , Ատէլինն ու Կատարինէն ա-
նանկ սենեակ մը տարին , որուն դուռը հաս-
տատուած ըլլալով վախու տեղ մը չունէին .
վերջը Յակոբոս և Սան-Սուսի սկսան առան աչ-
քէ անցընել Ղուկասին առաջնորդութեամբ ,
որ թէպէտ վախուն կը դուպար , բայց անոնց
չնկերանալ ալ չէր համարձակեր : Ատէլինի
եղուարդին համար՝ քիչ մը առաջ հոս էր ը-
սելը Յակոբոսի հանելուկ մը կը թուէր , և իր ե-
րեւակայութեան ներկայացած կասկածն չէր
կրնար փորտաւել : Ամեն տեղ աչքէ անցընե-
լով մեկը չի դառն . և համբարանոցն երթա-
լով հոն տեսան խեղճ Տիւրքէի մարմինը , որոյ

վրայ կենաց նշան չի տեսնուերուն համար Սան-Սուսի և Ղուկաս զանի վար իջեցուցին, և իր սենեակն դրին հաւատարիմ ծառային մարմինը, մինչև որ վերջին պարտականութիւննին կատարեն:

Իբր Սան-Սուսի և Ղուկաս այս տխուր արարողութեան վրայ էին, Յակոբոս Պ. Ժէրվալի սենեակը մտաւ, և հոն անկիւնէ մը խուլ մտնիւն մը լսեց: Տիւֆրէտն դեռ մեռած չէր. բայց իր ընդունած վերքն մահացու էր, և թշուառականը մահուան հետ կը մարտնչէր: Յակոբոս կանգեղն առնելով քովը դնաց և դարմացմամբ աղաղակ մը հանեց: Տիւֆրէտն ճանչցաւ Եղուարդի եղբայրը. սոսկալի ժպիտ մը իր վայրենական դէմքին վրայ կ'լսող փայլեցաւ, և իր ձայնը լսելի ընելու չափ քիչ մը զրուսթիւն բերելով վրան, ըսաւ .

— Ես պիտի մեռնիմ. . . բայց եթէ դու իմ ընկերներս ալ մեռուցիր . . . գիտցած ըլլաս որ եղբայրդ ալ մեռաւ . . . ըսէ իր կնոջը . . . այն Ատէլինն էր զիս անարգեց . . . որ իր ամուսինը . . . բանաէն փակելով . . . իմխրատներովս գողմը . . . աւաղակ մը եղաւ:

Տիւֆրէտն այս խօսքերն ընելով մեռաւ, դո՛հ ըլլալով որ իր վերջին վայրկեաններուն մէջ ալ կրցաւ չարիք ընել:

Յակոբոս իր ընտանեաց թշուառութեան պատճառ եղով այս անզգամին քով քանի մը վայրկեան սոսկումով մնալէն ետև, չի կրնալով համոզուիլ, ուզեց այս զարհուրելի նշարտու-

թիւնը երևան հանել, ի՛նչու չուտով վար, գընաց Լամբէնի մարմնոյն քով, և անհնարին ստուգմամբ կանգեղը երեսին բռնեց . . . տեսաւ որ նա իր եղբայրը չէր. քիչ մը համարձակութեամբ սկսաւ չունչ առնել: Վերջը գետնաշարկն ալ իջնելով միւս զարնուողն քովը գընաց, և թէպէտ գիտէր որ նա ալ իր եղբայրը չէր, սակայն ուզեց աւելի ապահով ըլլալ:

— Փառք Աստուծոյ, ըսաւ նա այն աւազակն ալ ուշագրութեամբ դիտելէն վերջը, որ ձեռքս եղբորս արեան մէջ չեմ թաթխած . . . նա աղատեցաւ . . . Ա՛հ, իցէ թէ ալ բնաւ չի տեսնէինք զանի. մտնանք դմեղ անպատուող հրէշ մը, և մեր բոլոր խնամքն նուիրենք այն երկու գէթաղըներուն զորս վերջապէս դուտայ:

Բայց և այնպէս Յակոբոս Ատէլինն քով չի գացած երեք ասպակաց գրողաններն ալ լաւ մը նայեցաւ, մանաւանդ Տիւֆրէտնինը, վախնալով որ չըլլայ թէ այս թշուառականներուն վրայ Եղուարդի վերաբերուալ թուղթ մը դըտնուի: Տեսաւ որ վրանին զէնքէն ու ստակէն զատ բան մը չկայ, և աւելի ապահով ըլլալով որոշեց Ատէլինն քով երթալ:

Տանը մէջ եղողներն տարապայման ուրախութեամբ տեսան որ Ատէլին զգատացաւ, և երբ իր տանը ուր ըլլարուն վրայ հարցու-փորձ կ'ընէին զանի, Պ. Ժէրվալ պատմեց թէ ինչպէս զինքը գտած, փարիղ խնամած և վերջն իր այս առնը բերած էր, և թէ որչափ ժամանակէ ի վեր է հոս կը բնակէր:

Ատէլին իր պաշտպանին ոտքերն ինկաւ, իմանալով թէ՛ որչափ երախտապարտ է անոր, թէ՛ պէտ Գ. Ժերվալ իր պատմութեան ատեն իր բրած բարիքներուն վրայէն խիտ թեթեւ կերպով անցնելով անոր բարիք ընելու մասին զգացած ուրախութիւնը աւելի յառաջ կը բերէր ։

Վերջը Ատէլին իմացաւ գիշերուան վերջին գէպքերը . իմացուցին անոր որ գողեր մտած էին առնը, և եթէ այն երկու օտարականներն նոյն նոյն միջոցին վրայ չի հասնէին, որոցմէ մին իր Եղբայրն է եղբր, ամենքն այլ պիտի կորուսէին ։

Ատէլին դողաց զսօնք լռելով . . . նա մանաւանդ թէ՛ Եղ. օրագր. ինչ ատեն և ինչ կերպով իրեն երեցած էր . . . միտքը բերաւ նա և օտարականաց եկած ատեն իր զգացած սուկումն ու խռովութիւնը . ալ չուզեց աւելի բան մը հարցնել . և անհամբուրութեամբ կրպակսէր Յակոբոսի գալուն, որ վերջապէս եկաւ ։

— Քանի մը աւազակներ փախեր են, ըստ նա Ատէլինի մօտենալով, որուն խռովութիւնը տեսնելով ուշադրութեամբ վրան նայեցաւ ։ Իսկ մեռնողներն իրենց չարութեան արժանաւոր պատիժն դտեր են . . .

— Ա՛խ, ըստ Սան-Սուսի, ամենքն այլ կորսուելու էին . . . կը ցաւիմ որ ինչպէս ձեռքերնուս փախուցնէր ։

— Հապա իմ հաւատարիմ Տիւրքէս, հարցուց Գ. Ժերվալ, անկէ լուր մը չէ՞ք տար ինձ ։

— Աւա՛ղ . . . սիրելի պարոնս . . . կերելի թէ՛ ձեր ծեր ծառան այդ գաղաններուն առաջին զոհն եղած է . . . մեռեր է . . .

— Վայ թշուառականներ . . . այդ ծերէն ինչ կուզէին . . . Ա՛հ, իցէ թէ իր խօսքերուն անայի . . . խեղճ Տիւրքէս, իմ անխոհմուտ թեանս զոհ գացիր . . . յաւիտեան ցաւ պիտի ըլլայ ինձ . . . ալ այս տունը այքես ելաւ . . . վաղը կը մեկնեմ . . .

Գ. Ժերվալ այս խօսքերն ըսելով լացաւ . կատարինէ ալ սկսաւ լալ, և ամեն ոք բարի ժերվալն կը ջանար մխիթարել, որ իր հաւատարիմ ծառային կորստեանը պատճառ ինքզինքը կը խոտալանէր ։

Այսպէսով առտաւ ըլլաւ սկսաւ . Գ. Ժերվալ քիչ մը հանգստանալ ուզեց . Չուկաս ալ դնաց գիշերուան գէպքը տեղւոյն կառավարութեան իմացնելու ։ Կատարինէ ալ իր տիրոջը հրամանաւոր իրենց պաշտպնութեան պատրաստութիւններն սկսաւ ընել, և Ատէլին խոտացաւ ծերունիին իր թշուառութիւններն քիչ մը ետքը պատմելու ։

Յակոբոս Ատէլինի հետ առանձին մնաց . ուզեց զանի հարցաքննել, բայց չի համարձակեցաւ լուրթեան կապը խզել ։ Վերջապէս աւնոր ցաւը, վախերն ու գաղտնի խորհրդաւձութիւնները գուշակելով ըսաւ .

— Տիւֆրէան կորսուեցաւ . անգլամբ վերջապէս իր չարութեանց պատիժը գտաւ ։

— Ինչ . . . Տիւֆրէան . . . Տիւֆրէան ա-

ւազակներուն մէջ էր . . . թշուառական . . .
ահ . . . ալ տարակոյս չի մնաց . . . անզգամբ
այս ծայրայեղ շարութիւնն ալ բնել տուաւ Եդ-
ուարդի . . . Եդուարդ . . .

— Լուէ . . . որ այս սոսկալի գաղտնիքը մէ-
կը չիմանայ, բռաւ Յակօրոս ցած ձայնով .
Թշուառականն փախաւ ազատեցաւ . . . Թող
երթայ իր այս շարութիւնն ուրիշ երկիրներ
դուրժէ . . . ալ իր զղլումը օգուտ չունի, և իր
ներկայութիւնը դքեզ ալ զիս ալ պիտի թըշ-
ուառացնէ . . . մոռցի՛ր յաւիտեան այնպիսի
մէկը որ արժանի չէ իմ և քու ալ սիրոյն : Վատ
և տկար է այն ազնիւ և վեհանձն սիրտը որ
այսպիսի անարգ և ատելի մէկու մը վրայ տա-
կաւին սոսկում կը ձգէ : Դու այսուհետև զա-
ւակդ, զիս և զքեզ սիրող անձինքը յարգէ,
և մեզի համար ուրախութեան և խաղաղու-
թեան օրեր պիտի ծագին :

Ատէլին Յակօրոսի դիրկը իննալով իր աչ-
քէն հոսած արցունքը սրբեց և բսաւ . — Բա-
րեկամ, այսուհետև քու խրատներուդ պիտի
հետևեիմ, և կը յուսամ որ զքեզ դո՛հ կընեմ :

Շըջակայքն հեղող գիւղացիները իրենց բա-
րերաբին տունը պատահած տխուր դէպքերն
իմանալով ամենքն ալ վաղեցին հոն եկան տես-
նելու համար թէ վրանք մը կայ : Տելբրէի
յուզարկարութեան հանդէսը կատարուեցաւ .
պարտեղին մէջ թաղեցին զանի, և անոր վրայ
կանգնուած քարն հաւատարիմ ծառային ինչ-
պէս մեռած ըլլալն յայտնի կիմացնէր :

Վերջնապէս Պ. Ժէրվալ ուրեց իր ազատին
անունն իմանալ .

— Անուն Յակօրոս է, բսաւ, իմ անունս
ալ Յակօրոս է : Ես այս անունով սան մ'ալ ու-
նէի, որ հիմա քաւ հասակդ կըլլար . ունայն
տեղը փնտռեցի զանի փարիզու մէջ :

Յակօրոս իր կեանքը ազատած անձին երե-
սը խորին ուշադրութեամբ նայելով անոր
պատկառելի դէմքին վրայ այնպիսի անձի մը
զիծերը նշմարեց որ իր մանկութեան ատենն
միշտ իրեն սիրալիկ դուրովնք մը կը յայտնէր
իր մտքին հազարաւոր յիշատակներ ներկայա-
ցան . . . հազիւ թէ կարողացաւ Պ. Ժէրվալի
հարցնելու թէ ինչ է իր անունն, որուն գի-
չերուան դէպքերուն ատեն այնչափ ուշադրու-
թիւն բրած չէր :

— Իմ անունն Ժէրվալ է, բսաւ ծերունին
ինքն ալ ուշադրութեամբ Յակօրոսի երեսը
նայելով . երբեմն վաճառական էի . փարիզ երե-
ւելի վաճառանոց մ'ունէի . . .

— Վայ . . . դուք Յակօրոս Ժէրվալն էք . . .
Իմ կնքահայր . . . զոր սխնալի կը սիրէի . . .

Յակօրոս ցատկեց ծերունիին վիզը որ զանի
սեղմեց գորովանօք իր գրկին դէմ, և իր սիրելի
սանը գտնելուն վրայ ուրախութենէն լացաւ,
որուն վրայ միւսներուն ալ սիրտը շարժելով լաւ
սխնալ :

— Տեսա՛ր հիմա, մարդիկ ի՞նչպէս դիրտը
կը գտնեն, բսաւ Սան-Սուսի . ահաւասիկ այն-
պիսի մէկն ալ գտար, որուն ոչ ես կը յուսայի,
և ոչ դու, բնկերս :

— Սիրելի Յակոբսս, ըսաւ Պ. Ճերճլը, ամեն կողմ քեզի մնտուցի. խիստ կը փափագէի զքեզ գտնել: Քու փախուստդ զիս շատ վշտացուց, վասն զի պատճառն ես եղայ առսանց յանցանք մ'ունենալու: Յակոբոս անունը զքեզ թշուառացոյց, խեղճ ասն, և բարբ կենացդ վրայ ազդեցութիւն ունեցաւ. քու մայրդ կատեր զքեզ, հայրդ ալ չէր համարձակեր մօրդ առջև այս անունը տալ. ես միայն կը սիրէի զքեզ, բայց այսօր քեզ չէր բաւեր քու զգայուն հոգւոյդ: Փախար հայրական տնէդ, և ես եթէ զքեզ գտնէի, քու ծընոցացդ այս անիրաւութեան հատուցումը պիտի բնէի քեզ, վերջապէս ահա հիմա դատուհ, հիմա ճանչցայ զքեզ. . . այդ վերբի նըշաններն քու դէմքդ չես փոխած: Ալ իրարմէ չենք զատուիր, Յակոբոս, դու պիտի գոցես աչքերս. դու իմ զաւակս ես, իմ միակ ժառանգս. այս մայրկենէն իմ հարստութիւնս քու կդէ. քնչպէս որ կուզես, գործածէ քու սիրած անձանցդ երջանկութեանն համար:

Յակոբոս անդամ մ'ալ դրկեց իր կնքահայրը. չէր կրնար իր այս երջանկութեանն հաւատալ:

— Սիրելիք իմ Ատէլին, ըսաւ նա վերջապէս, և թէ ես հարստանամ, դու ամենևին թշուառութեան երես չես տեսներ. իմ հարուստ ըլլալ ուղերս բուն պատճառն ալ այս է:

Ատէլին ու իրմանս ալ ձերունինի գիրկը կը նետուին:

— Ասոնք քորդ ու իր աղջիկն են, ըսաւ Յակոբոսին. դու ամուսնացած չե՞ս:

— Ոչ. ըսաւ Յակոբոս շիտթութեամբ. . . ասոնք իմ եղբորս կինն ու զաւակն են. . .

— Եղբօ՞րդ. . . իրաւ ան ինչ կղաւ. . .

— Մեռաւ. . . աւաղ, ես եղբայր չունիմ, աւ ալ ամուսին:

— Բարեկամներս, կը տեսնեմ որ կուլաք. գիտեմ որ ահամայ ձեր ցաւերն նորոգեցի. . . ներեցէք ինձ. կարելի է եղուարդի յիշատակը ձեզի ծանր ըլլայ. . . բայց ձեր վշտաց պատճառն չեմ գիտեր. պատմեցէք զանոնք ինձ, և ես կը ջանամ ձեռքես կեղածին չափ զձեզ մխիթարել:

Ասոր վրայ Յակոբոս Ատէլինի ցաւոց մեծ մասը ձերունինի պատմեց, բայց իր եղբորը գէշ վարմանը բարբոջին չի յայտնեց, և Պ. Ճերճլը ալ կարծեց որ եղուարդ իր կինն ու զաւակը երեսի վրայ թողելէն ետև փախիլու մէջ թշուառութեամբ մեռեր է, և Ատէլին իր ամուսնոյ թշուառ վախճանին վրայ իր խեղք կորսնցուցեր է:

Ռաշի ձերունին ալ այնուհետև ինքզինքը պարտաւոր համարեցաւ այս կինն ու իր զաւակը սիրելու, որ օրինակ էր բարբ ամուսիններուն ու մայրերուն, և ուղեց նաև տեսնել աղաբակին մարդիկը որ Յակոբոսի ու Ատէլինի այնչափ տէր յայտնած էին:

— Ատկեց դիւրին ինչ կայ ըսաւ Սան-Սուսի, եթէ կուզէք հոն դառնալներն ու բարս:

ցրնել, պէտք է ազարակը երթաք. երբ լու-
կաւ և Կիլո տիկինն ու ընկերս տեսնեն, ազա-
հով եմ որ սովորականէն աւելի ուրախ և գոհ
պիտի ըլլան :

— Շատ աղէկ, ըսաւ Պ. Ժէրվալ, ամենքս
ալ երնենք հիմա երթանք. Ատէլին ալ քիչ մը
կը բացուի. իր աղջիկը հոն կը զուարճացնէ :
Յակոբոս ալ իր թշուառութեան ատեն իրեն
օգնողներուն օգտակար կըլլայ. մենք ալ, խեղճ
կատարինէս, ազարակին բնակացը վրայ նա-
յերով գոնէ մեր ծեր բարեկամին Տիւրբէի
մտհոռան վիշտը քիչ մը կը թեթեւցնենք :

Պ. Ժէրվալի առաջադրութիւնը զամենքն
ալ ուրախացուց : Կատարինէ ուրախացաւ այս
տնէն մեկնելուն վրայ, ուր աղետալի դէպքեր
պատահած ըլլալուն գիտէր որ ալ չի պի-
տի կրնար հանգիստ ըլլալ : Գուկաս իր օխ-
րոյմէն հրաման խնդրեց պարտէզը ձգելու.
ու իր ծառան ըլլալու. տէրը հաճեցաւ,
և ամեն ոք ճամբու պատրաստութիւն սկսաւ
տեսնել :

Վոսմի տունն ալ այն կողմերն ճանապար-
հօրդող անձանց կարևոր եղած օթեան մ'ըլա-
լու համար գիւղացիներուն վարձու տունն. Պ.
Ժէրվալ և իր ծառաներն մեկնեցան այս տնէն
Տիւրբէի յիշատակաւք ցաւելով. Յակոբոս և
Ատէլին ալ եղուարդի աւաղակութեամբ հոն
մտած ըլլալը տեսած ըլլալուն համար հոնկից
հեռանալուն վրայ խիտ ուրախացան. իսկ
Սան-Սուսի տակաւին հպարտութեամբ կը նա-

յէր այն սենեակը ուր զծերունին աղատած և
երկու աւաղակ սպաննած էր :



ԳԼՈՒԽ ԼԸ .

ԳԱՐՁԵՍԼ ՊԱՐՏԷՂԻՆ ՎԱՆԳՐԱԿԷ ԴՈՒՌԸ

Սան-Սուսի կառավարին քով հեծաւ. և
թէպէտ Պ. Ժէրվալ ստիպեց որ կառքն հեծ-
նայ, բայց նա ուղեց առաջնորդ ըլլալ գէշ
ճամբաներէ և անխնորու հետքի պատահելէ
վախնալով. այնչափ ուրախ էր Ատէլինի հետ
ագարակը վերադառնալու վրայ, նոր ճամբուն
վրայ պատահելիք ամեն դէպքերուն գիմազ-
րելը միայն իրեն վերաբերեալ պարտք մը կը
համարէր :

Ճամբան Յակոբոս Պ. Ժէրվալի պատմեց
իր երիտասարդութեան դէպքերը. մոգու-
թեան և մագնիսական զօրութեան պատմու-
թիւնը, որուն վրայ Պ. Ժէրվալ և Ատէլին ծի-
ծաղին չի կրցան բռնել :

— Վերջապէս ի՛նչ երջանիկ դիպուած զքեզ
լսմ'տունս բերաւ զմեզ աւաղակներուն ձեռ-
քէն ազատելու համար, հարցուց կատարինէ
Յակոբոսին :

— Ատէլինի մեկնելէն քանի մ'օր ետքը,
ըստ Յակոբոս, տեսնելով որ ազարակը չի վե-
րադարձաւ, և վախնալով որ չըլլայ թէ աղե-
տալի դէպք մը պատահի իրեն, Սան-Սուսիի

հետ ճամբայ ելայ մտաքս դնելով որ եթէ պէտք
 ըլլայ, բուր Գաղղն պաշտխմմայրն ու զաւակը
 գտնելու համար: Եկանք փարիզ, և շատ օր
 հոն մնացինք, բայց անօգուտ. իմ փնտաւած
 անձանցս վրայօք բնաւ չուր մը շատինք: Ուս-
 տի կիցլոյն ու Ղուիզաի մնաք բարով ըսելով՝
 կրկին ճամբայ ելանք և Գաղղիոյ այլևայլ նա-
 հանգներն հետզհետէ պատեցանք, ամենէն
 պղտիկ աւաններն ու գիւղերն ալ քանի մ'օր
 մնալով, և ամեն տեղեր ալ չի կրցանք գոհա-
 ցուցիչ տեղեկութիւն մ'աւանուլ: Այսպէս տա-
 ըն մը պատեցանք առանց բան մը իմանալու:
 Բայց Սան-Սուսի, որուն զուարթութեանը
 խօսք չկայ, ինծի սիրտ կուտար, երբ կը տես-
 նէր որ իմ տըրութիւնս ու ցաւս կաւելնար:
 Վերջապէս դարձանք այս կողմերը յուսալով
 որ կրնայինք երջանիկ լուր մ'աւանուլ: Ֆրանչ-
 ֆոնթէի մէջ մասը պատեցինքս վերջը մասնք
 յլօսփի լեռանց մէջ, որովհետև դողերէ վախ
 չունէինք, շատ անգամ գիշերն ալ կը ճանա-
 պարհորդէինք և երբեմն ալ ճամբաւունս վրայ
 պառկելու տեղ չի գտնելով՝ հօգին վրայ կան-
 ցընէինք: Բայց և այնպէս երեկ ոգը այնչափ
 դէշ և ձիւն ալ այնչափ շատ տեղացած էր,
 որ անտառներուն մէջ մտորեցանք: Ալ ցուր-
 տէն գրեթէ թմրած և յոգնութենէ ալ տկա-
 րացած էի, երբ Սան-Սուսի մօտերնիս վայե-
 լուչ տուն մը տեսաւ. ես չէի համարձակել
 երթալ հոն հիւրընկալութիւն ինդրել. բայց
 նա քնդհակառակն ուղեք որ երթանք, և այս

հակառակ որոշման վրայ կը միճարանէինք,
 երբ տանք մէջէն աղաղակներ լսուեցան. այն
 ատեն ալ չի կեցանք, ու ես եկայ ուժով գու-
 ոք զարկի: Սան-Սուսի դեմնայտիկը բաց պա-
 տուհան մը տեսաւ, որոյ երկաթէ վանդակ-
 ներն ելած էին, աս պատուհանէն երկուքս ալ
 ներս մտանք. . . Ալ երեսակայեցէք թէ ինչ
 ուրախութիւն զգացի, երբ հոն դաւայ իմ եր-
 կար տեսնէի վեր փնտաւած անձս. . . որմէ
 կարելի է յաւիտեան բաժնուէի, եթէ ձեր ա-
 զաղակներն զմեզ ձեր տունը չի պիտի բերէին:

— Սիրելի Յակոբս, նախախնամութիւնը
 ձեզի մեր օգնութեան զրկեց, ըսաւ Պ. Ժէր-
 վալ. սակայն այս դէպքին մէջ ամենէն զարմա-
 նալին սա է որ մեր սիրելի Ատէվինն զգա-
 տացաւ:

— Բայց, պարոն, ըսաւ կատարինէ, ես
 ձեզի չէի՛ ըսեր որ այս կիրճայնկարծական դէպ-
 քի մը և խռովութեան մը կը կարօտի. . . տե-
 սէք ըսածս ինչպէս եկա՞ւ ելաւ:

Վերջապէս հանդարտ ճանապարհորդու-
 թեամբ հասան աղաքակը: Յակոբոս իր մշա-
 կած դաշտերուն առջևէն անցած ատներ
 քաղցր յուզմունք մը զգաց:

— Ահա տառիկ ըսաւ Պ. Ժէրվալի, այն ա-
 բորը որով շատ անգամ այս իմ քրտամբքս ու
 զոգեալ երկիրը մշակած եմ:

— Բարեկամս, պատասխանեց ծերունին,
 որչափ ալ հարուստ ըլլաս, այս արօրը մի մոռ-
 նար, և թշուառներն ձեռնուանայն մի արձակելու:

Այս գիւղին համար քառաձի կառք մը մեծ գէւղք մը համարուելուն՝ գիւղացիք հոն խըռնեցան, երկրագործք գործերնին թողուցին, ագարակին բնակիչներն հետաքրքրութեամբ կառքին քով եկած ճամբորդներն տեսնելու համար. սակայն Սան-Սուսի արդէն ձայն քրած էր անոնց. կառավարին մտրակն առնելով՝ օգին մէջ կը խաղցընէր հաւերն փախցունելու համար, մինչդեռ տղանիներն ալ բարձր ծխնելոյզներու վրայ կենէին:

— Մենք ենք, Յակոբոսն է... Առէլինն է, պոռայ նա հեռուէն, երբ տեսաւ Ղոււիդա և Ղիկլո. պատրաստութիւն տեսէք, բարեկամք, կաղամբապուր եփեցէք, դինիին տակաւսը բացէք... ճագար և հաւ մորթեցէք...:

Գիւղացիք կառքին վրայ խռնեցան. ամեն ոք սկսաւ Յակոբոսը, Առէլինն ու էրմանսը գրիկել ու դգուել: Լոււիդա կուլար, և կիկլո ուրախութեան աղաղակներ կը հասներ: Պ. ժէրվալ անոնց այս անպատմելի համակրութիւնը տեսնելով սիրտը ելաւ, և վերջապէս ուրախութեամբ ագարակը մտան, ուր այս անձանց բերկրաւիթ վերադարձը տօնելու համար շուտով իրարանցում մ'է բրթաւ:

Սոյն միջոցին Սան-Սուսի ամենէն աւելի իրար անցած էր. ինքն ալ սկսաւ ըլլալիք պատրաստութեանց մասնակից ըլլալ. պնակներն կը կտորէր, սաները (թէնճիրէ) տակն ու վրայ կընէր, և ամեն ատեն պոռայով այս խօսքերը կընէր.

— Գուր չէք գիտեր, Յակոբոս հիմա հարստացաւ. այս ձերունին իր կնքահայրն է եղեր... մենք դանի աղատեցինք... աւազակներն սպաննեցինք... ետքը ամեն բան կը պատմեմ ձեզի:

— Ըսել է որ, բոսա կիկլո, գործերն լաւ լինակի մէջ են. բայց հապա մեր Յակոբոս բարեկամին եղբայրը...:

— Լա է... բոսա Սան-Սուսի ձեռք բերնին վրայ գնելով, եթէ մէյժալ այդ անունը բերանդ առնես, ուրախութիւնն իսկոյն տունէն կանհետանայ, արտասուք կրկին կը դառնան, և կերակուրնիս քիթի հետոս բերներնուս կուգայ. ուստի հաւատա ինձ. այդ լեզուդ փոխէ, ապա թէ ոչ՝ վերջը շատ դէշ կըլլայ:

— Շատ աղէկ, շատ աղէկ, բոսա կիկլո, սեղանին վրայ խօսելէս տառվ լաւ կը խորհիմ:

Պ. ժէրվալ ագարակէն խիստ ակործեցաւ. շրջակայներն պատելով՝ դարձացաւ զեղեցիկ տեսարաններուն և պազաբեր երկիրներուն վըրայ:

— Ահ, պարոն, բոսա կիկլո, հիմա հոս բան մը չէք տեսներ. գարնան ատեն հոս գանուելու էիք որ տեսնէիք թէ այս տեղուանք որչափ զմայելի են... Բայց եթէ այս դաշտերն այսքան վայելուչ, և այս երկիրներն այսչափ պտղաբեր կը տեսնէք, ստոնք մեր Յակոբոս բարեկամին աշխատութեանց արդիւնքն են. իմ վեց տարուան մէջ ընէլ չի կրցածս անեկալ

երկու տարուան մէջ քուս, երեք մարդու գործ ածուս . . . կը յաւիտ որ հիմա հարստացած ըլլալուն համար ալ երկրագործութիւն չի պիտի ընէ :

— Սիրելի Յակոբոս, ըսաւ Տերունին, պէտք է որ քու աշխատութեամբ արդիւնաւորուած այս դպաներն ու այս երկիրը սիրես . չեմ ուզեր որ այս տեղէն հեռանաս : Հոս կը բնակինք, բարեկամս . բայց ես ծեր եմ ու չեմ կրնար առգիս անդին երթալ մեղի յարմար տուն մը գտնել . ուստի այս գործը քեզ կը յանձնեմ, եթէ սա շրջակայքը գեղեցիկ տուն մը գտնես, եկու ինձ իմաց տուր :

Յակոբոս ուրախութեամբ ընդունեցաւ . արդէն իր միտքն ալ այն էր . և իր ագարակէն հեռեեալ օրն առաւօտուն դաղտնի յուսով մը ելաւ միլիտով—Սէն—Ջորժ գնաց, և դողալով մտեցաւ հօրը տանը, որոյ համար միշտ կը ջուռէր : իր ամենամեծ սխափագր մնացած կեանքը այս տունը անցնելն էր որ իրեն ախուր և միանգամայն քաղցր գէպքեր կը յիշեցնէր :

Գնաց դրանը քով . . . տեսաւ որ վրան աղբ մը կախուած էր այսպէս . Նրախու կամ վարձու տուն :

— Ալ այս տունը մերն եղաւ, պառայնա . դարձեալ պիտի բնակիմ հոն, ուր իմ մանկութիւնս մեծցած է . տասնըհինգ տարեկան եղած տեսնօ փախայ, երեսուն տարեկան հասակիս մէջ կրկին հոս կը դառնամ . իցէ թէ՛ ալ անկէ չի բաժնուիմ : Անտարակոյս Ատէլին ալ այս աը-

նէն խոտ պիտի ախորժի . ինքն ըսած է թէ իր կենաց գեղեցիկ օրերն հոն անցուցեր է . եթէ այս տունը իր ամենախրելի մէկ անձն իրեն կը յիշեցնէ, գէթ նա հոս եղած ատենն տակաւին անոր սիրոյն արժանի էր :

Չայս ըսելով Յակոբոս դուռը զարկաւ, բայց բացող չեղաւ . վերջէն դրացիներէն մին իրեն բռու որ նօտարին երթայ, սրն որ դիմացի տունը կը նստէր : Այս նօտարն այն էր որ չորս տարի առաջ այս տունը Եգուարդ Միւրվիլի վրայ գրած էր . իսկ վերջէն իր պարտատէրներուն անցնելով հեռոյհեռէ շատ մարդոց ձեռք անցած էր : Իսկ այժմեան տէրը դրեթէ հոն բնակիլ չուզելով՝ ծախելու կամ վարձու տալու մտք ունէր : Յակոբոս անոր գինն իմանալով խոտացաւ . հետեեալ օրն դալ ու գործը ընցնել . չի համարձակեցաւ առանց Պ. Թէրվալան հարցնելու վերջնական պատասխան տալ : Երուտով դարձաւ ագարակը, և Տերունին անոր ուրախ դէմքէն գուշակեց որ Յակոբոս իրեն հաճելի տուն մը գտած է :

— Դուք այս տունը կը ճաննաք, ըսաւ անոր Յակոբոս, երբեմն եկած էք հոն . ասի հօրս առնն է :

— Խօսքը ընցուցի՞ր . . . Սն ուրեմն, կը տեսնեմ որ այս գործն ըմնալու համար ես անձամբ երթալու եմ :

Հետեեալ օրն Տերունին Յակոբոսին հետ կառքով ելաւ նօտարին տունը գնաց և Յակոբոսին անուամբը այն տունը գնեց . վասն

զի լաւ գիտէր որ Յակոբոս այս անունէն դատ
ուրիշ անուն չի պիտի կրէր, և ինքն ալ չու
ղեց այս մասին իրմէ բացատրութիւն խնդրել
որովհետեւ Եգուարգի պահասութեանց մեծ
մասին տեղեակ էր:

— Առ, տղաս, ըսաւ Յակոբոսին տանը
ստազագիրն անոր տալով, ժամանակ է որ քե
զի ասանկ չնչին անուն մը դնելուս համար
այսպիսի նուէրով մը տուգանքք հատուցա
նեմ: Այս տունը քուկդ է, և իմ սիրեկն Յա
կոբոս գարձեալ պիտի երթայ այն տունն որմէ
երբեմն իր անունն համար զախաւ:

Յակոբոս չնորհակալութեամբ գրկեց զձե
րունին, և գարձան ագարակը զայս Ասէլինի
աւետեալու համար:

— Ինչպէս, սրտիդ բարձանացք համեմատ
վարուեցայ, ըսաւ Յակոբոս Ասէլինի . . .
Խորհեցայ որ դու ալ այս գեղեցիկ տունը խիստ
մեծ հաճութեամբ պիտի բնակիս:

— Այո, այո, բարեկամս, պատասխանեց
Ասէլին. ես շատ երջանիկ էի հոն և կուզէի
իմ կեանքս հոն աւարտել, և թէպէտ երբեմն
երջանկութեան յիշատակներ տխուր խորհր
դամտութեանց հետ պիտի խառնուին, բայց
ես զանոնք ամենքն ալ պիտի մոռնամ . . .
պիտի վանամ իր լաւ օրերն միայն յե՛նչ, և
առանց ամշտալու իր վրայ լաւ:

Կիլոյի բնունիքը ուրախութեամբ իմացաւ
որ իր բարեկամներն իրմէ չի պիտի զատուին.
վասն զի միմեծով մէն ժօրմէն ագարակը շքր

ջողայութեան ճամբայ մըն է, և ամենքն ալ
խոտտացան միշտ իրարու երթալ դալ:

Չորս օրէն ետքը մեր ճանապարհորդներն
եւան իրենց նոր տունը դացին և հոն հաս
տատուեցան: Ասէլինի այրքերը արտասուօք
թըրեցան երբ այս տունն եկաւ, և երբ իր
ամեննութեան առաջին ամիսներուն երջան
կութեանն վիպ եղող այն պարտեղն պատե
ցաւ, որոնք խնտ քաղցր էին, բայց շատ շու
տով անցան և ալ չեն վերադառնար:

Կատարինէ խոհանոցը վրան առաւ, և Ղու
կաս պարտեղն ու դռնապանութիւնը: Գ. ժէր
վալ Ասէլինի ու Յակոբոսի մէջ տեղը բնակե
ցաւ, զորո ի սրտէ կը սիրէր, և պզտիկ իր
մանա իր մօրը քով կը կենար իր խօսքերովն
զայն զուարթացնելու, զորովանքսին զմայրե
ցընելու և նորա տխուր յիշատակացը վրայ
յոյս մ'աւելցընելու համար:

Ման-Սուսի ուղեց կրկին ագարակը դառ
նալ, և ժէրվալ ու Յակոբոս թող չի տուին:

— Դու իմ կեանքս աղատեցիր, ըսաւ ա
նոր ձեռուովն, ուստի չեմ ուզեր որ քովես
զատուիս:

— Իմ ցառօցս ու թշուառութեանցս մաս
նակցեցար, ըսաւ անոր Յակոբոս: ուստի իմ
հարստութեանս ալ պիտի մասնակցիս, մեր
մէջ ամեն բան հատարակաց է:

— Տեսաք հիմա բրածնիդ, ըսաւ Ման
Սուսի ձեռքս աչքերուն տանելով, ասանկ բան
կըլլայ . . . Ինչ և իցէ, քովերնիդ կը կենամ:

բայց սա պայմանաւ որ երբ ձեզի հիւր գայ , ես դուրս ելնեմ , և տիկին Ատէլինի հետ սեղան չի նստիմ . . . վասն զի մեծերն յարդեւ պէտք է , իսկ ես ընկերականութեան մէջ սագի մը կը նմանիմ :

— Որ ժամանակ որ ուզես , դուրս ել , բնասու ֆերուներն , գնաս , պտբաէ , որս բունէ , ձուկ որսա , ինչ կուզես , բրէ . բայց երիկուններն դարձեալ հոս եկու , մեզի հետ սեղան նստէ . վասն զի քեզի պէս քաջ մարդ մը ամեն ուրեք տեղ կրնայ գտնել :

— Երևա լաւ , այս ալ ձեր խօսքը թող ըլլայ :

Երկար տանն բնաւ խառնութեան և անհանգստութեան առիթ տուող դէպք մը չպատահեցաւ , և ամենքն ալ հանդարտ և երջանիկ օրեր անցուցին : Ատէլին միայն քաղցր մեղամաղձութիւն մը կը պարս , և այն ալ իր ազգական չնորհրովն ու գգուանքովը թեթեւ և զմայլելի կերուէր իրեն : Երմանս մեծցաւ ու աղուորացաւ , դէմքը սիրուն ու չնորհալի եղաւ , և իր զգայուն ու բարի սիրտը մօրը սքետին նման թշուառներուն միշտ կարեկից դատնուելու առարկինական յատկութիւնը կը կրէր : Յակորոս ալ իր եղբոր ազգական այս հանգստամանրները տեսնելով , այնուհետեւ իր վրայ անեցած քիչ մը դաժման բնութիւնն մերժեց : Սան-Սուսի իր բարեկամաց համար մինչև անգամ կրակը նետուել էր խոնոտանաւր . Պ. Ժէրվալ կրկնակի երջանիկ էր թէ իր և թէ Յակոր-

բոսի ըրած բարեբք տեսնելով , վերջապէս ամեն մարդ խաղաղութեամբ կայրէր և գեղին բնակիչներն ալ շատ անգամ իրեն այցելու թեան կուգային :

Բան մը միայն Սան-Սուսիի մեծ անհանգստութիւն պատճառած էր , և այն ալ Յակորոսի պատերազմական դաշտին վրայ ստացած պատուոյ խաչն իր վրայ չի կրեցէր :

— Ինչու . համար խաչդ չես կախեր , բնասնոր օր մը , երբ առանձին էին . ի՞նչ բան դժեղ կարգիլէ . . . չեմ գիտեր թէ ի՞նչ խելքի կը ծառայես . . .

— Եղբայրս մեր անունը արատաւորեց :

— Լաւ . բայց այդ խաչը քեզի կամ քու անունանք արուեցաւ :

— Այս պատուաւոր վարձը յարգելու համար չեմ կախեր :

— Բայց ալ քեզի միայն Յակորոս կանուանեն . . .

— Ինչուես պէտք . . . չեմ գիտեր թէ եղբարդ . . . ահ , այս սակալի յիշատակը զիս այս պատուակիչին համար կամոյցնէ . չէ , ալ չեմ կախիմ :

— Իրաւունք չունին :

— Կարելի է , թէպէտ ես այս պատուանիչը ստացայ , սակայն եղբորս վրայ խորհելուս պէս բնաւ պարձանք մը չկար ինձ :

Վիլնէով-Սէն-ժորժի բնակչաց վայելած երջանկութիւնն տխուր և տակաւին անակնկալ եղած դէպքով մը խառնեցաւ . Պ. Ժէրվալ հի-

ւանդացաւ ու մեռաւ, առանց իրեն վրայ տար-
ուած մեղսական խնամքներէն օգուտ մը բա-
ղելու :

— Տղաքս, ըսաւ նա իր վերջին վայրկեանս
ներքէ, մեծ ցաւով կը բաժնուիմ ձեզմէ, սա-
կայն դո՞՛ս եմ ձեր վիճակը տեսնելով: Թէպէտ
կը յուսայի երկար ատեն ձեզ հետ ապրիլ,
բայց տիրոջը հրամանն այս է եղբք, պէտք է
հնազանդել: Խորհեցէք իմ վրայ: Բայց չըլլայ
որ ըսք :

Երեբունին իր ստացուածքը Յակոբոսի և Ա-
տէլինի թողուց, որ երեսուն հազար լիտայէ կը
բաղկանար, և որոյ մեծ մասն ազգբաններուն
միտթարութեանը նստիրուած էր: Կատարինէ
ալ իր տիրոջը վրայ քանի մ'ամիս ապրեցաւ,
և այս գէպքերն երկար ատեն իրենց խորին
տխրութիւն մը պատճառեցին :

Բայց ժամանակն կարօղէ մեր ամենադա-
ռըն միշտերն ամբըւէ. նա ամեն բանի կը
յաղթէ. և մեր ցաւոց ու միանգամայն զուար-
ճութեանց յիշատակներն մոռացման անդուն-
դը կը դահլիճի՛ծէ :

Անցան շատ տարիներ. Էրմանս ինք տար-
ուան եղաւ. և Յակոբոսի ու իր մօրը մեծ ու-
բախութիւն ու միտթարութիւն պատճառեց :
Յակոբոս զանի իրենց բովէն չի զատելու հա-
մար դիւղէ՞ն յատկապէս դաստառու բերել տը-
ուաւ իր դատարարակութեան համար :

— Սա հասակն մէջ ո՞րչալի ալ սուր խելք
ունի, ըսաւ Սան-Սուսի Էրմանսի յառաջադի-

մութիւնը տեսնելով . . . եթէ քիչ մ'ալ մեծ-
նայ, խելք, շնորհք, դեղեցկութիւն, տա-
ղանդ, բարի սիրտ, ամեն բան պիտի ունե-
նայ :

— Այո, ըսաւ Յակոբոս: Բայց իր հօրը ա-
նունը չի պիտի կրնայ տալ . . .

— Ո՞՛ս ասոր պէս շատ մարդիկ կան. ա-
տի քու եղբօրդ աղջկանը կրկցը արգելք չի
կրնար ըլլալ :

— Կիրքերն ալ մարդուս կեանքը կը թըշ-
ուտաւցընեն. աւելի կուզեմ որ բնաւ կերք
չունենայ :

— Ասոր համար քու հրամանիդ կարօտ
չէ մարդ, ընկեր :

Ատէլի տեսնելով որ իր աղջիկը շնորհալի
վարքին հետ միատեղ իր սորված բոլոր ուս-
մանց մէջ ալ կը յառաջադի՛ծէ, անպատմելի
ուրախութեամբ կը հրճուէր :

— Սիրելի Էրմանոս, ըսաւ անոր երեսն ի
վեր նայելով, իցէ թէ դու ճնողքէդ աւելի
երջմանիկ ըլլալիք. այն ատեն Ատէլին կը յիշէ
ղեղուարդ, որ երկար ատենէ ի վեր թշուա-
սութեան և յուսահատութեան մէջ մեռած է
. . . : Ա՛՛՛՛՛, կըսէր, նա երբեմն Յակոբոսի,
երբ կիմանար որ իրենց խորհրդածութիւնս
ներն հաւատարէն, եթէ դիտանայի որ զըղջ-
մամբ մեռած է, այն ատեն թեթեւ միտթա-
րութիւն մը կը զգայի: Յակոբոս բնաւ չէր
պատասխաներ. այլ Էրմանոս անելով Ատէ-
լինի կը տանէր որ անոր տեսքն զինքը այս մա-

հասիթ յիրաւակէն հեռացընէ : Յակոբոս չէր դիտեր որ կին մը իր աղուն երեսը նայելով իր ամուսնոյն դէմքը տեսած կրլայ :

Ամառուան գեղեցիկ իրիկուն մը՝ Յակոբոս խորհելով կը պատէր պարտեղին մէջ : Էրմանս իր հօրեղբորը մօտերը ծաղիկ քաղելով կը դբօսնուր : և Ատէլին դալարիէ նսասրանի մը վրայ նստած՝ իր աղլկան աղտոյական շնորհքն կը դիտէր լուսթեամբ : նայիս Էրմանս որ վարդով լի արտի մը քովէն ատղին կուգար , սոսկայի աղաղակ մը հանելով յանկարծ կեցաւ . քովը վաղեց Ատէլին , ինչպէս նաև Յակոբոս , և սկսան անոր վախնալուն պատճառը հարցընել :

— Նայեցէք , նայեցէք , ըսաւ Էրմանս մատովը պարտեղին դուռը ցուցընելով , նայեցէք . . . մարդ մը կայտեր է հան , հոս կը նայի . որչափ վախցուց զիս . . . :

Յակոբոս և Ատէլին Էրմանսի ցուցուցած տեղը նայելով տեսան որ դրանք դուրսի կողմը՝ այսինքն ճիւղ այն տեղը ուրկէ երբեմն խոշոր պիկներով դէմքը տեսնուած էր , մարդ մը կեցեր ու պարտեղը կը նայի :

— Ի՞նչ տարօրինակ յարաբերութիւն , ըսաւ Ատէլին Յակոբոսի երեսը նայելով . միտքդ կու գայ , սակից տառը տօտրի նայեալ ալ դու այս դրանք առջև մեզի տեսնուեցար :

— Այո , ըսաւ Յակոբոս , իրիս լուս կը յիշեմ :

— Ուրեմն Էրմանսի վախը ներքի է . վասն

զի կը յիշեմ որ այն ատեն ալ դու զիս շատ վախցուցիր . կերելի թէ այս մարդը խեղճ է . եկու , աղջիկս , վարաատ է քու վախդ , և երթանք օգնենք իրեն . թշուառներն մեր դթութեանն արժանի են , ու չէ թէ մեր վախուն :

Ատէլին Էրմանսի թեւէն բռնելով գնաց դրանը քով , որուն վրայ դրանք դուրսի կողմը կայնող մարդուն դէմքը կենդանացաւ . դիտեց Ատէլինն ու իր աղլկը , վերջը դարձաւ Յակոբոսին ալ նայեցաւ . և ձեռքը դռնէն ներս երկնցնելով օգնութիւն խնդրեց : Ատէլին քիչ մ'ալ մօտեցաւ անոր , ու շարքութեամբ երեսը նայեցաւ , և ցաւայի աղաղակ մ'է հանց . . . և դիմը նետած , մտրտեալ և դուրսով վազեց Յակոբոսին քով հազիւ թէ խօսելու կարողութիւն ունենալով :

— Չեմ գիտեր թէ երանք կը տեսնեմ , ըսաւ նա . . . այս մարդը , կերելի թէ . . . այս , նայէ . . . ան է . . . Եդուար . . . :

Ալ չի կրցաւ աւելի խօսք ընել : Յակոբոս վազեց դրանը քով , ճանչցաւ իր կողայրը և դուռը բացաւ : Եդուարդ մտաւ պարտեղը , պատասխատուն լսվելով ու անթութիւնէ և նեղութիւններէ նուաղեալ , և իր դէմքին վերայ թշուառութիւնն ու յուսահատութիւնէն զատ բան մը չէր տեսնուեր :

— Օգնեցէք ինձ , աղատեցէք զիս , ըսաւ Յակոբոսին ոտքն ինչալով , որ հազիւ կը համարձակէր աչքերուն հաւատալ : Ահ , ի սէր ատուծոյ , մի մերժէք զիս :

— Ո՛հ, մայրիկ, հեռանանք հասկից, այս մարդը զիտ խիտտ կը վաղցնէ, բայտ Էրմանս երեսը մօրը վրայ գոցելով, Խոյ Ատէլին անշարժ եղուարդի երեսը կը նայէր, և աչքերէն հոսած արտասուքն իր աղուն դէմքը կողողէին:

— Թշուառական, բաս վերջապէս Յակոբոս, հոս ի՛նչ ընել եկար. . . տակաւին տխրի իննս մեր ետեւէն. . . պէ՛տք է որ քու ամբարիշտ կեանքդ քու ընտանեացդ վրայ ալ ներդարձելով զուակէլ յաւիտեան ամբըցնէ:

Եղուարդ բան մը չի պատասխանեց. նախեցաւ Ատէլինի որ իր աղուն երեսը կը պահէր. . .

— Ա՛հ, բաս վերջապէս անգամ մ'ալ Յակոբոսի ոտքն ինչաւով, տեսէք, սրչափ թըշուառ եմ. . . զուակիս երեսն ալ չեն ցուցընէր ինձ. որդի մը հօրմէն կը բաժնեն:

Յակոբոս չի կրցաւ զանի մերժել. Եղուարդ Ատէլինի բով գնաց, ինկաւ ոտքը և ճակատը գետին ձուելով խորին հառաչանքներ կարձակէր: Աօօր վրայ Էրմանս վախը փարատելով սիրտը գթութեամբ լցուեցաւ, և գլուխը գարձուց դէպ ի սնոր:

— Ո՛հ, մայրիկ, բաս նա Ատէլինի, այս խեղճ մարդը շատ թշուառ կերէի, և զիս սաստիկ կը վշտացնէ. . . ըսէ որ ոտքի վրայ ելնէ. . . ալ չեմ վաննար իրմէ. . .

Այն ատեն Եղուարդ իր աչկանը ձեռքը բռնելով գորովանօք սեզմեց, Ատէլինի վրայ ալ նայուածք մ'արձակեց իմացընել ուզելով որ իր գթութեան արժանի է:

— Կը ներեմ՝ քեզ, բաս Ատէլին, ա՛հ, միայն թէ տակ ինձի մեղանչէիր. . . բայց այս զուակը. . . իմ աղջիկս. . . անի չի կրնար երբէք քու անունը տալ:

Յակոբոս լռեցուց զԱտէլին ձեռքը բերնին վրայ դնելով: Այն միջոցին Սան-Սուսի վաղեցեկաւ, և պարտեզին մէջ օտարական մը տեսնելով մեծ զարմանք յայտնեց:

— Ի՛նչ կուզես, բաս Յակոբոս. ինչո՞ւ տանի վաղելով եկար. ի՛նչ կայ:

— Ճամբրտ կասեմ, ընկեր, քեզի իմացընելու եկայ որ ոտիկանութեան զինուորները գեղը եկեր են. և առնեբը մտնելով փախուտական մը կը փնտռեն. հիմա այս տունն ալ պիտի գան. . . Ես կը կարծէի որ եթէ հաս գան, պարսպը պիտի երնեն. չէի դիտեր որ. . .

— Լուէ, լուէ, բաս Յակոբոս, և մարդու բան մի զուրցեր. . . Բոյր իմ, առ զուակդու տուն գնա. . . Գացէք, մի վախնաք, ես պատասխան կուտամ եկողներուն. . . Սան-Սուսի, քոյրս տուն տար, և խորին լուսխն պահէ. . .

Սան-Սուսի խոտացաւ լուել, և իր տեսածներուն վրայ շիտթած քանի մը քայլ հեռացաւ: Ատէլին Եղուարդի վրանգլին վրայ զարհուրեցաւ. բայց Եղուարդ աղաչեց որ թողուն իրեն այս վիճակին մէջ մնալ. Պագաւ իր աղջիկը, սեղմեց Ատէլինի ձեռքը, և հեռացաւ անոնցմէ, և Սան-Սուսի իր ընկերոջը:

բած անհարկին համեմատ Առէլինն ու իր ազ-
ջիկը առաւ առնն տարաւ :

— Անոնք գացին ու միայն մենք մնացինք,
բնաւ Յակոբոս իր եղբօրը, երբ տեսաւ որ Ա-
ռէլին ալ չերեւիր . յիտակ ըսէ, դքեզ կը հա-
լածեն :

— Այս . . . սա մտերը գինեաւան մը մէջ
ուր ողորմութիւն ինդրելու մտած էի, մարդ-
մը որ երբեմն թուլօն բանասպետ էր, հոն
դանուելով զիս ուշագրութեամբ դիտեց . ես
ալ վախնալով որ կը ճանչցուիմ, շուտով դուրս
եկայ . . . Սակայն կը տեսնեմ որ ալ իմ վախ-
ճանս հասած է . . . ի վերայ այսր ամենայնի
այնչափ թշուառ չեմ . . . վասն զի տեսայ
դաւակն ալ, կինս ալ որ ներեց ինձ, և զքեզ
ալ . . . ահ, եղբայր իմ, կաղաչեմ, դու ալ
ներէ ինձ . . . :

— Այո, բնաւ Յակոբոս, պիտի ներեմ
քեզ . . . բայց պէտք է որ . . . թշուառա-
կան. դիտե՛ս ինչ տեսակ մահ պատրաստուած
է քեզ . . . դու կաղախանի վրայ պիտի մեռնիս,
և այս անպատիւ մահուանդ լուրը զմեզ յա-
ւելեան ամեթապարտ պիտի ընէ : Միայն չա-
րի՛ք գործելու համար քաջութիւն ունեցեր ես,
և երկար ատենէ ի վեր քու կնկանդ ու զաւ-
կիդ պատուոյն պահանջածն ի գործ չե՛ս կրցած
դնել . . . կը դողաս . . . տկար մարդ . . . կը
վախնառ կառավարութեան ձեռքն իյնայէն . . .
մտածէ որ անոր ձեռքէն տեղ մ'ալ չես կրնար
փախչիլ . . . Ով մեծդ Աստուած . . . Եզ-

ուարդ, դեռ ասանկ թշուառութեամբ և ան-
պատուութեամբ ապրելէն չե՛ս ձանձրացած :

Կը հասկնամ բոսածդ, բնաւ Եղուարդ, ոհ,
լաւ դիտեմ որ մահն ինձ համար բարկք մ'է .
բայց գերեզման մտնելէ առաջ կուզէի իմ
զղջումս ձեզ խմացնել . . . Այ հիմա միջոց մը
ցոյց տուր ինձ որ անով անպատիւ մահէ մը
ազատիմ . . . առանց տարակուսելու կը գոր-
ծադրեմ այդ միջոցն :

Ասոր վրայ Յակոբոս Եղուարդի բնաւ որ
քիչ մը սպասէ . ինքը շուտով սենեակը դնաց,
և ատրճանակ մը առնելով իջաւ նորէն պար-
տէզը . տեսաւ որ Եղուարդ պարտէզին դրանը
քով ծնկան վրայ իրեն կըսպասէ . . . ատրճ-
ճանակը ձեռքը տարով բնաւ .

— Հիմա . . . եկու . . . թշուառական . . .
վերջին անգամ զիրար գրկենք . քու եղբայրդ
կը ներէ քեզ, և ամեն օր քու գերեզմանիդ
վրայ պիտի դայ քեզ համար ազօթ ելու :

Եղուարդ եղբօրը գիրկն իյնալով քիչ մը
ատեն այնպէս մնայէն ետև բանի մը քոյլ ան-
դին դնաց . . . ատրճանակը կուրծքին գէմ
պարպելով ինկան գետինն ու հողին փռեց :

Յակոբոս գնաց եղբօրը քով, և արտա-
ուայից աչօք շուտով գերեզման մը փորեց
դրանը քով բուսած ուռիին (սեզյուտ) տակ .
Սան-Սուսի վրայ հասաւ . և այս տխուր արա-
բողութեան մէջ գտաւ իր ընկերը :

— Օգնէ ինձ . . . բնաւ Յակոբոս, ասի իմ
եղբայրս է : Սան-Սուսի ուղեց իր բարեկամը

անկէ հեռացնել և այն արարողութիւնն առանձին կատարել, բայց Յակոբոս չի հաճեցաւ. ուղեց իր եղբօրք վերջին պարտաւորութիւնն ալ հատուցանել, և զանի լաւ մը թաղելէն ետեւ դարձաւ Ատէլինի քով:

— Ինչ բերր, եղբայր իմ, ինչ եղաւ, հարցուց Ատէլինի:

— Ալ այսուհետեւ մի վախնար, ըսաւ Յակոբոս, աղատեցաւ, ալ կառավարութեան ձեռքը չի կրնար իյնալ:

Ատէլին Յակոբոսի խօսքին հաւատաց և ստիպաց ականջով որ քանի մը ժամէն ոստիկանութեան զինուորներ տուն եկան, և չորս կողմը ուշադրութեամբ խուզարկելէն ետեւ ելուարդն հոն չի դառն:

Ժամանակ անցնելէն ետեւ Ատէլին տեսաւ որ պարտէզը ուսի մը տակ գերեզման մը կայ:

— Այս գերեզմանը որունն է, հարցուց նա:

— Թշուառ եղբորս, պատասխանեց Յակոբոս:

— Մեռաւ . . .

— Այս . . . հաւատսի եղիր որ մեռած է . . .

— Աւաղ . . . արդեօք աշխարհիս որ կողմ մը աւարտեց իր կեանքը:

— Հոս ուսիին տակը թաղուած է, ըսաւ վերջապէս Յակոբոս:

Ատէլին ստիպաց և ալ բան մի չի խօսեցաւ. բայց ամեն որ աշիկը անոր գերեզմանը կը տանէր որ միան աղօթէ, և իրմանս չէր գիտեր որ իր հօրը գերեզմանին վրայ կաղթէ: Եւ Յակոբոս ալ իր խաչը այս ուսիին տակը թաղեց:

ՎԵՐՋ

ՅԱՆԿ ԳԼԽՈՅ



երես

ԳԼ. Ա.	— Հարանեմք մը ի Գատրան-Չլեօ	3
ԳԼ. Բ.	— Ժէ՛՛ կոչուած երաժշտական եղանակէ մը եւ ընչատուի մը պատահած մեծամեծ զէպքերն	24
ԳԼ. Գ.	— Տիւֆրեան	41
ԳԼ. Դ.	— Երջանկութեան հասնելու խորհուրդ	47
ԳԼ. Ե.	— Խոչոր պեխերով գլուխ մը	58
ԳԼ. Ջ.	— Գեղին մէջ եղած ճաշ մը	69
ԳԼ. Է.	— Խոչոր պեխերով մարդուն կրկին տեսնուելը	92
ԳԼ. Ը.	— Չէտք չէ զմարդ իր արտօքին երուցթէն դատել	140
ԳԼ. Թ.	— Եղբայր Յակոբոսի զէպքերը	147
ԳԼ. Ժ.	— Մաղչիսեան դորութեան դաս	133
ԳԼ. ԺԱ.	— Յակոբոս Քլէրէթը կը քնացնէ եւ քաքանկիք կրնէ	146
ԳԼ. ԺԲ.	— Ստպատողն մեծամեծ փորձերն	159
ԳԼ. ԺԳ.	— Դեղերու արդիւնքը: — Եղբայր Յակոբոս իր ընկերոջմէն կը դատուի	186
ԳԼ. ԺԴ.	— Վերջ Յակոբոսի զէպքերուն	194
ԳԼ. ԺԵ.	— Եղուարդի ամուսնութեան չորս ասիաներն — Կոր սուսնալողութիւններն	212
ԳԼ. ԺԶ.	— Վերադարձ ի Փարիզ — Գործոյ սկզբընաւորութիւն	224
ԳԼ. ԺԷ.	— Մեծ երկերթի — Յայանութիւն	243

Բ

ԵՅԵԱ

ԳԼ. ԺԸ. — Կարուժիւն : — Յիմարուժիւն : — Տը-
կարուժիւն 262

ԳԼ. ԺԹ. — Յանցանքը Եղուարդինը չէ 275

ԳԼ. Ի. — Կիրքերն արագութեամբ կը դորձեն ,
կթէ չի յաղթուին 285

ԳԼ. ԻԱ. — Բուլէթ 295

ԳԼ. ԻԲ. — Գաւաճանք : — Խաղամուկ : — Խաբե-
րայք 314

ԳԼ. ԻԳ. — Խաղամուկը տան մը ներքին տեսա-
րանը 332

ԳԼ. ԻԴ. — Բարի անձինք : — Երախտադիտութիւն 342

ԳԼ. ԻԵ. — Յարկ վիճակահանութեան 361

ԳԼ. ԻԶ. — Չար բարեկամը և անոնց արդիւնքը 371

ԳԼ. ԻԷ. — Ատէլն պատգան մը կը գանձէ 835

ԳԼ. ԻԸ. — Եղուարդի և իր ընկերաց ընտուկը 395

ԳԼ. ԻԹ. — Հրայրարակ ընտանի 417

ԳԼ. Լ. — Բարեբարոն ժէրվալ 424

ԳԼ. ԼԱ. — Յակոբոս և Սան-Սուսի 437

ԳԼ. ԼԲ. — Բանասրկեալք 451

ԳԼ. ԼԳ. — Փայտահար և զողք 458

ԳԼ. ԼԴ. — Պատմութիւն Տի.Քրէմի 473

ԳԼ. ԼԵ. — Ղօժի տունը 488

ԳԼ. ԼԶ. — Ճամբիտը երբեմն կրնայ ճամբա-
նըման չըլլալ 504

ԳԼ. ԼԷ. — Պ. Ժէրվալի ով ըլլալը 528

ԳԼ. ԼԸ. — Դարձեալ պարտէզին վանդակէ դուռը 544



